ԼԻԳՈՒՈՐԵԱՑ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՆ ՄԱՀՈՒ

ՍՐԲՈՑՆ

ԱԼՓՈՆՍՈՍԻ ԼԻԳՈՒՈՐԵԱՑ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՄԱՀՈՒ

ԿԱՄ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐՔԱՑ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆՑ

472284

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ
1893

ՑԻՇԱՏԱԿ ՏԱՆՆ

ՄԱՆՈՒԷԼ ԱՂԱՑԻ ՇԱՇԵԱՆ

ՑԱՍՏՈՒԱԾԱՍԻՐԱՑՆ

Պ. Բ. ԵՒ Ս. Ա.

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆԸ

Շատերն խնդրեցին ինծմէ որ յաւիտենական ճշմարտութեանց վրայ մտածականի գիրք մը շարադրեմ ա-նոնց համար որոնք հոգեւորական կե-նաց մէջ յառաջադիմութեան եւ հաս-տատութեան կարօտ են։ Ուրիշներն ալ եղան որ փափաք ցրցուցին ծաղ-կաքաղ համառօտութիւն մը ունենա-լու այն նիւթերուն՝ որոնք քարոզու-թեանց եւ հոգեւոր կրթութեանց հար-կաւոր են։ Իսկ ես որպէս զի թէ գրը-քերը թէ աշխատանքը եւ թէ ծախքը չշատցընեմ, այս գիրքս շարադրեցի, որ ինչպէս մտադիր ընթերցողն կը տեսնէ՝ երկու նպատակին ալ կրնայ ծառայել։ Որպէս զի աշխարհականաց մտածականի տեղ բռնեն ասոնք, ա-

մէն գլուխ երեք երեք մաս բաժնեցի, եւ իւրաքանչիւր մասն ալ կրնայ մի մտածականի տեղ ծառայել. անոր համար ալ է որ ամէն մասէն վերջը առանձինն իրաք եւ պաղատանք դրուած են։ Կ'աղաչեմ ընթերցողը չզարմանան. թէ ինչու ամէն աղօթքի մէջ յարատեւութեան եւ Աստուծոյ շնորհքը խնդրելու խօսքեր դրեր եմ. վասն զի այս երկու շնորհքները փրկութեան հասնելու ամենահարկաւոր են. Աստուածային սէրն այնպիսի շնորհք մ'է կ'ըսէ սուրբն Փրանկիսկոս Սալեզացի, որ իւր մէջ ուրիշ ամէն շնորհք բովանդակուած են. վասն զի ով որ զԱստուած կը սիրէ, ուրիշ ամէն առաքինութեանց տէր է. այնպիսին խոնարհ ալ է, հնազանդ, մաքրասէր, մահացեալ. զԱստուած սիրէ, եւ ուրիշ ամէն ուզածդ ըրէ. կը խրատէ սուրբն Օգոստինոս. վասն զի աստուածասէրն ամէն ջանք կ'ընէ անոր կամաց դէմ բան մի չընելու, եւ ամէն բանի մէջ զինքը հաճել կը ջանայ։

Ցաւիտենական երանութեան պսակը մեզ ժառանգել տուողն՝ յարատեւութեան շնորհք է. սուրբ Բեռնարդոս կ'ըսէ թէ արքայութիւնը խոստացուած է անոնց որոնք բարի կեանք կը սկսին. բայց իրենց բարի կենաց մէջ յարատեւողներուն կը տրուի արքայութիւնը։ Սակայն այս յարատեւութեան շնորհքն, ինչպէս սուրբ Հարդ կը սորվեցընեն, խնդրողաց միայն կը տրուի. անոր համար է սրբոյն Թովմայի ըսածը, թէ երկինք երթալու համար անդադար աղօթից պարապելու է. եւ Փրկիչն մեր խրատեց որ միշտ աղօթք ընենք եւ ամենեւին չձանձրանանք։ Շատ խեղճ մեղաւորներ թէպէտ եւ իրենց մեղաց թողութիւն կը գտնեն, բայց Աստուծոյ շնորհաց մէջ յարատեւել չեն կրնար. ներումն կ'ընդունին, բայց որովհետեւ յարատեւութեան շնորհք Աստուծմէ չեն խնդրած՝ մանաւանդ փորձութեան, նորէն մեղաց մէջ կ'իյնան։ Եւ թէպէտ յարատեւութեան շնորհքն ծրի շնորհք մ'է, եւ մենք մեր գործերովն արժանաւոր չենք անոր, բայց հայրն Սուարէզ կը սորվեցընէ թէ աղօթիւք հաստատապէս կ'ընդու-

նինք այս շնորհքը, ինչ պէս որ յառաջ քան զինքն սուրբն Օգոստինոս ալ ըսած էր։ — Աղօթքի հարկաւորութիւնը ուրիշ գրքուկի մի մէջ տեղն ի տեղը բացատրեր եմ. եւ թէպէտ համառօտ գրուածք մ'է ու գինն ալ աժան, բայց վրան շատ աշխատութիւն ունիմ, եւ ինձ կ'երեւի թէ ամէն մարդու համար շատ հարկաւոր է այն գիրքն։ Եւ յիրաւի. վասն զի հոգեւորական գրոց մէջ քան զայն աւելի օգտակար գիրք չի կրնար ըլլալ որ աղօթից հարկաւորութեան վրայ խօսի։

Որպէս զի այս մտածականներն քարոզիչ քահանայից ալ օգտակար կարենան ըլլալ, որոնք քիչ գիրք կամ քիչ ժամանակ ունին կարդալու, Աստուածաշնչին եւ սուրբ հարց խօսքերը մէջ բերի, որ թէպէտ համառօտ են, բայց լի հոգւով, ինչպէս արժան է որ ըլլան ամէն քարոզ. ուստի իւրաքանչիւր մտածականին երեք մասը՝ մէյմէկ քարոզի նիւթ են։ Այս վախճանաւս է որ ամէն հեղինակաց ինձ սրտաշարժ երեւցած խօսքերը ժողվեցի, որպէս զի կարդացողն իր սրտին յարմար եկածը ընտրէ եւ ուզածին պէս ընդարձակէ։ Ամենայն ինչ ի փառս Աստուծոյ ըլլայ։

Ընթերցողներէն կը խնդրեմ որ այս իմ գիրքս կարդալու ատեն, թէ դեռ կենդանի ըլլամ թէ մեռած, զիս իրենց աղօթից մէջ յիշեն. եւ ես ալ կը խոստանամ որ նոյնպէս զիրենք յիշեմ։ — Օրհնեալ ըլլայ Յիսուս մեր փրկիչն, եւ Մարիամ մեր յոյսն։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ա.

ՆՈՐ ՎԱԽՃԱՆԱԾ ՄԱՐԴՈՒ ՄԸ

ՆԿԱՐԱԳԻՐ

Հող էիր, և հող պիտի դառնաս[1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Մտածէ թէ դուն հող ես, ու հող պիտի դառնաս։ Որ պիտի դայ որ մեռնիս պիտոր, և փոսի մի մէջ պիտի հոտիս ու փըտիս և որդերով պիտի ծածկուիս։ Ներքեւդ ճճիներ պիտի տարածուին ու վրադ որդերը պիտի ծածկեն[2]։ *Այս բանս ամենուն ալ պիտի ըլլայ, ազնուական է եղեր, ռամիկ է եղեր, իշխանազուն է եղեր, ծառայ է եղեր։ Այն վերջի անգամ բերանը*

1 Հող էիր և ի հող դարձցիս։ Ծննդ. Գ. 19։
2 Ի ներքոյ քոյ մեջս տարածեսցեն, և ի վերայ քո որդն յարկցի։ Ես. ԺԴ. 11։

բանալով հոգին մարմնէն ելածին պէս՝ հոգին իւր յաւիտենականութիւնը կ'երթայ, մարմինն ալ հող կը դառնայ։ Հոգինին կ'առնես անոնցմէ, կը պակասին և հող կը դառնան [1]։

Դիր թէ մարդ մի կը տեսնես որ քիչ մը առաջ հոգին փչեց, նայէ իր մարմնոյն վրայ որ դեռ անկողնոյն մէջ կեցեր է, գլուխը դէպ ի առջև ծռած, մազերը խառնափընդորած և մահուան քրտինքէն դեռ թաց. աչուքները խոռոչած, թուշերը ցամքած, երեսը մոխիր դարձած, լեզուն ու պռկունքը սեւցած, մարմինը պաղած ու ծանր։ Տեսնողն կը սարսափի ու կը փչաքաղի։ Քանիներ եղեր են, որ իրենց մէկ ազգականը կամ բարեկամը այսպէս մեռած տեսնելով՝ իրենց վարքը փոխեր են, աշխարհէ ևս հրաժարեր են։

Աւելի սարսափ մարդուս կու տայ երբոր մեռած մարմինը կը սկսի հոտիլ։ Կը տրիճ մը մեռնելէն յետոյ քսանուչորս ժամ անցած չանցած կը սկսի դարշահոտութիւն բուրել։ Հարկ կ'ըլլայ պատուհանները բանալ, կրակը շատ մի խունկ ձգել, մանաւանդ թէ ճարը տեսնել, որ շուտով եկեղեցի տարուի, հողի տակը թաղուի, որպէս զի բոլոր տունը չապականէ։ Բայց

[1] Հանես զոգի ի նոցանէ, պակասին և ի հող դառնան։ Սաղմ. ՃԳ. 28։

թէ այդ մարմինն աղնուական կամ թէ հարուստ մարդու մին է եղեր, ուրիշ բանի չի դար բայց եթէ աւելի դէշ հոտ բուրելու. ինչպէս մատենագիր մը կ'ըսէ թէ աւելի ծանրահոտ կ'ըլլայ մեծատանց մարմինն։

Տես հիմայ, ինչ եղաւ այն հպարտն, այն հեշտասէրը։ Առաջ մարդկանց մէջ պատիւ ունէր ու կը սիրուէր, հիմայ իրմէ կը սոսկան ու կը գարշին։ Ազգականներն կը փութան զինքը տնէն վռնտել, բեռնակրաց ստակ ալ կու տան որ ճաղը դրած գերեզման տանին ու հողուն տան։ Առաջ մեծ համբաւ ունէր թէ ինչ խելացի մարդ է, ինչ աղէկ կերպ ունի, ինչ անուշ լեզու է. հիմայ որ մեռաւ, քիչ ատենէն յիշատակն ալ չի մնար։ Կորաւ անոնց յիշատակը աղաղակաւ [1]։ Երբ մահն որ լսուի ոմանք կ'ըսեն թէ մեծ պատիւ ունէր, ոմանք ալ թէ աղէկ տեղաւորած ձգեց իւր տունը, ոմանք կը ցաւին՝ վասն զի մեռնողն իրենց բարիք կ'ընէր, ոմանք կ'ուրախանան՝ վասն զի անոր մահուանէն իրենց շահ կ'ելնէ. քիչ մ'ալ որ անցնի վրան խօսող ալ չըլլար։ Առաջին օրէն ընտանիքն չեն ուզեր որ վրան խօսք բացուի, որպէս զի սրտերնին չելնէ։ Ցաւակցութեան եկողներն ևս ուրիշ բաներու վրայ կը խօսին,

[1] Կորեաւ յիշատակ նոցա աղաղակաւ։ Սաղմ. Թ. 8։

և թէ որ մէկն մեռնողին վրայ խօսք բա-
նայ՝ տեսցիք խօսքը կը կարեն, ըսելով՝ թէ
հոգիդ կը սիրես ալ ևս անունը մի՛ տար։

Դիտցիր որ բարեկամիդ և ազգականիդ
մեռած ատեն ինչ որ ըրիր դու՝ քեզ ալ
ուրիշները նոյնպէս պիտոր ընեն։ Ողջ
մնացողները մէջ կը նետուին, մեռնողնե-
րուն ստակն ու աստիճանը ձեռք կը ձգեն.
իսկ մեռնողներուն վրայ կամ քիչ և կամ
ամենևին ոչ խօսք կ'ըլլայ և ոչ յիշատա-
կութիւն։ Տնեցիք քանի մը օր սուգ կը
քաշեն, բայց քիչ ժամանակէն իրենց բա-
ժին եկած բաներով կը մխիթարուին.
այնչափ որ քանի մը օր կ'անցնի չանցնիր՝
մահուանդ վրայ կ'ուրախանան, և նոյն սե-
նեակն ուր որ դուն հոգիդ աւանդեցիր, ու
Քրիստոսի ատեանը դատաստանի ելար,
անոնք պար կը բռնեն, հարկինքներ կ'ը-
նեն, կը խաղան, կը խնտան, կը ծիծաղին,
իբր թէ մեռած չըլլայիր. իսկ քու հոգիդ
այն ժամանակ ուր կ'ըլլայ արդեօք։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Փրկիչ իմ Յիսուս, զոհանամ զքէն որ
չթողուցիր զիս շնորհքդ դուրս ընկած ա-
տենս մեռնելու. թէ ոչ այս քանի՛ տարի
պիտի ըլլար որ ես դժոխոց մէջ պիտի

տանջուէի։ Թէ որ ես այն օրը, այն գի-
շերը մեռած ըլլայի, ինչ պիտի ըլլար իմ
բանս յաւիտեան. փառք ողորմութեան քո
տէր։ Ես իմ կողմանէս սիրով յանձն
կ'առնեմ իմ մահս ի քաւութիւն մեղաց
իմոց, այն ալ ինչ կերպով որ կ'ուզես ինձ
դրկելու. բայց որովհետև մինչև ցարդ
համբերեցիր ինձ, կ'աղաչեմ որ քիչ մ'ալ
համբերես։ Յորայ երանելւոյն ըսածին
պէս. Թոյլ տուր ինձ որ քիչ մը հանգ-
չիմ, իմ ցաւս լամ. զիս դատաստան կան-
չելէդ առաջ ժամանակ տուր որ մեղքերս
ողբամ, որովք զքեզ դառնացուցի։

Ես չեմ ուզեր ալ ևս քու ձայնիդ
դէմ կենալ։ Ո՞գիտէ, այս խօսքերս որ կը
կարդամ ինձ վերջի ազդարարութիւնդ
կրնան ըլլալ։ Գիտեմ որ ես արժանի չեմ
գթութեան, որովհետև այնչափ անգամ
ինձ ներեցիր և ես ապերախտս դարձեալ
վշտացուցի զքեզ։ Աստուած իմ, բեկեալ
սրտերն ու խոնարհեալ հոգիները դու
չես արհամարհեր[1]. ահա ես դաւաճանս
զղջմամբ սրտի առ քեզ կը դիմեմ. մի՛ ձգեր
զիս, տէր, քու երեսէդ[2]։ Դու ես որ ըսիր,
թէ ով որ ինձ կը դիմէ՝ զինքը չեմ

1 Զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած
ոչ արհամարհէ։ Սաղմ. Ն. 17։

2 Մի՛ ընկենուր զիս, տէր, յերեսաց քոց։
Նոյնն. անդ. 12։

վերնտեր [1]։ Ցիրաւի ես զքեզ ուրիշներէն աւելի անարգեր եմ, վասն զի աւելի քան զայլս քեզմէ լոյս և շնորհք ընդուներ եմ. բայց քու սուրբ արիւնդ որ ինձ համար թափեցիր, ինձ սիրտ կու տայ և թողութիւն կը շնորհէ՝ թէ որ ես սրտանց զղջալու ըլլամ։ Եւ ահա, ով իմ ծայրագոյն բարիս, կը զղջամ ի բոլոր սրտէ քեզ դէմ ըրածներուս վրայ. ներէ ինձ և շնորհք տուր զքեզ սիրելու այսուհետև։ Հերիք է որչափ որ զքեզ դառնացուցի. Մնացած կեանքս, փրկիչ իմ, չեմ ուզեր զքեզ վշտացընելու համար անցընել, քաւիցի. հապա կ'ուզեմ միայն լալով անցընել միշտ՝ քեզ տուած վշտերուս համար, և յամենայն սրտէ զքեզ սիրելու, ով Աստուած իմ և տէր, որ անբաւ սիրոյ արժանի ես։ Սուրբ Աստուածածին, յոյս իմ և ապաւէն, բարեխօս եղիր ինձ համար առ փրկիչն իմ Յիսուս։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ինչ ըլլալը դեռ աւելի աղէկ հասկընալու համար, ով քրիստոնեայ, կ'ըսէ սուրբն

1 Որ գայ առ իս ոչ հանիցէ արտաքս։ Յովհ. Զ. 37։

Յովհան Ոսկիբերան, գերեզմանները գնա, տես հողը, մախիրը, որդերը, և հառաչէ. նայէ թէ ինչպէս այն մեռած մարմինը նախ կը դեղնի ու ետքը կը սևնայ. վերջը կը տեսնես որ բոլոր մարմինը ճերմկած և հոտած մարկ մը պատեր է։ Ետքը թանձր ու ժահահոտ փտութիւն մը դուրս կու տայ. այն փտութենէն բիւրաւոր որդեր կը գոյանան և կը սկսին մարմինն ուտել. մկներն ալ կու գան կը սկսին զայն կրծել, ոմանք վրան կը պտտին, ոմանք ալ բերանն ու աղիքներուն մէջ կը մտնեն։ Թուշերն, պռկունքներն ու մազերն մի առ մի կը թօթափին. նախ կողերը կը բաժնուին, յետոյ թևերը, և ապա ճիւերը։ Այն որդերը բոլոր մարմինն ուտելէն ու հատցընելէն վերջ, իրենք ալ զիրար ուտելով կը փճանան. այնպէս որ այն մարմընէն միայն հոտած կմախք մի կը մնայ, որ յետոյ այն ալ կտոր կտոր կ'ըլլայ, ոսկրոտիքը կը քայքային, գլուխն ալ արմատէն կը բաժնուի կ'իյնայ։ Այ հասարակ մանրեցան, և ամառուան կալոյ փոշի դարձան. և հովի սատկութիւնն առաւ զիրենք ու ցիր ու ցան ըրաւ [1],

Տեսար, ինչ բան է եղեր մարդս, կտոր մի փոշի զոր հովն ցիր ու ցան կը տանի։

1 Այ հասարակ մանրեցան և եղեն իբրև ըզփոշի կալոյ ամարայնոյ, և առ զնոսա սատկութիւն հողմոյ։ Դան. Բ. 35։

Ո՞ւր է հիմայ այն ասպետն, որ ընկերութեան զուարճութիւն և հոգին կը սնուցուէր։ Նստած սենեակը մտիր, կը տեսնես որ ալ հոն չէ. թէ որ իւր անկողինը կը փնտռես՝ ուրիշի է տրուեր. իւր հագուստները, իւր զարդարանքները, անոնք ալ ուրիշներն առեր են ու մէջերնին բաժներ են։ Թէ որ զինքը տեսնել կ'ուզես՝ նայէ առջևի փոսիդ մէջ, ինչ կը տեսնես, փըտած ու կտոր կտոր եղած և ոսկորները քայքայած։ Վա՜հ վա՜հ, այն մարմինն որ այնչափ փափուկ մեծցած էր, փառաւոր հագուած ու կապուած, ծառաները չորս դին առած էին, ինչ է դարձեր։ Ո՛վ երանելի սուրբեր, դուք ալէկ կը հասկընաք այս բանս, որ Աստուծոյ սիրոյն համար, զոր միայն պաշտեցիք երկրիս վրայ, գիտցաք ձեր մարմինը մահացընել. և հիմայ ձեր ոսկորները անդին սուրբ մասունքներու պէս պատուով ոսկիներու մէջ կը պահուին, և ձեր երջանիկ հոգիքը զԱստուած կը վայելեն, սպասելով աշխարհքիս յետին օրուան, որ իրենց մարմնոյն հետ միանան ընկերանան ի փառս, ինչպէս որ ընկերացան ի խաչ և ի չարչարանս այս կենացս մէջ։ Այսպէս կ'ըլլայ ճշմարտապէս սիրել զմարմին, որպէս զի յաւիտեան երջանիկ ըլլայ, և զրկելով զինքը հոս այն հաճոյքներէն՝ որ յաւիտեան զինքը թշուառ կ'ընեն։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ տէր իմ և Աստուած իմ, ինչ պիտի դառնայ եղեր իմ մարմինս ալ, որոյ համար զքեզ այնչափ վշտացուցի. որդնոտի ու փտոտի պիտի։ Բայց ասոր չեմ ցաւիր, տէր իմ, մանաւանդ թէ ալէկ է որ այսպէս փտոտի մաչի մարմինս, որ ինձ պատճառ եղաւ քեզմէ հեռանալու, որ իմ ծայրագոյն բարիս ես. այն է միայն իմ սրտիս ցաւն, որ ես մարմնաւոր ընդունայն հաճոյից համար այնչափ կամացդ դէմ գործեր եմ։ Բայց քու ողորմութենէդ յոյս չեմ կտրեր, վասն զի կը սպասես ինձ որ թողութիւն տաս. Աստուած կը սպասէ որ գթայ ձեզի, կ'ըսէ Եսայի [1], և կ'ուզես թողութիւն տալ թէ որ ես զղջամ։ Այո՛ տէր, ի բոլոր սրտէ կը զղջամ, կը ցաւիմ, ով անբաւ բարութիւն, զքեզ անարգելուս համար, և կ'աղաղակեմ գենուացի սրբուհւոյն Կատարինեայ հետ. Ո՛վ Յիսուս իմ, ալ ես մեղաց մէջ չյինամ, ալ ես մեղք չի գործեմ։ Ալ չեմ ուզեր չէ, քու համբերութեամբդ զեղծանիլ։ Չեմ ուզեր, խաչելեալ տէր իմ, սպա-

1 Կանխեսցէ Աստուած գթալ ի ձեզ։ Եսա. Լ. 18։

սել այն ժամուն՝ որ մահուանս ատեն խոստովանահայրս զիս յորդորէ որ խաչիդ պլլուիմ. այժմէն ոտքդ կ'ինամ, այժմէն կ'աւանդեմ քեզ իմ հոգիս. քու ձեռքդ կը յանձնեմ, տէր իմ, հոգիս։ Այնչափ տարի հոգիս աշխարհի հետ կապուած ըլլալով զքեզ չի սիրեցի, լոյս և զօրութիւն տուր ինձ որ մնացած կեանքս զքեզ սիրելով անցընեմ։ Չեմ ուզեր սպասել որ մահուանս ատեն զքեզ սիրեմ, այժմէն կը սիրեմ զքեզ կ'ողջագուրեմ ու չեմ բաժնուիր, և խօսք կու տամ որ ալ ևս զքեզ չեմ թողուր։ Ո՛վ սուրբ կոյս Աստուածածին, կապէ զիս սիրով Յիսուսի հետ, և շնորհք խնդրէ ինձ համար, որ ալ ևս զինքը չի կորսընցընեմ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ո՛վ սիրելի եղբայր, մահուան այս պատկերին մէջ զքեզ և ինչ ըլլալիքդ տես։ Յիշէ որ հող էիր, և հող պիտի դառնաս. մտածէ որ մի քանի տարիէն կամ գուցէ ամսէն կամ օրէն յետոյ՝ փտիս ու որդնոտիս պիտի։ Զայս մտածելով սուրբ եղաւ Յոբ, որ կ'ըսէր. Մահն ինձ հայր կոչեցի, փտութիւնը՝ մայր և քոյր [1]։

1 Զմահ կոչեցի ինձ հայր, մայր և քոյր ինձ՝ զերբ։ Յովբ. ԺԷ. 14։

Աշխարհիս ամէն բանը կ'անցնի, և թէ որ հոգիդ մահուան ատեն կորսուի, քեզի համար ամենայն ինչ կորսուած է։ Սուրբն Լաւրենտիոս Յուստինեան կ'ըսէ. Դիր թէ արդէն մեռած ես, որովհետև գիտես որ մահն ի հարկէ պիտի գայ [1]։ Թէ որ մեռած ըլլայիր, ի՞նչ չէիր բաղձար որ ըրած գտնուէիր։ Այժմէն քանի որ կենդանի ես՝ միտքդ դիր թէ օր մը զքեզ մեռած պիտի գտնես։ Սուրբն Բոնաւենդուրա կ'ըսէ, թէ ղեկավարը նաւը ազէկ կառավարելու համար՝ ծայրը կը կենայ, այսպէս ալ մարդս ազէկ կեանք վարելու համար պէտք է միտքը դնէ թէ միշտ մահուան քուքն կեցեր է։ Սուրբն Բեռնարդոս ալ կ'ըսէ. Առջի ըրածներուդ նայէ ու խրպնէ. այսինքն, տես տղայութեանդ մեղքերն ու ամբոյցիր։ Մէջիններուդ նայէ ու հառաչէ. այսինքն մեծութեան ատենի մեղքերդ տես ու լաց։ Վերջդ նայէ ու սոսկա. այսինքն վերջի գալիքները մտածէ ու դողա և շուտով ճարդ տես։

Սուրբն Կամիլլոս Լելլիսեան երբոր մեռելոց գերեզմաններուն վրայ կը նայէր ինքն իրեն կ'ըսէր. Թէ որ ասոնք գային ու նորէն կենդանանային, ի՞նչեր չէին ըներ յաւիտենական կենաց համար։ Իսկ ես որ դեռ ժամանակ ունիմ, ի՞նչ կ'ընեմ հոգ-

1 Յշ. Փոյթին կենաց։ Գլ. Գ։

ւոյս համար։ Դիր թէ այն սուրբը խոնարհութեան համար այսպէս կ'ըսէր. բայց վախեմ թէ դու, սիրելի եղբայր, իրաւամբք կրնաս սոսկալ, որ չըլլայ թէ այն անպտուղ թզենին ըլլաս՝ որոյ համար ըսաւ Տէրն մեր. Ահա երեք տարիէն ի վեր է որ կու գամ թզենւոյդ վրայ պտուղ փնտռելու և չեմ գտներ [1]։

Դու երեք տարիէն աւելի է որ աշխարհքիս մէջն ես, ի՞նչ պտուղ տուած ունիս։ Նայէ, կ'ըսէ սուրբն Բեռնարդոս, որ Տէրն մեր չէ թէ միայն ծաղիկ կը փնտռէ, հապա նաև պտուղ ալ կուզէ. այսինքն, չէ թէ սոսկ բարի փափաք և առաջադրութիւններ կը փնտռէ, հապա սուրբ գործեր ալ կ'ուզէ։ Ուրեմն գիտցիր բանի բերել այդ ժամանակն զոր Աստուած իւր ողորմութեամբն քեզ կու տայ. բարեգործութիւն ընելու ուրիշ ժամանակի մի՛ սպասեր, չըլլայ թէ ա՛լ ատեն չմընայ, ու քեզ ըսեն թէ ա՛լ ժամանակ չկայ՝ երթանք, շուտ ըրէ. աշխարհէս ելնելու ատենդ է, շուտ ըրէ, ինչ որ ըրիր՝ ըրիր։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ահա, տէր իմ, ես եմ այն ծառն, որ շատոնց արժանի էի լսելու, ա՛լ կարէ զանի-

1 Ահա երեք ամ են յորմէ հետէ դամ խնդրել պտուղ ի թզենւոջդ և ոչ գտանեմ։ Ղկ. ԺԳ. 7։

կայ, ինչու այդ երկիրը կը խափանէ [1]։ Այո այո, վասն զի շատ տարի է որ երկրիս վրայ եմ ու ուրիշ պտուղ չի տուի քեզ բայց եթէ մեղացս փուշն ու տատասկը։ Բայց դու տէր, չես ուզեր որ ես յուսահատիմ. դուն ըսիր ամենուն՝ ով որ զիս կը փնտռէ կը գտնէ. խնդրեցէք և գտանէք։ Ես զքեզ կը խնդրեմ, Աստուած իմ, և քու շնորհդ կ'ուզեմ։ Որչափ որ զքեզ դառնացուցեր եմ կը ցաւիմ ի բոլոր սրտէ, կը փափաքէի ցաւէս մեռնիլ։ Առաջ քեզմէ կը փախչէի, հիմայ աւելի կ'ուզեմ քու բարեկամութիւնդ՝ քան թէ աշխարհիս բոլոր թագաւորութիւնները։ Զեմ ուզեր ալ ես զէմ դնել քու ձայնիդ։ Կ'ուզես որ ես բոլորովին քուկդ ըլլամ. ես ալ զիս բոլորովին քեզ կու տամ, առանց բան մը պահելու։

Դու զքեզ խաչին վրայ բոլոր ինձ տուիր, ես ալ զիս բոլոր քեզ կու տամ. դու ըսիր, ինչ որ իմ անուամբս խնդրէք՝ կ'ընեմ [2]։ Արդ Յիսուս փրկիչ իմ, այս մեծ խոստմանդ ապաւինելով, և քու անուամբդ քու արդիւնքովդ, շնորհքդ կը խընդրեմ, սէրդ կը փնտռեմ։ Տուր, տէր, որ

1 Արդ կարեա զչա, ընդէր և զերկիրդ խափանէ։ Ղկ. ԺԳ. 7։

2 Զոր ինչ խնդրիցէք յանուն իմ արարիցս զայն։ Յովհ. ԺԴ. 14։

առաւելուն քու շնորհքդ և քու սուրբ սէրդ յիմ հոգիս, ուր առաւելան մեղք։ Գոհանամ զքէն, որ ինձ այս սիրտը տուիր այս աղօթքս քեզ ընելու. որովհետև դու զիս դրդեցիր, նշան է թէ աղօթքս լսել կ'ուզես. լսէ ինձ Յիսուս փրկիչ իմ. տուր ինձ որ մեծապէս սիրեմ զքեզ. տուր ինձ մեծ բաղձանք մի զքեզ հաճեցընելու, և զօրութիւն ալ տուր ի գործ դնելու։ Ո՛վ իմ մեծ փաստաբանս, սուրբ կոյս Մարիամ, դու ևս լսէ իմ աղաչանացս, և աղաչէ ինձ համար զՅիսուս։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Բ.

ՄԱՀՈՒԱՄԲ ԱՄԵՆԱՑՆ ԻՆՁ ԿԸ ԼՄՆՆԱՑ

Վախճանն հասաւ [1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Աշխարհասէր մարդիկ բարեբաղդ կը սեպեն զանոնք միայն որ այս աշխարհիս բարիքը, հաճոյքը, ճոխութիւնը և փառքն ու պատիւը կը վայելեն։ Բայց մահն վերջ կու տայ այս ամենայն երկրաւոր բախտաւորութեանց։ Ի՞նչ բան է ձեր կեանքը, կը գոչէ առաքեալն. մրրկի նման էք, որ քիչ մը ատեն կ'երեւի ու կ'անցնի [2]։ Երկրէս դէպ

1 Եհաս վախճան։ Եզեկ. Ի. 6։

2 Որպիսի՞ իցեն կեանք ձեր. զի իբրև զմրրիկ էք, որ առ սակաւ մի երևեալ՝ և ապա ապականեալ։ Յակ. Դ. 15։

ի վեր ցնդած շոգիներն երբեմն օդուն մէջ արեգական ճառագայթներովը լուսաւորուած գեղեցիկ բան մը կ'երևին, բայց որչափ կը դիմանայ այդ երևոյթը. քիչ մը հով բոլորովին կը ցրուէ ու անհետ կ'ընէ: Ահա քեզի այն մեծ մարդը որ այսօր փառք, պատիւ ունի, ամէնքը իրմէ կը վախնան, և գրեթէ զինքը կը պաշտեն. մէյմ'ալ վաղը մեռածին պէս կ'անիծեն, կ'անարգեն ու ոտքի տակ կը կոխկռտեն: Մահուան հետ ամէն բան ալ պիտի թողու: Մեծ ծառայն Աստուծոյ Թովմաս գեմբացի եղբայր մ'ունէր, որ կը պարծէր թէ գեղեցիկ տուն մը չինել տուեր է. բայց իր բարեկամներէն մէկը ըսաւ որ չինած տունդ մեծ պակսութիւն մ'ունի. — ինչ է ըսաւ: Պատասխան տուաւ թէ այն է որ դուռ ալ չինել տուեր ես: — Ինքն ալ հարցուց. ինչ դուռն ալ տան պակսութիւն է: — Այո՛, ըսաւ բարեկամը, վասն զի օր մը դուն այդ դռնէն մեռած դուրս պիտի ելնես, և այնպէս տունդ ալ ու ամէն բանդ ալ պիտի թողուս:

Մահը վերջապէս կը մերկացընէ զմարդ այս աշխարհիս ամէն բանէն: Այն ինչ տեսարան է, տեսնել իշխան մը որ իր պալատէն կը վռընտեն, և մէյմ'ալ չի կրնար ներս մտնել. ուրիշները տէր կ'ելնեն իր բաներուն ալ, ստրկին ալ, և ուրիշ իր ամէն ունեցածներուն ալ. ծառաները զին-

քը կը ձգեն գերեզմանին մէջ, և հազիւ լաթով մը կը թողուն որ մարմինը ծածկուի. ալ զինքը բանի տեղ դնող չըկայ, իրեն չողջորթութիւն ընող չկայ, իր տուած հրամաններուն մտիկ ընող չըկայ: Սալահատտին որ Ասիոյ շատ տէրութեանց տիրեց, մեռնելու ատեն ըսած էր թէ մարմինս երբ թաղելու կը տանիք, մէկը առջևէն թող երթայ շապիկ մը ձողէ կախած տանելով ու կանչէ. Այս է միայն որ Սալահատտին իրեն հետ գերեզման կը տանի: Իշխանին մարմինը գերեզման դրուելէն ետև միսը կը քայքայի, կմախք մը կը մնայ, որ ուրիշներէն չի տարբերիր: Սրբոյն Բարսղի ըսածին պէս, գնա գերեզմանները նայէ, կրնաս որոշել թէ որն է ծառայն, որն է տէրը: Օր մը մեծն Աղեքսանդր տեսաւ որ Դիոգինէս կ'աշխատէր բան մը կը փնտռէր մեռելներուն գլուխներուն մէջ. հետաքրքրութիւնը շարժելով հարցուց Աղեքսանդր, ի՞նչ կը փնտռեսս: Նա ալ պատասխանեց թէ քու հօրդ Փիլիպպոս թագաւորին գլուխը կը փնտռեմ և չեմ կրնար որոշել. թէ որ դու կարենաս գտնել, ինձի ցոյց տուր. Այս աշխարհիս վրայ մարդիկ անհաւասարապէս կը ծնանին. բայց մահուընէ ետև ամէնքն ալ իրարու կը հաւասարին: Սենեկա կ'ըսէր թէ անման կը ծնանինք, նման կը մեռնինք. Որատիոս ալ կ'ըսէ, թէ

մահը զթագաւորական գաւազանը բահի կը հաւասարէ։ Մէկ խօսքով երբ մահը կու գայ՝ վախճանն հասաւ, ամէն բան կը լմննայ, ամէն բան հոս կը մնայ և աշխարհէս բան մը գերեզման չենք կրնար տանիլ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Տէր Աստուած իմ, որովհետև ինձի լոյս կու տաս ճանչնալու թէ ինչ որ աշխարհս մեծ բանի տեղ կը դնէ ամէնն ալ ծուխ են բոլորովին և յիմարութիւն՝ այժ տուր ինձի որ կարող ըլլամ զիս անոնցմէ բաժնել, քանի որ մահը զանոնք ինձմէ չէ բաժներ։ Այս ինչ թշուառ գտնուեր եմ ես. քանի՞ քանի՞ անգամ այս աշխարհիս ընդունայն հաճոյից և բարեաց համար դառնացուցեր և կորսընցուցեր եմ զքեզ, որ իմ ծայրագոյն բարիքն ես։ Յիսուս փրկիչ իմ, բժիշկդ երկնաւոր, մէյմը դարձուր աչքդ ողորմելի հոգւոյս վրայ. տես իմ անչափ խոցերս, վէրքերս որ ես ինձի տուեր եմ իմ մեղքերովս. գթա և ողորմէ ինձի։ Տէր, եթէ կամիս կարող ես զիս սրբել. գիտեմ որ կրնաս ալ, կ'ուզես ալ զիս բժշկել. բայց բժշկուելու համար կ'ուզես որ ես ալ զղջամ իմ քեզի դէմ ըրած մեղքերուս վրայ։ Այո այո, ես ալ կը զղջամ

ջամ ի բոլոր սրտէ. ուրեմն բժշկէ զիս հիմայ որ կարող ես. բժշկէ զիս, քեզի դէմ մեղանչեցի[1]։ Լաւ գիտեմ մոռցայ, բայց դու զիս չի մոռցար, ու հիմայ ալ կ'իմացընես ինձի թէ մոռնալ կ'ուզես իմ քեզի դէմ ըրած չարիքներս թէ որ ես ալ զղջիմ անոնցմէ. վասն զի անօրէնը թէ որ դառնայ իրեն ըրած ամէն անօրէնութիւններէն, անոնք պիտի չյիշուին[2]։ Ահաւասիկ ես ալ կը դարձիմ կը զղջիմ բոլոր գործած մեղքերէս. դու ալ մոռցիր, ով փրկիչ իմ, որչափ որ զքեզ դառնացուցեր եմ. ասկից ետև պատրաստ եմ ամէն բան կորսընցուցեալ, կեանքս ալ, քան թէ քու շնորհդ։ Ի՞նչ բանի կու գան ինձի աշխարհիս բարիքը առանց քու շնորհացդ։

Օգնէ ինձի տէր, որ գիտես թէ որչափ տկար եմ ես։ Դժոխք պիտի չի դադարին զիս փորձելէն. արդէն կը պատրաստուին հազար կերպով վրաս վազել, որ նորէն զիս գերի ընեն։ Հապա, փրկիչ իմ Յիսուս, զիս երեսէ մի՛ ձգեր, իմ փափաքս այս է որ այսօրուընէ գերի ըլլամ քու սի-

1 Բժշկեա զանձն իմ, եւ մեղայ քեզ։ Սաղմ. Խ. 4։

2 Անօրէնն եթէ դարձցի յամենայն անօրէնութեանց իւրոց զոր արար... ամենայն անիրաւութիւնք նորա զոր անիրաւեալ իցէ, մի յիշեսցին։ Եզեկ. ԺԸ. 21. 22։

բոյդ։ Դու ես միայն իմ տէրս, դու զիս ստեղծեցիր, դու զիս գնեցիր ու փրկեցիր. դու ես որ ամենէն աւելի զիս սիրեցիր, դու միայն արժանի ես սիրուելու, ես ալ կ'ուզեմ միայն զքեզ սիրել։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Սպանիոյ Թագաւորը Փիլիպպոս երկրորդ, մեռնելու ատեն կանչեց իւր տըղան, ու մէկդի ընելով վրայի արքունական ծածկոցը կուրծքը ցրցուց. զոր որդերը կրծած էին, ու ըսաւ. Նայէ, իմ արքայորդիս, թէ ինչպէս կ'ըլլայ մեռնիլը, և ինչպէս կը վերջանան աշխարհիս ամէն մեծութիւնները։ Աղէկ կ'ըսէ Թէոդորեստոս թէ մահը ոչ հարստութենէ կը վախնայ, ոչ թիկնապահ ծառաներէն, և ոչ թագաւորական թագէն ու ծիրանիէն. ուստի թէ ծառայից և թէ իշխանաց ետևէն փոտութիւնը կ'երթայ ու թարախը կը վազէ։ Ուստի ամէն մեռնող, թագաւորն ալ, բնաւ բան մը հետերնին գերեզման չեն տանիր. բոլոր փառքը անկողնոյն մէջ կը մնայ, ուր որ հոգին կու տայ. վասն զի ոչ մեռնելու ատեն հետը ամէն բան պիտի առնու և ոչ իւր տան փառքը

իրեն հետ գերեզման պիտի իջնեն, կ'ըսէ սաղմոսերգուն [1]։

Կը պատմէ սուրբն Անտոնինոս թէ երբոր մեծն Աղեքսանդր մեռաւ, փիլիսոփային մէկը բարձր ձայնով ըսաւ. Ասոր նայեցէք, որ երէկ հողուն վրայ կը կոխէր, հիմայ հողուն տակ ճզմուեր է. երէկ բոլոր երկիրս իրեն չէր բաւեր, հիմայ եօթն թիզ տեղ կը բաւէ. երէկ զօրաց բանակներ կը քալեցրնէր երկրիս վրայ, հիմայ քանի մը բեռնակրով հողուն տակ տարուեցաւ։ Ուրեմն աղէկ հասկընանք Աստուծոյ ըսածը թէ ինչ կը հպարտանաս հող և մոխիր [2]։ Ո՛վ մարդ, չե՞ս տեսներ որ հող ու մոխիր ես, և ի՞նչ բանիդ կը հպարտանաս. ի՞նչ բանի կը ծախես խելքդ, միտքդ, տարիներդ. ինչո՞ւ աշխարհիս մէջ մեծնալ կ'ուզես, կու գայ կու գայ մահդ, այն ատեն կը վերջանան քու ամէն մեծութիւնքդ, քու ամէն խորհուրդներդ։ Եւ նոյն օրն անոնց ամէն խորհուրդները պիտի կորսուին [3]։

Ով թէ որչափ երջանիկ եղաւ սրբոյն

1 Զի ոչ թէ ի մեռանել իւրում առցէ ընդ իւր զամենայն, և ոչ թէ իջցեն փառք տան նորա ընդ նմա։ Սաղմ. ԽԸ. 17։

2 Զի՞ հպարտանաս հող և մոխիր։ Սիր. ժ. 9։

3 Եւ յայնմաւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա։ Սաղմ. ՃԽԵ. 3։

Պողոսի անապատականին մահը, որ վաթսուն տարի քարայրի մը մէջ փակուած կեցաւ, քան թէ Ներոնին մահը, որ Հռովմայ կայսր եղաւ։ Ո՞րչափ բարեբախտ եղաւ սրբոյն Փելիքսի քափուչին աշխատաւոր եղբօր մահն, քան թէ Հենրիկոս ութերորդին մահն որ թագաւորական մեծութեանց մէջ ապրեցաւ, բայց Աստուծոյ թշնամի մեռաւ։ Այս ալ հասկընալու է որ սուրբերն այսպիսի երջանիկ մահ ունենալու համար ամէն բան մէկ դի թողուցին, հայրենիք, փափկութիւն, աշխարհիս խոստմանց յոյսը, ու զիրենք տուին խեղճ և անարգ կենաց։ Կենդանի կենդանի թաղուեցան այս երկրիս վրայ, որպէս զի մեռնելու ատեն դժոխքը չթաղուին։ Բայց աշխարհասէրք մեղաց մէջ, երկրաւոր հաճոյից մէջ, ու այնչափ վտանգաւոր առիթներու մէջ ապրելով ի՞նչպէս երջանիկ մահուան յոյս կրնան ունենալ։ Աստուած կը սպառնայ մեղաւորաց թէ մահուան ատեն զիս պիտի փնտրուիք ու պիտի չի գտնէք[1]։ Այն ատեն, կ'ըսէ, ողորմութեան ժամանակ չէ, հապա վրէժխնդրութեան. վասն զի ժամանակին պիտի հատուցանեմ[2]։ Խելքն ալ այս կը սորվեցընէ. վասն զի աշխարհասէր մարդը

1 Խնդրէք զիս և ոչ գտանիցէք։ Երեմ. 13։
2 Հատուցից ի ժամանակի։ Բ. Օրէնք. ԼԲ. 35։

մահուան ատեն մոքով տկար կ'ըլլայ, մութը պատած, սիրտը քարացած իւր ունակացեալ չարիքներով։ Փորձութիւններն աւելի կը զօրանան. և ով որ սորվեր է միշտ անոնց տեղիք տալ ու յաղթուիլ, ի՞նչպէս պիտի կարենայ դէմ կենալ անոնց մահուան ժամանակ։ Աստուածային զօրաւոր շնորհք մը պէտք է նոյն ատեն որ անոր սիրտը փոխէ. բայց պարտական է արդեօք Աստուած այդ շնորհը տալու. ի՞նչ, միթէ արժանի է այդ շնորհքին անարգ կեանք անցընելուն համար։ Եւ սակայն բանը կամ յաւիտեան երջանիկ ըլլալու վրայ է, և կամ յաւիտեան կորսուելու։ Այս բանս որ մէկը մոռնէ և կը հաւատայ հաւատոյ ճշմարտութեանց, ի՞նչպէս կարելի է որ ամէն բան չթողու ու բոլորովին զինքը Աստուծոյ չի տայ, որ ըստ մեր գործոց զմեզ պիտի դատէ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՜Հ Տէր, քանի՞ քանի գիշեր ես թշուառականս քուն եղեր եմ քու շնորհքէդ դուրս ինկած։ Ո՜Հ ի՞նչ թշուառ վիճակի մէջ էր այն ատեն իմ հոգիս։ Ատելի էր քու աչքիդ, և իրեն փոյթը չէր քու ատելութիւնդ. արդէն դատապարտուած

էի գժոխք երթալու, միայն քու վճռայդ կատարուիլը կը մնար։ Այլ դու Աստուած իմ, զանց չըրիր ինձի այցելութեան գալու, և յորդորելու որ թողութիւն խընդրեմ։ Բայց ո՞վ զիս կ'ապահովցընէ թէ դարձեալ թողութիւն տուեր ես ինձի։ Եւ միթէ, ով փրկիչ իմ Յիսուս, այս վախիս մէջ պիտի մնամ ինչուան որ զիս դատես։ Բայց այն ցաւն զոր կ'իմանամ զքեզ վշտացընելուս համար, և փափաքն զոր ունիմ զքեզ սիրելու, մանաւանդ քու շարչարանքներդ, սիրելիդ իմ փրկիչ, յոյս կու տան ինձի ի շնորհս քո մնալու։ Կը ցաւիմ, կը զղջամ զքեզ դառնացընելուս վրայ, ով ծայրագոյն բարիդ. կը սիրեմ զքեզ ամէն բանէ վեր։ Կ'առաջադրեմ ամէն բան կորսընցընել, քան թէ քու շնորհքդ ու քու սէրդ։ Կ'ուզես որ ուրախ ըլլայ անոնց սիրտը որոնք զքեզ կը փնտռեն[1]։ Ահա, Տէր, կը ցաւիմ ամէն անօրէնութեանցս վրայ որ քեզի դէմ ըրեր եմ. սիրտ տուր ինձի և քաջալերութիւն, այլ երեսս մի դարներ իմ ապերախտութիւնս, ես կը ճանչնամ ու կը դարչիմ անոնցմէ։ Դու ըսիր, թէ չեմ ուզեր մեղաւորին մահը այլ անոր դառնալն ու ապրիլը[2]։ Այո այո,

1 Ուրախ լեցի սիրտ որ խնդրէ զՀաճոյս նորա (տեառն)։ Ա. Մնաց. ԺԱ. 10։

2 Ոչ կամիմ զմահ մեղաւորին այլ զդառնալ նորա և զկեալ։ Եզեկ. Գ. 11։

Աստուած իմ, ամէն բան մէկ դի կը ձգեմ, և առ քեզ կը դառնամ, զքեզ կը խնդրեմ, զքեզ կ'ուզեմ, զքեզ կը սիրեմ ամէն բանէ վեր։ Տուր ինձի քու սէրդ, այլ աւելի բան չեմ ուզեր։ Ո՛վ մայր ողորմութեան, դու ես յոյս և ապաւէն իմ, խնդրէ ու առ ինձի համար յարատևութեան սուրբ շնորհքը։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Այս կենացս երջանկութիւնը Դաւիթ մարգարէն իբրև երազք զարթուցելոց[1] կը կոչէ, որ մեկնիչ մը կ'ըսէ, թէ վասն զի երազը թմրած զգայութեանց մեծ բան մը կ'երևի, բայց՝ չէ, և շուտով կը թռչի կ'երթայ։ Աշխարհիս բարիքն ալ մեծ մեծ բաներ կ'երևին, բայց բան մը չեն, և քիչ ալ կը դիմանան. ինչպէս երազն ալ կարճ կը տևէ ու եռքը բոլորովին կը ցրուի կ'երթայ։ Այս մտածութիւնս թէ մահուամբ ամէն բան կը վերջանայ, սրբոյն Փրանկիսկոսի Պորճեան մասնաւոր շնորհք մը տուաւ որ զինքը բոլորովին Աստուծոյ տայ։ Իւր սրտին շատ դպաւ Իզապէլլա կայսրուհւոյն դիակին հետ կառնադա եր-

1 Որպէս երազք զարթուցելոց։ Սաղմ. ՀԲ. 16։

թալը։ Երբ անոր սնտուկը բացուեցաւ՝ վախերնէն, գարշահոտութենէն ամէնքը փախան. իսկ սուրբն Փրանկիսկոս առ-տուածային լուսով շարժեալ կեցաւ ու այն մեռած դիակին վրայ աշխարհիս ունայ-նութիւնը սկսաւ մտածել, և անոր վրայ նայելով ըսաւ. Ուրեմն դու իմ կայսրու-հին ես. դու այն ես որոյ առջև այնչափ մեծամեծներ յարգութեան համար ծունր կը դնէին. ո՛վ Իզաբելլա թագուհի, ո՞ւր է քու այնչափ փառաւորութիւնդ, ո՞ւր է քու գեղեցկութիւնդ։ Եւ քիչ մը դալով սկսաւ ըսել. Ուրեմն այսպէս կը վերջանան երդեր աշխարհիս մեծութիւն-ները, թագն ու պսակը։ Ուստի այս օրէս ետև կ'ուզեմ այնպիսի տիրոջ մը ծառա-յել՝ որ չկարենայ բնաւ մեռնիլ։ Եւ այս-պէս այն ատենէն տուաւ ինքը զինքը բո-լորովին ի սէր խաչելեալ փրկչին, և ուխտ ըրաւ որ կրօնաւոր ըլլայ թէ որ կինը մեռ-նի. ինչպէս ետքէն կատարեց Ցիսուսեանց կարգը մտնելով։

Շատ աղէկ գրեց իմաստուն մար-դուն մէկը մեռելի մը գանկին վրայ այս խօսքս՝ թէ մտմտացողին ամէն բան փուճ և չնչին կ'երևի։ Որ է ըսել թէ մահը, մը-տածողն, չի կրնար դաշխարհ սիրել։ Հա-պա ինչու այսչափ մարդիկ աշխարհասէր են. վասն զի մահերնին չեն մտածեր։ Որ-դիք մարդկան, մինչև երբ խստասիրտ էք, ինչու նանրութիւն կը սիրէք և ստութիւն կը փնտռէք[1]։ Ողորմելի որդիք Ադամայ, կ'ըսէ մեզի Հոգին սուրբ, ինչու սրտերնէդ աշխարհի սէրը չէք վաներ, որ ձեզի ընդ-դունայնութիւն ու ստութիւն սիրել կու տայ։ Այն բանն որ ձեր պապերուն գլխէն անցաւ, ձեր գլխէն ալ պիտի անցնի։ Ա-նոնք ալ այս ձեր նստած տունը նստան, անոնք ալ այդ անկողինը պառկեցան, իսկ հիմայ ո՞ւր են. նոյն բանը ձեզ ալ պիտի ըլլայ։

Ուրեմն, սիրելի եղբայր, շուտով զքեզ Աստուծոյ տուր՝ մահդ գալէն առաջ. ինչ որ ձեռքէդ կու գայ, որչափ որ կրնաս գործել՝ գործէ[2]. ինչ որ այսօր կրնաս ընել վաղուան մի՛ ձգեր. վասն զի այս օր կ'ան-ցընի մէյմ՚ալ չի դառնար. մահն ալ վաղը կրնայ գալ..որ ա՛լ թող չի տար քեզի բան մ՚ընել։ Շուտով հեռացուր զքեզ այն ա-մէն բաներէն որ Աստուծմէ կ'ստարացնեն, կամ ստարացնել կրնան։ Շուտով մէկդի ձգենք մեր սրտէն այս աշխարհիս բարի-քը, քանի որ մահը չէ եկեր ու բռնու-թեամբ մեզմէ չէ հաներ. Երանի՜ այն մե-

1 Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խստա-սիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն։ Սաղմ. Գ. 2։

2 Ջամենայն ինչ որ ինչ գտցէ ձեռն քո գործել, որչափ ի կարի քում իցէ՝ գործեսջիր։ Ժող. Թ. 10։

ռելոց որ առ Աստուած ննջեցին [1]։ Երնեկ անոնց որ մեռնելու ատեն արդէն մեռած կը գտնուին այս աշխարհիս յոժարութիւններէն։ Այսպիսիներուն՝ մահը վախնալու բան չէ, հապա փափաքելով և ուրախութեամբ կ'ողջագուրեն զայն, վասն զի մահը փոխանակ բաժնելու զիրենք սիրած բաներնէն՝ կը միացընէ զիրենք իրենց բարւոյն հետ, զոր միայն կը սիրէին, և որ յաւիտեան զիրենք երջանիկ պիտի ընէ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Սիրելիդ իմ փրկիչ, գոհանամ զքէն, որ ինձի համբերեցիր. ի՞նչ պիտի ըլլայի թէ որ քեզմէ հեռու եղած ատենս մահս եռեւէս հասցընէիր։ Օրհնեալ ըլլայ յաւիտեան քու ողորմութիւնդ և համբերութիւնդ, զոր այսքան տարի վրաս ցըցուցիր։ Շնորհակալ կըլլամ քեզի այն լուսոյն և շնորհաց համար՝ որով հիմայ ինձի կ'օգնես ձեռքէս բռնածի պէս։ Ատենով ես զքեզ չէի սիրեր և փոյթս ալ չէր քու զիս չի սիրելդ. հիմայ բոլոր սրտանց կը սիրեմ ըզ-

1 Երանի մեռելոցն որք ի տէր ննջեցին։ Յայտ. ԺԴ. 13։

քեզ, և մեծապէս կը ցաւիմ որ այսպէս նեղացուցեր եմ զամենաբարի Աստուածդ իմ։ Ցանկանք է ինձի այս ցաւն, բայց քաղցր տանջանք. վասն զի այս ցաւն, յոյս կու տայ ինձի, թէ արդէն ներած պիտի ըլլաս իմ յանցանքներուս։ Ո՜հ, քաղցր փրկիչ իմ, երանի թէ հազար անգամ մեռած ըլլայի, ու զքեզ բնաւ դառնացուցած չըլլայի։ Դող կելնէ սիրտս որ չըլլայ թէ ասկից ետև նորէն զքեզ վշտացընեմ։ Կ'աղաչեմ, մեռցուր զիս ինչ և իցէ դառն մահուամբ, քանի որ նորէն քու շնորհքդ չեմ կորսընցուցած։ Ատեն մը դժոխքին գերին եղայ, բայց հիմայ քու ծառայդ եմ, ով Աստուած սրտի իմայ։ Դու ըսիր թէ ես զիս սիրողները կը սիրեմ. արդ ես զքեզ կը սիրեմ. ուրեմն ես քուկդ եմ, դու ալ իմս ես։ Բայց ասկից ետև ալ կրնամ զքեզ կորսընցընել, ուստի այս շնորհքս ալ քեզմէ կը խնդրեմ որ ինձի աւելի մահ տաս քան թէ ես զքեզ նորէն կորսընցընեմ։ Դու ինձի այնչափ շնորհքներ ըրած ես որ չէի խնդրած. ուստի անտարակոյս եմ որ կուզես այս խնդրած շնորհքիս աղաչանքը լսել։ Մի՛ թողուր որ մէյմըն ալ զքեզ կորսընցընեմ. քու սէրդ տուր ինձի, ալ ուրիշ բան չեմ ուզեր։ Մարիամ կոյս, յոյս իմ և ապաւէն, բարեխօս եղիր ինձի համար։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Գ.

ԿԱՐՃՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՑ

Ի՞նչ բան է ձեր կեանքը։ Մրրկի պէս էք որ քիչ մ՚ատեն կ՚երևի և ետքէն կ՚ապականի [1].

ՄԱՄՈՆ ԱՌԱՋԻՆ

Ի՞նչ է մեր կեանքն. մրրիկ մը ու գոլորշիք մը կը նմանի՝ որ քիչ մը քամիով աներևոյթ կըլլայ կերթայ։ Ամէնքը գիտեն որ պիտի մեռնին, բայց շատ այնպէս խաբուած են որ կարծեն թէ մահն իրենցմէ հեռու է. իբրև թէ բնաւ մեռնելիք չունին։ Բայց չէ, Յոբ կըսէ մեզի, թէ մարդուս կեանքն կարճ է. կանանցածին մարդը սակաւակեաց է, որ ծաղկի պէս ծաղկած

1 Որպիսի՞ ինչ են կեանք ձեր. զի իբրև զմրրիկ էք, որ առ սակաւ մի երևեալ, և ապա ապականեալ։ Յակ. Դ. 16։

թօթափեցաւ [1]։ Այս բանս Աստուած Եսայեայ մարգարէին ալ հրամայեց քարոզել. դոչէ, կըսէ, ամենայն մարմին խոտ է, և մարդուս ամենայն փառքը խոտոյ ծաղկի պէս է։ Իրաւցընէ խոտ է ժողովուրդս այս. խոտը ցամաքեցաւ, և ծաղիկը թօթափեցաւ [2]։ Մարդուս կեանքը խոտի մը կենաց պէս է. մահը կու գայ, այդ խոտը կը չորնայ. կեանքը կը հատնի, այխարհիս մեծութեանց և ամէն բարութեանց ծաղիկը կիյնայ։

Իմ կեանքս սուրհանդակէն ալ աւելի թեթևադոյն է կըսէ Յովբ [3]։ Մահը մեզի ընդ առաջ կու գայ սուրհանդակէն ալ աւելի շուտ վազելով, մենք ալ վայրկենէ վայրկեան դէպ ի մահ կը դիմենք. ամէն ոտք առնելնուս և ամէն շունչ առնելնուս դէպ ի մահ կը մօտենանք։ Սուրբն Հերոնիմոս կըսէ, թէ այս գրած ատենս ալ կեանքէս մաս մը կը վերնայ, հիմայ որ կը խօսիմ դէպ ի մահ կը վազեմ։ Ամէնքս ալ

1 Այր կանանցածին սակաւակեաց է . . . որ իբրև զծաղիկ ծաղկեալ թօթափեցաւ։ Յովբ. ԺԴ. 1։

2 Դոչէիր, ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ . . . արդարև խոտ է ժողովուրդս այս. ցամաքեցաւ խոտն, և թօթափեցաւ ծաղիկն։ Էս. Խ. 7. 8։

3 Այլ կեանք իմ թեթևադոյն են քան զսուրհանդակ։ Յովբ. Թ. 25։

պիտի մեռնինք, և թափուած ջրի պէս ալ մէյմըն ալ պիտի չամիսփուին[1]: Այլ սա գետակն ինչպէս ծով կը վազէ. և այն ջրերն ալ ետ դառնալիք չունին: Այսպէս ալ, ով սիրելի եղբայր, քու օրերդ կանցնին ու կերթան, և օրէ օր դէպ ի մահ կը մօտենաս. եթէ հաճոյք են կանցնին, եթէ զբօսանք են կերթան. փառք, պատիւ, գովեստ են կանցնին, և ի՞նչ կը մնայ: Յովբայ ըսածին պէս միայն գերեզման կը մնայ ինձի[2]: Փոսի մը մէջ պիտի թխեն զմեզ, և հոն ամէն բանէ մերկացած պիտի մնանք ու փտտինք. մահուան ատենները մեր կենաց մէջ սիրած ու վայելած բաներնուս յիշատակը, այն ամէն փառքն ու պատիւն որ ունեցեր ենք, ուրիշ բանի պիտի չի գան, բայց եթէ մեր սրտին ցաւը աւելցընելու, ու յաւիտենական փրկութեան հասնելու վստահութիւններս պակսեցընելու: Այն ատեն ողորմելի աշխարհասէրը պիտի ըսէ, ուրեմն քիչ մը ատենէն պիտի թողում երթամ սա տունս, պարտէզս, տանս զարդարանքները, այն պատկերները, այն հագուստները, և միայն գերեզմանը պիտի մնայ ինձի:

Ա՜հ ա՜հ. այն ատեն մարդուս աչքին

1 Իբրև զջուր հեղեալ յերկիր ոչ ամիսփիցի: Բ. Թագ. ԺԴ. 14:
2 Կարօտիմ գերեզմանի: Յոբ. ԺԷ. 1:

աշխարհիս և ոչ մէկ բարիքն ալ բան կերևի, այլ միայն զանոնք սիրելուն ու անոնց սիրտը կապելուն համար կը տանջուի. և այս տանջանքս ուրիշ բանի չի դար՝ բայց եթէ իրեն հոգւոյն փրկութիւնը աւելի վտանգի մէջ ձգելու. փորձով ալ տեսնուած է՝ որ այսպիսի աշխարհասէր մարդիկ մեռնելու ատեն չեն ուզեր ուրիշ բանի վրայ խօսք լսել, բայց միայն իրենց հիւանդութեան վրայ, բժիշկ կանչելու, օգտակար դեղ մ՚ընելու, հապա թէ հոգւոյն համար խօսք մ՚ըլլայ. իսկոյն կը ձանձրանան կը նեղանան, թողուցէք զիս կըսեն որ քիչ մը հանգչիմ, գլուխս կը ցաւի, խօսելու ձայն լսել չեմ կրնար. և թէ որ երբեմն պատասխան ալ տան կը շփոթին, չեն գիտեր ինչ ըսելնին: Շատ անգամ խոստովանահարը որ այսպիսեաց արձակումն կու տան, չի թէ զանոնք յաժար կը տեսնեն արձակումն առնելու, հապա թէ սպասելու ատեն չի կայ: Այսպէս կը մեռնին անոնք որ մեռնիլը շատ չեն մտածեր:

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ տէր իմ և Աստուած մեծվայելչութեան իմոյ, կ՚ամբչնամ դիմացդ երևնա-

լու։ Քանի՛ քանի անգամ ես զքեզ անար-
գեր եմ, քու շնորհքդ ոտքի տակ առեր
եմ գարշելի հաճոյից համար, բարկու-
թեան համար, հոգի մը կտորի համար,
պղտի շահու մը համար, ընդունայնու-
թեան համար։ Ո՛վ փրկիչ իմ, կը յարգեմ
ու կը համբուրեմ քու սուրբ վէրքերդ. ես
ալ քեզի ուրիշ վէրքեր տուեր եմ իմ մեղ-
քերովս. բայց յոյս ունիմ որ նոյն փրգգդ
թողութիւն և փրկութիւն գտնեմ։ Ով
Յիսուս փրկիչ, ճանչցուր ինձի այն ծանր
անարգանքներն որ քեզի ըրած եմ, երբոր
թողուցի զքեզ, աղբիւրդ ամենայն բա-
րեաց, ու գնացի հոտած ու թունաւոր
ջրեր խմելու։ Ի՞նչ բան կը գտնեմ վրաս
քեզի դէմ ըրած այդչափ անկարգու-
թեանցս մէջ, բայց եթէ սրտի անհանգըս-
տութիւն, խղճմտանքի խայթոց, և դը-
ժոխքի արժանաւորութիւն։ Հայր, ա՛լ
արժանի չեմ քու որդիդ կոչուելու[1]։ ա՛լ
արժանի չեմ քու որդիդ ըլլալու շնորհքին։
Բայց դուն ինձի թողութիւն տալու համար
մեռար. դու ըսիր ինձի թէ դարձիր, ես
ալ քեզի կը դառնա[2]։ Այսկից ետև մէկ-
դի կը թողում իմ ամէն հաճոյքս, կը հրա-

1 Հայր, ոչ ևս եմ արժանի կոչիլ որդի քո։
Ղուկ. ԺԵ. 21։

2 Դարձարուք առ իս, և ես դարձայց առ ձեզ։
Զաք. Ա. 3։

ժարիմ աշխարհիս ամէն ախորժելի բա-
ներէն, և առ քեզ կը դառնամ։ Թողու-
թիւն շնորհէ իմ պատճառաւս թափած
արեանդ համար. կը ցաւիմ ի բոլոր սրտէ
քեզի դէմ ըրածներուս, կը զղջամ և կը
սիրեմ զքեզ ամէն բանէ վեր։ Արժանի
չեմ ես զքեզ սիրելու, բայց դու արժանի
ես սիրուելու. ընդունէ զիս զքեզ սիրելու
և մի՛ մերժեր այն սիրտը որ այնչափ ատեն
զքեզ անարգեր է։ Դու չթողուցիր զիս որ
մեղաց մէջ մեռնիմ, որպէս զի զքեզ սի-
րեմ. այս կուզեմ սիրել զքեզ մնացած
կենացս մէջ և ուրիշ բան չեմ ուզեր սի-
րել բաց ի քէն։ Օգնէ ինձի, յարատևու-
թիւն տուր, և քու սուրբ սիրոյդ մէջ պա-
հէ։ Մարիամ կոյս, յոյս իմ և ապաւէն,
յանձնէ զիս Յիսուս փրկչիս։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Եղեկիա թագաւորը մեռնելու ատեն
լսելով այսպէս կըսէր. կեանքս ոստայն բա-
նողներուն թելին պէս կտրուելու մօտե-
ցաւ[1]։ Քանի՛ քանիներ կան որ ոստայն
բանողներու պէս կը հիւսեն, այսինքն կը

1 Եղև հոգի իմ առ յինէն իբրև ոստայն սա-
տարաց, մերձ ի հատանել։ Եսա. ԼԸ. 12։

չափեն կը չափչփեն և կարգի կը դնեն ու գործել կը սկսին իրենց աշխարհային խորհուրդները. մէյմ՛ալ ինչ կը նայիս մահը կու գայ ամէն բան կը կտրէ։ Պլպլացող ճրագին վերջի լուսոյն հետ աշխարհիս ամէն բանն ալ կը լմննայ, ուրախութիւն է եղեր, գովեստ է եղեր, փառք և մեծութիւն է եղեր։ Այս ինչ մեծ գաղտնիք է մահն. ինքը պիտի ցուցընէ մեզ ինչ որ աշխարհասէր մարդիկ չեն տեսներ։ Նախանձելի հարստութիւնները, իշխանութեան բարձր աստիճանները, մեծամեծ յաղթութիւնները, երբ մահուան անկողնոյն մէջ մարդուս միտքը կկենին՝ իրենց ամէն շէնքն ու շնորհքը կը կորսընցընեն։ Այն սուտ և ունայն բարիքներն ու երջանկութիւնները, որ երևակայեր էինք, այն ատեն այնպէս կը փոխուին որ բարկութիւններս կը շարժի մեր խենթութեան վրայ։ Մահուան սև ու սգալի ստուերն ամենայն մեծութեանց վրայ, նաև թագաւորաց, կը տարածուի ու կը մթնցընէ զանոնք։

Կիրքերն, ախտերն, աշխարհիս բարիքներն ինչ որ չեն այն կերևցընեն. մահը վարագոյրը կը բանայ և կը ցուցընէ թէ ճշմարտապէս ծուխ, սիղմ, ունայնութիւն և թշուառութիւն են ամէնքն ալ։ Ո՜հ տէր, ինչ բանի կու գան մահուան ատեն հարստութիւնները, կալուածները, թագաւորութիւնները, երբ ուրիշ բան պիտի չի մնայ, բայց եթէ փայտէ սնտուկ մը, մարմինը պատելու հին լաթ մը։ Ի՞նչ բանի կու գան փառքն ու պատիւը, երբ ուրիշ բան պիտի չի մնայ՝ բայց եթէ հանդիսով թաղում մը, փառաւոր պաշտօն մը, որ եթէ հոգին կորսուած ըլլայ օգուտ մ՛ալ չունին։ Ի՞նչ բանի կու գայ մարմնոյն գեղեցկութիւնը երբ ուրիշ բան պիտի չի մնայ՝ բայց եթէ որդ, գարշահոտութիւն, և սարսափ մեռնելէն ալ առաջ, վերջն ալ բուռ մը հոտած հող ու փոշի։

Ուրիշներուն բամբասելու նիւթ տուիր զիս, անոնց ծաղր եղայ[1]։ Մեռաւ այն հարուստ մարդն, այն պաշտօնեայն, այն զօրավարն, այն ատեն ամէն տեղ կը սկսին վրան խօսիլ. թէ որ գէշ կեանք ունեցեր է, ամէնքը վար կը զարնեն զինքը, բամբասանաց նիւթ կըլլայ ամենուն, և նաև օրինակ Աստուծոյ արդարութեան ի խրատ ուրիշներուն։ Իսկ գերեզմանի մէջ ինքն ալ կերթայ ուրիշ աղբատաց ոսկորներուն հետ կը խառնուի։ Պզտիկն ալ ու մեծն ալ հոն են։ Յովբայ ըսածին պէս[2]։ Ի՞նչ շահ եղաւ իրեն մարմնոյն գեղեցիկ տեսքը, երբ հիմայ ուրիշ բան չէ՝ բայց

1 Եղեր զիս ի բամբասանս ազգաց, եղէ նոցա ծաղր։ Յովբ. ԺԷ. 6։

2 Փոքր և մեծ անդ են։ Նոյնն. Գ. 19։

եթէ որդերու բոյն մը։ Ի՞նչ բանի եկաւ իւր իշխանութիւնը, հեղինակութիւնը, երբոր հիմայ իւր մարմինը փոսի մը մէջ ձգեր են որ փտի, հոգին ալ դժոխք է իջեր որ յաւիտեան այրի։ Ա՛խ, այս ի՞նչ խենթութիւն է. ուրիշներուն վրայ նայելով այս բաներս կը մտածենք, ու մեզի ամենևին օգուտ մը չենք հաներ։ Դնենք ուրեմն մտքերնիս որ խղճմտանաց աւերութիւնը չինելու համար բուն ժամանակը մահուան ատեն չէ, հապա կենդանութեան ատենն է։

Զանանք, արտորանք հիմակուընէ ընել ինչ որ այն ատեն չենք կրնար ընել. ժամանակնիս կարճ է, ամէն բան շուտով կանցնի ու կը լմնայ. ուստի նայինք որ բոլոր ատեննիս բանեցընենք յաւիտենական կեանք վաստակելու համար։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Աստուած հոգւոյ իմոյ, ո՛ անբաւ բարութիւն, զթա ողորմէ՛ այս որ այնչափ զքեզ վշտացուցեր եմ։ Արդէն գի-

1 Եղեր գիս ի բամբասանս աղգաց, եղէ նոցա ծաղր։ Յոբ. ԺԷ. 6։

2 Փոքր և մեծ անդ են։ Նոյն. Գ. 19։

տէի ես թէ մեղանչելովս քու շնորհքդ կը կորսընցընեմ, և ուզեցի կորսընցընել։ Յոյց տուր ինձի ինչ պիտի ընեմ որ նորէն շնորհք ձեռք բերեմ։ Թէ որ կուզես որ մեղքերուս վրայ զղջամ, ահա կը զղջամ բոլոր սրտանց, և ցաւէս՝ աւելի կուզեմ մեռնիլ։ Թէ որ կուզես որ յոյս ունենամ քեզմէ թողութիւն գտնելու, ահա կը յուսամ քու սուրբ արեանդ արդեանց համար։ Թէ որ կուզես որ զքեզ ամէն բանէ վեր սիրեմ, ահա ես ամէն բան մէկդի կը թողում. ախարհիս ամէն հաճոյքէն ամէն բարիքէն կը հրաժարիմ, և ամէն բարութենէ վեր զքեզ կը սիրեմ, ով սիրելիդ իմ Յիսուս։ Թէ որ կուզես որ քեզմէ չընորհք խնդրեմ. այս երկու շնորհքը կը խնդրեմ, մէյմը՝ չթողուս զիս որ ասկէ ետև զքեզ վշտացընեմ, մէյմ՛ալ շնորհք տուր որ զքեզ սիրեմ. անկէ ետև ինչպէս որ կուզես այնպէս վարուէ իմ հետս։ Մարիամ, յոյս իմ և ապաւէն, առ ինձի համար այս երկու շնորհքներս, քեզմէ կը յուսամ զանոնք։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ուրեմն ի՞նչ յիմարութիւն է համառօտ կենացս մէջ՝ թշուառ ու կարճ հաճոյից համար չարաչար մահուան վտանգի դնել

զմեզ, և անով թշուառ յաւիտենականու-
թիւն մը սկսիլ։ Ա՜հ, քանի ծանրակշիռ է
այն վերջի վայրկեանն, այն վերջի բերան
բանալն ու եարի շունչն, աշխարհիս տե-
սարանին վարագուրին այն վերջի գոցուի-
լը՝ կամ յաւիտենական երանութեանց և
կամ յաւիտենական թշուառութեանց յա-
ւիտենականութիւն մը կը կշռէ, կամ յա-
ւիտեան երջանիկ և կամ յաւիտեան թը-
շուառ կեանք մը կը կշռէ։ Մտածենք թէ
Քրիստոս տէրն մեր որպէս զի մեզի աղէկ
մահ տայ՝ յանձն առաւ դառն ու անար-
գական մահուամբ մեռնիլ։ Այս վախճա-
նաւ այնչափ ազդարարութիւն կընէ մե-
զի, այնչափ լոյս մեզի կը պարգևէ, այն-
չափ սպառնալիքներով զմեզ կարթընցը-
նէ, որպէս զի ջանանք այն վերջի վայր-
կեաններս ի շնորհս Աստուծոյ լմնցընելու։

Անտիսթենէս հեթանոս փիլիսոփային
ալ հարցուցին, թէ աշխարհիս վրայ որն է
աւելի մեծ բարեբաղդութիւն. նա ալ ը-
սաւ, աղէկ մահն։ Հապա ի՞նչ պիտի ըսէ
քրիստոնեայ մը, որ ի հաւատոց գիտէ թէ
այն վայրկենէն յաւիտենականութիւնը կը
սկսի. այնպէս որ այն վայրկենին երկու
անիներուն մէկուն կը փաթթուի, որ
կամ յաւիտենական ուրախութեան կը
տանի զինքը և կամ ի յաւիտենական
տանջանս։ Թէ որ քսակի մը մէջ երկու
տոմսակ ըլլայ՝ մէկուն վրայ դժոխք գրած՝
միւսին վրայ արքայութիւն, ու անոնցմէ

մէկը դու դուրս հանելու ըլլայիր, ի՞նչ
հոգ չէիր ըներ որ գուշակես ու այն թուղ-
թը առնուս որուն վրայ արքայութիւն
գրած է։ Այն խեղճերն որ դատապար-
տուած են իրենց կեանքը քուէի պէս խա-
ղալու, ի՞նչ սրտագող կը քաշեն երբոր
ձեռքերնին կերկընցընեն որ քուէն ձգեն,
ուսկից կախուած է իրենց կեանքը կամ
մահը։ Ի՞նչ ահուդողի մէջ պիտի ըլլաս,
երբոր այն վայրկենին մտնենաս որ պիտի
ըսես՝ այս կէտէս, որուն մտեցեր եմ, կը
կախուի իմ յաւիտենական մահս։ Արդեօք
յաւիտեան երանելի՞ պիտի ըլլամ, թէ
յաւիտեան թշուառ։ Սուրբն Բեռնարդոս
Անենացին կը պատմէ, թէ իշխանին մէկը
մեռնելու ատեն սարսափած կըսէր. ես
որ այսչափ երկրի տէր եմ, աշխարհիս վրայ
պալատներ ունիմ, չեմ գիտեր՝ թէ որ
այս գիշեր մեռնելու ըլլամ ի՞նչ սենեակ
ինձի պիտի իյնայ։

Ով սիրելի եղբայր, թէ որ կը հաւատաս,
թէ մեռնիլ կայ ու ետեւէն յաւիտենակա-
նութիւն կու գայ, և թէ մի անգամ կը
մեռնի մարդ, այնպէս որ եթէ այս բանիս
մէջ սխալիս՝ յաւիտեան բանդ գէշ է և
յոյս չկայ ճար մ՚ընելու, հապա ի՞նչպէս
այս վայրկենէս՝ որ այս բանս կը լսես՝ չես
սկսիր որչափ որ կարելի է բանդ ապահով-
ցընել բարի մահ ունենալու։ Կը դողար
սուրբն Անդրէաս Աբելլինեան, ըսելով թէ

ով գիտէ՝ անդին ի՞նչ պիտոր ըլլայ իմ վի-
ճակս. արդեօք պիտի փրկուիմ, թէ պիտի
դատապարտուիմ։ Այնպէս կը սարսափէր
սուրբն Լուիճի Պէրդրանտոյ, որ գիշերը
քունը չէր տանիր այս մտածմունքէս՝ թէ
ով գիտէ թէ ես պիտի չդատապարտուիմ։
Իսկ դու որ այնչափ մեղաց տէր ես, չե՞ս
դողար, չե՞ս սարսափիր։ Շուտով ճարդ
տես քանի որ ատեն ունիս. հաստատա-
պէս առաջադրէ զքեզ Աստուծոյ տալու,
և ասկէ ետև գոնէ այնպիսի կեանք մը
սկսէ որ մահուանդ ատեն զքեզ չի տանջէ,
այլ մխիթարէ։ Աղօթքի հետ եղիր, ստէպ
ստէպ սուրբ խորհուրդներուն մօտեցիր,
վտանգաւոր առիթներէն փախիր, և թէ
որ հարկ ըլլայ՝ զաշխարհս ալ թող, ու քու
յաւիտենական փրկութիւնդ ապահով-
ցուր. և աղէկ հասկըցիր որ յաւիտենա-
կան փրկութիւնը ապահովցընելու համար
այսչափ կամ այնչափ ապահովութիւնը
բաւական չէ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ սիրելիդ իմ Յիսուս, որչափ պար-
տական եմ քեզի. ի՞նչպէս արժանի սե-
պեցիր ինձի պէս ապերախտի մը, մատնչի
մը այնչափ շնորհքներ ընել։ Դու ստեղ-

ծեցիր զիս, և ստեղծելու ատենդ կը տես-
նէիր քեզի դէմ ընելիք անիրաւութիւն-
ներս։ Զիս փրկեցիր ինձի համար մեռնե-
լով. և այն ատենէն կը տեսնէիր իմ քեզի
դէմ ընելիք ապերախտութիւններս։ Քա-
նի որ զիս աշխարհք գրեր ես, քեզմէ ե-
րես դարձուցեր եմ, որով մեռած էի հոգ-
ւով. հոտած չուն մ՚էի, և դու քու շը-
նորհքովդ ինձի կեանք պարգևեցիր։ Ես
կուրցեր էի, դու զիս լուսաւորեցիր. ես
զքեզ կորսընցուցեր էի, դու զքեզ ինձի
գտնել տուիր. քեզի թշնամի էի, դու զիս
նորէն բարեկամ ըրիր։ Ով Աստուած ո-
ղորմութեանց, դու ճանչցուր ինձի իմ
պարտքերս, և ջուր տուր աչացս ողբալ իմ
ըրած չարեացս վրայ։ Ո՜հ տէր իմ, վրէժ-
խնդիր եղիր սաստիկ ցաւ տալով ինձի
իմ մեղքերուս վրայ. բայց մի պատուհա-
սեր քու շնորհքդ զիս զրկելով և ի քոյ
սիրոյդ։ Ով հայր երկնաւոր, կը գարշիմ կը
զզուիմ այն ամենայն չարիքներէն ու ա-
նարգանքներէն զոր քեզ տուեր եմ. գթա
և ողորմէ ինձի քու միածնիդ Յիսուսի սի-
րոյն համար. նայէ որդւոյդ որ խաչին վրայ
մեռած է. արիւնն իմ վրաս ըլլայ։ Այդ
աստուածային արիւնը վրաս իջնէ ու հո-
գիս լուայ։ Ով իմ հոգւոյս թագաւոր,
եկեսցէ արքայութիւն քո։ Առաջադրեցի
որ մէկդի ձգեմ ամենայն ուրախութիւն
որ քեզի համար չէ. ամէն բանէ վեր կը

սիրեմ զքեզ, եկ, դու միայն Թագաւորէ իմ հոգւոյս վրայ. տուր շնորհք որ զքեզ սիրեմ. և քեզմէ զատ ուրիշ բան չի սիրեմ։ Կը փափաքիմ որ որչափ կրնամ քու կամքդ ընեմ և բոլոր մնացած կենացս մէջ քու ուզածդ կատարեմ։ Դու օրհնէ, հայր իմ, այս իմ փափաքս, և շնորհք տուր որ միշտ քեզ հետ միացած ըլլամ։ Բոլոր իմ բաղձանքներս քեզի կը նուիրեմ, և այս օրէս սկսեալ՝ չեմ ուզեր զիս ուրիշի տալ բայց միայն քեզի. ով դանձ իմ, խաղաղութիւն իմ. յոյս իմ, սէր իմ, և ամենայն ինչ. և ամէն բան քեզմէ կը յուսամ քու միածին որդւոյդ արդեամբքը։ Ով ամենասրբուհի կոյս Թագուհի և մայր, ինձի օգնական եղիր քու բարեխօսութեամբդ և աղաչէ ինձի համար, ով Աստուածամայր։



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Դ

ՄԱՀՈՒԱՆ ՍՏՈՒԳՈՒԹԻՒՆՆ

Մարդուս մի անգամ կայ մնայ մեռնիլ[1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ամէն մարդու համար ալ մահուան դատակնիք տրուած է. մարդ ես, ուրեմն պիտի մեռնիս։ Սուրբն Օգոստինոս կըսէր, թէ մեր ամէն բարիքն ու չարիքը անստոյգ են, միայն մահը ստոյգ է։ Անստոյգ է թէ այն տղան որ ծնաւ՝ աղքատ պիտի ըլլայ թէ մեծատուն, առողջ պիտի ըլլայ թէ անառողջ, երիտասարդ պիտի մեռնի թէ ծեր, այս ամէնն ալ անստոյգ են. միայն ստոյգն այս է որ պիտի մեռնի։ Ամէն ազնուական, ամէն թագաւոր մահուան մանը

1 Կայ մեայ մարդկան մի անգամ մեռանիլ։ Եբր. Թ. 27։

գաղով պիտի հնձուին, և երբոր մահը վրայ հասնի՝ այժ մը չկայ որ կարենայ իրեն դէմ կենալ։ Կրակին դէմ, ջրին դէմ, սրոյն դէմ կենալ կարելի է. թագաւորաց ալ իշխանութեան դէմ կրնայ դրուիլ. բայց մահուան դէմ կենալ անհնար է։ Ինչպէս սուրբն Օգոստինոս ալ կըսէ, թէ հնար է հրոյ, ալեաց, և սրոյ դէմ կենալ, թագաւորաց ալ հակառակ կալ. մահն հասաւ և ոչ կրնայ անոր հակառակ կալ։ Բելլուակենցին կը պատմէ, թէ Գաղղիոյ թագաւորներէն մէկը կենաց ծայրն հասնելով ըսեր է, իմ ամէն իշխանութեամբս չեմ կրնար հրամայել որ մահը ժամ մ'ալ սպասէ ինձի։ Երբոր քու կենացդ վախճանն հասեր է, և ոչ վայրկեան մ'ալ կը սպասէ, ժամանակ է դրեր և չանցնիր[1]։

Դնենք թէ, սիրելի ընթերցող, շատ տարի պիտի ապրիս, ինչպէս որ կը յուսաս, բայց օր մը պիտի գայ, և այն աւուր մէջ ժամ մը պիտի գայ որ քու վերջին ժամդ ըլլայ։ Ինձի համար ալ որ հիմայ կը գրեմ, քեզի համար ալ որ այս գրածս կը կարդաս օր մը սահմանած է, վայրկեան մը որոշած է որ ոչ ես պիտի կրնամ գրել, և ոչ ալ դու պիտի կարենաս կարդալ։ Ո՞վ է մարդ՝ որ կապրի ու մահ պիտի չի

1 Ժամանակ եղեր, և ոչ անցցէ։ Յովբ. ԺԴ. 5։

տեսնէ[1]։ Մահուան վճիռը տրուած է. այնպիսի խենթ մարդ մը չէ եղած որ միտքը դնէ, թէ ինքը պիտի չի մեռնի։ Ինչ որ քու պապերուդ եղաւ, քեզ ալ պիտի ըլլայ։ Քանի քանի մարդիկ անցեալ դարուն սկիզբը կենդանի էին, հիմայ անոնցմէ և ոչ մէկը կայ։ Իշխաններ, թագաւորներ ալ իրենց աշխարհքը փոխեցին, և իրենցմէ հոս ուրիշ բան չմնաց՝ բայց եթէ մարմարիոնէ դամբան մը գեղեցիկ վերտառութեամբ, որ մեզ ալ կը սորվեցընէ, թէ աշխարհիս մեծերէն ուրիշ բան չի մնար՝ բայց եթէ բուռ մը փոշի քարերու տակ ծածկուած։ Սուրբն Բեռնարդոս կը հարցընէ թէ՝ ըսէ ինձի ուր են զաշխարհս սիրողներն. և ինքը պատասխան կու տայ, թէ անոնցմէ բան մը չմնաց, բայց թէ մոխիր և որդ։

Ուրեմն պէտք է որ ջանանք չէ թէ վաղանցուկ բաղդ ձեռք բերելու, այլ զայն՝ որ յաւիտեան մնայուն է, վասն զի մեր հոգին ալ յաւիտենական է։ Ի՞նչ բանի կու գայ երջանիկ ըլլալ, թէ որ առանց Աստուծոյ երջանկութիւն կարելի է, որ ետքը յաւիտեան թշուառ պիտի ըլլաս։ Ամէն ուզածիդ պէս այդ տունը չինել տուիր, բայց գիտցիր որ քիչ ատենէն պիտի հարկա-

1 Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ։ Սաղմ. ՁԸ. 44։

դրիս թողու զայն, և պիտի երթաս փոսի մը մէջ փոտելու ու հոտելու։ Պատիւ մը, բարձ մ'ափ ձգեցիր և ամենէն վեր եղար. բայց մահը կու գայ ու կը հաւասարցընէ զքեզ յետին գեղացւոյն, աշխարհիս ամենէն խեղճին։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ տառապեալ անձինս, որ այսքան տարի ուրիշ բան չըրի բայց եթէ զքեզ դառնացընել, ո՛վ Աստուած հոգւոյ իմոյ։ Հիմայ տարիներն անցան, գուցէ մահս մօտեցեր է, և ի՞նչ մնաց ձեռքս, եթէ ոչ դառնութիւն և խայթ խղճմտանաց։ Երանի թէ միշտ քեզ ծառայած ըլլայի, ով տէր իմ։ Ի՞նչպէս խենթ գտնուեր եմ ես որ այսքան տարի երկրիս վրայ ապրեցայ, և փոխանակ հանդերձեալ կենաց համար վարձք շահելու՝ զիս պարարքերով ծանրաբեռնեցի Աստուծոյ դատաստանին առջև։ Ով սիրելի փրկիչ իմ, տուր ինձի լոյս և կարողութիւն որ հիմակուընէ կարգի դընեմ տալու համարս, գուցէ մահը շատ հեռու չըլլայ ինձմէ։ Կուզեմ պատրաստ գտնուիլ այն ահաւոր կէտին որ պիտի ուրոշէ իմ յաւիտենական երջանիկ կամ թըշուառ վիճակս։ Շնորհակալ եմ, որ մինչև հիմայ սպասեցիր ինձի. և որովհետև ատեն

կու տաս որ իմ չարեացս ճարը տեսնեմ, ահա պատրաստ կեցեր եմ, Աստուած իմ. ըսէ ինձի, քեզ համար ի՞նչ պէտք է ընեմ։ Կուզե՞ս որ ցաւիմ քեզ դէմ ըրած անզգամութեանցս վրայ. կը ցաւիմ կը ցաւիմ, կը զղջամ բոլոր սրտանց։ Կուզե՞ս որ մնացած տարիներն ու օրերը զքեզ սիրելով անցընեմ. այո այո, ես ալ զայդ կուզմ ընել։ Ով Աստուած իմ, առաջ ալ շատ անգամ այսպիսի առաջադրութիւններ ըրեր եմ, բայց խոստմունքս կատարելու տեղ նոր նոր մեղքեր գործեր եմ։ Զէ՞ չէ, ով Յիսուս փրկիչ իմ, չեմ ուզեր ասկէց ետև նորէն ապերախտ գտնուիլ քու ինձի ըրած այնչափ շնորհքներուդ։ Թէ որ հիմակուընէ վարքս չսկսիմ փոխել, մահուանս ատեն ի՞նչպէս պիտի կարենամ յոյս ունենալ թողութեան և արքայութեան։ Ուստի հիմակուընէ հաստատուն սրտով կառաջադրեմ որ սկսիմ ճըշմարտապէս։ Բայց այժ տուր ինձի, և երեսէդ մի՛ ձգեր զիս։ Եւ որովհետև մեղքի մէջ եղած ատենս ալ զիս ձեռքէ չթողուցիր, ուստի աւելի մեծ յոյս ունիմ քու օգնութեանդ հիմայ որ քու կամքդ կատարելու համար ամէն բան մէկդի դնելու կառաջադրեմ։ Ուրեմն ընդունէ զիս ըզքեզ սիրելու, ով Աստուած իմ, որ արժանի ես անհուն սիրոյ. ընդունէ զիս մատնիչս որ զղջմամբ ոտքդ կկենամ. զքեզ կը

սիրեմ և քեզմէ ողորմութիւն կը խնդրեմ։ Այո այո կը սիրեմ զքեզ, ով Յիսուս փրկիչ իմ, կը սիրեմ զքեզ ի բոլոր սրտէ, ի վեր քան զիմ անձս. ես քուկդ եմ, կարգաւորէ զիս ալ ամէն բանս ալ՝ ինչպէս որ կուզես. տուր ինձի յարատեւութիւն քեզ հնազանդելու, տուր ինձի քու սէրդ, եաքը ինչ որ կուզես զիս ըրէ։ Մարիամ մայր ողորմութեան, յոյս իմ և ապաւէն, քեզ կը յանձնեմ զիս քու ձեռքդ կաւանդեմ իմ հոգիս, աղաչէ ըզՅիսուս ինձ համար։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Կայ մեայ մարդուս մի անգամ մեռնիլ. ստոյգ է ուրեմն որ ամէնքս ալ մահուան դատապարտուած ենք։ Ամէնքս ալ որ երբ կը ծնանինք, կըսէ սուրբն Կիպրիանոս, ճիտերնիս շուան անցուցած է, և քանի ոաք որ կառնենք՝ այնչափ դէպ ի մահ կը մօտենանք։ Ով եղբայր սիրելի, ինչպէս որ օր մը մկրտութեան ցանկին մէջ գրուեցար, այսպէս ալ օր մը մեռելոց ցանկին մէջ պիտի գրուիս։ Ինչպէս որ դու հիմայ քեզմէ առաջիններուն անունը տալու ատենդ ողորմած հոգի հայրս կըսես, ողորմած հոգի հօրեղբայրս, ողորմած հոգի եղբայրս, այսպէս ալ քեզ համար պիտի ըսեն քեզմէ ետև եկողներն։ Ինչպէս որ դու շատ անգամ ուրիշներուն մահուան զանգակը լսեր ես, այսպէս ալ ուրիշները քու մահուանդ զանգակը պիտի լսեն։

Ի՞նչ կըսէիր, երբ տեսնէիր մահապարտ մը որ կախաղան կերթայ կատակներ ընելով, ծիծաղելով, աչուքներն ասդին անդին դարձընելով, խաղերու գրօսանքի խելքը տալով։ Դուն ալ հիմայ դէպ ի մահ չես քալեր, և ի՞նչ կը մտածես, նայէ սա փոսին մէջ այն քու բարեկամներդ ու ազգականներդ, որոնց դատաստանն արդէն կարուած է։ Այն ինչպէս կը սարսափին մահապարտներն երբ իրենց ընկերները կախաղանին վրայ կախուած ու մեռած կը տեսնեն։ Նայէ դուն ալ սա գիակներուն վրայ, որ ամէն մէկը քեզի կըսեն, երէկ ինձի՝ այսօր քեզի է այս վիճակը։ Նոյն բանը կըսեն քեզի նաև քու ծնողացդ, ազգականացդ պատկերները, գրերը, յիշատակարանները, տները, անկողինները, հագուստները, որ թողեր գնացեր են։

Ուրեմն այս ինչ մեծ խենթութիւն է գիտնալ թէ պիտի մեռնինք և մեռնելէն ետև ալ յաւիտենականութիւն մը պիտի գայ կամ ուրախութեան և կամ պատժոյ, մտածել թէ այն կէտէն կախուած է կամ

յաւիտեան երջանիկ ըլլալ և կամ յաւիտեան թշուառ ըլլալ, ու եաքը փոյթ չընել տալու համարը շտկելու, և ջանք չընել բարի մահ ունենալու։ Կը ցաւինք կուլանք անոնց վրայ որ յանկարծակի կը մեռնին՝ մահուան առանց պատրաստութիւն տեսնալու. հապա մենք ինչու հոգ չենք տանիր պատրաստ ըլլալու՝ գիտնալով որ մեզ ալ նոյն դիպուածը կրնայ պատահիլ։ Եւ սակայն կանուխ է եղեր, ուշ է եղեր, յառաջուց իմանալով է եղեր, յանկարծ է եղեր, կառահենք չի կառահենք պիտի մեռնինք, ամէն վայրկեան մեր կախաղանին կը մօտենանք, որ է մեր եաքի հիւանդութիւնն որ զմեզ աշխարհէս վռընտէ պիտի։

Ամէն մէկ տները, հրապարակները, քաղաքները, նոր նոր մարդիկներով կը լեցուին, և իրենցմէ առաջինները կը տանին գերեզմաններու մէջ կը փակեն։ Եւ ինչպէս անոնց կենաց օրերը լմնցեր են, այսպէս ալ ատեն պիտի գայ որ ոչ ես, ոչ դուն և ոչ անոնք որ հիմայ կապրինք՝ կենդանի պիտի մնանք այս աշխարհիս վրայ։ Այն ատեն ամէնքս ալ կանցնինք դէպ ի յաւիտենականութիւն, որ մեզի կամ երջանկութեան մշտնջենաւոր օր մը պիտի ըլլայ, և կամ յաւիտենական տանջանաց գիշեր մը։ Ուրիշ միջին ճամբայ չի կայ, ստոյգ է և ի հաւատոց, որ կամ այս և կամ այն վիճակը պիտի ունենանք։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Սիրելի փրկիչ, չէի համարձակեր քու առջևդ երևնալու թէ որ ինձի համար խաչին վրայ կախուած, վիրաւորուած, նախատուած և մեռած չի տեսնէի զքեզ։ Իրաւ որ մեծ է իմ ապերախտութիւնս, բայց աւելի մեծ է քու ողորմութիւնդ. մեծ են իմ մեղքերս, բայց աւելի մեծ են քու արդիւնքդ, վէրքերդ, արիւնդ, մահդ իմ մէկ հատիկ յոյսս են։ Առաջին գործած մեղացս վայրկեանէն ես դժոխքի արժանի էի, և վերջէն ալ շատ անգամ նորէն զքեզ վշտացուցի. դու չէ՞ թէ միայն զիս ի կեանս պահեցիր, այլ նաև վրաս այնչափ գութ, այնչափ սէր ցցուցիր որ դառնամ թողութիւն խնդրեմ ու հետդ հաշտուիմ։ Հիմայ ի՞նչպէս կրնամ վախնալ թէ դու զիս երեսէ կը ձգես, երբ ըզքեզ կը սիրեմ, և ուրիշ բանի չեմ փափաքիր՝ բայց եթէ քու շնորհացդ։ Այո տէր իմ, սէր անուն Յիսուս, կը սիրեմ զքեզ բոլոր սրտանց, և զքեզ սիրելէն զատ ուրիշ բան չեմ ուզեր. կը սիրեմ զքեզ, և կը ցաւիմ որ զքեզ վշտացուցի. ոչ այնչափ դժոխքէն վախնալով՝ որուն արժանի էի, որչափ մտածելով թէ դառնացուցեր եմ զքեզ Աստուածդ իմ, որ այնչափ զիս

սիրեցիր։ Հապա, փրկիչ իմ Յիսուս, բայց ինձի քու բարութեանդ ծոցը և տուր ողորմութիւն ողորմութեան վրայ։ Շնորհք տուր ինձի որ մէյմ՚ալ քեզ ապերախտ չըլլամ, և փոխէ բոլորովին իմ սիրտս։ Տուր տէր, որ այս իմ սիրտս՝ որ ատեն մը բանի տեղ չի սեպեց քու սէրդ ու փոխանակեց զայն երկրիս անոտի հաճոյից հետ հիմայ բոլորովին քուկդ ըլլայ և քու սիրովդ բորբոքի անդադար։ Կը յուսամ որ արքայութիւն գամ յաւիտեան զքեզ սիրելու, անմեղաց մէջ ինձի հոն տեղ չի կայ, բայց ապաշխարողաց կարգն ինձի ալ տեղ կայ. ասոնց մէջ ալ անմեղներէն աւելի կուզեմ սիրել զքեզ։ Քու ողորմութեանդ փառացն համար թող տեսնէ արքայութիւնը որ ինձի պէս մեղաւոր մը, որ այնչափ զքեզ վշտացուցեր է, քու սիրովդ կը վառի կը բորբոքի։ Այս օրէս կառաջադրեմ որ բոլորովին քուկդ ըլլամ, և քեզմէ զատ ուրիշ սիրելու բան չի մնատածեմ։ Օգնէ ինձի քու լուսովդ և շնորհօքդ, և կարողութիւն տուր ինձի ի գործ դնելու այս փափաքս, զոր դուն ինձի կու տաս քու բարերարութեամբդ։ Մարիամ կոյս, յարատևութեան շնորհք առ ինձի համար որ հաւատարիմ մնամ այս խոստմանս վրայ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Մահն ստոյգ է։ Հապա ինչպէս կ՚ըլլայ, տէր Աստուած, որ ամէն քրիստոնեայք այս բանս գիտեն, կը հաւատան, աչքով ալ կը տեսնեն, և ետքը չատերն այնպէս կապրին իբր թէ մահ չկայ, որպէս թէ բնաւ մեռնելիք չունին։ Թէ որ այս կեանքէս ետև ոչ դժոխք ըլլար, ոչ արքայութիւն, արդեօք ասկէ աւելի անհոգ կըրնային ըլլալ։ Եւ անոր համար է որ այսպէս վատթար կեանք կանցնեն։ Ով եղբայր, եթէ կուզես աղէկ կեանք վարել, ջանա որ ասկէ ետև մահուան վրայ նայելով ապրիս։ Ով մահ, ինչպէս գեղեցիկ է քու դատաստանդ, կըսէ Սիրաք[1]։ Այն ինչպէս աղէկ դատաստան կընէ ամէն բանի վրայ, և կարգի կը դնէ իւր բաները, ով որ մահուան վրայ նայելով կը դատէ զանոնք և կարգի կը դնէ։ Մահուան յիշատակը աշխարհիս ամէն բանին սէրը մոռցընել կու տայ. սուրբն Լաւրենտիոս Յուստինեան կըսէ որ, եթէ կենաց վերջը մը տաժուի, աշխարհիս վրայ սիրելու բան մը չի մնար[2]։ Յովհաննէս աւետարանչին ը-

1 Ո մահ, զի գեղեցիկ են դատաստանք քո։ Սիրաք. ԽԱ. 3։

2 Յշ. փայտին կենաց։ Գլ. Ե։

սածին պէս, ինչ որ աշխարհիս վրայ կայ, ամէնքն ալ մարմնոյ ցանկութիւն է, աչաց ցանկութիւն է, և աստի կենաց ամբարտաւանութիւն է[1]։ Այս աշխարհիս ամենայն բարութիւնքն ահաւասիկ զգայարանաց հաճոյք են, մարմնոյ զարդարանք և փառք պատիւ գտնել. բայց ով որ կը մտածէ թէ քիչ ատենէն մոխիր պիտի դառնայ և հողուն տակ որդերուն կերակուր պիտի ըլլայ ալ այս աշխարհիս բարեաց վրայ աչք չունենար ու կ'արհամարհէ զանոնք։

Եւ իրաք սուրբերը մահուան վրայ նայելով ոտքի տակ առին աշխարհիս ամէն բարիքը։ Այս բանիս համար սուրբն Կարոլոս Պորրոմէոս իւր գրասեղանին վրայ մեռելի գանկ մը դրած էր, որպէս զի միշտ աչքը անոր վրայ ըլլայ։ Բարոնիոս ծիրանաւոր իւր մատանւոյն վրայ փորել տուեր էր՝ Մահդ յիշէ։ Հայրն Յորնաղ Անչինա, Սալուցցոյի եպիսկոպոսն, մեռելի մը գանկին վրայ գրել տուեր էր, Ինչ որ դուն ես՝ ես ալ էի, ինչ որ ես եմ՝ դուն ալ պիտի ըլլաս։ Ուրիշ սուրբ ճգնաւորի մ'ալ մեռնելու ատեն հարցուցին թէ ինչո՞ւ այդչափ ուրախ ես. պատասխան տուաւ թէ

1 Ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ, և ցանկութիւն է աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենաց։ Ա. Յովհ. Բ. 16։

մահը միշտ աչքիս առջևն էր, ուստի հիմայ որ եկեր է՝ ինձի համար նոր բան մը չէ։

Ինչ խենթ պիտի ըլլայ այն ճանապարհորդն որ ուր տեղէն որ կանցնի՝ հոն մեծ ըլլալ մտածէ, փոյթ չընէ թէ հոն ուր կենաք չափ պիտի կենայ՝ թշուառութեամբ պիտի ապրի։ Եւ ինչ, միթէ խենթ չէ՞ այն մարդն որ կը մտածէ երջանիկ ըլլալ այս աշխարհիս վրայ՝ ուր քանի մը օր պիտի կենայ, և ինք զինքը վտանգի մէջ կը դընէ թշուառ ըլլալու անդին՝ ուր յաւիտեան պիտի կենայ։ Ով որ ուրիշէն բան մը փոխառեր է՝ սիրտն անոր չատ չի կապեր, գիտնալով որ քիչ ատենէն ետ պիտի դարձընէ։ Այս աշխարհիս բարիքները բոլոր մեզի փոխ տրուած են. ուստի յիմարութիւն է անոնց վրայ սրտերնիս կապել, գիտնալով որ քիչ ատենէն պիտի թողունք երթանք։ Մահը զքեզ ամէն բանէ պիտի մերկացընէ. աշխարհիս ամէն վաստակն ու բաղդը յետին շունչ մը տալով, թաղումով մը, փոսի մը մէջ իջնելով պիտի վերջանայ։ Այդ չինած տունդ քիչ ատենէն ուրիշներուն պիտի թողուս, գերեզմանը պիտի ըլլայ քու բնակարանդ մինչև վերջին դատաստան, և անկէց կամ արքայութիւն և կամ դժոխք պիտի անցնի մարմինդ ալ ուր որ արդէն հոգիդ գնացեր է։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ուրեմն մահուան ատեն ինձի համար ամէն բան պիտի վերջանայ. այն ատեն ուրիշ բան մը պիտի չի գտնեմ, ով Աստուած իմ, բայց եթէ այն քիչ բանը զոր քու սիրոյդ համար ըրած եմ։ Հապա ի՞նչ բանի կը սպասեմ. կը սպասեմ որ մահը գայ և ինչպէս որ հիմայ եմ՝ գիս այնպէս թշուառ ու մեղաք ապտեղեալ գտնէ։ Թէ որ հիմայ մեռնելու ըլլայի, շատ անհանգիստ և անցուցած կեանքիս վրայ շատ տժգոհ կը մեռնէի։ Ոչ, տէր իմ Յիսուս, չէ՝ այսպիսի տժգոհ չեմ ուզեր մեռնիլ։ Շնորհակալ կըլլամ քեզ որ ինձի ատեն կու տաս մեղքերս լալու, և զքեզ սիրելու. այս վայրկենէս կուզեմ այդ բանիդ ձեռք զարնել։ Կը ցաւիմ, կը զղջամ ամէն շարեացս վրայ որով զքեզ վշտացուցի, ով ծայրագոյն բարիդ, և կը սիրեմ զքեզ ամէն բանէ վեր, իմ կեանքէս աւելի։ Բոլոր գիս քեզ կու տամ, ով Յիսուս իմ, այս վայրկենէս սկսեալ ոտքդ կը պլլուիմ, քեզի կապաւինիմ՝ բոլոր սրտովս և քեզ կը յանձնեմ բովանդակ կեանքս ու հոգիս։ Ձեմ ուզեր սպասել այն ատենին երբ ինձի ստիպեն թէ ելիր գնա այս աշխարհէս։ Ձեմ ուզեր սպասել այն ատենն ազաչելու քեզի որ գիս փրկես։ Ով փրկիչ իմ, հիմակուընէ փրկէ գիս մեղացս թողութիւն շնորհելով, և քու սուրբ սիրոյդ շնորհքն ինձի պարգևելով։ Ո՛վ գիտէ, գուցէ այս մտածականս որ այսօր կը կարգամ, ետի կոչդ ըլլայ որ ինձի կընես, և եսքի ողորմութիւնդ ըլլայ որ վրաս կը բանեցընես։ Ձեռքդ երկնցուր, ով սէր իմ Յիսուս, և դուրս քաշէ գիս իմ գաղջութեանցս տղմէն, բորբոքէ սիրտս, շնորհք տուր ինձի, որ ամենայն սիրով հնազանդիմ քեզի այն ամէն բանին մէջ զոր ինձմէ կը պահանջես։ Հայր երկնաւոր, Յիսուսի սիրոյն համար տուր ինձի յարատեւութիւն, և շնորհք զքեզ սիրելու, և շատ սիրելու մնացած կենացս մէջ։ Մարիամ, մայր ողորմութեան, վասն սիրոյդ զոր ունիս քու Յիսուսիդ, այս երկու շնորհքը խնդրէ և առ ինձի համար՝ յարատեւութիւն և սէր։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ե·

ՄԱՀՈՒԱՆ ԺԱՄՈՒՆ ԱՆՍՏՈՒԳՈՒԹԻՒՆՆ

Պատրաստ եղիք, վասն զի ո՛ր ժամն՝ որ չէք կարծեր՝ Որդին մարդոյ կու գայ[1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ստոյգ է թէ ամէնքս ալ պիտի մեռնինք, բայց անստոյգ է թէ երբ պիտի մեռնինք։ Անծանօթի մ'ըսածին պէս՝ մահուան պէս ստոյգ բան չի կայ, բայց մահուան ժամուն պէս ալ անստոյգ բան չի կայ։ Գիտցիր, ով եղբայր, որ արդէն սահմանած որոշած է այն տարին, այն ամիսը, այն օրը, այն ժամը, և այն վայրկեանը որ ես ալ, դուն ալ պիտի թողունք այս աշխարհս և յաւիտենականութիւն

1 Եղերուք պատրաստք զի յորում ժամու ոչ կարծիցէք՝ դայ որդի մարդոյ։ Ղկ· ԻԲ· 40։

պիտի մտնենք. բայց այս ժամանակը մեզի անծանօթ է։ Քրիստոս տէրն մեր որպէս, զի միշտ պատրաստ ըլլանք՝ երբեմն կըսէ, թէ մահը գողի պէս գիշերանց գաղտուկ կու գայ. երբեմն կըսէ, թէ այն ատենն որ չէք կարծեր՝ որդին մարդոյ կու գայ։ Աղէկ կ'ըսէ Մեծն Գրիգոր՝ թէ Աստուած մեր բարւոյն համար մեզմէ կը ծածկէ մահուան ժամանակը, որպէս զի միշտ մեռնելու պատրաստ գտնուինք. անոր համար, կըսէ, մահուան ատենին վրայ անստոյգ ենք, որպէս զի միշտ պատրաստ ըլլանք առ ի մահ. Արդ որովհետև մահն ամէն ատեն և ամէն տեղ կրնայ մեր կեանքը կտրել, ուրեմն թէ որ կուզենք աղէկ մեռնիլ, կըսէ սուրբ Բեռնարդոս, պէտք է որ ամէն ատեն և ամէն տեղ իրեն սպասենք· մահն, կըսէ, ամէն տեղ քեզի կըսպասէ, նայէ որ դուն ալ անոր սպասես միշտ։

Ամէն մարդ գիտէ որ պիտի մեռնի, բայց այն է գէշը՝ որ շատերը մահը իրենցմէ այնպէս հեռու կը տեսնեն մինչև կը մոռնան։ Նոյն իսկ ցնդած ծերերն, ծանր հիւանդները կը յուսան որ քանի մը տարի ալ կրնան ապրիլ։ Բայց ընդ հակառակն քանիները գիտենք, մեր օրերն ալ, որ յանկարծական մահուամբ, նստած տեղերնին, քալած ատեննին, անկողնի մէջ քուն եղած ատեննին մեռեր են։ Աստնցմէ և ոչ մէկուն ալ մտքէն անցեր էր որ

յանկարծ պիտի մեռնի, և այն օրը պիտի մեռնի։ Այսպէս ալ քանի՛ քանի անձինք այս տարի աշխարհէս ելան անդին գնացին անկողնի մէջ մեռնելով. որոնցմէ և ոչ մէկն ալ կերևակայեր, թէ այս տարի կրնայ մեռնիլ, կեանքը լմնցընել։ Քիչ մահ կըլլայ որ յանկարծական չըլլայ։

Ուրեմն, ով սիրելի քրիստոնեայ, երբ սատանան զքեզ կը փորձէ որ մեղանչես, ըսելով, թէ բան մը չէ, վաղը կը խոստովանիս, ըսէ անոր թէ ես ի՞նչ գիտնամ, գուցէ այս օրս իմ կենացս վերջինն ըլլայ։ Թէ որ այս ժամս, այս վայրկեանս, որ Աստուծմէ երես դարձընեմ, կենացս ետքինն ըլլայ, այնպէս որ ատեն չունենամ դիս շտկելու, յաւիտեան գլխոյս ինչ ձիւն պիտի գայ։ Քանի՛ քանի թշուառ մեղաւորներ եղեր են՝ որ չարութեան որոգայթին մէջ բռնուած ատենին մահը վրայ հասեր է, և զիրենք շիտակ դժոխք տարեր է։ Ինչպէս ձկները, կըսէ Յովսեփոս, ցանցի մէջ կը բռնուին, . . . և որոգայթի մէջ կիյնան, նոյնպէս ալ մարդիկ չար ժամանակի ատեն որոգայթի կիյնան[1]։ Բուն չար ժամանակն այն է երբ մեղաւորն իրօք կը

1 Որպէս ձկունք որսացեալք ցանցիւք չարեաց, և որպէս թռչունք որսացեալք ի ծուղակս, նոյնպէս անկանին յորոգայթս որդիք մարդկան ի ժամանակի չարի։ Յովս. Թ. 12։

թողու զԱստուած։ Սատանան կըսէ թէ այդ դժբախտութիւնը քեզի չի հանդիպիր. բայց դու պիտի ըսես, հապա թէ որ հանդիպելու ըլլայ՝ յաւիտեան իմ վիճակս ի՞նչ կըլլայ։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ տէր, իմ տեղս այս պիտի չըլլար ուր որ եմ հիմայ՝ հապա դժոխքը ուր երթալու արժանի եղայ շատ անգամ իմ մեղքերովս։ Բայց սուրբն Պետրոս ինձի կըսէ, թէ Աստուած երկայնամիտ կըլլայ ձեզի, վասն զի չուզեր որ մէկ հոգի մ՚ալ կորսուի, այլ կուզէ որ ամէնքն ալ ապաշխարութեան հասնին[1]։ Ուրեմն դուն ինձի այսչափ երկայնամիտ եղար, սպասեցիր ինձի, վասն զի չես ուզեր կորսուիլս, հապա կուզես որ դառնամ ապաշխարեմ։ Ուստի, տէր Աստուած իմ, առ քեզ կը դառնամ, ոտքդ կ՚իյնամ, և ողորմութիւնդ կը խնդրեմ։ Ողորմէ ինձի Աստուած իմ, ըստ մեծի ողորմութեան քում։ Տէր, ինձի թողութիւն տալու համար մեծ և արտա-

1 Երկայնամիտ լինի (տէր) առ ձեզ, քանզի ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ, այլ ամենեցուն հասանել ապաշխարութիւն։ Բ. Պետր. Գ. 9։

քոյ կարգի ողորմութիւնդ պէտք է. վասն զի քեզմէ այսչափ լոյս առնելէս ետև դարձեալ զքեզ վշտացուցի։ Ուրիշ մեղաւորներ ալ զքեզ բարկացուցեր են, բայց այնչափ լոյս չեն ունեցեր որչափ որ ինձի տուած ես։ Այսու ամենայնիւ կ'ուզես կը հրամայես որ զղջամ մեղքերուս վրայ, և յոյս ունենամ քու ներողամտութեանդ։ Այո, փրկիչ իմ, ես ալ կը զղջամ ի բոլոր սրտէ զքեզ բարկացընելուս համար, և յոյս ունիմ թողութիւն գտնելու քու շարչարանացդ արդեամբք։ Դու տէր իմ Յիսուս, բոլորովին անմեղ ըլլալով ուզեցիր մեղապարտի մը պէս խաչափայտին վրայ մեռնիլ ու բոլոր արիւնդ թափել իմ մեղքերս լուալու համար։ Ո՜ անպարտ արիւն, լուա ապաշխարողիս մեղքերը։ Ով հայր երկնաւոր, թող ինձ քու միածին որդւոյդ Յիսուսի սիրոյն համար. լսէ անոր աղաչանաց որ կաղաչէ քեզ ինձի համար իբրև իմ բարեխօսս։ Բայց թողութիւնը հեռիք չէ, Աստուած իմ, որ արժանի ես անբաւ սիրոյ, կուզեմ որ ինձի շնորհք ալ տաս զքեզ սիրելու։ Կը սիրեմ զքեզ, ծայրագոյն բարի, և ասկէ ետև կը նուիրեմ քեզ մարմինս, հոգիս, կամքս և ազատութիւնս։ Կ'ուզեմ այս օրէս փախչիլ ամէն բանէ որ քեզ անհաճոյ է, թէ մեծ և թէ փոքր։ Կուզեմ հեռանալ ամենայն չար առիթներէ, մի՛ տանիր զմեզ ի փոր-

ձութիւն։ Յիսուսի սիրոյն համար փրկէ զիս այն առիթներէն՝ որով կրնամ զքեզ վշտացընել. այլ փրկեա զմեզ ի չարէ։ Մեղքէ խալըսէ զիս, ու ետքը պատժէ ինչպէս որ կուզես։ Սիրով յանձն կառնում ամենայն հիւանդութիւն, ցաւ, կոբուստ, որ ուզենաս վրաս զրկել, բաւական է որ քու շնորհքդ և քու սէրդ չի կորսընցրնեմ։ Խնդրեցէք և առնուցուք, այս ինձի ըրած խոստումդ է. ես ալ քեզմէ այս երկու շնորհքս կը խնդրեմ, սուրբ յարատևութիւն և շնորհք զքեզ սիրելու։ Մայր ողորմութեան, բարեխօս եղիր ինձի համար, քեզ եմ ապաւինած։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Աստուած չ'ուզեր որ կորսուինք. անոր համար անպակաս մեզի ազդարարութիւն կ'ընէ որ իւր պատժոյն սպառնալիքէն վախնալով վարքերնիս փոխենք. իսկ եթէ իրեն չենք դառնար, սուրը սրած է[1]։ Ուրիշ տեղ ալ կ'ըսէ, թէ նայեցէք քանիները և ոչ կ'երևակայէին ու հանդիստ կ'ապրէին, մոքերնին դնելով թէ շատ տարի-

1 Ապա թէ ոչ դառնայք առ նա, զսուր իւր սրեալ է։ Սաղմ. է. 13։

ներ դեռ պիտի ապրին, յանկարծ մահը վրանին հասեր է։ Երբ կ'ըսեն թէ խաղաղութիւն և շինութիւն է, այն ատեն յանկարծակի սատակումը վրանին պիտի հասնի[1]։ Եւ դարձեալ թէ որ չէք ապաշխարեր՝ ամէնքնիդ ալ նոյնպէս կորսուիք պիտի։ Ինչո՞ւ այսպիսի պատիժներ կը սպառնայ զրկելէն առաջ։ Յայտնի է թէ կ'ուզէ որ մենք զմեզ շտկենք, որպէս զի զէշ մահ չ'ունենանք։ Սուրբ Օգոստինոսի ըսածին պէս, թէ ով որ քեզի կըսէ՝ նայէ զդաշ կեցիր, չուզեր զքեզ սպաննել։

Ուրեմն պէտք է որ տալու համարնիս պատրաստենք քանի որ օրը չէ հասած։ Ով քրիստոնեայ, եթէ իրիկուան չի հասած այս ցորեկ մեռնելու ըլլաս, և յաւիտենական վիճակդ որոշուելու ըլլայ՝ ի՞նչ կ'ընէիր. համարդ պատրաստած կ'ըլլայիր. կամ թէ Աստուծոյ ի՞նչ չէիր խոստանար որ քեզի տարի մ'ալ ժամանակ տայ, գոնէ ամիս մը, գոնէ օր մ'ատեն տայ։ Իսկ հիմայ որ քեզի ատեն տուեր է Աստուած, ինչո՞ւ խըզճմտան դ չես մաքրեր։ Ի՞նչ չի՞ կրնար ըլլալ որ այս սրս վերջինդ ըլլայ. տես ինչ կըսէ սուրբ գիրքը, մի ուշանար մեղքերէդ առ Աստուած դառնալու, որ-

1 Յորժամ ասիցեն թէ խաղաղութիւն և շինութիւն է, յայնժամ յանկարծակի ասցէ նոցա սատակումն։ Ա. Թես. Է. 3։

պէս զի չըլլայ թէ մեղացդ մէջ մեռնիս[1]։ Ով եղբայր, փրկուելու համար պէտք է որ մեղքը մէկդի թողուս. թէ որ անկէ ետ պիտի կենաս՝ ինչո՞ւ հիմայ չես կենար։ Ս. Օգոստինոսի ըսածին պէս, թէ որ ատենով կըսես՝ ինչո՞ւ հիմայ չըսես։ Գուցէ կը սպասես որ մահը վրադ հասնի. չես գիտեր որ խստասիրտ մեղացողներուն մահուան ատենը թողութեան ժամանակ չէ, այլ վրէժխնդրութեան։ Թէ որ մէկը քեզի մեծ գումար մը դրամով պարտք ունենայ՝ եւեթէ կ'ըլլաս որ շուտով քեզի պարտաւորութեան գիր տայ, ըսելով թէ ո՛ գիտէ ինչ դիպուած կրնայ պատահիլ։ Ինչո՞ւ նոյն զգուշութիւնը հոգւոյդ համար ալ չես ըներ, որ այն գումարէն շատ վեր է. ինչո՞ւ նոյնպէս չես ըսեր թէ ո՛ գիտէ ինչ բան կրնայ հանդիպիլ։ Թէ որ այդ առնելիքդ կորսընցընես՝ ամէն բանդ կորսընցուցած չես ըլլար. և թէպէտ բոլոր ունեցածդ կորսընցընես՝ գոնէ յոյս ունիս որ նորէն վաստակիս։ Բայց թէ որ մահուամբ, այն ատեն անտարակոյս եղիր որ ամէն բանդ ալ կորուսիր, և ալ յոյս չի մնար մէյմ'ալ զայն ձեռք բերելու։ Դուն այնչափ փոյթ կը տանիս որ ունեցածդ շունեցածդ նշանես, վախնալով որ դիպուա-

1 Մի յապաղիցիս դառնալ առ տէր ի մեղաց, զի մի առ մեղս քո մեռանիցիս։ Սիր. Է. 8։

ծով յանկարծ մեռնելու ըլլաս բան մը չի կորսուի. հապա թէ որ այն յանկարծական մահը քեզի հանդիպելու ըլլայ և դուն Աստուծոյ առջև սևերես գտնուիս, ի՞նչ ձիւն պիտի դայ գլխոյդ յաւիտեան։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ փրկիչ իմ, հոգիս փրկելու համար բոլոր արիւնդ թափեցիր, կեանքդ ալ տուիր. իսկ ես շատ անգամ զայն կորսընցուցի քու ողորմութեանդ յուսալով, և շատ անգամ ես քու գթութիւնդ բաներեցուցի զքեզ աւելի դառնացընելու համար, որով արժանի էի որ հոգիս առնես ու դժոխք զրկես։ Իրը թէ քեզի հետ դաշն դրած ըլլայի, որ դու ինձի գութ ցուցընես՝ ու ես զքեզ վշտացընեմ, դու ինձի մտածես ու ես քեզմէ փախչիմ, դու ինձի ժամանակ տաս իմ չարեացս ճար ընելու, և ես զայն՝ չարիք չարեաց վրայ աւելցընելու բանեցընեմ։ Ճանչցուր ինձի, տէր իմ, մեծ անօրէնութիւնս որ քեզի դէմ ըրեր եմ, և ինչ է իմ պարտքս զքեզ սիրելու։ Ո՛հ Յիսուս փրկիչ իմ, օրչափ կը սիրես եղեր զիս, որ երբ ես քեզմէ կը փախչէի՝ դու ետևէս եկար. այն օրչափ շնորհքներ տուիր ինձի, ուր ես քեզի վիշտ

կը հասցընէի։ Ասնցմով կ'իմանամ որ որչափ չես ուզեր եղեր իմ կորուստս։ Ուստի կը ցաւիմ կը զղջամ բոլոր սրտանց որ զքեզ վշտացուցեր եմ, որ իմ անսահման բարիս ես։ Ուրեմն ընդունէ սիրով այս ապերախտ ոչխարակը՝ որ զղջմամբ ոտքդ կը դառնայ. ընդունէ, ուսիդ վրայ առ, որ մէյմ'ալ քեզմէ չի բաժնուի։ Քաւ լիցի, ալ չեմ ուզեր բաժնուիլ քեզմէ, կ'ուզեմ սիրել զքեզ, կ'ուզեմ զիս քեզի տալ և պատրաստ եմ ամէն բան քաշել, միայն թէ քուկդ ըլլամ։ Եւ ինչ մեծ ցաւ կրնայ ըլլալ քան առանց քու շնորհացդ ապրելէն, քեզմէ բաժնուելէն, որ իմ Աստուածս ես, որ զիս ստեղծեցիր և ինձի համար մեռար։ Ո՛վ անիծած մեղք, այս ինչ ըրիր ինձի, որ զիս իմ փրկչիս աչքէն ձգեցիր որ այնչափ զիս սիրեր է։ Ո՛հ Յիսուս, ինչպէս որ դու ինձի համար մեռար, ես ալ պէտք է որ քեզի համար մեռնիմ, դու ի սիրոյ՝ ես զքեզ վշտացընելու ցաւէն։ Սիրով կընդունիմ մահս, երբ և ինչպէս որ քեզի հաճոյ է. բայց ես զքեզ ինչուան հիմայ չի սիրեցի, կամ խիստ քիչ սիրեցի. չեմ ուզեր մեռնիլ այսպէս, կ'աղաչեմ, քիչ մ'ալ ժամանակ տուր ինձի որ մեռնելէս առաջ սիրեմ զքեզ. ուստի փոխէ սիրտս, խոցէ, բորբոքէ քու սուրբ սիրովդ. լսէ աղաչանաց այն սիրոյդ համար որ քեզի ինձ համար մեռնիլ տուաւ։ Ես կը

սիրեմ զքեզ բոլոր հոգւովս. քու սիրովդ վառուած է հոգիս. մի թողուր որ մէյմ՚ալ զքեզ կորսընցընէ։ Սուրբ յարատևութիւն տուր ինձի, քու սէրդ տուր ինձի։ Սրբուհիդ Մարիամ, ապաւէն իմ և մայր, բարեխօս եղիր ինձի համար։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Պատրաստ եղիք։ Զ՚ըսեր տէրն մեր թէ՝ երբ մահերնիդ կու գայ՝ այն ատեն պատրաստուեցէք, այլ թէ պատրաստ գտնուեցէք։ Երբ մահը կու գայ՝ այն մրրկին ու պղտորութեան ժամանակ գրեթէ անկարելի է տակնուվրայ եղած խղճմտանք մը շտկել. խելքն այսպէս կը սորվեցընէ. Աստուած ալ կը պատուիրայ ըսելով, թէ այն ատեն ինքը թողութիւն տալու չի գար, այլ վրէժ խնդրելու իրեն շնորհաց դէմ եղած նախատինքներուն։ Վրէժխնդրութիւնն իմն է, և ես պիտի հատուցանեմ[1]։ Սուրբ Օգոստինոսի ըսածին պէս, թէ արժանաւոր պատիժ է այնպիսւոյն ուզած ատենը չի կարենալ փրկուիլ՝ երբոր կրնար և չուզեց ինք զինքն ուղղել։ Կրնայ մէկն ըսել,

1 Իմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից։ Հռովմ. ԺԲ. 19։

թէ ով գիտէ, կարելի է թէ նոյն ատեն դառնամ ու փրկուիմ։ Բայց կրնաս ինք զինքդ ջրհոր նետել, ըսելով թէ՝ ով գիտէ կարելի է մէջն իյնալով ողջ մնամ ու չի մեռնիմ։ Ով տէր Աստուած, այս ինչ բան է. մեղքն ինչպէս զմարդ կը կուրցընէ և խելքն ալ կորսընցընել կու տայ։ Մարդիկ մարմնաւոր բաներու վրայ խօսք որ ըլլայ՝ խելացի խելացի կը խօսին, երբ հոգւոյ ըլլայ՝ խենթի պէս կը խօսին։

Ով սիրելի եղբայր, ո՞ գիտէ այս բանս որ կը կարդաս քեզի Աստուծոյ վերջի ազդարարութիւնն ըլլայ։ Զի դանդաղինք մահուան պատրաստուելու, որ չըլլայ թէ յանկարծակի գայ պաշարէ զմեզ։ Սուրբն Օգոստինոս կըսէ թէ՝ Աստուած եռքի օրերնիս մեզմէ կը ծածկէ, որպէս զի ամէն օր մեռնելու արթուն և պատրաստ ըլլանք։ Սուրբ Պօղոս կը զգուշացընէ զմեզ ըսելով թէ՝ ահուդողով իւրաքանչիւր ձեր փրկութեան ետևէն եղիք[1]։ Կը պատմէ սուրբն Անտոնինոս թէ՝ Սիկիլիոյ թագաւորներէն մէկն ուզելով հասկըցընել մէկի մը թէ ինք ինչ վախով կեցած էր թագաւորական աթոռը՝ սեղան նստեցուց զանիկայ, գլխոյն վրայ բարակ թելէ թուր մը

1 Ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք։ Փիլ. Բ. 12։

կախած՝ այնպէս որ մարդը վախէն հազիւ մէկ քանի պատառ կրցաւ ուտել։ Մենք ամէնքս ալ այս վտանգին մէջ ենք, ո. րովհետև ամէն վայրկեան ալ կրնայ մեր գլխոյն վրայ ինկնալ մահուան սուրը՝ ուսկից կախուած է մեր յաւիտենական փրկութիւնը։

Բանը յաւիտենականութեան վրայ է։ Թէ որ փայտը, կըսէ Յոզովոզ, դէպ ի հարաւ կամ դէպ ի հիւսիս ինկնայ, ուր որ ինկնայ հոն կը մնայ[1]։ Եթէ մահը հասնի և զմեզ Աստուծոյ շնորհաց մէջ գտնէ, այն ինչ ուրախութիւն է մեր հոգւոյն. վասն զի այն ատեն կրնայ ըսել, թէ ամէն բան ապահովցուցի, ալ զԱստուած չեմ կորսընցներ, յաւիտեան երջանիկ պիտի ըլլամ. բայց եթէ մահը զհոգին մեղքի մէջ գտնէ, այն ինչ յուսահատութիւն է. ուրեմն մոլորեցայ և յաւիտեան այս մոլորութեանս դեղ պիտի չըլլայ։ Այս վախս էր որ Սպանիացւոց առաքելոյն, պատուական հօրն Աւիլայ ըսել տուաւ, որ երբ իրեն ըսին թէ մահը հասաւ, երանի թէ, պատասխանեց, քիչ մը ժամանակ ալ ունենայի որպէս զի մեռնելու պատրաստուէի։

1 Եթէ անկցի փայտն ի հարաւ կամ ի կողմն հիւսիսոյ, ուր անկցի փայտն՝ անդ կացցէ։ Յոզ. ԺԱ. 3։

Այս վախն էր որ հօրն Աղաթոնի այնչափ տարի ապաշխարութենէն ետև մահուանն ատեն ըսել տուաւ, թէ արդեօք ինչ պիտի ըլլամ, ով գիտէ Աստուծոյ դատաստանը։ Սուրբ հայրն Արսէն ալ մահուան ատեն կը դողար. աշակերտներն հարցուցին, թէ ինչու այդչափ կը վախնաս. ըսաւ, որ. դեակք այս վախը ինձի նոր բան չէ, բոլոր կենացս մէջ ունէի։ Թողուանք զուրիչները, երանելին ցոր ալ կը դողար ըսելով. զինչ գործեցից, ինչ պիտի ընեմ, երբ Աստուած զիս դատելու գայ և երբ հարցընէ ինչ պատասխան պիտի տամ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՜հ Աստուած իմ, ո՞վ է որ զիս քեզմէ աւելի սիրեր է. ես զո՞վ քեզմէ աւելի անարգեր ու վշտացուցեր եմ։ Ով սուրբ արիւն և սուրբ վերք Յիսուսի, դուք էք միայն իմ յոյսս։ Հայր երկնաւոր, մեղքերուս մի նայիր, ալ նայէ փրկչիս վերքերուն. դարձուր աչուքներդ քու սիրելի միածնիդ վրայ որ ինձի համար կը մեռնի ցաւագին, և կը խնդրէ քեզմէ որ ինձի թողութիւն տաս։ Կը ցաւիմ ու կը զղջամ, ով իմ ստեղծողս, զքեզ անարգելուս հա-

մար. և չի կայ բան մ'որ այսպէս սրտիս ցաւ ըլլայ։ Դու զիս ստեղծեցիր որ զքեզ սիրեմ, իսկ ես այնպէս ապրեցայ որպէս թէ զքեզ վշտացընելու համար ստեղծած ըլլայիր զիս։ Վասն սիրոյ միածնիդ Յիսուսի Քրիստոսի, թող ինձ իմ մեղքերս և շնորհք տուր զքեզ սիրելու։ Ինչուան հիմայ կամացդ դէմ կեցայ, ասկից ետև մէյմ'ալ չեմ ուզեր քեզի դէմ կենալ, և կը փափաքիմ ինչ որ ինձի կը հրամես սիրով կատարել։ Արդ դու կուզես որ զըզուիմ գանիմ քեզի դէմ ըրած մեղքերէս, ես ալ կը գարշիմ ի բոլոր սրտէ. կ'ուզես որ առաջադրեմ մէյմ'ալ ալ զքեզ չվշտացընելու, ահա ես ալ կ'առաջադրեմ հազար անգամ կեանքս կորսընցընել՝ քան թէ քու շնորհքէդ ելնել։ Կը հրամայես որ զքեզ յամենայն սրտէ սիրեմ, այո այո ես ալ ի բոլոր սրտէ կը սիրեմ զքեզ, և բաց ի քեզմէ ուրիշ բան սիրել չեմ ուզեր. ասկէ ետև դու միայն ես իմ մէկ հատիկ սիրելիս, իմ մի միայն սէրս։ Քեզմէ սուրբ յարատևութիւն կը խնդրեմ և կը յուսամ։ Յիսուսի միածնիդ սիրոյն համար շնորհէ ինձ որ քեզի հաւատարիմ ըլլամ, ու ես ալ ըսեմ սրբոյն Բոնավենտուրայի հետ թէ՝ մի է իմ սիրելիս, մէկ հատիկ է իմ սէրս։ Զէ, չեմ ուզեր որ մնացած կեանքս զքեզ վշտացընելու գործածեմ, այլ կ'ու-

զեմ որ միայն մեղքերս լալու և զքեզ սիրելու գործածեմ։ Մարիամ մայր իմ, դու որ բարեխօսութիւն կ'ընես անոնց համար որոնք զիրենք քեզ կը յանձնեն, ինձի համար ալ բարեխօս եղիր առ Յիսուս։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Զ·

ՄԵՂԱՒՈՐԻՆ ՄԱՀՆ

Խաղաղութիւն պիտի փնտռեմ ու պիտի չի գտնեմ։ Վայ վայի վրայ պիտի գայ և գոյժ գուժի վրայ[1]։

ՄԱՄՈՆ ԱՌԱՋԻՆ

Մեղաւորները հիմակուհիմայ կը հեռացընեն իրենցմէ մահուան յիշատակն ու մտածութիւնը, և այսպէս խաղաղութիւն գտնել կ'ուզեն, թէպէտ և բնաւ չեն գըտներ մեղայ մէջ ապրելովնին։ Բայց երբ մահուան նեղ ժամանակը վրայ հասնի որ յաւիտենականութիւն պիտի մտնեն՝ խաղաղութիւն պիտի փնտռեն և պիտի չի գտնեն· չեն կրնար այն ատեն իրենց չար

1 Խնդրեսցէ զխաղաղութիւն և ոչ գտանիցէ։ Վայ ի վայի վերայ եղիցի և գոյժ ի գուժի։ Եղեկ· Է· 25· 26։

խղճմտանքին տանջանքէն փախուստ տալ։ Խաղաղութիւն պիտի փնտռեն· բայց ինչ խաղաղութիւն կրնայ գտնել այն հոգին՝ որ մեղքերով ծանրացած է, որոնք մէյ-մէկ իժի պէս զինքը կը խածատեն։ Ինչ խաղաղութիւն պիտի գտնէ, երբ գիտէ թէ մէկ քանի բոպէէն Քրիստոսի դատաւորին ատեանը պիտի երևի, որուն ինչուան այն ատեն օրէնքը և բարեկամութիւնն արհամարհեր է։ Ուստի վայ վայի վրայ պիտի գայ, գոյժ գուժի վրայ։ Մահուանն առած լուրը, բոլոր աշխարհիս բաներէն թողուելու մտածմունքը, խղճմտանքին խայթերը կորսընցուցած ժամանակը, ատեն չմնալը, Աստուծոյ անաչառ դատաստանը, յաւիտենական թշուառութիւնն որ մեղաւորներուն կը սպասէ, այս ամէնը սոսկալի ալէկոծութիւն մը կը յարուցանեն որ խելքը միտքը կը շփոթէ, յուսահատութիւն կը բերէ, և այնպէս տակնուվրայ եղած և անյոյս՝ հոգեվարութենէն կ'անցնի անդիի աշխարհ։

Աբրահամ մեծ վարձքով մարդկային յուսոյն հակառակ յԱստուած յուսացաւ, Աստուծոյ խոստմունքին հաւատալով, որ անյոյս բանին յուսով հաւատաց[1]։ Իսկ մեղաւորք իրենց չարաչար վարքով և սըտութեամբ ի կործանումն իւրեանց կը

1 Որ յանյոյսն յուսով հաւատաց։ Հռովմ· Դ· 18։

յուսան. չէ թէ միայն ընդդէմ յուսոյ, այլ նաև ընդդէմ հաւատոյ, Աստուծոյ խըստասիրտ եղողներուն դէմ ըրած սպառնալիքներն արհամարհելով։ Իրենք ալ շար մահուանէ կը վախնան, այլ չեն վախնար չարաչար վարք ունենալէն. բայց ո՞վ կ'ապահովցընէ գիրենք թէ յանկարծակի կայծակով մը, պուտ մը բանով, արեան զեղմամբ մը պիտի չի մեռնին։ Մահուան ժամանակ՝ ատեն ալ ունենան դարձի գալու, ո՞վ խօսք կու տայ իրենց թէ իրաւցընէ կրնան դառնալ։ Սուրբն Օգոստինոս տասուերկու տարի պատերազմելով իւր անձին հետ կարող եղաւ իւր վատթար սովորութեանցն յաղթել. իսկ հոգեվարք մ'որ միշտ խառնակ խղճմտանքով ապրեր է՝ ցաւերու մէջ, գլուխը տակնու

Յիսուսի, և ձեզի կ'ապաւինիմ, կը զգուիմ հազար անգամ և կը նզովեմ այն անարժան հեշտութիւնները և հաճոյքը, որոնցմով իմ փրկիչս վշտացուցի, և թշուառաբար իւր բարեկամութիւնը կորսընցուցի։ Ձեր վրայ նայելով յոյսս կը նորոգեմ, և առ ձեզ կը դարձնեմ իմ իղձերս և յուժարութիւններս։ Ով սիրելիդ իմ Յիսուս, դու արժանի ես որ ամէնքը սիրեն զքեզ, և բոլոր սրտանց սիրեն զքեզ. բայց ես զքեզ չափէն աւելի դառնացուցի, քու սէրդ անարգեցի, և այսու ամենայնիւ դուն ինձի համբերեցիր, և այնչափ մարդասիրութեամբ զիս թողութիւն առնելու կանչեցիր։ Ահ Յիսուս փրկիչ իմ, թող մի՛ տար ինձ որ ա՛լ ասկէ ետև զքեզ վշտացընեմ, ու ինք զինքս դատապարտեմ։ Ով տէր, դժոխքին մէջ այն ինչ դառն պատիժ պիտի ըլլայ ինձի տեսնել քու աբիւնդ, և այնչափ ողորմութիւններդ՝ որ իմ վրաս բանեցուցիր։ Արդ կը սիրեմ զքեզ և կ'ուզեմ սիրել միշտ, սուրբ յարատևութիւն տուր ինձի։ Հեռացուր սրտէս այն ամէն սէր որ քեզի համար չէ. և տընկէ սրտիս մէջ ճշմարիտ փափաք և առաջադրութիւն ասկից ետ'ւ զքեզ միայն սիրել, ով իմ ծայրագոյն բարիս։

Մարիամ, մայր ողորմութեան, առ Աստուած ձգէ զիս, և իրեն տուր բոլորովին քանի որ չեմ մեռած։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Տառապեալ մեղաւոր հոգեվարքին վայն ու տագնապը չէ թէ մէկ, այլ շատ և խիստ կ'ըլլան։ Մէկ կողմանէ սատանաները զինքը կը շարչարկեն, վասն զի այս սոսկալի թշնամիները մահուան ատեն բոլոր ուժերնին կը թափեն, որպէս զի այն հոգին որ աչխարհէս ելնելու վրայ է՝ կարող ըլլան կորսընցընել։ Գիտեն որ քիչ ատեն կը մնայ իրենց զայն վասարկելու, և թէ որ մէյմ'այն ատեն զինքը ձեռքերնէն հանեն՝ յաւիտեան կորսընցուցած կ'ըլլան։ Ձեր քով եկաւ, կ'ըսէ սուրբ գիրքը, սատանան բարկութեամբ լցուած, վասն զի գիտէ որ քիչ ժամանակ ունի[1]։ Եւ մէկ հատ մ'ալ չ'ըլլար նոյն ժամանակը փորձիչ սատանան՝ այլ անհամար, որ հոգեվարին գլուխը թափած զինքը կորսընցընելու կը նային։ Մէկը կ'ըսէ թէ մի՛ վախնար կառողջանաս. միւս թէ՝ դուն որ այնչափ ատեն Աստուծոյ ձայնին ականջ չի կախեցիր ի՞նչ կարծես հիմայ ողորմի՛ պիտի քեզի. ուրիշ մը թէ՝ ի՞նչ դեղ պիտի կա-

1 Անկաւ բանսարկուն առ ձեզ, որ ունի զգաստութիւն բազում, և կացցէ առ սակաւ մի ժամանակս։ Յայտն. ԺԲ. 1։

բենաս ընել հիմայ այնչափ չարեացդ, այն-
չափ ուրիշներուն անունը կոտրելուդ. ու-
րիշ մ'ալ, թէ՝ չեմ գիտեր որ քու խոստո-
վանանքներդ առանց ճշմարիտ ցաւոց և
առաջադրութեան բոլոր փուճը ելան, հի-
մայ ինչպէս անոնց ճար պիտի կրնաս ը-
նել։

Միւս կողմանէ կը տեսնէ հոգեվարը
որ իւր մեղքերը չորս դին առեր են։ Մե-
ղաւոր մարդուն չարիքները, կ'ըսէ սաղմո-
սը, զինքը կորսուելու կ'որսան[1]։ Այս ա-
մէն մեղքերը մէյմէկ դահճի պէս պիտի
կապեն զինքը, կրսէ սուրբն Բեռնարդոս,
ու պիտի ըսեն՝ մենք քու գործերդ ենք,
քեզմէ չենք բաժնուիր, միատեղ կու գանք
անդին քեզի հետ և յաւիտենից դատա-
ւորին առջև կ'ելնենք։ Այն ատեն հոգե-
վարը կուզէ անոնց ձեռքէն խալըսիլ, բայց
անոնցմէ խալըսելու համար պէտք էր որ
զանոնք ատեր ու սրտանց առ Աստուած
դառնար. և սակայն միտքը մթընցած,
սիրտը խստացած կըլլայ։ Խիստ սիրտը,
կ'ըսէ Սիրաք, իրեն չարեաց ցաւերով կը
ծանրանայ վերջի վայրկենին. և ով որ
տագնապ կը սիրէ, անոր մէջ կը կորսուի[2]։

1 Զայր մեղաւոր չարիք իւր որսացին ի կո-
րուստս։ Սաղմ. ՃԼԹ. 12։

2 Սիրտ խիստ ծանրացի ցաւօք. և որ սիրէ
զտագնապ, ի նմին կորիցէ։ Սիր. Գ. 29։

Սուրբն Բեռնարդոս կ'ըսէ, թէ այն սիրտն
որ բոլոր կենացը մէջ չարեօք խստացեր
է, կ'ուզէ դատապարտութեան վիճակէն
ելնել. բայց չի կրնար անկէ խալըսիլ. և
իւր չարեաց ձեռքը կաչկանդած, նոյն վի-
ճակին մէջ աչխարհ ս կ'ելնէ։ Ինչուան այն
ատեն մեղքը սիրել ուզելուն, յաւիտենից
դատապարտութեան վտանգն ալ սիրեր
է, ուստի արդարապէս Թող կու տայ Աս-
տուած որ այն ատենն ալ նոյն վտանգին
մէջ կորսուի, որուն մէջ մինչև ի մահ ա-
պրիլ ուզեր էր։ Սուրբն Օգոստինոս կ'ըսէ,
թէ այն որ ինքը զմեղս չէ Թողուցեր,
այլ մեղքը զինքն է Թողեր՝ մահուան ա-
տեն շատ դժուարաւ կը գանի անկից ինչ-
պէս որ պէտք է, վասն զի այն ատեն ինչ
որ կ'ընէ՝ բռնի կ'ընէ։

Ուրեմն բանը գէշ է խոստասիրտ մեղա-
ւորին, որ Աստուծոյ ազգարարութեանց
դէմ կը կենայ։ Անոր սիրտը քարի պէս
սալանայ պիտի և դարբնաց սալին պէս
անշարժ հաստատուն պիտի մնայ[1]։ Այն
ապերախտը փոխանակ կակըղնալու և
Աստուծոյ ձայնին տեղիք տալու աւելի
խստացեր է, ինչպէս սալն ուռամբ զար-
նելով կը պնդանայ։ Իւր պատիժն այն է՝

1 Սիրտ նորա սալացեալ է իբրև զվէմ, և
հաստատեալ կայ իբրև զսալ դարբնաց։ Յովբ.
ԽԱ. 15։

որ մահուան ատենն ալ այնպէս պիտի գտնուի, թէպէտ և յաւիտենականութեան անցնելու վրայ ըլլայ։ Մեղաւորները, կ'ըսէ Աստուած, արարածոց սիրոյն համար իրենց կռնակն ինձի դարձուցին և ոչ երեսին, իրենց նեղութեան ատեն պիտի ըսեն՝ արի և զմեզ փրկէ։ Բայց ո՞ւր են քու աստուածներդ՝ որ քեզի համար կանգնեցիր. թող գան ու նեղութեանդ ատեն թող փրկեն զքեզ[1]։ Ողորմելիները մահուան ատեն առ Աստուած պիտի դիմեն. բայց Աստուած պիտի ըսէ իրենց, հիմայ ինձի՞ կու գաք, արարածները ձեզի կանչեցէք որ գան ու օգնեն ձեզի, վասն զի անոնք էին ձեր աստուածները։ Այսպէս պիտի ըսէ Աստուած, վասն զի թէպէտ առ Աստուած կը դիմեն, բայց առանց ճշմարիտ դարձի միտք ունենալու։ Սուրբն Հերոնիմոս կ'ըսէ թէ ստոյգ գիտեմ, փորձով ալ տեսեր եմ որ բարի վախճան չունենար՝ ով որ բոլոր կեանքն ի չարիս մնչեր է։

1 Դարձուցին յիս զթիկունս և ոչ զերեսս իւրեանց, և ի ժամանակի չարեացն իւրեանց ասացեն՝ արի և փրկեա զմեզ։ Եւ ո՞ր են աստուածքն քո զոր արարեր քեզ. յարիցեն և փրկեսցեն զքեզ ի ժամանակի չարեացն քոց։ Երեմ. Բ. 27։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Սիրելի փրկիչ իմ, օգնէ ինձ, զիս երեսէ մի՛ ձգեր. կը տեսնեմ որ հոգիս բոլոր վիրաւորուած է մեղքէ, կիրքերս վրաս բռնացեր են, վատթար սովորութիւնք զիս կը նեղեն, ոտքդ կ'ինկնամ, ողորմէ ինձ և խալըսէ զիս այնչափ չարեացս ձեռքէն. ի քեզ տէր, յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան։ Մի՛ թողուր որ քեզի ապաւինած հոգիս կորսուի. մի՛ մատներ գազանաց այն անձն որ խոստովան կ'ըլլայ քեզի։ Շատ կը ցաւիմ որ զքեզ վշտացուցեր եմ. անհուն բարիդ, գէշ ըրեր եմ, չեմ ուրանար. ուստի ամենայն կերպով զիս չտկել կ'ուզեմ. բայց թէ որ դու ինձի չ'օգնես քու շնորհքդ, կորսուեր գնացեր եմ։ Ընդունէ, ով Յիսուս, այս անօրէն ապստամբը, որ զքեզ այնչափ անարգեր է, յիշէ տէր, զի քու արեանդ և կենացդ գինն եմ. ուստի քու չարչարանացդ և մահուանդ արդեամբք առ զիս քու թևիդ տակ, և տուր ինձ սուրբ յարատևութիւն։ Էս արդէն կորսուած էի, դու զիս կանչեցիր. ա՛լ չեմ ուզեր դէմ կենալ, զիս քեզ կը նուիրեմ, քու սիրոյդ զիս կապէ և մի՛ թողուր որ մէյմ՛ալ ես զիս կորսընցնեմ՝ նորէն քու շնորհքդ կորսընցը-

նելով։ Կ'աղաչեմ, Յիսուս իմ, թող մի՛ տար։ Թագուհի մայր իմ տիրամայր Մարիամ, դու ալ մի՛ թողուր զիս, խնդրէ ինձի համար աւելի մահ և հագար մահ. քան թէ մէյմ՚ալ նորէն կորսընցընեմ քու միածնիդ շնորհքը։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Այս ինչ սոսկալի բան է. Աստուած անդադար մեղաւորաց շարաշար մահ կը սպառնայ. ըսելով թէ՝ ըլլայ պիտի որ պիտի աղաղակէք ինձ և ես պիտի չլսեմ ձեզի[1]։ Ամբարշտին յոյսն ինչ է որ հաստատուն կեցեր է. ինչ վստահացեր է առ Աստուած՝ թէ կրնայ ապրիլ, կամ խնդրուածոց կը լսէ Աստուած . . . կամ թէ երբ առ Աստուած աղաղակէ, Աստուած ալ ներեն պիտի լսէ[2]։ Այսկէ ետև ձեր կորբստեան վրայ պիտի ծիծաղիմ։ Աստու-

1 Իսկ զի կարդայցէք առ իս, և ես ոչ լսիցեմ ձեզ։ Առակ. Ա. 19։

2 Եւ զի՞նչ է յոյս ամբարշտի զի յեցեալ կայցէ վստահացեալ ի տէր թէ ապրիցէ՞, կամ թէ խնդրուածոց նորա լուիցէ տէր... կամ ի կարդալ նորա առ նա լուիցէ՞ նմա։ Յովբ. Իզ. 8. 9. 10։

3 Այսուհետև ես ծիծաղեցայց զկորստեամբ ձերով։ Առակ. Ա. 26։

ծոյ ծիծաղիլը, կ'ըսէ սուրբն Գրիգոր, ողորմիլ չ'ուզելն է։ Վրէժխնդրութեան օրը պիտի հատուցանեմ, կ'ըսէ Աստուած, այն ժամանակ երբ անոնց ոտքը սխալի[1]։ Եւ այսպէս ուրիշ շատ տեղեր ալ նոյն սպառնալիքը կ'ընէ Աստուած։ Բայց մեղաւորները այն ինչպէս ապահով և հանգիստ կեցեր են, իբր թէ Աստուած իրենց հաւաստեաւ խոստացած ըլլար որ մահուան ատեննին թողութիւն և արքայութիւն պիտի տայ։ Ճշմարիտ է, թէ երբ ալ մեղաւորները դառնան՝ Աստուած խոստացեր է իրենց թողութիւն տալ. բայց չ'ըսաւ ալ թէ մեղաւորներն իրենց մահուան ատեն պիտի դառնան. հապա ընդհակառակն շատ անգամ ըսեր է թէ ով որ մեղքի մէջ կ'ապրի, մեղքի մէջ պիտի մեռնի։ Ձեր մեղքին մէջ պիտի մեռնիք[2]։ Եւ կ'ըսէ դարձեալ՝ թէ մեռնելու օրերնիդ պիտի փնտռէք զիս ու պիտի չի գտնէք՝[3]։ Ուրեմն պէտք է որ զԱստուած փնտռենք երբ կրնայ գտնուիլ. վասն զի ատեն կու

1 Ցաւուր վրէժխնդրութեան հատուցից, ի ժամանակի յորում սխալեսցի ոտն նոցա։ Բ. Օրէնք. ԼԲ. 35։

2 Ի մեղս ձեր մեռանիցիք . . . մեռանիցիք ի մեղս ձեր։ Յովհ. Ը. 21. 24։

3 Ցաւուր մահու խնդրիցէք զիս և ոչ գտանիցէք։ Յովհ. Է. 34։

գայ՝ որ գտնել չըլլար։ Խեղճ մեղաւորներ, խեղճ կուրեր, որ մոքերնին կը դնեն թէ մեռնելու ատեն դառնան, այն ատենն որ դառնալու ժամանակ չի կայ։ Ուէսատրոս կ'ըսէ թէ ամբարիշտները չեն սորված բարեգործութիւն ընել ուրիշ ատեն, այլ այն ատեն միայն կ'ուզեն ընել երբ բարի գործելու ատեն չի կայ։ Աստուած կ'ուզէ որ ամէնքն ալ փրկուին. բայց զԽոստասիրտը կը պատժէ։

Թէ որ խեղճ ողորմելիներէն մէկը մեղաց մէջ գտնուելով իջուածքի հանդիպի, և զգայութիւնը կորսընցընէ, այն ինչպէս կը ցաւին տեսնողները թէ առանց սուրբ խորհուրդներու և առանց զղջման նշան մը տալու կը մեռնի։ Եւ որչափ կ'ուրախանային թէ որ տեսնային որ խելքը գլուխն եկաւ, արձակում կը խնդրէ և զղջում կ'ընէ։ Բայց խենթ չէ՞ այն որ ատեն ունենալով այդ բանը չըներ, մեղաց մէջ կ'ուզէ մնալ, կամ նորէն կը մեղանչէ, և վտանգի մէջ կը դնէ ինք զինքը որ մահը վրան հասնի. այն ատենն ալ գուցէ զղջայ, կամ թէ ամենևին չզղջայ։ Կը սարսափի մարդ, երբ տեսնէ որ մէկը յանկարծակի կը մեռնի. և ահա շատերը կան՝ որ կամաւ իրենք զիրենք վտանգի մէջ կը դնեն այսպէս մեռնելու, և մեղաց մէջ մեռնելու։

Արդարութիւնը Աստուծմէ կրնայ մէտ է[1]. մենք Աստուծոյ մեզի տուած շնորհքներուն հաշիւ չենք բռներ, բայց Աստուած զանոնք ճիշտ հաշիւ կ'ընէ ու կը կրէ. և երբ կը տեսնէ որ մարդիկ կ'արհամարհեն զանոնք ինչուան որոշ կէտ մը, անկէ ետև ալ մեղաւորները կը թողու իրենց մեղաց մէջ, և թող կու տայ որ այսպէս մեռնին։ Շատ խղճալի է այն մարդն՝ որ իւր զղջումը կը թողու մահուան ատենին։ Սուրբ Օգոստինոս կ'ըսէ թէ՝ հիւանդին ապաշխարութիւնն ալ հիւանդ կ'ըլլայ. և սուրբն Հերոնիմոս թէ՝ հարիւր հազար չար վարք ունեցողներուն միջէն հազիւ թէ մէկն արժանի կ'ըլլայ մահուան ատեն Աստուծմէ թողութիւն գտնելու. Փերերեան սուրբ Վինկենտիոս ալ կ'ըսէ թէ աւելի մեծ հրաշք է չարաչար վարք ունեցողներուն բարի վախճան ունենալը, քան թէ մեռելներուն յարութիւն տալը։ Ի՞նչ ցաւ, ինչ զղջումն պիտի ունենայ մահուան ատեն այն մարդն՝ որ ինչուան այն վայրկեանը մեղասէր եղեր է։ Բելլարմինոս կը պատմէ թէ՝ հոգեվարքի մը գացի ու երբ կը յորդորէի զինքն որ կատարեալ զղջում ընէ, անիկայ ըսաւ թէ՝ կատարեալ զղջում ինչ ըսել է չեմ գիտեր. ես

1 Մէտ կրնայ է արդարութիւն ի տեառնէ։ Առակ. ԺԲ. 11։

ջանացի հասկըցընել իրեն, բայց հիւանդը դարձաւ ըսաւ՝ հայր իմ չեմ հասկընար, ինչ կ'ըսես, ես այս բաներս ըմբռնելու ընդունակ չեմ. և այսպէս մեռաւ, իւր դատապարտութեան նշանը բաւական յայտնի թողլով, կ'ըսէ Բեղլարմինոս։ Իսկ սուրբն Օգոստինոս կ'ըսէ թէ՝ արդար պատիժ է մեղաւորին մահուան ատեն ինք զինքը մոռնալ, որ ի կեանս իւր զԱստուած մոռցեր էր։ Ուստի խրատ կու տայ առաքեալն, մի խաբուիք Աստուած չ'արհամարհուիր, վասն զի մարդ ինչ որ կը սերմանէ, նոյնը կը հնձէ. ով որ ի մարմին իւր կը սերմանէ, մարմնէն ապականութիւն պիտի հնձէ[1]։ Արհամարհել ու զԱստուած ծաղր ընել կ'ըլլայ իւր օրէնքները արհամարհելով ապրիլ և եռքը վարձք ու յաւիտենական փառք ստանալ։ Աստուած չ'արհամարհուիր, ինչ որ հոս կը ցանես՝ անդին կը քաղես. ով որ իւր կենաց մէջ մարմնոյ անարժան հաճոյք ցաներ է՝ անդին իւր բաժինն է ապականութիւն, թըշուառութիւն և յաւիտենական մահ։

Ով քրիստոնեայ, ինչ որ ուրիշներուն համար կ'ըսեմ, քեզի համար ալ կ'ըսեմ։

1 Մի խաբիք, Աստուած ոչ արհամարհի։ Զի զոր ինչ սերմանէ մարդ՝ զնոյն և հնձեսցէ. որ սերմանէ ի մարմին իւր, ի մարմնոյ անտի հընձեսցէ զապականութիւն։ Գաղատ. Զ. 7, 8։

Հիմայ ըսէ ինձ, եթէ մահուան կէտը ընկած ըլլայիր, բժիշկները վրադ յուսահատած ըլլային, զգայարանքներդ դադրած և հոգեվարք ըլլային, մահուան տագնապը վրադ հասած ըլլար, որչափ կ'աղաչէիր զԱստուած որ քեզի ամիս մ'ալ, շաբաթ մ'ալ ատեն տայ, որ խղճմտանքիդ հաշիւը չտկես։ Եւ ահա արդէն տուեր է քեզի Աստուած այդ ժամանակը, ինորհակալ եղիր իրեն ու չուտով նստէ շարեացդ ճարը տես, և ամէն միջոց բաներուր որ երբ մահը վրայ հասնի՝ ինորհաց վիճակին մէջ գտնէ զքեզ. ապա թէ ոչ, այն ատեն ճար ընելու ժամանակ չես գտներ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՜հ Աստուած իմ, ո՞վ կրնար այնչափ համբերել որչափ որ դու երկայնամիտ եղար ինձ, թէ որ անբաւ չըլլար քու բարութիւնդ, ես թողութենէ յոյս կը կըտրէի. բայց իմ բանս այն Աստուծոյն հետ է որ ինձ թողութիւն տալու և զիս փրկելու համար մեռաւ։ Դու ինձի կը հրամայես որ յոյս ունենամ, ես ալ յուսալ կ'ուզեմ։ Թէ որ իմ մեղքերս զիս կը վախցընեն ու կը դատապարտեն, քու արդիւնքդ և քու խոստմունքդ զիս կը քաջալերեն։

Դու կեանք չնորհաց խոստացար առ քեզ դարձողներուն ըսելով թէ դարձիք՝ և կ'ապրիք [1]։ Ողջագուրել խոստացար առ քեզ դարձողը. դու ըսիր՝ ինձի դարձիք և ես ալ ձեզի կը դառնամ [2]։ Ըսիր, թէ ով որ կը խոնարհի ու կը զղջայ, չեմ արհամարհեր զինքը [3]։ Արդ ահա տէր, ես առ քեզ կը դառնամ, առ քեզ կը դիմեմ, զիս բիւր դժոխոց արժանի կը տեսնեմ և կը ցաւիմ կը զղջամ զքեզ վշտացընելուս, և հաստատուն խօսք կու տամ, որ չեմ ուզեր մէյմ'ալ զքեզ դառնացընել, և կ'ուզեմ յաւիտեան զքեզ սիրել։ Հապա մի թողուր որ ես ապերախտ ապրիմ քու այնչափ բարերարութեանդ առջև։ Հայր երկնաւոր, Յիսուսի հնազանդութեան արդեանց համար, որ քեզի հնազանդելու համար մեռաւ, չնորհէ որ ես ալ հնազանդիմ քու կամացդ մինչև ի մահ։ Կը սիրեմ զքեզ, ով ծայրագոյն բարութիւն, և քեզի ունեցած սիրոյս համար կ'ուզեմ յամենայնի հնազանդիլ քեզ. տուր ինձ սուրբ յարատևութիւն, տուր ինձ քու սէրդ. ալ ուրիշ բան չեմ ուզեր։ Մարիամ, մայր իմ տիրամայր, ինձի համար միջնորդ եղիր։

1 Դարձարուք և կեցջիք։ Եզեկ. ԺԸ. 32։

2 Դարձարուք առ իս, և ես դառնամ առ ձեզ։ Զաք. Ա. 9։

3 Զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ։ Սաղմ. Ծ. 18։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Է.

ԱՆՀՈԳ ՀՈԳԵՎԱՐՔԻ ՄԸ ԶԳԱԾՄՈՒՆՔՆ ՈՐ ՔԻԶ Է ՄՏԱԾԵՐ ԻՒՐ ՄԱՀԸ

Կարգի դիր տուն, վասն զի պիտի մեռնիս և պիտի չ'ապրիս [1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Երևակայէ մտքովդ, թէ հիւանդի մը քովն ես կեցեր որ մէկ երկու ժամէն կեանքը պիտի լմնցընէ։ Խեղճ հիւանդը նայէ ինչպէս ցաւերով պաշարուած է. կը մարմրի, կուրծքը կը նետէ. շնչառութիւնը կը պակսի, քրտինքը պաղ, գլուխն իրենը չէ, շարժիլ չի կրնար, բան չի հասկընար, և քիչ կը խօսի։ Ամենէն ողոր-

1 Հրաման տուր վասն տան քո, զի մեռանիս և ոչ կեաս։ Ես. ԼԸ. 1։

մելի բանն այն է որ արդէն մահը մօտեցեր է, հոգին մտածելու տեղ ու յաւիտենականութեան տալու հաշիւը պատրաստելու՝ ուրիշ բան չի մտածեր՝ բայց միայն բժիշկ դեղ կը փնտռէ մահաբեր հիւանդութենէն ու ցաւերէն խալըսելու համար։ Սուրբն Լաւրենտիոս Յուստինեան կ'ըսէ, թէ այսպիսի հոգեվարքները ուրիշ բան մտածելու բաւական չեն՝ բայց եթէ իրենք զիրենք։ Գոնէ ազգականներն ու բարեկամները հասկցընէին իրեն, թէ վտանգաւոր վիճակի մէջ է. չէ, անոնք ալ չեն համարձակիր մահուան լուրը տալ անոր, և յորդորել որ սուրբ խորհուրդներն առնու. ամէնքն ալ կը քաշուին այս բանը ըսելու՝ որպէս զի սիրտը չի կոտրեն։ Ո՛վ Աստուած իմ, հիմակուընէ շնորհակալ կ'ըլլամ քեզի, որ մահուանս ատեն իմ կարգիս սիրելի եղբայրները քովս պիտի ժողվես, որոնք այն ատեն ուրիշ շահ չեն սպասեր ինձմէ, բայց եթէ իմ յաւիտենական փրկութիւնս, և ամէնքն ալ ինձ պիտի օգնեն աղէկ մեռնելու։

Բայց եթէ և այն հիւանդին չմիշեցնեն քովինները իրեն մօտալուտ մահը, սակայն ինքը տեսնելով որ տնեցիք տակնուվրայ եղեր են, բժիշկներ եռեւէ եռեւ կու գան, դեղ չի մնար որ իրարու վրայ չի տան մէկմէկէ սաստիկ, խեղճ հիւանդը կը շուարի կը շփոթի, մէկալ գէն վախ ու խըղճ-

մտանքին խայթը և յուսակտրութիւնը կը կոխեն, կը սկսի ինքն իրեն ըսել. ահ, ով գիտէ, վախեմ որ օրերս լմնցեր են, բանս բուսեր է, վախճանս հասեր է։ Իսկ երբ մեռնելու լուրն ալ առնէ՝ ալ սիրտն ինչ կըլլայ, ինչ կըլլայ երբ իրեն ըսեն, թէ ով պարոն, քու հիւանդութիւնդ մահաբեր է, պէտք է որ վերջին խորհուրդներն առնես, գրեց Աստուծոյ հետ միացընես, և եղնես երթաս մնաս բարով ըսելով աշխարհիս։ Ինչ, աշխարհիս մնաս բարով ըսեմ. ինչ, ամէն բանս պիտի թողում, տունս տեղս, ազգականներս, բարեկամներս, անոնց կենակցութիւնը, խաղերս, զբօսանքներս պիտի ձգեմ ու երթամ, — Այո՛, ամէն բան պիտի թողուս. արդէն նստարն եկեր է կը գրէ քու բերնէդ — այս կը թողում, այն կը թողում։ Իսկ հետս ինչ պիտի տանիմ։ — Ուրիշ բան չէ, բայց միայն քուրջի մը կտոր. որ վրադ պիտի ձգեն, և գերեզման անով պիտի իջնես և քեզի հետ պիտի փտի։

Այն ինչ մաղձոտութիւն, այն ինչ պըզտորութիւն կը տիրէ այն ատեն հոգեվարքին վրայ, երբ ալ կը տեսնէ ընտանեաց լացը, բարեկամաց յուսութիւնը, որ քովը կեցեր են, և սիրտ չ'ունին բան մը խօսելու։ Բայց իրեն աւելի նեղութիւն տուողներն իւր խղճմտանաց խայթերը կ'ըլլան, որ այն ալէկոծութեան ատեն աւելի սաս-

տիկ կը զարնեն, ինչուան այն ատեն անկարգ կեանք անցընելուն համար, այնչափ Աստուծոյ ազգարարութիւններն ու տուած լոյսերը, հոգևոր հարց խրատներն ու իրեն գրած առաջադրութիւնները կամ բնաւ ի գործ չի գնելուն, և կամ շուտով անփոյթ ըլլալուն համար։ Այն ատեն պիտի ըսէ. վայ գլխոյս, Աստուծմէ այնչափ լոյս ընդունեցայ և այնչափ ժամանակ ունեցայ խղճմտանքս շտկելու, ու բան մը չ'ըրի. և ահա հիմայ մահուան դուռն եմ հասեր։ Ի՞նչ դժուարութիւն ունէի այս այն առիթներէն փախչելու, այսպիսի բարեկամութիւններէն հեռանալու, ստէպ ստէպ խոստովանելու։ Թէպէտև դժուարութիւն ալ ըլլար, պէտք էր որ հոգիս փրկելու համար ամէն բան ընէի, վասն զի անկէց մեծ բան չի կար։ Ո՛վ, թէ ի գործ դրած ըլլայի այն բարի առաջադրութիւնն զոր ըրի, ու շարունակէի ինչպէս որ այն ատեն ցնկսայ. հիմայ որչափ մխիթարեալ կ'ըլլայի։ Բայց չ'ըրի և հիմայ ալ ընելու ժամանակ չի կայ։ Այսպիսի հոգեվարացեալ այս խորհուրդները, որ կեանքերնուն մէջ բոլոր անհոգ եղեր են խըղճմտանքնին մաքուր պահելու, նման են դատապարտելոց խորհրդոց՝ որ դժոխոց մէջ կը ցաւին իրենց մեղաց վրայ, որ պատճառ եղան իրենց տանջանաց. բայց օգուտ չի կայ, ճար չի կայ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Տէր, թէ որ այս վայրկենիս ինձ ըսէին, թէ մահդ եկեր հասեր է, ահա ասոնք պիտի ըլլային իմ ցաւագին խորհուրդներս։ Շնորհակալ եմ որ ինձի այս լոյսը տուիր, և ժամանակ ալ կու տաս խելքս գլուխս ժողվելու։ Աստուած իմ, չէ՝ չեմ ուզեր ասկից ետև քեզմէ փախչիլ։ Հիմայ արժանապէս պէտք է որ վախնամ. վասն զի թէ որ հիմայ ալ զիս քեզի չի տամ ու դէմ կենամ, իրաւունք ունիս զիս երեսէ ձգելու։ Դու ինձի սիրտ տուիր գքեզ սիրելու, ես զայն այսպէս չարաչար բանեցուցի։ Այրարածները սիրեցի, և գքեզ չի սիրեցի, որ իմ արարիչս ես և փրկիչս, և ինձ համար կեանքդ տուիր։ Ցքեզ փոխանակ սիրելու, քանի քանի անգամ գքեզ վըշտացուցեր եմ, անարգեր եմ, և քեզի կռնակ դարձուցեր եմ։ Ես ալ գիտէի՝ որ այն մեղքերով քու կամքիդ դէմ կը գործեմ, և սակայն գործեցի։ Յիսուս Աստուած իմ, կը զղջամ կը ցաւիմ այն ըրածներուս վրայ ի բոլոր սրտէ, և կ'ուզեմ վարքս փոխել։ Աշխարհիս ամէն վայելքին մեաք բարով կ'ըսեմ, որպէս զի գքեզ սիրեմ և քու հաճոյքդ ընեմ. Աստուած

հոգւոյ իմոյ։ Դուն ինձ քու սիրոյդ մեծամեծ նշանները ցցուցիր, կը փափաքիմ որ ես ալ մեռնելէս առաջ իմ սիրոյս պզտիկ նշանները ցուցընեմ։ Այս վայրկենէս սկսեալ սիրով յանձն կ'առնում ամէն հիւանդութիւն, խաչ, անարգանք, վիշտ, որ մարդիկ կրնան ինձ տալ, զորացուր զիս որպէս զի կարող ըլլամ զանոնք սիրով քաշելու, և ամէնն ալ քու սիրոյդ համար կրելու։ Կը սիրեմ զքեզ, անհուն բարիդ, ամէն բանէ վեր, տուր ինձ աւելի սէր և յարատեւութիւն։ Մարիամ կոյս, յոյս իմ և ապաւէն, աղաչէ զՅիսուս ինձ համար։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ո՛վ թէ մահուան վայրկենին հաւատոյ հշմարտութիւններն որչափ պայծառ կը ճանչցուին. բայց աւելի այն հոգեվարքները տանջելու համար՝ որ վատթար կեանք անցուցեր են, մանաւանդ թէ որ Աստուծոյ Նուիրուած անձն ըլլայ, որ Աստուծոյ ծառայելու աւելի դիւրութիւն ունեցեր է, աւելի ժամանակ, աւելի օրինակ, և ներքին աղդարարութիւն։ Ո՛վ թէ այն ինչ նեղութիւն պիտի ըլլայ երբ մտածէ թէ ես որ ուրիշներուն այնչափ խրատ կու

տայի, անոնցմէ աւելի գէշ վարք ունեցայ. զաշխարհ թողուցի, բայց սիրտս աշխարհիս վայելից, ունայնութեան և սիրոյն կըպած ապրեցայ։ Ի՞նչպէս խղճմտանքը պիտի զարնէ՝ երբ մտածէ թէ այն լոյսն որ ինքն Աստուծմէ ունեցեր է, հեթանոս մ'ալ սուրբ կրնար ընել։ Ո՛րչափ պիտի տանջուի երբ մտածէ, թէ ուրիշներուն բարի գործերը վար կը զարնէր իբր թէ հոգւոյ տկարութիւններ ըլլան։ Աշխարհիս քանի մը սկզբունքները կը գովէր, ինքնահաւանութեամբ կամ անձնասիրութեամբ ուրիշն վար չէր մնար, նեղութիւն չէր ուզեր քաշել, և ամէն զրօսանաց ինք զինքը կու տար։

Մեղաւորաց սրտին ուզածը, կ'ըսէ սաղմոս, պիտի կորսուի[1]. մահուան ատեն մարդիկ որչափ պիտի փնտռեն այն ժամանակը զոր հիմայ կը կորսընցընեն։ Սուրբն Գրիգոր Մեծն իրեն տրամախօսութեանց մէջ կը պատմէ, թէ Փրիսանդիոս անունով հարուստ մարդ մը կար՝ բայց վարքը գէշ, սա մեռնելու ատեն տեսնելով որ սատանաները եկեր են զինքը տանելու՝ կ'աղաղակէր անոնց դէմ ըսելով. ատեն տուէք ինձ, ատեն տուէք ինչուան վաղը։ Անոնք ալ ըսին. ով խենթ,

1 Յանկութիւն մեղաւորաց կորիցէ։ Սաղմ. ՃԺԱ. 10

հիմայ ատեն կը փնտռես որ այնչափ ժամանակ ունեցար ու կորսընցուցիր, և մեղք գործելու անցուցիր. ալ հիմայ չի կայ։ Խեղճ ողորմելին անդադար կը պոռար օգնութիւն կ'ուզէր։ Ներկայ էր հոն իւր մէկ որդին ալ կրօնաւոր, Մաքսիմոս անունով, որուն կ'ըսէր հոգեվարքը. որդեակ իմ, օգնէ ինձ, Մաքսիմոս որդեակ իմ, օգնէ ինձ։ Աչուքներն ալ կրակ դարձած կատաղութենէն անկողնոյն մէջ ասդին անդին կը տապլտրկէր, և այսպէս յուսահատ կերպով հոգին փչեց թշուառաբար։

Վայ մեզի, այսպիսի խենթեր իրենց կենաց մէջ խենթութիւնին կը սիրեն, բայց եռքը մեռնելու ատեն աչուքնին կը բացուի և կը խոստովանին թէ խենթ են եղեր։ Բայց այն ատենն այդ խոստովանութիւնն ուրիշ բանի չի գար, եթէ ոչ աւելի յուսահատութեան մէջ ձգելու, և ճար չեն կրնար ընել իրենց չարեաց, և այնպէս մեռնելով իրենց փրկութեան վրայ շատ տարակոյս կը թողուն։ Ով եղբայր, հիմայ որ այս բանս կը կարդաս, յուսամ որ դուն ալ այդ այդպէս է կ'ըսես, ուրեմն թէ որ այսպէս է, շատ աւելի մեծ կրլլայ քու խենթութիւնդ ու թշուառութիւնդ երբ ողջութեանդ ատեն այս ճշմարտութիւններս գիտնալով ժամանակին ճար չ'ընես։ Նոյն իսկ այս կարդացածդ ալ մա-

հուանդ ատեն սրտիդ սուր մը կ'ըլլայ ցաւոց։

Ուրեմն խելքդ գլուխդ ժողվէ, քանի որ ատեն ունիս այդպիսի սարսափելի մահուընէ փախչելու չուտով ճար ըրէ, մի սպասեր այն ատենին որ ալ յարմար չէ ճար ընելու։ Մի ըսեր գալ ամիս, գալ շաբաթ։ Ո՞վ գիտէ, թէ այս լոյսն զոր Աստուած հիմայ քեզի կու տայ իւր ողորմութեամբը, գուցէ վերջի լոյսն և վերջի կոչումն ըլլայ։ Շատ անխելքութիւն է չ'ուզել մտածել մահը, որ անտարակուսելի է, և անկից կախուած է յաւիտենականութիւնը։ Բայց աւելի մեծ անմտութիւն է մահը մտածել, և մահուան չի պատրաստուիլ։ Հիմակուընէ ըրէ այն խորհրդածութիւնները, և այն առաջադրութիւնները որ այն ատեն պիտի ընես. եթէ հիմայ ընես շահ ունի, այն ատեն շահ մը չ'ունի. եթէ հիմայ ընես յոյս կայ փրկութեան, այն ատեն յուսահատած կ'ըլլաս փրկութենէդ։ Հինգերորդ Կարոլոս կայսեր աւագանիներուն միջէն մէկը հրաժարեցաւ՝ որ երթայ զինքը Աստուծոյ ծառայութեան միայն տայ։ Հարցուց կայսրը իրեն, թէ ինչու կ'երթաս արքունեաց պատիւը թողլով. նա ալ պատասխան տուաւ, թէ փրկութեան համար հարկաւոր է՝ որ անկարգ կենաց և մահուան մէջ տեղը քիչ մը միջոց տրուի ապաշխարութեան։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆԵՐ

Զէ, չեմ ուզեր, Աստուած իմ, ալ քու գթութեամբդ զեղծանիլ, Շնորհակալ եմ այս լուսաւորութեանն՝ զոր հիմայ տուիր ինձ, և կը խոստանամ որ վարքս փոխեմ, կը տեսնեմ որ ալ չես կրնար ինձ համբերել։ Ի՞նչ բանի կը սպասեմ. կը սպասեմ որ իրաւամբ գիս դժոխք դրկես, կամ գիս երեսէ ձգես իմ կորստական վարուցս մէջ, որ քան զմահ մեծ պատիժ է։ Ահա ոտքդ կ'իյնամ, ընդունէ գիս քու շնորհացդ մէջ։ Ես արժանի չեմ, բայց դուն ըսիր Եզեկիէլ մարգարէին բերնով, թէ երբ անօրէնը դառնայ իւր անօրէնութիւններէն, անոնք ալ չեն կրնար զինքը շարչարել [1]։ Ուստի, Յիսուս իմ, անցուցած տարիներուս մէջ քու անբաւ բարութիւնդ վըշտացուցի, իսկ հիմայ կը զղջամ բոլոր սրտանց, և կը յուսամ որ թողութիւն կուտաս։ Սրբոյն Անսելմոսի հետ կ'ըսեմ, մի՛ թողուր տէր որ հոգիս կորսուի իւր մեղաց համար, որովհետև դու զինքը գներ

1 Անօրէնութիւն անօրինին ոչ չարչարեսցէ զնա յաւուր յորում դառնայցէ յամենայն անօրէնութենէ իւրմէ։ Եզեկ. ԼԳ. 12։

ես քու արեամբդ։ Մի՛ նայիր իմ ապերախտութեանս, հապա քու սէրդ նայէ որ քեզի ինձ համար մեռնիլ տուաւ։ Եթէ ես քու շնորհքդ կորուսի, դու նորէն զայն ինձի տալու կարողութիւնդ չես կորուսած։ Ուրեմն գթա ինձ և ողորմէ, փրկիչ իմ սիրելի. թողութիւն տուր ինձ, և շնորհք զքեզ սիրելու, որպէս զի այս օրուընէ ետքը խօսք տամ ուրիշ բան չի սիրել քեզմէ զատ։ Դուն այնչափ անցաւոր արարածոց միջէն զիս ընտրեցիր՝ զքեզ սիրելու, ես ալ կ'ընտրեմ, ով ծայրագոյն բարի, զքեզ սիրել ամէն բարիքէ վեր։ Դուն իմ առջևէս կ'երթաս քու խաչովդ, ես ալ կ'ուզեմ ետևէդ գալ այն խաչուելն ինչ որ ինձի տաս կրելու։ Սիրով յանձն կ'առնում ինչ մահացուցումն, ինչ նեղութիւն որ քեզմէ վրաս գայ. հերիք է որ քու շնորհքէդ գիս չի զրկես, ես գոհ եմ։ Մարիամ, յոյս և ապաւէն իմ, ինձի համար Աստուծմէ խնդրէ յարատևութիւն և շնորհք զինքը սիրելու. ալ ուրիշ բան չեմ ուզեր։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Հոգեվարք մը որ կենացը մէջ հոգ չէ տարեր իւր հոգւոյն ազէկութեան, ինչ բան որ կը տեսնէ՝ մէյմէկ փուչ կ'ըլլան իրեն. փուչ է յիշելը իւր զբօսանքները, իւր խօսքը առաջ տանիլը, իւր ըրած զբաղմութիւնները. փուչ են զինքը տեսնելու եկած բարեկամները, անոնց ամէն խօսքերը. փուչ են սուրբ խորհուրդները խոստովանութեան, հաղորդութեան, և վերջին օծման. փուչ է նաև խաչելութիւնն՝ որ քովը դրուած է, վասն զի կը կարդայ անոր վրայ իւր ապերախտութիւնն որ ցցուցեր է ընդդէմ Աստուծոյ սիրոյն՝ որ մեռեր է զինքը փրկելու համար։

Այն ատեն պիտի ըսէ այն խեղճ հիւանդն. վա՜խ վա՜խ ինձի պէս խենթին որ կրնայի սուրբ ըլլալ այնչափ լուսաւորութիւններովն և դիւրութիւններովն. զոր Աստուած ինձ տուաւ. կրնայի երջանիկ կեանք մը ինձ պատրաստել Աստուծոյ շնորհքովն։ Իսկ հիմայ այնչափ տարիներէն ի՞նչ մնաց ձեռքս, եթէ ոչ վիշտ ու նեղութիւն, յուսահատութիւն, վախ, խըղճմտանքի խայթոց, և Աստուծոյ տալու համարներս. ա՛լ դժուար է իմ փրկութիւնս։

Եւ երբ պիտի ըսէ ասոնք. երբ բանը բանէ անցեր է, լապտերին եղը լմննալու վրայ է, աշխարհիս տեսարանին վարագոյրը գոցուելու վրայ է. և ինքն ալ յաւիտենականութեան երկու վիճակին ծայրը կը գտնուի, որ կամ յաւիտեան երջանկութիւն է և կամ յաւիտեան թշուառութիւն. և արդէն ժամ ի ժամէ մօտենալու վրայ է այն վերջի բերնին բացուիլը և չունչը տալը, ուսկից կը կախուի իւր երջանկութիւնը կամ թշուառութիւնը յաւիտեանս յաւիտենից քանի որ Աստուած Աստուած է։ Ո՛րչափ պիտի ազաչէ պաղատի այն վայրկենին որ տարի մ'ալ, ամիս մ'ալ կամ շաբաթ մ'ալ ողջ գլխով ժամանակ տրուի իրեն։ Վասն զի այդ տակնուվրայ եղած գլխով, կիսատ շնչով բան չի կրնար ընել, ոչ կրնայ մտածել, ոչ կրնայ միտքը կարգաւորել բարի ներգործութիւն մ'ընելու. կարծես թէ խառնակութեանց մութ գրի մը մէջ փակուած կը գտնէ ինք զինքը, ուր ուրիշ բան չ'ըմբռներ՝ բայց եթէ առջևի ահաւոր կործանմունքը, որուն ճար մ'ընելու կարողութիւն չունի. ուստի ատեն կը փնտռէ, բայց իրեն շուտ ըրէ կ'ըսեն, երթանք, տալու համարներդ այս քիչ մը միջոցին մէջ շտկէ՝ որչափ որ կրնաս ու ճամբայ ընկիր, չեմ գիտեր որ մահը սպասել չ'ունի, և ամենևին մէկու մ'ալ աշառութիւն չ'ընե։

Ո՜հ, այն ինչ վախ պիտի տիրէ վրար

այն ատեն երբ կը մտածէ թէ այս առաւօտ դեռ ողջ եմ, այս իրիկուն մեռած պիտի գտնեմ զիս։ Այսօր այս խուցս կը բնակիմ, վաղը փոսի մը մէջ պիտի պառկիմ։ Իսկ հոգիս ո՞ւր պիտի ըլլայ։ Այն ինչ վախ վրան պիտի գայ երբ տեսնէ թէ ճըրագ կը պատրաստեն, երբ տեսնէ որ վրան մահուան պաղ քրտինք կը սկսի գալ, երբ տեսնէ որ տնեցիք խցէն կը քաշուին ու ալ ներս չեն մտներ, երբ կը սկսի աչքերը մթընալ բան չի տեսնել, վերջապէս այն ինչ սոսկումն պիտի գայ վրան երբ կը սկսին ճրագը վառել, վասն զի մահը եկեր հասեր է։ Ա՜հ ճրագ ճրագ, քանի՞ քանի ճշմարտութիւններ այն ատեն պիտի յայտնես. ա՜հ, ինչպէս այն ատեն ամէն բան առաջին երևցածէն տարբեր տեսնել պիտի տաս. ինչպէս պիտի ճանչցընես թէ աշխարհիս ամէն բարիքը ունայնութիւն է, յիմարութիւն է, խաբէութիւն է. բայց ի՞նչ շահ այս ճշմարտութիւնները հասկընալէն երբ ատեն չկայ ճար ճարակ ընելու։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ա՜հ, Աստուած իմ, դու չես ուզեր իմ մահս, այլ դառնալս ու ապրիլս։ Շնորհակալ եմ որ մինչև հիմայ սպասեցիր, շնորհակալ եմ որ այս լոյսը հիմայ տուիր ինձ.

կը ճանչնամ սխալանքս, որ քանի զքեզ սէրդ վեր դրի այս աշխարհիս ընչին և ունայնի բաները որով զքեզ անարգեցի։ Բայց կը ցաւիմ կը գղջամ ի բոլոր սրտէ քեզի այսպիսի մեծ անարգանք մ՚ընելուս վրայ։ Հապա մի՞ դադրիր մնացած կենացս մէջ օգնելու ինձ քու շնորհքովդ և լուսովդ, որպէս զի ճանչնամ և կատարեմ ինչ որ պէտք է ինձ ընել վարքս շտկելու համար։ Ի՞նչ շահ ինձի այս ճշմարտութիւնները գիտնալս, երբ ատեն չունենամ ճար ընելու։

Մի մատներ գաղտնաց այն անձն, որ քեզի կը խոստովանի։ Երբ սատանան զիս փորձէ զքեզ նորէն վշտացընելու, կ՚աղաչե՛մ զքեզ, Յիսուս իմ, քու չարչարանաց արդեանցն համար ձեռքդ ինձ երկընցուր, և խղճսէ զիս մեղք ինկնալէն ու նորէն թշնամւոյս գերի ըլլալէն։ Շնորհք տուր որ այն ատեն միշտ քեզի դիմեմ, և մի թողուր որ ետ կենամ զիս քեզ յանձնելէն քանի որ փորձութիւնը վրայէս չէ հեռացեր։ Քու արիւնդ է իմ յոյսս, և քու բարութիւնդ է իմ սէրս։ Կը սիրեմ զքեզ, Աստուած իմ, որ արժանի ես անբաւ սիրոյ, և տուր ինձ սիրել զքեզ միշտ։ Ճանչցուր ինձ, թէ ո՞ր բանէն պէտք է հեռանամ, որ բոլորովին քուկդ ըլլամ, և զօրացուր զիս որ իմ պարտքս

կատարեմ։ Ով Թագուհի երկնից, սուրբ Աստուածածին, բարեխօսեա վասն իմ մեղաւորիս, օգնէ ինձ որ փորձութեանս ատեն միշտ առ Յիսուս և առ քեզ դիմեմ, որ քու բարեխօսութեամբդ կը խալըսես ինկնալէն զանոնք որ քեզ կ'ապաւինին։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ը.

ԱՐԴԱՐՈՑ ՄԱՀՆ

Աստուծոյ առջև պատուական է իրեն սրբոց մահն [1]

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Մահը զգայութեան կողմանէ նկատելով վախ ու սոսկումն կը բերէ. բայց ըստ հաւատոց նայելով մխիթարութիւն է, և փափաք կը բերէ։ Մեղաւորներուն ահաւոր կ'երևի, բայց սրբոց սիրելի և պատուական կ'ընծայէ զինքը։ Պատուական է մահը, կ'ըսէ սուրբն Բեռնարդոս, ըստ որում վախճան աշխատանաց, կատարած յաղթութեան, դուռն կենաց։ Եւ յիրաւի, մահն աշխատանաց և նեղու-

1 Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց։ Սաղմ. ՃԺԷ. 15։

թեանց վերջն է. ինչպէս Յոբ ալ կ'ըսէ, թէ կանանցածին մարդը սակաւակեաց է և լի թշուառութեամբ։ Ահաւասիկ կը տեսնենք ինչ է մեր կեանքն. կարճ և բոլոր թշուառութիւններով, հիւանդութեամբք, ահուդողով և կրիւք լեցուն է։ Աշխարհասէրք՝ որ երկար կեանք կ'ուզեն, կ'ըսէ Սենեկա, ուրիշ ինչ բանի կը փափագին՝ եթէ ոչ աւելի երկար վշտաց և նեղութեանց։ Սուրբն Օգոստինոս ալ կ'ըսէ, թէ ինչ է երկար ապրիլն, եթէ ոչ երկար տանջուիլ. վասն զի սրբոյն Ամբրոսիոսի ըսածին պէս, այս կեանքս մարդուս տրուեցաւ չէ թէ հանգչելու, հապա աշխատելու համար։ Ուստի աղէկ կ'ըսէ Տերտուղիանոս, թէ Աստուած երբ մէկուն կարճ կեանք կու տայ՝ անոր տառապանքը կը կարճեցընէ։ Անոր համար թէպէտ մահը մարդուս ի պատիժ մեղաց տրուեցաւ, բայց աշխարհիս թշուառութիւններն այնչափ են, որ մահը, ինչպէս կ'ըսէ սուրբն Ամբրոսիոս, աւելի դեղ է քան թէ պատիժ։ Աստուած ալ երջանիկ կը սեպէ զանոնք՝ որ իւր շնորհաց մէջ կը մեռնին, վասն զի նեղութենէ կ'ազատին ու կ'երթան կը հանգչին [1]։

1 Երանի մեռելոց որք ի տէր ննջեցին.. քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց. Յայտն. ԺԴ. 13։

Այն նեղութիւններն զոր մեղաւորները մեռնելու ատեն կը քաշեն՝ արդարները ամենևին չեն իմանար։ Արդարոց հոգիքը Աստուծոյ ձեռքն են. մահը անոնց չի կըրնար մօտենալ [1]։ Այն վերջին կոչը սուրբերն ամենևին չի խռովեր, ուր աշխարհասէրները կը սարսափին։ Սուրբերը չեն վշտանար այս երկրաւոր բարիքները թողլու, վասն զի արդէն սրտերնին անոնց չէին կապած, և անդադար կը հառաչէին. Աստուած սրտի իմոյ, ու բաժին իմ Աստուած յաւիտեան։ Երանի կու տայ Պօղոս առաքեալ իրեն աշակերտելոց՝ որ Քրիստոսի սիրոյն համար իրենց բարիքներէն մերկացեր էին, և կ'ըսէ թէ ձեր ընչից յափշտակութիւնը սիրով ընդունեցաք, վասն զի գիտէք թէ երկինքը ձեզ համար աւելի լաւ ստացուածք ունիք [2]։ Ամենևին չեն տրտմիր աշխարհիս փառքը պատիւը թողլու, վասն զի արդէն յառաջուց ձանձրացեր էին անոնցմէ, և ունայնութիւն ու ծուխ կը սեպէին. միայն իրենց փառք կը սեպէին զԱստուած սիրել

1 Ոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են, և ոչ մերձենայի ի նոսա մահ։ Իմաստ. Գ. 1։

2 Զյափշտակութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկալարուք. քանզի գիտէք թէ լաւագոյն և ստացուածս ունիք անձանց յերկինս։ Եբր. Ժ. 34։

ու Աստուծոյ սիրելի ըլլալ։ Զեն վչտանար ազգականներին թողլու. վասն զի զանոնք միայն Աստուծոյ համար կը սիրէին. մեռնելու ատեն զանոնք այն երկնաւոր հօր կը յանձնեն, որ իրենցմէ աւելի կը սիրէ զանոնք. և անոնց փրկութիւնը մըտածելով՝ արքայութեան մէջ աւելի օգնութիւն կրնան ընել անոնց քան թէ այս աշխարհիս վրայ. և անոնք որ բոլոր իրենց կենաց մէջ միշտ կ'ըսէին թէ Աստուած իմ և ամենայն ինչ, ևս առաւել մահուան ատեն աւելի եռանդով և աւելի մխիթարութեամբ պիտի ըսեն նոյն բանը։

Ուստի ով որ զԱստուած սիրելով կը մեռնի, մահուան ցաւերը դինքն ամենևին չեն նեղեր. մանաւանդ թէ կը փափաքի անոնց՝ մտածելով որ քիչ ատենէն իւր կեանքը լմննալու վրայ է, և շատ ժամանակ չի մնար Աստուծոյ համար կրելու, և ուրիշ առիթ չ'ունի առ Աստուած իրեն սիրոյ նշանները ցուցընելու. անոր համար յօժարութեամբ և անդորր սրտիւ կը մատուցանէ Աստուծոյ իրեն կենաց վերջին մնացորդներն ալ, և կը մխիթարուի որ իւր մահուան զոհը կը միանայ Քրիստոսի պատարագին հետ որ իրեն համար մատոյց խաչին վրայէն իւր երկնաւոր հօր։ Եւ այսպէս ուրախութեամբ կը մեռնի ըսելով, խաղաղութեամբ յայսմ և ի սոյն ննջեցից և հանգեայց։ Ո՜հ, այն ինչ հան-

գիստ մահ է Քրիստոսի գիրկը մեռնիլ որ մահուամբ չափ սիրեց զմեզ, և ինքը առարգ մահ յանձն առաւ, որպէս զի մեզի քաղցր ու երջանիկ մահ մը տայ։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՜վ սիրելի Յիսուս իմ, որ ինձ քաղցր մահ մը տալու համար հաճեցար դառնակսկիծ մահ կրել Գողգոթայի վրայ, երբ պիտի ըլլայ որ զքեզ տեսնեմ։ Առաջին անգամն որ զքեզ պիտի տեսնեմ, իբր իմ դատաւորս պիտի տեսնեմ զքեզ նոյն տեղն ուր որ հոգիս աւանդեցի։ Ի՞նչ պիտի ըսեմ քեզի ես այն ատեն. դուն ինչ պիտի ըսես ինձ։ Զեմ ուզեր սպասել՝ որ այն ատեն այդ բանը մտածեմ, հիմակուընէ կ'ուզեմ այս բանիս վրայ մտածել, ու ըսել. Ո՜վ սիրելի փրկիչ իմ, ուրեմն դուն ես որ ինձի համար մեռար։ Ես զքեզ ատեն մը վշտացուցի, քեզի ապերախտ եղայ, և թողութեան արժանի չէի. բայց ետքը օգնականութեամբ քու շնորհացդ խելաբերեցայ և մնացած կեանքիս մէջ լացի ողբացի իմ մեղքերս և դուն ալ ինձ ներեցիր։ Ներէ ինձի նորէն հիմայ ալ, որ ոտքդ եկեր եմ, և տուր ինձ ընդհանրական արձակումն ամենայն մեղացս։ Ես արժանի

չէի նորէն զքեզ սիրելու, որովհետև քու սէրդ անարգեցի. բայց դու քու ողորմութեամբդ շարժեցիր իմ սիրտս, որ եթէ զքեզ ըստ քու արդեանցդ չսիրեցի, գոնէ ամէն բանէ վեր սիրեցի, ամէն բան մէկդի թողլով՝ որպէս զի զքեզ հաճեցընեմ։ Արդ հիմայ ի՞նչ կ'ըսես. կը տեսնեմ որ երկինքն ու քու արքայութիւնդ ժառանգելը՝ ինձ համար շատ մեծ բարիք մ'է, բայց չեմ վստահիր քեզմէ հեռու տպրելու, մանաւանդ հիմայ որ ցցուցիր ինձ քու սիրելի և գեղեցիկ դէմքդ։ Ուստի արքայութիւնդ կը խնդրեմ քեզմէ ոչ այնչափ վայելելու համար որչափ որ զքեզ աղէկ սիրելու։ Քաւարան զիս դրկէ, որչափ ատեն որ կ'ուզես. ես ալ չեմ ուզեր այն մաքրութեան հայրենիքը գալ և այն մաքուր հոգիներուն մէջ նստիլ այսպէս աղտոտ ու կեղտոտ՝ ինչպէս որ հիմայ եմ։ Դրկէ զիս որ երթամ մաքրուիմ, միայն թէ մի՛ ձգեր զիս երեսէդ յաւիտեան. հերիք է որ օր մը, երբ կը հաճիս, զիս արքայութիւնդ կանչես, որ յաւիտեան երգեմ քու ողորմութիւններդ։ Հապա կ'աղաչեմ, ո՛ դաստաւորդ իմ սիրելի, հիմակուհիմայ ձեռքդ վերցուր ու օրհնէ զիս. և ըսէ ինձ թէ ես քուկդ եմ, ու դուն ալ իմն պիտի ըլլաս միշտ։ Ահա հիմայ կը բաժնուիմ քեզմէ, կրակը կ'երթամ, բայց գոհ սրտով կ'երթամ. վասն զի կ'երթամ որ զքեզ սիրեմ,

փրկիչ իմ, Աստուած իմ, և ամենայն ինչ։ Այո, գոհ կ'երթամ. բայց գիտնաս որ որչափ ատեն քեզմէ հեռու մնամ՝ այնչափ ինձ ամէն պատժէ վեր է։ Կ'երթամ, տէր, կոչմանդ բոլէները համբելով։ Ողորմէ այս հոգւոյս որ զքեզ կը սիրէ ի բոլոր սրտէ, և կը փափաքի զքեզ տեսնել աւելի աղէկ սիրելու համար։

Այսպէս կը յուսամ, Յիսուս իմ, քեզի ըսել այն ատեն։ Ուստի հիմայ կ'աղաչեմ. շնորհք տուր ինձ, այնպիսի կեանք ունենալու, որ կարենամ այս ըսածս այն ատենն ալ ըսել։ Սուրբ յարատևութիւն տուր ինձ, քու սէրդ տուր ինձ։ Օգնէ ինձ, Մարիամ տիրամայր, և աղաչէ զՅիսուս ինձ համար։

ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ

Պիտի ջնջէ Աստուած արցունքն անոնց աչքէն, և ալ մահ պիտի չ'ըլլայ[1]։ Ուրեմն մահուան ատեն Աստուած իրեն ծառայից արտասուքը պիտի ջնջէ, որ այս կենացս մէջ թափեցին, և կեանքերնին վշտաբ, ահուդողով, դժոխքի դէմ վտանգաբ կը-

1 Ջնջեսցէ տէր զամենայն արտասու յաչաց նոցա, և մահ ոչ ևս գոյ։ Յայտն. ԻԱ. 4։

ռուելով անցուցին։ Միայն ասով պիտի մխիթարուի աստուածասէր հոգի մը երբ մահը լսէ՝ մտածելով որ շուտով պիտի ազատի այս աշխարհիս վտանգներէն՝ որոնց մով կրնար զԱստուած վտացընել, խղճմտանաց նեղութիւններէն և սատանային բազմապատիկ փորձութիւններէն։ Այս կեանքս անդադար կռիւ մ'է դժոխքի հետ, ուստի միշտ վտանգի մէջ ենք հոգինիս և զԱստուած կորսնցընելու։ Աւրբն Ամբրոսիոս կ'ըսէ, թէ աշխարհիս վրայ որոգայթներու մէջ կը քալենք, զոր թշնամիք կը լարեն մեր հոգևոր կենաց դէմ։ Այս վտանգիս համար էր որ սուրբն Պետրոս Այգանդարացին մեռնելու ատեն կ'ըսէր քովինին որ կ'օգնէր իրեն դպչելով. եղբայր, հեռու կեցիր, վասն զի դեռ կենդանի եմ, ու դատապարտելու վտանգի մէջ եմ։ Այս վտանգս էր որ ամէն անդամ որ Ժամացոյց կը զարնէր՝ զսրբուհին Թերեզա կը մխիթարէր, որ ուրախանալով կ'ըսէր թէ կռուոյն մէկ ժամն ալ անցուցի. վասն զի կենացս ամեն վայրկենին մէջ ալ կրնամ մեղանչել ու զԱստուած կորսընցընել։ Ուստի սուրբերը երբ մեռնելու լուրը կ'առնուին՝ ամէնքն ալ կը մխիթարուէին, վասն զի անով իրենց կռիւներն ու վտանգները կը դադրին և ալ վախ չեն ունենար զԱստուած կորսընցընելու։

Հարանց վարուց մէջ կը պատմուի, թէ երբ Սկիտացի ծերոց մէկը կը մեռնէր՝ ուրիշները կու լային, ինքը կը ծիծաղէր։ Հարցուցին իրեն, թէ ինչու՞ կը խնտաս. ինքն ալ պատասխանեց, թէ հապա դուք ի՞նչպէս կու լաք, տեսնելով որ ես աշխատանքէս ի հանգիստ կ'երթամ։ Նմանապէս սրբուհին Կատարինէ սենացին մեռնելու ատեն ըսաւ, թէ ուրախակից եղիք ինձ, վասն զի այս թշուառութեան աշխարհը կը թողում ու խաղաղութեան հայրենիքը կ'երթամ։ Սուրբն Կիպրիանոս կ'ըսէ, թէ մէկն որ պատերը փլփլած տուն մը բնակած ըլլար որուն յատակն ու ձեղունը կը դողդըղան, այնպէս որ կործանելու վրայ ըլլայ, այն ինչպէս կը փութայ որ այն տնէն փախչի։ Այս կեանքիս մէջ ալ ամէն բան հոգւոյ կործանումն կ'ըսպառնան. աշխարհք, դժոխք, կիրք, ապըստամբ զգայութիւնք, ամէնքն ալ զմեզ ի մեղս ու ի յաւիտենական մահ կը քաշեն։ Առաքեալն ալ կը կանչէր թէ ով պիտի ապրեցընէ զիս այս մարմնոյս մահուանէն։ Ո՞հ թէ այն ինչ ուրախութիւն կ'ըլլայ հոգւոյն՝ երբ լսէ թէ կ'ըսեն իրեն՝ ելկուր հարանուկ, ելիր լալեաց տեղէն, ա-

1 Ո՞վ ապրեցուցցէ զիս ի մարմնոյ սատի մահու։ Հռովմ. Է. 24։

ռիւծներու բունէն, որ զքեզ կուլ տալ կ'ուզեն ու կը չանան Աստուծոյ շնորհքէն հեռացնել[1]։ Ուստի սուրբն Պօղոս մահուան փափաքելո՛ կ'ըսէր, թէ իմ մէկ հատիկ կեանքս Քրիստոս է, մեռնիլը քան զամենայն շահ վեր կը դնէր, վասն զի անով անվախճան կեանք ձեռք կը ձըգէր[2]։

Աստուծոյ մեծ ողորմութիւնն է որ մէկը իւր շնորհաց մէջ վախճանի աշխարհէս ելնէ ուր կրնար փոխուիլ և Աստուծոյ շնորհքը կորսընցընել։ Յափշտակուեցաւ, կ'ըսէ իմաստունը, որպէս զի չ'ըլլայ թէ չարութիւն մը իրեն իմաստութիւնը փոխէ[3]։ Երանի անոր որ Աստուծոյ հետ միացեալ կ'ապրի. բայց ինչպէս որ նաւուվճամբայ ընողն ապահով չ'ըսուիր ինչուան որ նաւահանգիստ չի հասնի ու ալէկոծութենէ չի խալըսի, ասոր նման ալ երջանիկ չի կրնար ըսուիլ այն հոգին ինչուան որ ի շնորհս Աստուծոյ չ'ելնէ ի կենաց։ Սուրբ Ամբրոսիոսին ըսածին պէս թէ նաւորդին երջանկութիւնը գովէ, բայց երբ նաւա-

1 Եկ է Լիբանանէ հարսն իմ ի մայրեաց ռաւիծուց։ Երգ. Դ. 8։

2 Ինձ կեանք Քրիստոս է, և մեռանիլ շահ. Փիլիպ. Ա. 21։

3 Յափշտակեցաւ, զի մի չարութիւն ինչ չրջեսցէ զիմաստութիւն նորա։ Իմաստ. Դ. 11։

հանգիստ հասնի։ Արդ եթէ ծովով ճամբայ ընողը որ շատ նեղութիւններ քաշելէն ետև երբ նաւահանգիստ մտնելու վրայ է սաստիկ կ'ուրախանայ, հապա որչափ աւելի ուրախ կ'ըլլայ այն մարդը՝ որ մօտ է ապահովցընելու իւր յաւիտենական փրկութիւնը։

Այս ալ կայ որ այս կենացս մէջ ապրիլ չ'ըլլար գոնէ առանց թեթև մեղաց. եօթն անգամ կ'իյնայ արդարն[1], կ'ըսէ Առակագիրը։ Ով որ աշխարհէս կ'ելնէ, ալ չի կրնար զԱստուած վշտացընել։ Կ'ըսէ սուրբն Ամբրոսիոս, թէ մահն ինչ է, եթէ ոչ գերեզման ախտից։ Ասոր համար է որ աստուածասէրք կը փափաքին մահուան։ Ասով միայն կը մխիթարուէր յարգելի հայրն Վ. ինկենտիոս Գարաբա, որ մեռնելու ատեն կ'ըսէր, թէ կենացս վերջ տալով վերջ կու տամ զԱստուած վշտացընելէն. նոյնպէս սուրբն Ամբրոսիոս ալ կ'ըսէր, թէ ինչ կը բաղձանք այս կեանքիս. որ որչափ երկայն ապրի մէկը՝ այնչափ մեղաք կը ծանրաբեռնի։ Ի շնորհս Աստուծոյ մեռնողն այնպիսի վիճակ մը կը մտնէ որ չի կրնար մէյմ՛ալ զԱստուած վշտացընել։ Այս է նոյն սրբոյն ըսածը, թէ մեռեալը մեղանչել չի գիտեր։ Անոր համար

1 Եօթն անգամ անկցի արդարն։ Առակ. ԻԴ. 16։

Աստուած աւելի զմեռեալները կը գովէ քան թէ կենդանիները, թէպէտև սուրբ ալ ըլլան[1]։ Բարի մարդուն մէկը ապրեցրեց թէ մեռնելու ատենս ինձ աւետիս տուէք ըսելով թէ մխիթարուէ, մահդ հասած է, վասն զի ատենը եկեր է որ մէյմ'ալ զԱստուած վչտացընելիք չ'ունիս։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ձեռքդ կը յանձնեմ իմ հոգիս, որ դու փրկեցիր զիս, տէր իմ և Աստուած ճշմարտութեան։ Ո՜հ քաղցր փրկիչ իմ, ինչ ձիւն պիտի գար գլխոյս եթէ զիս թողուիր որ քեզմէ հեռացած մեռնէի։ Հիմայ դժոխքը պիտի ըլլայի, ուր պիտի չի կըրնայի մէյմ'ալ զքեզ սիրել։ Շնորհակալ եմ որ զիս երեսէ չի ձգեցիր, և այնչափ շնորհք ալ տուիր՝ որ իմ սիրտս շահիս։ Կը ցաւիմ, կը զղջամ որ զքեզ վչտացուցի. կը սիրեմ զքեզ ամէն բանէ վեր։ Ո՜հ կ'աղաչեմ ճանչցուր ինձ աղէկ մը իմ չարութիւնս որով զքեզ վչտացուցի, և այն սէրը որուն արժանի է քու անբաւ բարութիւնդ։

1 Գովեցի ես զամենայն մեռեալսն որ յառաջագոյն մեռան, քան զկենդանիսն որ ցայժմ կենդանի իցեն։ Ժողով. Դ. 2։

Կը սիրեմ զքեզ, և շատով կը բաղձամ մեռնիլ թէ որ քու կամքդ է, որպէս զի խաղաղիմ նորէն քու սուրբ շնորհդ կորսընցընելու վտանգէն, և ապահով ըլլամ յաւիտեան զքեզ սիրելու։ Հապա, սիրելիդ իմ Յիսուս, այժ տուր ինձ որ մնացած կեանքիս մէջ, մահս գալէն առաջ քանի մը բան ընեմ քեզի համար։ Զօրութիւն տուր ինձ փորձութեանցս և կրիցս, մանաւանդ այն կրիցս զէմ որ ինչուան հիմայ զիս գերեց, և քեզմէ հեռացուց։ Համբերութիւն տուր հիւանդութեան ատեն և մարդկանցմէ նախատուելու ժամանակ. իսկ ես հիմակուընէ քու սիրոյդ համար կը ներեմ ինձ դէմ ամէն անիրաւողներուն մէկիկ մէկիկ, և կը խնդրեմ որ ուզած չնորհքնին պարգևես իրենց։ Սիրտ տուր ինձ աւելի փոյթ տանիլ նաև ներելի մեղքերէն ալ հեռանալու, յորոց չեմ ըզգուշացեր։ Փրկիչ իմ օգնէ ինձ, քու արդիւնքովդ ամէն բանի կը յուսամ. և քու բարեխօսութեամբդ, տիրամայր, յոյս և ապաւէն իմ, ամէն բանի վստահութիւն ունիմ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Մահը չէ թէ միայն ամենայն տառապանաց վախճան է, այլ նաև դուռն է կենաց, որբոյն Բեռնարդոսի ըսածին պէս մահը լրումն վաստակոց է և կենաց դուռն։ Հարկ է որ այս դռնէն անցնի, ով որ կ'ուզէ ներս մտնել ու զԱստուած տեսնել։ Այս Աստուծոյ դուռն է և արդարներն սակէ կը մտնեն[1]։ Սուրբն Հերոնիմոս կ'աղաչէր մահուան ու կ'ըսէր, թէ բաց ինձ քոյր իմ, ով մահ, թէ որ դուն այս դուռս ինձ չի բանաս, չեմ կրնար երթալ զԱստուած վայելել։ Սուրբն Կարոլոս Բորոմէոս իւր տան մէջ պատկեր մը տեսնելով որ մեռելի կմախք ձեռքը մանգաղ կը ներկայացընէր, պատկերահանը կանչեց ու հրամայեց որ մանգաղը վերցընէ ու անոր տեղը ոսկի բալլիք մը քաշէ, որով կ'ուզէր աւելի վառուիլ ի սէր մահուան, վասն զի մահն է որ կրնայ բանալ մեզ արքայութեան դուռը զԱստուած տեսնելու։

Սուրբն Յովհան ոսկերերան կ'ըսէ, եթէ թագաւորը իւր պալատին մէջ մէկին բը-

1 Այս դուռն տեառն է, և արդարք մտանեն ընդ սա։ Սաղմ. ՃԺԷ. 19։

նակարան մը պատրաստէր, բայց ըսէր թէ հիմակուհիմայ խրճիթի մը մէջ նստէ. օրչափ կը փափաքէր այն մարդը որ օր մ'առաջ խրճիթէն ելնէ ու արքունիքն երթայ բնակի։ Մեր հոգին ալ այս աշխարհիս վրայ մարմնոյ մէջ բնակելով իբրև թէ բանտի մէջ կեցած է, ուսկից պիտի ելնէ երկնից արքայութիւնը պիտի երթայ։ Անոր համար կ'աղաչէր Դաւիթ մարգարէն թէ տէր հանէ զիս բանտէն[1]. և ծերունին Սիմէոն ալ Յիսուս մանուկը գիրկն առնելով՝ անկէ ուրիշ շնորհք չի խնդրեց բայց եթէ մահ, որպէս զի ազատի այս աշխարհիս բանտէն՝ արդ արձակեա զծառայ քո տէր աղաչելով, ուր սուրբն Ամբրոսիոս կ'ըսէ, որպէս թէ առ հարկի բռնուած ըլլար՝ արձակուիլ կ'ուզէ. նոյն շնորհքը կը խնդրէր առաքեալն ալ ու կ'ըսէր, կը ցանկամ մարմնէս ելնել, և Քրիստոսի հետ ըլլալ[2]։

Ինչ ուրախութիւն եղաւ Փարաւոնի տակառապետին երբ Յովսէփէն լսեց, թէ քիչ ատենէն բանտէն պիտի ելնէ ու իւր պաշտօնին պիտի դառնայ։ Իսկ աստուածասէր հոգի մը պիտի չ'ուրախանայ երբ լսէ, թէ քիչ ատենէն արձակուի պիտի այս

1 Տէր հան ի բանտէ զանձն իմ։ Սաղմ. ՃԽԱ. 8.
2 Ցանկամ ելանել ի մարմնոյ աստի և լինել ընդ Քրիստոսի. Փիլիպ. Ա. 23։

աշխարհիս բանտէն, ու պիտի երթայ զԱստուած վայելելու։ Որչափ որ այս մարմնոյս մէջ կ'ուշանանք, Աստուծմէ կ'օտարանք[1]։ Քանի որ երկրիս վրայ ենք՝ մեր հայրենիքէն դուրս ենք. անոր համար կ'ըսէ սուրբն Բեռնարդոս, թէ մեր մահը մահ ըսելու չէ, հապա սկիզբն կենաց։ Ուստի սրբոց մահը իրենց համար ծննդոց օր է, վասն զի մեռնելով կը ծնանին յերանելի կեանս, որ վախճան չ'ունի։ Սուրբն Աթանաս ալ կ'ըսէ, թէ արդարոցը մահ չէ, հապա փոխադրութիւն յաւիտենական կենաց։ Եւ սուրբն Օգոստինոս՝ ով փափաքելի մահ, կ'ըսէր, տառապանաց վախճան, հանգստեան սկիզբն, ով է որ զքեզ չ'ուզեր. ուստի փափաքանք կ'աղաչէր, թէ ուրեմն թող մեռնիմ, տէր, որպէս զի զքեզ տեսնեմ։

Սուրբն Կիպրիանոս կ'ըսէ, թէ թող այն վախնայ մեռնելէն, որ այս մահուանէս երկրորդ մահուան պիտի անցնի. թող վախնայ մեղաւորը, որ ժամանակաւոր մահուանէ յաւիտենական մահուան պիտի փոխուի, չէ թէ այն որ ի շնորհս Աստուծոյ կենալով՝ մահուամբ կը յուսայ ի կեանս անցնիլ։ Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի վարուց մէջ գրած է թէ հարուստ

1 Յորչափ յամենք ի մարմնի սատ, օտարանամք ի տեառնէ։ Բ. Կոր. Ե. 6։

մարդ մը եկաւ իրեն շատ ողորմութիւն տուաւ աղաչելով՝ որ Աստուծոյ աղօթք ընէ իւր մէկհատիկ որդւոյն երկար կենաց համար. բայց քիչ ատենէն այն որդին մեռաւ։ Երբ հայրը կը գանգատէր զաւակին մահուան համար, Աստուծմէ հրեշտակ մը եկաւ և ըսաւ իրեն, թէ դու տղուդ երկար կեանք ուզեցիր, գիտցիր որ նա յաւիտեան կը վայելէ երկինքը։ Այս այն շնորհքն է՝ որ Քրիստոս մեզ համար առաւ, ինչպէս գրած է Ովսիայ մարգարէութեան մէջ, թէ ուր է քու յաղթութիւնդ մահ[1], կամ ըստ Վուլկատային ես եմ քու մահդ ով մահ. վասն զի Քրիստոս մեզի համար մեռնելով մեր մահը կեանք փոխեց։ Պիոնիոն նահատակը երբ ուրախութեամբ մեռնելու կ'երթար, հարցուցին քովինները, ինչո՞ւ ուրախ կ'երթաս ի մահ. պատասխան տուաւ սուրբը թէ կը սխալիք դուք, ես ոչ ի մահ, այլ ի կեանս դիմեալ կ'երթամ. նոյնպէս սուրբն Սիմփորիանոս պատանւոյն ալ նահատակութեան ատեն սիրտ կու տար մայրն ու կ'ըսէր, ուրախ կեցիր որդեակ իմ, կեանքդ ձեռքէդ չէ թէ կ'ելնէ, հապա ի լաւագոյն կեանս կը փոխուի։

1 Ո՞ւր է յաղթութիւն քո մահ։ Ովսէ. Ժ.Գ. 14։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ով Աստուած հոգւոյ իմոյ, հայր երկնաւոր, ես զքեզ անարգեցի՝ կենացս մէջ քեզմէ երես դարձընելով. բայց փառաւորեց զքեզ քու միածինդ խաչին վրայ պատարագելով իւր կեանքը. ուստի այն պատուոյն համար զոր տուաւ քեզ սիրելի որդիդ, ներէ իմ տուած անպատուութեանցս։ Կը ցաւիմ, կը զղջամ, ով ծայրագոյն բարիդ, զքեզ վշտացընելուս համար, և խոսք կուտամ որ այս օրէս ետև քեզմէ դատ ուրիշ բան չի սիրեմ։ Իմ փրկութիւնս քեզմէ կը յուսամ։ Հիմայ ինչ աղէկ բան որ ունիմ քու շնորհքդ է բոլոր, քեզմէ են ամէնքն ալ. շնորհք Աստուծոյ եմ զինչ և իցեմ։ Եթէ անցեալ կենացս մէջ զքեզ անարգեցի, յուսամ փառաւորել զքեզ յաւիտեան օրհնելով քու ողորմութիւնդ։ Մեծ փափաք ունիմ սրտիս մէջ զքեզ սիրելու. այն ալ դուն ես տուեր։ Շնորհակալ եմ քեզմէ, ով տէր իմ, առաջ տար, առաջ տար կ'աղաչեմ, քու օգնականութեամբդ, ինչպէս որ սկսար. յուսամ որ ասկից ետև բոլորովին քուկդ ըլլամ և մէկդի ձգեմ աշխարհիս ամէն վայելքը. ինչ աւելի հաճոյական բան

կրնայ ըլլալ ինձ բաց ի քու կամքդ կատարելէն։ Տէր իմ ամենասիրելի, որ այսչափ սիրեցիր զիս, քու սէրդ միայն կ'ուզեմ, Աստուած իմ. սէր, սէր. և կը յուսամ որ միշտ քու սէրդ խնդրեմ. մինչև որ քու սիրոյդ մէջ մեռնելով հասնիմ սիրոյ արքայութիւնը, ուր առանց խնդրելու լի պիտի ըլլամ քու սիրովդ, անդադար սիրելով զքեզ հոն յաւիտեան իմ ամէն զօրութեամբս։ Տիրամայր իմ, Մարիամ, դուն որ այնչափ կը սիրես զԱստուած, և այնչափ կը փափաքիս որ ամէնքն ալ սիրեն զինքը, տուր որ ես ալ սիրեմ զինքը այս կենացս մէջ, որպէս զի անդին յաւիտեան սիրեմ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Թ.

ԱՐԴԱՐ ՀՈԳԵՎԱՐՔԻՆ ՍՐՏԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆՆ

Արդարոց հոգիքը Աստուծոյ ձեռքն են, ոչինչ չարչարանք չի կրնար մօտենալ։ Անզգամները կարծեցին թէ ոչնչանալ, բայց ոչնչանալ խաղաղութեան մէջ են[1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Արդարներուն հոգին Աստուծոյ ձեռքն է։ Եւ Աստուած իւր ձեռաց մէջ պինդ պահեր է արդարներուն հոգիքը, ոչ կրնայ զանոնք իրեն ձեռքէն խլել։ Իրաւ է որ դժոխքը չի դադրիր փորձելէն և չարչարե-

1 Ոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են, և ոչ մերձեսցի ի նոսա մահ։ Թուեցան յաչս անզգամաց թէ մեռան... բայց նոքա են ի խաղաղութեան։ Իմաստ. Գ. 1. 2. 3։

լէն զսուրբերն ալ իրենց մահուան ատեն, բայց Աստուած ալ չի հեռանար անոնց քովէն, և չի դադրիր իւր հաւատարիմ ծառայից օգնելէն աւելի վտանգ եղած ատեն։ Սուրբն Ամբրոսիոս կ'ըսէ, թէ հոն աւելի օգնականութեան կը հասնի, ուր որ վտանգը շատ է. վասն զի Աստուած օգնական է ուր որ ժամանակն յարմար է։ Երբ Եղիսէին աշակերտը տեսաւ որ քաղաքը պաշարուած է թշնամիներէն, ահուդողի մէջ ընկաւ. բայց մարգարէն քաջալերեց զինքը ըսելով մի վախնար. վասն զի մեր կողմը շատ են քան անոնց կողմը[1]։ Եւ ցցուց անոր հրեշտակաց բանակը որ զիրենք պաշտպանելու զրկեր էր Աստուած։ Ուստի թէպէտև սատանան կու գայ փորձելու, բայց պահապան հրեշտակն ալ կու գայ քաջալերելու զհոգեվարքը. բարեխօս սուրբերն ալ կու դան, սուրբ Միքայէլ հրեշտակապետը կու գայ, զոր դրեր է Աստուած պաշտպանելու իւր հաւատարիմ ծառայքը դժոխոց վերջի յարձակման դէմ. կու գայ սուրբ Աստուածամայրն ալ թշնամիքը ցիրուցան ընելու և իրեն ջերմեռանդները իւր հովանեաց ներքևն առնելու. ի վեր քան զամենայն ինքն Քրիստոս կու գայ փորձութիւններ-

1 Մի երկնչիր, զի ընդ մեզ բազումք են քան ընդ նոսա։ Դ. Թագ. Զ. 16։

րէն պահելու այն անմեղ ոչխարակը կամ ապաշխարողը, որուն փրկութեան համար իւր կեանքը դրեր է. ինքը այնպիսի ծանր կռուոյ ատեն պէտք եղած վստահութիւնը և ուժը կու տայ, ուստի հոգին ալ քաջաբեալ ամէն կերպով կ'ըսէ տէր եղև ինձ օգնական։ Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց[1]։ Ինչպէս Որոգինէս կ'ըսէ, թէ աւելի մեծ է մեր վրայ Աստուծոյ հոգը և խնամքը, որպէս զի զմեզ փրկէ, քան թէ սատանային փոյթը զմեզ դատապարտութիւն մատնելու։ Վասն զի Աստուած ալ աւելի կը սիրէ զմեզ քան թէ սատանան կ'ատէ զմեզ։

Պօղոս առաքեալ կ'ըսէ, թէ հաւատարիմ է Աստուած որ ձեր ուժէն վեր զձեզ փորձութեան մէջ չի ձգեր[2]։ Բայց պիտի ըսես, թէ սուրբերուն շատն իրենց փրկութեան վրայ վախնալով մեռան։ Պատասխան կու տամ թէ գիտցիր որ աղէկ վարք ունեցողներուն մէջ քիչ կան որ անոնց համար գրուած ըլլայ, թէ շատ վախով մեռան. Բելլուակենցին կ'ըսէ, թէ Աստուած ոմանց այդ բանը թող կու տայ, որպէս զի մաքրէ զիրենք մահուան ատեն

1 Սաղմ. ԻԹ. 11։ ԻԸ. 1. 14։

2 Հաւատարիմ է Աստուած որ ոչ արկցէ զձեզ ի փորձութիւն առաւել քան զկար ձեր։ Բ. Կորն. Ժ. 13։

իրենց քանի մը պակասութիւններէն։ Ո՛ւր թողուած որ գրեթէ Աստուծոյ ամէն ծառաները, ինչպէս որ գրած է, ուրախութեամբ հոգինին աւանդեր են։ Աստուծոյ դատաստանը մահուան ատեն ամենուն վախ կը բերէ, բայց մեղաւորներն այս վախէն յուսահատութեան մէջ կ'իյնան, իսկ սուրբերը այս վախէն վստահութիւն կ'առնուն։ Սուրբն Անտոնինոս կը պատմէ, թէ սուրբն Բեռնարդոս հիւանդութեան ատեն կը վախնար և վրան անյուսութեան փորձութիւն կու գար. բայց երբ Քրիստոսի արդիւնքը միտքը բերաւ, բոլոր վախը մէկդի ձգեց ըսելով, քու վերքերդ իմ արդիւնքս են։ Սուրբն Հիլարիոն ալ կը վախնար, բայց ետքէն ուրախութեամբ ըսաւ. ելի հոգի, ինչու կը վախես ու կը դողաս, եօթանասուն տարի Աստուծոյ ծառայեցիր, և մահուանէ՞ կը վախնաս։ Յիսուսեան հայր Յովսէփ Աքամաքայի հարցուցին, թէ ինչպէս ես, ուրախ ես մեռնելուդ. այն ալ ըսաւ. հապա ինչ, միթէ սատանային ծառայեցի որ հիմայ կարենամ տարակուսիլ, թէ արդեաք Աստուած զիս փրկել կուզէ՞ թէ չէ։

Եթէ մահուան ատեն տանջուինք մտածելով, թէ զԱստուած վշտացուցեր եմ, զայն ալ գիտենք որ Աստուած ըսեր է, թէ որ անօրէնը դառնայ իւր անօրէնութենէն՝ անոր անօրէնութիւնը ալ պիտի

չի յիշեմ։ Բայց պիտի ըսես, թէ ինչպէս կրնանք ապահով ըլլալ՝ թէ Աստուած մեզի ներեր է. այդ հարցմունքը նաև սուրբն Բարսեղ ալ կ'ընէ, ու այսպէս պատասխան կու տայ, թէ դուն ալ ըսէ մարգարէին հետ թէ զմեղս ատեցի և անարգեցի, զանօրէնութիւնս ատեցի և զզուեցայ։ Ով որ զմեղս կ'ատէ, կրնայ ապահով ըլլալ թէ Աստուած ալ իրեն թողութիւն տուեր է։ Մարդուս սիրտը չի կրնար առանց սիրելու կենալ, կամ ստեղծուածքը կը սիրէ և կամ զԱստուած. թէ որ ստեղծուածքը չի սիրեր, ուրեմն զԱստուած կը սիրէ. արդ ո՞վ է աստուածասէր եթէ ոչ պատուիրանապահն։ Ով որ իմ պատուիրանքներս կը բռնէ ու կը պահէ զանոնք, նա է որ զիս կը սիրէ[1]։ Ուրեմն ով որ պատուիրանքը պահած կը մեռնի, ի սէր Աստուծոյ կը մեռնի. ուստի ով որ զԱստուած կը սիրէ՝ վախ չ'ունի, վասն զի սէրն մերժէ զերկիւղ[2]։

1 Որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս։ Յովհ. ԺԴ. 21։

2 Ա. Յովհ. Դ. 18։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ահ Յիսուս փրկիչ իմ, երբ պիտի ըլլայ այն օրը որ պիտի կարենամ ըսել փառք քեզ Աստուած իմ, մէյմ'ալ ալ զքեզ չեմ կրնար կորսընցընել։ Երբ պիտի ըլլայ որ զքեզ դէմ առ դէմ տեսնեմ, և ապահով ըլլամ զքեզ սիրելու իմ ամէն զօրութեամբս յաւիտեան։ Ահ իմ ծայրագոյն բարիս, մէկ հատիկ սէրս, քանի որ կենդանի եմ միշտ վտանգի մէջ եմ զքեզ վշտացընելու, և քու գեղեցիկ ընդհանուր կորսընցընելու։ Այն ինչ թշուառ ատեն էր որ զքեզ չէի սիրեր, կ'անարգէի քու սէրդ. հիմայ կը զղջամ ի բոլոր սրտէ, կը ցանկամ սիրել որչափ կրնամ և զքեզ հաճեցընել, բայց դեռ վտանգի մէջ եմ քու սէրդ թողու և քեզի կռնակ դարձնելու։ Ով փրկիչ իմ, կեանք իմ, դանձ իմ, թող մի տար ինձ. ապա թէ ոչ կ'աղաչեմ հիմակուընէ հոգիս առ որպիսի և իցէ դառն մահուամբ, զոհ եմ մեռնելու։ Հայր երկնաւոր, Յիսուսի սիրոյն համար մի թողուր զիս այս կործանմանս մէջ ինկնալու. պատժէ զիս ինչպէս որ կ'ուզես, սիրով յանձն կ'առնում, միայն խալըսէ զիս՝ քու ընդհանուր և ի քո սիրոյդ զրկուելու պատ-

ժէն։ Յիսուս իմ, յանձնէ զիս քու Հօրդ։ Մարիամ մայր իմ, յանձնէ զիս քու որդւոյդ, առ ինձ համար յարատևութիւն իրեն բարեկամութեան մէջ մնալու և շնորհք զինքը սիրելու. անկից ետև ինչ որ կ'ուզէ թող ընէ ինձ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Արդարոց հոգին Աստուծոյ ձեռքն է, և անոնց մահ չի կրնար մօտենալ. անզգամներուն այնպէս կ'երևի թէ անոնք մեռան. բայց անոնք խաղաղութեան մէջ են։ Խենթերուն աչքին կ'երևի թէ Աստուծոյ ծառաները ցաւելով և ակամայ կը մեռնին, ինչպէս աշխարհասէրք կը մեռնին. բայց սուտ է, Աստուած ազէկ գիտէ իւր որդիքը մխիթարել մահուան ատեն. և մահուան ցաւերուն մէջ ալ այնպիսի քաղցրութիւն մը կը զգան որ արքայութեան համար այս աշխարհէս կը սկսին առնուլ՝ զոր քիչ մ'ատենէն պիտի ժառանգեն։ Ինչպէս մեղաւորներն ալ մահուան անկողնոյն միջէն կը սկսին դժոխքին համն առնել խղճմտանաց խայթերով, վախերով, յուսահատ սրտով. ընդ հակառակն սուրբերը անդադար առ Աստուած սիրոյ ներգործութիւններ ընելով, և շուտով

զինքը վայելելու փափաքով և յուսով կը սկսին մեռնելէն առաջ զգալ այն խաղաղութիւնը՝ զոր ետքը լիովին պիտի վայելեն երկինքը։ Սուրբերուն մահը պատիժ չէ, հապա վարձք և պսակ է, և անոնց վախճանը մահ չ'ըսուիր, հապա անուշ քուն մը[1]. ուստի պիտի կարենայ ըսել՝ խաղաղութեամբ յայսմ և ի սոյն ննջեցից և հանգեայց։

Հայրն Սուարէզ յիսուսեան այնպէս հանգիստ սրտով մեռաւ, որ ըսաւ թէ չէի կարծեր որ մահն այսչափ անուշ է եղեր։ Ծիրանաւոր Բարնիսոին բժիշկը կ'ըսէր իրեն, թէ մահդ շատ մի մտածեր. նա ալ պատասխան տուաւ թէ ինչու, գուցէ կը կարծես թէ ես մահուընէ կը վախնամ. չէ, ես չեմ վախնար, հապա կը սիրեմ։ Սանդերոս կը պատմէ, թէ ծիրանաւոր Ռուֆէնցին երբ նահատակուելու կ'երթար՝ ջանաց որ ամենէն ազէկ զգեստները հագնի, ըսելով թէ հարսնիք կ'երթամ։ Երբ կախաղանը տեսաւ, ձեռքի գաւազանը վար ձգեց ու ըսաւ. քալեցէք ոտուրներս, վասն զի արքայութենէն քիչ հեռու ենք։ Եւ մեռնելէն առաջ սկսաւ երգել «Զքեզ Աստուած գովաբանեմք» երգը, գոհանալով Աստուծոյ որ զինքը արժանի վայելելու փափաքով և յուսով կը սկսին մեռնելէն առաջ զգալ այն խաղաղութիւնը՝ զոր ետքը լիովին պիտի վայելեն երկինքը։ Սուրբերուն մահը պատիժ չէ, հապա վարձք և պսակ է, և անոնց վախճանը մահ չ'ըսուիր, հապա անուշ քուն մը[1]. ուստի պիտի կարենայ ըսել՝ խաղաղութեամբ յայսմ և ի սոյն ննջեցից և հանգեայց։

Հայրն Սուարէզ յիսուսեան այնպէս հանգիստ սրտով մեռաւ, որ ըսաւ թէ չէի կարծեր որ մահն այսչափ անուշ է եղեր։ Ծիրանաւոր Բարնիսոին բժիշկը կ'ըսէր իրեն, թէ մահդ շատ մի մտածեր. նա ալ պատասխան տուաւ թէ ինչու, գուցէ կը կարծես թէ ես մահուընէ կը վախնամ. չէ, ես չեմ վախնար, հապա կը սիրեմ։ Սանդերոս կը պատմէ, թէ ծիրանաւոր Ռուֆէնցին երբ նահատակուելու կ'երթար՝ ջանաց որ ամենէն ազէկ զգեստները հագնի, ըսելով թէ հարսնիք կ'երթամ։ Երբ կախաղանը տեսաւ, ձեռքի գաւազանը վար ձգեց ու ըսաւ. քալեցէք ոտուրներս, վասն զի արքայութենէն քիչ հեռու ենք։ Եւ մեռնելէն առաջ սկսաւ երգել «Զքեզ Աստուած գովաբանեմք» երգը, գոհանալով Աստուծոյ որ զինքը ար-

1 Ի ժամանակի որպէս տացի քուն սիրելեաց իւրոց։ Սաղմ. ՃԻԶ. 4։

ժանի ըրաւ մարտիրոսութեամբ մեռնելու սուրբ հաւատքի համար, և այնպէս ուրախութեամբ տուաւ զլուխը։ Սուրբն Փրանկիսկոս ասսիզացին մեռնելու ատեն ուրախութեամբ կ'երգէր, քովիններուն ալ կ'ըսէր դուք ալ երգեցէք. այն ատեն եղբայր Եղիան ըսաւ, թէ Հայր, մեռնելու ատեն լալ պէտք է, չէ թէ երգել։ Իսկ սուրբը պատասխան տուաւ, թէ չեմ կրնար չ'երգել, տեսնելով որ քիչ ատենէն պիտի երթամ զԱստուած վայելելու։ Թերեզեան կարգէն մանկահասակ կոյս մը մեռնելու մօտ տեսաւ որ իւր ընկերները կու լան՝ այդ ի՞նչ է ըսաւ, ինչո՞ւ կու լաք, ես իմ Յիսուս փրկիչս գտնելու կ'երթամ, ուրախ կեցէք թէ որ զիս կը սիրէք։

Կը պատմէ հայրն Կրանադա, թէ որսորդին մէկը բորոտ միայնակեաց մը զըտաւ որ մեռնելու վրայ էր, և կ'երգէր. այդ ի՞նչ է ըսաւ անոր, մահուան ատեն երգել կ'ըլլայ։ Պատասխան տուաւ այն ճգնաւորը թէ ով եղբայր, Աստուծոյ ու իմ մէջս ուրիշ արգելք չի կայ, բայց միայն այս մարմնոյս պատը. հիմայ որ կը տեսնեմ թէ այս բանտս քայքայի ու քակուի պիտի, և ես պիտի երթամ զԱստուած տեսնելու, անոր համար ուրախութենէս կ'երգեմ։ Այս զԱստուած տեսնելու փափաքը սուրբն Իգնատիոս աստուածազգեցին ըսել կուտար. թէ որ դաղանները ետ

քաշուին իմ կեանքս վերցընելու՝ ես պիտի զրգռեմ զիրենք որ զիս լափեն։ Սրբուհին Կատարինէ գենուացին չէր կրնար համբերել անոնց՝ որ մահը դժբախտութիւն կը սեպէին և կ'ըսէր։ Ո՛վ սիրելի մահ, ինչպէս մարդիկ ծուռ աչքով կը նային քու վրադ. հապա ինչու ինձի չես դար որ գիշեր ցորեկ քեզ կը սպասեմ։ Սրբուհին Թերեզա ալ այնչափ կը փափաքէր մահուան, որ չմեռնիլը իրեն մահ կը սեպէր։

Ահա այսպէս է սուրբերուն մահն։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏՆԵՐ

Ո՛վ ծայրագոյն բարի Աստուած իմ, թէ որ առաջ զքեզ չի սիրեցի, հիմայ բոլորովին քեզի կը դառնամ. ամէն արարածոց մեաք բարով կ'ըսեմ, և կ'ընտրեմ զքեզ միայն սիրել, ով ամենասիրելի տէր իմ։ Ըսէ ինձ ինչ որ դու կ'ուզես, և ես պատրաստ եմ կատարելու։ Հերիք է որչափ որ զքեզ վշտացուցի, մեացած կեանքս կ'ուզեմ միայն քու կամքդ կատարելու համար անցնել։ Կարողութիւն տուր ինձ որ սէր հատուցանել կարենամ ըրած ապերախտութեանցս տեղ. ես արժանի էի չատոնց դժոխքի կրակին մէջ այրուելու, բայց դու

ձեռքէս բռնեցիր, ու քեզի քաշեցիր. ուստի հիմայ շնորհք տուր որ քու սուրբ սիրոյդ կրակովն այրիմ, տոչորիմ. կը սիրեմ զքեզ անբաւ բարութիւն, և դուն ալ իրաւամբ կ'ուզես որ զքեզ միայն սիրեմ վասն զի դու զիս ամէն բանէն աւելի սիրեցիր, և դու միայն արժանի ես սիրուելու. ես ալ զքեզ միայն կ'ուզեմ սիրել, և որչափ կրնամ քու հաճութիւնդ կատարել։ Ինչ որ կը հաճիս իմ վրաս ըրէ. հիրիք է որ ես զքեզ սիրեմ, և դուն ալ զիս սիրես։ Մարիամ, մայր իմ, դուն ինձ օգնական եղիր. աղաչէ զՅիսուս ինձ համար։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Եւ ինչպէս կարելի է մեռնելէն վախնալ, երբ մէկը յոյս ունի՝ թէ մահուընէ ետև թագաւոր պսակուի պիտի արքայութեան մէջ։ Սրբոյն Կիպրիանոսի ըսածին պէս, թէ սպանուելէն ետչենք քաշուիր երբ ստոյգ գիտենք թէ մեռնելով՝ պսակ պիտի առնունք. ինչո՞ւ մեռնելէն պիտի վախնայ այն որ գիտէ թէ ի շնորհս մեռնելով՝ մարմնով ալ անմահ պիտի ըլլայ։ Պէտք է, կ'ըսէ առաքեալն, այս մահկանացուս անմահութիւն զգենուլ[1]։ Ով որ զԱստուած կը սիրէ, և կը ցանկայ զինքը տեսնել, այս կեանքս իրեն պատիժ կը սեպէ, և մահը ուրախութիւն. ուստի կ'ըսէ սուրբն Օգոստինոս, թէ համբերութեամբ կ'ապրի, զուարճանալով կը մեռնի. և սուրբն Թովմաս Վիլլանովացին կ'ըսէ, թէ մահը թէ որ զմարդ քուն եղած գտնէ, գողի պէս կու գայ, կը բռնէ կը սպաննէ ու գժոխքին դուռը կը ձգէ. բայց թէ որ արթուն գտնէ, դեսպանի մը պէս կու գայ, կը բռնէ, և կ'ըսէ թէ Աստուած զքեզ հարանիք կը կանչէ, եկուր զքեզ տանիմ քու ուզած տեղդ։

Ինչպէս ուրախ սրտով իւր մահուան կը սպասէ ով որ ի շնորհս Աստուծոյ կը գըտնուի, յուսալով որ զՅիսուս իւր փրկիչը պիտի տեսնէ ու պիտի լսէ անկէ. Ագնիւ, փառայ բարի և հաւատարիմ, որովհետև քիչին մէջ հաւատարիմ եղար, շատի վրայ պիտի դնեմ զքեզ[2]։ Ո՜վ թէ այն ատեն ս'րչափ մխիթարանք են քաշած ապաշխարանքը, ըրած աղօթքները, երկրաւոր բարիքներէն սիրտը բաժնելը, և այն ամէն

1 Պարտ է մահկանացուիս զգենուլ զանմահութիւն։ Բ. Կորն. ԺԷ. 53։

2 Ագնիւ, ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զքեզ։ Մատ. ԻԵ. 21։

բանը ինչ որ Աստուծոյ համար մէկն ըրեր է։ Այն ատեն՝ ով որ զԱստուած սիրեր է, իւր ամէն սուրբ գործոց պտուղը պիտի վայելէ։ Ուստի յիսուսեան հայրն Հիպպոդիտոս երբ կը տեսնէր որ իւր բարեկամ կրօնաւորներէն մէկը փրկութեան նշաններով կը մեռնէր՝ ամենևին չէր լար, այլ կ'ուրախանար։ Ոսկերերան ալ կ'ըսէ, թէ որչափ անտեղի բան է երկնից արքայութեան հաւատալ ու ետքը սուգ մտնել հոն գնացողաց վրայ։ Որչափ մեծ մխիթարանք է այն ատեն մանաւորապէս անոր՝ որ սուրբ Աստուածածնայ ջերմեռանդ պաշտօն կը մատուցանէր, վարդապաններ կը դարձընէր, այցելութիւններ կ'ընէր, ի պատիւ անոր պաք կը պահէր. եթէ տիրամայրը կոյս հաւատարիմ կ'ըսուի, որչափ հաւատարիմ կ'ըլլայ իւր ջերմեռանդները մխիթարելու իրենց մահուան ատեն։ Սուրբ կուսին ջերմեռանդ մարդ մը մեռնելու ատեն ըսաւ հօրն Պինէդդիի, թէ հայր սուրբ չես կրնար հաւատալ թէ ինչ մխիթարութիւն կը զգամ հիմայ սուրբ Աստուածածնայ ծառայելուս համար. ո՜հ թէ գիտնայիր, որչափ գոհ եմ հիմայ տիրամօրս ծառայելուս համար, որ չեմ կրնար բացատրել։ Հապա ինչ ուրախութիւն կ'ունենայ նա՝ որ զՅիսուս սիրեր է, ստէպ ստէպ այցելութեան ելեր է զինքը սրբութեան խորանին առջև յարգելու,

և անպակաս հաղորդուեր է սուրբ խորհրդոյն, երբ կը տեսնէ թէ իրեն սուրբ թոշակ կը բերեն, որ հանդերձեալ կենաց իրեն առաջնորդ պիտի ըլլայ։ Երնեկ անոր որ պիտի կարենայ այն ատեն սուրբ Փիլիպպոս Ներեանին հետ ըսել. Ահա իմ սիրականս, ահաւասիկ իմ սէրս, տուէք ինձ իմ սէրս։

Գուցէ մէկն ըսէ. բայց ես ինչ գիտնամ թէ իմ գլխէս ինչ պիտի անցնի. ո՞վ գիտէ թէ ես գէշ մահ պիտի ունենամ։ Բայց այդպիսոյն ես ալ կ'ըսեմ. ինչո՞վ գէշ կ'ըլլայ մահը, միթէ մեղքով միայն չէ՞. ուրեմն մեղքէ միայն պիտոր վախնանք, չէ թէ մահուանէ։ Սրբոյն Ամբրոսիոսի ըսածին պէս, թէ յայտնի է որ դառնութիւնը մահուանէ չէ, հապա մեղքէն է. ուստի վախը մահուան տալու չէ, այլ կենաց և վարուց։ Ուրեմն երբ չես ուզեր մահուանէ վախնալ, ազ!.կ ապրէ. ով որ Աստուծմէ կը վախնայ, անոր վախճանը բարի է։

Հայրն Գոլոմպիէր կ'ըսէր, թէ անկարելի է բարոյապէս որ կենաց մէջ Աստուծոյ հաւատարիմ եղողը չար մահ ունենայ։ Այս բանը յառաջուց սուրբն Օգոստինոս ալ ըսեր էր, թէ չի կրնար գէշ մեռնիլ ով որ բարի կեանք ունեցեր է։ Ով որ մեռնելու պատրաստուելով կ'ապրի՝ բնաւ մահէ մը չի վախնար, թէ և յանկարծա-

կան ըլլայ։ Արդարը, կ'ըսէ Սողոմոն, ինչ և իցէ մահուամբ ալ մեռնելու ըլլայ, միշտ հանգիստ կ'ըլլայ[1]։ Արդ որովհետև չենք կրնար ուրիշ կերպով երթալ զԱստուած վայելել՝ բայց եթէ մեռնելով, ուստի այս պէս խրատ կու տայ Ոսկերերան, թէ ընծայենք Աստուծոյ այն բանը զոր պարտական ենք տալու։ Այս ալ գիտենք թէ ով որ իւր մահը Աստուծոյ կը նուիրէ, գերազանց սիրոյ ներգործութիւն կ'ընէ, վասն զի սիրով ողջագուրելով զայն մահը՝ որ Աստուծոյ հաճոյ է, և այն ատեն և այն կերպով՝ որ Աստուծոյ կամքն է, մարտիրոսներուն կարգը կ'անցնի։

Աստուածասէրն պէտք է որ միշտ փափաքի և հառաչէ մահուան. վասն զի մահը զմեզ ստուգապէս Աստուծոյ հետ կը միացընէ, և կը խալըսէ զմեզ զԱստուած կորսընցնելու վտանգէն։ Պակաս սիրոյ նշան է փափաք չ'ունենալ շուտով երթալ զԱստուած տեսնելու և նորէն զինքը չի կորսընցնելու ապահով ըլլալ։ Մենք այս կենացս մէջ պէտք է ջանանք զԱստուած սիրել որչափ որ կրնանք. այս բանիս միայն պիտի ծառայէ մեր կեանքը՝ Աստուծոյ սէրն աճեցընելու. մեր սիրոյն չափը,

1 Արդարն եթէ հասցէ ի վախճանել, ի հանդըստեան եղիցի։ Իմաստ. Դ. 7։

որուն մէջ պիտի գտնէ զմեզ մահը, պիտի ըլլայ անգիի աչխարհը զԱստուած սիրելնուս չափը։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Փրկիչ իմ Յիսուս, գիս քեզի հետ կապէ, այնպէս որ չի կարենամ քեզմէ բաժնուիլ։ Զիս քեզի առ բոլորովին մեռնելէս առաջ, որպէս զի զքեզ ինձ հետ հաշտուած տեսնեմ առաջին տեսնելուս ատեն։ Դու տէր, գիս փնտռեցիր, երբ ես քեզմէ կը փախչի. հիմայ մի վռնտեր զիս երբ ես զքեզ կը փնտռեմ։ Թող ինձ որչափ որ քու կամքիդ դէմ ըրեր եմ. այս օրէս ետև ուրիշ բան չեմ ուզեր մտածել, բայց միայն քեզի ծառայել և զքեզ սիրել։ Ամէն կերպով գիս քեզի պարտական ըրիր, ինչուան արիւնդ ալ տալով իմ սիրոյս համար։ Կ'ուզէի որ ես ալ գիս ամենայն կերպով քեզ տայի, ով Յիսուս իմ, որչափ դու զքեզ բովանդակ ինձ տուիր։ Ով Աստուած հոգւոյ իմոյ, կ'ուզեմ զքեզ շատ սիրել այս կենացս մէջ, որպէս զի կարենամ անդին ալ շատ սիրել։ Հայր երկնաւոր, դուն իմ սիրտս բոլոր քեզի քաշէ, բաժնելով ամենայն երկրաւոր բաղձանքներէն, և բոլորովին բորբոքէ քու

սուրբ սիրովդ. լսէ աղաչանաց, արդեամբք Յիսուսի Քրիստոսի օծելոյ քոյ։ Տուր ինձ սուրբ յարատևութիւն, տուր ինձ շնորհք՝ որ միշտ զայն խնդրեմ քեզմէ։ Մարիամ, մայր իմ, օգնական եղիր ինձ, և այս շնորհքս առ ինձ համար՝ որ միշտ քու միածնէդ սուրբ յարատևութիւն խնդրեմ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ժ.

ԱՌ Ի ՄԱՀ ՊԱՏՐԱՍՏՈՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Ցիշէ քոյ վախճանիդ, և յաւիտեան չես մեղանչեր [1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ամէնքն ալ կ'ընդունին թէ պիտի մեռնին. և մեռնիլն ալ մի անգամ է, սակէ մեծ հետևանք ունեցող բան չիկայ, վասն զի մահուան կէտէն կը կախուի կամ երանելի և կամ թշուառ ըլլալ յաւիտեան։ Այս ալ գիտեն ամէնքը՝ թէ բարի կամ չար կեանքէն կախուած է բարի կամ չար մահ ունենալը։ Հապա ինչպէս կ'ըլլայ որ քրիստոնէից ալ մեծ մասն այնպէս կ'ապրին, որպէս թէ իրենք մեռնելիք չ'ու-

1 Ցիշեա զվախճան քո, և յաւիտեան ոչ մեղցես։ Սիրաք. Է. 40։

նին, կամ թէ շատ մեծ բան մը չէ աղէկ կամ գէշ մահ ունենալը։ Այս շարաչար ապրիլը անկէց է՝ որ զմահ չեն մտածեր, ուրեմն յիշէ քու վախճանդ՝ անկէց ետքը յաւիտեան մեղք չես գործեր։ Պէտք է համոզուինք, թէ մահուան ատեն յարմար ժամանակ չէ մեր տալու համարը շտկելու, և մեր յաւիտենից փրկութեան մեծ տուրեւառը ապահովցընելու։ Աշխարհիս խելացիներն երկրաւոր բաներու մէջ յարմար ատեն կը նային վաստակ մ'ընելու, պատուի մը հասնելու, հարստիք ընելու. և մարմնոյ առողջութեան համար չեն փախցրներ ատենին հարկաւոր դեղն ընելու։ Ի՞նչ կ'ըսէիր այն մարդուն, որ մեծամարտութիւն մ'ընելու, կամ պատիւ մը ձեռք ձգելու երթալու վրայ ըլլայ, և նոյն միջոցին ուզենայ այդ բանին խելքը տալ՝ երբ բուն ատենն հասեր է։ Մի թէ խենթ չէ՞ այն զօրապետն, որ քաղաքին պաշարուած ատեն ապրուստի ու զէնք գտնելու ելնէ։ Մի թէ խենթ չէ՞ այն նաւապետն, որ անհոգ կը կենայ առաջուց խարիսխներն առասանները պատրաստելու՝ ինչուան որ ալէկոծութիւնն չէ սկսած։ Ամենեւին ասոնց նման է այն քրիստոնեայն՝ որ իւր խղճմտանքին շտկելը կը ձգէ այն օրուան, որ մահն եկեր հասեր է։ Երբ յանկարծակի վրանիդ խռովութիւն հասնի, կ'ըսէ Աստուած, և կործանումն

մրրկի նման գալու ըլլայ, այն ատեն զիս պիտի կանչէք, ես ալ պիտի չի լսեմ ձեզ ըսելով՝ ասկէ ետև իրենց ճանապարհաց պտուղը թող ուտեն[1]։ Մահուան օրը մրրկի ու ալէկոծութեան օր է. այն ատեն մեղաւորք զԱստուած օգնութեան կը կանչեն, բայց միայն դժոխքի վախուն համար, զոր իրենց մատ կը տեսնեն առանց ճշմարիտ դարձի, ուստի Աստուած ալ իրենց չի լսեր, և իրաւամբք այն ատեն սոսկ իրենց չար վարքին պտուղը համտես կ'ընեն։ Վասն զի ինչ որ կը սերմանէ մարդ, զնոյն կը հնձէ։ Հերիք չէ այն ատեն սոսկ վերջի խորհուրդները առնել, հապա պէտք է մեռնիլ զմեզս ատելով, և զԱստուած սիրելով ամէն բանէ վեր։ Բայց ինչպէս պիտի ատէ այն անարժան հեշտութիւնները՝ ով որ ինչուան այն ատեն սիրեր է զանոնք. ինչպէս պիտի սիրէ այն ատեն զԱստուած ի վեր քան զամենայն, ով որ ինչուան այն ատեն զաշխարհ առաւել սիրեր է քան զԱստուած։

Տէրն մեր իրաւամբք յիմար կոչեց այն կուսանքներն՝ որ լապտեր պատրաստել

1 Յորժամ հասանիցէ ձեզ յանկարծակի խռովութիւն, և կործանումն ի նմանութիւն մրրկի դայցէ... իցէ զի կարդայցէք առ իս և ես ոչ լսիցեմ ձեզ... այսուհետև կերիցեն զպտուղս ճանապարհաց իւրեանց։ Առակք. Ա. 27. 28. 31։

կ'ուզէին երբ փեսայն կու գար։ Ամէն մարդ կը վախնայ յանկարծական մահէն, վասն զի ատեն չի մնար տալու համարը շտկելու ամէնքը կը խոստովանին, թէ ճըշմարիտ իմաստուն եղեր են սուրբերն. վասն զի իրենք զիրենք մահուան պատրաստեր էին անոր գալէն յառաջ։ Հապա մենք ի՞նչ կ'ընենք։ Ի՞նչ, կ'ուզենք մենք զմեզ վտանգի մէջ դնել սպասելով մեռնելու վայրկենին որ աղէկ պատրաստութիւն տեսնենք։ Ուրեմն պէտք է որ հիմակուընէ ընենք այն բանը՝ զոր մահուան ատեն կ'ուզենք որ ըրած ըլլայինք։ Ո՛հ, այն ինչ ցաւ կը բերէ այն ատեն յիշել կորսուած ժամանակը, մանաւանդ գէշ անցուցած ժամանակը։ Ատուած ատեն տուեր էր վաստակ ընելու, բայց այն ատենն անցաւ գնաց, մէյմ'ալ չի դառնար։ Ի՜նչ տագնապ պիտի բերէ այն ատեն լսելը թէ ալ չես կրնար տնտես ըլլալ։ Ալ քեզի ատեն չի կայ ապաշխարելու, ժամերը երթալու, Յիսուսի այցելութիւն ընելու, աղօթք ընելու, քարոզ լսելու. ինչ որ եղաւ եղաւ։ Այն ատեն առողջ միտք, հանդարտ ժամանակ պէտք է ապէկ խոստովանանք ըլլալու և ծանր խղճմտանքները մէկիկ մէկիկ քննելու, որպէս զի սիրտը հանդչի. բայց ալ ժամանակ չի կայ։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛հ, Ատուած իմ, թէ որ ես մեզացս մէջ մեռած ըլլայի, հիմայ ո՞ւր կ'ըլլայի։ Շնորհակալ եմ որ խնայեցիր ինձ, շնորհակալ եմ այն ամենայն վայրկեաններուն համար՝ յորս դժոխքը կրնայի ըլլալ, սկսեալ այն վայրկենէն որ զքեզ վշտացուցի։ Կ'աղաչեմ լոյս տուր ինձ, տուր ճանչնալ այն ծանր անարգանքը՝ զոր քեզ ըրի կամաւ կորսընցնելով քու շնորհքդ զոր ինձ համար չահեցար խաչափայտին վրայ իմ սիրոյս համար մեռնելով։ Ո՛հ, Յիսուս փրկիչ իմ, Թողութիւն շնորհէ ինձ. ես ալ բոլոր սրտանց կը զղջամ իմ ամէն չարեացս վրայ, որով անարգեր եմ զքեզ, ով անբաւ բարութիւն. ես յոյս ունիմ որ արդէն թողութիւն տուեր ես իմ չարեացս։ Հապա օգնէ ինձ, փրկիչ իմ, որ մէյմ'ալ ըզքեզ չի կորսընցնեմ։ Ո՛հ տէր, եթէ ես նորէն դառնալու ըլլամ զքեզ վշտացնելու այսչափ լոյս ընդունելէս ետև. և այսչափ շնորհք որ քեզմէ առեր եմ, արժանի չէի՞ ըլլար նոր դժոխքի մը։ Ա՜խ, կ'աղաչեմ մի՛ թողուր զիս քու արեանդ արդեանցն համար որ թափեցիր իմ՝ սիրոյս։ Տուր ինձ սուրբ յարատևութիւն. տուր

ինձ քու սուրբ շնորհքդ։ Կը սիրեմ զքեզ, ով ծայրագոյն բարի. և չեմ ուզեր մէյ-մ'ալ ետ կենալ զքեզ սիրելէն ինչուան ի մահ։ Աստուած իմ, հայր երկնաւոր, զթա և ողորմէ ինձ վասն սիրոյ միածնի քո Յիսուսի Քրիստոսի։ Զթա ինձ և դու յոյս և ապաւէն իմ, Մարիամ, և յանձնէ զիս Աստուծոյ. քու աղաչանքդ ետ չի մնար առաջի տեառն որ զքեզ այնչափ կը սիրէ։

ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ

Հապա սիրելի եղբայր, երբ գիտես թէ պիտի մեռնիս, շուտով հիմակուընէ խաչելութեան ոտքն ընկիր, շնորհակալ եղիր իրեն այս ատենիս համար զոր քեզ կու տայ իր ողորմութեամբն, որպէս զի կարենաս խղճմտանքդ շտկել. ետքը մէյմ'աչքէ անցուր բոլոր անցած կենացդ պակասութիւնները, մանաւանդ երիտասարդութեանդ ատեն։ Աչքէ անցուր Աստուծոյ պատուիրանները, քննէ ինչ բաներու կամ պաշտօններու մէջ մտեր ես, և կենցաղավարութիւններդ՝ որ շատ անգամ ըրեր ես, և գրի վրայ առ անկարգութիւններդ. և ընդհանրական խոստովանանք եղիր բոլոր կենացդ, թէ որ ինչուան հիմայ չես եղած։ Գիտես որչափ կ'օգնէ ընդհանրական

խոստովանութիւնը ճամբայ բերելու քրիստոնէին վարքը. մտածէ թէ հաչիւ մ'է վասն յաւիտենականութեան. և այնպէս ըրէ, որպէս թէ հասած ըլլայիր այն կէտը՝ որ համար պիտի տաս Քրիստոսի քու դատաւորիդ։ Հեռացուր սրտէդ ամենայն չար յոժարութիւնները, ամենայն ոխակալութիւն. մաքրէ խիղճդ ուրիշի ստացուածքին աչք տնկելէն, ուրիշի անուանակոտրութեան պատճառ ըլլալէդ, սըուած գայթակղութիւններէդ. և առաջադրէ փախչիլ այն առիթներէն, որով կըրնաս զԱստուած կորսընցնել։ Գիտցիր որ այն բանն որ հիմայ քեզի դժուար կ'երևի, մահուանդ ատեն անկարելի պիտի երևի։

Ա՛լ աւելի հարկաւոր է որ առաջադրես ի գործ դնել այն միջոցները որով կարենաս պահել զքեզ ի շնորհս Աստուծոյ. ինչպէս են՝ ամէն օր պատարագ տեսնել, յաւիտենական ճշմարտութիւնները մտածել, ստէպ ստէպ խոստովանանք ըլլալ և հաղորդուիլ՝ գոնէ ութ օր անգամ մը, այցելութեան ելնել ամէն օր սրբութեան և Աստուածածնայ, կրթութիւն մտնել, հոգևոր գիրք կարդալ, ամէն իրիկուն քննութիւն խղճմտանայ ընել, և մասնաւոր ջերմեռանդութիւն ընել առ ամենասուրբ կոյսն՝ ծոմ կենալով շաբաթ օրերն, և ամէն բանէ վեր յաճախ ինքզինքդ Աստուծոյ յանձնել և սուրբ Աստուածածնայ,

անպակաս կարդալով, մանաւանդ փոր-
ձութեան ատեն, զամենասուրբ անունն
Յիսուսի և Մարիամու։ Այսոնք են այն
միջոցներն, որ կրնան քեզ բարի մահ տալ
և յաւիտենից փրկութիւնը։

Այս բաներս ընելը քեզի նշան մը կ'ըլ-
լայ, թէ փրկութեան պիտի հասնիս, իսկ
անցած զացած ատենիդ համար ապաւի-
նէ յարիւն փրկչիդ, որ հիմայ քեզի այս
լոյսերը կու տայ, վասն զի կ'ուզէ որ փըր-
կուիս. ապաւինէ սուրբ Աստուածածնայ
բարեխօսութեան որ քեզի համար այս
լոյսերը կը խնդրէ և կ'առնու։ Ըսած վա-
րուց կարգաւորութեամբս, և ապաւինու-
թեամբ առ Յիսուս և Մարիամ, գիտես
թէ որչափ կ'սգնէ քեզ Աստուած, և ինչ
ուժ կ'առնու հոգիդ։ Ուրեմն, սիրելի ըն-
թերցող, շուտով տուր գքեզ Աստուծոյ որ
կը կանչէ զքեզ, և սկսէ վայելել այն խա-
զաղութիւնը՝ ուսկից մինչև հիմայ զուրկ
էիր քու յանցանքներովդ։ Եւ ինչ մեծ
խաղաղութիւն կրնայ զգալ հոգի մը, ինչ-
պէս կարենալ ըսել իրիկուան անկողին
մտնելու ատեն՝ թէ որ այս գիշեր մահս
գայ, կը յուսամ որ ի չնորհս Աստուծոյ
կը մեռնիմ։ Այն ինչ մխիթարութիւն է
որոտմունք լսել, տեսնել որ երկիրս կ'ե-
րերայ. և համակերպութեամբ մահուան
սպասել՝ թէ որ Աստուած այնպէս կարգա-
ւորեր է։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛հ տէր, որչափ չնորհակալ եմ որ այս-
պիսի լոյս կու տաս ինձ։ Ես այնչափ ան-
գամ զքեզ թողուցի, քեզ դէմ կռնակ դար-
ձուցի, բայց դու զիս երեսէ չի ձգեցիր.
թէ որ զիս երեսէ ձգէիր, ես կոյր մնացած
կ'ըլլայի, ինչպէս որ ասկէ առաջ ուզեցի
կենալ. խստասիրտ կը մնայի մեղացս մէջ.
և կամք չէի ունենար ոչ զանոնք թողու,
և ոչ զքեզ սիրելու։ Իսկ հիմայ մեծ ցաւ
կ'իմանամ զքեզ վշտացընելուս համար, և
մեծ փափաք մը քու չնորհքիդ մէջ մնա-
լու. այն անիծեալ հաճոյքներէն զզուիլ ու
գարշիլ կ'իմանամ, որոնք ինձ կորսընցնել
տուին զքո բարեկամութիւնդ։ Այսոնք
ամէնը չնորհք են որ քեզմէ ինձ կու գան,
և յուսալ կու տան որ ինձ ներել կ'ուզես,
և զիս փրկել։ Արդ որովհետև յետ իմ
այնչափ մեղացս դարձեալ զիս երեսէ չի
ձգեցիր և կ'ուզես զիս փրկել, ահա, տէր
իմ, ես ալ զիս բոլոր քեզ կը նուիրեմ։ Կը
ցաւիմ զքեզ վշտացընելուս վրայ. և կ'ա-
ռաջադրեմ հազար անգամ կեանքս կոր-
սընցնել՝ քան թէ քու չնորհքդ։ Կը սի-
րեմ զքեզ, ծայրագոյն բարի, կը սիրեմ
զքեզ Յիսուս փրկիչ իմ, որ ինձ համար

մեռար, և քու սուրբ արեանդ կը յուսամ որ զիս չես թողուր մէյմ՝ալ քեզմէ բաժնուելու։ Զէ, չեմ ուզեր. Յիսուս իմ, ալ զքեզ կորսընցընել. կ՝ուզեմ սիրել զքեզ միշտ ի կեանս և ի մահու, և ընդ ամենայն յաւիտեանս։ Հապա, պահէ զիս հանապազ, ու աւելցուր իմ սէրս առ քեզ, և դայս միայն կը խնդրեմ քու արդեանցդ համար։ Մարիամ, յոյս իմ և ապաւէն, բարեխօսէ առ Յիսուս ինձ համար։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Այս ալ պէտք է հոգալ ու ջանալ որ ամէն ժամ զմեզ այնպէս գտնենք՝ ինչպէս կը փափաքինք գտնուիլ ի ժամու մահուան։ Երանի մեռելոց որք ի տէր ննջեցին։ Սուրբն Ամբրոսիոս կ՝ըսէ, թէ անոնք բարի մահուամբ կը մեռնին, որոնք մահուան ատեն արդէն աշխարհիս համար մեռած կը գտնուին. այսինքն սրտերնին բաժնուած է այն երկրաւոր բարիքներէն, որոնցմէ մահուամբ առ հարկի պիտի զատուին։ Ուստի պէտք է որ հիմակուընէ սիրով յանձն առնուինք մերկանալ ամէն բանէ, բաժնուիլ ազգականներէ և ամէն երկրաւոր բարիքներէ։ Թէ որ այս բանս կամաւ չ՝ընենք մեր կենաց մէջ, հարկաւ

պիտի ընենք մահուան ժամանակ. միայն թէ այն ատեն ծայրագոյն ցաւով և յաւիտենական փրկութեան վտանգով։ Այսոր համար խրատ կու տայ սուրբն Օգոստինոս, թէ շատ կ՝օգնէ հանգիստ մեռնելու՝ ի կեանս կարգաւորել ժամանակաւոր բաները. հիմակուընէ տեղաւորելով հոս թողելիքը, որպէս զի մահուան ատեն մարդուս բոլոր հոգը Աստուծոյ հետ սիրով կապուիլն ըլլայ։ Այն ատեն ազէկ է՝ Աստուծոյ վրայ և արքայութեան վրայ խօսիլ։ Շատ անգին են այն եռքի վայրկեանները, ուստի պէտք չէ զանոնք երկրաւոր մտածմունքներու ծախել։ Մանաւանդ սրբոց պատկը կատարեալ կ՝ըլլայ. վասն զի այն ատեն ազէկ ազէկ արդիւնք կը դիզեն՝ սիրով և համակերպութեամբ Աստուծոյ կամաց քաշելով այն ցաւերը և գրկելով իրենց մահը։

Բայց չի կրնար մէկը այսպիսի բարի բարի խորհուրդներ ունենալ մահուան ատեն թէ որ կենդանութեան ատեն զանոնք չէ բանեցուցեր։ Ուստի շատ օգտակար բան է քանի մը ջերմեռանդներուն ըրածը, որ ամէն ամիս մասնաւոր պատրաստութիւն կը տեսնեն մահուան՝ քրիստոնէական ներգործութիւններով, և այն դիտաւորութեամբ խոստովանանք կ՝ըլլան ու կը հաղորդուին իբր թէ մեռնելու վրայ են և քիչ ատենէն այս աշխարհէս պիտի

ելնեն։ Մարդ կենդանութեան ատեն չ'ը-
րած բանը շատ դժուար է որ մահուան
ատեն ընէ։ Սրբակրօն կոյսն Կատարինէ
սուրբ Աղբերդեան Թերեզեանց, մեռնե-
լու ատեն հառաչելով կ'ըսէր ընկերնե-
րուն՝ թէ գիտցիք, քրուշտիքս, որ ես
մեռնելուս համար չեմ հառաչեր որուն
քսանուհինգ տարիէն ի վեր կը սպասէի,
հապա այնչափ մոլորեալ մարդկանց հա-
մար կը հառաչեմ, որ կեանքերնին մեղ-
քով կ'անցընեն, ու կը սպասեն որ մա-
հուան ատեն Աստուծոյ հետ հաշտուին,
այն ատեն որ ես հաղիւ թէ Յիսուսի անու-
նը կրնամ կանչել։

Հապա, սիրելի եղբայր, քննէ զքեզ և
տես, թէ արդեօք սիրտդ երկրաւոր բանի
մը, մէկու մը, պատուոյ մը, տան, ստակի,
կենցաղավարութեան, զբօսանքի կապած
ես. և մտածէ որ հոս յաւիտեան պիտի չի
կենաս։ Այն ամէնն ալ օր մը հոս պիտի
թողուս, և գուցէ շուտով. ուրեմն ինչու
այդպիսի կապեր ունենաս, ու զքեզ ան-
հանգիստ մեռնելու վտանգի մէջ դնես։
Հիմակուընէ ամէն բան Աստուծոյ նուի-
րէ՝ պատրաստ ըլլալով բոլորն ալ թողուլ
երբ ինքն ուզէ։ Թէ որ կ'ուզես համակեր-
պութեամբ Աստուծոյ կամաց մեռնիլ,
պէտք է որ հիմակուընէ զքեզ համակեր-
պես ամէն տեսակ ներհակ դիպուածոց
մէջ որ կրնան քեզ պատահիլ, և մերկա-

ցընես զքեզ երկրաւոր բաներուն ամենայն
յոժարութիւններէն։ Դիր թէ մահուան
կէտն հասեր ես, այն ատեն ամէն բան
կ'արհամարհես։ Սրբոյն Հերոնիմոսի ըսա-
ծին պէս, թէ դիւրաւ ամէն բան կ'արհա-
մարհէ մարդ որ միշտ կը մտածէ թէ պիտի
մեռնի։

Թէ որ դեռ չես որոշած քու կենացդ
վիճակը, նայէ այն վիճակը ընտրես որ մա-
հուանդ ատեն կ'ուզէիր որ ընտրած ըլ-
լաս, որպէս զի կարենաս գոհ սրտով մեռ-
նիլ։ Իսկ թէ որ արդէն ընտրեր ես, այն
բանն ըրէ ինչ որ այն ատեն կ'ուզես որ
ըրած ըլլայիր քու վիճակիդ մէջ։ Այնպէս
եղիր որպէս թէ ամէն օր քու կենացդ
վերջինն ըլլար. և ամէն գործդ վերջինի
պէս ըրէ, վերջի աղօթքի պէս, վերջի խոս-
տովանանքի պէս, վերջի հաղորդութեան
պէս։ Այնպէս միտքդ դիր իբր թէ ամէն
ժամ հոգեվարք ես, անկողին ընկած ես
ու քեզի կ'ըսեն թէ ելիր գնա աշխարհէս։
Գիտես, որչափ կ'օգտէ քեզ մտածութիւ-
նը աղէկ կեանք վարելու, և աշխարհէս
զքեզ բաժնելու։ Երանի ծառային այն-
միկ, զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ
այնպէս։ Ով որ ամէն ժամ մահուան կը
սպասէ, թէ և յանկարծակի մեռնի, միշտ
աղէկ կը մեռնի։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ամէն քրիստոնեայ պէտք է միշտ պատրաստ ըլլայ, որ երբ իւր մահը կ'իմացընեն իրեն՝ ըսէ. Ով Աստուած իմ, ուրեմն քիչ ատեն ինձ մնացեր է, բայց ես այս միջոցիս մէջ ալ կ'ուզեմ զքեզ աւելի սիրել, որպէս զի անդին ալ զքեզ աւելի սիրեմ։ Բան մը չ'ունիմ որ քեզի նուիրեմ. այս ցաւերս ու կենացս զոհը կը նուիրեմ, և կը խնդրեմ որ միանայ այն զոհին հետ զոր ինձ համար պատարագեց փրկիչն իմ խաչին վրայ։ Իմ քաշածս քիչ բան է և թեթև անոր քով՝ որուն արժանի էի. ինչ որ է՝ ես սիրով կ'ընդունիմ ի նշան իմ սիրոյս որ առ քեզ։ Զիս կը համակերպեմ այն ամէն վշտաց որ ինձ կ'ուզես տալ ասդին ալ անդին ալ, միայն թէ զքեզ յաւիտեան կարենամ սիրել. տանջէ զիս որչափ որ կը հաճիս, միայն թէ ի քու սիրոյդ չի զրկուիմ։ Գիտեմ որ ես արժանի չէի զքեզ ալ սիրելու, որովհետև շատ անգամ քու սէրդ անարգեցի, բայց դու զըղջացեալ սիրտ մը չես մերժեր։ Կը ցաւիմ կը զղջամ ի բոլոր սրտէ, ով ծայրագոյն բարի զքեզ վշտացնելուս համար. կը սիրեմ զքեզ յամենայն սրտէ, և բոլորովին

քեզի կ'ապաւինիմ։ Քու մահդ, ով փրկիչ, իմ յոյսս է. քու ձեռքդ կը յանձնեմ իմ հոգիս. փրկեցիր զիս, տէր Աստուած ճըշմարտութեան։ Ով Յիսուս իմ, դու քու արիւնդ տուիր զիս փրկելու համար, մի թողուր որ քեզմէ բաժնուիմ։ Կը սիրեմ զքեզ Աստուածդ յաւիտենից, և կը յուսամ սիրել յաւիտեան։ Մարիամ, մայր իմ, օգնէ ինձ այս հարկաւորութեանս ատեն։ Քեզ կը յանձնեմ իմ հոգիս, աղաչէ քու միածին որդիդ որ գթայ իմ վրաս. քեզ կ'ապաւինիմ, ազատէ զիս դժոխքին ձեռքէն։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԱ.

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՑԱՐԳԸ

Որդեակ, պահեմ ժամանակդ [1]:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Նայէ, կ'ըսէ սուրբ գիրքը, որ աղէկ պահես քու ժամանակդ, վասն զի անգին է. Աստուծոյ մեծ պարգև է որ կենդանի եղող մարդու մը կրնայ տալ: Հեթանոսք ալ կը ճանչնային ժամանակին յարգը. և Սենեկա կ'ըսէր, թէ ժամանակը բնաւ գին չ'ունի: Բայց աւելի կերպով սուրբերը գիտցան ժամանակին յարգը: Սուրբն Բեռնարդինոս սենացին կ'ըսէ, թէ ժամանակի վայրկեան մը այնչափ կ'արժէ, որչափ Աստուած կ'արժէ, վասն զի աղէկ անցած ժամանակով Աստուած կը գտնուի. վասն զի ամէն վայրկեան մարդ կրնայ

1 Պահեա զժամանակին իբս: Սիր. Դ. 23:

զղջման կամ սիրոյ ներգործութիւն մ'ընելով Աստուծոյ շնորհքը և յաւիտենական փառքը շահիլ:

Ժամանակը որ գանձ մ'է այս կեանքիս մէջ միայն կը գտնուի, անդին չիկայ, ոչ դժոխքի մէջ և ոչ երկինքը: Դժոխքին մէջ այս է դատապարտելոց վայնասունը, ոհ թէ ժամ մ'ունենայինք: Ամէն բան կու տային ժամանակին մէկ ժամը գտնելու համար, որպէս զի կարող ըլլային իրենց նեղութեանց ճար մ'ընել. բայց այդ ժամը գտնելիք չ'ունին բնաւ: Երկինքը իրաւ լաց չի կայ, բայց թէ որ երանելիք կարենային լալ, այս բանս միայն կու լային, թէ իրենց կեանքին մէջ ատեն կորուսեր են, որով աւելի փառք վաստակիլ կրնային, և թէ այդ ժամանակը մէյմ'ալ պիտի չ'ունենան: Բենեդիկտեան կոյս մը մեռնելէն ետև երևցաւ փառաք մէկու մը ու ըսաւ՝ թէ ամէն կերպով ուրախ և գոհ եմ, բայց թէ որ կարենայի բանի մը բաղձալ, այս միայն կ'ուզէի որ նորէն աշխարհ դառնայի ու նեղութիւն քաշէի՝ որպէս զի աւելի փառք վաստակէի. և սիրով յանձն կ'առնուի այն ցաւալի հիւանդութիւնը զոր մահուանս ատեն քաշեցի, ինչուան դատաստանին օրը քաշել, որպէս զի այնչափ փառք ալ վաստակէի, որչափ կրնայ վաստակուիլ՝ ողջոյն մ'ըսելով:

Հապա դու, ով եղբայր, ինչ բանի կը

ծախես քու ժամանակդ։ Ինչո՞ւ այն բանն զոր այսօր կրնաս ընել վաղուան միշտ կը ձգես։ Մտածէ որ անցուցած ատենդ մէյ-մ'ալ քուկդ չէ, գալիքն ալ քու ձեռքդ չէ. ներկայ ժամանակը միայն ունիս բարի գործ ընելու։ Ուստի, կ'ըսէ սուրբն Բեռնարդոս, թէ ո՞վ ողորմելի ի՞նչ կը վստահիս ապագային, որպէս թէ Աստուած ժամանակը քու ձեռքդ տուած ըլլար։ Ի՞նչպէս կրնաս վաղուան օրը դու քեզի խոստանալ, երբ գիտես թէ և ոչ ժամ մ'ալ կեանքդ ձեռքդ չէ։ Ուստի վճռաբար կ'ըսէ սրբուհին Թերեզա, թէ որ այսօր մեռնելու պատրաստ չես, վախցիր որ չարաչար պիտի մեռնիս։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Աստուած իմ, գոհանամ զքէն, որ ինձ ատեն տուիր իմ անցուցած կեանքիս անկարգութեան ճար մ'ընելու։ Թէ որ այս վայրկենիս մեռնելու ըլլայի, իմ մեծ ցաւերուս մէկն ալ այս կ'ըլլար թէ ժամանակս կորուսեր եմ։ Ո՜հ տէր, դուն ինձ ժամանակ տուիր զքեզ սիրելու համար, իսկ ես զայն զքեզ վշտացընելու ծախեցի։ Ես արժանի էի որ դժոխք ղրկէիր զիս այն առաջին վայրկենէն, որ քեզ երես

դարձուցի. այլ դու զիս յապաշխարութիւն կոչեցիր և ներեցիր ինձ։ Ես խոստացայ որ ալ զքեզ չի վշտացընեմ. բայց քանի քանի անգամ ետ կեցայ խոստմունքէս, անիրաւեցայ քեզ դէմ. սակայն դու նորէն թողութիւն տուիր ինձ։ Օրհնեալ ըլլայ յաւիտեան քու ողորմութիւնդ. և թէ որ անբաւ չ'ըլլար ի՞նչպէս կրնայիր ինձ համբերել։ Ո՞վ կրնար այնչափ երկայնամիտ ըլլալ ինձ, ինչպէս որ դուն եղար. ո՞վ թէ որչափ կը ցաւիմ որ այսպիսի բարի և բարերար Աստուածս վշտացուցի։ Սիրելիդ իմ փրկիչ, սուսկ քու երկայնմտութիւնդ՝ որով ինձ համբերեցիր, բաւական էր զիս վառել բոլորովին ի սէր քո։ Ուստի կ'աղաչեմ, մի՞ թողուր որ ես նորէն ապերախտ ըլլա՛ քու սիրոյդ. բաժնէ զիս ամէն բանէ, և ձգէ բոլորովին ի սէր քո։ Զեմ ուզեր, Աստուած իմ, քաւ լիցի, ասկից ետև ժամանակս վատնել, որ իմ ըրած չարեացս ճար ընելու համար կուտաս ինձ։ Ցուր ինձ սուրբ յարատևութիւն։ Կը սիրե՛ զքեզ անբաւ բարութիւն, և կը յուսամ սիրել յաւիտեան։ Շնորհակալ եմ քեզմէ, տիրամայր Մարիամ, դու բարեխօս եղար ինձ համար այսչափ ժամանակ ունենալու. հիմայ ալ օգնէ ինձ, և տուր որ բովանդակ այս ժամանակս ծախեմ ի սիրել զքո միածինդ իմ փրկիչս, և զքեզ, ով թագուհի և մայր իմ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ժամանակին պէս անդին բան չիկայ, բայց անոր պէս ալ աշխարհիս մարդկանց առջև յարգ չ'ունեցող և անարգ սեպուած բան չիկայ։ Ինչպէս կ'ըսէ սուրբն Բեռնարդոս ալ, թէ ժամանակին պէս մեծագին բան չիկայ, բայց անոր պէս ալ խոտան սեպուած բան չիկայ։ Դարձեալ կ'ըսէ, թէ փրկութեան օրերը կ'անցնին, և ոչ ոք կը մտածէ թէ իւր օրերը կ'երթան կը կորսուին ու մէյմ'ալ դառնալիք չ'ունին։ Տես սա խաղցող մարդը, որ գիշեր ցորեկ խաղալով ատեն կը կորսընցընէ, հարցուր իրեն թէ ինչ է ըրածդ։ Պատասխան կու տայ քեզի թէ ատեն կ'անցընենք։ Տես սա միւսն ալ որ թափառական ասդին անդին կը պտրտի, փողոցներուն մէջ կը կենայ անցուորդները տեսնելու, ափեղցրփեղ կամ անչահ բաներ կը խօսի. հարցուր իրեն, թէ ինչ կ'ընես, կ'ըսէ թէ ատեն կ'անցընեմ։ Ո՛վ խեղճ ողորմելի կուրեր, որ այդչափ օրեր կը կորսընցընէք, բայց այնպիսի օրեր որ մէյմ'ալ չեն դառնար։

Ով երեսէ ձգուած ժամանակ, դու պիտի ըլլաս աշխարհասէր մարդկանց ամենէն աւելի ցանկալի բանը մահուան ժամանակ։ Այն ատեն պիտի ցանկան, պիտի խնդրեն տարի մ'ալ, օր մ'ալ, բայց պիտի չի գտնեն, և պիտի ըսեն այն ատեն ալ ժամանակ չի կայ։ Այն ատեն ասոնք ինչ չեն տար որպէս զի գէթ ժամանակէն շաբաթ մ'ալ ձեռք ձգեն, օր մ'ալ գտնեն որ կարող ըլլան խղճմտանաց համարը շտկել։ Սուրբ Լաւրենտիոս Յուստինեանին ըսածին պէս՝ թէ մէկ ժամու համար հարստութիւններն ալ, փառք պատիւներն ալ, փափկութիւններն ալ կու տային։ Բայց այդ ժամը իրենց պիտի չի տրուի. քովի քահանայն իրեն պիտի ըսէ՝ շուտ ըրէ, շուտ ըրէ, ելիր ելիր աշխարհէս, ալ ատեն չի կայ։

Անոր համար սուրբ գիրքը մեզի այս խրատը կու տայ, թէ յիշէ քու արարիչդ քանի որ արեգակն ու լուսինը չեն խաւարեր[1]։ Ինչ նեղութիւն է ճամբորդի մը՝ թէ որ ճամբայէն մոլորած զինքը տեսնէ, գիշերն ալ վրայ հասնի, որ ատեն չի կայ ճար ընելու։ Այսոր պէս նեղութիւն և ցաւ կ'ըլլայ մահուան ատեն՝ անոր որ շատ տարի աշխարհիս վրայ կեցեր է բայց ժամանակը Աստուծոյ համար չէ ծախեր, վասն զի գիշերը կը կոխէ՝ որ ատեն մարդ չի

1 Յիշեա զարարիչն քո մինչ չեւ խաւարեալ իցէ արեգակն և լուսին։ Ժող. ԺԲ. 1. 2։

կրնար գործել[1]։ Այն ատեն մահն իրեն համար գիշեր կ'ըլլայ, բան մը չի կրնար ընել։ Այն ատեն խղճմտանքը իրեն կը յիշեցընէ թէ որչափ ատեն ունեցաւ, և զայն ի վնաս հոգւոյն ծախեց. որչափ ներքին ազդարարութիւններ, որչափ շնորհքներ ընդուներ է յԱստուծոյ սուրբ ըլլալու, և չէ ուզեր շահեցընել զանոնք. մէյմ'ալ ինչ կը տեսնէ, բարի գործ ընելու ճամբան ալ գոցուած է։ Ուստի լալով պիտի ըսէ. ահ ինչպէս խենթ եմ եղեր, ահ մեղք կորսընցուցած ատենիս, ափսոս կեանքիս որ կորուսի, վախ կորսուած տարիներուս՝ որոց մէջ սուրբ կրնայի ըլլալ ու չեղայ, հիմայ ալ ըլլալու ատեն չի կայ։ Բայց ինչ բանի կու գան այդ դանդատները, այդ ախուվախը այն վայրկենին որ կենաց տեսարանին վարագոյրը գոցուելու վրայ է, լապտերը մարելու մօտ է, հոգեվարքն ալ մօտ է այն ահաւոր վայրկենին, ուսկից կախուած է յաւիտենականութիւնն։

1 Գայ գիշեր՝ յորում ոչ ոք կարէ գործել։ Յովհ. Թ. 4։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ փրկիչ իմ Յիսուս, դու բոլոր կեանքդ տուիր զիս փրկելու համար. չեղաւ վայրկեան մը կեանքիդ մէջ զոր չը նուիրես երկնաւոր հօրդ ինձ համար, որպէս զի թողութիւն առնում, և յաւիտենից կեանքը ժառանգեմ. իսկ ես որ այսչափ տարի ուխտարհիս մէջ եմ, ինչ ըրեր եմ քեզի համար։ Ահ, ինչ որ ալ ըրած եմ, բոլորն ալ իմ խղճմտանքիս բեռն են. չարը միշտ շատ է, բարին խիստ քիչ, այն ալ ի անկատարութեամբ, գաղջութեամբ, և ցնդմունքներով։ Ահ փրկիչ իմ, բոլորն ալ այդպէս է, վասն զի չէի յիշեր, թէ դուն որչափ բան ըրեր ես ինձ համար։ Ես զքեզ մոռցայ, դու զիս չի մոռցար. դու շատ անգամ իմ ետեւէս եկար երբ ես քեզմէ կը փախչէի, և շատ անգամ զիս կանչեցիր առ քու սէրդ։ Ահա, փրկիչ իմ, ես պատրաստ եմ. մէյմ'ալ չեմ ուզեր քեզի դէմ կենալ, չեմ ուզեր սպասել որ երեսէ ձգես զիս։ Պատրաստ եմ, ով ծայրագոյն բարի, հեռու կենալ ամէն մեղքէ։ Կը սիրեմ զքեզ, անբաւ բարիդ, որ արժանի ես անհուն սիրոյ։ Ո՛հ, մի թողուր որ ես զքեզ մէյմ'ալ քու ողորմութեամբդ

ինձ տուած ժամանակդ կորսընցնեմ։ Կ'աղաչեմ զիս միշտ յիշէ, սիրելի փրկիչ իմ, և ինձ յիշեցուր քու սէրդ՝ զոր ինձի ցուցիր, շարշարանքդ՝ զոր ինձի համար քաշեցիր։ Մոռցընել տուր ինձ ամէն բան, որպէս զի ուրիշ բան չի մտածեմ մնացած կենացս մէջ, բայց միայն զքեզ սիրել և կամքդ կատարել։ Կը սիրեմ զքեզ, սէր իմ Յիսուս, և ամենայն բարիդ իմ. խօսք կու տամ որչափ որ խելքս վրաս ըլլայ՝ սիրոյ ներգործութիւններ ընեմ քեզի։ Տուր ինձ սուրբ յարատեւութիւն։ Բոլորովին ապաւինած եմ յարդիւնս տեառնդ իմոյ և ի սուրբ արիւնդ։ Վստահ եմ քու բարեխօսութեանդ ալ, ով սիրական մայր իմ Մարիամ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Գնացէք քանի որ լոյսը ձեզի հետ ունիք[1]։ Պէտք է որ Աստուծոյ ճամբուն մէջ քալենք, քանի որ կենդանի ենք և լոյս ունինք, որ մահուան ատեն կը կորսընցընենք, վասն զի այն ժամանակը պատրաստուելու ատեն չէ, հապա պատրաստ

1 Գնացէք մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք։ Յովհ. ԺԲ. 35։

գտնուելու ատեն է։ Մահուան ատեն կարելի չէ բան ընել. եղածն եղած է։ Թէ որ մէկուն լուր գար, թէ քիչ ատենէն դատաստան կայ իւր կենաց վրայ, կամ բոլոր ունեցածին վրայ, ինչպէս կ'արտորար աղէկ փաստաբան մը գտնելու որ դատաւորներուն հասկըցընէ իւր պատճառները, և իւր կողմը բռնէ։ Հապա մենք ինչ կ'ընենք, որ ստոյգ գիտենք թէ քիչ ատենէն, կրնայ ալ ըլլալ՝ ամէն ժամ մեր վրայ դատաստան պիտի ըլլայ ամենէն մեծ բանի համար, որ է յաւիտենից փրկութիւնը, և ժամանակ կը կորսընցնենք։

Կրնայ մէկն ըսել, թէ ես դեռ երիտասարդ եմ, կամաց կամաց զիս Աստուծոյ կու տամ։ Անոր ըսելու է, թէ տէրն մեր անիծեց անպտուղ թզենին, որ դեռ ատենն ալ չէր պտուղ տալու. վասն զի թզոյ ժամանակն ալ չէր, կ'ըսէ աւետարանը, որով ուզեց փրկիչն մեր հասկըցընել մեզի թէ մարդս ամէն ատեն, նաև երիտասարդութեան ատենն ալ բարեգործութեան պտուղ պիտի ունենայ, թէ ոչ անէծքի տակ կ'իյնայ, ու չի կրնար ետքն ալ պտուղ տալ։ Այսկէ ետքը մարդ քեզմէ պտուղ չ'ուտէ յաւիտեան, ըսաւ տէրն մեր այն ծառին. նմանապէս կ'անիծանէ զայն մարդը զոր կոչեր է և նա դէմ կը կենայ։ Սոսկալի բան. սատանան քիչ ժամանակ կը սեպէ բոլոր մեր կենաց ա-

տենը, ուստի վայրկեան մ'ալ չի կորսընցներ զմեզ փորձելէն։ Ուստի թշնամին որ ատեն չի կորսընցներ զմեզ կորսընցընելու համար, հապա մենք կորսընցրնե՞նք մեր ժամանակը զմեզ փրկելու համար։

Մէկն ալ կրնայ ըսել, թէ ես ի՞նչ գէշ բան կ'ընեմ. վայ քեզ, գէշ բան չէ՞ ատեն կորսընցընել խաղերով, անչահ խօսակցութեամբք որ շահ մը չեն ըներ հոգւոյդ։ Աստուած անոր համար ատեն տուեր է քեզի, որպէս զի կորսընցընես. չէ, վասն զի քեզի տուած ամէն վայրկեաններուն համար ալ պատասխան պիտի ուզէ։ Այն մշակները, զոր կը յիշէ սուրբն Մատթէոս, շարիք մը չէին ըներ, միայն դատարկ կենալով ատեն կը կորսընցընէին. ուստի այգւոյ տէրը զիրենք յանդիմանեց ըսելով, թէ ինչու ցորեկն ի բուն դատարկ կեցեր էք[1]։ Դատաստանին օրը Քրիստոս տէրն մեր մեզմէ համար պիտի պահանջէ ամէն դատարկ խօսքի համար։ Այն ժամանակն որ Աստուծոյ համար ծախսուած չէ՝ կորսուած ժամանակ է։ Սուրբն Բեռնարդոսի ըսածին պէս՝ այն ամէն ժամանակն որ Աստուծոյ վրայ չի մտածեցիր, գիտցիր, որ քեզի համար կորսուած է։ Ուստի այսպէս կը

1 Ընդէ՞ր կայք սատ զօրս ցերեկ դատարկք։ Մատթ. Ի. 6։

խրատէ զմեզ սուրբ գիրքը, թէ ինչ որ կրնաս ընել ըստ կարի ըրէ, վասն զի գերեզմանն ուր պիտի երթաս՝ ոչ խորհուրդ կայ, ոչ գիտութիւն և ոչ իմաստութիւն[1]։ Սրբակրօն կոյս մը կ'ըսէր, թէ սուրբերուն կենաց մէջ վայրաւան օր չի կայ. վաղը մեղաւորներուն կենաց մէջն է, որ միշտ կ'ըսեն՝ քիչ մը ետքը, քանի մը օրէն, և այսպէս մահը վրայ կը հասնի։ Անհաւասիկ հիմայ է ժամանակ ընդունելի[2]։ Այսօր թէ որ իրեն ձայնը լսէք, մի՛ խստացունէք ձեր սիրտը[3]։ Աստուած զքեզ կը կանչէ այսօր այս բարի գործը ընելու՝ մէկէն այսօր ըրէ, վասն զի վաղը կրնայ ըլլալ որ ժամանակ ըլլայ կամ չ'ըլլայ, կամ թէ Աստուած զքեզ ա՛լ չի կանչէ։

Եւ թէ որ առաջ քու դժբախտութեամբդ ատենդ կորուսեր ես զԱստուած վշտացնելով, նայէ որ լաս անոր վրայ մնացած կենացդ մէջ, ինչպէս առաջադրեց Եզեկիա թագաւորն ալ, թէ բոլոր տարիներս ի դառնութիւն անձին իմոյ

1 Որ ինչ գտցէ ձեռն քո գործել, որչափ ի կարի քում իցէ գործեսջիր. զի ոչ է խորհուրդ և գիտութիւն և իմաստութիւն ի դժոխս յոր դու երթալոցն ես։ Ժող. Թ. 10։

2 Անհաւասիկ ժամանակ ընդունելի։ Բ. Կորն. Ա. 2.

3 Այսօր եթէ ձայնի նորա լսիցէք, մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր։ Սաղմ. ՂԴ. 8։

կարգեց[1]։ Աստուած քեզի հիմայ կեանք կու տայ որ կորսուած ժամանակիդ ճարը տեսնես. գնեցէք ժամանակը ըսելով, վասն զի չարութեան օրեր են[2]. ուր կ'ըսէ սուրբն Անսելմոս, թէ ժամանակը կը գնես թէ որ ընես այն բանն զոր զանց ըրիր ընելու։ Սուրբն Հերոնիմոս սրբոյն Պողոսի համար կ'ըսէ. թէ թէպէտ և առաքելոց յետինն եղաւ, բայց արդեամբք առաջինն եղաւ այն բաներով զոր դարձէն ետև ըրաւ։ Ուրիշ բան ալ չ'ըլլայ, մտածենք թէ ամէն վայրկեան կրնանք մեծ մեծ վաստակ ընել յաւիտենական բարեաց։ Թէ որ ըսէի քեզի թէ այնչափ գեանի տէր կ'ըլլաս՝ որչափ որ կրնաս օր մը քաղել, կամ այնչափ ստակ կը վաստըկիս՝ որչափ որ կրնաս համրել մէկ օրուան մէջ, ինչ կ'ըսես. ինչ ջանք չէիր ըներ։ Արդ կրնաս դուն ամէն վայրկեանի մէջ յաւիտենական գանձ վաստակիլ, հապա ինչու ժամանակդ կը կորսընցընես։ Որ բանն որ այսօր կրնաս ընել, մի ըսեր թէ վաղը կրնամ ընել այդ բանը. վասն զի այսօր որ կորուսիր, այ չի դառնար։ Սուրբն Փրանկիսկոս Բորճեան երբ ուրիշներն աշխարհի

1 Կարգեաց զամենայն ամս իմ ի դառնութիւն անձին իմոյ։ Ես. ԼԸ. 15։

2 Գնեցէք զժամանակս, զի աւուրքս չարութեան են։ Եփես. Ե. 16։

վրայ կը խօսէին՝ ինքն առ Աստուած կը դառնար սուրբ իղձերով, այնպէս որ երբ ետքն իրենայ կը հարցընէին իւր կարծիքը, չէր գիտեր թէ ինչ ըսէ։ Ասոր համար երբ գինքը մեղադրեցին՝ ըսաւ, թէ աւելի կ'ընտրեմ տխմար երևիլ՝ քան թէ ատենս փուճ անցնել։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Զէ, Աստուած իմ, չեմ ուզեր ասկից ետև ատենս կորսընցնել, զոր ինձ կու տաս քու ողորմութեամբդ։ Ես հիմայ դժոխքը պիտի ըլլայի, ու անօգուտ տեղ արցունք պիտի թափէի. չնորհակալ եմ որ կեանքս երկընցուցիր. ուստի կ'ուզեմ մընացած օրերս քեզի համար միայն ապրիլ։ Թէ որ հիմայ դժոխքն ըլլայի, յուսահատ և անվախճան պիտի լայի. արդ կ'ուզեմ հիմայ լալ դքեզ վշտացնելուս վրայ. և գիտեմ որ այս լալուս համար թողութիւն կու տաս ինձ. որովհետև մարգարէն ալ այսպէս կ'ապահովցընէ, թէ լալով լացաւ, եթէ ինձ ողորմեցաւ, քեզ ալ կ'ողորմի[1]։ Թէ որ դժոխքն ըլլայի ալ դքեզ պիտի չի

1 Լալով եղայ, եթէ ողորմեաց ինձ, և ողորմեսցի քեզ։ Ես. Լ. 19։

կրնայի սիրել, ուստի հիմայ կը սիրեմ զքեզ և կը յուսամ յաւիտեան սիրել։ Թէ որ գժոխքը ըլլայի՝ ալ չէի կրնար քու շնորհքդ խնդրել, բայց հիմայ կը լսեմ որ կ'ըսես ինձ թէ՝ խնդրեցէք և առնուցուք։ Ուրեմն քանի որ շնորհք կրնամ խնդրել, այս երկու շնորհքը կ'ուզեմ քեզմէ, Աստուած հոգւոյ իմոյ, տուր ինձ յարատեւութիւն ի շնորհս քո, և քու սէրդ տուր ինձ, անկէ ետև ինչ որ կ'ուզես զիս ըրէ։ Տուր որ բոլոր մնացած կենացս մէջ միշտ զիս քեզի յանձնեմ, Յիսուս իմ, ըսելով՝ տէր օգնէ ինձ, տէր գթա և ողորմէ ինձ. տուր որ մէյմ'ալ զքեզ չի սրդողցնեմ. տուր որ զքեզ սիրեմ։ Ամենասրբուհիդ Մարիամ, մայր իմ, շնորհք առ ինձ համար միշտ զիս Աստուծոյ յանձնելու, յարատեւութիւն և իւր սուրբ սէրը խնդրելու։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԲ.

ՓՐԿՈՒԹԻՒՆՆ ՈՐՉԱՓ ՄԵԾ ԲԱՆ Է

Կ'աղաչենք զձեզ, եղբարք, որ ամենմարդ իւր գործը հոգայ[1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Աստուածպէս մեծ բան է յաւիտենական փրկութիւնը, և մեզի ուրիշ ամէն բաներէն աւելի հարկաւոր է. և սակայն ամէն բաներէն աւելի ասոր անհոգ են քրիստոնեայք։ Ամէն փոյթ կ'ընեն, ատեն ալ չեն կորսընցներ որ շահաւոր աստիճան մ'ելնեն, դատաստանի մէջ յաղթեն, հարստնիք ընեն. և որչափ կը մտածեն, որչափ ջանք կ'ընեն այս բաներուս։ Ոչ կերակուրնին կերակուր է, ոչ քուներնին քուն է, աշ-

1 Աղաչեմք զձեզ, եղբարք... գործել զիւրաքանչիւր զիւր գործ։ Ա. Թեսաղ. Դ. 10. 11։

քերնուն բան մը չերևիր։ Իսկ յաւիտենից փրկութիւնը ապահովցընելու համար ինչ կեանք կը վարեն։ Բան մ'ալ չեն ըներ. մանաւանդ ամէն բան կ'ընեն, որպէս զի զայն կորսընցնեն. և քրիստոնէից մեծ մասը այնպէս կ'ապրի որպէս թէ մահ, դատաստան, դժոխք, արքայութիւն և յաւիտենականութիւն՝ հաւատոց հշմարտութիւնք չ'ըլլային, այլ բանաստեղծից առասպելք։ Թէ որ դատաստան մը, երկրի մը բերքը, եկամուտ մը կորսընցընեն, այն ինչպէս տակնուվրայ կ'ըլլան, ինչ ջանք չեն ըներ, որ եղած վնասը կարկըտեն։ Թէ որ ձի մը կամ շուն մը կորսընցընեն, ինչ փոյթ չեն ըներ որ գտնեն։ Իսկ հնարքը կը կորսուի եղեր՝ քուն կ'ըլլան, կատակ կ'ընեն, կը ծիծաղին։ Այն ինչ մեծ բան է. ամէն մարդ կը խպնի անհոգ ըսուելու աշխարհի բաներու մէջ. անդին շատերը ամենևին չեն ամբչնար յաւիտենականութիւնը ապահովցընելու անհոգ ըլլալնուն որ ամեն բանէ վեր է։ Իրենք ալ խելացի կը կոչեն զսուրբերը, վասն զի բոլոր խելքերնին բանեցուցեր են փրկուելու համար միայն. այսու ամենայնիւ իրենք ամէն խելքերնին կու տան աշխարհիս ուրիշ բաներուն, բայց ի հոգեւորէն։ Լայէ ինչ կ'ըսէ սուրբն Պօղոս. կ'աղաչենք զձեզ եղբարք, կ'ըսէ, որ ամէն մարդ իւր գործը հոգայ, այսինքն իւր

հոգւոյն յաւիտենական փրկութիւնը՝ որ ամէն բանէ վեր է։ Ուրեմն մտքերնիս դընենք թէ մեր ամենէն հարկաւոր և շահաւոր բանը մեր փրկութիւնն է։ Այս է մեր բուն և մէկ հատիկ գործն, որուն ճար ճարակ չ'ըլլար թէ որ սխալինք։

Ամէն բանէ վեր է ըսինք. վասն զի հետևանքը շատ մեծ է, վասն զի բանը հոգւոյ վրայ է, որ եթէ կորսուի՝ ամէն բան կորսուած է։ Պէտք է որ մեր հոգին անգին սեպենք և մեծագին քան զամէն աշխարհիս բարիքը. առած է սրբոյն Ոսկեբերանի, թէ հոգին աւելի կ'արժէ քան զամէն աշխարհիս բարիքը։ Այս ապէկ հասկընալու համար հերիք է որ գիտնանք, թէ Աստուած իւր միածին որդին մատնեց ի մահ, որ մեր հոգին փրկէ, ինչպէս կ'ըսէ աւետարանն՝ այնպէս սիրեց Աստուած զաշխարհ մինչև իւր միածին որդին տըւաւ[1]։ Իսկ առաքեալը կ'ըսէ թէ դուք ձեր տէրը չէք, վասն զի գնով գնուեցաք[2]։ Ուստի սրբոց հարց մէկը կ'ըսէ, թէ այնչափ ծանրագին եղաւ մարդուս գինը, որ կարծես թէ մարդս Աստուծոյ չափ կ'արժէ եղեր։ Ասոր համար տէրն մեր ալ ը-

1 Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ մինչև զորդին իւր միածին եաւ։ Յովհ. Գ. 16։

2 Ձէք անձանց տէր, քանզի գնոց գնեցայք։ Ա. Կորն. Զ. 19. 20։

սաւ թէ ինչ կրնայ տալ մարդ փոխանակ անձին իւրոյ՝։ Արդ եթէ այսչափ կ՚արժէ մարդուս հոգին, աշխարհիս որ բարիքին հետ կրնայ փոխել զայն կորսընցընելով։

Իրաւունք ունի եղեր սուրբն Փիլիպպոս Ներեան խենթ կոչել զայն մարդը՝ որ չինչնար հոգին փրկել։ Թէ որ աշխարհիս վրայ ոմանք մահկանացու ըլլային, ոմանք անմահ, ու մահկանացուները տեսնէին որ անմահները բոլորովին աշխարհիս բաներուն կը զբաղին՝ որ փառք պատիւ շահին, գրասանլներ ձեռք ձգեն, անտարակոյս կ՚ըսէին, այ խենթեր, դուք որ կրնաք յաւիտենական բարիք շահիլ, ինչ եռևէ ընկեր էք անցաւոր և չնչին բաներու, որով դուք զձեզ կը դատապարտէք անդին ի յաւիտենական տանջանս. թող տուէք որ մենք խեղճերս մտածենք երկրաւոր բարիքը, որ մահուան ատեն մեզի համար ոմէն բան կը վերջանայ։ Բայց մենք ամէնքս անմահ ենք. հապա ինչպէս կ՚ըլլայ որ շատերն այս աշխարհիս փուճուճուճ հաճոյից համար հոգինին կը կորսընցընեն։ Այդ ինչպէս կ՚ըլլայ, կ՚ըսէ Սալվիանոս, որ քրիստոնեայք կը հաւատան, թէ դա-

1 Զինչ տացէ մարդ փոխանակ անձին իւրոյ։ Մատ. ԺԶ. 26։

տաստան կայ, դժոխք կայ, յաւիտենականութիւն կայ, ու ետքը անոնցմէ անվախ կ՚ապրին։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՜հ Աստուած իմ, ինչ բանի ծախեցի այն տարիներն որ ինձ տուիր յաւիտենական փրկութիւնս հոգալու համար։ Դու, փրկիչ իմ, գնեցիր իմ հոգիս քու արիւնովդ, և ետքը ինձ յանձնեցիր որ հոգ տանիմ զայն փրկելու. իսկ ես ուրիշ հոգ չըրի, բայց եթէ զայն կորսընցընել զքեզ վշտացընելով՝ որ զիս այնչափ սիրեցիր։ Շնորհակալ եմ, որ դեռ ատեն կու տաս ինձ, որպէս զի կարենամ ճար ընել այս պիսի մեծ վատթարութեանս, որով հոգիս ալ կորուսի, քու գեղեցիկ շնորհքդ ալ։ Արդ մեծապէս կը ցաւիմ և կը զղջամ բոլորով սրտիս։ Կ՚աղաչեմ, թող ինձ, ես ալ կ՚առաջադրեմ այս օրէս ետև ամէն բան կորսընցընել, կեանքս ալ՝ քան թէ քու բարեկամութիւնդ։ Կը սիրեմ զքեզ ամէն բարութենէ վեր, և կ՚ուզեմ միշտ սիրել, ով ծայրագոյն բարի, որ արժանի ես անհուն սիրոյ։ Օգնէ ինձ, փրկիչ իմ Յիսուս, որպէս զի այս իմ առաջադրութիւնս ուրիշ գիտաւորութեանցս նման չ՚ըլլայ, ո-

ռոնք բոլոր իմ կողմանէս մէյմէկ մատնութիւն էին։ Տուր ինձ մեռնիլ քան թէ նորէն դառնալ զքեզ վշտացընել, և քու սէրդ թողուլ։ Ով Մարիամ, յոյս իմ և ապաւէն, դու զիս պահէ և յարատևութեան շնորհք սա՛ ինձի համար։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Յաւիտենական փրկութիւնը չէ թէ միայն մեծ բան է, հապա նաև մէկ հատիկ գործն որ ունինք այս կեանքիս մէջ, այս է միայն։ Սուրբն Բեռնարդոս քրիստոնէից անխելքութեան վրայ կու լայ որ տղոց ըրածը տխմարութիւն խենթութիւն կը կոչեն, և իրենց երկրաւոր բաները մեծ գործի տեղ կը դնեն։ Տղոցը՝ խաղալիք կը կոչեն; մեծերունը՝ մեծ բանի տեղ կը սեպեն. մեծերուն այս խենթութիւնն աւելի մեծ խենթութիւն է։ Ի՞նչ ըսաւ տէրն մեր, թէ ի՞նչ օգուտ է մարդուս բոլոր աշխարհս շահիլ ու ինքզինքը կորսընցընել[1]։ Թէ որ փրկուիս, ով եղբայր, հոգ չէ թէ այս երկրիս վրայ աղքատ ես եղեր, նե-

1 Ի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ։ Մատ. ԺԱ. 26։

ղութիւն և անարգանք քաշեր ես եղեր, զքեզ որ փրկես, ալ վախ չի կայ, երջանիկ կ'ըլլաս յաւիտեան։ Հապա թէ որ ոտքդ սահի ու դատապարտուիս, ի՞նչ շահ կ'ընեն քեզի դժոխքին մէջ քու աշխարհիս վրայ ունեցած զբօսանքներդ, հարուստ ու փառաւոր ըլլալդ։ Հոգիդ կորսուածին պէս՝ կորսուած են քու ամէն զբօսանքներդ, փառքդ, պատիւդ ու փարթամութիւնդ և ամէն բան։

Ի՞նչ պատասխան պիտի տաս Քրիստոսի համար տալու օրդ։ Թէ որ թագաւոր մը պատուէր տայ իւր դեսպանին՝ որ երթայ երևելի բան մը հոգայ քաղաքի մը մէջ, իսկ նա իրեն յանձնուած բանին խելքը տալու տեղ՝ ուտելու, խմելու, պարելու միայն նայի, այնպէս որ եթէ բանը գէշ երթայ ի՞նչ պատասխան պիտի տայ թագաւորին ետ դարձած ատեն։ Հապա ի՞նչ մեծ համար ունի տալու երկնաւոր թագաւորին դատաստանին օրը այն մարդն՝ որ երկրիս վրայ դրուած է չէ թէ հարստանալու, և փառք պատիւ ստանալու, հապա իւր հոգին փրկելու. իսկ ինքն ամէն բանի հոգ ունեցեր է բայց ի հոգւոյն։ Աշխարհասէրք ներկան կը մտածեն միայն, ապագային չեն նայիր։ Սուրբ Փիլիպպոս Ներեան օր մը Հռոմ տաղանդաւոր երիտասարդի մը հետ խօսելով՝ որ բոլորովին ինք զինքը աշխարհի տուած էր,

ըսաւ անոր. դնենք թէ տղաս, դու մեծ բաղդ և հարստութիւն՝ կիսի ունենաս, աղէկ փաստաբան պիտի ըլլաս, քահանայ պիտի ըլլաս, ծիրանաւոր ալ պիտի ըլլաս, գուցէ պապ ալ ըլլաս, աղէկ՝ բայց ետքը ետքը։ Վերջէն ըսաւ անոր. դնա մտածէ այս ետքի երկու բառիս վրայ։ Երիտասարդը տուն դարձաւ, ու այս խօսքերուն վրայ կը մտածէր՝ ետքը ետքը։ Աստուած Թողուց իր աշխարհային զբաղմունքն ու աշխարհս ալ բոլոր, և գնաց նոյն սուրբ Փիլիպպոսին կրօնքը մտաւ, ու սկսաւ Աստուծոյ ճամբուն միայն խելքը տալ։

Մէկ հատիկ ընելու գործերնիս է հոգինիս հոգալ. վասն զի հոգի մը միայն ունինք։ Թագաւորին մէկը բան մը խնդրեց Բենեդիկտոս երկոտասաներորդ պապէն, որ չէր կրնար առանց մեղաց ներելի, ուստի այս պատասխանը տուաւ դեսպանին. ըսէ Թագաւորիդ, որ եթէ երկու հոգի ունենայի, կրնայի մէկը կորսընցընել իրեն սիրոյն համար, և միւսն պահել ինձ համար. բայց որովհետև մէկ հատիկ հոգի մ'ունիմ, չեմ կրնար և չեմ ուզեր զայն կորսընցընել։ Սուրբն Փրանկիսկոս Քսաւերեան կ'ըսէր, թէ բարիք մը միայն կայ աշխարհիս վրայ, և չարիք մը միայն, մէկ հատիկ բարիքն է փրկուիլ, և մէկ հատիկ չարն է դատապարտութիւնն։ Շատ անդամ կ'ըսէր սրբուհին Թերեզա իր կու-

սանքներուն, թէ ով քորք իմ, հոգի մը կայ, և յաւիտենականութիւն մը։ Կ'ուզէր ըսել, թէ հոգի մ'ունինք, թէ որ այն ալ կորսուի, ամէն բան կորսուած է։ Ուստի Դաւիթ ալ իւր աղօթքին մէջ կ'ըսէ, թէ բան մը խնդրեցի Աստուծմէ և նոյնը կ'աղաչեմ, Աստուծոյ տան մէջ բնակիլ[1]։ Իսկ առաքեալն կ'ըսէ, թէ ահով ու դողով իւրաքանչիւր ձեր փրկութիւնը գործեցէք[2]։ Ով որ չի վախնար չի դողար՝ չի փրկուիր. ուստի փրկուելու համար պէտք է աշխատիլ, ու ինք զինքը բռնադատել. երկնից արքայութիւնը կը բռնաբարի և բռունք կը յափշտակեն զայն, կ'ըսէ տէրն մեր։ Եթէ փրկութիւններս կ'ուզենք՝ պէտք է որ մահուան ատեն մեր կեանքը Քրիստոսի փրկչին մերոյ կենացնման ղընուի. որ յառաջագոյն սահմանեց կերպարանակից ըլլալ իւր որդւոյն պատկերին[3]։ Ուստի պարտական ենք մէկ կողմանէ մեղաց առիթներէն փախչել, միւս կողմանէ ալ փրկութեան հասնելու հարկաւոր միջոցները բանեցընել։ Սուրբն Բեռնար-

1 Զմի խնդրեցի ի տեառնէ և զսոյն աղաչեմ, բնակել ինձ ի տան տեառն։ Սաղմ. ԻԱ. 4։

2 Ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք։ Փիլ. Բ. 12։

3 Յառաջագոյն սահմանեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյն իւրոյ։ Հռովմ. Ը. 29։

դոս կ'ըսէ, թէ արքայութիւնը դատարկապորաններուն չի տրուիր, հապա Աստուծոյ ծառայութեան մէջ արժանապէս աշխատողներուն։ Ամէնքը փրկուիլ կ'ուզեն առանց նեղութիւն մը քաշելու։ Շատ մեծ բան, կ'ըսէ սուրբ Օգոստինոս, այնչափ կ'աշխատի սատանան և քուն չ'ըլլար զմեզ կորսընցնելու. իսկ դու քու յաւիտենական շահուդ կամ վնասուդ համար այդպէս անհոգ կեցեր ես։ Թշնամիք կը տքնին և դու կը քնանաս։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Աստուած իմ, գոհանամ զքէն, որ ինչուան այս ժամս կը թողուս զիս որ կենամ քու ոտքիդ առջև, և ոչ ի դժոխս՝ որուն շատ անգամ արժանի եղեր եմ։ Բայց ինչ շահ ինձի քու պարգևած կեանքէդ, թէ որ ես առանց քու շնորհացդ ապրիլս շարունակեմ։ Ա՜հ, Աստուած չ'ընէ։ Ես քեզի երես դարձուցի, զքեզ կորուսի, ով իմ ծայրագոյն բարիս. կը ցաւիմ բոլոր սրտանց այս ըրածներուս վրայ, երանի թէ հազար անգամ մեռած ըլլայի քան թէ քեզ դէմ երես դարձնէի։ Ես զքեզ կորուսի, բայց մարգարէդ կը ծանուցանէ ինձ, թէ բարերար է Աստուած համբերողներուն վրայ. և ով որ զինքը կը փընտռէ կը գտնէ։ Եթէ առաջ ես քեզմէ կը փախչէի, ով իշխան և թագաւոր սրտի իմոյ, հիմայ զքեզ կ'ուզեմ, և քեզմէ զատ ուրիշ բան չեմ փնտռեր։ Կը սիրեմ զքեզ բոլոր սրտով, ընդունէ զիս և մի՛ անարժան համարիր սիրելի ըլլալու այն սրտին՝ որ ատեն մը զքեզ անարգեց։ Ուստ ինձ առնել զկամս քո, ուստ ինձ քու հաճոյքդ կատարել, զոր ամէն կերպով կ'ուզեմ ընել։ Ո՛վ փրկիչ իմ Յիսուս, փրկէ այս հոգիս՝ որուն համար արիւնդ թափեցիր և կեանքդ տուիր. և զիս փրկելդ ըլլայ ինձի շնորհք տալդ որ միշտ զքեզ սիրեմ հոս ալ անդին ալ։ Այսպէս կը յուսամ քու արդիւնքներովդ. և այսպէս կը յուսամ քու բարեխօսութեամբդ, տիրամայր կոյս։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Հարկաւոր բան, մէկ հատիկ բան, այնպիսի բան՝ որուն ետքէն ճար չի կրնար ըլլալ։ Սրբոյն Եւքերիոսի ըսածին պէս՝ ամէն սխալանքէն վեր է յաւիտենից փրկութեան բանը չհոգալն։ Ուրիշ ամէն սխալանաց ճար մը կրնայ ըլլալ. թէ որ մէկը իւր հագուստը կորսընցընէ, ուրիշ ճամբով մը կրնայ ձեռք բերել. թէ որ մէ-

կը իւր աստիճանը կորսընցընէ, ճար կ'ըլլայ նորէն ձեռք բերելու. նոյն իսկ թէ որ մէկը կեանքը կորսընցընէ՝ բայց փրկուելու ըլլայ, ամէն բան տեղը կ'երթայ։ Բայց մէկն որ դատապարտուի, այ ճար ճարակ չի կայ, մի անգամ կ'ըլլայ մեռնիլ. եթէ հոգին մէյմը կորսուի, յաւիտեան կորսուած է. մի անգամ կորսուիլն՝ յաւիտեան կորսուիլ է։ Ուրիշ բան չի մնար, բայց եթէ յաւիտեան լալ ողբալ խենթերու հետ ի դժոխս, ուր է ամենէն մեծ հոգետանջ պատիժը՝ գիտնալ թէ իրենց համար լմնցած է իրենց թշուառութեանց դեղ մ'ընելու ատենն։ Մարգարէին ըսածին պէս՝ հունձքերն անցան, ամառն անցաւ, և մենք չի փրկուեցանք[1]։ Հարցուր աշխարհիս այն իմաստնոց՝ որ հիմայ այն կրակի փոսին մէջ են, հարցուր թէ հիմայ ինչ խելքի վրայ են, գո՞հ են որ երկրիս վրայ բաղդ չիներ են, ստակ ունեցեր են, երբ հիմայ յաւիտենից բանտը կապուած են։ Ականջ դիր, ինչպէս կու լան ու կ'ըսեն, ուրեմն մոլորեցանք։ Բայց ի՞նչ բանի կու գայ հիմայ իրենց ըրած խենթութիւնն ու մոլորութիւնը ճանչնալնին՝ երբ ալ ճար չի կայ յաւիտեան դատապարտութենէ խալըսում գտնելու։ Ի՞նչ

1 Անցին հունձք, անց ամառն, և՝մեք ոչ փրկեցաք։ Երեմ. Ը. 20։

ցաւ կ'ըլլայ երկրիս վրայ այն մարդուն՝ որ երբ քիչ ծախքով կրնար ճար մ'ընել, որ իւր պալատը չի կործանի, ետքը օր մը տեսնէ որ փլեր ընկեր է, ու իւր անհոգութեան վրայ այն ատենն անդրադառնայ որ ալ ճար ընել չ'ըլլար։

Այս է դատապարտելոց աւելի մեծ ցաւը՝ մտածել թէ հոգինին կորուսին, և իրենց յանցանաց համար դատապարտեցան։ Ապականութեանդ ատեն, ով Իսրայէլ, կ'ըսէ Աստուած, ով է որ օգնէ պիտի քեզ[1]։ Սրբուհին Թերեզա կ'ըսէր, թէ երբ մէկն իւր անհոգութեամբ լաթ մը, մատնի մը, կամ չնչին բան մը կորսընցընէ հանգիստ չ'ըլլար, չ'ուտեր չի քընանար. հապա ի՞նչ սոսկալի ցաւ կ'ըլլայ դատապարտեալ անձի մը՝ դժոխք իջած վայրկեանը, երբ տեսնէ զինքը այն տանջանաց բանտին մէջ գոցուած, և քանի որ կը մտածէ՝ թէ յաւիտեան ճար ճարակ չկայ ազատելու։ Այն ատեն պիտի ըսէ, վայ գլխոյս որ ես ինքիրմէս հոգիս կորուսի, արքայութիւնն ալ զԱստուած ալ կորուսի յաւիտեան։

Մէկը թէ որ ըսէ, թէ ես այս մեղքս ընելով՝ ինչո՞ւ պիտի դատապարտուիմ, կրնայ ըլլալ որ այնպէս ալ փրկուիմ, այն-

1 Ցապականութեան քում, Իսրայէլ, ո՞վ էր որ օգնիցէ քեզ։ Ովսէ. ԺԳ. 8։

պիւռոյն ըսելու է, թէ կրնայ ալ ըլլալ որ դատապարտուիս, և մանաւանդ գիւրաւ դատապարտուիս, վասն զի սուրբ գիրքն դատապարտութիւն կը սպառնայ մատնիչներուն, խստասիրտներուն, ինչպէս որ դուն ալ այս բանիս մէջ այնպէս ես. վայ ձեզ, ապստամբ որդիք, կ'ըսէ Աստուած[1]: Նոյն իսկ այդ մեղքովդ զոր կ'գործես՝ մեծ վտանգի ու տարակուսի մէջ չես դներ քու յաւիտենական փրկութիւնդ, և խելք է արդեօք զքեզ այսպիսի վտանգի մէջ ձգելդ: Ոսկերերանին ըսածին պէս՝ բանը տան մը, այգւոյ մը, կամ աստիճանի մը համար չէ, հապա ի յաւիտենական տանջանս ընկնալու վրայ է, յաւիտենից արքայութիւնը կորսընցնելու վրայ է. և այսպիսի մեծ բանի մը համար ի՞նչպէս կրնաս ըսել, թէ գուցէ կրնայ ըլլալ որ փրկուիմ:

Կ'ըսես թէ ո՞վ գիտէ, գուցէ չեմ դատապարտուիր, յուսամ որ եռբը Աստուած ինձի կը ներէ, բայց երբ. երբ արդէն դու գլեզ դժոխք դատապարտած ըլլաս: Ով խելացի, դու զքեզ խորունկ հորի մը մէջ կը ձգէիր, ըսելով՝ թէ գուցէ չեմ մեռնիր. չէ կ'ըսես, չէի ձգեր: Հապա ի՞նչպէս կրնաս քու յաւիտենական փրկութիւնդ կութընցնել այսպիսի խա-

1 Վայ ձեզ, որդիք ապստամբք: Ես. Լ. 1:

խուտ յուսոյ մը վրայ, ըսելով՝ գուցէ, ով գիտէ: Ահ, օրշաբ մարդիկ այդ անիծած յուսով դատապարտուած են: Ձեզ գիտեր որ խստասիրտ եղող մեղաւորաց յոյսը յոյս չէ, հապա խաբէութիւն և յանդգնութիւն է, որ զԱստուած ոչ եթէ ի գութ կը շարժէ, այլ ի մեծագոյն բարկութիւն: Թէ որ հիմայ կ'ըսես վստահութիւն չունիմ դէմ կենալու փորձութեանց և կրից՝ որ վրադ տիրեր են, ի՞նչպէս ետքը դէմ պիտի դնես, երբ ուժդ երթալով կը նուազի մեղաց սովորութեամբդ: Վասն զի այն ատեն մէկ կողմանէ հոգիդ աւելի կը կուրանայ ու կը խստանայ չարութեամբ, և միւս կողմանէ Աստուծոյ օգնականութիւնը կը պակսի: Ի՞նչ կը կարծես, յոյս ունիս որ Աստուած քեզի լոյս և ներշնչութիւն աւելցընէ, երբ դու մեղքերդ այնչափ շատցուցեր ես:

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՜վ փրկիչ իմ Յիսուս, յիշեցուր ինձ միշտ մահդ՝ զոր ինձ համար յանձն առիր, և անով սիրտ և ապաւինութիւն տուր ինձ: Կը վախնամ որ չ'ըլլայ թէ մահուանս ատեն սատանան ջանայ զիս յու-

սահատութեան մէջ ձգել այնչափ գործած մեղքերուս համար. քանի անգամ խօսք տուի զքեզ չի վիտացընել քեզմէ այսչափ լոյս ունենալէս ետև, և վերջը նորէն դարձայ ու երես դարձուցի յուսով թողութեան։ Որովհետև դու զիս չի պատժեցիր, անոր համար ես քեզի դէմ անիրաւեցայ. ուրչափ ինձ ողորմեցար, ես այնչափ զքեզ անարգեցի. տուր ինձ, փրկիչ իմ, սաստիկ ցաւ իմ մեղքերուս վրայ՝ քանի որ այս կեանքէս չեմ բաժնուած։ Կը զղջամ կը ցաւիմ, ով ծայրագոյն բարի, ըրածներուս վրայ։ Կը խոստանամ որ այս օրէս ետև հազար անգամ մեռնիմ քան թէ մէյմ՛ալ զքեզ թողում. միայն թէ տուր ինձ ալ լսել առ Մագդաղենացին ըսածդ, թէ թողեալ լիցին քեզ մեղք քո, տալով ինձ սաստիկ ցաւ մը յանցանացս վրայ մահուանէս առաջ. թէ ոչ կը վախեմ որ մահս ինձի շատ անհանգիստ և թըշուառ պիտի ըլլայ։ Այն վերջին վայրկեանս, ով Յիսուս իմ, խնայէ ինձ, զիս երեսէդ մի ձգեր։ Թէ որ մեղքերս չի լացած ու զքեզ չի սիրած մեռնելու ըլլամ, այն ատեն քու վէրքերդ և քու արիւնդ ինձ աւելի վախ պիտի տան քան թէ մըխիթարանք և վստահութիւն. ուստի մնացած կեանքիս մէջ ինձ երկրաւոր մխիթարութիւն չեմ ուզեր, այլ ցաւ և սէր

կը խնդրեմ։ Լսէ ինձ, քաղցր փրկիչ իմ, այն սիրոյն համար որով կեանքդ զոհեցիր ինձ համար Գողգոթա լեռան վրայ։ Մարիամ, մայր իմ. խնդրէ ինձ համար այս շնորհքները, միանգամայն և սուրբ յարատևութիւն մինչև ի մահ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԳ.

ԱՇԽԱՐՀԻՍ ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆՆ

Ի՞նչ օգուտ է մարդուս եթէ բոլոր աշխարհս շահի, ու ինք զինքը կորսընցնէ [1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Արիստիպպոս հին փիլիսոփաներէն մէկը ծովով համբայ ընելու ատեն նաւաբեկութիւն քաշելով՝ ամէն բանը կորսընցուց, բայց ցամաքն որ ելաւ, որովհետև համբաւաւոր մարդ էր իւր գիտութեամբ, այն երկրի մարդիկը զինքը հոգացին, և ինչ որ կորուսեր էր տուին իրեն։ Ուստի թուղթ մը գրեց հայրենիքը իւր բարեկամ-

1 Զինչ օգտիցի մարդ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ։ Մատթ. ԺԱ. 26։

ներուն և ըսաւ որ՝ իրեն պէս այն բաները միայն հոգան, որ նաւաբեկութեամբ ալ չեն կորսուիր։ Այսոր պէս ալ մեզի անդի աշխարհէն մեր ազգականներն և բարեկամներն կ՚իմացընեն որ այս կեանքիս մէջ այն բաները միայն հոգանք՝ որ մահուամբ ալ չեն կորսուիր։ Մահուան օրն սուրբ գրոց մէջ կ՚ըսուի օր կորստեան. վասն զի այն օրը պիտի կորսուին այս աշխարհիս ամէն բարիքը, փառք, պատիւ, հարստութիւն։ Ուստի կ՚ըսէ սուրբն Ամբրոսիոս, թէ մերը չեն այն բաներն՝ որ հետերնիս չենք կրնար տանիլ, առաքինութիւնը միայն հետերնիս կը մնայ։

Ուրեմն Քրիստոսի տեառն մերոյ ըսածին պէս՝ ինչ օգուտ է մարդուս եթէ բոլոր աշխարհս ալ շահի, որ մահուան ատեն հոգին կորսընցնելով ամէն բան ալ պիտի կորսընցնէ։ Գիտես թէ այս աքանչելի սկիզբս որչափ աշխարհիս կտրիճները առաւ վանքերը տարաւ փակեց, որչափ ճգնաւորներով անապատները լեցուց. որչափ մարտիրոսներու կեանքերն Քրիստոսի համար դնել տուաւ։ Այս խօս ովս սուրբն Իգնատիոս Լայոլեան շատ հոգիներ առ Աստուած որսաց, մանաւանդ այն գեղեցիկ հոգին սրբոյն Փրանկիսկոսի Քսաւերեան, որ Փարիզ աշխարհի մտածութեանց մէջ զբաղեր էր։ Օր մը սուրբն Իգնատիոս ըսաւ ասոր. Փրանկիսկոս, մէջ-

մը մտածէ որ աշխարհս մատնիչ մ'է, կը խոստանայ ու չի կատարեր. բայց թէ և խոստացածը կատարելու ալ ըլլայ, դարձեալ չի կրնար քու սիրտդ գոհ ընել։ Դը-նենք թէ գոհ կ'ընէ, բայց ո՞րչափ պիտի դիմանայ այս երջանկութիւնդ, քու կեանքդ աւելի կրնայ դիմանալ. հապա մեռնելու ատենդ ի՞նչ պիտի տանիս հետդ ի յաւիտենականութիւն. արդեօք հարուստ մարդ մ'եղե՞ր է որ իւր հետ անդին ստակ կամ ծառայ մը տանի. թագաւոր մ'եղե՞ր է որ հետը ծիրանիէն թել մ'ալ տանի իւր պատիւը ցուցնելու համար։ Այս խօսքերով թողուց զաշխարհ սուրբն Փրանկիսկոս, որբոյն Իգնատիոսի ետևէն գնաց ու սուրբ եղաւ։ Սողոմոն կ'աղաղակէ այս աշխարհիս ամէն բարեաց համար. Ունայնութիւն ունայնութեանց. այն ալ ամէն բան փորձելէն ետև, ինչպէս որ ինքը կը վկայէ։ Մարգարիտա կարմեղական կոյսն, որ Հռոտուլփոս երկրորդ կայսեր աղջիկն էր, կ'ըսէր թէ ի՞նչ բանի կու գան թագաւորութիւնք մահուան ժամուն։ Այս ի՞նչ մեծ բան է. սուրբերը կը գողան երբ իրենց յաւիտենից փրկութեան բանն որ կը մտածեն։ Կը սարսափէր հայրն Պօղոս Սենիերի, ու մեծ վախով կը հարցնէր իւր խոստովանահօր՝ թէ ի՞նչ կ'ըսես, հայր պատուական, արդեօք ես կը փրկուի՞մ։ Կը գողար սուրբն Անդրէաս Աւելի-

նեան, ու յորդ արցունք կը թափէր ըսելով՝ արդեօք կը փրկուի՞մ։ Այս մտածմունքով այնպէս կը տանջուէր սուրբն Լուիճի Պէրտրանտոյ, որ գիշերները վախով մահիճէն վեր կը ցաթկէր ըսելով, հապա թէ դատապարտուի՞մ։ Ուրեմն մեղաւորներն որ դատապարտութեան որդիք են, ի՞նչպէս քուն կ'ըլլան, կ'ուրախանան ու կը ծիծաղին։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Գոհանամ զքէն, Յիսուս փրկիչ իմ, որ ինձ ճանչնալ կու տաս իմ խենթութիւնս և իմ չարիքս, որ քեզի դէմ երես դարձուցեր եմ, որ ինձ համար արիւն ես թափեր, կեանքդ տուեր ես։ Այսպէս կը վայելէր ինձ որ քեզ հետ վարուէի, քաւ լիցի. հապա թէ մահը հիմայ վրայ հասներ, ի՞նչ կը գտնէի քովս՝ եթէ ոչ մեղք, խղճմտանաց խայթ, որ շատ անհանգիստ մեռնել կու տային ինձ։ Ով փրկիչ իմ, կը խոստովանիմ որ գէշ ըրի, չարաչար սխալեցայ զքեզ թողլով, ով ծայրագոյն բարիդ, աշխարհի փուճ զբօսանաց համար. մեղայ, կը զղջամ բոլոր սրտանց։ Ես կը խնդրեմ՝ այն ցաւերուն համար որով խաչին վրայ մեռար, տուր

ինձ իմ մեղքերուս վրայ սաստիկ ցաւ մը, որ լոյ ու ողբալ տայ ինձ մնացած կեանքիս մէջ այն անօրէնութեանցս վրայ որ քեզի դէմ ըրեր եմ։ Ո՜հ Յիսուս փրկիչ իմ, ներէ ինձ, թող ինձ, և ես ալ կը խոստանամ մէյմ՚ալ դքեզ չի վշտացընել, հապա միշտ զքեզ սիրել։ Իրաւ որ ես արժանի չեմ մէյմ՚ալ քու սիրոյդ, բայց դու ըսիր թէ ով որ զիս սիրէ ես ալ զինքը կը սիրեմ[1]։ Արդ ես կը սիրեմ զքեզ, դուն ալ զիս սիրէ կ՚աղաչեմ. չեմ ուզեր զիս մէյմ՚ալ քեզի հետ ուրուած տեսնել. ես կը հրաժարիմ յամենայն մեծութեանց, աշխարհիս հաճոյքներէն, միայն թէ դու զիս սիրես։ Հայր երկնաւոր Աստուած իմ, լսէ ինձ վասն սիրելւոյդ Յիսուսի Քրիստոսի օծելոյ քոյ. որ և բարեխօս իսկ է ինձ համար, որ զիս քու սրտէդ չի վանես։ Բոլորովին զիս քեզ կը նուիրեմ, քեզ կը յանձնեմ հոգիս ալ, մարմինս ալ, կամքս ալ, ազատութիւնս ալ. ընկալ զիս և մի մերժեր, ինչպէս որ արժանի եմ, որովհետև այսչափ անգամ ես մերժեր եմ քու բարեկամութիւնդ։ Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց։ Սուրբ կոյս մայր իմ Մարիամ, աղաչէ զՅիսուս ինձ համար. քու բարեխօսութեանդ բոլորովին ապաւինած եմ։

1 Եւ որ զիսն սիրէն՝ սիրեմ։ Առակ. Ը. 17։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Կչիռք անիրաւութեան ի ձեռս Քանանու[1]. բարիքը պէտք է Աստուծոյ կչիռքովը կշռել, չէ թէ աշխարհիս կչիռքով որ խաբեբայ է։ Աշխարհիս բարիքը շատ խեղճ բաներ են, որ զմարդ չեն կշտացըներ, ու չուտով կ՚անցնին կ՚երթան։ Յորոյ ըսածին պէս՝ թէ իմ կեանքս թեթեւագոյն է քան զսուրհանդակ, փախաւ ու չ՚երևցաւ[2]։ Այնպէս կը վազէ կ՚երթայ կեանքերնիս ալ, բոլոր աշխարհիս հաճոյքն ալ որ ետքը բան մը չի մնար, ինչպէս որ նաւն անցնելէն ետև հետքն ալ չի թողուր[3]։ Հարցընենք այն հարուստներուն, զրաղէտներուն, իշխանաց, թագաւորաց, կոյսերաց, որ հիմայ յաւիտենականութեան մէջ են, իրենց փառքէն, փարիսութենէն, մեծութենէն որ երկրիս վրայ վայելեցին՝ քովերնին ինչ կայ։ Ամենքը

1 Ովս. ԺԲ. 7.

2 Իմ կեանքս թեթեւագոյն են քան զսուրհանդակ, փախեան և ոչ երևեցան։ Յովբ. Թ. 25։

3 Իբրև զնաւ սահեալ ի ջուրց կուտակելոց, զորոյ, իբրև անցանիցէ՝ ոչ գոյ զհետան գտանել։ Իմաստ. Ե. 10։

միաբերան կ'ըսեն՝ ոչինչ, ոչինչ։ Ով մարդ, կ'ըսէ սուրբն Օգոստինոս, հոս ունեցածիդ կը նայիս, ի՞նչ պիտի տանիս հետդ՝ այն նայէ։ Դու կը նայիս միայն՝ թէ ի՞նչ ունի այն հարուստ մարդն, մէյմ'ալ նայէ թէ ի՞նչ կը տանի հետը, մեռածին պէս ի՞նչ կը մնայ, բայց եթէ հոտած դիակ մը, հետն ալ անպիտան քուրջ մը որ միատեղ փտի։ Աշխարհիս մեծամեծներն (որ կը մեռնին՝ հազիւ մէկ քանի օր կը յիշուին, քիչ մ'ատենէն վրանին խօսող ալ չի մնար, և այնպէս յիշատակնին կը կորսուի։ Հապա թէ որ այն ողորմելիները դժոխք երթան, հոն ի՞նչ կ'ընեն, ի՞նչ կ'ըսեն. ինչ պիտի ընեն, կու լան կ'ողբան՝ ըսելով թէ ի՞նչ շահ եղաւ հպարտութենէն, և ինչ օգուտ ըրաւ մեզի ամբարտաւանութեան մեծութիւն[1]. անցան այն ամէնը իբրև ստուեր. ուրիշ ի՞նչ բան մնաց, եթէ ոչ լաց, ողբ, պատիժ, և յուսահատութիւն յաւիտենական։

Որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց և իրենց երկրաւոր բաներուն մէջ։ Եւ յիրաւի, ինչ աշխատանք չեն ըներ որ այն աստիճանին հասնին, որ սա կամ նա

1 Զինչ շահ եղև մեզ հպարտութիւն, և զինչ մեծութիւն ամբարտաւանութեանն իցէ մեզ նըպաստաւոր։ Իմաստ. Ե. 8։

բանը ձեռք ձգեն. ինչ հոգ չեն տանիր մարմնոյ առողջութիւننին պահելու համար, ամենէն ապահով միջոցներ կ'ընտրեն, վարպետ բժիշկ, աղէկ դեղեր, աղէկ օդ։ Իսկ հոգւոյ համար այսպէս անհոգ են։ Տարակոյս չի կայ որ առողջութիւն ըսածդ ալ, աստիճան ըսածդ ալ, ստակն ալ, հագուստն ալ և ամէն փառքն ու պատիւ օր մը պիտի վերջանան. իսկ հոգին և յաւիտենականութիւնն անվերջ անվախճան են։ Սուրբն Օգոստինոս կ'ըսէ, թէ նայէ որչափ բան կը քաշեն մարդիկ իրենց սիրած ախտաւոր բաներուն համար։ Քինախընդիրն, գող աւազակն, մարմնապաշտն, իրենց չար դիտաւորութեանց հասնելու համար ի՞նչ չեն քաշեր. իսկ հոգւոյն համար բան մ'ալ քաշել չեն ուզեր։ Ահ տէր, այն ճրագն զոր մահուան ատեն կը վառեն, այն ժամանակ կ'ըսեմ ճշմարտութիւնը կը ճանչցուի, և այն ժամուն աշխարհասէրք կը խոստովանին իրենց խելագարութիւնը։ Այն ատեն ամէն մարդ կ'ըսէ. ա՜խ, թէ ամէն բանէն ետ կեցած ըլլայի, ու սուրբ եղած ըլլայի։ Լեոն ԺԱ. քահանայապետը մեռնելու ատեն կ'ըսէր, թէ ալ աւելի լաւ էր իմ վանքիս դռնապանն ըլլայի, քան թէ պապ։ Նոյնպէս Ոնորիոս Գ. մեռնելու ատեն կ'ըսէր, թէ ալ լաւագոյն էր որ վանքիս խոհանոցը կենայի ու ամանները լուայի։ Փիլիպպոս Բ

Սպանիոյ Թագաւորը մեռնելու մօտ կանչեց իւր որդին ու մկկդի ձգելով թագաւորական հագուստը՝ բացաւ ցցուց իւր կուրծքը զոր որդերը կրծեր էին և ըսաւ անոր. Թագաւորացու իշխան, զաւակս, նայէ ինչպէս կ'ըլլայ մեռնիլը, և ինչպէս կը վերջանան աշխարհիս մեծութիւններն։ Եւ սկսաւ հառաչելով ըսել. ախ, թէ աշխատաւոր եղբայր մ'ըլլայի կրօնի մը մէջ, քան թէ միահեծան թագաւոր։ Եւ վրէն շուանով փայտէ խաչ մը կախել տուաւ ու իւր մահուան բաները կարգաւորեց և դարձաւ տղուն ու ըսաւ. ուզեցի, որդեակ, որ դուն ալ այս բաներուս ներկայ ըլլաս, որպէս զի տեսնես՝ թէ աշխարհս մահուան ատեն ինչպէս կը վարուի թագաւորաց հետն ալ. այնպէս որ անոնց մահն ալ հաւասար է յետին ազքատի մը մահուան։ Վերջապէս՝ ով որ աղէկ կ'ապրի, աղէկ տեղ ունի Աստուծոյ քովն ալ։ Այն այս որդին ալ. որ Փիլիպպոս Գ ըսուեցաւ, իւր մեռնելու ատեն, որ 43 տարուան էր, ըսաւ իւր հպատակներուն՝ թէ իմ թաղմանս վրայ դամբանական խօսելու ատեն ուրիշ նիւթ մի առնէք, բայց միայն այս տեսարանս որ կը տեսնէք. ըսէք թէ թագաւոր ըլլալը մահուան ատեն ուրիշ բանի չի գար, բայց եթէ աւելի տագնապ բերելու։ Եւ հառաչելով մ'ըսաւ.

երանի թէ թագաւոր եղած չ'ըլլայի, հապա անապատի մը մէջ Աստուծոյ ծառայելով ապրած ըլլայի. վասն զի հիմայ մեծ յուսով կ'երթայի Քրիստոսի ատեանը յանդիման ըլլալու, և դատապարտութենէ այսչափ չէի վախնար։ Բայց այդ փափաքները մահուան ատեն ինչ օգուտ ունին, եթէ ոչ աւելի տագնապ և յուսահատութիւն բերելու անոր վրայ՝ որ իւր կեանքին մէջ գԱստուած չէ սիրած։ Անոր համար սրբուհին Թերեզա կ'ըսէր, թէ բանի տեղ պէտք չէ սեպել այն բանն՝ որ մարդու կեանքին հետ կ'անցնի. իսկագոյն կեանքն է այնպէս ապրիլ՝ որ ետքէն մահուանէ վախ չ'ունենայ։ Ուստի թէ որ կ'ուզենք տեսնել, թէ ինչ են երկրաւոր բարութիւնները՝ մէյմը նայինք մահուան մահճին մէջ եղողին, ու ետքը ըսենք՝ թէ պատիւն ալ, գրօսանքն ալ, հարստութիւնն ալ օր մը կը վերջանան. ուրեմն պէտք է նայիլ որ սուրբ ըլլանք, և այն բարիքներով միայն հարստանանք՝ զոր հետերնի սպիտի տանինք, և անոնցմով գոհ պիտի ըլլանք յաւիտեան։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ա.Հ փրկիչ իմ, դուն այնչափ չարչարանք և անարգանք քաշեցիր իմ սիրոյս համար, իսկ ես այնչափ սիրեցի երկրիս հաճոյքը, ծուխն ու մուխը ու ինչուան այս ունայնութեանցս համար շատ անգամ քու շնորհքդ ոտքի տակ առի։ Բայց երբ ես զքեզ կ'անարգէի, դու զանց չ'ըրիր քովս մնտենալու, հիմայ ևս առաւել չեմ վախնար որ զիս լքնտես, հիմայ որ ըզքեզ կը փնտռեմ և կը սիրեմ բոլորով սրտիս, և շատ կը ցաւիմ զքեզ դառնացընելուս համար։ Այսուհետ սրտի իմոյ, այս օրէս սկսեալ քեզի վիշտ մը տալ ալ չեմ ուզեր, որչափ ալ փոքր ըլլայ. հանչցուր ինձ թէ այս բանս թէ այն բանը քեզ անհաճոյ է, ես ալ չեմ ուզեր զայն ընել։ Գիտցուր ինձ թէ քեզի հաճոյանալու համար ինչ պէտք է ընեմ, ես պատրաստ եմ զայն ընելու։ Կ'ուզեմ ստուգապէս սիրել զքեզ։ Սիրով յանձն կ'առնում, տէր, ամենայն ցաւ, ամենայն խաչ, որ քու ձեռքէդ կու գայ. տուր ինձ պէտք եղած համակերպութիւնը։ Այսպէս կիզեա, աստ կտրեա, հոս զիս պատժէ, որպէս զի

անդին կարենամ յաւիտեան զքեզ սիրել։ Մարիամ, մայր իմ, զիս քեզ կը յանձնեմ, անդադար բարեխօսէ առ Յիսուս ինձ համար։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ժամանակը կարճ է, որոնք որ զաշխարհս կը վարեն, որպէս թէ չեն վայելեր, վասն զի աշխարհիս վայելչութիւնն անցեր է[1]։ Ի՞նչ բան է մեր կեանքն այս աշխարհիս վրայ, եթէ ոչ տեսարան մը որ կ'անցնի ու շուտով կը վերջանայ։ Ուստի վայելչութիւն աշխարհի ըսածնիս՝ տեսարան մը, սարսուած մ'է. ինչպէս Կուռնելիոս Ալարիտէ կ'ըսէ. թէ աշխարհս տեսարանի մը կը նմանի, ազգ երթայ և ազգ գայ։ Ով որ թագաւոր կը ձևանայ, իւր ծիրանին հետը չի տանիր։ Հարցուր գեղի մը կամ տան մը թէ քանի՝ տէր փոխեր է։ Տեսարանը լմնցածին պէս ալ թագաւորը թագաւոր չէ, իշխանն ալ իշխան չէ. հիմայ դուն ես տէր այն գեղին կամ պալա-

[1] Ժամանակս կարճեալ է... որ վարեն զաշխարհս, որպէս թէ չվայելիցեն. զի անցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ։ Ա. Կորն. Ե. 29 և 31։

տին, բայց մահդ որ կու գայ՝ ուրիշները տէր կ'ըլլան։

Մէկ ժամու չարիքը ամէն բարեկեցութիւն մոռցնել կու տայ, կ'ըսէ Սիրաք[1]։ Մահուան տխուր ժամն աշխարհիս ամենայն մեծութիւնները, փափկութիւնները, փառքն ու պատիւը մոռցնել կու տայ։ Կազիմիր Լեհաց թագաւորն որ օր մը իւր մեծամեծաց հետ սեղան նստեր էր, բերանը խմելու բան մը մօտեցուցած ատեն մեռաւ. այսպէս իրեն համար խաղին տեսարանը վերջացաւ։ Կելսոս կայսրն իւր ընտրութեան եօթներորդ օրը սպանուեցաւ, այսպէս իրեն ալ տեսարանը լմնցաւ։ Վլատիսլաւ Բոհեմիոյ թագաւորն՝ տասն ութ տարուան կտրիճ՝ երբ ամենայն փառաւորութեամբ կը պատրաստուէր Ֆրանսայու թագաւորին աղջիկը հարս առնելու՝ յանկարծ առաւօտ մը ցաւէ բռնուեցաւ ու մեռաւ. ուստի շուտով սուրհանդակները վազեցին խմացուցին եկող հարսին որ ետ դառնայ, վասն զի Վլատիսլաւի վարագոյրն ալ գոցուեցաւ ու տեսարանն ալ լմնցաւ։ Աշխարհիս ունայնութեան այս մտածութիւնը սուրբ ըրաւ զՓրանկիսկոս Բորճեան. որ ինչպէս ալ առաջ յիշեցինք, երբ տեսաւ Իզապէլլա

1 Չարիք միոյ ժամու մոռացումն առնէ բարեկեցութեան։ Սիր. ԺԱ. 29։

կայսրուհին մեռած այնչափ մեծութեանց մէջ՝ ծաղկեալ հասակով, առաջադրեց զինքը բոլորովին Աստուծոյ տալ ըսելով. ուրեմն այսպէս կը վերջանան եղեր աշխարհիս մեծութիւններն. ուստի ես այս օրէս ետև կ'ուզեմ այնպիսի տիրոջ մը ծառայել՝ որ չի կարենայ բնաւ մեռնիլ։

Նայինք այնպէս ապրիլ՝ որ մահուան ատեն չի լսենք աւետարանին այն յանդիմանութիւնը՝ թէ անմիտ, թէ որ այս գիշեր հոգիդ քեզմէ առնելու ըլլան, պատրաստածներդ ո՞ւմ պիտի ըլլան[1]։ Ուստի կ'ըսէ սուրբն Ղուկաս, թէ Նոյնպէս ով որ իրեն անձին համար կը գանձէ՝ Աստուծով չի հարստանար[2]։ Եւ վերջէ նալ կ'ըսէ թէ Ջանացէք երկինքը ձեզի գանձ ժողվելու ուր ոչ ցեց, և ոչ ուտիճ կրնան ապականել։ Ջանանք Աստուծոյ սիրոյն մեծ գանձը ձեռք ձգել, թէ չէ սուրբն Օգոստինոսին ըսածին պէս՝ ի՞նչ ունի հարուստ ըսուած մարդը, թէ որ սէր չ'ունի. ի՞նչ չ'ունի աղքատը, թէ որ սէր ունի։ Մէկն որ ամէն

1 Անմիտ յայսմ գիշերի զհոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն, և զոր պատրաստեցեր ո՞ւմ լինիցին։ Ղուկ. ԺԲ. 20։

2 Նոյնպէս և որ գանձէ անձին, և ոչ յԱստուած մեծանայցէ։ Անդ։

3 Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց, և ոչ ուտիճ ապականեն։ Մատթ. Զ. 20։

փարթամութիւն ունենայ ու զԱստուած չ'ունենայ, նա աշխարհիս ամենէն եւքի աղքատն է. իսկ աղքատն որ զԱստուած ունի՝ ամէն բան ունի։ Եւ ով է որ զԱստուած ունի՝ բայց եթէ աստուածասէրն. որ կայ ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, և Աստուած ի նմա բնակէ, կ'ըսէ սիրոյն աշակերտն [1]։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ա՜հ Աստուած իմ, չեմ ուզեր որ մէյմ'ալ սատանան իմ հոգւոյս վրայ տէրութիւն ունենայ. կ'ուզեմ որ դու միայն ըլլաս իմ իշխանս և թագաւորս. ես ամէն բան կը թողում. քու շնորհքդ վաստակելու համար. քու շնորհքդ ինձ աւելի մեծ է քան բիւր պսակ և բիւր թագաւորութիւն։ Եւ ով ունիմ սիրելու՝ եթէ ոչ ըզքեզ անհուն սիրելիդ, անհուն բարի, գեղեցկութիւն, բարութիւն, սէր անբաւելի։ Այսկէ առաջ ես զքեզ մէկդի թողուցի աբարածոց սիրոյն համար. այս բանս՝ է և միշտ պիտի ըլլայ ինձ մեծ ցաւ, որ սիրտս թափանցէ՝ զքեզ վշտացընելուս համար, որ զիս այնչափ սիրեցիր։ Բայց երբ դու,

1 Ա. Յովհ. Գ. 16։

Աստուած իմ, կապեցիր զիս այնչափ շնորհքներով, կը յուսամ որ մէյմ'ալ զքեզ սիրելէն զուրկ չեմ մնար։ Ա՜ռ, կ'աղաչեմ, ով տէր իմ, իմ բոլոր կամքս և իմ ամէն բանս, և ինչ որ կ'ուզես ըրէ ինձ։ Թէ որ առաջ տակնուվրայ եղայ ինձ զէմ եկած բաներուն համար, ներէ, ասկէց ետև չեմ ուզեր ալ գանգատիլ, տէր իմ, քու կարգաւորութեանցդ դէմ. գիտեմ որ բոլորն ալ սուրբ են և իմ բարւոյս համար են։ Աստուած իմ, ինչպէս որ քեզ հաճոյ է՝ ըրէ զիս, խօսք կու տամ որ միշտ գոհ կ'ըլլամ, և միշտ շնորհակալ կ'ըլլամ։ Ցուր որ զքեզ սիրեմ, ալ ուրիշ բան չեմ ուզեր։ Ի՞նչ են անցաւոր բարիքն, ի՞նչ են փառք և պատիւ, ի՞նչ է աշխարհս. իմ ստեղծողս կ'ուզեմ, զքեզ կ'ուզեմ, Աստուած իմ։ Երանելի ես, ով սուրբ կոյս Մարիամ, որ աշխարհիս վրայ ուրիշ բան չսիրեցիր, բաց յԱստուծոյ. շնորհք առ ինձ համար՝ որ գոնէ մնացած կեանքիս մէջ քեզ հետեւիմ։ Ի քեզ եմ ապաւինեալ, տիրուհի։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԴ.

ԱՅՍ ԿԵԱՆՔՍ

ԴԷՊ Ի ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ Մ'Է

Գնաց մարդ իւր յաւիտենական տունը [1]։

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Տեսնելով որ այս երկրիս վրայ այնչափ չար մարդիկ յաջողութեամբ կ'ապրին, և այնչափ արդար մարդիկ ընդ հակառակն նեղութեամբ կ'ապրին, հեթանոսք ալ բընական լուսով հասկըցան այս ճշմարտութիւնս, թէ երբ Աստուած կայ, և Աստուած արդար է, պէտք է որ ուրիշ կեանք մ'ալ ըլլայ, ուր ամբարիշտք պատժուին, և բարիները վարձատրին։ Արդ այն բանն զոր հեթանոսք բնական լուսով միայն ըսին, մեք քրիստոնեայքս հաւատով կը խոստովանինք՝ թէ ոչ եթէ քաղաք ունինք որ հոս մնայ պիտի, այլ հանդերձեալը կը խնդրենք [1]։

Այս երկիրս մեր հայրենիքը չէ, հապա անցնելու տեղ մ'է, ուսկից քիչ մ'ատենէն պէտք է որ անցնինք մեր յաւիտենական տունը երթանք. գնաց մարդ իւր յաւիտենական տունը։ Եթէ այնպէս է, ով սիրելի ընթերցող, այն տունն ուր հիմայ դու նստեր ես, քու տունդ չէ, հիւրանոց մ'է, ուսկից քիչ ատենէն, և մոքէդ չանցած ժամանակ պէտք է որ ելնես երթաս։ Գիտցիր որ երբ մահդ հասնի, քու ամենէն սիրականներդ ալ գքեզ տնէն վռընտել կը նային։ Այն ատեն ուր կ'ըլլայ քու ստոյգ տունդ։ Մարմնոյդ տունը պիտի ըլլայ փոս մը ինչուան դատաստանին օրը, իսկ հոգիդ պէտք է որ երթայ ի տունն յաւիտենից, կամ արքայութիւն և կամ դժոխք։ Ուստի կ'ըսէ քեզի սուրբն Օգոստինոս թէ հիւր ես, օտարական ես, կ'անցնիս կ'երթաս.

1 Գնաց մարդ է տուն իւր յաւիտենից։ Ժողով. ԺԲ. 5։

1 Քանզի ոչ եթէ ունիմք քաղաք որ աստէն մնալոց իցէ, այլ զհանդերձեալսն խնդրեմք։ Եբր. ԺԳ. 14։

խենթ պիտի ըլլար այն պանդուխտ օտա-
րականն որ երկրէ մ'անցնելու ատեն, ու-
զենար ծախել հոն իւր բոլոր ունեցած
չ'ունեցածը որ գեղ մը կամ տուն մը գնէ,
զոր քանի մը օրէն եւեւ պիտի թողու եր-
թայ։ Մտածէ, կ'ըսէ սուրբ վարդապետն,
որ այս աշխարհիս վրայ կեցած ես ճամ-
բորդի պէս, անցաւորի պէս, մի' կապեր
սիրտդ բանի մը, տես ու անցիր գնա, ջա-
նա աղէկ տուն մը գտնել, ուր միշտ պիտի
բնակիս։

Թէ որ գքեզ փրկես, երանի քեզ. սհ.
ինչ գեղեցիկ տուն է արքայութիւնն. բո-
լոր փառաւոր արքունիք թագաւորաց աշ-
խարհի, բոլոր անոնց հարուստ պալատնե-
րը՝ ախոռ մ'ալ չեն արքայութեան քաղա-
քին առջեւ, որ միայն կրնայ ըսուիլ քա-
ղաք կատարեալ վայելչութեամբ, քաղաք
թագաւորին մեծի, քաղաք Աստուծոյ
կենդանւոյ։ Հոն կ'ունենաս ամէն բան
ուզածէդ աւելի, ընկերութեամբ սրբոց,
սուրբ Աստուածածնի և Քրիստոսի Յի-
սուսի փրկչին բոլորից, առանց բանէ մը
վախնալու. մէկ խօսքով, կ'ըլլաս բոլոր ու-
զածներուդ ովկիանոսի մը մէջ, և այնպի-
սի ուրախութեան մէջ որ յաւիտեան կը
դիմանայ։ Եւ այս ուրախութիւնս այնպէս
մեծ պիտոր ըլլայ՝ որ բոլոր յաւիտենական-
նութեան մէջ ամէն օր քեզի նոր պիտի
երևի։ Աստ ներհակ թէ որ դատապար-

տուիս, վայ քեզ խեղճ ողորմելի. կ'ընկղմիս
կրակի և տանջանաց ծովի մէջ, յաւեա-
հատ, ամենուն երեսէ ձգած, և առանց
Աստուծոյ։ Այն ալ որչափ ատեն, հա-
րիւրներ, հազարներ եթէ անցնին տարի-
ները՝ կը վերջանայ կարծես քու պատիժդ.
ինչ կ'ըսեմ վերջանալ, հարիւրաւոր մի-
լիոններով տարիները և դարերը կ'անց-
նին, քու դժոխքդ դեռ միշտ նորէն կը
սկսի։ Ի՞նչ պիտի ըլլայ հազար տարին
յաւիտենականութեան առջև, երեկուան
օրուան պէս է որ անցաւ[1]։ Հիմայ կ ուզես
իմանալ թէ ուր պիտի ըլլայ քու տունդ
յաւիտանս յաւիտենից։ Հոն պիտի ըլ-
լայ՝ ուր որ դու զքեզ արժանի կ'ընես, և
դու քեզմէ կ'ընտրես քու գործերովդ։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ուրեմն տէր, տեսա իմ վարձքովս ար-
ժանի եղած տունս դժոխքն է, վայ ինձ.
ուր որ առջի մեղքս ընելէն ետեւ քու երե-
սէդ պիտի ինկնայի, առանց յոյս ունենա-
լու մէյմ'ալ զքեզ սիրելու։ Օրհնեալ է յա-
ւիտեան քու ողորմութիւնդ, որով ինձ

1 Հազար ամ յաչս տեառն որպէս օր երեկի զի էանց։ Սաղմ. ՁԹ. 4։

երկայնամիտ եղար, և ատեն տուիր ճար ընելու իմ չարեացս. օրհնեալ է արիւն փրկչին իմոյ, որ այս ողորմութիւնս ինձ համար ընել տուաւ։ Ո՛տէր, քաւ լիցի որ մէյմ՚ալ չարաչար գործածեմ քու համբերութիւնդ։ Կը զղջամ այն չարեացս վրայ որովք զքեզ դառնացուցի, ոչ այնչափ դժոխքի արժանի ըլլալուս համար, որչափ քու անբաւ բարութիւնդ ոտքի տակ առնելուս համար։ Քաւ լիցի մէյմ՚ալ այդ բանն ընել. աւելի մեռնիլ կ՚ուզեմ, քան թէ զքեզ վշտացընել։ Ո՛վ ծայրագոյն բարի, թէ որ հիմայ դժոխքը գտնուէի, ոչ ես կրնայի մէյմ՚ալ զքեզ սիրել, և ոչ դու կրնայիր մէյմ՚ալ զիս սիրել։ Արդ կը սիրեմ զքեզ և կ՚ուզեմ որ քեզ ալ սիրելի ըլլամ։ Իրաւ որ ես արժանի չեմ այս բաներս, բայց արժանի է փրկիչն իմ Յիսուս Քրիստոս, որ զինքը քեզի պատարագեց խաչին վրայ։ Հապա, հայր երկնաւոր, վասն սիրոյ միածնիդ, տուր ինձ շնորհք զքեզ սիրելու միշտ, և քեզի սիրելի ըլլալու։ Կը սիրեմ զքեզ, ով հայր իմ, որ ինձ համար քու որդիդ տուիր։ Կը սիրեմ ըզքեզ, որդիդ Աստուծոյ, որ ինձ համար մեռար։ Կը սիրեմ զքեզ, մայր Յիսուսի, որ քու բարեխօսութեամբդ առիր ինձ համար ժամանակ ապաշխարութեան. հիմայ ալ, տիրամայր, առ ինձի ցաւ ի վերայ մեղացս, սէր առ Աստուած, և սուրբ յարատևութիւն։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Թէ որ փայտը հարաւ ինկնայ կամ հիւսիսի կողմն ինկնայ, ուր որ ինկնայ հոն կը մնայ[1]։ Քու հոգւոյդ ալ ծառը մահուան օրն ուր որ ինկնայ, յաւիտեան հոն կը մընայ։ Ուրիշ ճամբայ չ՚ունի, կամ յաւիտեան ի դժոխս, կամ միշտ երջանիկ յանսահման ծով փափկութեան, կամ միշտ յուսահատ ի խորխորատ տանջանաց։ Ասկերերան խորտկաճաշ մեծատան և աղքատ Ղազարոսին վրայ խօսելով կ՚ըսէ, ով ապերջանիկ երջանկութիւն, որ զմեծատունն քաշեց տարաւ ի յաւիտենական թշուառութիւն. ով երջանիկ ապերջանկութիւն, որ զաղքատն առաւ տարաւ ի յաւիտենական երջանկութիւն։

Ի՞նչ բանի կու գան այն սրտնեղուք մտածմունքներն, զոր ոմանք կ՚ընեն ըսելով. ո՞վ գիտէ, արդեօք փրկութեամն որդի եմ թէ կորստեան։ Այնպիսի մարդուն ըսելու է, թէ ծառն որ կը կտրուի ո՞ւր կ՚ինկնայ. հոն կ՚ինկնայ ուր որ ծռած է։ Դէպ ի

1 Եթէ անկցի փայտն ի հարաւ և կամ ի կողմն հիւսիսոյ, ուր անկցի փայտն՝ անդ կացցէ։ Ժող. ԺԱ. 3։

որ կողմ ծռած ես դուն ալ, եղբայր սի-
բելի. ինչ կեանք կը վարես. ինչպես միշտ
դեպ ի հարաւ ծռիլ, զքեզ Աստուծոյ շը-
նորհաց մէջ պահէ, մեղքէ փախիր, այս
կերպով կը փրկուիս, և այս կերպով ար-
քայութեան որդի կ'ըլլաս։ Մեղքէ ալ
փախչելու համար միշտ աչքիդ առջևն ըլ-
լայ յաւիտենականութեան մտածութիւ-
նը, զոր սուրբ Օգոստինոս մեծ խորհրդա-
ծութիւն կը կոչէ։ Այս մտածութիւնը որ-
չափ կտրիճներ շարժեց որ զաշխարհս թո-
ղուն, ու անապատներուն մէջ ապրին,
որպէս զի միայն իրենց հոգին հոգան, և
այսպէս ապահովցուցին իրենց հոգին։
Մէյմ' որ փրկութեան հասնին՝ յաւի-
տեանս յաւիտենից գոհ կ'ըլլան։

Ազնուական տիկին մը որ Աստուծմէ
հեռու կ'ապրէր՝ դարձի եկաւ հօրն Աւի-
լայի այս երկու խօսքով. խաթուն, այս
երկու խօսքս միայն մտածէ՝ միշտ և ոչ
երբէք։ Հայրն Պօղոս Սենիերի օր մը յա-
ւիտենականութեան մտածման այնչափ
խորը մտաւ որ շատ գիշեր քունը չէր տա-
նէր, որով անկէց ետև աւելի խստակեաց
կեանք մը սկսաւ վարել։ Տրեսելիոս կը
պատմէ. թէ եպիսկոպոս մը յաւիտենա-
կանութեան այս մտածութեամբս սուրբ
կեանք կը վարէր. ըսելով միշտ ինքն ի-
րեն, թէ ամէն վայրկեան յաւիտենակա-
նութեան դրան քով կեցած եմ։ Կրօնա-

ւորին մէկը փոսի մը մէջ փակուեցաւ և
հոն անդադար կը կանչէր, ով յաւիտե-
նականութիւն, ո՛ յաւիտենականութիւն։
Ով որ յաւիտենականութեան կը հաւա-
տայ ու սուրբ չ'ըլլար, կ'ըսէր դարձեալ
հայրն Աւիլա, պէտք է զինքը խեղթանոց
փակել։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏՆԵՐ

Ա՜հ, Աստուած իմ, գթա և ողորմէ ինձ,
ես արդէն գիտէի որ մեղք գործելով ինք
զինքս յաւիտենական տանջանաց կը դա-
տապարտէի, և այս ամէն տանջանքներն
ալ ճանչնալով դարձեալ քու կամացդ հա-
կառակեցայ. և ինչ բանի համար, չնչին
հաճոյք մը կատարելու համար։ Ով Աս-
տուած իմ, ներէ ինձ, վասն զի կը ցա-
ւիմ կը զղջամ բոլոր սրտանց. ասկէ ե-
տև չեմ ուզեր քու սուրբ կամացդ դէմ
բան մ'ալ ընել։ Վայ էր զլխոյս, թէ որ
վատթարութեանս ատեն մահ ղրկէիր
ինձ. հիմայ դժոխքին մէջ պիտի ըլլայի
յաւիտեան հոն կենալու, և քու կամքդ
ատելու։ Բայց հիմայ ես զքեզ կը սիրեմ,
և կ'ուզեմ միշտ սիրել։ Ասա ինձ առնել
զկամս քո, սորվեցուր ինձ և զօրութիւն
տուր որ ասկից ետև քու կամքդ կատա-
րեմ։ Չեմ ուզեր մէյմ'ալ քեզի հակառակ

կենալ. ով բարութիւն անսահման. այս շնորհքս քեզմէ միայն կը խնդրեմ, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. տուր ինձ որ միայն քու կամքդ ընեմ կատարելապէս, ալ ուրիշ բան չեմ ուզեր: Եւ ի՞նչ է քու ուզածդ, Աստուած իմ, բայց միայն իմ բարիքս, և իմ փրկութիւնս: Ո՛վ հայր երկնաւոր, լսէ ինձ վասն սիրոյ քու միածնիդ Յիսուսի Քրիստոսի, որ ինքն ինձի սորվեցուց այսպէս աղօթք ընել միշտ, ես ալ իրեն անուամբ կը խնդրեմ որ եղիցին կամք քո, եղիցին կամք քո, եղիցին կամք քո: Երանի ինձ թէ որ մնացած կեանքս քու կամքդ կատարելով ապրիմ ու լմնցընեմ: Երանի քեզ, տիրամայր, որ միշտ Աստուծոյ կամքս ըրիր կատարելապէս. ինձի համար ալ շնորհք առ արդիւնքովդ, որ գոնէ մնացած կեանքիս մէջ ես ալ զայն ընեմ:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Գնաց մարդ իւր յաւիտենական տունը. որով կ'ուզէ ըսել սուրբ գիրքը, թէ ամէն մարդ այն տունը կ'երթայ՝ ուր որ երթալ կ'ուզէ. չէ թէ ուրիշներէն հոն կը տարուի, հապա ինքն իւր կամքը կ'երթայ: Գիտենք որ Աստուած կ'ուզէ որ ամէն մարդ փրկուի, բայց չ'ուզեր զմեզ բռնադատել որ հարկաւ փրկուինք: Մարդուս առջև դրուած է կեանք և մահ, որուն որ հաւնի այնպիսի իրեն տրուի: Այն բանը կ'ըսէ և Երեմիա ալ՝ թէ Աստուած դիմացնիդ երկու ճամբայ դրեր է, մէկը կենաց միւսն մահուան. մէկը արքայութիւն կը տանի միւսն դժոխք: Ուստի բանը կը մնայ մեր ընտրելուն վրայ. որ ճամբան կ'ուզենք այն ճամբէն կ'երթանք: Բայց թէ որ մէկը դժոխքին ճամբան քալել կ'ուզէ, ի՞նչպէս կրնայ ետքը արքայութիւն հասած ըլլալ: Այս ի՞նչ խելքէ դուրս բան է. ամէն մեղաւոր փրկուիլ կ'ուզէ, բայց ետքը իրենք զիրենք դժոխք կը դատապարտեն, ըսելով թէ յուսամ որ կը փրկուիմ: Բայց սուրբ Օգոստինոսին ըսածին պէս՝ որ խենթը կայ որ թոյն խմէ՝ յուսալով որ կ'առողջանայ: Եւ սակայն քանի՞ քանի քրիստոնեայք կան որ ամէնն ալ մէյմէկ խենթ են, մեղքով իրենք զիրենք կը մեռցընեն ըսելով, թէ քիչ մը ետքը կը մտածեմ: Ո՛վ սոսկալի մոլորութեանս, որով անհամար հոգիք դժոխք գնացած են:

Մենք ալ այդ խենթերէն չենք, գիտնալով որ յաւիտենականութեան հետ է բանն և անփոյթ կեցեր ենք: Ո՛րչափ աշխատանք կը քաշեն մարդիկ իրենց դիւրութեան համար տուն մը գտնելու՝ որ աղէկ տեղ և հովահար ըլլայ, մտածելով որ

բոլոր կենացը մէջ հոն պիտի նստի. հապա
ետքը ի՞նչպէս այսպէս անհոգ կը շարժին
երբ բանն այն տան համար է՝ ուր որ յա-
ւիտեան պիտի կենան: Մեր բանը որուն
վրայ կը ճգնինք, յաւիտենականութիւնն
է, կ'ըսէ սուրբն Եւգերիոս: Բաներնիս
այնպիսի տան համար չէ որ քիչ մ'աւելի
կամ պակաս հանգիստ ըլլայ. հապա այն-
պիսի տեղ բնակելու համար է որ կամ ա-
մենայն զուարճութեամբ լի է և Աստու-
ծոյ բարեկամաց, կամ խորխորատ մ'է
տանջանաց և վատանուն խաժամուժնե-
րու, անթիւ անզգամաց, հերետիկոսաց
ու կռապաշտից, այն ալ անվախճան յա-
ւիտեան: Հոս է մեծ բանը, սոսկալի բա-
նը. այս քիչ ատենուան թեթև բան մը
չէ, հապա ամէն բանէն վեր է, և մեր ա-
մենայն բարին կամ չարն անկից կա-
խուած է: Երբ Հենրիկոս Ը ի մահ դա-
տապարտեց զԹովմաս Մոռոյ, այն ատեն
իրեն Լուիզա կինը գնաց զինքը համոզե-
լու որ Հենրիկոսին ուզածն ընէ. նա ալ
ըսաւ. ով Լուիզա, կը տեսնես որ ես ար-
դէն ծերացեր եմ. քանի՞ տարի ալ կրնամ
ապրիլ: Կինն ըսաւ, թէ քսան տարի մ'ալ
կրնաս ապրիլ: — Այն ատեն պատասխա-
նեց Թովմաս. ով անմիտ վաճառական,
կ'ուզե՞ս որ քսան տարուան համար կորսնը-
ցընեմ երանելի յաւիտենականութիւնը,

ու զիս դատապարտեմ յաւիտենական
տանջանաց:

Ո՛վ Աստուած, լոյս տուր ինձ. թէ որ
յաւիտենականութիւնը տարակուսական բան
մ'ըլլար, կամ սոսկ հաւանական կարծիք
մը, տակաւին ամենայն հոգւով պիտի ջա-
նայինք աղէկ կեանք ունենալ. որպէս զի
չի դնենք զմեզ ի վտանգ յաւիտենից թը-
շուառութեան՝ թէ որ յանկարծ այդ կար-
ծիքը ստոյգ ըլլար: Եւ սակայն այս բանս
կարծիքական բան չէ. ստոյգ բան է, և
ճշմարտութիւն հաւատոյ. գնաց մարդ իւր
յաւիտենական տունը: Ո՛վ արտասուելի
պակասութիւն հաւատոյ. այս է, կ'ըսէ
սրբուհին Թերեզա, պատճառ այնչափ
մեղաց, և դատապարտութեան այնչափ
քրիստոնէից: Հապա, միշտ կենդանի հա-
ւատքով ապրինք. հաւատանք ի կեանսն
յաւիտենականս. հաւատքս այս է, որ այս
կեանքէս ետև ուրիշ կեանք մը կայ ան-
վախճան, և այս մտածութիւնս միշտ աչքի
առջև ունենալով ապահովցրնենք մեր յա-
ւիտենական փրկութիւնը հարկաւոր մի-
ջոցներով: Անպակաս մերձենանք սուրբ
խորհրդոց, վտանգաւոր առիթներէն
փախչինք, ամէն օր մտածենք, և յաւի-
տենական կեանքը մոքերնէս չի հանենք:
Թէ որ աշխարհս ալ թողուլ պէտք ըլլայ՝
թողունք, վասն զի չի կայ այնպիսի ապա-

հովութիւն մը՝ որ հերիք ըլլայ ապահովցը-
նել յաւիտենական փրկութեան այս մեծ
բանը։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Եթէ այսպէս է, Աստուած իմ, ուրիշ
միջին ճամբայ մը չի կայ. կամ միշտ եր-
ջանիկ պիտի ըլլամ. կամ միշտ թշուառ.
կամ երջանկութեան ծովու մը մէջ պիտի
ընկղմիմ, և կամ ի ծով տանջանաց. կամ
յաւիտեան արքայութեան մէջ պիտի ըլ-
լամ քեզի հետ, կամ յաւիտեան քեզմէ
հեռու և բաժնուած ի դժոխս։ Եւ այդ
դժոխքին գիտեմ որ ես շատ անգամ ար-
ժանի եղայ. բայց այս ալ ստոյգ գիտեմ
որ դու կը ներես անոր որ կը զղջայ, և կը
փրկես դժոխքէն զապաւինեալս ի քեզ։
Դու կ'ապահովցընես զիս ըսելով. կար-
դասցէ առ իս, և ես լուայց նմա. փրկեցից
զնա, և փառաւոր արարից զնա։ Ուրեմն
շուտով, տէր իմ, շուտով ներէ ինձ, և դը-
ժոխքէն զիս խլեսլ։ Կը զղջամ, ով ծայ-
բագոյն բարի, ամէն չարեացս վրայ սրով
զքեզ վշտացուցի։ Շուտով զիս քու շնոր-
հացդ մէջ հաստատէ, սիրտ սուրբ հաս-
տատեա յիս Աստուած։ Թէ որ հիմայ դը-
ժոխքն ըլլայի, մէյմ'ալ զքեզ չէի կրնար

սիրել, այլ յաւիտեան պիտի ատէի. ահ
Աստուած իմ, ինչ չարիք ինձ ըրեր ես,
որ զքեզ ատէի։ Դու զիս սիրեցիր մինչև
ի մահ, դուն արժանի ես անհուն սիրոյ.
մի թողուր, ով տէր, որ ես մէյմ'ալ քեզ-
մէ բաժնուիմ. ես զքեզ կը սիրեմ, և կ'ու-
զեմ միշտ սիրել. ով մեկնեսցէ զիս ի սի-
րոյն Քրիստոսի։ Ամէն փրկիչ, միայն մեղքը
կրնայ զիս քեզմէ զատել. ամէն մի թողուր
զիս սուր բարեանդ սիրոյն համար՝ զոր ինձ
համար թափեցիր. տուր ինձ մեռնիլ, և
մի թողուր քեզմէ զատուիլ։ Մայր իմ,
երկնից արքայուհի, օժանդակեա ինձ թե-
ւոքդ աղօթից. խնդրէ և առ ինձ համար
մահ, և հազար մահ, քան թէ զատուիլ ի
սիրոյ միածնիդ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԵ·

ՄԱՀՈՒՁԱՓ ՄԵՂԱՑ ՁԱՐՈՒԹԻՒՆՆ

Որդիս ծնայ և բարձրացուցի, և ա-
նոնք զիս անարգեցին [1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ի՞նչ կ'ընէ մահուշափ մեղք գործող մը։ ԶԱստուած կ'անարգէ, կ'անպատուէ և կը դառնացընէ։ Նախ և առաջ մահուշափ մեղքն անարգանք մ'է, և անիրաւութիւն մը Աստուծոյ դէմ։ Անարգանաց շարութիւնը, որբոյն Թովմայի ըսածին պէս, անարգուած անձէն և անարգող անձէն կը չափուի։ Գեղացւոյ մը դէմ անարգանք մ'ընել՝ շար բան է, բայց աւելի յանցանք է ազնուական մ'անարգել, ալ

[1] Որդիս ծնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին։ Եսայ. Ա. 1։

աւելի ծանր է զԹագաւորն անարգել։ Արդեօք Աստուած. տէր տերանց և Թագաւոր Թագաւորաց։ Աստուած է անսահման մեծվայելչութիւն. համեմատութեամբ իրեն ամենայն Թագաւորք երկրի և ամենայն սուրբք և հրեշտակք երկնից իր առջև աւազի հատ մը չեն. իրև կաթիլ մի ի դուլէ են, Եսայի մարգարէին ըսածին պէս, և իրև զմէտ մի ի կշռոց։ Մանաւանդ թէ Ովսէ մարգարէին ըսածին պէս, ամենայն հեթանոսք ոչինչ են և ոչինչ համարեցան նմա։ Այս է Աստուած, հապա մարդս ի՞նչ է. պարկ որդանց, կերակուր որդանց, որբոյն Բեռնարդոսին ըսածին պէս. սուրբ գիրքն ալ կ'ըսէ թէ դու ես հէգ և աղքատ, կոյր և մերկ։ Եւ ահա այսպիսի ողորմելի մարդ մը, որդ մը, կը յանդգնի զԱստուած անարգել։ Նոյն Բեռնարդոսին ըսածին պէս, զայնպիսի ահաւոր մեծվայելչութիւնը կը համարձակի գրգռել չնչին և պզտիկ հող մը և փոշի մը։ Ուստի սուրբն Թովմաս հրեշտակային վարդապետն իրաւունք ունէր ըսելու՝ թէ մեղքն անհունութիւն մ'ունի շարութեան. մանաւանդ թէ սուրբ Օգոստինոս զմեղս բացարձակապէս կը կոչէ անհուն շար։ Անոր համար թէ որ ամէն մարդիկ և բոլոր հրեշտակք զիրենք զոհէին, նաև ոչնչացընէին, չէին կրնար բաւական փոխարէն մ'ընել մեղքի մը համար։ Ա-

տուած զմահուչափ մեղքը կը պատժէ դը-
ժոխոց սոսկալի տանջանքով. բայց որչափ
ալ որ պատժէ, կ'ըսեն միաբան ամէն աս-
տուածաբանք, միշտ արժանի եղածէն
պակաս կը պատժէ։

Եւ ո՞ր պատիժ կրնայ հերիք ըլլալ պատ-
ժելու որդ մը արժանապէս, որ իւր տի-
րոջ դէմ եկեր է։ Աստուած ամէն բանին
տէրն է. փառն զի ինքն ստեղծեց զամէն-
քը. քում հրամանիդ սպասէ ամենայն
ոք, զի դու տէր արարեր, և դու տիրես ի
վերայ ամենայնի[1]։ Եւ իրաք ալ ամէն ա-
բարածք կը հնազանդին Աստուծոյ, հողմք
և ծովք կը հնազանդին իրեն. հուր և
կարկուտ, ձիւն և սառն առնեն զբան նո-
րա։ Իսկ մարդս երբ կը մեղանչէ Աստու-
ծոյ դէմ, ի՞նչ կ'ընէ. Աստուծոյ կ'ըսէ,
տէր՝ ես քեզի չեմ ուզեր ծառայել։ Աս-
տուած կ'ըսէ, թէ վրէժխնդիր մի՛ ըլլար.
մարդս կը պատասխանէ թէ ես կ'ըլլամ.
Աստուած կ'ըսէ, թէ անկարգ հեշտութենէ
հեռու կեցիր. իսկ ես չեմ ուզեր հեռա-
նալ։ Մեղաւոր Փարաւոնի պէս կ'ըսէ, թէ
ո՞վ է տէր, զի լուայց նմա, զտէր ոչ ճա-
նաչեմ։ Մեղաւորն ալ նոյնպէս կ'ըսէ, թէ
ես տէր չեմ գիտեր, ուզածս պիտի ընեմ.
մէկ խօսքով Աստուծոյ երեսէն չի պատ-
կառիր, կռնակ ալ կը դարձնէ իրեն, որ

1 Եսթեր. ԺԳ. 9։

է բուն մահուչափ մեղք. կամ ըստ սրբոյն
Թովմայի՝ երեսդարձութիւն անփոփոխել-
ոյն Աստուծոյ։ Անոր համար գանգատ
կ'ընէ Աստուած, թէ դու դարձար յինէն,
և յետս գնացեր։ Աստուած վէճ դրաւ
թէ ինքը զմեզ կ'ատէ, ուստի չի կրնար
չ'ատել զմեզաւորն ալ. առ հասարակ ա-
տելի են Աստուծոյ ամբարշտեալն և ամ-
բարշտութիւն իւր. և մարդս երբ կը մե-
ղանչէ, կը համարձակի զինքն Աստուծոյ
թշնամի հրատարակել, և դէմ ընդդէմ
Աստուծոյ հետ կը կռուի։ Ի՞նչ կ'ըսէիր
թէ որ տեսնէիր որ մրջիւն մը զինուորի
մը դէմ կ'ելնէ։ Աստուած է այն ամենա-
կալ տէրն, որ ակնարկութեամբ մը ստեղ-
ծեց զերկինս և զերկիր, և եթէ ուզէ ակն-
արկութեամբ մ'ալ բոլորը կրնայ փճացը-
նել, իսկ մեղաւորը իւր մեղքով Աստուծոյ
դէմ ձեռք կը վերցընէ. ու գլուխը վերցը-
նելով կ'ըսէ ալ, ի՞նչ բան ըրի. ի՞նչ, մեծ
չա՞ր մ'է մեղք ընելս. Աստուած ողորմած
է, մեղաւորաց կը ներէ։ Կը տեսնես, այս
ի՞նչ անզգամութիւն է, ի՞նչ յանդգնու-
թիւն, ի՞նչ կուրութիւն։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ահա, ով Աստուած իմ, ոտքիդ առջևն է այն ապստամբ, այն անզգամն, որ համարձակեցաւ քեզի դէմ այնչափ անգամ, զքեզ չի սեպեց ու երես դարձուց քեզի։ Բայց հիմայ քու գթութեանդ է ապաւիներ։ Դուն ըսիր, կարդա առ իս և ես լուայց քեզ։ Ինձ համար քիչ է մէկ դիժոխքը՝ գիտեմ. բայց գիտցիր որ հիմայ աւելի կը ցաւիմ զքեզ վշտացընելուս համար, ով անհուն բարի, քան թէ կորուսած ըլլայի ամէն բանս ալ՝ կեանքս ալ։ Ահա տէր, թող ինձ և մի թողուր որ մէյմ՚ալ զքեզ վշտացընեմ։ Դու կը սպասես ինձ որ յաւիտեան օրհնեմ քու ողորմութիւնդ, ու զքեզ սիրեմ։ Այո՛ տէր, կ՚օրհնեմ զքեզ, կը սիրեմ զքեզ, յոյս ունիմ յարդիւնս փրկչին իմոյ Յիսուսի Քրիստոսի, որ մէյմ՚ալ չրաժնուիմ ի քո սիրոյդ։ Քու սէրդ զիս դիժոխքէն խալըսեց, նոյն սէրը զիս պիտի խալըսէ ասկէց ետև մեղքէն ալ։

Գոհանամ զքէն տէր, որ այս լոյսն ու բաղձանքը տուիր ինձ զքեզ միշտ սիրելու։ դուն եղիր կ՚աղաչեմ բոլոր անձիս, հոգւոյս, մարմնոյս, կարողութեանցս, ըզ-

գայութեանցս, կամացս և ազատութեանս տէրն. քո եմ ես և կեցս զիս։ Դուն որ իմ մէկ հատիկ բարիս ես, իմ մէկ հատիկ սիրելիս, եղիր նաև իմ մէկ հատիկ սէրս։ Տուր ինձ եռանդն զքեզ սիրելու։ Ես զքեզ շատ վշտացուցի, ուստի հերիք չէ զքեզ սիրել, կ՚ուզեմ շատ և շատ սիրել, որ փոխարէն մ՚ըլլայ այնչափ անարգանացն զոր քեզի դէմ ըրեր եմ. քեզմէ այս բանս կը յուսամ, որ ամենակարողդ ես։ Քու բարեխօսութեանդ ալ յոյս ունիմ, տիրամայր Մարիամ, որ ամէն բանի կարող ես Աստուծոյ առջև։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Մեղաւորը չէ թէ միայն կ՚անիրաւի առ Աստուած, հապա նաև կ՚անպատուէ և կ՚անարգէ։ Այո՛, վասն զի մէկդի կը ձգէ իւր շնորհքը, ու շնչին հաճոյից համար ոտքի տակ կ՚առնու Աստուծոյ բարեկամութիւնը։ Թէ որ մարդս Աստուծոյ բարեկամութիւնը կորսընցնէ՝ թագաւորութիւն մը կամ բոլոր աշխարհը վաստակելու համար, տակաւին մեծ չարիք կ՚ընէ. վասն զիս Աստուծոյ բարեկամութիւնը առաւել քան զաշխարհս և զբիւր տիեզերս կ՚արժէ։ Բայց ի՞նչ բանի համար

մէկը կը վշտացընէ զԱստուած. քիչ մը հոգի համար, կրից և բարկութեան համար, անասնական հաճոյից համար, քմաց համար: Երբ մեղաւորը կը մտածէ, թէ արդեօք այս մեղքին հաւանի թէ չէ, ձեռքը կչիռ մը կ'առնու՝ տեսնելու թէ ո՞րն աւելի ծանր է, արդեօք Աստուծոյ շնորհքը, թէ իւր ուզած բանն. երբ մեղքին կը հաւանի, յայտնի կ'ընէ իւր կողմանէ, թէ իրեն ուզածը աւելի կ'արժէ քան թէ Աստուծոյ բարեկամութիւնը: Տեսար որ մեղաւորը զԱստուած ամսթ ըրաւ: Դաւիթ մարգարէն Աստուծոյ մեծութիւնը և մեծվայելչութիւնը մտածելով՝ կ'ըսէր. տէր, ո՞նմանի քեզ: Այսոր ներհակը՝ Աստուած տեսնելով որ մեղաւորք զինքը իրենց ուզածէն վար կը սեպեն, կ'ըսէ իրենց. ո՞ւմ նմանեցուցէք զիս, և զուգեցայց ասէ սուրբն Իսրայէլի: Ուրեմն կ'ըսէ Աստուած, թէ աւելի՞ կ'արժէ եղեր ձեր չնչին կամքը, քան թէ իմ՝ շնորհքս. անոր համար դարձեալ կ'ըսէ, թէ ընկեցեր զիս զկնի մարմնոյ քոյ, զայն մեղքը չէիր ըներ՝ թէ որ մէկ ձեռքդ կորսընցնելու ըլլայիր, կամ մէկ քանի ստակ ելնելու ըլլայիր. ուրեմն ես միայն՝ քու ստեղծողդ այնչափ անարգ եմ եղեր քու աչքիդ առջև որ մէկ չնչին կամացդ համար զիս ետ կը ձգես:

Մէյմ՚ալ՝ երբ մեղաւորն իւր մէկ հաճոյից համար զԱստուած կը վշտացնէ,

այն ատեն նոյն հաճոյքը իրեն աստուածը կ'ըլլայ, վասն զի զայն կը սեպէ իւր վերջին վախճանը: Սրբոյն Հերոնիմոսի ըսածին պէս՝ թէ ինչ բանի որ մէկը կը ցանկայ, և զայն կը յարգէ, այն իրեն աստուածն է. մոլութիւն մը մարդուս սրտին մէջ կուռք մ'է բազնի վրայ: Ուստի կ'ըսէ սուրբն Թովմաս՝ թէ որ փափկութիւն կը սիրես, փափկութիւնը կ'ըլլայ քու աստուածդ: Եւ սուրբն Կիպրիանոս ալ կ'ըսէ՝ թէ զոր ինչ մարդս նախապատիւ կ'առնէ քան զԱստուած, զայն իրեն աստուածը կը կացուցանէ: Երբ Յերոբովամ ապստամբեցաւ Աստուծմէ, Ջանաց որ ժողովուրդն ալ իւր հետ ի կռապաշտութիւն ձգէ, ուստի անոնց առջև դրաւ իւր կուռքերը ըսելով. ասոնք են քու աստուածներդ, Իսրայէլ: Սատանան ալ այսպէս կ'ընէ. մեղաւորին առջև կը դնէ անոր կամքին ուզածն ու կ'ըսէ. ի՞նչ բան ունիս Աստուծոյ հետ, ահա քու Աստուածդ, քու կամքդ, զայդ բռնէ, զԱստուած թողտուր. թէ որ մեղաւորը տեղիք տայ՝ ալ անկէ ետև Աստուծոյ տեղ կը պաշտէ իւր կամքը, վասն զի մոլորութիւնը մարդուս սրտին մէջ կուռք մ'է բազնի վրայ:

Գէթ մեղաւորն որ անպատիւ կ'ընէ և կ'անարգէ զԱստուած, գոնէ Աստուծոյ առջև չըներ. բայց ինքը զԱստուած Աստուծոյ դիմաց կ'անարգէ, վասն զի Աստուած

ամէն տեղ է. միթէ զերկինս և զերկիր ես ոչ լնում, ասէ տէր[1]։ Այս բանս արդէն մեղաւորն ալ գիտէ, և սակայն չի վախեր Աստուծոյ դիմաց զԱստուած անարգել։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ուրեմն, Աստուած իմ, դու ես անհուն բարի, և ես շատ անգամ զքեզ փոխեցի չնչին զբօսանքի մը հետ, որ երևցած չերևցած կը փճանայ կ'երթայ։ Բայց դուն ինձմէ այսչափ անարգանք ուսենալէն ետև՝ դարձեալ ինձ կը ներես թէ որ ես թողութիւն խնդրեմ, և նորէն խօսք կու տաս քու շնորհդ տալ ինձ՝ թէ որ ես զղջամ քեզի տուած վշտերուս վրայ։ Այո՛ այո, տէր իմ, կը զղջամ կը ցաւիմ բոլոր սրտանց զքեզ անարգելուս համար, կ'ատեմ զմեղս քան զամենայն չար։ Ահա, ինչպէս կը յուսամ, արդէն դարձեր եմ առ քեզ, և դուն արդէն դիս ընդունելով զաւկի պէս կը գրկես։ Գոհանամ զքէն, անբաւելի բարութիւն. բայց կ'աղաչեմ, օգնէ ինձ, և մի թողուր որ մէյմ՛ալ քեզմէ երես դարձնեմ, մի թո-

1 Երեմ. ԻԳ. 24։

զուր որ դժոխքը դիս փորձէ, վասն զի դուն աւելի զօրաւոր ես քան զդժոխս։ Գիտեմ որ ալ քեզմէ չեմ բաժնուիր՝ թէ որ միշտ դիս քեզի յանձնեմ. ուստի զայս շնորհքս կը խնդրեմ, որ տաս ինձ միշտ դիս քեզի յանձնել, ինչպէս հիմայ կը յանձնեմ ըսելով, տէր, օգնէ ինձ, լոյս տուր ինձ, յարատևութիւն տուր ինձ. արքայութիւնդ տուր ինձ. բայց ի վեր քան զամենայն քու սէրդ տուր ինձ, որ է ճշմարիտ երջանկութիւն հոգւոց. կը սիրեմ զքեզ, անհուն բարիդ, և կ'ուզեմ միշտ զքեզ սիրել, լսէ ինձ վասն սիրոյ քոյ միածնիդ Յիսուսի Քրիստոսի։ Մարիամ կոյս, դու ես ապաւէն մեղաւորաց, հասիր յօգնութիւն այս մեղաւորիս, որ կ'ուզէ սիրել զԱստուած քոյ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Մեղաւորը կ'անիրաւի առ Աստուած, կ'անպատուէ և կ'անարգէ, որով և ծանրագոյնս կը վշտացնէ զնա։ Քան զայս մեծ դառնութիւն չի կրնար ըլլալ որ մէկը ապերախտութիւն տեսնէ անձէ մը՝ զոր սիրեր է և երախտիք ըրեր է անոր։ Որոնն հետ կռիւ կ'ելնէ մեղաւորն. կ'անարգէ զԱստուած՝ որ զինքը ստեղծեր է, և այն-

քան սիրեր է զինքը, որ իւր արիւնն ալ, կեանքն ալ տուեր է իւր սիրոյն համար. իսկ ինքը մահուշափ մեղք մ'ընելով՝ զայն իւր սրտէն կը վռընտէ։ Աստուած իւր սիրած հոգւոյն մէջ կու գայ բնակելու. եթէ ոք սիրէ զիս, հայրն իմ սիրեսցէ զնա, և առ նա եկեսցուք և օթևանս առ նմա արասցուք՝ կ'ըսէ Քրիստոս տէրն մեր։ Հասկըցիր ի՞նչ ըսել է՝ օթևանս առնել. Աստուած կու գայ առ հոգին՝ հոն միշտ մնալու համար. այնպէս որ՝ չի թողուր զայն թէ որ հոգին նախ զինքը չթողու. ինչպէս Տրիդենտեան ժողովքն ալ կ'ըսէ, ոչ լքանէ, եթէ ոչ լքցի։ Բայց դու տէր, գիտես որ այն ապերախտը քիչ մը ետև զքեզ պիտի վռընտէ, ինչու հիմակուընէ չես հեռանար անկէ, մինթէ կը սպասես որ ինքն զքեզ վռընտէ. թող տուր զինքը, գնա, քանի որ քեզի անարգանք չէ ըրած։ Չէ, կ'ըսէ Աստուած, ես չեմ հեռանար, քանի որ ինքը զիս չէ վռընտեր։

Ուրեմն երբ մեղաւորը տեղիք կու տայ մեղքի մը, կ'ուզէ ըսել Աստուծոյ. տէր, ելիր գնա ինձմէ։ Ինչպէս Յոբ ալ կը վրկայէ. ամբարիշտը կ'ըսէ Աստուծոյ՝ հեռու կեցիր ինձմէ, քու ճանապարհդ ճանչնալ չեմ ուզեր [1]։ Ուր կ'ըսէ սուրբն Գրի-

1 Ի բաց կաց յինէն, զճանապարհս քո ճանաչել ոչ կամիմ։ Յոբ։ ԻԱ. 14։

գոր, թէ որ խօսքով չ'ըսէ գործովը և վարքովը կ'ըսէ։ Արդէն մեղաւորն ալ գիտէ որ Աստուած մեղաց հետ չի կրնար կենալ, գիտէ որ եթէ մեղանչէ Աստուած ի հարկէ կ'ելնէ կ'երթայ, ուստի կ'ըսէ Աստուծոյ. որովհետև իմ մեղքիս հետ չես կրնար կենալ, երթաս բարով։ Իսկ երբ զԱստուած իւր հոգիէն կը վռընտէ, այն պէս կ'ընէ որ անմիջապէս սատանան գայ իւր սիրտը ժառանգէ. նոյն դռնէն որ Աստուած կ'ելնէ, սատանան ներս կը մտնէ։ Յայնժամ երթայ առնու այլ ևս եօթն այսս՝ չարագոյնս քան զինքն, և մտեալ բնակէ անդ, կ'ըսէ տէրն մեր։ Տղայ մը երբ մկրտուի, քահանան կ'ըսէ դիւին, թէ ել ի դմանէ այսոգ պիղծ, և տուր տեղի հոգւոյն սրբոյ. վասն զի երբ մէկն Աստուծոյ շնորհքը կ'առնու՝ Աստուծոյ տաճար կ'ըլլայ, ոչ գիտէք զի տաճար էք Աստուծոյ, կ'ըսէ Պօղոս առաքեալն։ Բայց երբ մարդս մեղաց կը հետևի, բոլորովին ներհակը կ'ընէ, ըսելով Աստուծոյ որ արդէն իւր սրտին մէջ կը բնակէր. ելիր ինձմէ, տէր, և տեղ տուր սատանային։ Ուստի այս բանիս վրայ գանգատեցաւ տէրն մեր սրբուհւոյն Բրիճիտայ, ըսելով՝ թէ վռընտուեցայ թագաւորի մը պէս իմ թագաւորութենէս, և իմ տեղս չար աւազակն ընտրուեցաւ։

Ո՞րչափ դժուարդ կու դար՝ թէ որ ծանր անարգանք մը քեզի ըլլար այն մարդէն՝ որ քեզմէ երախտիք է տեսեր։ Եւ ահա այսպէս է. Աստուծոյ դժուարը կը բերես դու մեղքովդ, անոր որ իւր կեանքն ալ տուեր է քեզի համար՝ միայն թէ զքեզ փրկէ։ Այս է Աստուծոյ ըսածը Եսայի մարգարէին բերնով՝ թէ լուր երկին և ունկն դիր երկիր, որդիս ծնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին։ Վերջապէս մեղաւորք իրենց մեղքով Աստուծոյ սիրտը կը վշտացնեն. բայց նոքա հեստեցին և բարկացուցին զհոգի Նորա սուրբ։ Աստուած ընդունակ չէ ցաւոց. բայց եթէ կարենար ցաւիլ, մահուչափ մեղք մը հերիք էր որ ցաւէն մեռնիլ տայ իրեն։ Հօրն Մեռնելոյն ըսածին պէս, ինչպէս սուրբն Բեռնարդոս ալ ըսաւ, թէ մեղքն իւր կողմանէ աստուածասպան է։ Ուստի մեղաւորն այնպէս է՝ որպէս թէ Աստուծոյ մահացուցիչ թոյն տուած ըլլայ. և սրբոյն Պօղոսի ըսածին պէս՝ մեղաւորը զորդին Աստուծոյ առ ոտն եհար բանի տեղ չի սեպելով Քրիստոսի ըրածը և քաշածը՝ աշխարհէ մեղքը վերցնելու համար։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ուրեմն, ով փրկիչ իմ. քանի որ ես կը մեղանչեմ, միշտ զքեզ սրտէս կը վռընտեմ, ու կեանքդ ալ վերցնելու կը նայիմ, թէ որ կարենայիր Նորէն մեռնիլ։ Հիմայ կ'իմանամ որ ինձ կ'ըսես մարգարէին բերնով՝ թէ զի արարի քեզ, կամ ի արտմեցուցի զքեզ, տուր ինձ պատասխանի. ի՞նչ ըսեմ, տէր, դու զոյացուցեր զիս, մեռար ալ ինձ համար, այս է ինձ ըրածդ. ուստի ես անպատասխանի եմ, և հազար դժոխոց արժանի, իրաւունք ունիս զիս հոն զրկելու։ Բայց յիշէ կ'աղաչեմ զայն սէրը, որ զքեզ շարժեց խաչի վրայ մեռնելու ինձ համար, յիշէ քու սուրբ արիւնդ զոր իմ սիրոյս համար թափեցիր. և գթա յիս։ Գիտեմ որ դու չես ուզեր որ ես յուսահատիմ, հապա մանաւանդ թէ կը հասկրցնես ինձ, թէ իմ սրտիս դրան քով կեցեր ես, ուսկից որ ես զքեզ վռընտեցի. կը զարնես քու ազդարարութեամբդ՝ որ քեզի բանամ, կ'ըսես՝ կամ առ դուրս քո և բախեմ, բայց ինձ քոյր իմ հարսն։ Ուստի փրկիչ իմ Յիսուս, ասկից ետև ես մեղքը կը վռընտեմ, կը ցաւիմ յամենայն սրտէ ըրածներուս վրայ, և զքեզ կը սիրեմ ա-

մէն բանէ վեր. մտիր, սէր իմ, դուռս բաց է, մտիր և ինձմէ մի բաժնուիր։ Փրկէ զիս քու սուրբ սիրովդ, և մի թողուր որ մէկ մ'ալ քեզմէ զատուիմ։ Զէ, չէ մէյմ'ալ իրարմէ չի զատուինք. ես սրտանց զքեզ կ'ողջագուրեմ. տուր ինձ սուրբ յարատեւութիւն, մի թողուր զիս մեկնիլ ի քէն։ Տիրամայր, մայր իմ Մարիամ, միշտ օգնէ ինձ, աղաչէ զՅիսուս ինձ համար, շնորհք առ ինձ որ մէյմ'ալ իւր շնորհքը չի կորսընցնեմ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԶ.

ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՆ

Բարձրագոյն կը պարծի ողորմութիւնը դատաստանին առջև. [1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Բարին բնութեամբ ինք զինքը դուրս բաշխող է, այսինքն՝ յօժարեալ է հաղորդել իրեն բարիքն ուրիշներուն ալ։ Արդ Աստուած բնութեամբ է անհուն բարի և բարութիւն, ծայրագոյն փափաք ունի մասնակից ընելու զմեզ իւր երջանկութեան. ուստի իւր յօժարութիւնը պատժել չէ, հապա ամենուն ողորմութիւն ընել է, վասն զի պատժելը Աստուծոյ բնութենէն օտար բան մ'է։ Ուստի երբ Աս-

1 Բարձրագլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւ։ Յակ. Բ. 13։

տուած զմեզ հոս կը պատժէ, անոր համար է որ անգին ողորմի։ Թէ որ կը բարկանայ մեր վրայ, անոր համար է որ մենք զմեզ ուղղենք. և թէ որ մեզի պատիժներ ալ դրկէ, անոր համար է որ զմեզ կը սիրէ և կ'ուզէ ազատել զմեզ յաւիտենական պատժէն։ Ո՞վ կրնայ արժանապէս զարմանալ և գովել Աստուծոյ ողորմութիւնը, թէ որչափ երկայնամիտ կ'ըլլայ առ մեզ աւուրս, ինչպէս կը կոչէ և սիրով կ'ընդունի զանոնք երբ դառնան, ինչպէս կը համբերէ և կը սպասէ որ ապաշխարեն։ Քեզի կ'ըսեմ, ով եղբայր, երբ դու զԱստուած կը վշտացնէիր, ինքը կրնար քեզի մահ տալ. բայց ինքն երկայնմտութիւն կ'ընէր, և պատժելու տեղ քեզի բարիք կ'ընէր, կեանքդ կը պահէր ու կը խնամէր, ըրածդ չտեսնելու կը զարնէր։ Այս ի՞նչ բան է, Աստուած իմ, դուն որ մեղք մ'ալ չես կրնար տեսնել, և այնչափ մեղք կը տեսնես և դարձեալ կը լռես։ Կը տեսնես այն անպարկեշտը, այն քինախնդիրը, այն հայհոյիչը, որոնք օր աւուր վրայ չարութիւններին քեզի դէմ կը շտացընեն, ինչպէս չես պատժեր և ինչպէս երկայնամիտ կ'ըլլաս։ Պատասխան կու տայ Եսայի, թէ Աստուած կը սպասէ մեղաւորին, որպէս զի ինք զինքը չտկէ որ իրեն թողութիւն տայ ողորմի։

Սուրբն Թովմաս կ'ըսէ. բոլոր արա-

բածք, երկինք, օդը, ջուրը, բնական ազգմամբ մը կը վառուին ամբարշտութեանց դէմ, և կ'ուզեն իրենց արարչին վրէժն առնել. բայց Աստուած ետ կը քաշէ զանոնք իր մարդասիրութեամբ։ Այլ դու տէր որ կը համբերես անդգամաց՝ որպէս զի զդատանան, չես տեսներ որ այդ ապերախտները քու երկայնամտութիւնդ կը բանեցնեն աւելի գքեզ վշտացնելու, և ինչպէս կը համբերես։ Պատասխան կու տայ Աստուած՝ թէ ոչ կամիմ զմահ մեղաւորին, որպէս զդառնալն նորա և ըզկեալ։ Ո՞վ երկայնամտութեանն Աստուծոյ, կը համարձակի ըսել սուրբն Օգոստինոս, թէ Աստուած Աստուած իմ, ներէ ինձ. թէ որ Աստուած չ'ըլլայիր, այդ կերպով անիրաւ կ'ըլլայիր։ Մենք կը մեղանչենք՝ ամենևին փոյթերնիս չէ, ետքը կը պարծինք ալ մեղքերնուս վրայ, և դու հանգարտ կը կենաս. մենք գքեզ ի բարկութիւն կը շարժենք, դու մեզի ողորմութիւն կ'ընես, կարծես թէ Աստուծոյ հետ ասպարէզ ենք ելեր. մենք կը գրգռենք զինքը պատժելու զմեզ, ինքը կը յորդորէ՝ որ թողութիւն առնունք։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ա՛խ, տէր իմ գիտեմ որ ինչուան հիմայ դժոխքին մէջ ըլլալու արժանի էի. դժոխք են տուն իմ։ Բայց քու ողորմութեամբդ դեռ հոն չեմ, հապա հոս քու ոտքիդ առջևն եմ, և գիտեմ որ դուն ինձ խրատ կուտաս, քու սիրոյ պատուիրանդ պահել. սիրեսցես զտէր Աստուած քո, և կ'ըսես թէ ես քեզի կը ներեմ թէ որ զղջաս մեղացդ վրայ՝ որով զիս անարգեցիր։ Ա՛յո՛այո, տէր Աստուած իմ, որովհետև կ'ուզես որ սիրէ զքեզ ինձ պէս անզգամն՝ որ ապստամբ գտուեր եմ քու մեծվայելչութենէդ, ես ալ զքեզ կը սիրեմ յամենայն սրտէ և կը ցաւիմ զքեզ անարգելուս համար։ Հապա լուսաւորէ զիս, ով անբաւ բարիդ, և տուր ինձ ճանչնալ՝ թէ որչափ մեծ չար էր անարգանքն զոր քեզի ըրի։ Քաւ լիցի, ասկից ետև չեմ ուզեր մէկ մ'ալ դէմ կենալ քու ազդարարութեանցդ, չեմ ուզեր մէյմ'ալ տհաճութիւն տալ քեզ, Աստուած իմ, որ այդչափ զիս սիրեցիր, և այնչափ անգամ քու անբաւ սիրովդ ինձ ներեցիր։ Ա՛խ թէ բընաւ զքեզ վշտացուցած չ'ըլլայի, փրկիչ իմ Յիսուս. թողութիւն շնորհէ ինձ, և

տուր որ ասկից ետև բան մը չի սիրեմ քեզմէ զատ. քեզի համար միայն ապրիմ, որ ինձ համար մեռար. քու սիրոյդ համար նեղութիւն քաշեմ, որ այնչափ նեղութիւն քաշեցիր իմ սիրոյս համար։ Դու զիս ի յաւիտենից սիրեցիր, տուր որ ես ալ յաւիտեան քու սիրովդ վառուիմ։ Ո՛վ փրկիչ իմ, բոլոր յոյսս քու արդեանցդ վրայ է։ Քեզի ալ կ'ապաւինիմ, տիրամայր Մարիամ, այնպէս որ դու քու բարեխօսութեամբդ կարող ես զիս փրկութեան հասցընել։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Աստուծոյ ողորմութիւնն այս կողմանէ ալ հասկցիր որ ինչպէս յապաշխարութիւն կը կոչէ զմեղաւորն։ Երբ Ադամ ապստամբեցաւ Աստուծմէ ու ծածկեց երեսը անկէց, նայէ Աստուած ելաւ փընտռելու զինքն, և կարծես թէ ցաւագին սրտիւ կը կանչէր, թէ Ադամ ո՞ւր ես. որ հօրն Պերէյրոյի ըսածին պէս՝ նման է հօր մը ձայնին, որ իւր կորսուած զաւակը կը փնտռէ։ Գիտցիր, ով եղբայր, թէ նոյն բանն ըրաւ Աստուած քեզի ալ շատ անգամ. դու փախեր էիր Աստուծմէ, և Աստուած ետևէդ ընկեր էր՝ զքեզ կը կան-

չէր, երբեմն ազգարարութեամբ, երբեմն խղճմտանքի խայթով, երբեմն քարոզնե-
րով, երբեմն նեղութիւններով, երբեմն բարեկամներուդ մահով։ Կարծես թէ
Քրիստոս քեզի համար կ'ըսէ այն խօսքը՝ թէ վաստակեցի ես առ աղաղակել, և
կերկերեցաւ կոկորդ իմ։ Մտքերնիդ դրէք.
ով մեղաւորք, կ'ըսէ սրբուհին Թերեզա,
թէ այս այն տէրն է զձեզ կանչողը, որ որ
մը զձեզ պիտի դատէ։

Ո՛վ դու քրիստոնեայ, քանի անգամ
արդեօք խուլ եղար Աստուծոյ ձայնին,
զ'ձեզ կոչողին։ Արժանի էիր որ մէյմ՚ալ
զքեզ չի կոչեր, բայց տէրդ չի դադրեցաւ
զքեզ կանչելէ, վասն զի կ'ուզէր որ քեզի
հետ հաշտ ըլլայ ու զքեզ փրկէ։ Լաւ հաս-
կըցիր, ով էր զքեզ կանչողն. Աստուած
անբաւելի մեծվայելչութիւն. և զով կը
կանչէր, հոտած ողորմելի որդ մը. և ինչ-
ու՞ կը կանչէր. ուրիշ բանի համար չէ,
բայց եթէ քեզի Նորէն կեանք շնորհաց
տալու, զոր դու կորուսեր էիր։ Որպէս զի
մէկը կարենայ Աստուծոյ շնորհքը ձեռք
բերել, մեծ բան չէր թէ որ անապատ մը
քաշուէր բոլոր կեանքին մէջ. իսկ Ա-
տուած քու առջևդ կը դնէր իւր շնորհքը
վայրկենի մը մէջ, առնելու՝ թէ որ ուզե-
նայիր ներգործութիւն զղջման մ՚ընել.
իսկ դու զայն մերժեցիր. այսու ամենայ-
նիւ Աստուած զքեզ երեսէ չի ձգեց, հա-

պա ետևէդ կը բալէր ցաւագին սրտով ու
կ'ըսէր՝ որդեակ, ինչո՞ւ կ'ուզես դատա-
պարտուիլ. և ընդէ՞ մեռանիցիք, տունդ
Իսրայելի։

Երբ մարդս մահուշափ մեղք մը կը
գործէ, զԱստուած իւր սրտէն կը վռնը-
տէ. իսկ Աստուած ի՞նչ կ'ընէ. այն ապե-
բախտ սրտին դրան քով կը կենայ ու կ'ը-
սէ, ահաւասիկ կամ ես առ դուրս քո, և
բախեմ, և կ'աղաչէ որ բանայ, ըսելով՝
բաց ինձ քոյր իմ հարսն։ Նշուան որ ա-
ղաչելով կը յոգնի։ Այս է սրբոյն Դիոնե-
սիոսի արիսպագացւոյն ըսածը, թէ Ա-
տուած իրմէ երես դարձընողներուն ալ
ետևէն կը քալէ սիրով, ու կ'աղաչէ որ չի
կորսուին. նոյն մտքով առաքեալն ալ կը
գրէ, թէ աղաչեմք վասն Քրիստոսի՝ հաշ-
տեցարուք ընդ Աստուծոյ, այսինքն է՝ կ'ա-
ղաչենք ի կողմանէ Քրիստոսի. ուր աղէկ
կ'ըսէ սուրբն Հերոնիմոս, թէ ինքն Քրիս-
տոս կ'աղաչէ, և ի՞նչ կ'աղաչէ. հաշտե-
ցարուք ընդ Աստուծոյ. չէ թէ ինքն է
թշնամի՝ն, հապա դուք, այնպէս որ չէ թէ
մեղաւորը զԱստուած կը յորդորէ հաշ-
տուելու, հապա թէ ինքը պիտի ջանայ
Աստուծոյ հետ հաշտուիլ։

Աղէկ հասկըցիր որ ինչպէս այս բարի և
բարերար տէրն ամէն օր այնչափ մեղա-
ւորներուն ետևէն կը քալէ ըսելով. ով ա-
պերախտներ, ալ մի՞ փախչիք ինձմէ. հա-

պա այն ըսէք, թէ ինչո՞ւ կը փախչիք։ Ես ձեր բարին կ'ուզեմ, և ուրիշ բանի չեմ փափաքիր, բայց միայն զձեզ երջանկացընելու. ուրեմն ինչո՞ւ կ'ուզէք դուք զձեզ կորսընցնել։ Բայց ով տէր, ի՞նչ է այդ քու ըրածդ. ինչո՞ւ այդչափ կը համբերես և այդչափ սէր կը ցուցնես այդ ապերախտներուն, անոնցմէ ի՞նչ կը յուսաս. քեզի պատիւ մը չէ այսչափ յարու�և երևցնել այդ չնչին որդերուն, որ քեզմէ կը փախչին։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ահա, տէր, առ ոտս քո այն ապերախտը, որ քու գթութիւնդ կը պաղատի, հայր, թող ինձ։ Քեզի կը գոչեմ հայր, վասն զի դու կ'ուզես որ այսպէս կանչեմ հայր իմ, թող ինձ։ Ես արժանի չեմ թողութեան, որովհետև որչափ դու ինձ բարի և բարերար եղար, ես այնչափ քեզի ապերախտ եղայ այն բարութեանդ համար՝ որ քու ձեռքդ բռնեց զիս պատժելու, Աստուած իմ, չթողուց որ զիս երեսէ ձգես երբ կը փախչէի, նոյն բարութեանդ համար ընդունէ, որ հիմայ կը դառնամ առ քեզ։ Տուր ինձ, Յիսուս փրկիչ իմ, ասոտիկ ցաւ մը քեզի դէմ ըրած մեղքերուս

վրայ, և տուր ինձ համբոյր հաշտութեան։ Ես կը ցաւիմ աւելի քան զամէն բան այն անարգանաց վրայ զոր քեզի ըրի. կը գարշիմ կը զզուիմ անոնցմէ, և այս իմ ցաւս կը միացնեմ քու քաշածիդ հետ, փրկիչ իմ, Գեթսեմանի պարտիզին մէջ։ Կ'աղաչեմ, ներէ ինձ վասն արդեանց արեան որ քրտնեցար նոյն պարտէզը. ես կը խոստանամ և կ'առաջադրեմ մէյմ'ալ քեզմէ չի բաժնուիլ. դուրս ըրէ իմ սրտէս այն ամենայն յօժարութիւններն՝ որ քեզի համար չեն։ Յիսուս իմ, սէր իմ, ես զքեզ կը սիրեմ ամէն բանէ վեր, և կ'ուզեմ միշտ սիրել զքեզ, և միայն զքեզ սիրել։ Բայց դու ինձ զօրութիւն տուր գործով կատարելու, քեզի առ գիս բոլորովին։ Մարիամ կոյս, յոյս իմ և ապաւէն, մայր ողորմութեան, աղաչէ զԱստուած վասն իմ, և գթա յիս։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Իշխանք և թագաւորք երկրի բարկութեամբ կը վարուին իրենց ապստամբ հըպատակաց հետ այն ատենն ալ՝ որ կու գան թողութիւն խնդրելու։ Բայց Աստուած այնպէս չի վարուիր մեզի հետ։ Ինքն կ'ըսէ, որ եթէ դարձցին ի ճանա-

պարհաց իւրեանց չարաց, քաւիչ եղէց նոցա։ Աստուած՝ ով որ իրեն կը դիմէ, երես չի դարձներ անկէ. վասն զի ինքն ալ կը կանչէ զայն, և պատրաստ է ընդունելու թէ որ դառնայ։ Վասն զի կ'ըսէ՝ դարձարուք առ իս, և ես դարձայց առ ձեզ, ասէ տէր զօրութեանց. որպիսի՞ սէր և գութ է որ կը ցուցնէ Աստուած մեղաւորաց որ իրեն կը դառնան։ Զայս ուզեց մեզի հասկցնել Քրիստոս ոչխարին առակով, զոր հովիւն եթէ գտնէ՝ կը դնէ ի վերայ ուսոց իւրոց խնդալով, բարեկամներն ալ կանչելով կ'ըսէ՝ ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարն իմ կորուսեալ։ Վրայ կը բերէ տէրն. այնպէս եղիցի ուրախութիւն յերկինս ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ։ Աւելի յայտնի ըրաւ բանը տէրն անառակ որդւոյն առակովն, որուն դառնալն երբ տեսաւ հայրը, դիմացն ելաւ և անոր խօսելէն առաջ՝ գրկեց համբուրեց։

Մարգարէին բերնով ալ ըսաւ, թէ որ մեղաւորը դառնայ կելով կեցցէ, և զամենայն անօրէնութիւնս նորա ոչ ևս յիշեցից։ Եկայք, կ'ըսէ, եթէ լցեն մեղք ձեր իբրև զձանձախարիսի, իբրև զձիւն սպիտակ արարից. վասն զի Աստուած զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ ոչ արհամարհէ։

Իրեն փառք կը սեպէ Աստուած զբթալն ու ներելը մեղաւորաց, վասն զի

կ'ըսէ Եսայի, բարձրացցի ողորմել ձեզ։ Բայց երբ կը ներէ Աստուած արդեօք. իսկոյն զղջալուզ պէս։ Աստուած այնպէս չի վարուիր մեզի հետ, ինչպէս որ մենք իրեն հետ կը վարուինք։ Աստուած զմեզ կը կանչէ, և մենք խուլ կ'ըլլանք. իսկ Աստուած մեր ձայնը լսածին պէս՝ մեր աղաչանաց կը լսէ, մեղայ ըսածնուս պէս՝ թողութիւն կու տայ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ա՛խ, Աստուած իմ, որո՞ւն դէմ ելայ ես. քեզի դէմ, որ այնչափ բարի ես, որ զիս ստեղծեցիր, և ինձ համար մեռար, և ինձ այսչափ համբերեցիր յետ այնչափ անօրէնութեանցս։ Իրաւ որ սոսկ տեսնելով քու այնչափ համբերութիւնդ՝ պէտք էր որ բոլոր կենացս մէջ քու սիրովդ վառուէի։ Ո՞վ կրնար երբէք ինձ համբերել այսչափ չարիք ընելէս ետև, ինչպէս դուն ինձ համբերեցիր։ Վա՜յ ինձ, թէ որ ասկից ետև ալ դառնամ նորէն զքեզ վշտացնելու և զիս դատապարտելու։ Այն ատեն այս ողորմութիւններդ, զոր ինձ ըրիր՝ կ'ըլլան ինձ դժոխոց դժոխքը։ Զէ՛ չէ, փրկիչ իմ, չ'ըլլայ թէ թող տաս, որ ես մէյմ'ալ քեզի երես դարձնեմ, լաւ է որ մեռնիմ

քան զքեզ վշտացնեմ։ Գիտեմ որ ալ քու ողորմութիւնդ չի կրնար ինձ համբերել։ Կը ցաւիմ, ով ծայրագոյն բարի, զքեզ վշտացնելուս համար. կը սիրեմ զքեզ ի բոլոր սրտէ, և առաջադրեր եմ որ քեզի նուիրեմ բոլոր մնացած կեանքս։ Լսէ ինձ, հայր երկնաւոր, վասն արդեանց միածնիդ Յիսուսի Քրիստոսի փրկչին իմոյ։ Տուր ինձ սուրբ յարատեւութիւն և սուրբ սէրդ. լսէ ինձ, փրկիչ իմ Յիսուս, վասն արեանդ, զոր հեղեր վասն իմ. հաս յօգնութիւն քոց ծառայից, զորս պատուական արեամբդ գնեցեր։ Մարիամ, մայր իմ, նայէ մէյմը վրաս կ'աղաչեմ, զամենողորմ աչս քո դարձո առ իս, և ձգէ զիս բոլորովին առ Աստուած։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԷ.

ՀԱՐԱՀԱՐ ՎԱՐՈՒՄՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Զե՞ս գիտեր որ Աստուծոյ քաղցրութիւնն զքեզ յապաշխարութիւն կը տանի[1]։

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Ըստ առակի որոմանցն ագարակի՝ երբ տեսան ծառայք որ ցորենին հետ որոմն ալ բուսեր է, ըսին իրենց տիրոջ՝ թէ կամիս զի երթիցուք քաղեսցուք զայն ի բաց. իսկ տէրն ըսաւ թէ չէ, թողէք որ միատեղ մեծնան, և ի ժամանակի հնձոցն ասացէք ցհնձողսն, ժողովեցէք նախ զո-

1 Զգիտիցե՞ս զի քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ։ Հռովմ. Բ. 4։

բոմն, և կապեցէք զայդ ի խրձունս առ ի այրել։ Այս առակէս կ'իմացուի մէկ կողմանէ Աստուծոյ երկայնմտութիւնն առ մեղաւորս, և միւս կողմանէ անաչառ դատաստանն ի վերայ խստասրտաց։ Աղէկ կ'ըսէ սուրբն Օգոստինոս, թէ սատանան երկու կերպով կը խաբէ զմարդիկ, յուսահատութեամբ և յուսով։ Մեղք ընելէն վերջ՝ յուսահատութիւն կը բերէ Աստուծոյ դատաստանին վախով։ Բայց մեղք ընելէն առաջ՝ սիրտ կու տայ, յոյս կու տայ Աստուծոյ ողորմութեան վրայ. ուստի նոյն սուրբ վարդապետն այսպէս խրատ կու տայ, թէ յետ մեղաց յուսա յողորմութիւն, յառաջ քան զմեղս վախցիր յարդարութենէ։ Եւ յիրաւի, վասն զի անարժան է ողորմութեան նա, որ զողորմութիւնն Աստուծոյ կը բանեցընէ զԱստուած վշտացընելու։ Ողորմութիւնն կը հանի աստուածավախերուն, չէ թէ անոնց որ զայն ի գործ կ'ածեն չվախնալու Աստուծմէ։ Ուստի կ'ըսէ Այպուլեցին, թէ արդարութեան դէմ մեղանչողն կը բնայ ողորմութեան ապաւինիլ, իսկ այն որ բուն ողորմութեան դէմ կը մեղանչէ՝ ի՞նչ բանի պիտի ապաւինի։

Դժուար կը գտնուի այնպիսի յուսահատ մեղաւոր մը՝ որ ուզենայ դատապարտուիլ. հապա մեղաւորք կ'ուզեն մեղանչել՝ առանց կորսընցնելու փրկութեան

յոյսը. մեղք կ'ընեն և կ'ըսեն, թէ Աստուած ողորմած է, հիմայ այս մեղքն ընեմ, ետքը կ'երթամ խստովանանք կ'ընեմ։ Այս է մեղաւորներուն սովորութիւնը, կ'ըսէ սուրբն Օգոստինոս. բայց այն է ցաւալին՝ որ շատերն այսպէս կ'ըսէին, և հիմայ ի դժոխս դատապարտուած են։

Սուրբ գրին ըսածին պէս՝ մի՛ ասեր առաջի Աստուծոյ թէ անդիտութիւն է, զի մի՛ բարկացի Աստուած ի բարբառ քո. կամ մի՛ ասեր, թէ ողորմութիւն տեառն մեծ է, բազմութեան մեղաց իմոց ողորմեսցի, վասն զի ողորմութիւն և բարկութիւն ի նմանէ փութով հասցեն, և ի մեղաւորս ակնարկէ բարկութիւն նորա։ Իրաւ որ Աստուծոյ ողորմութիւնն անհատնում է և անհուն. բայց այս ողորմութեան գործն չափով է, վասն զի Աստուած ինչպէս որ ողորմած է, նմանապէս արդար ալ է։ Ուստի սր մը տէրն մեր ըսաւ սրբուհոյն Բրիճիտայի, որ ես թէ արդար եմ և թէ ողորմած, իսկ մեղաւորք զիս սոսկ ողորմած կը սեպեն։ Սուրբ Բարսեղ ալ կ'ըսէ, թէ բարի է տէր և արդար. կիսամսնեայ չի կարծենք զԱստուած։ Հայր վարժապետն Աւիլա կ'ըսէր, եթէ ողորմութիւնն Աստուծոյ կարծուեր թէ զինքը բարկացընելու ալ կը ծառայէ, չէր ըլլար ողորմութիւն, հապա պակասութիւն արդարութեան։ Աստուած իւր ողորմութիւ-

նը կը խոստանայ իւրմէ վախցողներուն, չէ թէ չարաչար գործածողներուն։ Այսոր համար սուրբ Աստուածածին Մեծացուսցէին մէջ կ'երգէ, թէ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց։ Առած է սրբոյն Օգոստինոսի, թէ՝ որ ճշմարիտն է ի խոստմունս իւր, ճշմարիտ է և ի սպառնալիսն։

Զգոյշ կեցիր, կ'ըսէ Ոսկերերան, չ'ըլլայ թէ այն չան, այսինքն սատանայի, մոլիկ ընես, որ քեզի Աստուծոյ ողորմութիւնը կը խոստանայ, որպէս զի մեղանչես։ Եւ սուրբն Օգոստինոս՝ կը յուսայ որպէս զի համարձակ մեղանչէ. վայ այս մոլար յոյսն ունեցողին, և կը յարէ թէ համրանքի չեն գար՝ թէ որչափ մարդիկ խաբեր է այս ընդունայն յուսոյ ստուերն։ Վայ անոր գըլխոյն, որ Աստուծոյ գթութիւնը ի գործ կ'ածէ աւելի զինքը բարկացընելու. սուրբ Բեռնարդոսին ըսածին պէս՝ սադայէլն անոր համար խսկոյն պատժուեցաւ Աստուծմէ, վասն զի ապստամբեցաւ՝ յուսալով, թէ պատիժ չի գաներ։ Մանասէ թագաւորը մեղանչեց, ու ետքը դարձաւ. Աստուած ալ իրեն ներեց. անոր որդին Ամոն տեսնելով որ իւր հայրը թողութիւն գտաւ՝ զինքը չարութեան տուաւ յուսալով թողութեան, բայց ողորմութեան չհասաւ։ Ուստի Ոսկերերան ալ կ'ըսէ, թէ Յուդա կորսուեցաւ, վասն զի վստահա-

գեալ էր ի հեզութիւն վարդապետին։ Մէկ խօսքով, Աստուած երկայնամիտ է՝ բայց միշտ չի համբերեր. թէ չէ, ոչ ոք կը դատապարտուէր. և սակայն հաստակ կարծիք է՝ թէ չափահաս քրիստոնէից մէջ ալ շատը կը դատապարտուի, վասն զի ընդարձակ է դուռն և լայն ճանապարհն որ տանի ի կորուստ. և բազումք են որ մտանեն ընդ նա, կ'ըսէ տէրն մեր։

Ով որ թողութեան յուսով կը մեղանչէ՝ խաբեբայ է, չէ թէ ապաշխարող, կ'ըսէ սուրբն Օգոստինոս. և սուրբ Պաղոս ալ կ'ըսէ, թէ մի խաբիք՝ Աստուած ոչ արհամարհի։ Ծաղր ընել կամ խաբել կ'ըլլար զԱստուած՝ թէ որ մէկն ուզենար միշտ վստացնել զԱստուած, ու ետքը արքայութիւն ալ երթալ։ Զի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն և հնձեսցէ. մեղք սերմանողն ալ իրաւունք չ'ունի ուրիշ բան յուսալու, բայց պատիժ ու դժոխք։ Սատանան որ ուռկանին մէջ այնչափ քրիստոնեաներ որսացեր է՝ այս խաբէութեամբս է. որ կ'ըսէ իրենց՝ թէ համարձակ մեղք գործեցէք, մի վախնաք, վասն զի այդ բոլոր մեղքերով ալ կը փրկուիք։ Բայց Աստուած կ'ըսէ, անլիծեալ է մարդն որ յուսով մեղանչէ։ Մեղաւորին յոյսը մեղանչելէն ետև՝ թէ որ զղջումն ունենայ՝ հաճոյ է Աստուծոյ, բայց խոստասիրներուն յոյսն զզուելի է Աստուծոյ։ Այդ-

պիսի յոյս զԱստուած կը գրգռէ ի պատ-
ժել, ինչպէս ծառայ մը դիւր տէրն կը
գրգռէ՝ երբ անոր դէմ բան մ՚ընէ՝ ըսելով
թէ իմ տէրս աղէկ մարդ է։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ամէն, տէր Աստուած իմ, ահա ես ալ
այնպիսիներէն մէկն եմ որ զքեզ վշտա-
ցուցեր են, վասն զի դուն աղէկ կը վա-
րուէիր։ Ահ տէր. երկայնամիտ եղիր, զիս
երեսէ մի՛ ձգեր, ես յոյս ունիմ քու շնոր-
հօքդ՝ որ մէյմ՚ալ զքեզ չգրգռեմ զիս ե-
րեսէդ ձգելու։ Կը ցաւիմ, ով անբաւ բա-
րիդ, զքեզ վշտացնելուս և չարաչար գոր-
ծածելուս քու երկայնմտութիւնդ։ Շնոր-
հակալ եմ, որ ինչուան հիմայ ինձ սպասե-
ցիր, ասկից ետև չեմ ուզեր քեզի մատնիչ
ըլլալ, ինչպէս առաջ եղայ։ Դուն այնչափ
ինձ համբերեցիր, որպէս զի օր մը զիս
տեսնես զքեզ սիրող. ահա եկեր հասեր է
այն օրն, ինչպէս որ կը յուսամ։ Ես զքեզ
կը սիրեմ ամէն բանէ վեր, և մեծ կը սե-
պեմ քու շնորհքդ՝ քան զամենայն թա-
գաւորութիւնս աշխարհի. պատրաստ եմ
հազար անգամ կեանքս կորսընցնել՝ քան
թէ քու շնորհքդ։ Հայր երկնաւոր Ա-
ստուած իմ, վասն սիրոյ օծելոյ քո Յիսուսի

Քրիստոսի, տուր ինձ սուրբ յարատևու-
թիւն ի սէր քո մինչև ի մահ. մի թողուր
որ մէյմ՚ալ դառնամ ու քեզի մատնիչ ըլ-
լամ, և թողում քու սէրդ։ Մարիամ, մայր
ողորմութեան, դու ես յոյս և ապաւէն
իմ, սա ինձ համար այս յարատևութիւնը,
ալ ուրիշ բան չեմ ուզեր։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Մէկը կրնայ ըսել, թէ Աստուած որ ա-
ռաջ ինձ այնչափ ողորմութիւն ըրաւ,
յուսամ որ ետքն ալ կ՚ողորմի։ Անոր ըսե-
լու է՝ որովհետև առաջ այդչափ ողորմու-
թիւն քեզի ըրեր է, անոր համար կ՚ուզեմ
նորէն զինքը վշտացընել։ Ուրեմն, կ՚ըսէ
քեզի սուրբն Պօղոս, ասով դուն Աստու-
ծոյ քաղցրութիւնն ու համբերութիւնը
կ՚արհամարհես ոտքի տակ կ՚առնուս։ Ես
գիտեր՝ որ Աստուած քեզի ինչուան հի-
մայ համբերեց՝ չէ թէ միշտ չարունակես
զինքը վշտացընելդ, հապա ըրած չա-
րեացդ վրայ լաս։ Երբ դուն աստուածային
ողորմութեան յուսալով չես ուզեր բանդ
լմնցընել Աստուծոյ հետ, ինքը կը լմնցընէ.
եթէ ոչ դառնայցէք՝ զաղեղն իւր լարեալ
է, կ՚ըսէ սաղմոսերգուն. և իմ է վրէժ-
խնդրութիւն և ես հատուցից ի ժամանա-

կին, կ'ըսէ Աստուած։ Աստուած երկայ-
նամիտ կ'ըլլայ, բայց երբ վրէժխնդրու-
թեան ատենը հասնի, ալ չի սպասեր, հա-
պա կը պատժէ.

Աստուած կը սպասէ մեղաւորին որ ըզ-
գաստանայ, բայց երբ կը տեսնէ որ այն
ապաշխարութեան համար տրուած ժա-
մանակը կը բանեցընէ աւելի մեղք դիզե-
լու, այն ատեն զինքը դատաստանի կը
կանչէ։ Սուրբն Գրիգոր կ'ըսէ, թէ նոյն
իսկ ժամանակը դատաստան կ'ելնէ. նոյն
ժամանակն որ ապաշխարութեան համար
տրուած էր, երբ ի չարն բանեցուցած է,
աւելի կը դատապարտէ զինքը. բժշկեցաք
զԲաբիլոն, և ոչ բժշկեցաւ, թողցուք զնա։
Եւ ինչպէս Աստուած զմէկը երեսէ կը
ձգէ. կամ մահ կը զրկէ անոր վրայ, և կը
թողու որ ի մեղս մեռանի, կամ իւր շը-
նորհքէն կը զրկէ, որով մեղաւորն որ
կրնար փրկուիլ՝ միտքը կը կուրնայ, սիր-
տը կը խստանայ, չար սովորութիւնները
բարոյապէս անկարելի կ'ընեն իւր դարձը,
և այնպէս բացարձակապէս ալ չ'ըլլայ,
բարոյապէս երեսէ կ'ինկնայ։ Քակեցից
զցանգ նորա և եղիցի յափշտակութիւն.
ի՞նչ պատիժ կրնայ ըլլալ մեծ քան զայս,
որ բաց մնալով այդին՝ ոտքի կոխան ըլլայ
մարդկանց և անասնոց, որ ըսել է թէ երե-
սէ ձգուած է։ Այսպէս ալ Աստուած եթէ
զհոգին երեսէ ձգէ, կը վերցընէ երկիւղին

ցանկը, խղճմտանաց խայթը. և կը թողու
մթութեան մէջ. այն ատեն յայն հոգին
կը մտնեն ամէն ցուցանք սխտից և մոլու-
թեանց։ Արդ ի՞նչ կ'ընէ մեղաւորն այն
մթութեան մէջ. ամէն բան կ'արհամար-
հէ՝ Աստուծոյ շնորհքն ալ, արքայութիւնն
ալ, ազգարարութիւնն ու բանադրանքը,
իւր դատապարտութեան վրայ ալ կը ծի-
ծաղի։ Ամպարիշտն հասեալ ի խորս չա-
րեաց արհամարհէ։

Աստուած առանց պատժելու կը թողու
զայն աշխարհիս վրայ, բայց այս չպատ-
ժելն իրեն աւելի ծանր պատիժ է։ Սոս-
կալի պատիժ է, երբ Աստուած զմեղաւո-
րըն կը թողու մեղաց ձեռքն. բարձի զնա-
խանձն իմ ի քէն, և հանգեայց, և ոչ ևս
հոգացայց. որպէս թէ թող տուած ըլլար
որ ինչ որ կ'ուզէ ընէ աշխարհիս վրայ.
բարձի թողի զնոսա երթալ զհետ կամաց
սրտից իւրեանց։ Վայ մեղաւորաց զլխայն՝
որոնց բանը յաջող է այս աշխարհիս վրայ,
նշան է թէ զոհ պիտի ըլլան Աստուծոյ
բարկութեանը յաւիտեան։ Երեմիա կը
հարցընէ, թէ զի՞է զի ճանապարհք ամ-
բարշտաց յաջողեալ են. և յետոյ կ'ըսէ, թէ
ժողովեա զնոսա իբրև զոչխար ի սպա-
նումն։ Սակից մեծ պատիժ չի կրնար ըլ-
լալ՝ որ թող տայ Աստուած որ մեղաւորը
մեղք մեղքի վրայ դիզէ. Դաւթի ըսածին
պէս. դիր զմեղս ի վերայ մեղաց... ջն-

ջեսցին նոքա ի դպրութենէ քումմէ կենաց։ Ուր կ'ըսէ Բելլարմինոս՝ թէ ասկից մեծ պատիժ չ'ըլլար երբ մեղք մեղաց պատիժ կ'ըլլայ։ Աղէկ էր այն թշուառականներուն՝ որ Աստուած իրենց կեանքը վերցրնէր առաջին մեղքէն ետև, թէ ոչ երբ մեռնին, այնչափ դժոխք կ'ուենենան, որչափ որ մեղք գործեր են։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Աստուած իմ, գիտեմ որ ես այդպիսի թշուառ վիճակի մէջ արժանի էի որ մնամ զուրկ ի շնորհաց և ի լուսոյ. բայց տեսնելով հիմայ այն լոյսը՝ զոր ինձ կու տաս և յապաշխարութիւն դիս կը կոչես, նշան է թէ դիս երեսէ չես ձգած տակաւին։ Հապա կ'աղաչեմ տէր, աւելցուր քու ողորմութիւնդ հոգւոյս վրայ, աւելցուր լոյսդ, աւելցուր փափաքս քեզի ծառայելու և սիրելու գքեզ։ Աստուած ամենակարող, դիս փոխէ իմ ապստամբ և մատնիչ ըլլալէս, և ըրէ դիս սիրող քու բարութեանդ, որպէս զի գամ օր մը յերկինս՝ փառաւորել յաւիտեան քու ողորմութիւններդ։ Արդ, ինչպէս դու կ'ուզես ներել ինձ, ես ալ ներումն կ'ուզեմ սրտանց և քու սէրդ. կը զղջամ, ով անհուն բարի,

այնչափ քեզի տհաճութիւններ տալուս համար. զլեզ կը սիրեմ, ով ծայրագոյն բարի, վասն զի այսպէս կը հրամայես սիրել զքեզ, վասն զի ամէն կերպով արժանի ես։ Հապա փրկիչ իմ, վասն արդեանց քու սրեանդ ըրէ որ զքեզ սիրէ այս մեղաւորս, զոր դու այնչափ սիրեցիր, ու երկայնամիտ եղար իրեն այնչափ տարի։ Քու գթութենէդ կը յուսամ այս բանս. յոյս ունիմ որ ասկից ետև զքեզ սիրեմ մինչև ի մահ և յաւիտեան. զողորմութիւնս քո տէր յաւիտեան օրհնեցից։ Քու գթութիւնդ ալ, տիրամայր Մարիամ, յաւիտեան օրհնեցից, որ այնչափ շնորհքներ առիր ինձ համար, քու բարեխօսութեանդ արդիւնք գիտեմ զայն ամենայն. մի դադարիր օգնել ինձ, տիրուհի, և առնել ինձ համար զսուրբ յարատևութիւն։

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

Գրած է ի վարս հօրն Ալզիոսի Լանուզա, թէ Բալերմոյ քաղքին մէջ երկու բարեկամք կային. օր մը ասոնք միատեղ քալելու ելեր էին. ասոնցմէ մէկը Կեսար անունով, որ կատակերգութեան մէջ խաղցող էր, տեսնելով ընկերը մտած մուն-քի մէջ ըսաւ անոր. քանի՞ ատեն է որ

խոստովանանքի կ'երթաս, և գուցէ անոր համար տխուր կ'երևիս. գիտցիր որ օր մը ինձ ըսաւ հայրն Լանուզա, թէ Աստուած քեզի տասուերկու տարի կեանք պիտի տայ, ու թէ որ այս միջոցիս մէջ գքեզ չի շտկես, դէշ մահ պիտի ունենաս։ Ես ելայ աշխարհներ քալեցի, հիւանդութիւններ քաշեցի, մանաւանդ անգամ մը մեռնելու մօտ եղայ, այսու ամենայնիւ այս ամսոյս մէջ որ տասուերկու տարին լմննալու վերայ է, զիս աղէկ կը զգամ քան թէ բոլոր կենացս մէջ. ուստի հրամէ, եկուր շաբաթ օրը լսելու նոր կատակերգութիւնս, որ ես շարադրեր եմ։ Նայէ թէ ինչ հանդիպեցաւ շաբաթ օրն, որ նոյեմբերի 24 էր՝ յամին 1668։ Երբ պատրաստուած էր այս մարդս որ խաղալու ելնէ, կաթուած մը վրան իջաւ, ու յանկարծ մեռաւ, հոգին փչելով կատակերգութիւն խաղցող կնկան մը թևին վրայ, և այսպէս լմնցաւ կատակերգութիւնն։ Ասկից օրինակ առնունք մենք ալ. քեզի կ'ըսեմ, ով եղբայր, երբ սատանան գքեզ փորձէ նորէն մեղք գործելու, թէ որ դու դատապարտուիլ կ'ուզես, նոյն խելքի վրայ կեցիր որ մեղանչես. բայց մի ըսեր այն ատեն, թէ փրկուիլ կ'ուզես՝ երբ կ'ուզես մեղանչել, գքեզ արդէն դատապարտուածի տեղ դիր, ու սեպէ՝ թէ Աստուած նոյն ատեն քու դատապարտութեանդ վճիռը կը գրէ, ու կ'ըսէ

քեզի, թէ զինչ ինչ առնել էր այգուոյ իմայ, և ես ոչ արարի նմա. գնա՛ կորիր, ով ապերախտ, դատապարտուիլ կ'ուզէիր, կորսուէ քու յանցանքովդ։

Գուցէ ըսես, հապա ուր կը մնայ Աստուծոյ ողորմութիւնն։ Պապանձէ, ով թշուառական, Աստուծոյ ողորմութիւնը չէր որ այնչափ տարի համբերեց քու այնչափ մեղքերուդ. դու միշտ երեսդ վար առած շնորհակալ պիտոր ըլլայիր ըսելով, ողորմութիւնք տեառն անսպառք էին, որ ես ինչուան հիմայ չսպառեցայ, չկորսուեցայ։ Դու մահուշափ մեղք մը գործելով աւելի մեծ յանցանք ըրիր, քան թէ ոտքի տակ առնուիր թագաւոր մը աշխարհիս. դուն այնչափ չարիք ըրիր և անարգանք ընդդէմ Աստուծոյ, թէ որ զայդ մարմնաւոր եղբօրդ դէմ ընէիր, չէր համբերեր քեզի. իսկ Աստուած չէ թէ միայն երկայնամիտ եղաւ քեզ, հապա շատ անգամ ալ կոչեց և հրաւիրեց որ գաս թողութիւն առնուս. զինչ ինչ առնել էր, և ես ոչ արարի կ'ըսէ։ Թէ որ Աստուած քեզմէ պէտք մ'ունենար, կամ դուն իրեն մեծ երախտիք մ'ըրած ըլլայիր, կրնա՞ր արդեօք ասկէ աւելի գութ ցուցընել քու վրադ։ Այս այսպէս ըլլալով, թէ որ դու նորէն դառնաս զինքը վշտացընես, իր բոլոր գթութիւնը և ողորմութիւնը կը դարձնես ի բարկութիւն, և ի պատժել գքեզ։

Թէ որ այն անպտուղ թզենին տարի մ՚ալ հոգալու միջոց տալէն ետև՝ պտուղ չի տար տիրոջ, չէ՞ր կտրուեր ըստ արժանոյն։ Նայէ ինչ կ՚ըսէ սուրբն Օգոստինոս. ով ծառ անպտուղ, տարուան մը մնաց տապարը որ գքեզ չկտրէ, անհոգ մի՛ ըլլար, կը կտրուիս։ Ի՞նչ բանի կը սպասես, ով մեղաւոր, կ՚ուզես որ Աստուած գքեզ դժոխք ղրկէ, բայց եթէ ղրկէ, գիտնաս որ ետքը ճար ճարակ չի կայ քեզի։ Աստուած լուռ կեցեր է, բայց միշտ չի լռեր. երբ վրէժխնդրութեան ատենն հասնի, ո՞ւր կը մնայ լռելը։ Զայս ամենայն արարեր, և ես լռեցի քեզ, կարծեցեր անօրէնդ ի մտի քում թէ ես քեզ նմանեցայ, արդ յանդիմանեցից և կացուցից զայս ամենայն առաջի քո. երեսիդ զարնեմ այնչափ ողորմութիւններն զոր քեզի ցուցի, և անոնք գքեզ դատեն ու դատապարտեն։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ա՜խ Աստուած իմ, վայ գլխոյս, թէ որ ասկից ետև քեզի հաւատարիմ չ՚ըլլամ, ու դառնամ մատնիչ ըլլալու՝ այսչափ լոյս ինձ տալէդ ետև։ Այդ լոյսը նշան է որ կ՚ուզես ինձ ներել։ Կը ցաւիմ, ով ծայրա-

գոյն բարի, ամենայն անիրաւութեանցս վրայ՝ զոր քեզի գէմ ըրած եմ, և տուած անարգանացս վրայ՝ որովք դառնացուցեր եմ զանհուն բարիդ։ Քու արիւնովդ յոյս ունիմ թողութեան, և ստուգապէս կը յուսամ, բայց թէ որ նորէն քեզի երես դարձնեմ. գիտեմ որ նոր դժոխք մ՚արժանի կ՚ըլլայ ինձ համար։ Այս բանս է որ կը սարսափեցնէ զիս, Աստուած հոգւոյ իմոյ, որ կրնամ դարձեալ քու շնորհդ կորսընցնել. գիտեմ որ շատ անգամ խօսք տուի քեզի հաւատարիմ ըլլալու, ետքը կրկին ապստամբ եղայ քեզմէ։ Ա՜խ, տէր, մի թողուր որ ըլլայ այդ բանն. մի ձգեր զիս երեսէ, որ այս թշուառութեանս մէջ ընկնամ, և նորէն թշնամի քեզ երևիմ. ամէն պատիժ տուր ինձ՝ զայս մի՛ տար, մի թողուր զիս մեկնիլ ի քէն։ Թէ որ տեսնես որ նորէն զքեզ պիտոր վշտացնեմ, առաջուց մահ տուր ինձ. ես գոհ եմ։ Ինչ մահ ալ ըլլայ՝ ես գոհ եմ, միայն թէ մէյմ՚ալ չի լամ իմ թշուառութիւնս քու շնորհքէդ զրկուելուս համար. մի թողուր զիս մեկնիլ ի քէն։ Զայս կրկնելով կը կրկնեմ, Աստուած իմ, մի թողուր զիս մեկնիլ ի քէն։ Կը սիրեմ զքեզ, սիրելիդ իմ փրկիչ, ես չեմ ուզեր քեզմէ բաժնուիլ. վասն արդեանց սուրբ մահուանդ տուր ինձ սաստիկ սէր մը, որ զիս պինդ կապէ

քեզի հետ՝ այնպէս որ չկարենամ մէկ մ'ալ քակուիլ։ Ով Աստուածամայր Մարիամ, թէ որ ես դառնամ և մէյմ'ալ զԱստուած վշտացընեմ, վախեմ որ դուն ալ զիս երեսէ կը ձգես։ Հապա, օգնէ ինձ քու բարեխօսութեամբդ որ ունենամ յարատևութիւն և սէր առ Յիսուս փրկիչն իմ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԴ·

ՄԵՂԱՑ ԹԻՒՆ

Որովհետև չարերուն վիճակը շուտով չի տրուիր, անոր համար որդիք մարդկան չարուշրեանք ետ չեն կենար [1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Թէ որ Աստուած իսկոյն պատժէր մեղապարտները, յայտնի է որ իրեն դէմ այնչափ անարգանք չէր ըլլար, որչափ որ հիմայ կ'ըլլայ· բայց որովհետև Աստուած շուտով չի պատժեր, հապա երկայնամիտ կ'ըլլայ, համարձակութիւն կ'առնուն մեղաւորք սուելի վշտացընել զինքը· սակայն աղէկ նայելու է, որ Աս-

1 Քանզի ոչ վաղվաղակի վճիռ բերի ընդդէմ չարաց, վասն անօրինիկ որդիք մարդկան յաճախեն ի չարիս։ Սեր· Ը· 11· Ըստ լատին·

տուած թէպէտ և կը համբերէ, բայց միշտ չի համբերեր։ Հասարակ կարծիք է սրբոց հարց, Բարսղի, Ոսկեբերանի, Հերոնիմոսի, Ամբրոսիոսի, Օգոստինոսի, Կիւրղի աղեքսանդրացւոյ և ուրիշներուն, թէ ինչպէս որոշեր է Աստուած ամէն մէկ մարդու կենաց օրերը, առողջութեան աստիճանը, կամ քանքար՝ զոր կ'ուզէ անոնց տալ, իմաստնոյն ըսածին պէս, թէ զամենայն ինչ չափով և թուով և կշռով կարգեցեր. նոյնպէս ամէն մէկին որոշեր է թողութիւն տալ այսչափ յանցանաց, որ երբ լցուի, ալ չի ներեր։ Այս բանս պէտք է մեզ հասկընալ, կ'ըսէ սուրբն Օգոստինոս, թէ այսչափ անգամ կը համբերէ Աստուած մեզի, այն լմնցածին պէս ալ թողութիւն չ'ըլլար։ Նմանապէս կ'ըսէ Եւսեբիոս կեսարացին, թէ Աստուած կը սպասէ մինչև որոշեալ թիւ մը, անկից ետքը երեսէ կը ձգէ. նոյնպէս կը խօսին և վերոյիշեալ հարք։

Այս բանս վայրապար չեն ըսեր սուրբ հարք, հապա սուրբ գրոց հիման վրայ հաստատեալ կ'ըսեն, ուր գրած է, թէ չև ևս լցան անօրէնութիւնք ամորհացւոց. ուրիշ տեղ՝ թէ ոչ ևս յաւելից ողորմել Իսրայելի. դարձեալ՝ փորձեցին զիս այս տասն անգամ, և ոչ տեսցեն զերկիրն։ Յոր ալ կ'ըսէ, թէ հնբեցեր զանօրէնութիւնս իմ ի քսակի։ Մեղաւորք չեն համ-

բեր չեն սեպեր իրենց մեղքը. բայց Աստուած աղէկ հաչիւ կը բռնէ, որպէս զի հնձոց ատեն պատիժը տայ, այսինքն երբ չափը լմնայ. ըսելով՝ թէ արկէք մանգաղ զի հասեալ են կութք։ Դարձեալ կ'ըսէ Աստուած՝ թէ առջևի մեղքէդ անվախ մի ըլլար, և մեղք մեղքի վրայ մի դներ։ Վախցիր, կ'ըսէ մեղաւորին, այն մեղքէն ալ՝ որ քեզի ներեցի, թէ չէ եթէ նորէն աւելցընես, կրնայ ըլլալ որ այդ նոր մեղքդ առաջիններուն հետ՝ չափը համբանքը լեցընէ, այն ատեն թողութեան տեղիք չի մնար քեզ։ Ուրիշ տեղ ալ սուրբ գիրքն այս բանս կ'իմացնէ, թէ օր կու գայ որ մեղացդ չափը լցուած կ'ըլլայ, ետևէն պատիժ կը հասնի։

Այդ պատժոյ օրինակն ալ շատ տեղ կը տեսնուի. մանաւանդ Սաուղայ վրայ որ ետքի անգամ անհնազանդ ըլլալով՝ Աստուծոյ երեսէն ընկաւ բոլորովին, ուստի կ'աղաչէր Սամուէլին՝ որ միջնորդ ըլլայ իրեն համար՝ ըսելով. թէ բարձ զմեզս իմ, և դարձիր ընդ իս, և պագից երկիր տեառն Աստուծոյ քում. իսկ Սամուէլ պատասխան տուաւ, թէ ոչ դարձայց ընդ քեզ զի արհամարհեցեր զբան տեառն, և արհամարհեսցէ զքեզ տէր։ Յայտնի է Խաղտասարայ օրինակն ալ, որ տաճարին սուրբ սպասները պղծելով, ձեռք մը տեսաւ որ պատին վրայ կը գրէր, մանէ, թէկէղ,

փարէս, որ կը նշանակէր ինչպէս որ մեկ-
նեց Դանիէլ, կշռեցաւ ի կշիռս թագաւո-
րութիւն քո, և գտաւ պակասեալ։ Իրօք
ալ նոյն գիշերը սպաննուեցաւ Բաղտասար
արքայն քաղդէացւոց։ Ա՛խ, թէ որչափ
թշուառականներու այսպէս կ'ըլլայ, որ
տարիներով մեղաց մէջ կը մնան. բայց երբ
չափերնին կը լմննայ, գրոց խօսքն ալ կը
կատարուի. կատարեցին ի բարութեան
զկեանս իւրեանց, հանգստեամբ ննջեցին
ի գժոխս։ Կան որ ետեւէ կ'ինկնան քննել
աստեղաց համրանքը, հրեշտակաց թիւը,
իրենց տարիքներուն թիւը, բայց ո՞վ կայ
որ քննէ իւր մեղաց համրանքը, որ Աս-
տուած ամէն մէկուն ներել ուզեր է։ Ա-
սոր համար պէտք է դողալ սարսափիլ. ո՞վ
գիտէ, եղբայր սիրելի, որ մէյմ'ալ սա ան-
արժան գործն որ ընելու ըլլաս, այն չար
խորհրդոց տեղիք տաս, այդ մեղքն որ ը-
նես, ա՛ լ ներումն չկայ քեզի։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ Աստուած իմ, գոհանամ զքէն, ար-
դեօք քանի՞ ինձմէ պակաս մեղք ունե-
ցողներ կան հիմայ դժոխքին մէջ, ա՛լ թո-
ղութիւն և յոյս չիկայ իրենց. իսկ ես դեռ
կենդանի եմ դժոխքէ դուրս, և յոյս ու-

նիմ թողութեան և արքայութեան, թէ որ
ուզենամ։ Այո՛ տէր Աստուած իմ, նե-
րումն կը խնդրեմ, կը զղջամ ամէն բանէն
աւելի զքեզ վշտացնելուս համար, վասն
զի վշտացուցի զանհուն բարութիւնդ։ Ո՛վ
հայր երկնաւոր, նայեաց յերեսս օծելոյ
քո, նայէ քու միածնիդ վրայ, որ ինձ հա-
մար խաչի վրայ մեռաւ, և անոր արդիւն-
քով ողորմէ ինձ։ Եւ խօսք կու տամ որ
առաջ մեռնիլ կ'ուզեմ քան թէ մէյմ'ալ
զքեզ վշտացնել. իրաւ որ իրաւունք ու-
նիմ վախնալու իմ ըրած մեղքերուս հա-
մար, և քու ըրած շնորհքներուդ համար,
որ եթէ մեղք մ'ալ աւելի ունենամ, չափս
կը լեցուի ու կը դատապարտուիմ։ Հապա
օգնէ ինձ շնորհօք քո, քեզմէ կը յուսամ
որ ինձ լոյս և այժ տաս հաւատարիմ ըլլա-
լու քեզի։ Իսկ եթէ տեսնես որ ես նորէն
զքեզ պիտի վշտացնեմ, տուր ինձ այն
րոպէին մէջ մեռնիլ, յորում կը յուսամ
լինել ի շնորհս քո։ Աստուած իմ, ես զքեզ
կը սիրեմ ամէն բանէ աւելի, և մեռնելէն
այնչափ չեմ վախնար՝ որչափ քու շնորհդ
կորսընցնելէն, մի՞ թողուր զիս։ Մարիամ,
մայր իմ, օգնութեան հասիր ինձ, և առ
ինձ համար սուրբ յարատեւութիւն։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Բայց կ'ըսէ եղեր մեղաւորն, թէ Աստուած ողորմած է։ Ես ալ գիտեմ, թէ անբաւ է Աստուծոյ ողորմութիւնն, և սակայն այս այսպէս ըլլալով ալ սրչափ մարդիկ կը դատապարտուին։ Կ'ըսէ տէրն, թէ ես եկի բժշկել գրեկեալս սրտիւք։ Աստուած կը բժշկէ զանոնք՝ որոնք բարի կամք ունին և թողութիւն կու տայ մեղաց, բայց չի կրնար ներել մեղանչելու կամք ունեցողին։ Կ'ըսես թէ ես կորիճ հասակի մէջ եմ, թող այդպէս ըլլայ. բայց Աստուած տարիքը չի համրեր. հապա մեղքերը, և այս մեղաց չափը ամենուն հաւասար չէ. Աստուած մէկին հարիւր, միւսին հազար մեղք կը թողու. բայց զուրիշն ալ երկրորդ մեղքին ատեն դժոխք կը ղրկէ. քանիներ ալ եղած են որ առաջին մեղքով դժոխք են գնացեր։ Սուրբն Գրիգոր կը պատմէ հինգ տարեկան աղու մը համար, թէ հայհոյութիւն մ'ընելով դըժոխք գնաց. Սուրբ Աստուածածին յայտնեց Փլորենտացի սրբակաց կուսի մը, թէ տասներկու տարուան աղջիկ մը իւր առաջին մեղքով դատապարտուեցաւ։ Ուրիշ աղայ մ'ալ ութ տարեկան՝ առաջին

մեղքով մեռաւ, ու կորսուեցաւ։ Սուրբ աւետարանն կը պատմէ, թէ տէրն մեր առաջին անգամն որ անպտուղ գտաւ զթզենին՝ խսկոյն անիծեց, ըսելով՝ մի այսուհետև ի քէն պտուղ եղիցի յաւիտեան, և առժամայն չորացաւ թզենին։ Մարգարէին ձեռքովն ալ ըսեր է, թէ ի վերայ երից անօրէնութեանցն Դամասկեայ և ի վերայ չորիսն ոչ դարձայց ի նմանէ։ Գուցէ անգգամին մէկն ուզենայ համար պահանջել Աստուծմէ, թէ ինչու մէկին երեք մեղաց կը ներէ, ու չորսին չէ։ Այս բանիս մէջ պէտք է երկրպագանել աստուածային դատաստանաց, և առաքելոյն հետ ըսել, ով խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեանն Աստուծոյ, որպէս զի առանց քննելոյ են դատաստանք նորա, և առանց գննելոյ են ճանապարհք նորա։ Սուրբն Օգոստինոս ալ կ'ըսէ, թէ ինքն գիտէ, ում խնայէ ում չխնայէ. որով ումանց ողորմութիւնը ձրի կ'ըլլայ, և ումանց ալ եթէ չ'ըլլար յարդարութենէ չ'ըլլար։

Թող ըսէ խստասիրտն, թէ ես այնչափ անգամ զԱստուած բարկացուցի, և Աստուած ներեց ինձ, ուստի կը յուսամ որ այս մեղքիս ալ աչք կը խփէ. ես ալ կ'ըսեմ՝ Աստուած որ ինչուան հիմա զքեզ չպատժեց, միշտ այսպէս պիտի ըլլայ. չափը լմնցածին պէս պատիժը կը հասնի։

Սամփսոն որ այնչափ խաղաց Դալիլեային հետ, կը յուսար թէ փղշտացւոց ձեռքէն կ'ազատի, ինչպէս առաջ եղաւ. ելից և աբարից որպէս միշտն, և թօթափեցից կ'ըսէր. բայց վերջին անգամուն բռնուեցաւ, կեանքն ալ կորսընցուց։ Մի՛ ըսեր, կը պատուիրէ Աստուած, մի՛ ըսեր թէ այնչափ մեղք գործեցի և Աստուած զիս չի պատժեց, զի տէր երկայնամիտ է վասն դարձի քո և քաւութեան[1]. Տեղն որ գայ, բոլորը մէկէն կը վճարէ, և որչափ աւելի եղաւ ողորմութիւնն, այնչափ ալ պատիժը ծանր կ'ըլլայ. աղէկ կ'ըսէ Ոսկերերան՝ թէ աւելի վախնալու է երբ Աստուած կը համբերէ, քան թէ շուտով պատժէ. և մեծն Գրիգոր ալ կ'ըսէ, թէ որոնց որ երկար կը սպասէ, աւելի խըստութեամբ կը դատապարտէ, ու վրայ կը բերէ, թէ շատ անգամ անոնց որ երկար համբերեր է Աստուած, յանկարծական մահ վրայ կու գայ, այնպէս որ մեղայ ըսելն, կամ զղջումն ալ մահէն առաջ չի յաջողիր։ Մանաւանդ երբ շատ լոյս քեզի Աստուած տուեր էր, այնչափ մեծ կ'ըլլայ մտքիդ կուրութիւնն և խստասրտութիւնդ ի մեղս։ Ուստի կ'ըսէ սուրբն Պետրոս, թէ լաւ էր նոցա եթէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեանն ճանապարհ, քան

1 Սիր. Ե. 4—5։

թէ ծանեան, և յետս կացին. և սուրբն Պօղոս բարոյապէս խօսելով կ'ըսէ, թէ անհնար է միանգամ մկրտելոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգևաց,... և կործանեսցին՝ միանգամ նորոգել յապաշխարութիւն։

Սարսափելի է Աստուծոյ ըսածն իւր կոչմանէ խուլ ձևացողներուն. քանզի կոչէի և ոչ անսայիք... այսուհետև ես ծիծաղեցայց կորստեամբ ձերով, որ է ըսել՝ ինչպէս մեղաւորը ծաղր ըրաւ զԱստուած՝ խոստովանանք ըլլալով, խօսք տալով, ու ետքը մատնիչ եղաւ, այնպէս ալ Աստուած ծաղր պիտի ընէ զայն մահուան ատեն։ Դարձեալ կ'ըսէ իմաստունն՝ որպէս չուն դառնայ ի փսխած իւր և ատելի լինի, նոյնպէս անզգամն չարեաւ իւրովք յորժամ դառնայցէ ի մեղս իւր։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ահա տէր, ես եմ այն գարշելի շունն՝ որ այնչափ անգամ դարձայ ուտել այն արգելեալ պտուղները, որոնցմէ առաջ ետ քաշուեր էի։ Գթութեան արժանի չեմ ես, ով փրկիչ իմ, բայց քու սուրբ արիւնդ թափեցիր ինձ համար, որ զիս կը քաջալերէ և կը ստիպէ յոյս ունենալ։

Քանի՞ անգամ ես զքեզ վշտացուցի, և դու թողութիւն տուիր ինձ։ Խոստացայ մէյմ՚ալ զքեզ չվշտացնել, և նորէն ի փոխածս դարձայ, և դուն ալ դարձար ներ-ցիր ինձ. ալ ի՞նչ բանի կը սպասեմ, թէ ոչ դատապարտութեան ի դժոխս, կամ թողու զիս ի ձեռս մեղաց, որ աւելի մեծ պատիժ է քան զդժոխս։ Բայց քաւ լիցի, Աստուած իմ, ես զիս կ՚ուզեմ շտկել, և քեզի հաւատարիմ ըլլալ. բոլոր յոյսս քու վրադ կը դնեմ, կ՚ուզեմ քանի որ փորձուիմ, մէկէն քեզի դիմել միշտ։ Առաջ ապաւիներ էի իմ խոստմանցս և առաջադրութեանցս վրայ, և անհոգ էի զիս քեզի յանձնելու փորձութեան ատեն, և այս ե-զաւ իմ կործանմանս պատճառ։ Զէ՛ չէ, ակէ ետև դու պիտոր ըլլաս իմ յոյս, ապաւէնս, զօրութիւնս, և այսպէս կա-բող կ՚ըլլամ ամէն բանի։ Ուրեմն շնորհք տուր ինձ քու արդեամբդ, Յիսուս փրկիչ իմ, զիս քեզի միշտ յանձնել, և օգնու-թիւն խնդրել յամենայն պէտս իմ։ Զքեզ կը սիրեմ ծայրագոյն բարի և ի վեր քան զամենայն բարիս սիրելի, և զքեզ միայն կ՚ուզեմ սիրել, միայն թէ դուն ինձ օգնէ։ Դուն ալ Մարիամ, մայր իմ, օգնական ե-զիր ինձ, ընդունէ զիս քու հովանաւորու-թեանդ ներքև, և տուր որ միշտ առ քեզ ապաւինիմ փորձութեան ատեն, քու ա-նունդ ըլլայ իմ պաշտպանութիւնս։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Կ՚ըսէ Սիրաք, թէ որդեակ մեղաւ, բայց մի՛ նորէն աւելցներ, հապա առաջիններուն թողութիւն խնդրէ։ Այս է քեզի Աստուծոյ ըրած ազգարարութիւնն, ով քրիստոնեայ, վասն զի քու փրկութիւնդ կ՚ուզէ։ Ով եղբայր, որչափ աւելի սրդողցնես զԱստուած, այնչափ աւելի պիտի դողաս՝ որ մէյմ՚ալ չի սրդողցնես, վասն զի երբ նորանոր մեղք գործես, կրնայ ծանրացնել Աստուծոյ արդարութեան կը-շիռքը. և կը դատապարտուիս։ Ես բաց-արձակապէս չեմ ըսեր, թէ մէյմ՚ալ մե-ղանչելիդ ետև թողութիւն չ՚ըլլար, վասն զի այդ իմ գիտնալու բանս չէ. հապա կ՚ըսեմ, թէ այդպէս ալ կրնայ ըլլալ։ Ուստի երբ կը փորձուիս ր է. արդեաք Աստուած մէյմ՚ալ կը ներէ. եթէ չներէ որդի կորստեան կ՚ըլլամ։ Քեզի կը հարցնեմ, թէ որ հաւանական ըլլար՝ թէ սա կերա-կրոյս մէջ թոյն կայ, բնաւ կ՚ուտէի՞ր. թէ որ հաւանականաբար գիտնայիր որ ճամ-բու վրայ թշնամիք քեզի կը սպասեն սպան-նելու, անկից կ՚անցնէի՞ր երբ ուրիշ ա-պահով ճամբայ կայ։ Արդ, ի՞նչ ապահո-վութիւն կամ հաւանականութիւն ունիս

դու, թէ երբ դառնաս մեղանչես, ետքը պիտի ունենաս ճշմարիտ զղջումն, ու պիտի չի դառնաս փոխածիդ, և թէ ի մեղանչելդ Աստուած նոյն ատեն մահ չի բերեր վրադ կամ զքեզ երեսէ չի ձգեր։

Ո՛վ մարդ, դու տուն մը որ գնելու ըլլաս, ամէն փոյթ և զգուշութիւն կ'ընես որ ստակդ չկորսընցնես. թէ որ դեղ մը առնելու ըլլաս, ամէն կերպով կը նայիս որ անկից քեզի վնաս մը չ'ըլլայ. գետ մը որ անցնիս կը նայիս որ վտանգ մը չ'ըլլայ ընկնալու։ Ետքը չնչին հաճոյիցդ կամ ամենական յանցանքի մը համար, կ'ուզես վտանգի մէջ դնել քու յաւիտենական փրկութիւնդ, ըսելով թէ կը յուսամ որ խոստովանանք կ'ըլլամ։ Բայց ես քեզի հարցնեմ. երբ պիտոր խոստովանիս. կիրակի կ'ըսես, և ով քեզի խօսք կու տայ, թէ ողջ պիտի մնաս մինչև ի կիրակի. վաղը կ'ըսես, և ով կը խոստանայ քեզի վաղուան օրը։ Աղէկ կ'ըսէ սուրբն Օգոստինոս՝ եթէ ժամը ձեռքդ չէ, օրը ինչպէս ձեռքդ ըլլայ։ Ի՞նչպէս կրնաս դու քեզի խոստանալ, թէ վաղը կը խոստովանիս, երբ չես գիտեր թէ այսօր ժամ մ'ալ կ'ուենենաս արդեօք։ Ուստի նոյն սուրբը կ'ըսէ դարձեալ, թէ Աստուած ապաշխարողին թողութիւն խոստացաւ, բայց մեղանչողին վաղուան օրը չի խոստացաւ. գուցէ կու տայ, գուցէ չի տար։ Թէ որ հիմայ

մեղանչես Աստուած գուցէ ապաշխարութեան ժամանակ քեզի տայ, և գուցէ չի տայ. և եթէ չի տայ այն ատեն քու վիճակդ ինչ կ'ըլլայ յաւիտենականութեան մէջ։ Այսու ամենայնիւ դու չնչին հաճոյից համար հոգիդ կը կորսընցնես և զքեզ յաւիտենական կորստեան վտանգին մէջ կը դնես։ Հազար դահեկան կը դնէիր արդեօք ի վտանգ այն անպիտան հաճոյից համար։ Աւելի մեծն ըսեմ, կ'ըսէիր արդեօք այն չնչին բանին համար, թէ թող ամէն բանս երթայ կորսուի, ստակս ալ, տունս ալ, ունեցածս, չ'ունեցածս, ազատութիւնս. կեանքս։ Զէ. Հապա ինչպէս ետքը կ'ելնես կ'ուզես այդ չնչին հաճոյիցդ համար մէկ վայրկենի մէջ ամէն բան կորսընցնել, հոգիդ ալ, արքայութիւնն ալ, զԱստուած ալ։ Քեզի կ'ըսեմ, չիտակն ըսէ ինձ, այս բաներս ճշմարտութիւն են, ինչպէս որ հաւատքն կը սորվեցնէ, թէ առասպել. այսինքն է՝ արքայութիւն կայ արդեօք, դժոխք կայ, յաւիտենականութիւն կայ, կը հաւատաս դու, թէ մեղքի մէջ մեռնելով կորսուած ես յաւիտեան։ Արդ ինչ անխելքութիւն է ուրեմն, ինչ յիմարութիւն է, որ դու զքեզ կը դատապարտես ի յաւիտենական տանջանս, ըսելով, թէ յուսամ որ ետքը ճար մը կ'ընեմ։ Կ'ըսէ սուրբն Օգոստինոս՝ թէ ոչ ոք յուսով առողջութեան յանձն կ'առնու հի-

ւանդանալ. խենթ մը չկայ որ թոյն առնու՝ ըսելով թէ կարելի է որ ետքը դեղով կ'առողջանամ։ Իսկ դու յաւիտենից մահուան գքեզ դատապարտել կ'ուզես, ըսելով թէ կրնայ ըլլալ որ ետքը խալըսիմ։ Ո՜վ յիմարութեանս, որ շատերը տարաւ ու կը տանի ի դժոխս. ինչպէս որ սուրբ գիրքն ալ կ'ըսէ, թէ վասն վստահութեան չարութեանց քոց հացէ ի վերայ քո կորուստ, զոր ոչ գիտիցես։ Աստուծոյ անհուն ողորմութեան յանդգնաբար ապաւինելով մեղանչեցիր, յանկարծակի վրադ պիտի հասնի պատիժը, և պիտի չ'իմանաս թէ ուսկից է։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ահա, տէր, ես այն խենթերէն մէկն եմ, որ շատ անգամ կորուսեր եմ հոգիս և քու շնորհքդ՝ այն յուսով որ նորէն կը գտնեմ։ Եւ թէ որ դու ինձ մահ զրկէիր այն ատեն կամ այն գիշերն որ ես ի մեղս էի. ի՞նչ կ'ըլլար հիմայ իմ վիճակս։ Գոհանամ զողորմութենէ քումմէ, որ ինձ երկայնամիտ եղար, և ինձ ճանչնալ կուտաս իմ խենթութիւնս։ Կը տեսնեմ որ դու զիս փրկել կ'ուզես. ես ալ կ'ուզեմ փրկուիլ։ Կը ցուիմ կը զղջամ որ շատ

անգամ քեզի երես դարձուցի. կը սիրեմ զքեզ յամենայն սրտէ, և կը յուսամ յարդիւնս չարչարանաց քոց, Յիսուս փրկիչ իմ, որ մէյմ՝ալ զքեզ չի կորսընցնեմ. ընկալ զիս ի շնորհս քո, որ մէյմ՝ալ զքեզ չ'ուզեմ թողուլ։ Ի քեզ, տէր, յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան։ Ա՜խ, չեմ կարծեր, ով փրկիչ իմ, որ ես մէյմ՝ալ այն թշուառութիւնը և ամօթը քաշեմ, տեսնել զիս զուրկ ի շնորհացդ և ի սիրոյ քոյ։ Տուր ինձ սուրբ յարատեւութիւն, և տուր որ միշտ զքեզ խնդրեմ, մանաւանդ փորձութեան ատեն, և յոգնութիւն կանչեմ զսուրբ անունդ քո. և սուրբ մօր քոյ, ըսելով Յիսուս իմ օգնեա ինձ. Մարիամ, մայր իմ, օգնէ ինձ։ Գիտեմ, ով թագուհիդ իմ, որ եթէ քեզի ապաւինիմ չեմ յաղթուիր բնաւ։ Եւ եթէ սատկանայ փորձութիւնը վրաս՝ տուր որ աւելի սրտանց առ քեզ կարդամ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԹ.

ՈՐՉԱՓ ՄԵԾ ԲԱՆ Է

ԱՍՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀՔՆ

ԵՒ ՈՐՉԱՓ ՉԱՐ Է

ԶՐԿՈՒԻԼ Ի ՇՆՈՐՀԱՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Մարդս սևեռ յարգը չի գիտեր [1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Այսպէս կ'ըսէ տէր՝ Երեմիա մարգարէին բերնով. եթէ հանցես զպատուական յանարդէ, իբրև զբերան իմ եղիցիս։ Ով որ գիտէ բաժնել պատուականն անար-

1 Ոչ գիտէ մարդ զյարգ նորա։ Յովբ. ԻԸ. 13. Ըստ լատին։

գէն՝ Աստուծոյ նման կ'ըլլայ. որ գիտէ զչարն արհամարհել և զբարին ընտրել։ Գիտենք որ շնորհքն Աստուծոյ պատուական բան է, և անշնորհքն մեծն չատ գէշ և անարգ բան է։ Բայց մարդս չի գիտեր աստուածային շնորհաց յարգը, ուստի կը փոխէ զայն ոչինչ բանի մը հետ, ծուխի մը պէս բանի հետ, կաւոր մը հողի հետ, անբանական հաճոյքի մը հետ. ուր Աստուծոյ շնորհքն է գանձ անհուն, որ զմեզ Աստուծոյ բարեկամ կ'ընէ. զի անպակաս գանձ է մարդկան, որով որք վարեցան՝ առ Աստուած առաքեցին զբարեկամութիւն, կ'ըսէ Իմաստունն։ Հեթանոսք որ զուրկ էին ի հաւատոց լուսոյն, կը կարծէին թէ անկարելի է որ արարած մը բարեկամութիւն կարենայ ունենալ Աստուծոյ հետ. և իրաւ որ բնական լուսով խօսելով իրաւունք ունէին, վասն զի ինչպէս որ սուրբն Հերոնիմոս ալ կ'ըսէ, բարեկամութիւնն կամ իրեն հաւասար կ'ուզէ՝ կամ կ'ընէ։ Բայց Աստուած չատ տեղ յայտնի ըրաւ, թէ մենք իւր շնորհքովն իրեն բարեկամ կ'ըլլանք, թէ որ իւր օրէնքները պահենք։ Դուք բարեկամք էք իմ, կ'ըսէ. եթէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ, ոչ ևս կոչեմ զձեզ ծառայս... այլ զձեզ կոչեցի բարեկամս։ Ուստի կ'աղաղակէ սուրբն Գրիգոր, մ'զանչելի մարդասիրութեանն

Աստուծոյ, մենք ծառայ ըսուելու արժանի չենք, և ահա բարեկամ կ'անուանին։

Ինչպէս բարերախտ կը սեպէր զինքը մէկն, թէ որ արժանի ըլլար բարեկամ ըսուիլ իւր թագաւորին. բայց մեծ յանդգնութիւն կը սեպուէր, թէ որ հպատակ մը ետեւէ ընկնար բարեկամութիւն ընել իւր թագաւորին հետ. և սակայն յանդգնութիւն չէ, թէ որ մէկն ուզենայ բարեկամ Աստուծոյ ըլլալ։ Կը պատմէ սուրբն Օգոստինոս, թէ երկու ազնուական զբաղուեցան միանձանց վանքի մը մէջ, մէկը հոն սուրբ Անտոն արքային վարքը սկսաւ կարդալ, և որչափ կը կարդար այնչափ սիրտը աշխարհէս կը հեռանար, և կրկին կրկին կարդալով՝ ըսաւ իւր ընկերոջ՝ թէ մենք ի՞նչ կ'ուզենք. շատ շատ յոյս պիտի ունենանք որ կայսեր բարեկամ ըլլանք. և ի՞նչ վտանգներ պիտի քաշենք այդ բանիդ հասնելու համար։ Ուրեմն մենք խենթենք՝ որ այնպէս բան կը փնտռենք, և ուրիշ յոյս չ'ունինք։ Թէ և կայսեր ծառայելով իւր բարեկամներէն ըլլայինք, անոր ալ հասնէինք, աւելի վտանգ կ'ըլլար մեր հոգւոյն փրկութեան. իսկ եթէ Աստուծոյ բարեկամ ըլլալ ուզեմ, ահա հիմայ կրնամ ըլլալ։

Ուրեմն ով որ ի շնորհս Աստուծոյ է, Աստուծոյ բարեկամ է, և որ մեծն է՝ Աստուծոյ որդի ալ կ'ըլլայ. ես ասացի թէ

աստուածք իցէք, կամ որդի բարձրելոյ ամենեքեան։ Այս է մեծ պարգև սիրոյն Աստուծոյ միշնորդութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Տեսէք որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, գոչէ առաքեալն, զի որդիք Աստուծոյ կոչեսցուք, և եմք։ Ամաւելին, հոգին շնորհօք կ'ըլլայ հարան Աստուծոյ. խօսեցայց զքեզ հաւատով, կ'ըսէ Աստուած։ Այսոր համար անառակ որդւոյն հայրն իւր շնորհաց մէջ ընդունելով նորէն իւր զաւակը՝ հրամեց որ հարնախօսութեան մատանին տրուի իրեն. տուր զմատանին ի ձեռս նորա. միանգամայն կ'ըլլայ և տաճար հոգւոյն սրբոյ։ Տոկնէս Մարիամ կոյսն տեսաւ որ երախայի մը մկրտուելու ատեն սատանան ելաւ անկէ և մտաւ հոգին սուրբ հրեշտակաց։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ուրեմն, Աստուած իմ, երբ հոգիս ի շնորհս քո էր, քու որդիդ էր, հարազատ էր ու տաճարդ էր. և մեղանչելով ամէն բան կորսընցուց, ու եղաւ քու թշնամիդ, և գերի դժոխոց։ Սակայն շնորհակալ եմ, որ ատեն տուիր ինձ ընդունելու քու շնորհքդ, Աստուած իմ։ Կը զղջամ ամէն բանէ վեր զքեզ վշտացնելուս վրայ, ով անհուն բա-

բիդ, կը սիրեմ զքեզ ի վեր քան զամենայն։ Ա.Հ. կ'աղաչեմ, զիս Նորէն ընդունէ ի քո բարեկամութիւնդ, մի անարժան համարիր զիս։ Գիտեմ որ ես արժանի էի քեզմէ պատժուելու, բայց արդիւնք Քրիստոսի Յիսուսի կ'արժեն՝ որ զիս Նորէն ընդունիս յետ զղջալուս։ Վասն սիրոյ պատարագին որով ինք զինքը զոհեց ի Գողգոթա, եկեսցէ արքայութիւն քո, հայր իմ, վասն զի այսպէս քեզի կարդալ սորվեցուց ինձ միածինդ. եկ հայր իմ քու շնորհաբդ թագաւորել իմ սրտիս մէջ, տուր որ սիրես քեզի միայն ծառայէ, քեզի համար միայն ապրի, և զքեզ միայն սիրէ։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն. մի թողուր կ'աղաչեմ որ սատանան զիս փորձէ ու ինձ յաղթէ։ Այլ փրկեա զմեզ ի չարէ, դժոխքէն զիս խալըսէ, բայց նախ և առաջ մեղքէ զիս խալըսէ, որ միայն կրնայ զիս դժոխք տանել։ Ով տիրամայր Մարիամ, բարեխօսեա վասն իմ, խալըսէ զիս այս մեծ չարէն որ մեյմ'ալ զիս չի տեսնեմ ի մեղս, և զուրկ քու շնորհքէդ և ի շնորհաց Աստուծոյ իմոյ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Սուրբն Թովմաս Ագուինացին կ'ըսէ, թէ շնորհաց պարգևն ի վեր է քան զամենայն տուրս հաղորդեալս արարածական բնութեան, վասն զի հաղորդակցութիւն է աստուածային բնութեան։ Ինչպէս Պետրոս առաքեալն ալ ըսեր է, թէ զի նոքիմք աստուածեղէն բնութեան լինիցիմք հաղորդակիցք։ Ահա այսպիսի մեծ բան շահեցաւ մեզի համար Քրիստոս տէրն մեր իւր չարչարանօք, ինքը մեզի հաղորդեց այն փառքը՝ զոր ընկալաւ ի հօրէն, վասն զի և ես զփառսն զոր ետուր ինձ, ետու նոցա՝ կ'ըսէ։ Վերջապէս ի շնորհս Աստուծոյ եղողն Աստուծոյ հետ մէկ կ'ըլլայ. որ մերձենայ ի տէր՝ մի հոգի է։ Փըրկիչն մեր այս ալ ըսաւ, թէ յաստուածասէր հոգին կու գայ բնակելու բոլոր սուրբ երրորդութիւնն. եթէ որ սիրէ զիս... հայրն իմ սիրեսցէ զնա, և առ նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք։ Շնորհաց մէջ եղող հոգին Աստուծոյ առջև այնչափ գեղեցիկ բան է՝ որ ինքն Աստուած ալ զայն գովելով կ'ըսէ, գեղեցիկ ես, մերձաւոր իմ. ով քանի գեղեցիկ ես։ Այնպէս կ'երևի որ հոգի մը զոր սիրէ Աս-

տուած չի կրնար իւր աչքն անկէ դարձը-
նել, և ոչ ականջը. ինչ որ իրմէ ուզէ կը
կատարէ. աչք տեսան ի վերայ արդարոց
և ականջք նորա յաղօթս նոցա՝ կ'ըսէ
սաղմոսերգուն։ Սրբուհին Բրիճիտա կ'ը-
սէր, թէ չի կրնար մէկը տեսնել հոգւոյ մը
գեղեցկութիւնն որ ի շնորհս Աստուծոյ է,
և չմեռնիլ ուրախութենէն։ Եւ սրբուհին
Կատարինէ սենայցին երբ տեսաւ հոգի մը
որ ի շնորհս էր, ըսաւ. սիրով կեանքս կու
տայի, միայն թէ այն հոգին չկորսընցնէ
իւր այնչափ գեղեցկութիւնը. անոր հա-
մար այս կոյսը կը համբուրէր այն տե-
ղուանքը՝ ուսկից որ քահանայքն կ'անց-
նէին, գիտնալով՝ որ անոնց ձեռքով հո-
գիներն կը դառնան ի շնորհս Աստուծոյ։

Հապա որչափ արդիւնք կրնայ դիզել
հոգի մը որ ի շնորհս Աստուծոյ է. ամէն
վայրկենի մէջ կրնայ շահիլ յաւիտենական
փառք մը։ Սրբոյն Թովմայի ըսածին պէս՝
իւրաքանչիւր ներգործութիւն սիրոյ հո-
գւոյ մը, արժանի կ'ըլլայ մասնաւոր յա-
ւիտենից կենաց։ Ինչ հապա մենք կեցեր
ենք նախանձելու աշխարհիս մեծերուն։
Թէ որ ի շնորհս Աստուծոյ ըլլանք, շարու-
նակ կրնանք շահիլ աւելի մեծ մեծութիւն-
ներ յերկինս։ Հայրն Փաղրինեանի կը
գրէ իւր յայսմաւուրին մէջ, թէ օգնական
եղբայր մը Յիսուսեան կարգին, մեռնելէն
յետոյ երևցաւ մէկուն ու ըսաւ, թէ փըր-

կուած եմ ես երկրորդ Փիլիպպոսի Սպա-
նիոյ թագաւորին հետ, ու միասեղ կը
վայելենք ի փառս. բայց որչափ որ քիչ
էր իմ սէրս Փիլիպպոսի հետ երկրիս վրայ,
այնչափ հիմայ շատ է արքայութեան մէջ։
Դարձեալ փոքր եղողը միայն կրնայ իմա-
նալ այն խաղաղութիւնը՝ զոր կը վայելէ
աշխարհիս վրայ ալ ի շնորհս Աստուծոյ ե-
ղողն. ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է
տէր։ Աստուծոյ խօսքը գետին չընկնար՝
որ կ'ըսէ, թէ խաղաղութիւն բազում է
այնոցիկ՝ որք սիրեն զօրէնս քո, և խաղա-
ղութիւնն Աստուծոյ՝ որ ի վեր է քան զա-
մենայն միտս։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ փրկիչ իմ Յիսուս, դուն ես բարի
հովիւն՝ որ քու կեանքդ տուիր մեզի հա-
մար, որ քու ոչխարդ ենք։ Երբ ես քեզմէ
կը փախչէի, դու չդադրեցար ետևէս վա-
զելու գիս փնտռելով. հիմայ գիս ընդու-
զէ, երբ ես զքեզ կը խնդրեմ, և զղջմամբ
կը դառնամ առ ոտս քո։ Տուր ինձ նորէն
քու շնորհքդ, զոր ես թշուառաբար կո-
րուսի իմ յանցանքովս։ Կը զղջամ բոլոր
սրտանց, երանի թէ ցաւէս մեռնէի՝ յի-
շելով որ այնչափ անգամ քեզմէ երես եմ

դարձուցեր։ Ներէ ինձ արդեամբք դառն մահուան քո որով վասն իմ ի վերայ խաչի մեռար, կապէ զիս քաղցր կապանօք սիրոյդ, և մի թողուր որ մէյմ՚ալ քեզմէ զատուիմ։ Տուր ինձ համբերութեամբ տանիլ ամէն խաչի, զոր ինձ կը ղրկես, ուր ես արժանի եղած եմ յաւիտենական տանջանացն դժոխոց։ Տուր որ սիրով գրկեմ զանարգանս ի մարդկանէ, ուր ես արժանի եղայ դիւաց ոտքին տակն ըլլալ յաւիտեան։ Վերջապէս տուր ինձ որ ամէն կերպով հնազանդ ըլլամ քու ազդարարութեանցդ, և յաղթեմ ամենայն մարդկային նկատմանց քու սիրովդ։ Ես առաջադրեր եմ ասկից ետև քեզի միայն ծառայել, թող ուրիշներն ինչ կ՚ուզեն ըսեն, ես զքեզ միայն կ՚ուզեմ սիրել, ամենասիրելի Աստուած իմ, քեզի միայն կ՚ուզեմ հաճոյ ըլլալ. միայն թէ տուր ինձ քու օգնութիւնդ, առանց անոր բան մը չեմ կրնար ընել։ Զքեզ կը սիրեմ, Յիսուս իմ, յամենայն սրտէ, և ի քո սուրբ ապաւինիդ կ՚ապաւինիմ։ Մարիամ յոյս իմ, օգնէ ինձ քու բարեխօսութեամբդ. ես կը պարծիմ քու ծառադ ըլլալուս, դուն ալ կը պարծիս փրկելով զմեզաւորս՝ որ կը դիմեն առ քեզ, հասիր ինձ յօգնութիւն և փրկէ զիս։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Տեսանենք հիմայ այն հոգւոյն ողորմելութիւնն որ Աստուծոյ շնորհքէն ընկեր է։ Այնպիսին բամնուած է իւր ծայրագոյն բարիէն, որ է Աստուած. մեղք ձեր որոշեն ի մէջ ձեր և ի մէջ Աստուծոյ, կ՚ըսէ Եսայի։ Այնպէս որ՝ անկից ետև նա Աստուծոյ չէ, Աստուած ալ իրենը չէ. դուք չէք ժողովուրդ իմ, և ես ոչ ինչ եմ ձեր։ Չէ թէ միայն Աստուծոյ չէ, հապա նաև կ՚ատէ զինքը Աստուած և կը դատապարտէ ի դժոխս։ Աստուած իւր արարածը չ՚ատեր, և ոչ գազանները, իժերը և պիծակները. սիրես զամենայն որ ինչ է, և ոչ գարշիս յումեքէ յորոց արարեր, զի ոչ եթէ առ ատել հաստատեցեր ինչ, կ՚ըսէ Իմաստունն։ Բայց չի կրնար չ՚ատել մեղաւորները. ատեցեր զամենեսեան զոր գործեն զանօրէնութիւն. վասն զի Աստուած չի կրնար չ՚ատել զմեղս, որ է բոլորովին իւր կամաց հակառակ, ուստի մեղքը ատելով՝ հարկաւ զմեղաւորն ալ կ՚ատէ, որ մեղաց հետ միացեր է. առ հասարակ ատելի են Աստուծոյ ամպարշտութիւնն և ամպարշտութիւն նորա։

Հիմայ դու եկուր նայէ, որ եթէ մէկն

իրեն թշնամի ունենայ աշխարհիս թագաւոր մը, չի կրնար հանգիստ քուն ըլլալ. իրաւամբք, վասն զի միշտ մահուան վախը կը քաշէ։ Հապա մէկն որ զԱստուած իրեն թշնամի ունենայ, ինչպէս կրնայ հանգիստ կենալ. թագաւորի մը բարկութենէն մէկը կրնայ փախչել, անտառի մը մէջ թաղչել, կամ ուրիշ թագաւորութիւն մը երթալով, բայց Աստուծոյ ձեռքէն ո՞վ կրնայ փախչել։ Տէր, կ'ըսէր Դաւիթ, եթէ ելանեմ յերկինս, դու անդ ես, և եթէ իջանեմ ի դժոխս, և անդ մոտ ես. . . և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ։

Վա՜յ մեղաւորներուն գլխոյն. անիծեալ են յԱստուծոյ, անիծեալ են ի սրբոց, անիծեալ են ի հրեշտակաց, անիծեալ են աշխարհիս վրայ ալ ամէն օր քահանաներէն, կրօնաւորներէն՝ որ ժամերգութեան մէջ կ'ըսեն. անիծեալ, ոյք խոտորեցան ի պատուիրանաց քոց, Ո՞ր թողունք որ Աստուծոյ շնորհքէն ընկնողն իւր ամէն արդիւնքն ալ կը կորսընցնէ։ Թող մէկն այնչափ արդիւնք դիզէ, որչափ սուրբն Պօղոս անապատականը դիզեց, որ քառասունութ տարի քարանձաւի մը մէջ ճգնեցաւ. կամ որչափ սուրբն Փրանկիսկոս քաւերեան դիզեց, որ տաս միլիոն հոգի շահեցաւ Աստուծոյ. կամ սուրբ Պօղոս առաքեալին չափ արդիւնք ունենայ,

որ սրբոյն Հերոնիմոսի ըսածին պէս՝ քան զամէն առաքեալներէն աւելի արդիւնք ունեցաւ։ Բայց թէ որ այսպիսի անձ մը մահուչափ մեղք մը գործէ, ամէն բան կը կորսընցնէ. ամենայն արդարութիւնք նորա զորս արար, մի յիշեսցին. տեսար ինչ կործանումն կը բերէ Աստուծոյ շնորհքէն ընկնալն, թէ որ Աստուծոյ սրդի էր, սադայէլի գերի կ'ըլլայ. եթէ Աստուծոյ սիրելի բարեկամ էր, ծայրագոյն թշնամի և ատելի կը դառնայ. արքայութեան ժառանգ ըլլալէն՝ դատապարտեալ մը կ'ըլլայ ի դժոխս։ Սուրբն Փրանկիսկոս սալեզեան կ'ըսէր, թէ որ հրեշտակները կարենային լալ, տեսնելով հոգւոյ մը թշուառութիւնն որ մահուչափ մեղաց մէջ ընկեր է, և կորուսեր է Աստուծոյ շնորհքը, ցաւակցելով արցունք կը թափէին։

Բայց աւելի մեծ թշուառութիւնն այն է որ եթէ հրեշտակներն ալ լալու ըլլան, ինքը մեղաւորը չի լար։ Սուրբ Օգոստինոսին ըսածին պէս՝ մէկն եթէ պզտիկ առնասուն մը կամ ոչխարիկ մը կորսընցնէ, չ'ուտեր, չի քնանար. կու լայ. բայց երբ Աստուծոյ շնորհքը կը կորսընցնէ, կ'ուտէ, կը քնանայ ու չի լար։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ահա այսպիսի ոգորմելի վիճակի մը մէջ զիս ձգեր եմ, ով փրկիչ իմ։ Դու զիս շընորհաց արժանի ընելու համար, երեսուն ուերեք տարի քրտինք և արիւն թափեցիր, և ես վայրկեանի մը մէջ մէկ գարշելի հաճոյից համար՝ փուճ տեղ անարգեցի և կորուսի զայն ամենայն։ Շնորհակալ եմ քու մարդասիրութեանդ, որ դեռ ատեն կու տաս ինձ նորէն ձեռք բերելու, թէ որ կ'ուզեմ։ Այո՛ տէր, կ'ուզեմ ձեռքէս եկածն ընել, որ նորէն կարենամ շընորհքդ ձեռք բերել։ Ասէ ինձ ի՞նչ պէտք է ընել, որ քեզմէ թողութիւն առնեմ. կ'ուզես որ զղջամ, այո՛ փրկիչ իմ, կը զղջամ բոլոր սրտանց, քու անբաւ բարութիւնդ վշտացնելուս վրայ. կ'ուզես որ ըզքեզ սիրեմ, այո՛ կը սիրեմ զքեզ ի վերքան զամենայն։ Ինչուան հիմայ սիրտս տուեր էի ի սէր արարածոց և ունայնութեան, այս օրէս ետև կ'ուզեմ քեզի համար միայն ապրիլ, և զքեզ միայն սիրել, Աստուած իմ, գանձ իմ, զօրութիւն իմ. սիրեցիր զքեզ, տէր զօրութիւն իմ։ Քու արդիւնքդ, քու վէրքերդ իմ յոյսս և զօրութիւնս պիտի ըլլան։ Քեզմէ կը յուսամ

զօրութիւն հաւատարիմ ըլլալու քեզի։ Հապա ընդունէ զիս ի քո շնորհս, ով փրկիչ իմ. մի թողուր որ ես զքեզ մէյմ՛ալ թողում. զիս հեռացուր ի յօժարութեանց աշխարհի, և բորբոքէ իմ սիրտս սուրբ սիրովդ։ Մարիամ, մայր իմ, վառէ զիս սիրովն Աստուծոյ, որով դու վառուած ես միշտ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ի·

ՄԵՂԱՒՈՐԻՆ ԽԵՆԹՈՒԹԻՒՆԸ

Իմաստուրիւն աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի Աստուծոյ։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Պատուական Յովհաննէս Աւիլան կ'ըսէր, թէ զաշխարհս պէտք էր երկու բանտ բաժնել՝ մէկը անհաւատներուն համար, իսկ միւսն այն հաւատացեալներուն համար որ մեղքը կ'ապրին՝ հեռի Աստուծմէ, և ասոնց կ'ինկնայ, կ'ըսէր, խենթերուն բանտն։ Բայց այս խեղճերուն մեծ թշուառութիւնն և ողորմելութիւնն այն է որ իրենք զիրենք խելացի տեղ դրեր են, որ աշխարհիս վրայ իրենցմէ աւելի անխելք և խենթին խենթը չիկայ։ Ա՛լ աւելի գէշն այն է որ այսպիսիներն անհամար թուով են, և Սիրաքայ ըսածին պէս՝ անհամար

է անմտաց թիւն։ Կայ որ փառաց և պատուոյ խենթ է, կայ որ հեշտութեանց խենթ է, կայ ալ որ երկրիս դիրքը կը սիրէ։ Բայց ասոնք կը համարձակին խենթ սեպել զսուրբերն, որ կ'արհամարհեն աշխարհիս բարիքը՝ որպէս զի յաւիտենից փրկութիւնը ստանան, և զճշմարիտ բարին, որ է Աստուած։ Անխելքութիւն կը սեպեն անարգանաց սիրով համբերելը, և անիրաւութեանց ներելը. խենթութիւն կը սեպեն զգայական հեշտութիւններէ զրկուիլը, և իրենք զիրենք մահացնելը. խենթութիւն կը սեպեն փառքէ և հարստութենէ հրաժարիլը, և առանձնութիւն ու անծանօթ խոնարհ կեանք սիրելը. և չեն մտածեր որ իրենց իմաստութիւնն Աստուած խենթութիւն կը սեպէ. զի իմաստութիւն աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի Աստուծոյ՝ կ'ըսէ սուրբ գիրքն։ Ի՞նչ շահ, որ օր մը իրենք ալ պիտի խոստովանին իրենց խենթութիւնը. բայց ե՞րբ. երբ ալ ճար ճարակ չիկայ, և պիտի ըսեն յուսահատութեամբ, թէ մեք անմիտք զվարս սոցա յիմարութիւն կամ մոլորութիւն համարէաք, և զվախճան դոցա անարգութիւն. զիարդ համարեցան ընդ որդիս Աստուծոյ, և ընդ սուրբս վիճակ դոցա՝ որ յաւիտեան երջանիկ և երանելի պիտի ըլլան, իսկ մենք պիտի մընանք գերի սատանայի, և պիտի դատա-

պարտուինք այն տանջանաց գուբին մէջ յաւիտեան. ուրեմն մոլորեցաք ի ճանապարհէ ճշմարտութեան, և լոյսն արդարութեան ոչ լուսաւորեաց զմեզ. և այն է մեր եաքի թշուառութիւնն որ մեր մոլորութեան դեղ չիկայ, և պիտի չ'ըլլայ յաւիտեան, քանի որ Աստուած՝ Աստուած է։

Ուրեմն որպիսի յիմարութիւն է Աստուծոյ շնորհքը կորսընցնել անարդ շահասիրութեան մը համար, ոչինչ անձնասիրութեան մը համար, քիչ մը ծուխի մուխի համար, անցաւոր և կարճատև հաճոյից համար։ Ի՞նչ բան չէր ըներ դեղացի մը իւր իշխանին առլև շնորհք գտնելու համար։ Հապա ի՞նչ ըսել է մէկ անպիտան հաճոյից համար կորսընցնել զծայրագոյն բարին որ է Աստուած. արքայութիւնը կորսընցնել. հանգիստն ալ կորսընցնել այս աշխարհիս վրայ, թող տալով մեղաց որ հոգւոյն տունը մտնէ, հետն ալ խղճմտանաց մշտատանջ խայթն առած. և այսպէս կամաք դատապարտուիլ ի յաւիտենական թշուառութիւն։ Դու յանձն կ'առնուիր այդ անարժան հաճոյքդ, թէ որ եաքն անոր համար մէկ ձեռքդ այրեր, կամ տարի մը գերեզմանի մէջ փակուէիր. կ'ընէիր այդ մեղքը, եթէ պէտք ըլլար անոր համար հարիւր դահեկան կորսընցնել։ Եւ սակայն կը հաւատաս և գիտես, թէ

մեղանչելովդ կը կորսընցնես զարքայութիւնն ալ, զԱստուած ալ, և յաւիտեան դժոխք պիտի դատապարտուիս. և այսու ամենայնիւ ի՞նչպէս կը մեղանչես։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Աստուած հոգւոյ իմոյ, ի՞նչ կ'ըլլար հիմայ իմ վիճակս, թէ որ այսչափ ողորմութիւն ինձ չի ցուցընէիր. դժոխքին մէջ պիտի ըլլայի ես ալ այն խենթերուն հետ։ Շնորհակալ եմ, և կ'աղաչեմ որ չիթողուս զիս այս կուրութեանս մէջ։ Ես արժանի էի երեսէդ ձգուելու, բայց կը տեսնեմ որ քու շնորհքդ զիս դեռ երեսէ չէ ձգած, կը զգամ որ զիս կը կոչէ, և կը յորդորէ թողութիւն ուզելու և մեծամեծ բարիք քեզմէ յուսալու, թէպէտ և ես այնչափ ապերախտ գտնուեր եմ։ Այո տէր, կը յուսամ որ զիս զաւակի տեղ կ'ընդունիս, թէպէտ և այդ անուան ալ արժանի չեմ՝ այսչափ քու դիմացդ սևերես ըլլալով։ Հայր, ոչ ես եմ արժանի կոչիլ որդի քո... մեղայ յերկինս և առաջի քոյ. բայց կ'իմանամ որ դու զիս փնտռելու հետ ես մոլորած ոչխարին նման, և քեզի մխիթարանք կը սեպես գրկել կորսուած որդիքդ։ Հայր իմ սիրեցեալ. կը ցաւիմ որ զքեզ

վշտացուցի, ոտքդ կ'ինկնամ, կը փաթ-
թուիմ, և չեմ երներ մինչև որ չի ներես
ինձ, և զիս չ'որհնես։ Ոչ թողից զքեզ,
մինչև օրհնեսցես զիս։ Օրհնեա զիս, հայր
իմ, և քու օրհնութիւնդ այն ըլլայ՝ որ ինձ
տաս մեծ ցաւ և զղջումն մեղքերուս վը-
րայ, և մեծ սէր առ քեզ։ Հայր իմ, զքեզ
կը սիրեմ, և յամենայն սրտէ կը սիրեմ.
մի թողուր որ մէյմ'ալ ես քեզմէ բաժ-
նուիմ։ Ամէն բանէ զիս զրկէ, և մի զրկեր
ի քո սիրոյդ։ Ով Մարիամ, թէ որ Աս-
տուած հայր է, դուն ալ մայրս ես. օրհնէ
զիս դուն ալ. արժանի չեմ քեզ որդի ըլ-
լալու, ընկալ զիս քեզի ծառայ, միայն
տուր որ քեզի ծառայեմ, և քաղցր սիրով
զքեզ միշտ սիրեմ, և միշտ ապաւինիմ քու
հովանաւորութեանդ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Խեղճ ողորմելի մեղաւորք կը ջանան կը
քրտնին աշխարհային գիտութիւն սորվե-
լու, և արհեստ՝ այս կենացս մէջ հարըս-
տութիւն ստանալու համար, որ քիչ ա-
տենէն պիտոր վերջանայ. և հոգ չեն տա-
նիր այն կենաց բարեաց համար, որ վեր-
ջանալու չէ բնաւ։ Այնպէս խելքերնին կը
կորընցնեն որ չէ թէ միայն խենթ կ'ըլ-

լան, այլ և անբան անասուն. վասն զի
անբանաբար ապրելով՝ չեն հասկընար որն
է բարի, որն է չար, հապա միայն անբա-
նական դրդմամբ զգայութեանց կը հե-
տևին, ձեռք զարնելով այն բանին որ
ներկայաբար մարմնոյ հաճոյք է, առանց
նայելու, թէ ինչ կը կորընցնեն, և թէ
ի յաւիտենից կործանումն կը գտնին. այս
բանս մարդու գործ չէ հապա անբանի։
Ոսկերերանի ըսածին պէս, մարդ անոր
կ'ըսենք որ մարդու կերպարանքը անա-
բատ ունի. ինչ է մարդուս կերպարանքն,
բանական ըլլալ։ Մարդ ըլլալը բանական
ըլլալն է, այսինքն բանականութեամբ
գործելն է, չէ թէ պարզ զգայական՝ ըզ-
գայութեանց ազդմամբ։ Թէ որ Աստուած
անբանի մը բանականութիւն տար, որ
բանականօրէն գործէ, կ'ըսէինք թէ մար-
դու գործ կ'ընէ. ուրեմն ասոր ներհակը՝
երբ մարդս պարզ զգայութեամբ կը գործէ
բանականութեան դէմ, պէտք է ըսել որ
այս մարդն անբանօրէն կը գործէ։

Ի՞նչ կ'ըսէ սուրբ գիրքն. ոչ գոյ ի նո-
սա իմաստութիւն, և ոչ խորհեցան ի միտ
առնուլ զայս. արդ ընկալցին առ յապա
ժամանակս։ Բանականօրէն գործողն նա-
խատես կ'ըլլայ ապագային. այսինքն ինչ
պիտի ըլլայ կենաց վերջը, որ է մահ, դա-
տաստան, անոնցմէ ետև կամ գժոխք, և
կամ արքայութիւն։ Ա՜խ, թէ սրչափ ի-

մաստուն է գեղացի մը որ փրկութեան կը հանի, քան թէ թագաւոր մը՝ որ կը դատապարտուի։ Ժողովրդին ասածին պէս, լաւ է մանուկ աղքատ և իմաստուն՝ քան զթագաւոր ծեր և անմիտ։ Ո՛հ, տէր Աստուած, միթէ բոլորովին խելագար չէ՞ր ըսուեր այն մարդն, որ ստակ մը վաստակելու համար կորսընցնելու վտանգի մէջ դնէր իւր ամէն բանը։ Հապա այն որ չընչին հաճոյք մ'ընելու համար հոգին թէ որ կորսընցնէ, և յաւիտեան կորսընցնելու վտանգի դնէ, խելագար պիտի չսեպուի։ Այս է կործանումն այնչափ հոգիներուն որով կը դատապարտուին, միայն ներկայ բարիքներուն և չարիքներուն նայիլ, և չի նայիլ յաւիտենական բարեացն և չարեաց։

Տարակոյս չիկայ որ Աստուած զմեզ այս երկրիս վրայ չէ դրեր, որ հարուստ ըլլանք, փառք պատիւ ստանանք, և մեր զգայութեանց հաճոյքը կատարենք, հապա յաւիտենից կեանքը շահինք. և վախճանն որա կեանք յաւիտենից։ Եւ այս վախճանին հասնիլն է մեր մէկ հատիկ ընելիքն, բայց մեղաւորք աւելի անհոգ են այդ վախճանին, ներկայն միայն կը մտածեն, դէպ ի մահ կը քալեն, յաւիտենականութեան կը մոռնան, և չեն գիտեր ուր կ'երթան։ Սուրբ Օգոստինոսին ըսածին պէս՝ ի՞նչ կ'ըսէիր այն նաւավարին՝ որ ի-

րեն հարցնես թէ ուր կ'երթաս, նա ալ ըսէր, թէ ես ալ չեմ գիտեր։ Ամէն լսող կ'ըսէր, թէ անոր ետքը չ'ելներ, կը կորսուի նաւաբեկութեամբ։ Այնպէս է ամէն ճամբայէ դուրս քալողն, այնպէս են աշխարհիս խելացիներն որ լաւ գիտեն ստակ վաստակիլ, խնջոյք զբօսանք ընել, մեծ աստիճան մ'ելնել, բայց չեն գիտեր իրենց հոգին վաստակիլ։ Այնպիսի խելացիներուն մէկն էր այն ուտող խմող մեծատունն, որ մեռաւ և թաղեցաւ ի դժոխս։ Մեծն Աղեքսանդր ալ խելացի էր այնքան թագաւորութիւններ վաստակելու, բայց քիչ ատենէն մեռաւ, ու գնաց ի յաւիտենից դատապարտութիւն։ Այնպէս խելացի մ'էր Հենրիկոս ութերորդ՝ որ գիտցաւ իւր աթոռը պահել ապստամբելով յեկեղեցւոյ, բայց յետոյ ինքն ալ տեսնելով որ հոգին ի կորուստ կ'երթայ՝ խոստովանեցաւ իւր բերնով, թէ ամէն բան կորուսինք։ Որչափ ողորմելի թշուառականներ հիմայ կու լան կը պոռան դժոխքի մէջ, թէ զինչ շահ եղև մեզ հպարտութիւնն, և զինչ մեծութիւն ամբարտաւանութեան իցէ մեզ նպաստաւոր, անց այն ամենայն իբրև զստուեր։ Ուրիշ բան չի մընայ, հապա լաց և տանջանք յաւիտենական։

Սիրաքայ ըսածին պէս՝ առաջի մարդոյ է կեանք և մահ, և զինչ հաճոյ թուեսցի

իւր՝ տացի նմա։ Քեզի համար է այս բանս, ով քրիստոնեայ, քու ձեռքդ է կեանք և մահ, այսինքն կամ զրկուիլ արգելած հաճոյքէն՝ որ յաւիտենից կեանքը ձեռք բերես, կամ անոնցմէ փախչելով՝ յաւիտենից մահը քաշես. ի՞նչ կ՚ըսես, ո՞ր կ՚ընտրես։ Մարդու պէս ընտրէ, չէ թէ անբանի պ՚ս. ընտրէ քրիստոնէաբար և ըստ հաւատոց. որ կ՚ըսէ թէ զի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհ ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ Աստուած իմ, դուն ինձ՝ տուիր բանականութիւն և խելք. դուն ինձ պարգևեցիր լոյս հաւատոյ. իսկ ես ինչուան հիմայ անբանի պէս գործածեցի զանոնք, կորսընցնելով քու շնորհքդ այս ողորմելի զգայական հաճոյից համար, որ հովի պէս անցան, և հիմայ ուրիշ բան չեմ գտներ, բայց եթէ խայթ խղճի մտաց, և համար՝ զոր պէտք է տամ քու աստուածային բեմիդ առջև։ Ա՜հ տէր, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. կ՚աղաչեմ մի՛ դատեր զիս ըստ իմ արժանեացս, այլ ըստ մեծի ողորմութեան քում։ Տուր ինձ լոյս, տուր ինձ ցաւ մեղացս վրայ՝ որովք զքեզ՞ վշտացուցի, և ներէ ինձ. մոլորեցայ

որպէս զոչխար կորուսեալ, խնդրեա զծառայ քո, թէ՝ ոչ ես ինձմէ կորսուած եմ։ Գթա՛ ինձ այն քու արեանդ համար զոր հեղեր՝ վասն իմ։ Ես կը զղջամ, ով՛ ծայրագոյն բարի, զ՚քեզ թողուս համար. և կամաւորապէս ետ կենալուս քու շնորհքէդ։ Յաւէս մեռնիլ կ՚ուզէի, բայց դու տուր ինձ աւելի մեծ ցաւ, և արժանի ըրէ, որ դամ երկինքը փառաւորեմ քու ողորմութիւնդ։ Ո՛վ Մարիամ աստուածամայր, դու ես յոյս և ապաւէնս, աղաչէ զՅիսուս ինձ համար. աղաչէ մայր իմ, որ տայ ինձ թողութիւն և սուրբ յարատևութիւն։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Աղէկ հասկըցանք, անոնք են բուն խելացի և ճշմարիտ իմաստունք, որոնք որ գիտեն շահիլ զշնորհս Աստուծոյ և զարքայութիւն երկնից։ Ուստի միշտ աղաչենք զտէր, որ՝ տայ մեզ սրբոց՝ գիտութիւնը՝ զոր կու տայ խնդրողաց։ Ո՛վ, ո՛րչափ գեղեցիկ գիտութիւն է գիտնալ սիրել զԱստուած, և իւր հոգին փրկել, որ է գիտնալ յաւիտենից փրկութեան ճամբան բռնել։ Հոգւոյ փրկութեան բանն ամէն բաներէն հարկաւոր է. թէ որ ամէն բան

գիտնանք ու հոգինիս փրկել չգիտնանք, մեզի շահ չիկայ, և յաւիտեան թշուառ կ'ըլլանք. ընդ հակառակն յաւիտեան երանելի կ'ըլլանք, թէ որ զԱստուած սիրել գիտնանք, թէպէտև ամէն բանի մէջ տըգէտ ըլլանք։ Սուրբ Օգոստինոսին ըսածին պէս, երանի անոր որ զքեզ կը ճանաչէ, թէ և անծանօթ ըլլայ ուրիշ ամենայն բանի։ Օր մը եղբայր Եգիպտոս ըսաւ սըրբոյն Բոնաւենտուրայի՝ թէ երանի քեզ, հայր Բոնաւենտուրա, որ այնչափ բան գիտես, իսկ ես ոգէտս բան մը չեմ գիտեր, ուստի դու քան զիս աւելի սուրբ կրնաս ըլլալ։ — Ասոր դարձաւ ըսաւ Բոնաւենտուրա, թէ որ տդէտ պառաւիկ մը աւելի քան զիս գիտէ զԱստուած սիրել, նա աւելի քան զիս սուրբ կ'ըլլայ։ Այս որ լսեց եղբայր Եգիպտոս, ելաւ վանքին բակն ու սկսաւ դէպ ի քաղաք կանչել. քեզի կ'ըսեմ, ով պառաւիկ, քեզի կ'ըսեմ մարիկ ըրէ. թէ որ դու զԱստուած սիրես, հայրն Բոնաւենտուրայէն աւելի սուրբ կրնաս ըլլալ։

Սուրբ Օգոստինոս ալ կ'ըսէ, թէ տըգէտները կ'ելնեն ու զերկինս կը յափշտակեն։ Քանի՞ քանի ռամիկ մարդիկ՝ որ կարդալ չեն գիտեր, բայց զԱստուած սիրել գիտեն, փրկութեան կը հասնին, և ո՞րչափ գիտնականք աշխարհի կը դատապարտուին. ուստի չէ թէ ասոնք, հապա

անոնք են ճշմարիտ իմաստունք։ Այս, թէ որչափ մեծ իմաստուն գտնուեցան, սուրբ Պասքալէ՞ մը, սուրբ Փելիքս վեղարաւոր մը, սուրբ Յովհաննէս Աստուծոյ մը, թէպէտ տգէտ էին մարդկային գիտութեանց։ Ո՞րչափ մեծ իմաստուն եղան ասոնք՝ որ զաշխարհս թողով գնացին վանքերն անապատները փակուեցան, ինչպէս սուրբ Բենեդիկտոս մը, սուրբ Փրանկիսկոս ասսիզացի մը, սուրբ Անտոնիոս տոլովսացի մը, որ երկրաւոր թագաւորութենէ հրաժարեցաւ։ Ո՞րչափ մեծ իմաստուն եղան այնչափ մարտիրոսներ, այնչափ կուսանք որ ետ կեցան մեծամեծներու հարսնանալէն, որպէս զի երթան մեռնին Քրիստոսի համար։ Այս ճշմարտութիւնս կը ճանչնան աշխարհիս մարդիկն ալ, ու կը վկայեն ըսելով, թէ այն անձը զինքը Աստուծոյ տուաւ. երանի անոր որ այս բանս կը հասկընայ, և իր հոգին փրկել կը նայի։ Վերջապէս այն մարդիկն որ աշխարհիս բարիքը կը թողուն զիրենք Աստուծոյ տալու համար, խելացի կ'ըսուին։ Ուրեմն որոնք որ զԱստուած կը թողուն աշխարհիս բարիքը գտնելու համար, ինչ պիտի ըսուին. անխելք ու խենթ մարդիկ։

Արդ դու, ով սիրելի եղբայր, ասոնց ո՞ր դասէն կ'ուզես ըլլալ։ Աղէկ ընտրութիւն ընելու համար խրատ կու տայ քեզի սուրբն Յովհան ոսկեբերան, որ գերեզ-

մաններու այցելութեան երթաս. երթանք գերեզմանները կ'ըսէ. գեղեցիկ դպրատուններ են գերեզմաններն աշխարհիս բարեաց ընդունայնութիւնը ճանչնալու համար և սրբոց գիտութիւնը սորվելու համար։ Ըսէ ինձ, կը հարցնէ սուրբն Ոսկերերան, հոն ո՞վ է թագաւորն, ո՞վ է ազնուականն, ո՞վ է գիտնականն։ Ես, կ'ըսէ, իմ կողմանէս ոչ ինչ այլ տեսանեմ, եթէ ոչ նեխութիւն և որդունք։ Այժէն բան առասպել է, երազ է և ստուեր։ Բայց ով սիրելի քրիստոնեայ, թէ որ դու խելացի կ'ուզես ըլլալ, հերիք չէ ճանչնալդ, թէ ամենէն հարկաւոր բանը՝ քու վախճանդ է, հապա պէտք է ձեռք զարնես այն միջոցներուն՝ որոնցմով կրնաս այդ վախճանին հասնիլ։ Այժէնքը կ'ուզեն սուրբ ըլլալ ու փրկուիլ, բայց որովհետև միջոցներուն ձեռք չեն զարներ, սուրբ չեն ըլլար ու կը դատապարտուին։ Պէտք է կ'ըսեմ առիթներէն փախչիլ, սուրբ խորհուրդներուն ստէպ մօտենալ, աղօթասէր ըլլալ, և այժէն բանէն առաջ պէտք է մեր սրտին մէջ տպաւորել սուրբ աւետարանին այն խօսքը՝ թէ զի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհ ամենայն շահեսցի[1]. որ սիրէ զանձն իւր, կորուսցէ զնա[2]. որ ըսել է՝ թէ պէտք

1 Մա. ԺԶ. 26։
2 Յով. ԺԲ. 25։

է կեանքն ալ մարդ՝ կորսընցնէ հոգին փրկելու համար։ Որ գայ զկնի իմ ուրասցի զանձն[1]. այսինքն Քրիստոսի ետևէն երթալու համար պէտք է անձնասիրութիւնը և հաճոյքներն ուրանալ։ Կեանք են ի կամաց նորա[2]. այսինքն մեր փրկութիւնը՝ հաստատեալ է ի կատարել զկամս նորա. ասոնց նման և այլ սկզբունքներ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ հայր ողորմութեանց, նայէ իմ ողորմելութեանս, և ողորմէ ինձ։ Լոյս տուր ինձ, և տուր որ ճանչնամ իմ խենթութիւնս՝ որպէս զի լամ, և քու անբաւ բարութիւնդ ճանչնամ՝ որպէս զի սիրեմ։ Յիսուս փրկիչ իմ, մի մատներ գազանաց զանձն, որ խոստովան առնիցի առ քեզ[3]։ Դու քու արիւնդ թափեցիր զիս փրկելու համար, մի՞ թողուր որ ես նորէն գերի ըլլամ սատանայի ինչպէս առաջ եղայ։ Կը ցաւիմ, ով ծայրագոյն բարի, զքեզ թողլուս համար, կը նզովեմ բոլոր այն վայրկեանները՝ որ իմ կամաքս հաւանութիւն

1 Մա. ԺԶ. 24։
2 Սղ. ԻԹ. 6։
3 Սղ. ՀԳ. 19։

տուի մեղաց, և կը գրկեմ սիրով քու սուրբ կամքդ, որ ուրիշ բանի չի ցանկար, բայց եթէ իմ բարեաց։ Հայր երկնաւոր, վասն արդեանց միածնի քո Յիսուսի Քրիստոսի, տուր ինձ զօրութիւն ի գործ դնելու զայն ամենայն որ ինչ հաճոյ է քեզ. տուր ինձ մեռնիլ, քան թէ հակառակ կալ քու կամացդ։ Օգնէ ինձ քու շնորհքդ, որպէս զի ի քեզ միայն հաստատեմ իմ բոլոր սէրս, և զիս բոլորովին զատեմ յամենայն յօժարութեանց, որ առ քեզ դիմել չեն թողուր։ Զքեզ կը սիրեմ, Աստուած հոգւոյ իմոյ, զքեզ կը սիրեմ ամէն բանէ վեր, և քեզմէ կը յուսամ իմ ամէն բարիքս, թողութիւն և յարատևութիւն ի սէր քո. և արքայութիւն ու յաւիտեան զքեզ սիրեմ։ Ո՛վ ամենասրբուհի Մարիամ, դու խնդրէ ինձ համար այս շնորհքներս. միածինդ քեզի բանի մը չէ չ'ըսեր. յոյս իմ և ապաւէն, ի քեզ եմ ապաւինեալ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԻՍ.

ՄԵՂԱՒՈՐԻՆ ԹՇՈՒԱՌ ԿԵԱՆՔԻՆ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՍԻՐԻՆ ԵՐԶԱՆԻԿ ԿԵԱՆՔԻՆ

Ամպարշտաց խաղաղութիւն չիկայ, կ'ըսէ տէր[1]. *Խաղաղութիւն բազում է ամենոցին՝ որոնք քու օրէնքդ կը սիրեն*[2]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ամէն մարդ այս կեանքիս մէջ կ'աշխատի որ խաղաղութիւն և հանգիստ գտնէ։ Վաճառականն, զինուորն, դատաստան ունեցողներն կ'աշխատին, վասն զի մըտ-

1 Ոչ դոյ խաղաղութիւն ամբարշտաց, ասէ տէր։ Ես. ԽԸ. 22։

2 Խաղաղութիւն բազում է այնոցիկ՝ զոր սիրեն զօրէնս քո։ Սաղ. ՃԺԸ, 165։

քերնին կը դնեն՝ որ այն վաստակով, այն աստիճանով, այն վէճին յաղթութեամբ, իրենց բարեբախտութեան կը հասնին, և այնպէս խաղաղութիւն կը գտնեն։ Խեղճ աշխարհասէրը աշխարհէս խաղաղութիւն կը խնդրեն, որ չի կրնար զայն տալ. Աստուած միայն կարող է խաղաղութիւն տալ մեզի. զխաղաղութիւն զիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ տամ ես ձեզ, ըստ Քրիստոսի։ Եւ եկեղեցին ալ կ'աղաղակէ, տուր ծառայից քոց զխաղաղութիւն, զոր ոչ կարէ աշխարհս տալ. վասն զի աշխարհս իւր ամէն բարիքներով չի կրնար գոհ ընել մարդուս սիրտը. վասն զի մարդս այն բարիքներուն համար ստեղծուած չէ. հապա Աստուծոյ համար միայն է, ուստի միայն Աստուած կրնայ զինքը գոհ ընել և յագեցընել։ Անասուններն՝ որ ստեղծուած են զգայութեանց ախորժակին համար, անոնք կը գտնեն իրենց հանգիստը ի բարիս երկրի։ Տուր անասնոյ մը խուրձ մը խոտ, տուր շան կը-տոր մը հաց, իսկոյն գոհ կ'ըլլան, ուրիշ բան չեն ուզեր։ Բայց բանական հոգին՝ որ ստեղծուած է միայն զԱստուած սիրելու ու Աստուծոյ հետ միացած կենալու, զգայական հաճոյքներով չի կրնար բնաւ իւր խաղաղութիւնը գտնել, Աստուած միայն կրնայ զինքը բոլորովին լիացընել։

Այն մեծատունն, որ ըստ պատմելոյ սրբոյն Ղուկասու[1] աղէկ բան ժողվեր էր երկրէն ու կ'ըսէր ինքն իրեն. անձն, ունիս բազում բարութիւնս ամբարեալ ամաց բազմաց, հանգիր, կեր, արբ, և ուրախ լեր, անմիտ ըսուեցաւ, վասն զի կ'ըսէ իրեն Աստուած. անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջեսցեն, իսկ զոր պատրաստեցեր ո՞մ լինիցի։ Այսոր կ'ըսէ սուրբն Բարսեղ, թէ իրաւ որ անմիտ ես. միթէ խոզի՞ հոգի է հոգիդ, որ կ'ուզես հանգչել ուտելով ի խմելով ու զգայական հաճոյիք։ Մարդս կրնայ աշխարհիս բարիքներով լեցուիլ, բայց կշտանալ չի կրնար, կ'ըսէ սուրբն Բեռնարդոս։ Նոյն սուրբն աւետարանին այս խօսքին վրայ, թէ ահաւասիկ մեք թողաք զամենայն[2], այսպէս կը գրէ. տեսայ որ ամէն աշխարհիս խենթերը մէկմէկ խենթութիւն ունին, մէկմէկ անօթութիւն կը քաշեն. ոմանք քաղցեր էին հող ուտելու, որ են արծաթասէրքը. ոմանք օդ ուտելու, ինչպէս են փառասէրքը. ոմանք տուեր էին բերանին փուռն մը՝ որ անկէ ցնդած մոխրին կայծերը կելլեն, որ են բարկացողքը. ոմանք ալ հոտած լճի մը գարշելի ջուրը կը խմէին, որ են մարմնասէրքը։ Ուստի ա-

1 Ղկ. ԺԲ. 19։
2 Մա. ԺԹ. 27։

սոնց դարձայ ըսի, կ'ըսէ. ով ձեզի պէս խենթեր, այդ բաները քաղց չեն անցըներ, հապա աւելի կը գրգռեն։ Աշխարհիս բարիքն առ երևոյթս բաներ են, ուստի չեն կրնար մարդուս սիրտը կշտացնել։ Անոր համար արծաթասէրն որչափ բան վաստակի, այնչափ աւելի վաստակիլ կ'ուզէ։ Սրբոյն Օգոստինոսի ըսածին պէս՝ ստակին շատութիւնն ագահին կոկորդը չի գոցեր հապա կը լայնցընէ։ Մարմնասէրն որչափ աւելի գարշութեան մէջ տապլտըկի, այնչափ կը տաղտկանայ միանգամայն և կը քաղցենայ։ Եւ իրաւ որ ինչպէս աղտեղութիւնը և զգայական հոտած բաները կարենան մարդուս սիրտը գոհ ընել։ Նոյն բանն է փառասիրին ալ. որ կ'ուզէ ծխով մխով կշտանալ. վասն զի փառասէրն աւելի կը նայի չ'ունեցածին՝ քան թէ ունեցածին։ Մեծն Աղեքսանդր այնչափ թագաւորութեանց տէր ըլլալէն ետև կը ցաւէր ուրիշ տէրութիւններ ալ չ'ունենալուն համար։ Թէ որ այս երկրիս բարիքը զմարդ գոհ ընէին, կատարեալ երջանիկ կ'ըլլային հարուստներն ու թագաւորները, բայց փորձը ներհակը կը ցուցընէ։ Նոյն բանը՝ փորձ եղող Սողոմոն իմաստունն կը վկայէ ըսելով, զամենայն զոր ինչ խնդրեցին աչք իմ, ոչ զրկեցի ի նո-

ցանէ[1]։ Բայց ի վերայ այսր ամենայնի նայէ ինչ կ'ըսէ. ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է[2]։ Ըսել կ'ուզէ, թէ ինչ որ աշխարհիս մէջ կայ, սոսկ ընդունայնութիւն է, ստութիւն է և իսկապէս յիմարութիւն։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Աշ. Ստուած իմ, ինչ չահեցայ մեղքդ՝ որովք զքեզ վշտացուցի, բայց միայն պատիժ, դառնութիւն, և դժոխք։ Զեմ ցաւիր այս դառնութեանցս համար, որ հիմայ կը զգամ, հապա մանաւանդ ինձ մըխիթարանք կը սեպեմ, վասն զի այն ալ քու շնորհացդ պարգևն է, և յոյս կու տայ ինձ քու խոստմանցդ համեմատ, թէ կ'ուզես ինձ ներել։ Իմ սրտիս նեղութիւն տուողն այն դառնութիւնն է՝ որ քու կամքիդ դէմ կեցայ, փրկիչ իմ, որ զիս այնչափ սիրեցիր։ Այս արժանի էի, տէր իմ, որ այն ատեն զիս երեսէ ձգէիր. բայց ընդհակառակն կը տեսնեմ որ կ'ըսես, եկուր քեզի թողութիւն տամ. մանաւանդ թէ դուն առաջինը կ'ըլլաս ինձ հետ հաշտուե-

1 Ժող. Բ. 10.
2 Ժող. Ա. 2։

լու, և խաղաղութիւն ինձ տալու։ Ահա
ես ալ, Յիսուս փրկիչ իմ, խաղաղութիւն
կ'ուզեմ, և քու շնորհքիդ կը փափաքիմ
ամէն բանէն աւելի։ Կը ցաւիմ, ով անբաւ
բարիդ, զքեզ վշտացնելուս համար. կ'ու-
զէի որ ցաւէս մեռնիմ։ Հապա, կ'աղա-
չեմ, այն սիրոյն համար՝ զոր առ իս ունե-
ցար խաչին վրայ հոգիդ աւանդելով ինձ
համար, ներէ ինձ, և ընկալ զիս ի սէր
քո, և իմ սիրտս փոխէ, այնպէս որ՝ որ-
չափ որ քու պատուիրանքներդ չպահեցի
ինչուան հիմայ, ասկից ետև կարենամ
պահել։ Հիմայ ես քու սիրոյդ համար կը
հրաժարիմ յամենայն հաճոյից՝ զոր աշ-
խարհս ինձ կրնայ տալ, և կ'ընտրեմ աւե-
լի կեանքս կորսընցնել՝ քան թէ քու շը-
նորհքդ։ Հրամմէ ըսէ ինչ որ ինձ պէտք է
ընել զքեզ հաճելու համար, պատրաստ
եմ ամէն բան ընելու։ Թող երթան կոր-
սուին հեշտութիւնք, փառք, պատիւ և
հարստութիւնք։ Զքեզ միայն կ'ուզեմ,
Աստուած իմ, բերկրութիւն իմ, փառք իմ,
դանձ իմ, կեանք իմ, սէր իմ և ամենայն
ինչ։ Տուր տէր քու օգնականութիւնդ, որ
քեզի հաւատարիմ ըլլամ. տուր ինձ սիրել
զքեզ, և ըրէ ինձ ինչ որ կ'ուզես։ Ա-
բրահամ, մայր իմ և յոյս իմ յետ Յիսուսի,
ընկալ զիս ընդ հովանեաւ պաշտպանու-
թեանդ, և բոլորովին Աստուծոյ նուիրէ
զիս։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Սողոմոն չէ թէ միայն ընդունայնու-
թիւն կը կոչէ աշխարհիս բարիքը, որ ըզ-
մարդ գոհ չեն ներ, հապա կ'ըսէ՝ սրտի
նեղութիւն ալ կու տան. ահա ամենայն
ինչ ընդունայն է և յօժարութիւն հո-
գւոյ[1]. այսինքն սէր մը կը բերեն, և չեն
հանգչեցներ։ Խեղճ ողորմելի մեղաւորք,
կարծեն թէ երջանիկ պիտի ըլլան իրենց
մեղքով, և ուրիշ բան չեն գտներ, բայց
միայն դառնութիւն, և խայթ խղճմտա-
նաց. բնկումն և թշուառութիւն ի ճանա-
պարհս նոցա, և զճանապարհն խաղաղու-
թեան ոչ ծանեան ըստ սաղմոսերգուին[2]։
Ո՞ւր կը մնայ խաղաղութիւն. ոչ գոյ խա-
ղաղութիւն ամբարշտաց, ասէ տէր[3]։ Նախ
և առաջ մեղաւորը կը քաշէ Աստուծոյ
վրէժխնդրութեան ախն ու վախը։ Մէկն
եթէ զօրաւոր թշնամի մ'ունենայ, հան-
գիստ կերակուր չի կրնար ուտել, քուն չի
կրնար ըլլալ. հապա ով որ զԱստուած ի-
րեն թշնամի կ'ունենայ, կրնայ խաղաղ

1 Ժող. Ա. 14։
2 Սղ. ԺԳ. 3։
3 Ես. ԽԸ. 21։

կենալ բեկումն այնոցիկ՝ զոր գործեն ըզ-
չարիս[1]։ Մեղայ մէջ եղողն եթէ գետ-
նաշարժ զգայ, կամ երկնից գոռալը լսէ,
ինչպէս կը դողայ կը սասանի. եթէ տերև
մը շարժի սիրտը դող կ'ինկնայ. ահ նորա
յականջս նորա[2]։ Կը փախչի առանց ե-
տև նայելու, թէ ով է զինքն հալածողն.
փախուցեալ է՝ամպարիշտն առանց ուրուք
հալածելոյ[3]։ Գիտես ով է անոր հալածո-
ղը՝. բուն իւր մեղքն է։ Կայէն իւր եղ-
բայրը սպաննելէն ետև կ'ըսէր, ամենայն
որ գտանիցէ զիս, սպանցէ զիս[4]. բայց
Աստուած ըսաւ, ոչ այդպէս, այլ միայն
երերեալ և տատանեալ եղիցիս ի վերայ
երկրի[5]. ուստի միշտ տեղէ ի տեղ կը
փախչէր. և ով զինքը կը հալածէր, եթէ
ոչ իւր մեղքը։

Մէյմ՝ ալ մեղքն իւր հետ կը բերէ
խղճմտանաց խայթ, որ է բռնաւոր որդ մը,
որ միշտ կը կրծէ։ Ոլորմելի մեղաւորն
խաղի զուարճութեան կ'երթայ, պար և
խնջոյք տեսնելու կ'երթայ, բայց խղճմ-
տանքն կ'ըսէ իրեն միշտ. դուն Աստուծոյ
երեսէն ընկած ես, եթէ մեռնիս ո՞ր պի-

1 Առ. Ժ. 9։
2 Յոբ. ԺԵ. 21։
3 Առ. ԻԸ. 1։
4 Ծնն. Դ. 14։
5 Անդ. . . 15։

տի երթաս։ Խղճմտանքն այնպէս մեծ
պատիժ և տանջանք մ'է այս կեանքիս
մէջն ալ, որ ոմանք անոր ձեռքէն խալը-
սելու համար իրենք զիրենք մեռուցին։ Ա-
սանցմէ մէկն ալ էր Յուդա, ինչպէս որ
յայտնի է, որ յուսահատութենէն ինք
զինքը կախեց։ Մէկին համար ալ կը
պատմուի, թէ տղայ մը սպաններ է ե-
ղեր, խղճմտանքի խայթոցէն խալըսելու
համար գնաց կրօնաւոր եղաւ, բայց կրօն-
քի մէջն ալ հանգիստ չի գտնելով, գնաց
դատաւորին իւր յանցանքը պատմեց, նա
ալ ի մահ դատապարտեց զինքը։

Ի՞նչ բան է այն հոգին որ առանց Ա-
ստուծոյ է։ Տես ինչ կ'ըսէ սուրբ գիրքն
Եսայի մարգարէին բերնով. անօրէնք իր-
րև զծով ծփեսցին, և հանգիստ մի զըտ-
ցեն։ Ի՞նչ կ'ըսես, թէ որ մարդ մը սա-
ռուի խրախութեան մը, հանգիստ մը,
պարու, ուտելու խմելու, և հոն ոսքերէն
գլխիվար կախուի, կրնայ վայելել այն ու-
րախութիւնը։ Այսպէս է այն անձն ալ ո-
ւրուն հոգին տակնուվրայ է, և աշխարհիս
բարիքներուն մէջ կեցած է, բայց առանց
Աստուծոյ. կ'ուտէ. կը խմէ, կը խաղայ,
աղէկ հագուստ կը հագնի, պատիւ կը
գտնէ, ստատիճան կամ կալուածք մը կ'ու-
նենայ, բայց բնաւ խաղաղութիւն չունե-

1 Ես. ԽԷ. 20։

նար. վասն զի ոչ գոյ խաղաղութիւն ամ-
պարշտաց, կ'ըսէ սուրբ գիրքն։ Խաղաղու-
թիւնն Աստուծմէ միայն կ'ըլլայ, և Ա-
ստուած կու տայ իւր բարեկամաց, չէ թէ
թշնամեաց։

Աշխարհիս բարիքը, կ'ըսէ սուրբն Վին-
կենտիոս Ֆերերեան, ծաղկի պէս կ'անց-
նի, մարդուս սիրտը չմտներ. այնպէս ջուր
մ'է, որ ծարաւ եղած տեղը չի մտներ։
Թող այն մեղաւորը փառաւոր հագուստ
մը հագնի, գեղեցիկ մատնի մը մատն ու-
ննայ, ուզած կերակուրներն ուտէ, բայց
իւր խղճալի սիրտը լեցուն է փշով և լե-
զուով. անոր համար կը տեսնես զինքն որ
իւր հարստութեանց, փափկութեանց և
զբօսանաց մէջ ալ միշտ անհանգիստ է,
ամէն ներհակ բաներու մէջ կը կատղի
կատղած շան մը պէս։ Իսկ աստուածա-
սէրը ներհակ բանի մէջ ալ կը համակերպի
Աստուծոյ կամաց, ու խաղաղութիւն կը
գտնէ. բայց այդ բանն Աստուծոյ կամաց
թշնամի եղողը չի կրնար ընել, ուստի ճամ-
բայ մը չ'ունի հանգիստ գտնելու։ Ողոր-
մելին սատանայի կը ծառայէ, բռնաւորի
մը կը ծառայէ, որ իրեն թշուառութիւն և
դառնութիւն կու տայ՝ փոխանակ վար-
ձուց։ Ահ, Աստուծոյ խօսքն սուտ չ'ել-
ներ, որ կ'ըսէ. փոխանակ զի ոչ պաշտե-
ցեր զտէր Աստուած քո ուրախութեամբ
և ճշմարիտ սրտիւ, պաշտեսցես զթշնամիս

քո ի սով և ի ծարաւ, ի մերկութիւն և ի
նուազութիւն ամենայնի[1]։ Ի՞նչ չի քաշեր
այն քինախնդիրը վրէժխնդրութիւն ընե-
լէն ետև, մարմնապաշտն՝ իւր հաճոյքն ը-
նելէն ետև. նոյնպէս ալ այն փառասէրն,
արծաթասէրն։ Ա՜խ, քանիներ թէ որ
այնչափ բան քաշէին Աստուծոյ համար.
որչափ որ կը քաշեն դժոխք երթալու հա-
մար, մէկմէկ մեծ սուրբ կ'ըլլային։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Վա՜խ իմ կենացս զոր կորուսի։ Ա՜խ, տէր
Աստուած իմ, թէ որ այնչափ բան քաշէի
քեզի ծառայելու համար, որչափ որ քա-
շած եմ զքեզ վշտացնելու համար, օրչափ
արդիւնք կ'ունենայի հիմայ արքայութեան
մէջ։ Ա՜հ, տէր, ինչո՞ւ զքեզ թողուցի, քու
շնորհքդ կորուսի, այս թունաւոր և ան-
ցաւոր հաճոյից համար՝ որ անցին գնացին,
և իմ սիրտս փշալից և լի դառնութեամբ
թողուցին։ Ո՛վ անօրէն մեղք, կը գարշիմ
ձեզմէ և կը նզովեմ զձեզ բիւր անգամ.
և քու գթութիւնդ կ'օրհնեմ, Աստուած
իմ, որ այնչափ երկայնամտութեամբ ինձ
համբերեցիր։ Զքեզ կը սիրեմ, արարիչ

1 Բ. Օր. ԻԸ. 47. 48։

իմ և փրկիչ, որ ինձ համար կեանքդ տուիր. և որովհետև զքեզ կը սիրեմ՝ ըրած մեղքերուս վրայ բոլոր սրտանց կը ցաւիմ։ Ա՛խ Աստուած իմ, ինչո՞ւ զքեզ կորուսի, և ուրիշ բանի հետ փոխեցի։ Հիմայ կը ճանչնամ ըրած չարիքս, և կ'առաջադրեմ ամէն բանս, կեանքս ալ կորսընցնել, քան թէ քու սէրդ։ Լոյս տուր ինձ, հայրդ յաւիտենից, վասն սիրոյ միածնի քո Յիսուսի Քրիստոսի. տուր ինձ ճանչնալ զքեզ՝ զանբաւ բարիդ. այն անցաւոր բարեաց անպիտանութիւնը՝ զոր կը ներկայացնէ ինձ չար սատանան, որ քու շնորհքդ կորսընցնեմ։ Ես զքեզ կը սիրեմ և կը ցանկամ աւելի սիրել։ Տուր որ դու միայն ըլլաս իմ մտադրութիւնս, մէկ հատիկ ցանկութիւնս, մէկ հատիկ սէրս. ամէն բան կը յուսամ քու բարութենէդ արդեամբք միածնիդ։ Մարիամ մայր ողորմութեան, վասն սիրոյն զոր ունիս առ Յիսուս փրկիչ, կ'աղաչեմ առնուլ ինձ համար լոյս և զօրութիւն իրեն ծառայելու, և սիրելու զինքը մինչև ի մահ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Այս ուրեմն բովանդակ այս ախարհիս բարիքը և հաճոյքը չեն կրնար կշտացնել մարդուս սիրտը։ Հապա ո՞վ կրնայ զայն գոհ ընել. միայն Աստուած. ժտեա ի տեառնէ, և նա տացէ քեզ զինդրուածս սրտի քոյ[1], կ'ըսէ սաղմոսն։ Մարդուս սիրտն անդադար փնտռելու հետ է զինքը գոհ ընողը։ Հարստութիւն, պատիւ և փառք ձեռք կը ձգէ, դարձեալ գոհ չէ. վասն զի ասոնք ժամանակաւոր բարիք են, իսկ ինքը ստեղծուած է անսահման բարւոյն համար. թող գտնէ զԱստուած ու Աստուծոյ հետ միանայ, և ահա գոհ կ'ըլլայ, ալ ուրիշ բանի չի ցանկար. ժտեա ի տեառնէ, և նա տացէ քեզ զինդրուածս սրտի քոյ։ Սուրբն Օգոստինոս իւր կեանքը զգայական բերկրութեանց մէջ մաշեցընելով բնաւ խաղաղութիւն չի գտաւ, յետոյ երբ զինքն Աստուծոյ տուաւ, այն ատեն կը խոստովանէր ըսելով առ տէր. անհանգիստ է մեր սիրտն, մինչև որ քեզի գայ հանգչի։ Աստուած իմ, կ'ըսէր, հիմայ կը ճանչնամ որ ամէն բան ունայնութիւն է

1 Սղ. Լգ. 4։

և նեղութիւն, դու միայն ես խաղաղութիւն և հանգիստ հոգւոյ. ամէն բան խիստ է և դժնդակ, դու միայն ես հանգիստ։ Ուստի իւր վերջասողը վարպետ ըլլալով՝ այսպէս կը գրէր. Ի՞նչ կ'ուզես, խեղճ մարդուկդ, բարիք փնտռելով. մէկ հատիկ բարին փնտռէ, յորում են ամենայն բարիք։ Դաւիթ թագաւոր ըլլալով՝ երբ մեղաց մէջ կ'ինկնար, որսի կ'երթար, պարտէզ կ'ելնէր, սեղան կը նստէր, և ամէն թագաւորական զբօսանքն ունէր. բայց սեղանն ալ, պարտէզն ալ, և ամէն բան որով կը զուարճանար՝ իրեն կ'ըսէին, ով Դաւիթ, մեզմով գոհ կ'ուզես ըլլալ. չէ չէ, մենք զքեզ չենք կրնար գոհ ընել։ Ո՞ւր է Աստուած քո[1]. դնա Աստուածդ գտիր, այն միայն զքեզ գոհ կրնայ ընել։ Ուստի Դաւիթ իւր ամէն զուարճութեանց մէջ ուրիշ բան չէր ըներ, բայց եթէ կու լար ու կ'ըսէր, եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի, և այն զի ասէին ցիս զօրհանապազ, թէ ո՞ւր է Աստուած քո[2]։

Ասոր ներհակը, ով թէ որչափ լաւ գիտէ Աստուած գոհ ընել իւր հաւատարիմ ծառայքն որ զինքը կը սիրեն։ Սուրբ Փրանկիսկոս ասսիզացին ամէն բանը

1 Սղ. ԽԱ. 4։
2 Անդ։

թողլով Աստուծոյ համար, թէպէտ և բոպիկ էր, և քուրջ մը վրան, այնչափ ցըրտէն անօթութենէն ետև, մեռնելու ատեն կ'ըսէր. Աստուած իմ, ամենայն ինչ. և արքայութեան համ կ'առնուր։ Սուրբ Փրանկիսկոս Բորձեան կրօնաւոր ըլլալէն ետև ճամբայ ընելու ատեն՝ յարդի վրայ պառկելով՝ այնչափ ուրախ էր սրտով որ ուրախութենէն քանի մը գիշեր քունը չէր տաներ։ Նմանապէս սուրբն Փիլիպպոս ներեան ամէն բանը թողած երբ պառակելու կ'երթար, այնչափ կը մխիթարուէր Աստուծմէ որ կը սկսէր ըսել. Յիսուս փրկիչ իմ, թող տուր որ քիչ մը քուն ըլլամ։ Հայրն Կարոլոս յիսուսեան լորենացի իշխանազունն, իւր աղքատ խցիկը այնչափ մխիթարանք կ'ունենար՝ որ կ'ելնէր կը ցատքըտէր։ Սուրբն Փրանկիսկոս քսաւերեան հնդկաստանի դաշտերուն մէջ կուրծքը կը բանար՝ ըսելով. բաւական է, տէր, ա՛լ աւելի գիս մի՛ մխիթարեր, վասն զի սիրտս չի կրնար տանել։ Սրբուհին Թերեզա կ'ըսէր, թէ երկնային մխիթարութենէն կաթիլ մ'աւելի գոհ կ'ընէ ըզմարդ՝ քան թէ ամենայն հաճոյք և զբօսանք աշխարհիս. և յայտնի է Քրիստոսի ըսածն ալ, որ թողուցու զտուն կամ զեղբայր, և այլն, վասն անուան իմոյ, հա-

բիւրապատիկ առցէ, և զկեանս յաւիտենական ժառանգեսցէ[1]։

Այ ի՞նչ աւելի կը փնտռենք, երթանք առ Յիսուս՝ որ զմեզ կը կոչէ ըսելով. Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ[2]։ Անտարակոյս աստուածասէր անձն այն խաղաղութիւնը կը գտնէ, որ գրած է թէ խաղաղութիւնն Աստուծոյ որ ի վեր է քան զամենայն միտս և զխորհուրդս[3]։ Իրաւ է թէ սուրբերն այս աշխարհիս վրայ նեղութիւն կը քաշեն, վասն զի այս երկրս արդիւնք ժողվելու տեղ է. իսկ արդիւնքն առանց բան քաշելու չ'ըլլար. և սակայն կ'ըսէ սուրբն Բոնաւենտուրա, թէ սէրն Աստուծոյ մեղրի նման է, որ քաղցր և անուշ կ'ընէ զամենայն լեղի և զդառն։ Զ Աստուած սիրողն անոր կամքն ալ կը սիրէ, ուստի ուրախ կ'ըլլայ հոգւով՝ դառնութեան մէջ ալ. վասն զի սիրով ընդունելով՝ գիտէ թէ Աստուծոյ հաճոյական բան կ'ընէ, ու զԱստուած կ'ուրախացնէ։ Իսկ մեղաւորներն սուրբ Բեռնարդոսի ըսածին պէս՝ խաչը կը տեսնեն, օծութիւնը չեն տեսներ. մահացուցման կը նային, զոր ունին աստուածասէրը զի-

1 Մա. ԺԹ. 29։
2 Մա. ԺԱ. 29։
3 Փիլ. Դ. 7։

բենք ի հաճոյից զրկելով, ու չեն տեսներ հոգևոր զուարճութիւնները՝ որով Աստուած զանոնք կը փայփայէ։ Ախ, թէ մեղաւորք համտես ընէին այն խաղաղութիւնը՝ զոր հոգին կը վայելէ երբ ուրիշ բան չ'ուզեր բաց յԱստուծոյ. կ'ըսէ Դաւիթ՝ ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր[1]։ Ո՛վ սիրելի եղբայր, սկսէ ամէն օր մտածական ընել, սրբութեան առջև ջերմեռանդութիւն ըրէ, զաշխարհ մէկդի դիր, Աստուծոյ հետ եղիր, այն ատեն կը տեսնես որ այն քիչ ատենին մէջ Աստուած զքեզ այնպէս կը մխիթարէ, որ բնաւ աշխարհ զքեզ մխիթարած չէ իւր ամէն զբօսանքովն։ Ճաշակեցէք և տեսէք. ով որ համը չէ առեր, չի կրնար հասկընալ՝ թէ Աստուած ինչպէս կը մխիթարէ զաստուածասէր հոգին։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Սիրելի փրկիչ իմ, ի՞նչպէս կայր գըտնուեցայ ինչուան հիմայ զքեզ թողլով, զանհուն բարիդ և զաղբիւրդ ամենայն մխիթարութեանց, և հետևեցայ ողորմելի և կարճառօտ զգայական հաճոյից. կը զար-

1 Սղ. ԼԳ. 9։

մանամ իմ կուրութեանս վրայ, բայց աւելի կը զարմանամ քու ողորմութեանդ վրայ, որ այնչափ բարութեամբդ ինձ համբերեցիր։ Գոհանամ զքէն, որ ինձ ճանչնալ կուտաս իմ կուրութիւնս, և պարտականութիւնս զքեզ սիրելու։ Զքեզ կը սիրեմ բոլոր հոգւովս, և կը ցանկամ աւելի սիրել. աւելցուր իմ փափաքս և սէրս։ Ցուր ինձ սիրով կապուիլ ընդ անհուն սիրելւոյդ, որ ամէն բան ըրիր ինձ սիրելի ըլլալու համար, և այնչափ կ'ուզես ինձմէ սիրուիլ. տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել[1]։ Ա՛խ, սիրելի փրկիչ իմ, սրբէ սիրտս այն ամէն անսուրբ յօժարութիւններէն, որ կը խափանեն զիս զքեզ սիրելու։ Ինչպէս որ կ'ուզեմ՝ իմ ուժս չի բաւեր ընելու, որ սիրտս բոլորովին վառուի զքեզ սիրելու, և քեզմէ զատ ուրիշ բան չսիրելու. քու շնորհքիդ ուժն պէտք է որ կարենայ ընել իւր ամէն ուզածը։ Ամէն բանէ զիս կտրէ, մերժէ իմ սրտէս ամենայն յօժարութիւն, որ քեզի համար չէ. և բոլորովին զիս քուկդ ըրէ։ Ես կը ցաւիմ կը զղջամ ամենայն չարութեանցս տհաճութեանցը վրայ զոր քեզի տուեր եմ, և կ'աւաջադրեմ քեզի նուիրել մնացած կեանքս և քու սուրբ սիրոյդ, բայց քու ձեռքդ է զլուխս տանել այս բանս ընելն։ Այս շը-

1 Մրկ. Ա. 40։

նորհքս ինձ ըրէ քու սուրբ արեանդ համար զոր թափեցիր ինձ համար անտանելի ցաւով, և անբաւ սիրով։ Պարծանք ըլլայ քու կարողութեանդ՝ ընել որ այս իմ սիրտս այնչափ ատենէ ի վեր լեցուած երկրաւոր յօժարութեամբք՝ հիմայ ըլլայ բոլորովին բորբոքեալ բոցով սիրոյ քո, ոչ անոահման բարիդ։ Եւ դու մայր գեղեցիկ սիրոյ, քու բարեխօսութեամբդ այնպէս ըրէ զիս, ինչպէս դու միշտ էիր բոլորովին վառեալ սիրովը Աստուծոյ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԻԲ.

ՉԱՐ ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ամբարիշտն չարեաց խորը հասանելով կ'արհամարհի[1]։

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Մէկ մեծ վնասն զոր ըրաւ մեզի մեղքն Ադամայ՝ է չար յօժարութիւնն առ մեղս։ Այս բանս առալելոյն ոչք առնել կուտար, տեսնելով զիւր հոգին յօժարեալ դէպ ի չարն՝ զոր կ'ատէր։ Տեսանեմ զայլ օրէնս, կ'ըսէր, յանդամս իմ, գերեալ զիս օրինաց մեղաց[2]։ Ակից է որ արդէն ապականած ըլլալով այս ցանկութեամբ, միանգամայն այնչափ բազմութիւն թշնա-

1 Ամբարիշտն հասեալ ի խորս չարեաց արհամարհէ։ Առակ։ ԺԸ. 3։
2 Հռ. Է. 23։

մեաց դրդելով զմեզ ի չարն, դժուարին կ'ըլլայ անմեղութեամբ երթալ յերանական կեանս։ Այս որ այսպէս է, դուն ինչ կ'ըսէիր այն համբորդին որ ծովէ կ'ուզէ անցնիլ ալէկոծութեան ատեն կէսը կոտրած նաւակով մը, և կ'ուզէ ծանրաբեռնել զայն այնչափ՝ որ առանց ալիքի աղէկ նաւ մ'ալ կրնար ընկղմել։ Ի՞նչ կը գուշակէիր այն մարդուն վերջը։ Արդ նոյն բանն ըսէ չար ունակութիւն ունեցողին համար ալ, որ ուզելով անցնիլ այս կենաց ծովէն, ուր շատերը կը կորսուին ալէկոծութեամբ տկար և կոտրած նաւակով մը, որ է մեր մարմինը, կը համարձակի ծանրացնել զինքն ունակացեալ մեղքերով։ Այդպիսի անձ մը դժուար է թէ փրկուի, վասն զի չար ունակութիւնը միտքը կը կուրցընէ. սիրտը կը խստացնէ, և այնպէս դիւրաւ յամառ կ'ընէ մինչև ի մահ։

Նախ և առաջ չար ունակութիւնն է կուրացուցիչ, թէ չէ ինչո՞ւ սուրբերն անդադար լոյս կը խնդրեն Աստուծմէ և կը գոչեն՝ որ չ'ըլլայ թէ իրենք ըլլան վատթարագոյն մեղաւորք աշխարհի։ Վասն զի գիտեն, թէ եթէ բոպէ մը լոյսը կորսնցընեն, կրնան ամէն անօրէնութիւններ գործել։ Հապա ինչպէս այնչափ քրիստոնեայք խստասրտութեամբ ուզեցին մեղաց մէջ մնալ, ինչուան վերջապէս դա-

տապարտուեցան։ Վասն զի կուրացոյց զնոսա չարութիւն իւրեանց[1]։ Այէն մեղք հետը կուրութիւն ունի, և որչափ որ մեղքը կը շատնայ, կուրութիւնն ալ կը սաստկանայ։ Աստուած է մեր լոյսն. ուրեմն որչափ որ մէկը Աստուծմէ կը հեռանայ, այնչափ կը կուրնայ։ Ինչպէս ամանի մը մէջ որչափ հողը լեցուն ըլլայ, արևու լոյսն չի կրնար թափանցել, նմանապէս սխտալից սիրտն չի կրնար մտնել աստուածային լոյսն։ Այսոր համար կը տեսնենք որ ոմանք ի մեղաւորաց լոյսը կորսընցնելէն ետև՝ մեղքէ ի մեղս կը խրին և մէկ մ՚ալ չեն հոգար զիրենք շտկելու. շուրջանակի ամպարիշտք շրջին[2]։ Թշուառականներն այն խաւար գուրն որ կ՚ընկնան, ուրիշ բան չեն ըներ. բայց միայն կը մեղանչեն. ուրիշ բան չեն խօսիր չեն մտածեր, բաց ի մեղաց, և գրեթէ չեն հասկընար անկից ետև թէ չար է մեղքն։ Սուրբ Օգոստինոսին ըսածին պէս, չարին սովորութիւնն չի թողուր մեղաւորաց տեսնել զչարն զոր կը գործեն, և այնպէս կեանք կը վարեն, որպէս թէ չհաւատային անկից ետև թէ Աստուած կայ, արքայութիւն կայ, դժոխք կայ, յաւիտենականութիւն կայ։

1 Իմաստ. Բ. 21։
2 Սղ. ԺԱ. 9։

Ուստի այն մեղքն՝ որ առաջ սոսկումն կը բերէր, չար ունակութեամբ՝ ետքը սոսկալի չերևիր. արա զնոսա որպէս զանիւ, որպէս զեղէգն առաջի հողմոյ[1]։ Կը տեսնես, կ՚ըսէ սուրբն Գրիգոր, ինչպէս գիւրաւ յարդն կը շարժի ամէն քամիէ, այսպէս ալ կը տեսնես և այն անձը՝ որ առաջ գոնէ ատեն մը դէմ կը դնէր փորձութեան, իսկ երբ չար ունակութիւն ընկեր է, ինչ և իցէ փորձութեան մէջ իսկոյն կ՚ընկնայ։ Ինչու, վասն զի չարունակութիւնն վերուցեր է անոր լոյսը։ Սուրբն Անսելմոս ալ կ՚ըսէ, թէ սատանան այն կերպը կը բռնէ ոմանց ի մեղաւորաց, ինչ որ կ՚ընէ մէկն երբ թռչուն մը բռնէ որ չուանով կը կապէ, և այնպէս թող կուտայ որ թռչի, բայց երբ կ՚ուզէ վար կը քաշէ գետին կը ձգէ։ Այսոր նման են չար ունակութիւն ունեցողները։ Իսկ սուրբն Բեռնարդոս սենացին ալ կ՚աւելցընէ, թէ ոմանք առիթ ալ որ չունենան կը մեղանչեն՝ նման այն ջաղացքներուն, որ ամէն պզտիկ հովէ կը պտտին, և աւելի կը պտտին՝ երբ աղալու բան ալ չ՚ունին, և ջաղացպանն ալ կ՚ուզէր որ պտտին։ Կը տեսնես որ չար ունակութեան տէրն առանց պատճառի գէշ խորհուրդներ կ՚ուրոճայ, համ ալ չառնելով և գրեթէ չ՚ու-

1 Սղ. ԼԲ. 14։

գենալով, սոսկ չար ունակութեան ուժո-
վը։ Սուրբ ոսկեբերանի ըսածին պէս
դժնդակ բան է սովորութիւնն, որ երբեմն
չ'ուզողներն ալ կը ստիպէ անարժան բան
ընել։ Պատճառն է, կ'ըսէ սուրբ Օգոստի-
նոս, վասն զի երբ սովորութեան դէմ չի
կեցուի՝ հարկ կը դառնայ, կամ ինչպէս
սուրբն Բեռնարտինոս ալ կ'ըսէ, սովո-
րութիւնն բնութիւն կը դառնայ։ Ուստի
ինչպէս հարկաւոր է մարդուս ընչառու-
թիւն, այսպէս ալ չար ունակացելոց՝ որ
գերի եղեր են մեղաց, կ'երևի թէ հարկ
է մեղանչել։ Գերի ըսի, վասն զի ծառայն
վարձքով կ'աշխատի, իսկ գերին առանց
վարձքի. ահա այսպէս կ'ըլլայ նոյն թը-
շուառականներուն որ առանց համ մ'ալ
առնելու մեղանչել կը սորվին։

Սուրբ գիրքն կ'ըսէ, թէ ամբարիշտն
հասեալ ի խորս չարեաց արհամարհէ[1].
Այս բանս Յովհան Ոսկեբերան բուն չար
ունակութիւն ունեցողներուն վրայ կը մեկ-
նէ, որ այն խաւարային փոսին մէջ ընկած
ըլլալով կ'արհամարհեն խրատն ալ, քա-
րոզն ալ, բանադրանքն ալ, դժոխքն ալ,
մինչև զԱստուած ալ, և զամենայն բան, և
կ'ըլլան նման անգեղ որ դիակը ձեռքէ չի
հանելու համար յանձն կ'առնու անոր վը-
րայ որսորդներէն զարնուիլ ու սպան-

1 Առակ. ԺԷ. 5։

նուիլ։ Կը պատմէ հայրն Հռեկուպիտոս,
թէ մահապարտ մը երբ կախուելու կ'եր-
թար, աղջիկ մը տեսաւ՝ խելքը անոր տը-
ւաւ։ Հայրն Կիսոլփոս ալ կը պատմէ, թէ
նոյնպէս հայհոյիչ մարդ մ'ալ կախաղան
ելնելու ատեն երբ սանդուխին զարնուե-
ցաւ՝ նորէն հայհոյութիւն ըրաւ։ Ուստի
կ'ըսէ սուրբն Բեռնարդոս՝ թէ ունակու-
թիւն ունեցողներուն համար չահ մը չը-
ներ աղօթք ընելն, հապա պէտք է զանոնք
լալ իբրև զդատապարտեալս։ Բայց ի՞նչ-
պէս ուզեն իրենց խորխորատէն ելնել երբ
չեն տեսներ որ մէջն են ընկեր։ Շնորհքի
հրաշք մը պէտք է։ Աչքերնին դժոխքի
մէջ պիտի բանան թշուառականներն, այն
ատենն որ աչք բանալն ուրիշ բանի չի
գար՝ եթէ ոչ աւելի դառնութեամբ լալու
իրենց խենթութիւնը։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Աստուած իմ, դուն ինձ առանձին չը-
նորհքներ ըրիր աւելի քան ուրիշներու,
ես ալ աւելի ապերախտութեամբ զքեզ
վշտացուցի, ուրիշներէն աւելի անիրա-
ւութիւն ընելով քեզի դէմ։ Ո՜վ ցաւագին
սիրտ փրկչիդ իմոյ, որ խաչին վրայ վշտա-
ցար իմ մեղքերս տեսնելով, տուր ինձ

քու արդեանցդ համար կենդանի ճանաչումն և ցաւ իմ մեղքերուս վրայ։ Ով փրկիչ իմ, իրաւ որ ես ախտիւք լի եմ, բայց դու ամենակարող ես, կրնաս զիս լեցնել քու սուրբ սիրովդ։ Ուստի քեզի կ'ապաւինիմ, որ անբաւ բարութիւն ես և ողորմութիւն։ Կը զղջամ, ով ծայրագոյն բարի, զքեզ վշտացնելուս համար, երանի թէ մեռած ըլլայի և քու կամքիդ դպած չ'ըլլայի։ Ես զքեզ մոռցայ, բայց դու զիս չմոռցար, ինչպէս որ կը տեսնեմ այս յուսովս զոր հիմայ ինձ կու տաս։ Ա.ոդ ինչպէս որ լոյս կու տաս, ուժ ալ տուր ինձ հաւատարիմ ըլլալու քեզի. ես իմ կողմանէս խօք կու տամ բիւր անգամ մեռնիլ, քան թէ մէյմ'ալ քեզի երես դարձընել։ Բայց քու օգնականութեանդ վրայ է իմ յոյսս. ի քեզ տէր յուսացայ, մի ամաչեցիս յաւիտեան[1]։ Քու բարեխօսութեանդ կ'ապաւինիմ, ով յոյս իմ և ապաւէն, տիրուհի Մարիամ. ի քեզ եմ ապաւիներ, որ մէյմ'ալ զիս չի տեսնեմ թշնամի միածնիդ։ Կ'ապաշեմ, ապաշէ որ ինձ մեռնիլ տայ քան թէ զիս երեսէ ձգէ այսպիսի անշնորհութեան մէջ։

1 Սղ. Է. 1։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Զար ունակութեան մէկ գործն ալ խըստասրտութիւն բերելն է։ Ինչպէս կ'ըսէ Կուռնելիոս Ալափիտէ՝ մեղանչելու սովորութիւնը կը խստացնէ մարդուս սիրտը։ Եւ այս իրաւամբք թող կու տայ Աստուած ի պատիժ իւր կոչման դէմ կեցողներուն։ Առաքելոյն ըսածին պէս, ում կամի ողորմի, ում կամի խստանայ[1]։ այսպէս կը մեկնէ Ս. Օգոստինոս, խըստացուցանելն Աստուծոյ՝ է չկամիլ ողորմիլ։ Զէ թէ Աստուած կը խստացնէ ունակութիւնը չար ընելու համար, հապա կ'ամփոփէ իւր շնորհքը ի պատիժ ապերախտութեան իրեն շնորհաց դէմ, և այնպէս սիրտը քարի պէս կը կարծրանայ։ Սիրտ նորա սալացեալ է իբրև զվէմ, և հաստատեալ կայ իբրև զսալ դարբնաց անշարժ[2] Այսկից է որ ուրիշներուն սիրտը կը փշէկի և կը սկսին լալ լսելով Աստուծոյ դատաստանին ահաւորութիւնը, դժոխքին տանջանքը, Քրիստոսի չարչարանքը. չար ունակութիւն ունեցողն բնաւ չի շարժիր,

1 Հռ. Թ. 18։
2 Յոբ. ԽԱ. 15։

այնպէս բաները կը լսէ կը խօսի անտարբեր կերպով, որպէս թէ իրեն չեն վերաբերիր. և այնպիսի հարուածներ առնելով աւելի կը խստանայ իրրև զսալ դարբնաց անշարժ։

Յանկարծական մահերն ալ, գետնաշարժ, որոտում, կայծակ, անկէց ետև վախ չեն տար անոր. ուստի զգաստանալէն առաջ վրան կու գայ քուն մահու, և այնպէս կը քնանայ ի կորուստ. ի սաստէ քումէ, Աստուած Յակոբայ, ննջեցին[1]։ Զար ունակութիւնն կամաց կամաց կը կորսընցնէ խղճմտանքին զարնելն ալ։ Զար ունակութիւն ունեցողին ամէնէն սոսկալի մեղքերն ալ բան մը չեն երևիր իրեն, կ'ըսէ սուրբն Օգոստինոս։ Զար գործն բնականապէս ամօթ մը կը բերէ. իսկ չար ունակութիւն ունեցողներն ամօթ ալ չ'ունին մեղանչելու ատենին, կ'ըսէ սուրբն Հերոնիմոս. չար ունակացեալը սուրբն Պետրոս խոզի կը նմանցնէ. խոզ լուացեալ՝ ընդ տիղմ թաւալեալ[2] ըսելով։ Ինչպէս խոզն տղմի մէջ տապլտըկելով գարշութիւն չի զգար, այսպէս ալ չար ունակութեամբ գործողն այն գարշ հոտերն որ ամէնքը կ'իմանան ու կը գարշին, ինքն միայն չի զգար։ Եւ երբ գարշութիւնն ի-

1 Սղ. ՀԵ. 7։
2 Բ. Պետ. Բ. 22։

բեն աչքը կուրցուցեր է, ի՞նչ զարմանք, կ'ըսէ սուրբն Բեռնարդոս, երբ Աստուծոյ հարուածներն ալ չ'իմանար։ Որով մեղքէն փոխանակ ետ քաշուելու, կը խնտայ և կը պարծի ալ. և ուրախ լինիցին ընդ չարիս[1], և ծիծաղելով գործէ անզգամն զչար[2]։ Ի՞նչ նշան է այսպիսի դիւական խստասրտութիւն։ Սուրբն Թովմաս վիլլանովացին կ'ըսէ, թէ խստասրտութիւնն է նշան դատապարտութեան։ Սոսկացիր, ով եղբայր, որ դուն ալ այս վիճակին մէջ չ'ըլլաս, թէ որ գէշ ունակութիւն մ'ունիս՝ շուտով զքեզ խալըսէ անկէ, քանի որ հիմայ Աստուած զքեզ կը կանչէ. և քանի որ խղճմտանքդ զքեզ կը գարնէ՝ ուրախ եղիր, վասն զի նշան է թէ Աստուած զքեզ երեսէ չէ ձգած. բայց ջանա որ շուտով զքեզ շտկես, թէ ոչ վերջդ քաղցկեղ կ'ըլլայ, զքեզ կը կորսընցնէ։

1 Առակ. Բ. 14։
2 Առակ. Ժ. 23։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛տէր, ինչպէս կարենամ շնորհակալ ըլլալ քեզի ըստ արժանւոյն այնչափ ինձ ըրած շնորհացդ համար։ Քանի՛ անգամ զիս կանչեցիր, և ես դէմ կեցայ։ Գոհանալու և զքեզ սիրելու տեղ՝ որ զիս զըժոխքէ խալըսեցիր, և այնչափ սիրով կոչեցիր, ես նորէն նայեցայ զքեզ բարկացընել, կրկին կրկին անիրաւելով։ Ակից ետև, Աստուած իմ, քաւ լիցի, չեմ ուզեր մէյմ՛ալ ոտքի տակ առնել քու երկայնամտութիւնդ, հերիք է ինչուան հիմայ ըրածս։ Դու միայն անքաւ բարիդ, կրնայիր այսչափ համբերել, բայց հիմայ կը տեսնեմ որ՝ ալ չես կրնար ինձ համբերել։ Իրաւունք ունիս, հապա ներէ ինձ, տէր, իմ ծայրագոյն բարիս. շատ անարգանք ըրած եմ քեզի դէմ, որո՛ց վրայ կը ցաւիմ ի բոլոր սրտէ, և կ՚առաջադրեմ այսուհետև զքեզ չի վշտացնել։ Հապա ինչ. միթէ միշտ զքեզ ի բարկութիւն պիտի գրգռեմ։ Ահ, կ՚աղաչեմ հաշտուէ հետս, Աստուած հոգւոյ իմոյ. չէ թէ իմ արդեանցս համար. որ ուրիշ բանի արժանի չեմ, բայց ի դժոխոց, այլ վասն արդեանց միածնիդ՝ իմ փրկչիս, որուն վրայ դրած

եմ բոլոր յոյսս։ Ուստի վասն սիրոյ Յիսուսի Քրիստոսի ընդունէ զիս ի շնորհս քո, և տուր ինձ յարատեւութիւն ի սէր քո։ Ազատէ զիս յանսուրբ յոժարութեանց, և բոլորովին քեզի տա։ Կը սիրեմ զքեզ, ով ծայրագոյն Աստուած, ով ծայրագոյն հոգեսէր տէր, որ արժանի ես անհուն սիրոյ, երանի թէ զքեզ միայն սիրած ըլլայի։ Ո՛վ կոյս տիրամայր, մայր իմ, տուր որ մնացած կեանքիս մէջ մէյմ՛ալ չզայրացնեմ քու միածինդ, այլ զինքը միայն սիրեմ, և լամ որչափ որ իւր կամաց դէմ ըրեր եմ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Լոյսն որ անգամ մը կորսուի և սիրտն ալ կարծրանայ, հաստակօրէն մեղաւորին բանն վատ է, ի մեղս իւր կը մեռնի. խստասիրտն չարի կը հանդիպի վերջը, կ՚ըսէ Սիրաք։ Իսկ արդարներն ուղիղ ճամբուն մէջ առաջ կ՚երթան անխոտոր. ճանապարհը բարեպաշտաց ուղիղ են[1], կ՚ըսէ Եսայի։ Ընդ հակառակն գէշ ունակացեալները միշտ խոտոր կը շրջին. շուր-

1 Ես. ԻԶ. 7։

ջանակի ամպարիշտք չրջին[1]. այսինքն քիչ մ'ատեն կը թողուն մեղքը, ետքը նորէն կը դառնան։ Ուստի կ'ըսէ սուրբն Բեռնարդոս, թէ վայ անոր որ այս չրջանիս մէջ կը պտըտի։ Մէկը կրնայ ըսել, թէ ես մահէս առաջ գիս շտկել կ'ուզեմ, բայց դժուար բան է որ ի չարն ունակացեալն գինքը շտկէ. ծերութեան ալ որ հասնի, սուրբ գրոց ըսածին պէս, նորոգումն երիտասարդի ըստ ճանապարհաց իւրոց, նաև յարժամ ծերասցի՝ ոչ մերժեսցի ի նոցանէ[2]. պատճառն է, կ'ըսէ սուրբ Թովմաս վիլլանովացին, վասն զի մեր զօրութիւնն խիստ տկար է. եղիցի զօրութիւն նոցա իբրև զծեծած վէզ[3], կ'ըսէ Եսայի։ Ուստի կ'ըսէ նոյն սուրբն. Հոգի մը որ շնորհքէ զրկուած է, չիկրնար նորանոր մեղքերէ ազատ ըլլալ։ Բաց ասկէց, ի՞նչ խենթութիւն է որ մէկն ուզենայ խաղալ, և կամաւ կորսընցնել ամէն ունեցածը յուսալով որ վերջի խաղին ատեն ամէն բաներն տեղը լեցընէ. նոյնպէս խենթ է նա որ մեղքէն ետ չի կենար այն յուսով որ կենաց ետքի թելին ատեն կարենայ ամէն բանի ճարն ընել։ Տես ի՞նչ կ'ըսէ Աստուած մարգարէին ձեռքը. եթէ փոխիցէ

1 Եզ. ԺԱ. 9։
2 Առակ. ԻԲ. 6։
3 Ես. Ա. 31։

հնդիկ զմորթ իւր, և ինձ զխայտուցս իւր, և դուք կարող լինիցիք գործել զբարիս ուսեալք զչարիս[1]։ Ասոր համար է որ շար ունակութիւն ունեցողն ետքն ետքն յուսահատութեան մէջ կ'ընկնայ, և այսպէս կեանքը կը կնքէ. խիստն արտիւ անկցի ի չարիս[2]։ Եւ կ'ըսէ Յոբ, թէ կործանեցին զիս հարուածովք ի վերայ հարուածոց, յարձակեցան ի վերայ իմ զօրաւորք[3]։

Այսպէս կը խօսի սուրբն Գրիգոր այս խօսքիս վրայ, եթէ թշնամի յարձակի, գուցէ առջի բերան կարենայ դէմ դնել. բայց երբ շատ վէրք առնու, այնչափ ուժը կը կորսընցնէ՝ որ վերջապէս կը սպաննուի։ Այսպէս կ'ըլլայ մեղքին բանն ալ. մեղաւորը մէկ երկու ուժ կը ցուցընէ շընորհաց գործակցութեամբն. բայց երբ կը շարունակէ ի մեղս, մեղքէ կ'ըլլայ զօրաւոր հսկայի մը պէս. այն ատեն որ մեղաւորն աւելի տկարացած է, շատ վէրք ալ առեր է, ի՞նչպէս կրնայ մահուանէ խալըսիլ. մեղքն ծանր քարի մը նման է որ կը ճմլէ զհոգին։ Արդ կ'ըսէ սուրբն Բեռնարդոս, թէ դժուարաւ կը կանգնի նա՝

1 Երեմ. ԺԳ. 23։
2 Առակ. ԻԸ. 14։
3 Յոբ. ԺԶ. 15։

զոր չար սովորութեան ծանրութիւնն իւր տակ ճզմեր է։

Ուրեմն իմ բանս յուսահատելի է կըրնայ ըսել չար ունակութեան տէրն։ Բաւ լիցի, մի՛ յուսահատիր, միայն թէ ուզենաս ճարը տեսնել։ Աղէկ կ'ըսէ հեղինակին մէկը՝ թէ ծանր հիւանդութեանց մէջ զօրաւոր դեղեր պէտք է առնուլ։ Թէ որ հիւանդ մը մահուան վտանգի ատեն չ'ուզենայ դեղ առնուլ. վասն զի հիւանդութեան ծանրութիւնը չի գիտեր, անոր բժիշկն ըսէր՝ բարեկամ դիր թէ մեռած ես՝ թէ որ դեղ չառնուս, ինչ կ'ըսէր հիւանդն. յայտնի է որ կ'ըսէր, թէ ահա պատրաստ եմ ամէն բան առնուլ. վասն զի բանը կենաց վրայ է։ Ահա, ովսիրելի, ես ալ նոյն բանը քեզի կ'ըսեմ. թէ որ մեղք մը ունակութիւն ըրած ես, բանդ վատ է, և այնպէս հիւանդներէն ես՝ յորոց առողջացող քիչ կ'ըլլայ, հոգւոյդ կորուստն մօտ է։ Բայց եթէ առողջանալ կ'ուզես դեղ կայ, ընդհանուր հրաշքին մի՛ սպասեր. ջանա քու կողմանէդ առիթները վերցընել, վատթար ընկերներէն փախչիլ, երբ փորձութիւն կ'ունենաս դէմ դիր, զքեզ Աստուծոյ յանձնելով, ձեռք կարկ այնպիսի միջոցներու որ զքեզ շակես, ստէպ ստէպ խոստովանանք ըլլալով. ամէն օր հոգևոր գիրք կարդալով, սուրբ Աստուածածնայ ալ ջերմեռանդութիւն ընելով, ու

ազաչելով անդադար՝ որ ուժ առնու քեզի համար մէյմ՛ալ չընկնալու։ Զքեզ պիտի բռնադատես, թէ. ոչ Քրիստոսի սպառնալեաց տակ կը մնաս. ի մեղս ձեր մեռանիցիք[1]։ Թէ որ հիմայ ճար չ'ընես՝ քանի որ Աստուած լոյս կու տայ քեզի, ետքը դժուար է որ կարենաս դեղ ընել։ Մտիկ ըրէ Աստուծոյ. որ զքեզ կը կանչէ, Դադարէ, սրի՛ եկ արտաքս[2]. խեղճ ողորմելի մեղաւոր, որ արդէն մեռեալ ես հոգւով, դուրս ելիր այդ խաւարային փոսէն քու վատթար վարուցդ։ Շուտով պատասխան տուր, և զքեզ Աստուծոյ տուր, և վախցիր որ այս վերջի կոչումը չ'ըլլայ քեզի։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ահա Աստուած իմ. միթէ կը սպասեմ որ զիս երեսէ ձգես. ու դժոխք զրկես։ Ահա տէր, երկայնամիտ ըլլաս, ահա ես կ'ուզեմ վարքս փոխել, ու զիս քեզի տալ. հրամայէ, ինչ պէտք է ինձ, ես ընելու պատրաստ եմ։ Ո՛վ արիւն Յիսուսի, օգնէ ինձ. ովսպասատան մեղաւորաց Մա-

1 Յովհ. Ը. 21։
2 Յովհ. ԺԱ. 43։

ріամ, հաս ինձ օգնութիւն. և դու հայր երկնաւոր, վասն արդեանց Յիսուսի և Մարիամու, գթա յիս։ Ես կը զղջամ, ով և Աստուած իմ, անհուն բարութիւն, զքեզ վշտացնելուս համար, և ամէն բանէն վեր զքեզ կը սիրեմ։ Թող ինձ վասն սիրոյ Յիսուսի Քրիստոսի, և տուր ինձ նոր սէր. մեծ ցաւ մ'ալ տուր ինձ իմ կործանմանս վրայ թէ որ նորէն զքեզ վշտացնելու ըլլամ։ Աստուած իմ, յոյս իմ և զօրութիւն իմ, ամէն բանի յոյս ունիմ քու գթութենէդ։ Դուն ինձ այնչափ շնորհքներ ըրիր, երբ ես քեզմէ հեռու կ'երթայի. ևս առաւել կը յուսամ որ հիմայ ալ ընես, երբ առ քեզ դարձեր եմ հաստատուն սրտիս, որ քեզմէ զատ ուրիշ բան չի սիրեմ։ Զքեզ կը սիրեմ, Աստուած իմ, կեանք իմ և ամենայն ինչ։ Զքեզ ալ կը սիրեմ, մայր իմ Մարիամ, քեզի կը յանձնեմ իմ հոգիս, դու զիս պահէ քու բարեխօսութեամբդ որ մէյմ'ալ Աստուծոյ երեսէն չ'ընկնամ։



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԻԳ.

ԽԱԲԷՈՒԹԻՒՆՔ ՍԱՏԱՆԱՅԻ

ՈՐ ՄԵՂԱՒՈՐԱՅ

ՄԻՏՔԸ ԿԸ ՊՂՏՈՐԷ

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Դնենք թէ երիտասարդ մը ծանր մեղքի մէջ ընկնելէն ետև խոստովանանք եղեր է, և նորէն Աստուծոյ շնորհքը ձեռք ձգեր է։ Սատանան ալ նորէն զինքը կը փորձէ՝ նոյն մեղքին մէջ մէյմ'ալ ընկնալու. երիտասարդն դեռ դէմ կը կենայ, բայց կը ծփի թշնամւոյն խաբէական փորձութեամբ։ Արդ քեզի կ'ըսեմ, ով երիտասարդ, ինչ կ'ուզես ընել, կ'ուզես հիմայ Աստուծոյ շնորհքը կորսընցնե՞լ, որ նորէն ստացար և բոլոր աշխարհէս աւելի կ'ածէ,

այդ չնչին հաճոյքդ ընելու համար. կ'ուզես որ դու քեզմէ՞ գրես քու յաւիտենից դատապարտութեանդ վճիռը, որ երթաս դժոխքն յաւիտեան այրիս մրկիս։ Դուն ալ կ'ըսես ինձ թէ չէ, ես դատապարտուիլ չեմ ուզեր, կ'ուզեմ փրկուիլ՝ բայց թէ որ սոյն մեղքն ընեմ, ետեւէն կ'երթամ կը խոստովանիմ։ Եւ ահա այս է փորձողին առաջին խաբէութիւնն. դուն ինձ կ'ըսես թէ ետքը կ'երթամ կը խոստովանիմ, բայց արդէն հոգիդ կորսընցուցիր։ Ըսէ ինձ, որ եթէ ձեռքդ գոհար մ'ըլլար՝ հազար ոսկի արժող, գետը կը ձգէիր, ըսելով թէ ետքն ետեւէն կ'ընկնամ, կը յուսամ որ գտնեմ։ Արդ, քու ձեռքդ ունիս այս գեղեցիկ գոհարը քու հոգւոյդ. զոր Յիսուս իւր արիւնով գներ է, և դու կամք դըժոխքը կը նետես. վասն զի մեղանչելովդ արդէն դատապարտուած կը սեպուիս, և կ'ըսես թէ կը յուսամ որ խոստովանանքով նորէն ձեռք ձգեմ. հապա թէ չի կարենաս ձեռք ձգել ինչ պիտի ընես, գիտես որ նորէն ձեռք ձգելու համար ճշմարիտ զղջում պէտք է՝ որ Աստուծոյ պարգեւն է. հապա թէ Աստուած չիտայ քեզի այդ ճշմարիտ զղջումը, մահն ալ վրայ հասնի, ու ատեն չունենաս խոստովանանք ըլլալու։ Կ'ըսես թէ շաբաթ չեմ անցներ, կ'երթամ կը խոստովանիմ. և ո՞վ խոստացեր է քեզի շաբաթ մը ատենն։

Կ'ըսես թէ վաղը կը խոստովանիմ. ո՞վ քեզի խոսք է տուեր վաղուան օրուան համար։ Սրբոյն Օգոստինոսի ըսածին պէս, վաղուան օրն Աստուած չխոստացաւ, գուցէ կու տայ, գուցէ չի տար։ Ինչպէս որ շատին չիտուաւ, որ իրիկունն անկողին մտան ու առաւօտը մեռած գտնուեցան յանկարծակի։ Քանի՞ ոմանք եղան զորս Աստուած իրենց նոյն իսկ մեղք գործելու ատեն պատժեց մահուամբ ու դժոխք ղրկեց։ Եթէ զքեզ ալ այնպէս ընէ, անկից ետեւ ինչ ճար պիտի ընես քու յաւիտենական դատապարտութեանդ։ Գիտցիր որ այս խաբէութեամբ՝ թէ ետքը կը խոստովանիմ, սատանան հազարաւոր և բիւրաւոր քրիստոնեայս դժոխք տարաւ. որովհետև դժուար կը գտնուի այնպէս յուսահատ մեղաւոր մը՝ որ ուզենայ իւր կամք դատապարտուիլ. ամէնքն ալ՝ երբ կը մեղանչեն, յուսով խոստովանանք ըլլալու կը մեղանչեն. բայց այս կերպով ետքն անհամար թշուառականներ դատապարտուեցան, ու հիմայ ճար ճարակ չեն կրնար ընել։

Կ'ըսես, թէ ես հիմայ չեմ կրնար այս մեղքիս դէմ դնել. և ահա այս է դիւին երկրորդ խաբէութիւնն, որ քեզի այնպէս կ'երևցընէ, թէ դու զօրութիւն չունիս դէմ դնելու ներկայ կրիցդ։ Նախ և առաջ պիտի գիտնաս որ առաքելոյն ըսածին

պէս, հաւատարիմ է Աստուած որ ոչ արկցէ զձեզ ի փորձութիւն առաւել քան զկար ձեր[1]. մէյմ՚ալ քեզի հարցընեմ, թէ որ հիմայ չես վստահիր դէմ դնելու, ինչպէս եղբը պիտի վստահիս։ Թշնամին չի դադրիր զքեզ փորձելէն ուրիշ մեղքերով ալ, ու ինքն այն ատեն աւելի կը զօրանայ քեզի դէմ, և դուն աւելի տկար կը գըտնուիս։ Ուրեմն թէ որ հիմայ չես համարձակիր այն բոցը մարել, ինչպէս եղբը պիտի համարձակիս մարելու, երբ կրակն աւելի շատցած է։ Կ՚ըսես, թէ Աստուած ինձ օգնութիւն կու տայ. բայց ահա Աստուած քեզի հիմայ կու տայ այն օգնութիւնը, ինչո՞ւ այս օգնութեամբս հիմայ չես ուզեր դէմ կենալ։ Գուցէ կը յուսաս, թէ Աստուած պիտի աւելցնէ իւր օգնութիւնը և շնորհքը՝ երբ դու մեղքերդ աւելցնես. և թէ որ հիմայ աւելի օգնութիւն և զօրութիւն քեզի պէտք է, ինչո՞ւ Աստուծմէ չես խնդրեր։ Տարակոյս մ՚ունիս Աստուծոյ հաւատարմութեան վրայ, որ խօսք տուաւ ըսելով՝ թէ խնդրեցէք և տացի ձեզ[2]։ Գիտես որ Աստուած իւր խօսքէն չի պակսիր, անոր ապաւինէ, նա քեզի կու տայ այն ուժն որ քեզի պէտք է դիմանալու համար։ Վճիռ է Տրիդենտեան ժողովոյն, թէ Աստուած ոչ հրամայէ զանկարելիս. այլ ի հրամայել ինչ ազդ առնէ՝ առնել զոր կարես, և խնդրել զոր չկարես, և օգնէ զի կարող լիցիս։

1 Ա. Կոր. ժ. 13։
2 Մտ. է. 7։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ուրեմն, Աստուած իմ, որչափ դուն ինձ բարերար եղար, ես ալ այնչափ ապերախտ եղայ։ Կարծես թէ ասպարէզ ելեր էինք ես քեզմէ փախչելու, դուն ետևէս գալու, դու բարի ընել ինձ կը նայէիր, իսկ ես չար ընելու։ Ա՜հ, Աստուած իմ, ուրիշ բան ալ չ՚ըլլար՝ սոսկ քու բարութիւնդ զոր ցուցիր ինձ, պէտք էր որ ի սէր քո գիս վառէր. որովհետև ես որչափ որ մեղքերս շատցուցի, դուն ալ շնորհքներդ աւելցուցիր։ Եւ ուսկից արժանի էի ես այս լուսոյս, զոր հիմայ ինձ կու տաս։ Շնորհակալ եմ քեզմէ, տէր իմ, բոլորով սրտիս. և կը յուսամ որ ասկից ետև ալ շնորհակալ ըլլամ յաւիտեանս յաւիտենից արքայութեան մէջ։ Այս բանիս յոյս ունիմ, որ քու արեամբդ գիս փրկեր ես. և հաստատուն յոյս ունիմ, որովհետև այսչափ ողորմութիւն ինձ ցուցիր. առ այժմ կը յուսամ որ ուժ ալ կու տաս ինձ, որ մէկ

մ'ալ մատնիչ չ'ըլլամ քեզի։ Եւ քու շնորհքովդ միտքս դրած եմ հազար անգամ մեռնիլ, քան թէ մէյմ'ալ դառնալ ու վշտացնել զքեզ։ Հերիք է որչափ որ զքեզ բարկացուցի, ինացած կեանքիս մէջ զքեզ սիրել կ'ուզեմ։ Եւ ի՞նչպէս չսիրեմ իմ Աստուածս, որ ինձ համար մեռնելէն ետև, այսչափ երկայնամտութեամբ այ ինձ համբերեց յետ իմ այսչափ անօրէնութեանցս։ Աստուած հոգւոյ իմոյ, կը զըղջամ յամենայն սրտէ, երանի թէ ցաւէս մեռնէի. եթէ ինչուան հիմայ քեզի երես դարձուցի, հիմայ ամէն բանէն աւելի ըզքեզ կը սիրեմ, իմ անձէս ալ աւելի։ Հայր երկնաւոր, վասն արդեանց օծելոյ քո Յիսուսի Քրիստոսի, օգնութիւն հասիր այս ողորմելի մեղաւորիս, որ զքեզ սիրել կ'ուզէ։ Տիրամայր Մարիամ, դուն օգնէ ինձ, և շնորհք առ ինձ համար որ միշտ ապաւինիմ առ քո միածինդ և առ քեզ, քանի որ սատանան գիս փորձելու ըլլայ զԱստուած բարկացնելու։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Կ'ըսես թէ Աստուած ողորմած է։ Այս է երրորդ խարէութիւնն առ հասարակ մեղաւորաց՝ որով սատանան կը մոլորցնէ շատերն ու կը դատապարտուին։ Խելացի մատենագիր մը կը գրէ, թէ Աստուծոյ ողորմութիւնն շատը դժոխք կը տանի քան թէ իրեն արդարութիւնն. վասն զի այն ողորմելիքն յանդգնաբար վստահանալով Աստուծոյ ողորմութեանն չեն դադրիր մեղանչելէն, և այնպէս կը կորսուին։ Աստուած ողորմած է, ո՞վ չի գիտեր. այսու ամենայնիւ որչափ մարդիկ Աստուած ամէն օր դժոխք կը զրկէ։ Ողորմած է Աստուած, այլ արդար ալ է, որով կը հարկադրի պատժել ով որ իրեն դէմ կը մեղանչէ։ Իւր ողորմութիւնը կը բանեցնէ անոնց վրայ, որոնք իրմէ կը վախնան, զորացոյց տէր զողորմութիւն իւր ի վերայ երկիւղածաց իւրոց... գթասցի տէր յերկիւղածս իւր[1]։ Բայց ով որ զինքը կ'անարգէ և չարաչար կը վարէ իւր ողորմութիւնն աւելի զինքը անարգելու համար արդարութիւնը կը բանեցնէ։ Եւ յիրաւի, վասն

1 Սղ. ՃԲ. 11. 13։

զի Աստուած մեղաց թողութիւն կու տայ՝ բայց չի կրնար ներել մեղանչելու կամքին։ Սուրբ Օգոստինոսի ըսածին պէս, ով որ կը մեղանչէ՝ ետքը կը զղջամ ըսելով, զղջացող չէ, հապա զԱստուած ծաղր ընող։ Բայց ընդ հակառակն առաքեալն ալ կ'ըսէ, թէ մի խաբիք, Աստուած ու արհամարհի [1]։ Ծաղր ընել կ'ըլլայ զԱստուած, վշտացնել զինքը ինչպէս որ կ'ուզես և երբ որ կ'ուզես, ու ետքը ելնել արքայութիւն պահանջել։

Իսկ դու կ'ըսես, թէ ինչպէս ինչուան հիմայ ողորմեցաւ ինձ Աստուած և չպատժեց, այսպէս ալ կը յուսամ որ ինձ ողորմի ասկէց ետև ալ, ահա քեզի չորրորդ խաբէութիւն դիւին։ Այս ի՞նչ ըսել է. Աստուած եթէ քեզի ողորմեր է, անոր համար միշտ ողորմի՞ պիտի, ու բնաւ չը-պատժէ՞ պիտի զքեզ։ Մանաւանդ թէ որչափ որ շատ եղաւ քեզի Աստուծոյ ողորմութիւնն, այնչափ աւելի վախնաս պիտի, թէ ալ չի ներեր քեզի և կը պատժէ թէ որ նորէն զինքը բարկացնես։ Աղէկ կ'ըսէ Սիրաք, թէ մի ասիցես, մեղայ և զի՞նչ եղև ինձ. տէր երկայնամիտ է [2]։ Աստուած կը համբերէ բայց միշտ չի համբերեր, երբ կը հասնի առ մեղաւորն ըրած ողորմութեանց սահմանեալ ժամանակն, այն ատեն ամէն մեղաց պատիժը մէկէն կու տայ, և օրչափ երկայնամտութեամբ սպասեց ա-նոր ապաշխարութեանն, այնչափ աւելի սաստիկ կ'ըլլայ պատիժը. այս է սրբոյն Գրիգորի ըսածը, թէ որոնց որ երկար ա-տեն սպասեց, զանոնք խստիւ կը դատապարտէ։

Ուրեմն, ով եղբայր, դու թէ որ կը տեսնես որ շատ անգամ զԱստուած սըրդողցուցեր ես ու Աստուած զքեզ դժոխք չի ղրկեր, պիտի ըսես. ողորմութիւնք տեառն անսպառք են զի ոչ սպառեաց զմեզ։ Գոհանամ զքէն, տէր, որ դիս չի ղրկեցիր դժոխք, ինչպէս որ ես արժանի էի. գիտցիր որ քանի՞ քանի հոգիներ քան զմեզ անմեղ դատապարտուեր են։ Զայս գիտնալով նայէ որ Աստուծոյ դէմ ըրած մեղացդ վճարումն ընես զղջմամբ և նոյն-չափ բարեգործութեամբք։ Աստուծոյ քեզի ըրած երկայնամտութիւնը քու սիրտդ պիտի շարժէ՝ չէ թէ աւելի իւր կամաց դէմ ընելու, հապա աւելի պաշտելու զինքը և սիրելու, տեսնելով որ ուրիշներուն չը-ըրած ողորմութիւնը քեզի է ըրեր։

1 Գաղ. Զ. 7։
2 Սիր. Ե. 4։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Յիսուս իմ խաչելեալ, փրկիչ իմ և Աստուած իմ, ահա քու մատնիչդ ոտքդ ընկած կ'ամաչէ աչքիդ առջևն երևիլ. այս քանի՞ անգամ է որ ես զքեզ ծաղր ըրի, քանի՞ անգամ է որ խօսք տուի մէյմ՚ալ զքեզ չի բարկացնելու։ Բայց իմ խոստմունքներս ամէնն ալ մէկ մէկ մատնութիւն եղան. երբ առիթն եկաւ զքեզ մոռցայ, ու նորէն քեզի երես դարձուցի։ Շնորհակալ եմ քեզմէ՝ որ չես թողուր զիս այս ժամն դժոխքին մէջ գտնուելու. հապա ամուր կը բռնես զիս քու ոտքիդ առջևն, լոյս կու տաս ինձ, ու կը հրաւիրես զիս ի սէր քու։ Այո՛ այո՛, ես ալ զքեզ սիրել կ'ուզեմ, փրկիչ իմ և Աստուած իմ, և չեմ ուզեր մէյմ՚ալ զքեզ անարգել։ Կը տեսնեմ որ ալ ինձ չես կրնար համբերել։ Վա՜յ գլխոյս, թէ որ յետ այդչափ շնորհաց դառնամ դարձեալ զքեզ վշտացնեմ։ Տէր, ես հաստատուն առաջադրութեամբ կ'ուզեմ վարքս փոխել. և որչափ որ զքեզ վշտացուցի, այնչափ զքեզ սիրել կ'ուզեմ։ Իմ մխիթարանքս այն է՝ որ անհուն բարութեանդ հետ է բանս։ Կը ցաւիմ ի վերայ այնչափ չարեացս՝ զոր քեզի դէմ ը-

րած եմ, և քեզի կը նուիրեմ ասկէ ետև բոլոր իմ սէրս։ Ներէ ինձ վասն արդեանց սուրբ չարչարանաց քոց. մոռցիր իմ անօրէնութիւններս, և տուր ինձ որ հաւատարիմ ըլլամ առ քեզ մնացած կեանքիս մէջ։ Զքեզ կը սիրեմ միակ ծայրագոյն բարիս, և կը յուսամ յաւիտեան զքեզ սիրել, Աստուած իմ, սէր իմ, մէյմ՚ալ զքեզ թողուլ չեմ ուզեր։ Ո՛վ Աստուածածին Մարիամ կոյս, զիս կապէ Յիսուս միածնիդ հետ, և շնորհք առ ինձ համար, որ մէյմ՚ալ չի զատուիմ իւր ոտքէն. յոյս և ապաւէն իմ դու ես։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Բայց ես դեռ երիտասարդ եմ, կ'ըսես, Աստուած կը գիջանի երիտասարդներուն, ատենով զիս Աստուծոյ կու տամ։ Այս է դիւին հինգերորդ խաբէութիւնն. Երիտասարդ ես. բայց չես գիտեր որ Աստուած տարիք չի նայիր, հապա ամէն մէկուն ըրած մեղայ կը նայի։ Դեռ կարիճ ե՞ս. բայց որչափ մեղք ըրած ունիս։ Շատ ծերեր կրնան ըլլալ որ քու ըրած մեղքերուդ տասնին մէկը չեն ըրած։ Զե՞ս գիտեր՝ որ Աստուած թիւ և չափ է դրեր ներելու ամէն մէկուն մեղացն. սուրբ գիրքն կ'ըսէ,

թէ Երկայնամիտ լինի Աստուած մինչև լցցեն զչափ մեղաց իւրեանց, և եկեսցեն հասցեն ի դատաստանս անհնարին[1]։ Ուրեմն ասկից ետև չի ներեր կը պատժէ, յանկարծական մահ կը զրկէ դատապարտութեան վիճակի մէջ եղած ատենդ, կամ երեսէ կը ձգէ՝ որ մահէն աւելի մեծ պատիժ է։ Բակեցից զցանկ նորա, և ելցիցի յափշտակութիւն[2]։ Թէ որ դու գետին մ'ունենաս, որ պատի մէջ առեր ես, տարիներով մշակեր ես, շատ ծախք ըրեր ես, յետոյ տեսնես որ պտուղ չի բերեր ինչ կ'ընես, պատը կը քակես երեսի վրայ կը թողուս. արդ վախցիր որ Աստուած ալ քեզի այնպէս չընէ. թէ որ դու մեղքէ ետ չես կենար, խղճմտանքիդ զարնելուն չես նայիր, ոչ յաւիտենականութիւնը կը հոգաս և ոչ հոգիդ, ամէն ըսս և վախ մէկդի կը դնես, ահաւասիկ ցանկը քակուած է, եկեր է ատենն որ Աստուած զքեզ երեսէն ձգէ։

Տեսնենք հիմայ վերջի խաբէութիւնը. դու կ'ըսես թէ յիրաւի է որ ես այս մեղքովս Աստուծոյ շնորհքը կը կորսընցնեմ, դժոխքի արժանի կ'ելլամ, և կրնամ դատապարտուիլ. բայց կրնայ ըլլալ՝ որ ետքը խոստովանիմ, ու փրկուիմ։ Այո՛ պարոն,

1 Բ. Մակաբ. Զ. 14։
2 Եսա. Ե. 5.

կրնայ ըլլալ որ փրկուիս. ես մարգարէ չեմ որ քեզի ըսեմ, թէ այդ մեղքէդ ետքն Աստուած քեզի մէյմ'ալ ողորմութիւն չըներ. բայց դուն ալ չես կրնար ուրանալ, թէ Աստուած քեզի այդչափ շնորհքներ ընելէն ետև, հիմայ թէ որ դարձեալ սըրդողցնես զինքն, շատ դիւրին է քեզի երթալ ի կորուստ։ Սուրբ գիրքն ալ այսպէս կ'ըսէ, թէ խստասրտին բանը ետքն վատ է։ Զարք վաղվաղակի սատակեսցին[1]. զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն և հնձեսցէ[2]. կոչէի զձեզ և ոչ անսայիք, այսուհետև ես ծիծաղեցայց զկորստեամբ ձերով[3]. իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից, ասէ տէր[4]։ Կը տեսնես, ըստ սուրբ գրոց, խստասիրտներուն վերջն ուր կ'երթայ։ Դուն ինձ կ'ըսես թէ, այսու ամենայնիւ կրնայ ըլլալ որ ես փրկուիմ. և ես ալ կ'ըսեմ, թէ՝ այն ինչ խենթութիւն է, հոգւոյն յաւիտենական փրկութիւնը դնել մէկ կրնայ ըլլալու վրայ, այն ալ կրնայ ըլլալ մը, որ շատ դժուար է։ Այս այնպիսի բա՞ն է՝ որ ծանր վտանգի մէջ դրուի։

1 Աղ. Լզ. 9։
2 Գաղ. Զ. 8։
3 Առակ. Ա. 24. 26։
4 Բ. Օր. 32. 35։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Սիրելի փրկիչ իմ, ես ոտքիդ առջև տարածուելով գոհանամ գքէն, որ այսչափ մեղքերէս ետև զիս երեսէ չի ձգեցիր։ Քանիներ կան ինձմէ սակաւամեզ, որ այն լոյսը չեն ունեցեր, զոր հիմայ ինձ կուտաս։ Կը տեսնեմ որ զիս մասնաւոր կերպով փրկել կ'ուզես, ես ալ կ'ուզեմ փըրկուիլ քեզի հաճոյական բան մ' ընելու համար, կ'ուզեմ գալ յերկինս յաւիտեան երգել և գոհաբանել այս ինձ ըրած ողորմութիւններդ։ Կը յուսամ որ հիմայ արդէն թողութիւն տուեր ես ինձ. բայց թէ որ դեռ սևերես եմ քու առջևդ ազէկ զղջում ու ցաւ չունենալով ըրածներուս վրայ, հիմայ կը զղջամ բոլոր սրտանց, կը ցաւիմ ի վերայ ամենայն չարեացս. ներէ ինձ քու պթութեամբդ, և միշտ սատակացուր իմ ցաւս զքեզ փտացնելուս համար, Աստուած իմ, այնչափ բարի և բարերար։ Տուր ինձ ցաւ, տուր ինձ քու սէրդ, ես զքեզ կը սիրեմ ամէն բանէ աւելի. բայց գիտեմ որ քիչ է իմ սէրս, կ'ուզեմ շատ սիրել, քեզմէ կը խնդրեմ այն սէրը, և քեզմէ կը յուսամ։ Լսէ ինձ, Յիսուս փըրկիչ իմ, որ խոստացար լսել զքեզ աղաչողին։ Ո՛վ սուրբ Աստուածածին կոյս Մարիամ, ամենէն կը լսեմ որ դուն անմխիթար չես թողուր քեզի ապաւինողները, ով միակ յոյս իմ և ապաւէն, Յիսուսէս ետև առ քեզ կը դիմեմ, ի քեզ կ'ապաւինիմ, զիս միածնիդ յանձնէ, ու փըրկէ զիս։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԻԴ·

ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Ամենքնիս ալ Քրիստոսի ատեանին առջև պիտի ելնենք[1]։

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Պէտք է որ մտածենք, թէ Քրիստոսի դիմացն ելնել կայ, ամբաստանութիւն կայ, քննութիւն կայ, և վճիռ կայ։ Առաջնոյն վրայ խօսելով՝ թէ հոգին դատաւորին դիմաց պիտի ելնէ, միաբան կ'ըսեն աստուածաբանք, թէ այս առանձնական դատաստանս կ'ըլլայ նոյն վայրկենին՝ յորում մարդս վերջին շունչը կու տայ, և նոյն ատեն որ հոգին ի մարմնոյն կը բաժնուի, պիտի դատուի ի Քրիստոսէ, որ չէ թէ

1 Զի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի։ Բ· Կոր· Ե· 10։

զուրիչը կը զրկէ իւր տեղ, հապա ինքն կու գայ իւր դատն ընելու· յորում ժամու ոչ կարծիցէք, գայ որդի մարդոյ[1]· և սըրբոյն Օգոստինոսի ըսածին պէս, գայ բարեաց՝ սիրով, և ամպարշտաց՝ ահաւորութեամբ։ Ո՞վ որպիսի՛ ահ ու դող պիտի քաշէ նա՝ որ առաջին անգամ տեսնէ իւր փրկիչը բարկացած դիմաք· առաջի բարկութեան նորա՞ հանդարտեսցէ, և ո՞ կայցէ ընդդէմ բարկութեան սրտմտութեան նորա[2]։ Զայս բանս մտածելով հայրն Աւոգիոս տա Փոնդէ այնպէս կը դողար՝ որ իւր պառկած խուցն ալ կը դողացնէր։ Պատուական հայրն Յորնաղ Անչինա մը-տածելով այն վախն զոր հոգին կ'ունենայ դատաւորին ներկայանալու ատեն, ելաւ հրաժարեցաւ աշխարհէս։ Դատաւորին սրդոյած երեսը տեսնելը նշան է դատապարտուելու· սրտմտութիւն թագաւորի հրեշտակ մահու[3]։ Սուրբ Բեռնարդոսի ըսածին պէս· թէ այն ատեն հոգին կ'ուզէր ի դժոխս ըլլալ, քան թէ զՔրիստոս սրդոյած տեսնել։

Տեսնուած է երբեմն որ յանցաւոր մը երկրաւոր դատաւորի մ'առջև ելնելու ատեն, ցուրտ քրտինք կը թափէ։ Պիսոն

1 Ղ· ԺԲ· 40։
2 Նաւ· Ա· 6·
3 Առ· ԺԶ· 14։

երբ յանցաւորի ձեւով ծերակուտին դիմաց
եաւ, այնչափ ամօթ քաշեց որ ինք զինքը
մեղցուց։ Ի՞նչ վախ ու դող է տղու մը
իւր հայրը սատիկ սրդոզած տեսնել, կամ
ծառայի մը՝ իւր իշխանը. հապա այն ի՞նչ
անտանելի ահ ու դող պիտի ըլլայ այն հո-
գւոյն երբ տեսնէ զՔրիստոս որ անարգեր
է իւր կենաց մէջ. Հայեսցին ի նա զոր
խոցեցինն, կ'ըսէ Զաքարիա մարգարէն։
Զայն Աստուծոյ գառն որ ի կեանս իւր
այնչափ հեզ և համբերող զինքը ցըցուց,
սրդոզած պիտի տեսնէ հոգին առանց յոյս
մ'ունենալու անկից ետև զինքն հաշտե-
ցընելու, և ստիպուի պիտի աղաչելու լեռ-
ներուն՝ որ իւր վրայ ընկնան և ծածկեն
զինքը սրդոզած գառին երեսէն։ Ըստ ա-
սելոյ սրբոյն Ղուկասու, յայնժամ տես-
ցեն զորդի մարդոյ [1]. ով թէ ի՞նչ սոսկումն
պիտի բերէ տեսնելն զդատաւորն ի կեր-
պարանս մարդոյ. վասն զի տեսնելո՛ զայն
մարդը՝ որ մեռեր է իւր փրկութեան հա-
մար, աւելի ևս կը յանդիմանուի իւր ապե-
րախտութիւնը։ Քրիստոսի համբարձման
օրը հրեշտակներն երևցան ու ըսին առա-
քելոց՝ թէ այս Յիսուս որ վերացաւն ի
ձէնջ, այնպէս եկեսցէ, զոր օրինակ տե-
սէք զնա երթալ յերկինս [2]։ Ուրեմն պիտի

1 Ղկ. ԻԱ. 27։
2 Գործք. Ա. 11։

գայ դատաւորն դատելու նոյն վէրքերովն
որոնցմով որ յերկրէս գնաց. մեծ ուրա-
խութիւն է տեսնողներուն և մեծ վախ
սպասողներուն, կ'ըսէ Հռոմբերտոս. վասն
զի նոյն այն վէրքերն արդարոց միխիթա-
րանք կ'ըլլան, և մեղաւորաց սոսկումն։
Երբ Յովսէփ նահապետն իւր եղբարց ը-
սաւ, թէ ես եմ Յովսէփ. սուրբ գիրքը կ'ը-
սէ, թէ Ոչ կարէին եղբարք նորա տալ
նմա պատասխանի, զի խռովեցան յերե-
սաց նորա [1]։ Հապա մեղաւորն ի՞նչ պա-
տասխան պիտի տայ Քրիստոսի։ Արդեօք
պիտի կարենայ թողութիւն և գթութիւն
խնդրել, երբ նախ և առաջ համար պիտի
տայ այն ամէն անարգանացն զոր իրեն
ըրեր է. Ուստի կ'ըսէ Սերերիանոս, թէ
ի՞նչ երեսով ողորմութիւն պիտի խնդրես,
երբ զողորմութիւնն անարգելուդ համար
առաջ դատուիս պիտի։ Սուրբ Օգոստի-
նոսին ըսածին պէս՝ երբ վերը կեցեր է
սրդոզած դատաւորն, վարը սոսկալի վի-
հը, աջին ամբաստանող մեղքերն, ձախ
դին գեհ՝ որ ի տանջանս կը քաշէն, ներ-
սէն խղճմտանքն երող մրկող, ուր պիտի
փախչի մեղաւորն, այսպէս ամէն կողմա-
նէ պաշարուած և բռնուած։

1 Ծն. ԽԵ. 3. 4։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ Յիսուս իմ, միշտ զքեզ Յիսուս կ'ուզեմ կանչել. քու անունդ զիս կը վախցնէ, զիս կը քաջալերէ, յիշելով որ իմ փրկիչս ես, որ զիս փրկելու համար կեանքդ տուիր։ Ահա ոտքդ ընկած կը խոստովանիմ, որ այնչափ դժոխոց արժանի եմ, որչափ որ մահուչափ մեղքով զքեզ վշտացուցեր եմ։ Ես արժանի չեմ թողութեան, բայց դու մեռար ինձ թողութիւն տալու համար։ Կ'աղաչեմ, փրկիչ իմ Յիսուս, շուտով թողութիւն տուր ինձ, քանի որ զիս դատելու չես եկած. այն ատեն չեմ կրնար ես քու գթութիւնդ խնդրել, հիմայ կրնամ աղաչել և կը յուսամ։ Այն ատեն քու վերքերդ զիս կը վախցընեն, իսկ հիմայ վստահութիւն ինձ կու տան։ Սիրելիդ իմ փրկիչ, ես ամէն չարիքէ աւելի կը զղջամ զքեզ վշտացնելուս համար։ Յանձն կ'առնում ամէն տեսակ տանջանք և կորուստ՝ քան թէ քու շնորհքդ կորսընցնել. զքեզ կը սիրեմ ի բոլոր սրտէ, զթա իմ վրաս։ Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում[1]։

1 Աղ. Ծ. 1։

Ո՛վ Մարիամ մայր ողորմութեան, ով փաստարան մեղաւորաց, առ ինձ համար մեծ ցաւ մը ի վերայ մեղացս, թողութիւն և յարատեւութիւն ի սէրն Աստուծոյ։ Զքեզ կը սիրեմ, երկնաւոր իմ արքայուհիս, և ի քեզ եմ ապաւինեալ։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Մտածէ ամբաստանութիւնը և քննութիւնը, որ պիտի ըլլան. ատեան նստաւ, և գպրութիւնք բացան[1]։ Կրկին են այս գպրութիւնք կամ գրեանք, աւետարան և խիղճ մտաց. աւետարանէն կը կարդացուի ինչ որ մեզապարտն պարտական էր ընել. խղճմտանքէն ինչ որ ըրաւ. սրբոյն Հերոնիմոսի ըսածին պէս՝ ամէն մարդ պիտի տեսնէ իւր ըրածն ու չըրածը։ Այն ատեն Աստուծոյ արդարութեան կշռով հարըստութիւնք, փառք, պատիւ և ազնուականութիւն անձին պիտի չի կշռուին այլ միայն գործք։ Կշռեցաւ ի կշիռս. ըսաւ Դանիէլ Բաղտասար թագաւորին, և գտաւ պակասեալ[2]. զոր այսպէս կը մեկնէ հայրն Ալուարէզ, թէ ոչ ոսկին և ոչ մե-

1 Դան. Է. 10։
2 Դան. Ե. 27։

ծութիւնք կշռոյ տակ կու գան, միայն թագաւորը կշռուեցաւ։ Այն ատեն կու գան դատախազք ամբաստանողք, և նախ սատանան, որբոյն Օգոստինոսի ըսածին պէս, պիտի գայ սատանան Քրիստոսի աստենին առջև, ու պիտի կարդայ իւր վաստակը. մեր դիմաց պիտի գնէ ամէն բան, զոր ըրեր ենք. որ օրը և որ ժամուն մեզանչեցինք. առջևնիս պիտի գնէ մեր խոստմունքները զոր չի կատարեցինք, և մէջ պիտի բերէ ամէն մեր յանցանքն օրովը ժամովը, ուստի պիտոր ըսէ դատաւորին՝ ըստ գրելոյ սրբոյն Կիպրիանոսի, թէ ես այս յանցաւորիս համար ոչ ապտակ կերայ, և ոչ ծեծ, ես ասոր համար բան մը չի քաշեցի. հապա ինքը զքեզ թողուց, որ մեռար զինքը փրկելու համար, և ուզեց ինձ գերի ըլլալ, ուստի իմս է։ Ամբաստանեն պիտի պահապան հրեշտակներն ալ. ամէն մէկ հրեշտակք պիտոր ըսեն, կ'ըսէ Որոգինէս, ինչ որ աշխատեր են անոր վրայ, և ինքը տեղիք չէ տուեր անոնց ազգարարութեանց։ Այնպէս որ ամէն բարեկամք զինքը պիտի թողուն։ Ամբաստանեն պիտի զինքն այն պատերն՝ որոնց մէջ մեղք գործեց. ամբաստանէ պիտի զինքը բուն խղճմտանքն ալ. յանդիմանել զմիմեանս ի խորհրդոց իւրեանց՝ յաւուրն յորում դատի Աստուած զդաղտ-

նիս մարդկան[1]։ Այն ատեն մեզքերն ալ, կ'ըսէ սուրբն Բեռնարդոս, ձայն պիտի հանեն ու պիտի ըսեն, դու զմեզ գործեցիր, քու գործքդ ենք, զքեզ չենք թողուր։ Վերջապէս Ոսկեբերանին ըսածին պէս, քեզի դատախազք պիտի ըլլան Քրիստոսի վերքերն, բևեռքն քեզմէ պիտի գանգատին, քեզի դէմ ձայն պիտի հանեն, Քրիստոսի խաչը քեզի հակառակ փաստարան պիտի ըլլայ։ Ետևէն կու գայ քննութիւն։

Այսպէս կ'ըսէ տէր. և եղիցի յաւուր յայնմիկ՝ քննեցից զԵրուսաղէմ ճրագաւ[2]. որ Մենտոցային ըսածին պէս, ճրագն տան ամէն խորշերը պիտի քննէ. ինչպէս կ'ըսէ Ալափիտէ ալ՝ թէ ճրագներով հասկըցիր որ Աստուած այն ատեն մեղաւորին առջև կը դնէ սրբոց օրինակն և այն ամենայն լուսաւորութիւններն և ազդարարութիւններն զոր կենացը մէջ տուեր է իրեն. միանգամայն բոլոր այն տարիներն զոր իրեն պագևեր է բարի գործ ընելու համար, այնպէս որ սրբոյն Անսելմոսի ըսածին պէս՝ ամէն ակնթարթի համար ալ քեզմէ հաշիւ պիտի ուզէ։ Մարգարէն ալ կը վկայէ, սրբեսցէ զորդիս Ղևեայ, և

1 Հռ. Բ. 15. 16։
2 Սոփ. Ա. 12։

հալեսցէ զնոսա իբրև զոսկի և իբրև զարծաթն[1]. ինչպէս ոսկին կը մաքրուի աղտէն, այսպէս ալ պիտի քննուին զատուին բարի գործերը, խոստովանանքը, հաղորդութիւնները և այլն. և յորժամ ժամ առից, ես ուղիղ դատեցայց[2], ուղղութիւններն ալ աղէկութիւններն ալ։ Ուստի կ'ըսէ սուրբն Պետրոս՝ եթէ արդարն հազիւ կեցցէ, իսկ ամպարիշտն և մեղաւորն ուր դտանիցի[3]. և սուրբն Գրիգոր ալ կ'ըսէ, թէ որ ամենայն դատարկ բանի՝ համար պիտի տրուի, հապա ինչ համար պիտի տրուի անշնորհք և պիղծ բանից։ Մանաւորապէս գայթակղութիւն տուողներուն համար կըսէ Աստուած, որոնք հոգւոց կորստեան պատճառ եղած են. Պատահեցից նոցա իբրև արջ քաղցեալ կամ զորդեկոտոր[4]. և ըստ իւրաքանչիւր գործոց հատուցումն կը յայտնէ դատաւորն ըսելով Տուք նմա ի պտղոյ շրթանց և ձեռաց նորա։

1 Մաղ. Գ. 3։
2 Ղ. ՀԳ. 3։
3 Ա. Պետ. Դ. 18։
4 Ովս. ԺԳ. 8։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ամէն, Յիսուս իմ, թէ որ հիմայ ուզենայիր իմ գործոցս համեմատ հատուցումն ինձ ընել, դժոխք միայն կ'ըլլար իմ բաժինս։ Ո՜հ Աստուած իմ, քանի՞ անգամ ես ինձմէ գրեցի իմ դատապարտութեանս վճիռը հոն երթալու։ Գոհանամ զքէն վասն երկայնամտութեանդ, որով ինչուան հիմայ ինձ համբերեցիր։ Ամէն տէր, թէ որ հիմայ քու ատեանդ ելնելու ըլլայի, ի՞նչ համար պիտի տայի իմ կենացս։ Մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում։ Կ'աղաչեմ, քիչ մ'ալ համբերէ, շուտով հիմայ մի՛ դատեր զիս. թէ որ հիմայ զիս դատէիր, հիմայ ես ի՞նչ պիտի ընէի։ Կ'աղաչեմ սպասէ, որովհետև եթէ ինչուան հիմայ այսչափ ինձ ողորմեցար, այս ողորմութիւնս ալ ըրէ ինձ. տուր սատիկ ցաւ մեղքերուս վրայ։ Կը զղջամ ես, ով ծայրագոյն բարի, իմ այսչափ անզգամութեանցս վրայ. զքեզ կը սիրեմ ամէն բանէ վեր։ Հայր երկնաւոր, թող ինձ վասն սիրոյ միածնիդ, և իւր արդիւնքովն տուր ինձ սուրբ յարատևութիւն։ Յիսուս փրկիչ իմ, ամէն բան քեզմէ կը յուսամ սուրբ

արիւնովդ։ Ամենասրբուհի Մարիամ, ի քեզ եմ ապաւինած. հա՛պա, ով բարեխօս իմ և փաստաբան, դարձո՛ առ իս զամենագութ աչաց քոց զհայեցուածս. իմ ողորմելութեանս նայէ, և ողորմէ ինձ քու զբթութեամբդ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Վերջապէս հոգին յաւիտենական փրկութիւն գտնելու համար՝ պէտք է որ դատաստանի ելնէ, նայի թէ Քրիստոսի կենաց համեմատ անցուցած է իւր կեանքն ալ. Զորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն և հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյն Աստուծոյ[1]։ Աւոր համար էր որ կը գողար երանելին Յոբ, ըսելով թէ ի՞նչ պիտի ընեմ, երբ Աստուած ելնէ դատաստան ընելու, և հարցընէ ինձ ի՞նչ պատասխան պիտի տամ իրեն։ Փիլիպպոս երկրորդ Սպանիոյ թագաւորն սուա մը լսելով իւր պաշտօնէից մէկէն, յանդիմանեց զայն ըսելով՝ այսպէս զիս կը խաբե՞ս. այն ողորմելին ալ երբ տուն դարձաւ, ցաւէն մեռաւ։ Հապա ի՞նչ պիտի

1 Հռ. Ը. 29։

ընէ, ի՞նչ պատասխան պիտի տայ Քրիստոսի մեղաւորը դատաստանին օրը։ Այնպէս պիտի ընէ, ինչ որ ըրաւ առանց աղէկ հագուստի հարսնիք եկողն, երբ յանդիմանուեցաւ. և նա պապանձեցաւ[1], մեղքն իւր բերանը կը կապէ. Ամենայն անօրէն խցցէ զբերան իւր[2]։ Արբոյն Բարսղի ըսածին պէս, դժոխքի կրակէն աւելի սաստիկ է այն ամօթն։

Ամէն բանէն ետքը կարգը կու գայ որ դատաւորն այսպէս տայ իւր վճիռը. Երթայք յինէն, անէծեալք, ի հուրն յաւիտենական։ Ո՞վ թէ որչափ սարսափելի պիտի գոռայ այն որոտումը՝ Կարգուսեանին ըսածին պէս. սուրբն Անսելմոս ալ կ՚ըսէ, թէ ով որ չի գողար այս որոտմունքէն, քուն եղած չէ, հապա մեռած է։ Լուսերիոս ալ կ՚ըսէ, թէ այնչափ սարսափ կը տիրէ չարերուն վրայ՝ երբ տեսնեն զդատաւորն որ այսպէս վճիռ կու տայ, թէ որ անմահ չըլլային Նորէն կը մեռնէին։ Այն ատեն, կ՚ըսէ սուրբն Թովմաս վիլլանովայցի, աղաչանաց տեղիք չիկայ քեզի, բարեխօս մը չիկայ, ոչ բարեկամ, ոչ հայր, հապա օրէն պիտի դիմեն այն տե-

1 Մա. ԻԲ. 12։
2 Սղ. ՃՂ. 42։
3 Մա. ԻԵ. 41։

զըն։ Սրբոյն Բարսղի ըսածին պէս, ով ըզ-
քեզ պիտի խաղըսէ, մի՛թէ այն Աստուածն
զոր դու անարգեցիր. սուրբերուն արդեօք
պիտի դիմեն, առ Մարիամ արդեօք։ Զըլ-
լար. վասն զի այն ատեն երկնքէ սրբոց
դասն ալ չեն բարեխօսեր, և լուսինն որ է
Մարիամ, ոչ տացէ զլոյս իւր[1]։

Աղէկ կ'ըսէ սուրբ Թովմաս Վիլլանովա-
ցին. ամ ինչպէս հանգիստ սրտով այս
բաներս կը զուրցենք ու կը լսենք, որպէս
թէ մեզի չի մտենար այն վիճակդ, կամ
որպէս թէ բնաւ գայիք չունենար այն օրն.
և կը յարէ, թէ հապա որպիսի յիմարու-
թիւն է անհոգ կենալ այսչափ վտանգաց
մէջ։ Զըսես, կ'ըսէ սուրբն Օգոստինոս,
իրաւ արդեօք Աստուած զիս պիտի դա-
տապարտէ։ Երբայեցիք ալ չէին կրնար
հաւատալ, կ'ըսէ նոյն սուրբն, թէ Աս-
տուած զիրենք պիտի ցրուէ փճացնէ։
Այնչափ դատապարտեալք չէին հաւա-
տար՝ թէ իրենք դժոխք պիտի երթան,
բայց ետքն իրենց պատիժն հասաւ. եհոս
վախճան... հասեալ է զըմբաղ... այժմ
ի մեծոյ հեղից զբարկութիւն իմ ի վերայ
քո[2]։ Այսպէս կը հասնի Աստուծոյ դա-
տաստանն. և կը տեսնես որ ստոյգ էր

1 Մա. ԻԳ. 29։
2 Եզեկ. Ե. 6. 8։

Աստուծոյ սպառնալիքը։ Սուրբն Եգի-
տիոս կ'ըսէ, թէ մեր ձեռքն է ինչ դա-
տաստան ունենալիս։ Ուրեմն ինչ պիտի
ընենք։ Յառաջ քան զմահ զարդարու-
թիւն գործեա[1], կ'ըսէ Սիրաք։ Սուրբն
Բոնաւենտուրա ալ կ'ըսէ, թէ խելացի
վաճառականներն վտանգի մը չգալու հա-
մար անդադար իրենց հաշիւը կը նային
շտկել. և սուրբն Օգոստինոս կ'ըսէ, թէ
դատաստանէն առաջ դատաւորը հաշտե-
ցընել կ'ըլլայ, իսկ եթէ դատաստանի նը-
տի չ'ըլլար։ Ուրեմն սրբոյն Բեռնարդոսի
ըսածն ըսենք առ տէր. կ'ուզեմ որ քեզի
ներկայանամ՝ արդէն դատուած, չէ թէ
որպէս դատելի, այսինքն է, տէր, կ'ուզեմ
որ այս կենացս մէջ զիս դատես ու պատ-
ժես, քանի որ ողորմութեան ատեն է,
և կրնաս ինձ թողութիւն տալ. վասն զի
մահուընէ ետև արդարութեան ատեն է։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Աստուած իմ, թէ որ հիմայ չհաշտեցը-
նեմ զքեզ ինձ հետ, այն ատեն ալ հաշ-
տուիլ չըլլար։ Բայց ինչպէս զքեզ հաշտ

1 Սիր. ԺԴ. 17։

ընեմ յետ այնչափ անարգելուս զքո բա-
րեկամութիւնդ չնչին և անբանական հա-
ճոյից սիրոյն համար։ Լաւ քու այնչափ բա-
րեացդ փոխարէն ապերախտութիւն հա-
տուցի, և ի՞նչ արժանաւոր հատուցումն
կրնայ ընել ողորմելի արարած մը այն ա-
նարգանացն՝ զոր ըրեր է իւր արարչին. ով
տէր իմ, չնորհակալ եմ քեզմէ, որ քու
ողորմութիւնդ տուեր է ինձ հնարք մը
զքեզ հաշտեցնելու և քեզի հատուցումն
ընելու։ Քեզի կը նուիրեմ զարիւն և զմ-
մահ միածնի որդւոյ քո Յիսուսի, և այն-
պէս կը տեսնեմ արդէն հաշտուած, և
աւելի ևս հատուցուած զքո արդարու-
թիւնդ։ Գիտեմ որ անոր հետ հարկաւոր
է իմ զղջումս ալ. և ահա Աստուած իմ,
ես յամենայն սրտէ կը զղջամ կը ցաւիմ
քեզի ըրած անիրաւութեանցս վրայ։ Հա-
պա հիմայ զիս դատէ, փրկիչ իմ. ես կը
գարշիմ յամենայն տհաճութեանց զոր
քեզի տուած եմ, և յամենայն չարեացս։
Կը սիրեմ զքեզ բոլորով սրտիս ի վեր քան
զամենայն, և կ'առաջադրեմ միշտ և հա-
նապազ սիրել, և աւելի մեռնիլ քան ըզ-
քեզ վշտացնել։ Դու տէր, խօսք տուիր
ներել դարձողին. ուստի հիմակուընէ զիս
դատէ, և արձակէ զիս ի մեղաց իմոց։
Սիրով կ'ընդունիմ քու դրած ապաշխա-
րանքդ. միայն թէ նորէն զիս ընդունիս
քու չնորհացդ մէջ, և պահես զիս ի նոյն

մինչև ի մահ, իմ յոյսս այս է։ Քեզմէ ալ
չնորհակալ եմ, Մարիամ մայր իմ, այն-
չափ ողորմութեանցդ համար, զոր ինձի
համար խնդրեցիր ու առիր. հապա շարու-
նակէ, կ'աղաչեմ, հուլանի ինձ ըլլալ մին-
չև վերջը։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԻԵ·

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Աստուած կը ձանչցուի իւր դատաստաններն ընկալող ատեն [1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Թէ որ աղէկ նայինք, առ այժմ աշխարհիս վրայ մէկը չիկայ որ այնչափ անարգեալ ըլլայ, ինչպէս Քրիստոս Յիսուս տէրն մեր։ Գեղացւոյ մը պատիւը կը նայուի, Աստուծոյ պատիւը բանի տեղ չի դրուիր· վասն զի վախ կայ, թէ գեղացին եթէ սրդողի կրնայ չարիք մ'ընել. իսկ Աստուծոյ դէմ ամէն անիրաւութիւն կ'ըլլայ համարձակ, որպէս թէ Աստուած չի կարենար մարդուս վրէժխնդիր ըլլալ

1 Ճանաչի տեր յառնել զդատաստանս իւր· Սղ· Թ· 17։

երբ ուզէ· Այլ ասեն, զի՞ արասցէ մեզ տէր, կամ զի՞նչ ածցէ ի վերայ մեր ամենակալն [1]։ Ուստի ասոր համար օր սահմանեց Աստուած ընդհանրական դատաստանի. որ սուրբ գրոց մէջ կ'ըսուի օր տեառն յորում կու գայ Յիսուս Քրիստոս, որ ճանչցուի թէ որպիսի մեծ տէր է ինքն. ճանաչի տէր յառնել զդատաստանս իւր։ Անոր համար այն օրն ալ ըսուիր օր ողորմութեան և թողութեան, հապա օր բարկութեան օրն այն, օր նեղութեան և վտանգի, օր թշուառութեան և ապականութեան [2]։ Եւ յիրաւի, վասն զի այն ատեն իրաւամբք պիտի պահանջէ Աստուած իւր փառքն և պատիւը, զոր մեղաւորք ուզեցին բառնալ այս երկրիս վրայ։ Տեսնենք հիմայ թէ ինչպէս պիտի ըլլայ այն մեծ և ահաւոր օրն։

Դատաւորին գալէն առաջ, հուր առաջի նորա գնասցէ [3]։ Կրակ մը պիտի իջնէ երկընքէն, որ բոլոր երկիրս այրէ լափէ, և ինչ որ երկրիս վրայ կայ. բնութիւնք հրով կիզեալ լուծցին. և երկիր և որ ի նմա գործք գտանիցին [4]։ Այնպէս որ տներ, պալատներ, եկեղեցիներ, գեղեր, քաղաք-

1 Յոբ· ԻԲ· 17։
2 Սոփ· Ա· 15։
3 Սղ· ՂԶ· 3·
4 Բ· Պետ· Գ· 10

ներ, տէրութիւններ պիտի ըլլան մոխրակոյտ մը. այն կրակով պիտի մաքրուի այս աշխարհիս տունն որ ոտնակոխ եղեր էր մեղաք։ Ահա այս վերջն է որ պիտի ունենան ամէն հարստութիւնք փառաւորութիւնք և փափկութիւնք աշխարհիս։ Մարդկանց մեռնելէն ետև՝ մեծ փող մը կը հնչուի և ամէնքը կ'ելնեն. քանզի փող հարկանի և մեռեալք յարիցեն[1]. սուրբն Հերոնիմոս կ'ըսէր՝ թէ քանի որ դատաստանին օրը կը յիշեմ կը դողամ, միշտ կարծեմ թէ փողին ձայնը յականջս կը հնչէ, թէ արիք մեռեալք եկայք ի դատաստան։

Այն փողը հնչուածին պէս, կ'ելնեն գեղեցիկ հոգիք երանելեաց և կը միանան իրենց մարմնոյն հետ, որով Աստուծոյ ծառայեցին այս կեանքիս մէջ. և թշուառ հոգիք դատապարտելոց կ'ելնեն դժոխքէն, կու գան կը միանան իրենց նզովեալ մարմնոյն հետ, որով անարգեցին զԱստուած։

Այն ինչ տարբերութիւն պիտի ըլլայ երանելոց և դատապարտելոց մարմնոց մէջ. երանեալք կ'երևին գեղեցիկ, պայծառ, փայլուն աւելի քան զարև, յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն[2]։ Ե-

1 Ա. Կոր. ԺԵ. 52։
2 Մտ. ԺԳ. 43։

րանի անոր որ այս կեանքիս մէջ զինքը մահացուցեր է՝ իւր մարմինը հրաժարեցընելով արգելած հեշտութիւններէն, և աղէկ սանձելու համար անոնցմէ ետ կեցեր է նոյն իսկ օրինաւոր զգայական հաճոյքներէ ու զսպեր չարչրկեր է ինչպէս սուրբերն ըրին։ Ո՛րչափ գոհ և ուրախ կ'ըլլայ այն ատեն, ինչպէս սուրբն Պետրոս ալգանդարացին. որ մեռնելէն ետև երևնալով սրբուհւոյն Թերեզայի ըսաւ. երանի այն ապաշխարութեան ու ճգնութեան, որ ինձ այսչափ փառաց պատճառ եղաւ։ Ասոր ներհակ մեղաւորաց մարմինները պիտի երևին տգեղ, սև, գարշահոտ. ինչ սրտի խշխշուք պիտի ըլլայ մեղաւորին այն ատեն միանալ իւր մարմնոյն հետ. այ նզոված մարմին, պիտի ըսէ իրեն հոգին, քու հաճոյքդ ընելու համար ես կորսուեցայ. մարմինն ալ պիտի ըսէ. ահ, անիծած հոգի, դուն որ բանականութիւն ձեռքդ ունէիր, ինչո՞ւ թող տուիր ինձ այն հեշտութիւնները, որով զքեզ ալ՝ գիս ալ կորուսիր յաւիտեանս յաւիտանից։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ փրկիչ իմ Յիսուս, որ օր մը իմ դատաւորս պիտի ըլլաս, կ'աղաչեմ հիմակուընէ թողութիւն տուր՝ քանի որ այն օրը չէ հասեր. մի դարձուցաներ զերեսս քո յինէն[1]. Հիմայ որ իմ հայրս ես, հօր պէս ընդունէ քու զաւակդ ի քո շնորհս, որ զղջմամբ քու ոտքդ ընկած է։ Թող ինձ, հայր իմ, որ զքեզ անարգեցի, մէկդի թողուցի, արժանի չէիր որ այն կերպով քեզի հետ վարուէի, ըրածիս վրայ կը զղջամ կը ցաւիմ յամենայն սրտէ։ Թող ինձ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն. զիս երեսէ մի ձգեր և մի մերժեր ինչպէս որ արժանի եմ։ Յիշէ այն արիւնը, զոր ինձ համար թափեցիր, և զթա ինձ։ Ո՛վ Յիսուս իմ, ես քեզմէ զատ դատաւոր չեմ ուզեր։ Սրբոյն Թովմայի վիլլանովացւոյն ըսածը կը զուրցեմ, յօժար սրտով ասնոր դատաստանը կ'ուզեմ որ ինձ համար մեռաւ, և որպէս զի ես չդատապարտուիմ թող տուաւ որ զինքն ի մահ դատապարտեն։ Սուրբն Պօղոս ալ արդէն ըսեր էր, ո՞ է որ դատապարտ առնիցէ, Քրիստոս Յի-

1 Սղ. ԻԶ. 9։

սուս որ մեռաւն[1]։ Հայր իմ սիրելի. ասկէ ետև ես քու ոտքէդ զատուիլ չեմ ուզեր, մի յիշեր իմ ըրած անզգամութիւններս, և տուր ինձ սէր սաստիկ առ քո բարութիւնդ, իմ փափաքս է՝ որ զքեզ աւելի սիրեմ, որչափ որ վչտացուցի, բայց թէ որ դուն ինձ չօգնես, ես չեմ կրնար զքեզ սիրել։ Օգնէ ինձ, փրկիչ իմ, և տուր ինձ ապրիլ սիրով ի սէր քո, որպէս զի այն ահեղ օրը զիս գտնեմ քու սիրելեացդ մէջ։ Ո՛վ Մարիամ, թագուհի և փաստաբան իմ, հիմակուընէ օգնէ ինձ, վասն զի թէ որ զիս կորսընցնեմ, այն օրը չես կրնար ինձ օգնել։ Դուն ամենուն բարեխօսն ես, բարեխօս եղիր և վասն իմ, որ կը պարծիմ քու ջերմեռանդ ծառայդ ըլլալ, և բոլորովին ի քեզ եմ ապաւինեալ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Մարդիկ յարութիւն առածին պէս՝ հրեշտակներուն ձայնովն ամէնքը կ'ելնեն կ'երթան ի ձորն Յովսափաթու կամ դատաստանի, զի անդ նստայց դատել զամենայն ազգս չուրջանակի... ձայնք հնչեցին ի ձորն դատաստանի, զի մերձ է օր

1 Հռ. Ը. 34։

տեառն ի ձորն դատաստանի[1]։ Հոն երբ ամէնքն ժողովուին, ելցեն հրեշտակք, և մեկնեսցեն զչարս ի միջոյ արդարոց[2]։ Արդարներն ալ կողմը պիտի կենան, և անօրէնք ձախ կողմը պիտի քշուին. ինչ ցաւ կ'ըլլայ անոր՝ որ դուրս քշուի քրիստոնէից ընկերութենէն կամ յեկեղեցւոյ. հապա ինչ ցաւ կ'ըլլայ այն ատեն երբ տեսնէ զինքը սրբոց միաբանութենէն քշուած։ Ոսկերերան կ'ըսէ՝ թէ և ուրիշ պատիժ ալ չունենային դատապարտեալք, այս ամէնը միայն հերիք էր անոնց դժոխքի տեղ։ Ձաւակը հօրմէն պիտի բաժնուի, էրիկը կնկանէն, տէրը ծառայէն, մին առցի և միւսն թողցի[3]։ Ի՞նչ կ'ըսես, ով եղբայր, որ կողմը քեզի ալ պիտի վիճակի այն օրն. կ'ուզե՞ս աջակողմեան դին զընտուիլ, ուրեմն թող այն ճամբան. որ ձախակողմը կը տանի։

Երկրիս վրայ հիմայ բարեբախտ կը սեպուին թագաւորք, իշխանք, և մեծատունք, ու արհամարհեալ են սուրբերն՝ որ աղքատ և խոնարհ կ'ապրին։ Ո՛վ դուք հաւատացեալք և աստուածասէրք, մի՛ լինիք սրտակոտոր՝ զձեզ տեսնելով իբրև անարգ և տառապեալ երկրիս վրայ. տըրտ-

1 Յով. Գ. 12. 14։
2 Մա. ԺԳ. 49.
3 Մա. ԻԴ. 40։

մութիւն ձեր յուրախութիւն եղիցի։ Այն ատեն դուք պիտի ըսուիք խիստ բարեբախտ, ու փառք և պատիւ պիտի ըլլայ ձեզի Յիսուսի մեծամեծաց կարգին մէջ գտնուիլը։ Գիտես թէ ինչ փառք պիտի ունենայ այն ատեն սուրբն Պետրոս ալգանդարացին, որ երբեմն թուք ու մուր առաւ իբրև ապստամբ մը, սուրբ Յովհաննէս Աստուծոյ՝ որ խենթ մը սեպուեցաւ, սուրբ Պետրոս կեղեստինեան՝ որ պապական աթոռէն հրաժարելով՝ բանտի մէջ մեռաւ։ Ինչ փառաւորութիւն պիտի ունենան այն ատեն բոլոր մարտիրոսներն, որ դահիճներուն ձեռքէն այնչափ բան քաշեցին։ Հապա ինչպէս խաղք խայտառակ պիտի ըլլան Հերովդէս, Պիղատոս, Ներոն, և անհամար մեծամեծք երկրիս որ պիտի դատապարտուին։ Ո՛վ աշխարհասէրք, զձեզ տեսնելու է ի ձորն դատաստանի. հոն տեղ անտարակոյս ձեր կարծիքը պիտի փոխէք. հոն տեղ լաք պիտի ձեր խենթութեան վրայ։ Այ խեղճ ողորմելիներ, որ քիչ մ'ատեն բան մը ելևնելու համար աշխարհիս խաղի տեսարանին մէջ՝ ետքը հոն տեղ դատապարտելոց հետ պիտի ըլլաք դատաստանին ողբերգական տեսարանին մէջ։ Արդարք պիտի աջակողմը տեղաւորուին, և փառք պիտի վերանան օդուն մէջ ամպերուն վը-

բայ՝ ընդ առաջ ելնելու Քրիստոսի, որ յերկնից պիտի գայ. յափշտակեսցին նոքքոք հանդերձ ի վերայ ամպոց ընդ առաջ տեառն յօդս[1]։ Իսկ դատապարտեալներն մոռթուելու այծերու պէս՝ ձախակողմը կը քշուին՝ սպասելով դատաւորին, որ հանդիսապէս դատապարտութեան վճիռ պիտի տայ իւր ամէն թշնամեաց։

Մէյմ՝ալ նայիս որ երկինք կը բացուի, հրեշտակներն կու գան ներկայ ըլլալ դատաստանին, իրենց հետ բերելով Քրիստոսի շարշարանաց գործիքները, մանաւանդ սուրբ խաչն երևելի պիտի ըլլայ. յայնժամ երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի[2]։ Ալափիտէին ըսածին պէս՝ պիտի կոծին աղաղակաւ և լացով անոնք, որ անհոգ եղան Քրիստոսի սիրած բաներուն. այն ատեն Ոսկեբերանին ըսածին պէս՝ Յիսուսին բևեռքն քեզի դէմ պիտի բողոքեն, վէրքերն քեզի դէմ ամբաստանեն պիտի։ Իբրև աթոռակիցք Քրիստոսի իրենց՝ քով աթոռներով պիտի նստին առաքեալներն ալ, և բոլոր իրենց հետեւողներն՝ որ փրկչին հետ զամէնքն ալ դատեն պիտի, ինչպէս որ կ՝ըսէ Իմաստութիւնն. պայծառասցին . . . դատեսցին

1 Ա. Թես. Դ. 16։
2 Մա. ԻԴ. 30։

զազգս[1]։ Կու գայ հոս ներկայ ըլլալու և թագուհին հրեշտակաց, տիրամայրն Մարիամ։ Եւ բոլոր կու գայ յաւիտենից դատաւորն՝ իւր փառաց և լուսոյ աթոռովն. և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ընդ ամպս երկնից, զօրութեամբ և փառաւք բազմաւք[2]. յերեսաց նորա խորտակեսցին ազգք[3]։ Յիսուսի տեսքն մեծ մխիթարանք է ընտրելոց. իսկ դատապարտելոց, որոյն Հերոնիմոսի ըսածին պէս, ալ լաւ էր դժոխքին տանջանքը՝ քան թէ տանել անտանելի ներկայութեան տեսան։ Սրբուհին Թերեզա կ՝ըսէր. ով Յիսուս իմ, ամէն տանջանք ինձ տուր, միայն թէ զքեզ ինձ դէմ սրդողած չի տեսնեմ այն օրն։ Սուրբն Բարսեղ ալ կ՝ըսէ. այս ամենը քան զամէն պատիժ վեր է։ Այն ատեն չարք պիտի ըսեն լեռներուն, թէ անկերուք ի վերայ մեր, և ծածկեցէք զմեզ յերեսաց նստելոյն ի վերայ աթոռոյ, և ի բարկութենէ գառինն[4]։

1 Խմաստ. Գ. 7. 8։
2 Մա. ԻԴ. 30։
3 Յովէլ. Բ. 6։
4 Յայտ. Զ. 16։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ սիրելի փրկիչ իմ, ով գառն Աստուծոյ, որ երբեմն յաշխարհս եկար՝ ոչ ի պատժել, այլ ի թողուլ զմեզս, կ՚աղաչեմ հիմակուց թող ինձ՝ քանի որ չէ եկած այն օրն՝ յորում իմ դատաւորս պիտի ըլլաս։ Դուն որ այնչափ երկայնամտութեամբ համբերեցիր, թէ որ կորսուելու ըլլամ, այն ատեն այն գառինդ տեսքը պիտի ըլլայ ինձ դժոխոց դժոխքը։ Ուստի կրկին կրկին կ՚աղաչեմ, թող ինձ, և քու ամենազորմ ձեռքովդ հանէ զիս այն խորխորատէն՝ ուր զիս ընկած կը տեսնեմ իմ մեղքերովս։ Ես կը զղջամ, ով ծայրագոյն բարի, զքեզ վշտացնելուս համար այնչափ անգամ։ Կը սիրեմ զքեզ, դատաւոր իմ, որ այդչափ զիս սիրեցիր։ Հապա վասն արդեանց քու մահուանդ այս մեծ շնորհքն ինձ ըրէ, որ մեղաւոր ըլլալէս սուրբ մը դառնամ. դու խօսք տուիր՝ թէ կարդացողս առ իս, և լուայց քեզ[1]։ Զեմ ուզեր աշխարհիս բարիքը, քու շնորհքդ կ՚ուզեմ, քու սէրդ և ոչ ուրիշ բան մը։ Ա՜հ, Յիսուս իմ, այն սիրոյն համար ըլլայ, որով մեռար ինձ համար խաչին վրայ, լսէ աղաչանացս։ Ո՛վ սիրելի դատաւորդ իմ, եսչմահապարտ եմ. բայց այնպիսի մահապարտ որ ալ ինք զինքն չի սիրեր. զքեզ կը սիրեմ։ Գթա ինձ, մայր իմ Մարիամ, շուտով ինձ օգնութեան հասիր, հիմայ է ատենն՝ յորում կրնաս ինձ օգնել։ Դու զիս երեսէ չի ձգեցիր, երբ ես զքեզ ալ զԱստուած ալ մոռցեր էի. օգնէ ինձ, որ միտքս գրեր եմ ասկէ ետև քեզի ծառայել, և մէյմ՚ ալ չբարկացնել իմ տէրս։ Ո՛վ տիրամայր, դուն ես իմ յոյսս և ապաւէնս։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Հիմայ նայինք բուն դատաստանն որ կը սկսի. ատեան նստաւ, և գպրութիւնք բացան[1], որ է ամէն մէկուն խղճմտանքն։ Նախ և առաջ սատանաներն դատապարտելոց դէմ վկայ կ՚ելնեն, պիտի ըսեն ըստ սրբոյն Օգոստինոսի. արդարադատ Աստուած, դատ արա, զի իմ է որ ոչ կամեցաւ քո լինել։ Երկրորդ վկայ պիտի ըլլան ամէն մէկուն իւր խղճմտանքն, վկայու-

1 Երեմ. ԼԳ. 3։

1 Դան. Է. 10։

թեամբք մտաց իւրեանց[1]։ Երրորդ վկայ պիտի ըլլան վրէժխնդրութեամբ տանց պատերն ալ, ուր որ մեղաւորք զԱստուած բարկացուցին. քար ի հիմանէ աղաղակեսցէ. վերջապէս վկայ պիտի ըլլայ ինքնին դատաւորն ալ, որ ներկայ էր ամէն եղած անիրաւութեան. ես ինձէն իրագէտ և վկայ եմ, ասէ տէր[2]։ Սրբոյն Պօղոսի ըսածին պէս՝ թէ այն ատեն Եկեսցէ տէր որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի, և յայտնիցէ զխորհուրդս սրտից[3], այնպէս որ ամենուն պիտի ցուցնէ զմեղս չարաց, ծածուկս և ամօթալիս. ցուցից ազգաց զամօթ քո[4]։ Իսկ ընտրելոց մեղքին համար կ'ըսեն ոմանք յաստուածաբանից, թէ պիտի ծածկուին Դաւթի ըսածին նայելով՝ թէ երանի ումի թողութիւն եղև մեղաց, և ծածկեցան ամենայն յանցանք նորա[5]։ Իսկ ընդհակառակն սուրբն Բարսեղ այպէս կը գրէ, մեղաւորաց իրաքանչիւր մեղքն իբրև ի նկարի պիտի տեսնուին։ Սուրբն Թովմաս կ'ըսէ, թէ որ Գեթսեմանի պարտիզին մէջ Քրիստոսի ըսածին պէս՝ թէ ես եմ, գետինը

1 Հռ. Բ. 15։
2 Երեմ. Իթ. 23։
3 Ա. Կոր. Դ. 5։
4 Նաւ. Գ. 5։
5 Սղ. ԼԱ. 1։

զարնուեցան բռնելու եկողներն, հապա դատաստանի նստած ըսելու ըլլայ թէ՝ ես եմ զոր դուք անարգեցիք, ինչ պիտի ըլլայ։ Գանք հիմայ վճռոյն. Քրիստոս նախ պիտի դառնայ ըսէ իւր ընտրելոց քաղցր բարբարով՝ թէ եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի[1]։ Երբ սրբոյն Փրանկիսկոսի յայտնուեցաւ, թէ ի կարգի փրկելոցն է, չէր կրնար ըմբռնել ուրախութենէն, թէ ինչ ուրախութիւն պիտի ըլլայ երբ դատաւորին ձայնը լսէ եկայք օրհնեալք, եկէք օրհնեալ զաւակք. եկէք յարքայութիւն, ալ ձեզի պատիժ տանջանք չիկայ, ալ ձեզի վախ չիկայ, արդէն փրկուած էք ու փրկեալ պիտի ըլլաք յաւիտեան, և կ'օրհնեմ իմ արիւնս որ ձեզի համար թափեցի, և կ'օրհնեմ ձեր արցունքը զոր դուք ձեր մեղաց համար թափեցիք, եկէք երթանք արքայութիւն ուր միշտ և հանապազ կ'ըլլանք յաւիտեանս յաւիտենից։ Սուրբ Աստուածածինն ալ պիտի օրհնէ իւր ջերմեռանդները, ու իրեն հետ արքայութիւն պիտի հրաւիրէ յերկինս, և այնպէս ալելուիա երգելով պիտի մտնեն ընտրեալներն ի ձայն յաղթանակի յարքայութիւն՝ ժառանգել, օրհնել և սիրել զԱստուած յաւիտեան։

1 Մտ. ԻԵ. 34

Աստոր ներհակ դատապարտեալք պիտի դառնան և ըսեն փրկչին. հապա մենք ո՞ղորմելիքս ի՞նչ պիտի ընենք։ Եւ դատաւորն յաւիտենից պիտի ըսէ. որովհետև մերժեցիք ու անարգեցիք դուք իմ շնորհքս, երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական[1]. գնացէք կորէք առջևէս, մէյմ՚ալ չեմ ուզեր զձեզ տեսնել և ոչ լսել. գնացէք գնացէք անիծածներ, որ օրհնութիւնս արհամարհեցիք։ Եւ ո՞ւր պիտի երթան, տէր, այս թշուառականներն. ի հուրն դժոխոց՝ ուր երին մրկին հոգւով և մարմնով. մինչև քանի՞ տարի, քանի՞ դար, ի՞նչ տարի, ի՞նչ դար, ի հուրն յաւիտենական, յամենայն յաւիտեանս, քանի որ Աստուած Աստուած է։ Այս վճռէս ետև, սրբոյն Եփրեմի ըսածին պէս, դատապարտեալներն քչուին պիտի հրեշտակներէն, սուրբերէն, իրենց ծնողքէն ու ազգականներէն, և տիրամայր սուրբ Աստուածածնէն։ Ուստի մեղաւորք պիտի դառնան ու պիտի ըսեն. կեցցեն արդարք, կեցցէ խաչն, կեցցէ արքայութիւն, կեցցեն հարք և որդիք, ա՛լ բնաւ զձեզ պիտի չտեսնենք, կեցցես և դու աստուածամայր Մարիամ. և այսպէս նոյն ձորին մէջ պիտի բացուի մեծ և սոսկալի խորխորատ մը, ուր ընկնան պիտի միատեղ դիւանք և

[1] Մա. ԻԵ. 41։

դատապարտեալք, ետևէն ալ, ո՜հ, պիտի գոցուին իրենց վրայ այն դռներն՝ որ մէկ մ՚ալ բացուելիք չունին յաւիտեանս յաւիտենից։ Ա՜յ անիծած մեղք, ո՞ր ողբալի կատարած պիտի հասցընես օր մը այնչափ խեղճ հոգիներու։ Ո՜վ ողորմելի հոգիք, որոնց պահուած է այսպիսի արտասուելի վախճան։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՜հ, փրկիչդ իմ և Աստուած, որպիսի վճիռ պիտի ըլլայ արդեօք այն ատեն ինձ ալ։ Թէ որ հիմայ, Յիսուս իմ, համար ուզես իմ կենացս վրայ՝ ուրիշ բան չունիմ ըսելիք, բայց եթէ դժոխքի արժանի եմ։ Իրաւ որ, սիրելի փրկիչ իմ, ես բիւր դըժոխոց եմ արժանի. բայց գիտցիր՝ որ ես զքեզ կը սիրեմ, աւելի քան զիս կը սիրեմ զքեզ, և մեղքերուս վրայ այնչափ ցաւ ունիմ, որ զոհ կ՚ըլլայի ամէն չոր պատիժ քաշել, միայն թէ զքեզ վշտացուցած չ՚ըլլայի։ Գիտեմ, փրկիչ իմ, որ դու կը դատապարտես ամէն խստասիրտ մեղաւորները, բայց՝ոչ զանոնք որ կը զղջան, և զքեզ սիրել կ՚ուզեն։ Ահա ես քու ոտքդ եմ ընկեր զղջմամբ, տուր ինձ ըսել՝ թէ թողեր ես իմ մեղքերս. արդէն ըսեր ես

մարգարէին բերնով, թէ դարձարուք առ իս և ես դարձայց առ ձեզ[1]։ Եւ մէկդի կը թողում ամէն բան, և կը հրաժարիմ յաւիտենական հաճոյից և յընչից աշխարհիս, առ քեզ կը դառնամ, և քեզի կ'ապաւինիմ, սիրելի փրկիչդ իմ, ընդունէ իմ սիրտս, և ասկէ ետև վառէ զիս ի սուրբ սէր քո, և այնպէս բորբոքէ որ մէյմ'ալ չուզեմ քեզմէ բաժնուիլ։ Յիսուս փրկիչ իմ, փրկէ զիս, և իմ փրկութիւնս այս ըլլայ՝ յաւիտեան զքեզ սիրել, և յաւիտեան օրհնել քու ողորմութիւններդ. զողորմութիւնս քո յաւիտեան օրհնեցից[2]։ Մարիամ, յոյս իմ, ապաւէն իմ, մայր իմ, օգնէ ինձ, և առ ինձ համար սուրբ յաղօթութիւն։ Ով որ քեզի դիմեր է, չէ կորսուած, կը յանձնեմ. վրաս գութ ունեցիր։

1 Զաք. Ա. 3։
2 Սղ. ՁԸ. 2։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԻԶ.

ԴԺՈԽՈՑ ՏԱՆՋԱՆՔՆ

Եւ երրիցեն նորա ի տանէջանս յաւիտենականս.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Մեղաւորն երբ մեղք կը գործէ, կրկին չարիք կ'ընէ, զԱստուած կը թողու զծայրագոյն բարին, կը դառնայ յարարածս. երկուս չարիս գործեաց ժողովուրդ իմ, զիս թողին զաղբիւրս ջրոյ կենդանւոյ, և փորեցին իւրեանց գուբս ծակոտս, որք ոչ կարացին ունել ջուր[1]։ Արդ որովհետև մեղաւորն յարարածս կը դառնայ՝ Աստուծոյ կամաց դէմ ընելով՝ իրաւամբ դրժոխքին մէջ չարաչար պիտի տանջուի այն

1 Երեմ. Բ. 13։

արարածներէն, կրակէն և սատանաներէն, և այս է պատիժ զգայութեան։ Բայց որովհետև իւր մեծ յանցանքն և բուն մեղքն Աստուծոյ դէմ երես դարձնելն է, ուստի իւր գլխաւոր պատիժն որ է իսկութիւն դժոխոց, պիտի ըլլայ պատիժ վնասուն, զՅիսուս և զԱստուած կորսընցնել։

Նայինք առաջ զգայութեան պատիժը։ Ի հաւատոց է, թէ դժոխք կայ։ Ի՞նչ բան է այս դժոխքն. տեղի տանջանաց, ինչպէս որ կը կոչէր դժոխքի մէջ մեծ ատուն, թէ յայս տեղի տանջանաց. այնպէս տեղի տանջանաց, ուր բովանդակ զգայութիւնք և կարողութիւնք դատապարտելոյն ունեն պիտի իրենց յատուկ տանջանքը, և որչափ որ մէկը զգայութեամբ վնասուցեր է զԱստուած, այնչափ աւելի այն ըզգայութիւնն պիտի տանջուի։ զի որովք մեղանչէ ոք, նոքիմբք և տանջի[1]. որչափ փառաւորեաց զինքն և խայտաց, այնչափ հատուցէք սմա սուգ[2]։ Աչքն պիտի տանջուի խաւարաւ. յերկիր խաւարին և մութին, յերկիր աղջամղջին յաւիտենական[3], ուր ոչ գոյ լոյս։ Որչափ ցաւալի բան է լսելն, թէ խեղճ մարդ մը գոցուեր է մութ փոսի մը մէջ իւր բոլոր կեանքը՝ քառասուն

1 Իմաստ. ԺԱ. 17։
2 Յայտ. ԺԸ. 7։
3 Յոբ. Ի. 21։

յիսուն տարի։ Դժոխքն այնպէս խորխորատ մ'է, որ ամէն կողմանէ գոցուած է, ուր արևուն ճառագայթը կամ ուրիշ լոյս մը չի մտներ, մինչև յաւիտեան լոյս մի տեսցէ[1]։ Կրակն որ աշխարհիս մէջ լոյս կու տայ, ի դժոխս պիտի ըլլայ բոլորովին մութ. ձայն տեսանէ զրոց հրոյ[2], զոր այսպէս կը մեկնէ սուրբն Իարսեղ. զատէ պիտի տէրն լոյսը կրակէն. այնպէս որ այրէ՞և չլուսաւորէ. ինչպէս մեծն Ալբերտ ալ կարճ խօսքով կ'ըսէ, թէ զատէ պիտի տաքութենէն փայլունութիւնը։ Այն ծուխն ու մուխն որ կ'ելնէ այդ կրակէն, կ'ըլլայ այն վիհն մրրկի՝ ըստ սրբոյն Հերոնիմոսի, զոր կը յիշէ սուրբ Գիրքն ալ. մէգք վարեալք ի մրրկէ, որոց աղջամուղջք խաւարին յաւիտեան պահեալ կան[3]։ Սուրբն Թովմաս կ'ըսէ, թէ դատապարտելոց այնչափ լոյս պահած է, որչափ որ բաւական է տեսնելու տանջող բաները, տեսնեն պիտի այն մշուշ լուսոյ մէջ ուրիշ մեղաւորաց և դիւաց գարշելի տեսիլը որ սոսկալի կերպարանք կ'առնուն աւելի սարսափ ձգելու համար։

Տանջուի պիտի հոտոտելիքն ալ։ Ի՞նչ տանջանք կ'ըլլար մէկու մը փակուիլ

1 Սղ. ԽԸ. 20։
2 Սղ. ԻԸ. 7։
3 Բ. Պետ. Ա. 13։

խցի մը մէջ հոտած դիակի մը հետ, վի-
բաւորք նոցա դիտապատ անկցին, և ել-
ցէ հոտ նոցա[1]։ Դատապարտեալն պիտի
կենայ միլիոնաւոր դատապարտելոց մէջ,
որ կենդանի են պատժուելու համար.
բայց մէկմէկ հոտած դիակ են իրենց գար-
շահոտութեամբն։ Սրբոյն Բոնավենտու-
րայի ըսածին պէս՝ թէ որ դատապար-
տուած մարմին մը դժոխքէն դար, իր
գէշ հոտովն կրնար բոլոր մարդիկը մեռ-
ցընել։ Բայց դու նայէ խենթերէն ոմանք
ինչ կ'ըսեն. թէ որ դժոխք երթամ մինակ
չեմ։ Այ ողորմելիներ, որչափ շատուոր
ըլլան դժոխք եղողներն, այնչափ աւելի
պատիժ կ'ըլլան ուրիշներուն։ Սրբոյն
Թովմայի ըսածին պէս, այն տեղ թշուառ-
ներուն ընկերութիւնն չի պակսեցներ
զթշուառութիւնն, հապա կ'աւելցնէ.
ուստի աւելի կը տանջեն մէկզմէկ իրենց
գարշահոտութեամբն, աղաղակովն և
անձկութեամբն, վասն զի դժոխոց մէջ
իրարու վրայ դիզուած են. ինչպէս ոչ-
խարները խոր ձմեռ ատեն. որպէս խաչն
ի դժոխս մատնեսցին[2]։ Մանաւանդ թէ
ճմլած խաղողներու պէս Աստուծոյ բար-
կութեան մամլոյն ներքև կը ճզմուին, նա
կոխեսցէ զհնձան գինւոյ ցասման բար-

1 Եր. ԼԴ. 3։
2 Սղ. ԽԸ. 15։

կութեան Աստուծոյ ամենակալի[1]։ Աջկից
ալ կու գայ պատժոյ անչարժութիւնն. մե-
ծութեամբ բազկի քո քարացին[2]։ Այն-
պէս որ՝ ինչպէս կ'ընկնայ դատապարտեալ
մը դատաստանին օրն ի դժոխս, այնպէս
պիտի մնայ՝ առանց կրնալու բնաւ դիրքը
փոխել, առանց կրնալու մէկ ոտքն կամ
ձեռքը փոխել, քանի որ Աստուած՝ Աս-
տուած է։

Ականջն ալ պիտի տանջուի գոռում գո-
չումէն, աղաղակէն և անդադար լացէն
այն խեղճ յուսահատ դատապարտելոց։
Դիւանքն ալ մէկ դիէն անդադար աղա-
ղակ կը հանեն, ահ նորա յականջս նո-
ցա[3]։ Ի՞նչ նեղութիւն է հիւանդի մը՝ որ
քուն ըլլալ կ'ուզէ, ու անդադար կը լսէ
չան հաջելը կամ տղու պոռալը։ Խեղճ ո-
ղորմելի դատապարտեալք, պիտի լսեն
անդադար յաւիտեանս յաւիտենից այն
սոսկալի կանչելը և աղաղակը դահիճ դի-
ւաց։ Տանջուի պիտի կոկորդն ալ անօթ-
թենէն, չան քաղց պիտի քաշէ դատապար-
տեալն. սովեսցին որպէս շունք[4], բայց
պատառ մ'ալ հաց պիտի չունենան։ Ծա-
բաւ ալ պիտի ունենայ սոսկալի՝ որ հերիք

1 Յայտ. ԺԹ. 15։
2 Եւք. ԺԵ. 16։
3 Յոբ. ԺԵ. 21։
4 Սղ. ԾԸ. 15։

պիտի չ'ըլլայ ծովուն ջուրը, բայց կաթիլ մ'ալ ջուր պիտի չի գտնէ, ինչպէս կը փնտռէր պապակած մեծատունն, բայց չի գտաւ ինչուան հիմայ, և յաւիտեան ալ պիտի չի կարենայ գտնել։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ա՛խ, տէր իմ, ահա քու ոտքդ ընկած կեցեր է այն մեղաւորն՝ որ բանի տեղ չի սեպեց քու շնորհքդ ալ, քու սպառնալիքդ ալ տանջանաց։ Վայ էր իմ գլխոյս՝ եթէ դու Յիսուս փրկիչ իմ վրաս չգթայիր, շատոնց ես այն հոտած հնոցին մէջն էի, ուր կը տոչորին ինձ պէս շատերն. ա՛խ, փրկիչ իմ, ի՞նչպէս զայս բանս մտածելով չեմ վառուիր քու սիրովդ, ի՞նչպէս կը բնեմ առկից ետև համարձակիլ զքեզ վըշտացնել։ Ա՛խ, չըլլայ չըլլայ մէյմ'ալ որ կրկնեմ իմ մեղքերս. ա՛լ աղէկ է ինձ հազար անգամ մեռնիլ, Յիսուս փրկիչ իմ, և որովհետև սկսար ինձ ողորմիլ, ի գլուխ հանէ ողորմութիւնդ։ Դու զիս հանեցիր ի գարշահոտութենէ, այնչափ սիրով զիս կանչեցիր ի սիրել զքեզ. հապա տուր ինձ մնացած կեանքս բոլոր քեզի համար ծախել։ Ո՛րչափ արդեօք կը փափաքին դատապարտեալք ունենալ օր մը, ժամ մը

այս ժամանակէս՝ զոր ինձ կը պարգևես, իսկ ես ի՞նչ կ'ընեմ, և ի՞նչ պիտի ընեմ, նորէն ատենս անցնեմ պիտի քեզի անհաճոյ բաներով։ Քաւ լիցի, մի՛ թողուր Յիսուս իմ, մի՛ թողուր արդեամբք սուրբ արեանդ, որ ինչուան հիմայ դժոխքէն զիս խալըսեց։ Զքեզ կը սիրեմ, ո՛վ ծայրագոյն բարի. և սիրելուս համար կը ցաւիմ զքեզ վշտացնելուս վրայ. չեմ ուզեր մէկ մ'այ վշտացնել, այլ սիրել զքեզ միշտ և յաւիտեան։ Տիրամայր իմ Մարիամ, աղաչէ զՅիսուս վասն իմ, և առ ինձ համար պարգև յարատևութեան և սուրբ սիրոյ իւրոյ։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Ա՛լ աւելի տանջանք զգայութեան դատապարտելոց՝ դժոխոց կրակն է, որ զջոչափականը կը կսկծեցընէ. Սիրաքայ ըսածին պէս՝ ամբարշտին մարմնոյն վրէժն է հուր և որդն։ Ուստի մասնաւորապէս զայն կը յիշէ տէրն դատաստանին օրը՝ թէ Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական։ Երկրիս վրայ ալ կրակէն մեծ տանջանք չիկայ, բայց այնչափ տար-

1 Մա. ԻԵ. 41։

բերութիւն կայ՝ մեր և դժոխքի կրակին մէջ. որ կ'ըսէր սուրբն Օգոստինոս, թէ անոր առջև՝ այս մերը նկար մ'է կրակի, և սուրբն Վինկենտիոս Ֆերարեան կ'ըսէ, թէ անոր առջև մեր կրակը ցուրտ է։ Պատճառն է, վասն զի կրակը մեր օգտին համար եղած է, իսկ դժոխքի կրակը մասնաւոր ստեղծեր է Աստուած տանջելու համար։ Այս է Տերտուղիանոսին ըսածն ալ, թէ կարի այլազգ է հուրն՝ որ ի պէտս մարդկան, և այն որ գործի է արդարութեան Աստուծոյ։ Ուստի ըսաւ Աստուած մարգարէին բերնով, թէ հուր վառեալ է ի սրտմտութենէ իմմէ, ի վերայ ձեր բորբոքեսցի[1]։ Երբ կ'ըսուի, թէ երթայք ի հուրն, հասկըցիր թէ կրակին մէջ. այնպէս որ դատապարտեալը պիտի պաշարուի կրակով՝ ինչպէս փայտ մը հնոցի մէջ. ներքևն ալ վրան ալ շրջ դին ալ կրակէ ծով պիտի ըլլայ։ Շօշափածն ալ, տեսածն ալ, շունչ առած տուածն ալ, սոսկ կրակ է. կրակին մէջ պիտի կենայ. ինչպէս ձուկը ջրոյ մէջ։ Բայց այն կրակը չէ թէ միայն դատապարտելոց շրջ դին պիտի պատէ, հապա անոր աղեաց մէջ ալ պիտի մտնէ շարշարելու համար, բոլոր մարմինը կրակ պիտի դառնայ, ուստի տոչորէ պիտի բոլոր ներսի դին, դրսի դին, գլխոյն

1 Երեմ. ԺԵ. 14։

ըղեղն ալ, երակներուն արիւնն ալ, ամէն մեղաւոր մէկմէկ փուռ պիտի ըլլայ. դիցես զնոսա որպէս հնոց ի հուր։

Մարդ կայ որ տաք արևու մէջ չի կրնար քալել, կրակ վառած սենեկի մէջ չի կրնար կենալ, եթէ կայծ մը ճրագէն ընկնայ չի կրնար համբերել. ետքը ամենևին չի վախնար այն լափող կրակէն։ Ինչպէս կատաղի գազան մը կը լափէ այծու պըզտիկ ուլը, այսպէս դժոխքին կրակը կը լափէ զմեղաւորն, բայց առանց մեռցնելու։ Սուրբն Պետրոս Դամիանեան յանդիմանելով զրղխոհն՝ կ'ըսէ, շարունակէ քու անառակութիւններդ, շարունակէ, որ կու գայ, մանաւանդ գիշեր կու գայ՝ որ քու անառակութիւնդ ձիւթ և նաւթ պիտի դառնայ, որով սնանի պիտի մշտնջենաւոր հուրն աղեացդ մէջ։ Սուրբն Հերոնիմոս ալ կ'աւելցընէ, թէ կրակն իւր հետ կը բերէ այն ամէն տանջանքներն ու ցաւերը, զոր երկրիս վրայ կը քաշեն. կողացաւ, գլխացաւ, լերդացաւ. մէկ կրակով, կ'ըսէ. ամէն պատիժ կը գտնեն դժոխքի մէջ մեղաւորներն։ Նոյն կրակին մէջ կ'ըլլայ նաև ցրտի նեղութիւն, այն ալ հասկընալու է որ բոլոր աշխարհի նեղութիւնները ստուեր դժոխոց տանջանքին առջև, կ'ըսէ Ոսկեբերան։

Կարողութիւնքն ալ պիտի ունենան իրենց մասնաւոր տանջանքը. դատապար-

տեալն յիշողութեամբ պիտի տանջուի, յիշելով այն ժամանակն զոր ունէր այս կեանքիս մէջ փրկուելու համար, իսկ ինքը բանեցուց իրեն դատապարտութեան համար, և Աստուծմէ առած շնորհքներն զոր չուզեց բանեցնել։ Միտքը, մտածելով թէ մեծ բարիք կորսընցուց, զարքայութիւնն ալ և զԱստուած, ու ճար ճարակ չիկայ նորէն գտնելու։ Կամքը, տեսնելով որ մէյմ՚ալ իւր ուզածը իրեն չի տրուիր. ցանկութիւն մեղաւորաց կորիցէ[1]։ Խեղճ ողորմելին յաւիտեան պիտի չունենայ՝ ինչ բանի որ կը բաղձայ, հապա պիտի ունենայ միայն ինչ բանէ որ կը խորշի. այսինքն յաւիտենից տանջանքները։ Կ՚ուզէ խալըսիլ և հանգիստ գտնել. բայց յաւիտեան խաղաղութիւն պիտի չի գտնէ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ա՛խ, Յիսուս իմ, քու պատուական աբիւնդ և մահդ իմ յոյսս են։ Դու մեռար զիս յաւիտենից մահուանէն փրկելու համար։ Ա՛խ, տէր, և ո՞վ աւելի մասնակից եղաւ սուրբ չարչարանացդ արդեանց, եթէ ոչ ես խեղճ ողորմելիս, որ շատ անգամ

1 Սղ. ՃԺԱ. 10։

դժոխոց արժանի եղեր եմ։ Ո՛հ, մի թողուր որ ալ ապերախտ ապրիմ քու այնչափ շնորհացդ՝ որ ինձ ըրած ես։ Դու զիս խալըսեցիր դժոխոց կրակէն, վասն զի չես ուզեր որ ես տոչորիմ տանջանաց կրակին մէջ, այլ վառուիմ քաղցր կրակով քու սիրոյդ։ Ուրեմն օգնէ ինձ, որ կարենամ կատարել քու կամքդ։ Թէ որ հիմայ դժոխքի մէջ ըլլայի, չէի կրնար ա՛լ զքեզ սիրել, արդ հիմայ որ կրնամ սիրել, ես ալ կ՚ուզեմ սիրել զքեզ։ Կը սիրեմ զքեզ, անբաւ բարի. կը սիրեմ զքեզ, փրկիչ իմ, որ այնչափ զիս սիրեցիր։ Ի՞նչպէս կրցայ ես այնչափ ատեն ապրիլ զքեզ մոռնալով. շնորհակալ եմ որ դու զիս չիմոռցար. թէ որ զիս մոռցած ըլլայիր, հիմայ դժոխոց մէջ կ՚ըլլայի, և չէի ունենար ցաւ մեղացս վրայ։ Այս ցաւս զոր կը զգամ սրտիս մէջ զքեզ վշտացնելուս համար, այս փափաքս զոր ունիմ զքեզ շատ սիրելու, քու շնորհացդ պարգևն է՝ որ դեռ հետս է։ Դոհանամ զքէն, Յիսուս փրկիչ իմ, յուսամ որ զիս բոլոր քեզի կու տամ մնացած կեանքիս մէջ. ամէն բան մէկդի կը թողում. կ՚ուզեմ զքեզ միայն ազաչել, պաղատիլ և հաճել. տուր ինձ յիշել միշտ դըժոխքը, որուն արժանի եղայ, և ինձ ըրած շնորհքներդ. և մի թողուր որ մէյմ՚ալ քեզի երես դարձնեմ, և ես զիս դատապարտեմ յայն վիհ տանջանաց։ Ո՞վ սուրբ

Աստուածածին, աղաչէ վասն իմ մեղաւորիս. քու բարեխօսութիւնդ զիս դժոխքէն խալըսեց, անով զիս իմ մեղքէս ալ խալըսէ, տիրամայր. որ կրնայ զիս նորէն ի դժոխս տանել։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Բայց այս ամենայն պատիժները բան մը չեն համեմատութեամբ պատժոյ վնասուն։ Դժոխոց խկութիւնն՝ մութը չէ, ժահահոտութիւնը չէ, աղաղակը չէ, կրակը չէ. բուն դժոխքն է զԱստուած կորսընցնելն։ Ուստի կ'ըսէ սուրբն Պրունոն, թէ թող աւելնան տանջանք տանջանաց վրայ, միայն թէ Աստուծմէ զրկուիլ չ'ըլլայ։ Սուրբ Ոսկերերանն ալ կ'ըսէ. թէ և բիւր գեհեան ալ ըսես, չես կրնար հաւասար ըսել այս ցաւոյս. և սուրբն Օգոստինոս կ'ըսէ, թէ որ դատապարտելք վայելէին ի տեսութեանն Աստուծոյ, պատիժ մը չէին զգար, և դժոխքն իրենց արքայութիւն կը դառնար։ Այս պատժոյս վրայ քիչ մը բան իմանալու համար օրինակ այս ըլլայ՝ թէ մէկն որ կորսընցնէ հարիւր դահեկան արժող գոհարեղէն մը, բաւական մեծ ցաւ կ'իմանայ. հապա թէ որ երկու հարիւր արժէր կրկին ցաւ կ'ունենայ, թէ որ չորս հարիւր արժէ, աւելի ցաւ կ'ըլլայ. մէկ խօսքով որչափ շատնայ կորսուած բանին արժէքն, այնչափ շատ կ'ըլլայ ցաւն. արդ դատապարտեալն որպիսի՞ բարիք է կորուսեր. զանհուն բարին, որ է Աստուած. ասոր համար կ'ըսէ սուրբն Թովմաս, թէ պատիժ կամ տանջանք դատապարտելոց է անսահման, վասն զի է կորուստ անսահման բարւոյն։

Այս պատիժս է միայն, ուսկից հիմայ կը վախնան սուրբերն։ Սուրբ Օգոստինոսին ըսածին պէս, այս բանս տանջանք է սիրողաց, և ոչ եթէ արհամարհողաց։ Սուրբն Իգնատիոս Լոյոլեան կ'ըսէր, թէ Տէր, ամէն պատժոց կը համբերեմ, բայց անոր չէ, այսինքն է, քեզմէ զուրկ մնալու։ Բայց այս տանջանքը բնաւ չեն հասկընար մեղաւոր մարդիկ, որոց փոյթը չէ ամիսներով տարիներով առանց Աստուծոյ ապրիլ, վասն զի թշուառականներն խաւարի մէջ կ'ապրին, մեռնելէն ետև պիտի իմանան, թէ ինչ մեծ բարիք կորուսին։ Ուստի կ'ըսէ սուրբն Անտոնինոս, թէ ընդ անկատիլ հոգւոյն ի մարմնոյն՝ իմանայ զԱստուած զծայրագոյն բարին, և զստեղծանիլ իւր առ այն. ուստի նոյն վայրկենին կը դիմէ երթալ գրկել ու գրկուիլ իւր ծայրագոյն բարւոյն հետ. բայց թէ որ ի մեղս է՝ կը վռընտուի Աստուծմէ։ Թէ որ

ղունը նապաստակ մը տեսնէ, և ուրիշը գինքը շղթայով բռնէ կապէ, ինչ սաստիկ ուժ կու տայ շղթան կոտրելու, և երթալու որսը բռնելու։ Հոգին մարմնէն զատուածին պէս՝ բնականաբար կը ձգուի առ Աստուած, բայց մեղքն գինքը Աստուծմէ կը բաժնէ, և հեռու կը ձգէ ի դժոխս. մեղք ձեր որոշեն ի մէջ ձեր և ի մէջ Աստուծոյ[1]։ Ուստի բուն դժոխքը կայացած է այն առաջին խօսքին վրայ առ դատապարտեալս, երթայք յինէն անիծեալք. ասոր համար կ'ըսէ Ոսկեբերան, թէ բիւր գեհեան ալ եթէ դնէ մէկը, այնպէս բան մը չըսեր, ինչպէս է վերնտուիլ Քրիստոսէ իրրև ատելի։ Երբ Դաւիթ վերնտեց զԱբիսողոմ՝ որ մէյմ'ալ իւր առջև չերևի, այնչափ մեծ պատիժ եղաւ այս Աբիսողոմայ՝ որ կ'ըսէր, թէ կամ թող տայ ինձ որ գամ իւր երեսը տեսնեմ, և կամ թէ թող զիս մեռցնէ։ Փիլիպպոս երկրորդ երբ տեսաւ մեծերէն մէկը՝ որ առանց յարգութեան ժամը կեցած էր, ըսաւ անոր, թէ մէյմ'ալ աչքիս մի երևնար. այս պատիժն այնչափ մեծ սեպեց այն իշխանն, որ տուն եկածին պէս ցաւէն մեռաւ։ Հապա ինչ պիտի ըլլայ երբ Աստուած մեղաւորի մը մահուան ատեն

1 Եսայ. ԾԹ. 2։

ըսէ, թէ դնա՛ կորիր մէյմ'ալ զքեզ չտեսնեմ. դարձուցից զերեսս իմ ի դոցանէ, և դոցեն զդոսա չարիք բազումք և նեղութիւնք։ Այն ատեն պիտի լսուի այն բանն ալ ի բերանոյ Քրիստոսի, գուք չէք ժողովուրդ իմ, և ես ոչ ինչ եմ ձեր[1]։

Ի՞նչ ցաւ է որդւոյն իւր հոր մեռնիլն, հարսի մը փեսային մահն. մէկը կ'ըսէ՝ ոչ հայր իմ մէյմ'ալ զքեզ պիտի չտեսնեմ. մէկալն ալ, ախ, փեսաս, որ ալ զքեզ պիտի չիտեսնեմ։ Ախ, թէ լսէինք դատապարտելոյ մը լացն, ու հարցընէինք, թէ ինչու կու լաս այդչափ. նա ալ զայս միայն պիտի ըսէր, կու լամ կ'ողբամ, վասն զի զԱստուած կորուսի, ալ մէյմ'ալ զինքը պիտի չիտեսնեմ։ Գոնէ կարենար խեղճ ողորմելին դժոխքի մէջ զԱստուած սիրել, ու համակերպել զինքն անոր կամաց։ Բայց չէ. վասն զի թէ որ զայդ կարենար ընել, դժոխքն դժոխք չէր ըլլար։ Զի կրնար թերեւուառականն համակերպիլ Աստուծոյ կամացն, վասն զի թշնամի եղած է Աստուծոյ կամքին. չի կրնար սիրել իւր ստեղծողը, հապա կ'ատէ, և յաւիտեան պիտի ատէ. և այս է իւր իսկական դժոխքը, գիտնալ թէ Աստուած է ծայրագոյն բարի, և միանգամայն հարկաւորիւ ատել

1 Ովս. Ա. 9։

զինքը, զոր կը ճանչնայ արժանի անբաւ սիրոյ։ Սրբուհին Կատարինէ գենուացի տեսնելով դև մը հարցուց՝ թէ դու ո՞վ ես. նա ալ ըսաւ. թէ ես եմ այն անզգամն որ զրկուած եմ ի սիրոյն Աստուծոյ։ Դատապարտեալն պիտի ատէ զԱստուած, և պիտի անիծէ անկից առած բարիքն ալ, ստեղծումն ալ և փրկագործութիւնն ալ, մանաւանդ ապաշխարութեան խորհուրդը, և աւելի սուրբ հաղորդութիւնը. ատէ պիտի հրեշտակները և սուրբերը, մանաւանդ իւր պահապան հրեշտակը, և պաշտպան սուրբերը, ևս առաւել զսուրբ Աստուածամայրն, բայց գլխաւորաբար ատնիծէ և հայհոյէ պիտի զամենասուրբ Երրորդութիւնն, և մանաւանդ զորդին Աստուծոյ, որ մեռաւ իրեն փրկութեան համար, նմանապէս անոր վէրքերը, արիւնը, չարչարանքը և մահը։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ա՜խ, Աստուած իմ, դու ես իմ ծայրագոյն բարիս և անհուն բարիս, և ես այնչափ անգամ իմ կամքս զքեզ կորուսեր եմ։ Գիտէի ալ որ իմ մեղքովս քու կամացդ կը դպչէի, քու շնորհքդ կը կորսընցնէի, և այսու ամենայնիւ ըրի։ Ա՜խ, ով որդի Աստուծոյ, թէ որ չտեսնէի զքեզ խաչի վրայ բևեռած ու մեռած ինձ համար, չէի համարձակեր խնդրել և յուսալ քեզմէ թողութիւն։ Հայր երկնաւոր, իմ վրաս մի՛ նայիր, հապա նայէ այս քու սիրելի որդւոյդ վրայ որ ինձ համար կը խընդրէ ներումն զթութենէդ. անոր լսէ և ինձ ներէ. ես հիմայ շատոնց դժոխքը պիտի ըլլայի առանց յուսոյ կարող լինելոյ մէկ մ՚ալ զքեզ սիրել, և նորէն ձեռք բերել կորուսած շնորհքս։ Եւ արդ Աստուածիմ, կը զղջամ ես քեզի ըրած անարգանացս վրայ, ամէն բանէն աւելի ես կենալով քու բարեկամութենէդ, և ոտքի տակ առնելով քու սէրդ շնչին երկրիս հաճոյիցն պատճառաւ։ Երանի թէ մեռած ըլլայի բիւր անգամ։ Ինչպէս կրցայ այսպէս կոյր ու խենթ ըլլալ. շնորհակալ եմ քեզմէ, տէր իմ, որ ինձ ատեն տուիր ճար գտնելու իմ չարեացս։ Արդ որովհետև քու ողորմութեամբդ դժոխքէ դուրս եմ, և կրնամ սէր ունենալ, կը սիրեմ զքեզ անբաւ բարիդ, իմ կեանքս, իմ գանձս. սէր իմ տէր, և ամենայն ինչ։ Յիշեցուր, տէր, միշտ քու սէրդ զոր առ իս ցուցիր, և ըզդժոխքն ուր ես պիտի ըլլայի, որպէս զի այս մտածութիւնն զիս վառէ միշտ ներգործութիւն սիրոյ ընելու, և միշտ քեզի ըսելու, կը սիրեմ զքեզ, և սիրելով կը սի-

բեմ։ Մարիամ կոյս, Թագուհի իմ և մայր իմ, յոյս իմ և ապաւէն իմ. թէ որ դժոխքի մէջ ըլլայի, զքեզ ալ չէի կրնար սիրել։ Կը սիրեմ զքեզ, մայր իմ, և քեզի կը վստահիմ ետ չկենալ ժ յմ՝ալ ի սիրելոյ զքեզ և զԱստուածն իմ, օգնէ ինձ և աղաչէ զՅիսուս վասն իմ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԻՆ·

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԴԺՈԽՈՑ

Եւ ասուսք յաւիտենական տանջանաց պիտի մատնուին[1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Թէ որ դժոխքն յաւիտենական չըլլար, դժոխք չէր ըլլար։ Քիչ ատեն դիմացող պատիժը պատիժ չէ։ Հիւանդի մը վէրքը կը կտրեն, միւսին քաղցկեղը կը տաղեն, ցաւը մեծ է, բայց որովհետև քիչ մը ետև կը վերջանայ, շատ տանջանք չէ։ Հապա ի՞նչ տանջանք կ՝ըլլար՝ թէ որ այն կտրուածքը կամ այն տաղելը շարունակէր շաբաթ մը, կամ ամիս մը տմբողջ։ Երբ տանջանք մը շատ կ՝երկըննայ, թեթև

1 Եւ երթիցեն նոքա ի տանջանս յաւիտենական։ Մատթ· իե· 46·

ալ ըլլայ, ինչպէս աչքի ցաւն, ականջի ցաւն, անտանելի կ'ըլլայ։ Բայց ի՞նչ կ'ըսեմ ցաւ, խաղարկութիւն մ'ալ, կատակերգութիւն մ'ալ երաժշտութիւն մ'ալ թէ որ շատ երկրընայ կամ բոլոր օրն ըլլայ, ձանձրանալէն չէինք համբերեր։ Հապա թէ ամիս մը կամ տարի մը դիմանալու ըլլար։ Իսկ դժոխքն ի՞նչ պիտի ըլլայ. ուր նոյն խաղարկութիւնը միշտ չի տեսնուիր, կամ նոյն երաժշտութիւնը միշտ չի լսուիր. սոսկ աչքի կամ ականջի ցաւ չէ, սոսկ կտրելու կամ տաղելու ցաւ չէ, հապա ամէն տանջանք և ամէն ցաւ հոն են։ Եւ որչափ ատեն. յաւիտեանս յաւիտենից. և շարշարեսցին զտիւ և զգիշեր [1]։

Այս յաւիտենականութիւնս հաւատոյ բան է, չէ թէ կարծիք կամ կասկած մ'է, այլ ճշմարտութիւն վկայեալ յԱստուծոյ յամենայն գիրս սուրբս. Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական. և երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս [2]. որք տայցեն վրէժս ի սատակումն յաւիտենից [3]. ամենայն ինչ հրով յաղեսցի [4]։ Ինչպէս որ աղն ամէն բան կը պա-

1 Յայտ. Ի. 10։
2 Մտ. ԻԵ. 41... 46։
3 Բ. Թես. Ա. 9։
4 Մարկ. Թ. 48։

հէ, այսպէս ալ դժոխքին կրակը դատապարտեալները տանջելու ատեն՝ միանգամայն աղին յատկութիւնն ալ ունի, պահելով անոնց կեանքը։ Սուրբ Բեռնարդոսի ըսածին պէս, այն տեղի կրակն այնպէս կը տոչորէ որ միանգամայն միշտ ողջ պահէ։

Ուրեմն ի՞նչ մեծ խենթութիւն է այն մարդուն ըրածը, որ օր մը զբօսանք ընելու համար՝ ուզենայ պարտաւորիլ գոցուած մնալ փոսի մը մէջ քսան երեսուն տարի։ Թէ որ դժոխքը հարիւր տարի դիմանար, ի՞նչ կ'ըսեմ հարիւր, հապա երկու երեք տարի միայն, և ոչ աւելի, տակաւին մեծ խենթութիւն էր՝ մէկ քանի վայրկենի շնչին հաճոյից համար, կրակի մէջ դատապարտուիլ երկու երեք տարի։ Բայց մեր բանն երեսուն քառասուն տարւոյ վրայ չէ, հազար կամ հարիւր հազար տարուան համար չէ, հապա նոյն տանջանքը քաշելու վրայ է միշտ և յաւիտեան, այնպէս որ ոչ վերջանալ կայ և ոչ թեթեւնալ բնաւ։ Ուստի իրաւունք ունին եղեր սուրբերն՝ երբ աշխարհիս վրայ էին, ու դեռ ի վտանգի դատապարտութեան, լալ ու դողալ։ Երանելի հայրն Եսայի յանապատն ալ կենալով պահօք և ճգնութեամբք, կու լար ու կ'ըսէր, վայ ինձ ողորմելւոյս, որ դեռ զեհենին կրակէն ազատ չեմ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛հ, Աստուած իմ, թէ որ զիս դժոխք ղրկած ըլլայիր, ինչպէս որ շատ անգամ արժանի եղայ ու եթէ ազատեցիր զիս քու գթութեամբդ, որչափ պարտական քեզի պիտի մնայի, և անկէց ետև ինչ սուրբ կեանք կը սկսէի վարել։ Արդ հիմայ աւելի մեծ ողորմութեամբ զիս պահեցիր՝ որ հոն չընկնամ, ի՞նչ պիտի ընեմ, նորէն պիտի դառնամ արդեօք զքեզ վրշտացնելու, և քու բարկութիւնդ շարժելու, որ իրօք ղրկես զի հոն տանջուելու այն ապստամբներուն բանտին մէջ, ուր շատ ինձմէ սակաւամեղք կը տոչորին։ Ա՛խ, փրկիչ իմ, այսպէս ըրի յառաջուց ալ. փոխանակ բանեցնելու այն ժամանակն զոր տուիր ինձ իմ մեղքերս լալու, ես աւելի զքեզ արդողջընելու ծախեցի։ Գոհանամ զանբաւ բարութենէդ, որ այսչափ ինձ երկայնամիտ եղար. թէ որ անսահման չըլլար քու համբերութիւնդ, ի՞նչպէս կըրնայիր ինձ համբերել։ Ուստի գոհանամ զքէն ինչուան հիմայ ինձ սպասելուդ համար. մեծապէս գոհանամ հիմայ ալ ինձ լոյս տալուդ համար. որով կու տաս ինձ

ճանչնալ իմ խեղթութիւնս, և այնչափ անարգանքը՝ զոր քեզ տուեր եմ իմ մեղքովս. ուստի կը գարշիմ անոնցմէ և կը զղջամ ի բոլոր սրտէ, թող ինձ վասն քո սուրբ շարչարանացդ, և ձեռք տուր ինձ քու շնորհքովդ, որ մէյմ՛ալ զքեզ չվշտացընեմ. իրաւամբք հիմայ պէտք է որ վախնամ, չըլլայ թէ զիս թողուս մէկ մահուչափ մեղաց մէջ ալ ընկնալ։ Ա՛խ, տէր, աչքիս առջև դիր այն իրաւունքէ վախնալու բանը, երբ սատանան զիս փորձելու ըլլայ մէյմ՛ալ զքեզ վշտացնելու։ Աստուած իմ, զքեզ կը սիրեմ, չեմ ուզեր մէյմ՛ալ ըզքեզ կորսընցնել, զիս փոխէ քու շնորհքովդ։ Օգնէ ինձ, Կոյսդ ամենասուրբ, տուր որ միշտ քեզի ապաւինիմ յամենայն փորձութիւնս իմ, որպէս զի չի կորսընցընեմ զԱստուածն իմ, Մարիամ մայր իմ, դու ես յոյս իմ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ով որ անգամ մը դժոխք ընկնայ, յաւիտեան անկից ելնելիք չունի։ Այս բանիս մտածութիւնը դողալ կու տար Դաւթի, ուստի կ՛ըսէր. մի ընկզմեսցեն զիս անդունդք խոր ջրոցհոր, մի կափուսցէ զրե-

բան իւր ի վերայ իմ [1]։ Դատապարտեալն ընկածին պէս այն տանջանաց խորխորատը՝ փոսին բերանը կը գոցուի. ալ չի բացուիր. դժոխքը մտնելու դուռ ունի, ելնելու դուռ չունի։ Այս է Սերերիանոսի ըսածն ալ, թէ էջք ունի, ելք չունի։ Ուստի այսպէս կը բացատրէ նոյն սաղմոսին խօսքը, մի՛ թէ կափուսցէ զբերան իւր. վասն զի երբ վար առնու եկողները, վերէն կը գոցուի վարէն կը բացուի։ Քանի որ մեղաւորն այս աշխարհիս վրայ կ'ապրի, կրնայ յոյս ունենալ ճար ընելու, բայց մէյմը որ մեղքով մահէն բռնուի, ամէն յոյս իրեն համար վերջացած է. յոյս ամբարշտի կորիցէ [2], կ'ըսէ սուրբ գիրքն։ Գոնէ սուտ յոյս մը կարենային ունենալ դատապարտեալը, որ քիչ մը մխիթարանք ըլլար յուսահատութեան դէմ։ Վիրալից հիւանդ մը մահիճ ընկած՝ թէ՝ և անյոյս ըլլայ բժիշկներէն, ինքն դեռ կը յուսայ թէ կարելի է որ ինձ դեղ մը գտնուի առողջանալու. ինչուան ի մահ բանտի դատապարտեալն ալ ինք զինքը կը մխիթարէ յուսով մը թէ ո՞վ գիտէ կրնայ ըլլալ որ այս չղթաներէն խալըսիմ։ Գոնէ, կ'ըսեմ, այսպէս կարենար ըսելու դժոխքի դատապարտեալն ալ, թէ ո՞վ գիտէ գուցէ

1 Աղ. ԿԸ. 16։
2 Առակ. ԺԱ. 7։

օր մը այս բանտէս ելնեմ։ Չէ՛ չէ, դժոխքի մէջ բնաւ յոյս չիկայ, ոչ իրաւ ոչ սուտ. հոն չըլլար ըսել՝ ո՞վ գիտէ, գուցէ։ Յանդիմանեցից և կացուցից զայս ամենայն առաջի քո [1]. վասն զի խեղճ ողորմելին միշտ աչքին առջև կը տեսնէ գրած դատապարտութիւնը, թէ յաւիտեան պիտոր ըլլայ այն տանջանաց խորխորատին մէջ։ Յարիցեն ոմանք ի կեանսն յաւիտենականս, և ոմանք ի նախատինս և յամօթ յաւիտենական [2]. ուստի դատապարտեալը չէ թէ միայն ամէն վայրկեան կը տանջուի, հապա ամէն վայրկենի մէջ ալ կը քաշէ յաւիտենականութեան տանջանքը. ըսելով, ինչ որ հիմայ կը քաշեմ, յաւիտեան պիտի քաշեմ. Տերտուղիանոսին ըսածին պէս՝ յաւիտենականութեան ծանր բեռը կը քաշէ։

Ուրեմն աղաչենք զԱստուած սուրբ Օգոստինոսին հետ, աստ կիզեա, աստ սրսցեա, աստ մի՛ խնայեր, զի յաւիտեան խնայեսցես։ Այս կեանքիս պատիժներն կ'անցնին կ'երթան. նեաք քո գնան ի ձայնէ որոտալոյ քո անուի [3]. բայց անդի կենաց պատիժներն բնաւ անցնելիք չունին։ Թէ որ հիմակուան որոտմունքէն կը

1 Աղ. ԽԹ. 21։
2 Դան. ԺԲ. 2։
3 Աղ. ՀԶ. 18. 19։

վախնանք, վախնանք այն որոտմունքէն յաւիտենական դատապարտութեան, որ գոռալով կ'ելնէ դատաւորին բերանէն ա-նօրինաց դէմ, երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական[1]։ Ահա այս է վախնալու ձայն որոտալոյ անուին Աստուծոյ, վասն զի անիւն օրինակ է յաւիտենականութեան, որուն չրջանը ծայր ու ճոթ չունի, ես տէր մերկացի, կ'ըսէ, ըզվաղակաւորն իմ ի պատենից իւրոց, և անդրէն ոչ ևս դարձցի[2]։ Որչափ մեծ է դժոխքի պատիժն, ալ աւելի վախնալու բանն այն է որ մէյմ' ալ ետ դառնալիք չունի։

Գուցէ անհաւատին մէկն ըսէ, թէ այն ինչպէս դատաստան է, մէկ վայրկենի մեղքն յաւիտենական տանջանքով պատժել։ Ես ալ կ'ըսեմ. հապա ինչպէս մեղաւորն կը համարձակի մէկ չնչին ու վայրկենական հաճոյից համար անարգել զանբաւ մեծվայելչութիւնն Աստուծոյ։ Սրբոյն Թովմայի ըսածին պէս, մարդկային դատաստանին համեմատ այ՝ մարդասպանութիւնը մէկ վայրկենի մէջ ըլլալուն համար՝ վայրկենական պատժով չի տանջուիր։ Մէկ մահուչափ մեղքին մէկ դըժոխքն քիչ է, ինչպէս որ կ'ըսէ սուրբն

1 Մա. ԻԵ. 41։
2 Եղեկ. ԻԱ. 5։

Բեռնարդինոս Սենացին. ինչ և իցէ մահուչափ մեղքով անհուն անարգանք կ'ըլլայի Աստուծոյ. ուստի անհուն անարգանաց անհուն պատիժ պէտք է. բայց որովհետև սրբոյն Թովմայի ըսածին պէս, աբարածն ընդունակ չէ անհուն պատժոյ ըստ սատկութեան. Աստուած ալ իրաւամբք կ'ընէ, որ անոր պատիժն անհուն ըլլայ ըստ տարածութեան, որ է ըսել յաւիտենական։

Ո՞ւր թողունք որ այն պատիժն պէտք է որ յաւիտենական ըլլայ։ Նախ, վասն զի մեղաւորն ի դժոխս չի կրնար վճարք ընել իւր յանցանաց. այս կեանքիս մէջ կրնայ մեղաւորն վճարումն ընել արդեամբք փրկչին իւրոյ, ասկից դուրս կը մնայ դատապարտեալն, և այնպէս յաւիտեան կը մնայ անճողոպրելի ի պատժոց. ոչ փրկէ մարդ, և ոչ տայ Աստուծոյ փրկանս... վաստակեա յաւիտեան[1]։ Ուստի կ'ըսէ Բելուակեցին, թէ հոն յանցանքն միշտ կրնայ պատժուիլ, բայց ոչ երբէք կրնայ քաւուիլ. վասն զի սրբոյն Անտոնինոսի ըսածին պէս, հոն տեղ մեղաւորն չի կըրնար զղջալ, անոր համար Աստուած միշտ սրդողած կը մնայ. ժողովուրդ՝ ընդ որում տացէ պատերազմ տէր մինչև ցյաւի-

1 Սղ. ԽԸ. 8։

տեան[1]։ Երկրորդ, թէ և Աստուած ուզե-
նայ ալ ներել, ինքն դատապարտեալը նե-
րուն չուզեր, վասն զի է խստասիրտ կա-
մակոր հաստատեալ յատելութեան ընդ-
դէմ Աստուծոյ։ Ուստի կ'ըսէ Իննովկենտիոս Գ. պապն, թէ դատապարտեալք չեն
խոնարհիր, վասն զի անզգամութիւնն ա-
տելութիւնն տիրած է իրենց վրայ. և
սուրբն Հերոնիմոս ալ կ'ըսէ, թէ անյագ են
ի ցանկութիւն մեղանչելոյ։ Ասկից է որ
դատապարտելոյն վէրքն է անբժշկելի.
վասն զի տեղիք չի տար բժշկելու։ Վէրք
իմ ոաստիկք ուստի՞ բժշկեցայք[2]։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ուրեմն, փրկիչ իմ, թէ որ ես դժոխքն
ըլլայի ըստ արժանեացս, յամառեալ պըն-
դաղլուխ պիտի ըլլայի յատելութեան քե-
զի դէմ, Աստուած իմ, որ ինձ համար մե-
ռար։ Ահ, որպիսի դժոխք կ'ըլլար այն,
ատել զքեզ, որ զիս սիրեցիր, ով գեղեց-
կութիւն անչափ, ով բարութիւն անբաւ,
արժանի անհուն սիրոյ։ Ուրեմն թէ որ
հիմայ դժոխքին մէջ ըլլայի, այնպէս թը-

1 Մաղաք. Ա. 4։
2 Երեմ. ԺԵ. 18։

չուառ վիճակի մէջ պիտի ըլլայի, որ նե-
րուն ալ պիտի չուզէի թողութեան, զոր
ինձ հիմայ կ'ուզես տալ։ Յիսուս փրկիչ
իմ, գոհանամ զքէն այս ամէն գթու-
թեանդ համար, զոր իմ վրաս բանեցու-
ցիր, ուստի թողութիւն ալ կ'ուզեմ, զքեզ
սիրել ալ կ'ուզեմ. դուն ինձ ներուն կ'ու-
զես տալ, ես ալ զայն կը խնդրեմ, և կը
յուսամ քու արդիւնքովդ։ Կը ցաւիմ ա-
մէն մեղացս վրայ որով զքեզ վշտացուցի,
ով անբաւ բարութիւնդ, թողութիւն ինձ
շնորհէ։ Կը սիրեմ զքեզ ամենայն հոգ-
ւովս, ահ տէր։ Ի՞նչ վնաս ինձ ըրած ու-
նիս, որ ես կարենամ զքեզ ատել որպէս
թշնամի յաւիտեան. և ինչ բարեկամ ու-
նեցեր եմ ես բնաւ, որ այնչափ բան ը-
րած ըլլայ ինձ, և այնչափ բան քաշած
ըլլայ ինձ համար, որչափ դուն ըրիր և
քաշեցիր, ով Յիսուս իմ։ Հապա մի թո-
զուր որ ես մէյմ'ալ քու կամքիդ դէմ ը-
նեմ, ու կորսընցնեմ քու սէրդ։ Տուր ինձ
մեռնիլ քան թէ մէյմ'ալ այն կործանման
մէջ ընկնալ։ Ո՛վ տիրամայր, քու հովանա-
ւորութեանդ ներքև զիս պահէ, և մի թող
տար որ մէյմ'ալ ես ապստամբ ըլլամ ընդ-
դէմ Աստուծոյ և ընդդէմ քեզի։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Մահն որ այս կենացս մէջ մեղաւորաց աչքին առջև շատ վախնալու բան է, դը-ժոխքին մէջ իրենց ամենէն փափաքելի բանն պիտի ըլլայ. խնդրեսցեն զմահ, և մի գտցեն. ցանկան մեռանիլ, և փախիցէ ի նոցանէ մահ[1]: Ուստի այսպէս կը գրէ սուրբն Հերոնիմոս. ով մահ, որչափ անուշ կ'ըլլաս անոնց՝ որոնց այնչափ դառն երևցար: Դաւթի ըսածին պէս, մահ հովուեսցէ զնոսա[2]. զոր այսպէս կը պարզաբանէ սուրբն Բեռնարդոս, թէ ոչխարն երբ կ'արածի, կանանչը կ'ուտէ, բայց արմատը կը թողու, այսպէս ալ մահը դատապարտեալներով կ'արածի, ամէն վայրկեան մահ կու տայ իրենց. բայց կենդանի կը թողու զիրենք՝ որպէս զի անդադար ըսպաննէ դժոխքին տանջանքով: Ուստի կ'ըսէ նաև սուրբն Գրիգոր, թէ այն սոսկալի բոցին մէջ մեղաւորն միշտ կը մեռնի, և կենդանի կը մնայ: Հոս որ մէկը ցաւագին մահուամբ մեռնելու ըլլայ, ամէնքը ցաւակից կ'ըլլան. դատապարտ-

1 Յայտ. Թ. 6:
2 Սղ. ԽԸ. 15:

ելոյն ցաւակից եղող մ'ալ չիկայ: Ցաւէն ամեն վայրկեան կը մեռնի, բայց չունի և պիտի չունենայ զոք որ իրեն ցաւակից ըլլայ: Զենոն կայսրը փոսի մը մէջ գոցուած կ'աղաղակէր, ողորմեցէք բացէք ինձ, բայց լսող չի գտնուեցաւ, և այնպէս յուսահատ մեռաւ. վերջէն տեսան որ իւր թևին միսը կրծեր կերեր է: Կիւրեղ Աղեքսանդրացին դատապարտելոց համար կ'ըսէ, թէ կը պոռան, խալբսող չիկայ, կու լան կ'ողբան, ցաւակից եղող չիկայ:

Եւ այս իրենց թշուառութիւնն որչափ ատեն պիտի դիմանայ. միշտ և յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից: Կը պատմուի ի հոգևոր կրթութիւնս Հօրն Սէնիերի կրտսերոյ, թէ Հռոմ հարցուցին դիւին դիւահարի մը, թէ որչափ պիտի կենայ դժոխքը. նա ալ կատաղութեամբ ձեռքը զարնելով աթոռի մը՝ ըսաւ, միշտ և միշտ: Այս բանէս այնչափ սարսափ ընկաւ լսողներուն վրայ, որ շատերն ընդհանրական խոստովանանք եղան. և վարքերնին փոխեցին՝ այս երկու բառին համար, թէ միշտ միշտ: Խեղճ ողորմելի Յուդա թշուառականը՝ հազար ութ հարիւր այսչափ տարի է որ դժոխքին մէջ է, և իւր դժոխքը միշտ նոր կը սկսի: Իսկ թշուառականն Կայէն վեց հազար տարիէն աւելի է որ այն կրակին մէջ է, և միշտ նոր

կը սկսի իւր դժոխքը։ Դիւի մ'ալ հարցուցին, թէ քանի՞ տարի է որ ինքն դժոխքն է. ըսաւ երեկուընէ ի վեր. ասոր ըսին, թէ ի՞նչպէս երեկուընէ կ'ըսես հինգ հազար տարիէն աւելի է քանի որ դու դատապարտուած ես. պատասխան տուաւ. թէ որ գիտնայիք ինչ ըսել է յաւիտենականութիւն, կ'իմանայիք որ անոր առջև հինգ հազար տարին մէկ վայրկեան ալ չի սեպուիր։ Դնենք թէ հրեշտակ մը գար ըսէր դատապարտուածի մը, թէ դու դժոխքէն պիտի ելնես, երբ անցնին այնչափ դարեր որչափ են անձրևին կաթիլներն, ծառերուն տերևներն և ծովուն աւազն, դատապարտելոյն մեծ ուրախութեան բան կ'ըլլար՝ քան թէ մուրացկանի մը ըսուէր, թէ դու թագաւոր պիտի ըլլաս։ Բայց սակայն թող անցնին այնչափ դարեր, և բազմապատկուին անհուն անգամ, դըժոխքն միշտ նոր կ'ըսուի։ Ամէն դատապարտեալն այս դաշինքը կը դնէր Աստուծոյ հետ ըսելով. Տէր, սատկացուր իմ տանջանքս որչափ կ'ուզես, երկնցուր որչափ կ'ուզես, միայն թէ ետքը ետքը լմընայ, ես գոհ եմ։ Բայց այն ըլլալու բան չէ, բնաւ լմննալիք չիկայ։ Աստուծոյ փողն այս արդարութեան ձայնը միշտ պիտի հնչեցնէ դժոխքին մէջ. միշտ և յաւիտեանս յաւիտենից և ևս։

Թող հարցընեն դիւաց դատապար-

տեալք, քանի՞ մէկ զմեզ հոս պիտի պահէք, քանի՞ գիշեր, ե՞րբ կը լմննայ այս վայրկեանն, այս աղաղակն, այս գարշութիւնն, այս կրակն և բոցն, այս տանջանքս. պատասխան կ'առնուն՝ ոչ երբէք, ոչ երբէք։ Ո՞րչափ ատեն պիտի դիմանան. միշտ և միշտ։ Ա՜խ, տէր, լոյս տուր այնչափ կուրերուն, որ երբ կը խրատուին դժոխք չերթալու համար, պատասխան զայս կուտան. թէ որ դժոխք երթամ, երթամ, համբերութիւն։ Ո՛վ տէր Աստուած, այսպիսիներըն համբերութիւն չունին՝ քիչ մը որ ցուրտ քաշեն, տաք խուցի մէջ որ կենան, ծեծ, մը որ ուտեն. հապա ի՞նչպէս պիտոր համբերեն կրակի ծովուն մէջ, ոտնակոխ եղած սատանաներէն, և Աստուծոյ երեսէն ընկած, և ամէն բանէ զրկուած յաւիտեանս յաւիտենից։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ հայր գթութեանց և Աստուած ողորմութեանց, Դաւթի ըսածին պէս՝ Ոչ թողցես զայնոսիկ որ խնդրեն զքեզ տէր[1]։ Ես ինչուան հիմայ քեզի երես դարձուցի, և դու զիս երեսէ չի ձգեցիր. կ'աղաչեմ

1 Սղ. Թ. 11։

զիս երեսէ մի՛ ձգեր հիմայ ալ՝ որ զքեզ կը խնդրեմ։ Կը զղջամ, ով ծայրագոյն բարի, որ քու շնորհքդ բանի տեղ չի սեպեցի, և ոչինչ բաներու հետ փոխեցի, նայէ ի վերս միածնիդ, և անոնց ձայնը լսելով՝ որ կը բարեխօսեն վասն իմ, ներէ և թող ինձ։ Եւ դու փրկիչ իմ, յիշէ միշտ զչարչարանս քո որ ինձ համար քաշեցիր, և զսէրդ որ իմ վրաս ցուցիր, հետն ալ իմ ապերախտութիւններս, որովք այնչափ անգամ դժոխքի արժանի եղայ, որպէս զի միշտ լամ իմ անզգամութիւնս՝ զոր քեզի դէմ ըրի, և ապրիմ միշտ վառուած ի սէր քո։ Ա՜խ, Յիսուս, ինչպէս չիվառուիմ քու սիրովդ, մոռնալով, թէ շատ տարիներէն առաջ, ես դժոխքը տոչորէի պիտի, և յաւիտեան ալ պիտի տոչորէի. և դու զիս խալըսելու համար մեռար, և անբաւ գթութեամբդ զիս խալըսեցիր. թէ որ դժոխքի մէջ ըլլայի հիմայ, զքեզ պիտի ատէի, այն ալ յաւիտեան. բայց հիմայ զքեզ կը սիրեմ, և կ'ուզեմ յաւիտեան սիրել, այսպէս յոյս ունիմ զօրութեամբ քո սուրբ արեանդ։ Դու որ զիս կը սիրես, ես ալ զքեզ կը սիրեմ. դու զիս միշտ կ'ուզես սիրել, թէ որ ես զքեզ չիթողուիմ։ Ա՜խ, տէր իմ, դու պահէ զիս, որ մէյմ'ալ զքեզ չիթողուիմ, անկէց ետև ինչ որ կ'ուզես ինձ ըրէ. ես արժանի եմ ամէն պա-

տուհասի, և սիրով ալ կ'ընդունիմ, միայն թէ զիս խալըսես այն պատուհասէն զուրկ մնալու ի քո սիրոյդ։ Ո՜վ Մարիամ ապաւէն իմ, քանի՛ անգամ ես զիս դժոխքի արժանի ըրի, և դու զիս խալըսեցիր, հիմայ ալ զիս մեղքէ խալըսէ, որ միայն կըրնայ զիս զրկել Աստուծոյ շնորհքէն և ի դըժոխս տանել։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԻԸ·

ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՅ ԽՂՃՄՏԱՆԱՅ ԽԱՅԹՈՅ

Անոնց որդն չի մեռնիր [1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ·

Այս որդն որ չի մեռնիր՝ կ'իմացուի, կ'ըսէ սուրբն Թովմաս, խղճմտանքի խայթոցը, որով յաւիտեան կը տանջուի մեղաւորն ի դժոխս։ Շատ կերպ պիտի ըլլան խղճմտանաց խայթոցքն որ պիտի կրծեն դատապարտելոց սիրտը, բայց այս երեք խայթոցն աւելի պիտի տանջէ զիրենք· մէյմը թէ ի՞նչ չնչին բանի համար դըժոխք ընկան, մէյմ՛ալ, թէ ի՞նչ թեթև էր զոր պիտի ընէին փրկուելու համար, և երրորդ թէ ի՞նչ մեծ բարիք կորուսին։ Ա-

1 Որդն նոցա ոչ մեռանի։ Մարկ· Թ· 27·

ռաջին խայթոցն ըսինք այն է՝ որ դատապարտեալն պիտի տեսնէ թէ ի՞նչ չնչին բանի համար կորսուած է· Եսաւ ոսպնաթանն ուտելէն ետև՝ որուն համար անդրանկութիւնը ծախեց, սուրբ գրքին պատմածին պէս, որուն ցաւէն կորսուած բանին վրայ կատղելով՝ ամուր ձայնով կը պոռար· Աղաղակեաց ի ձայն մեծ՝ դառնացեալ յոյժ [1], կ'ըսէ սուրբ գիրքն· Հապա որչափ պիտի պոռչայ պոռչրտայ դատապարտեալն՝ քանի որ մտածէ, թէ մէկ վայրկենական և թուն աւոր հաճոյքը կատարելով՝ կորսնցուց յաւիտենական թագաւորութիւնն ամենայն զուարճութիւններովը· և պիտի տեսնէ զինքն յաւիտեան դատապարտուած անմահ մահուան։ Ուստի շատ աւելի դառն լաց պիտի ունենայ քան զլալն Յովնաթանու, որ իւր հօրմէն մահուան դատապարտուելով կ'ըսէր· Ճաշակելով ճաշակեցի սակաւ մի մեղր, և ահա մեռանիցիմ ես [2]· Ախ, ինչ տանջանք կ'ըլլայ դատապարտելոյն այն ատեն տեսնելն իւր դատապարտութեան պատճառը։ Մեզի հիմայ մեր անցած կեանքն ի՞նչ կ'երևի, եթէ ոչ վայրկենի երազ մը· իսկ ի՞նչ պիտի երևին դժոխք եղողներուն՝ ի-

1 Յովն· ԻԷ· 34։
2 Ա· Թագ· ԺԴ· 43։

բենց յիսուն կամ վաթսուն տարին զոր ունեցեր են երկրիս վրայ, երբ ի խորս յաւիտենականութեան գտնուին, ուր ե-թէ հարիւրաւոր և հազարաւոր միլիոն տարիներ անցնին կը տեսնեն որ իրենց յաւիտենականութիւնը դեռ նոր կը սկսի։ Բայց ի՞նչ կ'ըսեմ յիսուն տարի կենաց, միթէ յիսուն տարուան մէջ մէկուն հաճոյքը կրնայ կատարուիլ. միթէ մեզաւորն առանց Աստուծոյ ապրելով՝ միշտ կը վայելէր իւր մեղաց մէջ. մէկ քանի վայրկեան կը դիմանայ մեղքն, մնացած բոլոր ատենն յորում Աստուծոյ թշնամի կ'ապրի մէկը, պատիժ է ամենեին և ամօթ։ Արդ ի՞նչ կ'երևին դատապարտելոյն առջև այն իւր մարմնոյ հաճոյից վայրկեաններն. մանաւանդ այն վերջին մեղքը որով դատապարտուեր է, ուստի պիտի ըսէ. ուրեմն մէկ ողորմելի և անբանական հաճոյից համար, որ վայրկեան մը հագիւ տևեց, և իսկոյն անցաւ գնաց հովի պէս, ես պիտի կենամ այս կրակին մէջ տոչորած, յուսահատ, և ամէն բանէ զուրկ միշտ և յաւիտեան, քանի որ Աստուած Աստուած է.

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Լոյս տուր ինձ, տէր, որ ճանչնամ իմ անզգամութիւնս որով վշտացուցի զքեզ, և յաւիտենից պատուհասին արժանի եղայ։ Աստուած իմ, մեծ ցաւ է ինձ զքեզ վշտացնելս, բայց նոյն ցաւն զիս կը մխիթարէ. թէ որ դու զիս դժոխք ղրկած ըլլայիր ըստ իմ արժանեացս, այս խղճմտանքս կ'ըլլար ինձ դժոխք դժոխոց, տեսնելով որ ինչ չնչին բանի համար դատապարտուեր եմ. բայց հիմայ այս խղճմտանքը զիս կը մխիթարէ, վասն զի կը քաջալերէ զիս թողութեան յոյս ունենալ քեզմէ, որ խոստացար ներել զղջացողին։ Այո՛, տէր, ես ալ կը զղջամ զքեզ անարգելուս համար, սիրով կը քաշեմ այս քաղցր պատիժս. մանաւանդ թէ կ'աղաչեմ որ սաստկացնես, և պահես զայն վրաս մինչև ի մահ, որպէս զի լամ դառնապէս այն տհաճութիւններն զոր քեզի տուի։ Թող ինձ, փրկիչ իմ, որ ինձ գթալով անձիդ չի գթացիր, յանձն առնելով ցաւագին մահ քաշել զիս դժոխքէն խլելու համար։ Ո՜հ, կ'աղաչեմ, գթա ինձ և ողորմէ, ըրէ որ այն զքեզ վշտացնելուս խղճմտանքի խայթն անդադար ցաւի մէջ զիս թո-

զու, միանգամայն բորբոքէ զիս բոլոր սի-
րով առ քեզ. որ այսչափ զիս սիրեցիր, և
այնչափ երկայնամտութեամբ ինձ համբե-
ցեցիր, և հիմայ ալ պատժելու տեղ բա-
րիքով և շնորհքով կը լեցնես։ Գոհանամ
զքէն, փրկիչ իմ, և կը սիրեմ զքեզ ինձ-
մէ աւելի և ի բոլոր սրտէ։ Զես մերժեր
դու բնաւ զքեզ սիրողը. արդ ես զքեզ կը
սիրեմ, զիս ալ մի՛ մերժեր քու երեսէդ,
պահէ զիս միշտ և հանապազ քու շնորհացդ
մէջ. և մի թողուր որ ես զքեզ մէյմ՚ալ
կորսընցնեմ։ Մարիամ սուրբ Աստուա-
ծածին, ընդունէ զիս քեզի ծառայ, և
կապէ զիս սիրով քու միածնիդ հետ. ա-
ղաչէ որ ինձ ներէ, և տայ ինձ իւր սէ-
րըն և յարատևութեան շնորհքն ինչուան
ի մահ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Սուրբն Թովմաս կ՚ըսէ. Թէ այս պիտի
ըլլայ գլխաւոր տանջանք դատապարտե-
լոց, տեսնել թէ չնչին բանի մը համար
կորսուեցան, երբ այնչափ դիւրաւ կըր-
նային արքայութեան յաւիտենից փառքը
ձեռք բերել, թէ որ ուզենային։ Ուստի
խղճմտանքին երկրորդ խայթոցն այս կ՚ըլ-
լայ՝ այսինքն, մտածել որ քիչ բան ունէին

ընելիք փրկուելու համար։ Սրբոյն Ում-
բերդոսի դատապարտեալ մը երևցաւ և ը-
սաւ, թէ այս էր իւր բուն ցաւն որ զինքը
կը տանջէր ի դժոխս, մտածելն թէ ինչ
պզտիկ բան է որուն համար դատապար-
տուեր է, և ինչ պզտիկ բանով մը կրնար
փրկութեան հասնիլ։ Պիտի ըսէ այն ա-
տեն թշուառական մեղաւորն, թէ որ զիս
մահացնէի չնայել այն մեղանչական ա-
ռարկային վրայ, թէ որ յաղթէի մարդ-
կային նկատմանց, թէ որ փախչէի այս
այն առիթներէն, ընկերութենէն, կեն-
ցաղավարութենէն, ես չէի դատապար-
տուեր։ Թէ որ շաբաթն անգամ մը խոս-
տովանանք ըլլայի, թէ որ հոգևոր խրատ-
ներու սիրով երթայի, թէ որ ամէն օր հո-
գևոր դրքոյկ մը կարդայի, թէ որ զիս Աս-
տուծոյ յանձնէի և Մարիամու, ես չէի
նորէն ընկնար։ Շատ անգամ առաջադրե-
ցի զայդ ընել, բայց ի գործ չդրի. կամ
սկսայ ընել, ետքը թողուցի, ասոր համար
կորսուեցայ։

Այս խղճի տանջանքն կը սաստկանայ
բարի օրինակներէն զորս տեսած էր աղէկ
բարեկամներէն և ընկերներէն, և աւելի
կը սաստկանայ փրկուելու համար Աս-
տուծոյ իրեն տուած պարգևներէն, թէ
բնական պարգև ըլլայ, ինչպէս կատա-
րեալ առողջութիւնը, թէ բախտի բարիք
ըլլայ, և թէ քանքար զոր Աստուած իրեն

տուեր էր ի բարին բանեցնելու և սուրբ ըլլալու, շնորհքներ, լուսաւորութիւններ, ազդեցութիւնք, կոչմունք, և այնչափ տարի ալ՝ ըրած Ղնասին ճարը տեսնելու, բայց կը տեսնէ որ այն թշուառ վիճակին մէջ ուր ընկած է, ալ ատեն չիկայ ճար ճարակ ընելու, վասն զի կը լսէ գրոց այն բանը՝ թէ Հրեշտակն զոր տեսի.. երդուաւ ի կենդանին յաւիտենից.. զի ոչ ևս կայ այլ ժամանակ[1]։ Ամ, որպիսի սուր սուսերներ պիտի ըլլան այս ամենայն առած շնորհքները թշուառական դատապարտելոյն սրտին մէջ, երբ կը տեսնէ որ լմնցեր դացեր է ատենը ճար մ'ընելու իւր յաւիտենական կործամանն, ուստի պիտի ըսէ իւր յուսահատ ընկերներուն հետ. Անցին հունձք, անց ամառն, և մեք ոչ փրկեցաք[2]։ Պիտի ըսէ, երանի թէ այն աշխատանքներն զոր ըրի զիս դատապարտելու, Աստուծոյ համար ըրած ըլլայի, ես մեծ սուրբ մը կ'ըլլայի։ Ա՜հ, հիմայ ի՞նչ մնաց քովս, եթէ ոչ խայթ խղճմտանաց, և տանջանք որ զիս պիտի չարչարեն յաւիտեան. իրաւ որայս մտածութիւնը պիտի տանջէ զդատապարտեալն կրակէն, և ամէն դժոխքի տանջանքներէն աւելի. ըսելով ինքն իրեն, ես կրնայի յաւիտեան երանելի ըլլալ. ու հիմայ յաւիտեան թշուառ պիտի ըլլամ։

1 Յայտ. Ժ. 5. 6։
2 Երեմ. Ը. 20։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՜հ, Յիսուս, հապա ի՞նչպէս կրցար այդչափ ինձ համբերել, քանի անգամ քեզի երես դարձուցի և դու չի դադրեցար քովս գալէն, ես այնչափ զքեզ բարկացուցի և դու ինձ այնչափ ներեցիր. նորէն դարձայ զքեզ վշտացուցի և դու կրկին դարձար թողութիւն ինձ տալու։ Ուրեմն զիս մասնակից ըրէ այն ցաւոյն զոր քաշեցիր Գեթսեմանի պարտիզին մէջ իմ մեղքերուս համար, այնչափ որ արիւն քրտնիլ քեզ տուին։ Կը զղջամ, փրկիչ իմ սիրելի, այսպէս չարաչար փոխարէն ընելուս քու սիրոյդ։ Ո՜հ, նզոված կամք, կ'անիծեմ զքեզ, դու եղար ինձ պատճառ կորսընցընելու զշնորհս տեառն իմոյ։ Ով սիրեցեալդ իմ Յիսուս, հիմայ զքեզ կը սիրեմ ամէն բանէ վեր, կը հրաժարիմ յամենայն անարժան հաճոյից, և կ'առաջադրեմ բիւր անգամ մեռնիլ, քան թէ մէյմ՚ալ զքեզ վշտացնել։ Հապա այն քաղցր սրտիդ համար՝ որով զիս սիրեցիր խաչին վրայ, և ինձ համար տուիր աստուածային կեանքդ,

տուր ինձ լոյս և ուժ՝ դէմ դնելու փոր-
ձութեանց, և ապաւինելու ի քո օգնու-
թիւնդ՝ երբ փորձուելու ըլլամ։ Ո՛վ Մա-
րիամ կոյս, իմ յոյս, դու ամէն բանի
կարող ես Աստուծոյ քով, առ ինձ համար
սուրբ յարատևութիւն, այնպէս որ մէկ
մ՝ալ յիւր սուրբ սիրոյն չի բաժնուիմ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Երրորդ խայթոց խղճի դատապար-
տուած անձին պիտի ըլլայ տեսնելն, թէ
ինչ մեծ բարիք կորսընցուց։ Սուրբ Յով-
հան Ոսկերերանի ըսածին պէս, աւելի
կ՝ըլլայ տանջանքնին երկնքէն քան թէ
դժոխքէն. արքայութեան կորստեան վրայ
աւելի կը ցաւին քան թէ դժոխքին տան-
ջանաց վրայ։ Թշուառական թագուհին
Անգլիոյ Եղիսաբէթ կ՝ըսէր, թէ տուր
ինձ, Աստուած, քառասուն տարի թա-
գաւորութիւն, ալ արքայութիւն չեմ ու-
զեր քեզմէ։ Իրաւ որ անզգամն ունեցաւ
քառասուն տարի թագաւորութիւն, բայց
հիմայ քանի որ այս աշխարհէս ելաւ, ի՞նչ
կարծես, ի՞նչ կ՝ըսէ. անտարակոյս հիմայ
այն խելքին վրայ չէ. հիմայ ի՞նչ տանջանք
կը քաշէ յուսահատաբար քանի որ կը մը-
տածէ, թէ այն քառասուն տարուան թա-

գաւորութեան տեղ՝ զոր ախով վախով և
նեղութեամբ անցուց, յաւիտեան կոր-
սընցուց երկնից թագաւորութիւնը, որ է
արքայութիւն։

Բայց դատապարտելոյն աւելի տան-
ջանք տուողն է յաւիտեան տեսնելը՝ թէ
կորոյս զերկինս, և իւր ծայրագոյն բարին
զԱստուած. չէ թէ դժբաղդութեամբ մը
կամ ուրիշի չարութեամբ, հապա իւր բուն
յանցանքովն. կը տեսնէ որ ինքն արքա-
յութեան համար ստեղծուած էր, կը
տեսնէ որ Աստուած իւր ձեռքը թողեր էր
ընտրել և հոգալ կամ կեանք, կամ մահ
յաւիտեանս յաւիտենից։ Ինչպէս որ կ՝ը-
սէ Սիրաք, Առաջի մարդոյ կեանք և
մահ, և զինչ հաճոյ թուեսցի իւր, տացի
նմա [1]։ Ուստի կը տեսնէ որ իւր ձեռքն
էր, թէ որ ուզենար փրկուիլ և երջանիկ
ըլլալ յաւիտեան. իսկ ինքն ուզեց դլորիլ
այն տանջանաց խորխորատը, ուսկից մէկ
մ՝ալ ելնելիք չունի, և ուրիշ մ՝ալ զինքը
հանելու հոգ ունեցող չիկայ։ Կը տեսնէ
փրկուած իւր այնչափ ընկերները, որ
Նոյնպիսի կամ աւելի վտանգ ունէին մե-
ղանչելու, բայց խելք բանեցուցին զգոյշ
կենալ, իրենք զիրենք Աստուծոյ յանձնե-
լով, բայց թէ որ ընկան ալ, գիտցան շու-
տով կանգնիլ, Աստուծոյ տալ զիրենք, և

1 Սիր. ԺԵ. 18։

այնպէս փրկուեցան. բայց ինքը չուզենալով զայդ ճամբան բռնել՝ թշուառաբար դըժոխք ընկաւ. որ է ծով տանջանաց, առանց յուսոյ մէյմ՚ալ ճար գտնելու։

Ո՛վ եղբայր, թէ որ ինչուան հիմայ դուալ այնպէս խենթութիւն ըրիր, ուզենալով զարքայութիւնը և զԱստուած կորսընցընել անպիտան հաճոյքի մը համար, նայէ որ ճար ընես հիմայ քանի որ ատենն է, և շուտով ընես, խենթութեանդ մէջ մի՛ մնար։ Սոսկա դողա, չըլլայ թէ երթաս յաւիտեան այն խենթութիւնդ լաս։ Ո՛վ գիտէ գուցէ այս մտածութիւնս զոր կը կարդաս, վերջին կոչումն ըլլայ զոր քեզի կ՚ընէ Աստուած։ Ո՛ գիտէ եթէ հիմայ վարքդ չի փոխես, ուրիշ մահուչափ մեղաց մէջ ընկնաս. և Աստուած ալ զքեզ երեսէ ձգէ, և ետքն այսպէս զքեզ ղրկէ յաւիտեան տանջուիլ այն խենթերուն հետ՝ որ հիմայ դժոխքն են և կը խոստովանին իրենց չարաչար սխալմունքը, ուրեմն մոլորեցաք, ըսելով. որ է յուսահատ խոստովանութիւն. տեսնելով որ ալ ճար ճարակ չիկայ։ Երբ սատանան զքեզ փորձէ, դըժոխքը միտքդ բեր, առ Աստուած դիմէ և առ Սուրբ Աստուածածինն, դժոխքին մտածութիւնը զքեզ դժոխքէն կը խլըսէ։ Ցիշեա զվախճան քո, և յաւիտեան ոչ մեղիցես [1], կ՚ըսէ Սիրաք. վասն զի դը-

1 Սիր. Է. 40։

ժոխքը մտածելն՝ քեզի կու տայ դիմել առ Աստուած։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ ծայրագոյն բարի, քանի անգամ ես զքեզ կորուսի չնչին բանի մը համար, և արժանի եղայ յաւիտեան զքեզ կորսընցընելու։ Բայց զիս կը մխիթարէ մարգարէին այս խօսքը. Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ, զոր խնդրեն զտէր [1]։ Ուստի պէտք չէ որ յուսակտուր ըլլամ զքեզ նորէն գտնելու, Աստուած իմ, թէ որ սըրտանց կը խնդրեմ։ Այո՛, տէր, հիմայ կը փափաքիմ կը հառաչեմ քու շնորհացդ՝ քան ուրիշ այլ ամենայն բարեաց. գոհ եմ ամէն բանէ հրաժարիլ, կեանքէս ալ, քան թէ ի քո սիրոյդ։ Զքեզ կը սիրեմ, Յիսուս իմ, ի վեր քան զամենայն, և զքեզ սիրելուս համար կը ցաւիմ զքեզ վշտացնելուս վրայ։ Աստուած իմ, զոր անարգեցի և կորուսի, շուտով ներէ ինձ, և տուր որ շուտով զքեզ գտնեմ, վասն զի չեմ ուզեր զքեզ մէյմ՚ալ կորսընցնել. թէ որ զիս նորէն ընդունիս ի քո բարեկամութիւնդ, կ՚ուզեմ ամէն բան թողուլ, և բոլորովին

1 Սղ. ՃԴ. 3

զիս տալ ի սիրել զքեզ, և զայս կը յուսամ ի քո գթութենէդ։ Հայր երկնաւոր, լսէ ինձ վասն սիրոյ միածնի քո, ներէ ինձ և չնորհք տուր, որ մէյմ՚ալ քեզմէ չի զատուիմ. թէ որ նորէն կամաւորապէս զքեզ կորսընցնեմ. պէտք է որ վախնամ թէ զիս երեսէ կը ձգես։ Ո՛վ Մարիամ, հաշտարար մեղաւորաց, տուր ինձ Աստուծոյ հետ հաշտուիլ, և անկից ետև քու հովանաւորութեանդ ներքև զիս պահէ, որպէս զի մէյմ՚ալ զինքը չկորսընցնեմ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԻԹ.

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ

Զեր տրտմութիւնն ուրախութեան պիտի փոխուի[1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Զանազան հիմայ համբերութեամբ տանել այս կենացս վշտաց, Աստուծոյ նուիրելով փոխանակ Յիսուսի չարչարանացն զոր մեր սիրոյն համար քաշեց, և քաջալերենք զմեզ արքայութեան յուսով։ Կը լմնան օր մը այս ամէն նեղութիւններն, ցաւերն, հալածանքներն, վախն, և երբ փրկութեան հասնինք այն բաներն մեզի կ՚ըլլան ուրախութիւն և հաճութիւն երա-

1 Տրտմութիւն ձեր ուրախութիւն եղիցի։ Յովհ. ԺԶ. 20։

նելեաց արքայութեան մէջ։ Այսպէս մեզի սիրտ կու տայ տէրն, թէ Տրտմութիւն ձեր ուրախութիւն եղիցի։ Հիմայ ուրեմն քանի մը բան մտածենք արքայութեան վրայ։ Բայց ի՞նչ կրնանք խօսիլ արքայութեան վրայ, ուր մեծամեծ սուրբերն ալ չիկրցան մեզի հասկցնել այն ուրախութիւնները, զոր պահեր է Աստուած իւր հաւատարիմ ծառայից։ Դաւիթ այսչափ միայն ըսել կրցաւ թէ Որպէս սիրելի են յարկք քո՝ տէր զօրութեանց[1]։ Բայց դու միայն, ով Պօղոս, դու որ արժանի եղար երկնից դրախտն յափշտակուիլ, ըսէ շատէ քիչէ, ինչ որ տեսար և լսեցիր։ Այն չի կրնար ըլլալ կ'ըսէ առաքեալն, վասն զի Լուայ կ'ըսէ բանս անճառս, զոր ոչ է պարտ մարդոյ խօսել[2]։ Այնպիսի մեծամեծ բաներ են որ վայելել կ'ըլլայ, պատմել չըլլար։ Այսչափ ըսեմ ձեզի՝ կ'ըսէ նոյն առաքեալն, Զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց[3]։

Մենք չենք կրնար հասկընալ արքայութեան բարիքը, վասն զի մենք երկրիս բարիքէն վեր բան մը չենք կրնար ըմբռնել։

1 Սղ. Զգ. 2։
2 Բ. Կոր. ԺԲ. 4։
3 Ա. Կոր. Բ. 9։

Թէ որ ձիերը խօսք հասկընային, և լսէին թէ իրենց տէրն աղէկ սեղան մը կը պատրաստէ, ուրիշ բան չէին իմանար, բայց եթէ աղէկ յարդ և աղէկ գարի, վասն զի ուրիշ աղէկ բանի գաղափար չունին ասոնցմէ զատ։ Այսպէս կը մտածենք մենք ալ արքայութեան աղէկ բաներուն վրայ. աղուոր բան է ամառուան գիշերներն տեսնել աստղալից երկինքը, զուարճալի բան է գարնան ատեն ծովուն քով գըտնուիլ որ հանդարտ է, և մէջը կը տեսնուի կանաչազգեաց ժայռեր և կայտառացող ձկներ, շատ ախորժելու բան է պարտիզի մը մէջ ըլլալ՝ որ լեցուն ըլլայ պտուղներով ծաղիկներով, ջրեր և շատրուաններն ալ շրա դին վազեն, թռչունները թռչըտին, և անուշ երգեն այնպէս որ տեսնողն ըսեր թէ արքայութիւն է հոս տեղս։ Այսպէս կ'ըլլայ արքայութիւնն. արքայութիւնն ուրիշ բան է. կ'ուզես քիչ մը հասկընալ, թէ ինչ է արքայութիւն, միտքդ բեր թէ հոն է Աստուած ամենակալ, որ կեցեր է զուարճացնելու զիւր սիրելի հոգիքը։ Սուրբն Բեռնարդոս կ'ըսէ. թէ կ'ուզես հասկընալ թէ ինչ է արքայութիւնն, այն է ուր բնաւ չուզած բանդ չիկայ, ուր ամէն ուզած բանդ կայ։

Ի՞նչ կարծես, ի՞նչ պիտի ըսէ երանեալ հոգի մը՝ արքայութիւն մտածին պէս, Դնենք թէ կտրիճ մը կամ կոյս մը որ նը-

ւիրուած է ի սէր փրկչին՝ իւր մահը հաստատեցին պէս թողու այս երկիրս. հոգին երբոր կ'ելնէ դատաստան կը ներկայանայ, դատաւորը կ'ողջագուրէ զինքն ու կ'ըսէ, մի վախեր, ուրախ կեցիր, դու փրկուած ես. պահապան հրեշտակն ընդառաջ կ'ելնէ ուրախութեամբ, ինքն ալ շնորհակալ կ'ըլլայ անոր գալուն, հրեշտակներն ալ իրեն կ'ըսեն, ելիր, վեր ելիր, գեղեցիկ հոգի, արդէն փրկուած ես դու, եկու տես քու տիրոջդ երեսը. հոգին ալ արդէն ամպերէն վեր անցեր է, երկնից կամարներէն վեր ելեր է, աստղերէն յերկինս կը մտնէ։ Ա՜խ, տէր Աստուած, ինչ պիտի ըսէ ոտքը դրածին պէս առաջին անգամ՝ այն երջանիկ հայրենիքը, և առաջին տեսնելուն պէս աչքով զայն քաղաքն փափկութեանց։ Հրեշտակներն ալ սուրբերն ալ դիմացը կ'ելնեն, և ուրախութեամբ բարի եկար կ'ըսեն. ինչ ուրախութիւն կ'ըլլայ այն տեղը, երբ դիմացը կ'ելնեն իւր ծնողքը, ազգականքը, բարեկամքը՝ որ առաջուց արքայութիւն հասեր են, և իւր պաշտպան սուրբերն ալ։ Այն ատեն կ'ուզէ հոգին զանոնք մեծարել երկրպագութեամբ, իսկ սուրբերն իրեն կ'ըսեն, Անսա մի անկանիր առաջի իմ, քանզի և ես ծառայակից քո եմ. անկէց կը տանին զինքն սուրբ Աստուածածնայ ոտքը պագնելու որ է դչխոյ արքայութեան. ի՞նչ սրտի ուրախութիւն կ'իմանայ հոգին՝ առաջին անգամն որ կը տեսնէ զԱստուածամայրն, որ այնչափ օգնական եղեր է իւր փրկութեան, վասն զի այն ատեն կը հասկընայ հոգին բոլոր շնորհքները՝ զոր Մարիամու ձեռքով առեր է. նա ալ զինքը ամենայն սիրով կը գրկէ, անկից ինքը թագուհին կը տանի զհոգին առ Յիսուս, որ իրեն իբրև իւր հարսին կ'ըսէ, Եկ ի Լիբանանէ քոյր իմ հարսն, եկ զի պսակեսցիս[1]։ Ուրախ կեցիր իմ հարսս, անցան գացին արցունք, նեղութիւն, և վախ, առ յաւիտենից պսակը, զոր ես քեզի համար ստացայ իմ արիւնովս։ Ապա ինքն Յիսուս կ'առնու կը տանի զհոգին որ ընդունի Հօր Աստուծոյ օրհնութիւնը, որ ողջագուրելով կ'օրհնէ զնա, ըսելով Մուտ յուրախութիւն Տեառն քո[2]. և կ'ընէ զայն երանելի երանութեամբ զոր ինքը կը վայելէ։

1 Երգ. Դ. 8։
2 Մա. Իե. 21։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ահա, Աստուած իմ, ոտքդ ընկած է ապերախտ մեղաւոր մը, զոր դու ստեղծեր ես արքայութեան համար. բայց ինքն այնչափ անգամ փուճ հաճոյքի մը համար ետ կեցեր է անկից՝ գոհ ըլլալով դժոխքը դատապարտուիլ։ Այլ ես կը յուսամ որ ներ ես իրեն բոլոր քեզի դէմ ըրած անզգամութիւններուս, որոնց վրայ միշտ նորէն կը զղջամ. և զքեզ կ'ուզեմ մինչև ի մահ, և կը փափաքիմ որ նորէն ինձ դառնաս ներես։ Ո՛վ տէր Աստուած իմ, թէպէտ և դու թողութիւն տուած ես, բայց այս ալ միշտ ստոյգ է. թէ ես յանդգնեցայ զքեզ վշտացնել, իմ փրկիչս, որ կեանքդ դրիր զիս արքայութիւն տանելու համար։ Օրհնեալ եղիցի յաւիտեան քու ողորմութիւնդ, Յիսուս իմ, որ այնչափ երկայնմտութեամբ ինձ համբերեցիր, և պատժելու տեղն աւելցուցիր իմ վրաս շնորհքներ լուսաւորութիւններ, և միշտ առ քեզ կանչեցիր զիս։ Կը տեսնեմ, սիրելիդ իմ փրկիչ, որ իսկապէս զիս փըրկել կ'ուզես, որ յաւիտեան զքեզ սիրեմ յերկինս, բայց կ'ուզես որ առաջ երկրիս

վրայ զքեզ սիրեմ, ես ալ այնպէս կ'ուզեմ, այնպէս որ արքայութիւնն ալ չըլլամ, ես զքեզ կ'ուզեմ սիրել, քանի որ ապրիմ, բոլոր հոգւովս և ամենայն կարողութեամբս։ Հերիք է ինձ գիտնալ, Աստուած իմ, որ դու կը ցանկաս ինձմէ սիրուիլ։ Յիսուս իմ, օգնէ ինձ քու շնորհքդ, զիս երեսէ մի ձգեր. իմ հոգիս յաւիտենական է, ուրեմն այնպիսի վիճակի մէջ եմ, որ յաւիտեան զքեզ կամ պիտի սիրեմ և կամ պիտի ատեմ։ Ես զքեզ յաւիտեան սիրել կ'ուզեմ, և կ'ուզեմ շատ սիրել զքեզ այս կեանքիս մէջ, որ անդին ալ շատ սիրեմ։ Իմ վրաս ինչ կ'ուզես կարգաւորէ, միայն ի քո սիրոյդ զիս մի՛ զրկեր, անկից ետև ինչ կ'ուզես ինձ ըրէ, Յիսուս իմ, քու արդիւնքդ է իմ յոյսս։ Ո՛վ Մարիամ, ի քո բարեխօսութիւնդ եմ ապաւինեալ բոլորովին. դու զիս դժոխքէն խալըսեցիր, երբ մեղաց մէջ էի, հիմայ որ զԱստուած կ'ուզեմ, քեզի կը մնայ զիս սուրբ ընել ու փրկութեան հասցընել։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Հոգին Աստուծոյ երանութեան մէջ մտնելէն ետև՝ բնաւ չուզած բանը պիտի չըլլայ. Ջնջեսցէ Աստուած զամենայն ար-

տօսր յաչաց նոցա, և մահ ոչ ևս գոյ. զի առաջինն էանց, և ասաց ցիս՝ որ նստէր ի վերայ աթոռոյն, ահաւասիկ առնեմ զամենայն նոր[1]։ Արքայութեան մէջ չկան ալ հիւանդութիւնք, և ոչ նեղութիւն մը. չկան հոն մէյմ՚ալ օրերու փոփոխութիւնք, գիշեր ցորեկ, ցուրտ կամ տաք, հոն շարունակ ցորեկ է, շարունակ գարուն մը միշտ զուարճալի. չկան հոն հալածանք կամ նախանձ, արքայութեան մէջ մէկզմէկ սրտանց կը սիրեն, և ամէն մէկը զուրիչին բարիքն ալ կը վայելէ իրենին պէս. ալ վախ մը չկայ հոն, վասն զի հոգին ի շնորհս հաստատեալ, մէյմ՚ալ չի կրնար մեղանչել, և իւր Աստուածը կորսընցնել. Ահաւասիկ առնեմ զամենայն նոր. ամէն բան նոր է, մխիթարանք տըւող և կշտացնող, ամէն իւր ուզած բանը կայ։ Աչքը պիտի կշտանայ այն քաղաքին տեսքով, որ կատարեալ է ամենայն գեղեցկութեամբ. ինչ գեղեցիկ բան կ՚ըլլայ տեսնել քաղաք մը, որոյ յատակը բիւրեղ ըլլայ, տներն արծաթէ՝ ոսկիէ ձեղունով, և բոլորը զարդարած ծաղիկներով։ Ո՛վ, որչափ գեղեցիկ բան պիտի ըլլայ արքայութեան քաղաքն։ Հապա ինչ բան կ՚ըլլայ տեսնելն զգառն Աստուծոյ և զփեսայն Քրիստոս։ Սրբուհին Թերեզա անգամ

1 Յայտ. ԻԱ. 4. 5։

մը տեսնելով Յիսուսին մէկ ձեռքն՝ ապրեցաւ մնաց գեղեցկութենէն։ Հոտոտելիքն ալ պիտի լեցուի երկնից անուշահոտութեամբ, և լսելիքն՝ երկնային երաժշտութեամբ։ Սուրբ Փրանկիսկոս մէկ անգամ լսելով հրեշտակէ մը քնարի բախում մը, անուշութենէն մօտ էր մեռնելու։ Հապա ինչ պիտի ըլլայ լսելն երբ բոլոր սուրբերն և բովանդակ հրեշտակներն երգեն դասառ դաս Աստուծոյ օրհնաբանութիւնը. Յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն ըզքեզ[1]։ Ի՞նչ պիտի ըլլայ լսել՝ որ սուրբ Աստուածածինն ալ երբ կ՚օրհնէ զԱստուած. Մարիամու ձայնն երկինքը, կ՚ըսէ Սուրբն Փրանկիսկոս Սալեզեան. պիտի ըլլայ իբրև սոխակ յանտառի, որ ամէն թռչուններուն ձայնին կը յաղթէ իրեն քաղցրութեամբն։ Մէկ խօսքով, հոն են ամենայն զուարճութիւնք որ կրնայ մտածուիլ։

Բայց այս ամենայն զուարճութիւններն որ ինչուան հիմայ ըսինք՝ բարիք մը կրնան սեպուիլ արքայութեան մէջ. արքայութեան բուն բարին կացուցանողն է ծայրագոյն բարին Աստուած։ Սրբոյն Օգոստինոսի ըսածին պէս, բովանդակ բարին որուն մէկն ունիմք, այս մէկ բառս է երկու վանկով՝ Աստուած։ Տեառն մերոյ

1 Սղ. ՁԳ. 5։

մեզի խոստացած վարձքը՝ չէ սոսկ այն երանաւէտ քաղաքին գեղեցկութիւնն, երաժշտութիւնքն և այլ ամենայն ուրախութիւններն, գլխաւոր վարձքն է ինքն Աստուած, այսինքն զինքը տեսնել դէմ յանդիման և սիրել. Այս եղեց վարձք քո մեծ յոյժ։ Սուրբ Օգոստինոս կ'ըսէ. թէ որ Աստուած իւր երեսը ցուցընէր դատապարտելոց, իսկոյն դժոխքը կ'ըլլար դրախտ զուարճալի. և վրայ կը բերէ, թէ որ այս կեանքէս եւած հոգւոյ մը ձեռքն ըլլար ընտրել կամ զԱստուած տեսնել ու մնալ դժոխքի տանջանաց մէջ, կամ առանց տեսնելու զԱստուած ազատ ըլլալ դժոխքէն, աւելի կ'ընտրէր տեսնել զԱստուած և դժոխքի մէջ ըլլալ։

Ո՛րչափ մեծ ուրախութիւն է զԱստուած տեսնել և սիրել դէմ յանդիման, մենք այս կեանքիս մէջ չենք կրնար հասկընալ. բայց ձեռնարկութեամբ քիչ մը բան կրնանք ըմբռնել, թէ նախ և առաջ Աստուծոյ սէրն այնչափ քաղցր է, որ ինչպէս այս կեանքիս մէջ ալ եղաւ. մինչև գետնէն վեր բարձրացուց սուրբերուն չէ թէ միայն հոգին, հապա մարմինն ալ։ Սուրբ Փիլիպպոս Ներեան անգամ մը յափշտակեցաւ մարմնով յօդս. նաև սուրբն Պետրոս Ալգանթարացին երկրէս վեր ելաւ՝ մարմնաւոր հրեշտակի մը պէս։ Զայն ալ գիտենք՝ որ սուրբ մարտիրոսներն

Աստուծոյ սիրոյն քաղցրութեամբն ուրախ կ'ըլլային դառն տանջանաց մէջ։ Սուրբն Վինկենտիոս՝ Սուրբ Օգոստինոսի ըսածին պէս, շարշարուելու ատեն այնպէս կը խօսէր որ կարծես թէ ուրիշ մ'է շարշարուողն, և ուրիշ մը խօսողն։ Սուրբն Լաւրենտիոս կրակի կակարային վրայ կեցած՝ ձայն կու տար բռնաւորին, թէ մեկալ կողմն դարձուր. վասն զի, կ'ըսէ Սուրբն Օգոստինոս, այն ատեն Լաւրենտիոս Աստուծոյ սիրոյն կրակովն ճառուած, իւր այրին չէր զգար։ Բաց ասկէց՝ ի՞նչ քաղցրութիւն կ'իմանայ մեղաւոր մը երկրիս վրայ՝ իւր մեղքերը լալու ատեն ալ. ուստի կ'ըսէ Սուրբն Բեռնարդոս, թէ որ այդչափ քաղցր է՝ ով տէր, քեզի համար լալը, ի՞նչ պիտի ըլլայ քեզի համար ուրախանալն։ Ի՞նչ քաղցրութիւն ալ չիմանար այն հոգին, որուն աղօթքի մէջ Աստուած կը ցուցնէ իւր աստուածային բարութեան մէկ ճառագայթը, և իւր ողորմութիւնն զոր անոր ըրեր է, և այն սէրն զոր Քրիստոս անոր ցուցեր է։ Այն ատեն մարդուս սիրտը կը ճմլի. և մարմնոյն ալ կու գայ ի սիրոյ. և սակայն մենք երկրիս վրայ չենք տեսներ զԱստուած ինչպէս որ է. Զի այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դ. մ

յանդիմանն[1]. հիմակուց հիմայ առագաստ մը ունի՝ աչքերնուս վրայ, և Աստուած կայ հաւատոց վարագուրին ներքև, և չի տեսնուիր մեզի։ Ի՞նչ կ՚ըսես, ի՞նչ կ՚ըլլայ երբ այն առագաստը մեր աչքէն վերնայ, վարագոյրն ալ վերցուի, և զԱստուած երես առ երես տեսնենք։ Այն ատեն կը տեսնենք, թէ որչափ գեղեցիկ է Աստուած, որչափ արդար, որչափ կատարեալ, որչափ սիրելի և որչափ սիրալից։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ իմ ծայրագոյն բարիս, ես եմ այն թշուառականը, որ քեզի դէմ կռնակ դարձուցի, և ետ կեցայ ի քո սիրոյդ. ուստի արժանի չէի զքեզ տեսնելու, և ոչ զքեզ սիրելու։ Բայց դու ինձ խնայելով քեզի չի խնայեցիր, զքեզ ի մահ մատնելով անարգական խաչին վրայ. ուստի քու մահդ ինձ յոյս կու տայ՝ որ օր մը դամ տեսնեմ և վայելեմ քու տեսութիւնդ, և այն ատեն սիրեմ զքեզ յամենայն զօրութենէ։ Բայց հիմայ որ վտանգի մէջ եմ զքեզ կորսընցնելու յաւիտեան, ինչպէս

1 Ա. Կոր. ԺԳ. 12։

որ արդէն կորուսի իմ մեղքերովս, ի՞նչ ունիմ ընելու մնացած կեանքիս մէջ, նորէն զքեզ վշտացնեմ. քաւ լիցի, Յիսուս իմ. ես կը ցաւիմ և կը զղջամ կատարեալ ատելութեամբ իմ ըրած չարիքներուս ծայրագոյն կերպով. անհանոյ է ինձ վիշտն՝ զոր քեզի տուի, և կը սիրեմ զքեզ յամենայն սրտէ. միթէ կը վնտռես քեզմէ՝ զայն հոգին որ զղջացեր է, և զքեզ կը սիրէ։ Չէ՛ չէ. գիտեմ քու ըսածդ, փրկիչ իմ սիրելի. Որ գայ առ իս, ոչ հանից արտաքս[1]։ Յիսուս իմ, ես ամէն բան մէկդի կը ձգեմ, և առ քեզ կը դառնամ, քեզի կը փաթթուիմ սրտանց. դուն ալ գիս գրկէ, և սրտիդ հետ միացուր։ Այսպէս խօսիլ կը համարձակիմ, վասն զի իմ բանս իմ անհուն բարւոյս հետ է, այսինքն Աստուծոյ, որ իմ սիրոյս համար մահ յանձն առաւ։ Փրկիչ իմ սիրելի, տուր յարատեւութիւն ի սէր քո։ Սիրեցնալ մայր իմ Մարիամ, վասն քո սիրոյդ առ միածինդ՝ առ ինձ համար յարատեւութիւն, այսպէս կը յուսամ և այսպէս պիտի ըլլայ։

1 Յովհ. Զ. 37։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Այս երկրիս վրայ աստուածասէր անձանց մեծ վիշտն և նեղութիւնն այն է որ չըլլայ թէ չսիրեն զԱստուած, և չսիրուին Աստուծմէ։ Ոչ գիտէ մարդ, սիրոյ իցէ արժանի եթէ ատելութեան։ Իսկ արքայութեան մէջ ապահով է հոգին, թէ ինքը զԱստուած կը սիրէ, և սիրելի է Աստուծոյ. կը տեսնէ ինք զինքն որ բոլորովին ընկղմած է ի սէրն Աստուծոյ, և Աստուած զինքն ողջագուրեր է իբրև զաւակ սիրելի, և գիտէ որ յաւիտեան այդ սէրը չի քակուիր։ Այս երջանիկ բոցն աւելի կը բորբոքէ աղէկ ճանչնալ և աղէկ հասկընալ՝ թէ Աստուած իրեն ինչ բարիք է ըրեր, մարդանալով և մեռնելով մարդկանց համար։ Ի՜նչ մեծ սէր էր հաստատելն զխորհուրդ սուրբ հաղորդութեան. որով զինքը կերակուր կու տայ ընչին որդու մը. այն ատեն յստակ կը տեսնէ հոգին այն ամենայն ընորհքը՝ զոր Աստուած ըրեր է իրեն, խալըսելով յամենայն փորձութեանց և ի վտանգից կորստեան. այն ատեն կը տեսնէ, թէ այն նեղութիւնքը, հիւանդութիւնները, հալածանքները և վշտանեբը զոր ինքը դժբախտութիւն և պատիժ

Աստուծոյ կը սեպէր, բոլորը նշան սիրոյ են եղեր և Աստուծոյ մէյմէկ նախախնամութիւն զինքը՝ արքայութիւն տանելու համար։ Աւելի կը տեսնէ, թէ Աստուած օրշափ երկայնմտութեամբ իրեն համբերեր է այնչափ մեղքերէն ետև, և օրշափ ողորմութիւն է ցուցեր իրեն՝ շատ լոյս տալով և յիւր սէրն հրաւիրելով։ Կը տեսնէ ալ դէպ ի վար այն երջանիկ լեռնէն, թէ օրշափ հոգիներ դատապարտուած են ի դժոխս քան զինքը պակաս մեղք ունեցող, և զինքը կը տեսնէ փրկուած և ժառանգ Աստուծոյ, և ապահով ալ է, որ մէյմ՛ալ այն բարիքը կորսընցնելիք չունի։

Ուստի երանեալն միշտ պիտի վայելէ այն երջանկութիւնը, որ յաւիտեան ամէն վայրկեան իրեն միշտ նոր պիտի երևի. որպէս թէ նոյն ատեն արքայութիւն մըտած ըլլար. միշտ կը փափաքի այն ուրախութեան, և միշտ կը վայելէ և միշտ վայելքը ձանձրութիւն չի տար։ Մէկ խօսքով, ինչպէս դատապարտելքն անօթ են բարկութեամբ լի, այսպէս ալ երանելքն անօթ են ուրախութեամբ լի, այնպէս որ բան մը բաղձալիք չունին։ Կ՚ըսէ Սրբուհին Թերեզա, թէ այս երկրիս վրայ ալ երբ Աստուած մէկը ի սենեակ զինուոյ՝ այսինքն՝ աստուածային սիրոյ կը մոցընէ, այնպէս հոգևոր և երջանիկ արբեցութիւն

կու տայ անոր, որ բնաւ երկրաւոր բանի մը յոժարութիւն չունենար, հապա երբ արքայութիւն մանէ. Դաւթի ըսածն է, Յակոբցին նոքա ի պարարտութենէ տան քո, և զուղխս փափկութեան քո տացես ըմպել նոցա։ Այն ատեն երբ հոգին յայտնապէս տեսնէ և գրկէ ծայրագոյն բարին, այնպէս արբեալ կ'ըլլայ սիրով, որ երջանկապէս կ'ընկղմի Յաստուած. և զինքը բոլորովին կը մոռնայ, և ուրիշ բանի խելքը չի տար, բայց միայն սիրել, օրհնել և գովել ժառանգած զանհուն բարին։

Ուրեմն երբ զմեզ հոս կը նեղեն այս տեղի խաչերն, զօրանանք համբերութեամբ, և սիրով քաշենք արքայութեան յուսով։ Սրբուհին Մարիամ Եգիպտացի երբ հարցուց զՀայրն Զոսիմոս՝ թէ ինչպէս կրցար համբերել և կենդանի մնալ այդ անապատին մէջ՝ ըսաւ թէ արքայութեան յուսով։ Երբ Սրբոյն Փիլիպպոսի Ներեան ծիրանաւորութեան պատիւ ուզեցին տալ, վեր նետեց այն գտակը ըսելով, թէ արքայութիւն, արքայութիւն։ Եղբայր Եգիտիոս Փրանկիսկեան երբ արքայութեան անունը կը լսէր, ուրախութենէն գետնէն վեր ոգը կը ցատքէր։ Նոյնպէս մենք ալ երբ զմեզ կը տեսնենք նեղեալ աշխարհիս թշուառութենէն՝ աչուընիս երկինք վերցընենք, և մենք զմեզ մխիթարենք հառաչելով և ըսելով, արքա-

յութիւն, արքայութիւն. մտածենք որ ելթէ Աստուծոյ հաւատարիմ ըլլանք, որ մը կը վերջանան այս վիշտերն, տառապանքներն և վախերն, և կը մնենք այնպէս անուէտ մեր հայրենիքը, ուր ամէն կերպով երջանիկ կ'ըլլանք, երբ Աստուած հետերնիս է։ Մեզի կը սպասեն Սուրբերն և Սուրբ Աստուածածինն, և Յիսուս ալ պըսակը ձեռքը կեցած է՝ որ զմեզ մէյմէկ թագաւոր ընէ ի յաւիտենից թագաւորութեան, որ է արքայութիւն։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Սէր իմ Յիսուս. դու ինձ սորվեցուցիր այսպէս աղօթել. Եկեսցէ արքայութիւն քո[1]. ուստի ես ալ զայն կ'աղաչեմ, որ քու արքայութիւնդ գայ իմ հոգիս, այնպէս որ դու միայն զիս ժառանգես, ես ալ զքեզ ժառանգեմ, իմ ծայրագոյն բարիս։ Ո՛վ փրկիչ իմ, դու բանի մը չխնայեցիր զիս փրկելու համար, և չահելու իմ սիրտս. ուրեմն փրկէ զիս, և իմ փրկութիւնս ըլլայ զքեզ սիրելու համար միշտ և հանապազ հոս և անդին։ Ես շատ անգամ քեզի երես դարձուցի, այսու ամենայնիւ

1 Ղուկ. ԺԱ. 2։

դու կ'իմացընես ինձ թէ չես ուզեր սրդոզիլ, այլ արժանի կը սեպես ողջագուրել զիս յաւիտեան յարքայութեան այնպիսի սիրով, որպէս թէ բնաւ զքեզ վշտացուցած չըլլայի. ես ալ զայս գիտնալով կըրնամ ուրիշ բան սիրել բաց ի քէն, տեսնելով ալ որ կ'ուզես արքայութիւնդ ինձ տալ՝ այսչափ անգամ դժոխքի արժանի ըլլալէս ետև։ Ա՛խ, տէր իմ, երանի թէ բնաւ զքեզ վշտացուցած չըլլայի. ա՛խ, թէ որ կարենայի նորէն ծնանիլ՝ կ'ուզէի միշտ զքեզ սիրել. բայց ինչ որ եղաւ եղաւ, հիմայ ուրիշ բան չեմ կրնար ընել, բայց եթէ քեզի նուիրել մնացած կեանքս։ Այո՛, իսկապէս կը նուիրեմ բոլորովին զիս ի սէր քո։ Ո՛վ երկրաւոր յօժարութիւնք, ելէք, գնացէք բովանդակ իմ սրտէս, և տեղի տուէք Աստուծոյն իմոյ, որ կ'ուզէ զիս բոլորովին ժառանգել։ Այո՛ այո՛, զիս բոլոր ժառանգէ, իմ փրկիչս, տէր իմ և Աստուած իմ, այս օրէս ետև չեմ ուզեր ուրիշ բան մտածել, բայց միայն քեզի հաճոյանալ. օգնէ ինձ, տէր, քու շնորհօքդ, ինչպէս որ կը յուսամ յարդիւնս քո. միշտ աճեցուր յիս զսէր քո, և զփափաքս քու կամքդ ընելու։ Արքայութիւն արքայութիւն, երբ պիտի ըլլայ, տէր, որ զքեզ երես առ երես տեսնեմ, և զգուեմ և պատուեմ զքեզ առանց վախի մէյմ'ալ ձեռ-

քէ հանելու։ Ա՛խ, տէր Աստուած իմ, ձեռքդ վրաս ըլլայ՝ որ մէյմ'ալ զքեզ չըվշտացնեմ։ Ո՛վ ամենասրբուհիդ Մարիամ, ե՞րբ պիտի ըլլայ որ քու ոտքիդ առջևն ընկած ըլլամ յարքայութեան. հասիր ինձ յօգնութիւն, մայր իմ, մի՛ թողուր որ ես զիս դատապարտեմ. և հեռի ըլլամ քեզմէ և յորդւոյ քումմէ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Լ.

Ա.ՂՕԹՔ

Խնդրեցէք որպէս զի ձեզի տրուի... վասն զիով որ խնդրէ պիտի առնուր[1].

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Զէ թէ այս բնաբանիս մէջ, հապա հազար տեղ հին և նոր կտակարանին մէջ կը խոստանայ Աստուած լսել աղաչողին. Կարդացեա առ իս և ես լուայց քեզ[1]. *Կարդացեա առ իս, և ես փրկեցից զքեզ*[2]. *Զոր ինչ խնդրիցէք յինէն, արարից զայն*[3]. *զոր միանգամ կամիցիք խնդրեցէք և եղիցի ձեզ*[4]. *ասոնց նման ուրիշ շատ տեղեր ալ։ Ուստի, կ'ըսէ Թէոդորետոս, թէ աղօթքն մի է, բայց ամէն բան կրնայ առնուլ։ Սուրբն Բեռնարդոս ալ կ'ըսէ, թէ ի խնդրելն մեր Աստուած կու տայ ամէն մեր խնդիրքը, կամ զայն որ աւելի մեզի օգտակար կը ճանչնայ։ Նայէ ինչ կ'ըսէ մարգարէն. Զի դու տէր քաղցր և ուղիղ ես, բազումողորմ որ կարդան առ քեզ*[2]։ *Յակովբոս առաքեալն ալ յորդոր կու տայ ըսելով. Եթէ ոք ի ձէնջ նուազեալ իցէ յիմաստութենէ, խնդրեսցէ յԱստուծոյ, որ տայ առատապէս և ոչ նախատէ*[3]. *որպէս թէ Աստուած մեր ըրած յանցանքը մոռցածի պէս ըլլար։*

Սուրբ Յովհաննէս Կլիմաքոս կ'ըսէր, թէ երկիւղածութեամբ աղօթքը կերպով մը կը բռնադատէ զԱստուած։ Տերտուղիանոս ալ կ'ըսէ, թէ այս բռնադատութիւնս հաճոյական է Աստուծոյ. պատճառն է, կ'ըսէ Սուրբն Օգոստինոս, վասն զի Աստուած ինքն իրմէ աւելի կ'ուզէ առատաձեռնել մեզի, քան որ մենք կը ցանկանք ձեռք բերել։ Անոր պատճառն ալ է Սրբոյն Լեւոնի ըսածին պէս, վասն զի Աստուծոյ բնութիւնն է բարութիւն, և կ'ու-

1 Խնդրեցէք և տացի ձեզ... զի ամենայն որ խնդրէ առնու. Ղուկ. ԺԱ. 9. 10։
2 Երեմ. ԼԳ. 3։
3 Սղ. Խթ. 15։
4 Յովհ. ԺԴ. 13։

1 Յովհ. ԺԵ. 7։
2 Սղ. Զե. 5։
3 Յակ. Ա. 5։

զէ հաղորդել ուրիշներուն իւր բարութիւնը։ Անոր համար, կ'ըսէր Սրբուհին Մարիամ Մագդաղենացի Տէփացեան, թէ Աստուած զինքը պարտական կը սեպէ ողորմել աղաչողին, վասն զի ասով ճամբայ կը բացուի՝ որ իւր բաղձանքը կատարուի ստանալու մեզ իւր շնորհքը։ Դաւիթ ալ կ'ըսէ, թէ Ցաւուր յորում կարդացից առ քեզ, ահա ծանեայ՝ զի Աստուած իմ ես դու[1], այսինքն բարի և բարերար։ Աղէկ կ'ըսէ Սուրբն Բեռնարդոս, թէ ոմանք յանիրաւի կը գանգատին, թէ Աստուած իրենց կը պակսի. ուր ընդ հակառակն Աստուած աւելի կը գանգատի, թէ չեն գար շնորհք խնդրելու իրմէ։ Յարմար կու գայ Քրիստոսի ըսածն ալ աշակերտաց. Մինչև ցայժմ ոչ ինչ խնդրեցիք յանուն իմ, խնդրեցէք և առնուցուք... զի ուրախութիւնն ձեր լցեալ եղիցի[2]։

Անոր համար հին միայնակեացք կ'ըսէին՝ թէ չիկայ ուրիշ աւելի օգտակար բան փրկուելու համար, ինչպէս անդադար աղօթել, ըսելով՝ Աստուած, յօգնել ինձ նայեաց, և տէր յընկերել ինձ փութաց[3]։ Հայրն Պօղոս Սէնեէրի իրեն համար կ'ըսէ, թէ մտածականիս ատեն նախ

1 Սղ. ԾԵ. 10։
2 Յովհ. ԺԶ. 24։
3 Սղ. ԿԹ. 2։

իզձեր կ'ընէի, բայց ետքը տեսնելով որ աղօթքի պէս զօրաւոր բան չիկայ, աղօթել կը սիրէի։ Ուրեմն մենք ալ միշտ այնպէս ընենք. Աստուած մ'ունինք՝ որ զմեզ չափէ դուրս կը սիրէ, և փոյթ ունի, մեր փրկութեան, ուստի միշտ պատրաստ կեցած է մեր աղաչանքը լսելու։ Ոսկերերանի ըսածին պէս, աշխարհիս թագաւորներն քիչ մարդու թոյլ կու տան իրենց հետ խօսելու, իսկ Աստուած ամէն ուզողին։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Աստուած յաւիտենական, քեզ երկիր պագանեմ, և գոհանամ վասն ամենայն երախտեաց քոց առ իս, զիս ստեղծելուդ համար և գնելուդ արեամբ միածնիդ, զիս քրիստոնեայ ընելուդ, ինձ այնչափ անգամ համբերելուդ մեղացս մէջ, և այնչափ անգամ ներելուդ։ Ախ, Աստուած իմ, ես չէի ընկնար բնաւ զքեզ վշտացնելու վտանգի մէջ, թէ որ փորձութեանցս ատեն առ քեզ դիմէի։ Շնորհակալ եմ որ հիմայ լոյս տուիր ինձ ճանչնալու որ իմ բոլոր փրկութիւնս ասով կ'ըլլայ որ աղօթք ընեմ, և քու շնորհքդ խնդրեմ։ Արդ կ'աղաչեմ անուամբ Յիսուսի Քրիստոսի փրրկ-

չին իմոյ, որ պարգևես ինձ մեծ ցաւ մը մեղացս վրայ, և սուրբ յարատևութիւն ի շնորհս քո, բարի մահ և արքայութիւն, ամէն բանէ վեր՝ քու սէրդ, և կատարեալ համակերպութիւն ընդ ամենասուրբ կամս քո։ Գիտեմ որ ես այս շնորհքիս արժանի չեմ, բայց դու խոստացար անոր՝ որ կը խնդրէ արդեամբք միածնիդ Յիսուսի Քրիստոսի. ես ալ անոր կը խնդրեմ և կը յուսամ. Սուրբ Աստուածածին, քու բարեխօսութիւնդ կ'ընդունի ինչ որ ուզես, բարեխօս եղիր ինձ համար։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Աղօթից հարկաւորութիւնն ալ յիշենք։ Սուրբ Յովհան Ոսկեբերան կ'ըսէ, թէ ինչպէս մարմինն առանց հոգւոյ մեռած է, այսպէս ալ հոգին մեռած է առանց աղօթից. դարձեալ կ'ըսէ, թէ ինչպէս ջուրն հարկաւոր է բուսոց և տնկոց որ չի չորնան, այսպէս ալ աղօթքն հարկաւոր է՝ որ մեղքի չընկնանք։ Գիտենք որ Աստուած կամի զամենայն մարդիկ զի կեցցեն[1], և չուզեր որ մէկը կորսուի. Երկայնամիտ լինի առ ձեզ, քանզի ոչ կամի եթէ ոք կո-

1 Ա. Տիմ. Բ. 4։

րիցէ, այլ զամենեցուն հասանել յապաշխարութիւն[1]։ Բայց կ'ուզէ որ մենք ալ խնդրենք զշնորհս հարկաւորս առ մեր փրկութիւն։ Վասն զի մէկ կողմանէ չենք կրնար Աստուծոյ պատուիրանքը պահել ու փրկուիլ առանց միանգամայն իրեն օգնականութեան. և միւս կողմանէ հասարակ կերպով խօսելով, չուզեր իւր շնորհքը տալ առանց մեր խնդրելուն։ Այսոր համար, ըսաւ Տրիդենտեան սուրբ ժողովն, թէ Աստուած անկարելի բան չի հրամայեր. հապա հրամայելով կ'ազդէ որ կրցածդ ընես, չի կրցածդ խնդրես, ինքն ալ կ'օգնէ որ կարենաս։ Սուրբ Օգոստինոս ալ կ'ըսէ, թէ յայտնի է որ Աստուած ոմանց աղօթք չըրած բաները կու տայ, ինչպէս սկիզբն հաւատոյ. աղօթք ընողներուն ալ՝ ուրիշ բան պատրաստեր է, ինչպէս յարատևութիւն մինչև ի մահ։

Ոսկից կը հետևցնեն աստուածաբանք, ինչպէս նաև Սուրբն Բարսեղ, Սուրբն Ոսկեբերան, Կղեմէս Աղեքսանդրացին և ուրիշներն, թէ աղօթքը չափահասներուն հարկաւոր է հարկաւորութեամբ միջոցի. այնպէս որ առանց աղօթք ընելու անկարելի է փրկութեան հասնիլ. և այս է բան հաւատոյ, ըստ Լէքսիոսի գիտնականին, թէ աղօթքն չափահասից հարկաւոր է

1 Բ. Պետ. Գ. 9։

փրկութեան համար, ինչպէս որ կ'իմացուի ի սուրբ գրոց։

Յայտնի է Գրոց խօսքը՝ թէ Պարտ է յամենայն ժամ յաղօթս կալ[1]. Յաղօթս կացէք, զի մի մտանիցէք ի փորձութիւն[2]. կամ Աղօթս արարէք, զի մի անկանիցիք ի փորձութիւն. կամ Խնդրեցէք և առնուցուք[3]. կամ Անդադար աղօթս արարէք[4]։ Այս բաներս ըստ հասարակ կարծեաց վարդապետաց՝ Սրբոյն Թովմայի հետ, պատուիրան մէջ կը բերեն՝ պարտաւորիչ ընդ ծանր յանցանաց, մանաւանդ երեք դիպուածի մէջ. նախ երբ մարդս մեղաց մէջ է, երկրորդ ի վտանգի մահուան, և երրորդ ի ծանր վտանգի մեղանչելոյ։ Եւ հասարակօրէն կ'ուսուցանեն վարդապետք, թէ սովորական մի կամ շատ շատ երկու ամիսն անգամ մը աղօթք չընէ, մահուշափ մեղքէն ազատ չըլլար։ Պատճառն է, վասն զի աղօթքն միջոց մ'է որ առանց անոր չըլլար ունենալ հարկաւոր օգնութիւններ փրկութեան։

Խնդրեցէք և առնուցուք. ուրեմն Սրբուհի Թերեզայի ըսածին պէս, որ ոչն խնդրէ՝

1 Ղուկ. ԺԸ. 1։
2 Ղուկ. ԻԲ. 40։
3 Յովհ. ԺԶ. 24։
4 Ա. Թես. Ե. 17։

ոչ առնու. ինչպէս որ գրած ալ է. Ոչ ունիք, վասն զի ոչ խնդրէք[1]։ Մասնաւորապէս հարկաւոր է աղօթքն՝ ժուժկալութեան առաքինութիւն ունենալու համար. Դիտացի եթէ ոչ այլ ազգ լինիցիմ ժուժկալ, բայց եթէ Աստուած տայցէ... Անկայ առաքի տեառն, և աղաչեցի զնա յամենայն սրտէ իմմէ[2], Վերջապէս աղօթասէրը ստոյգ կը փրկուի. աղօթք չընողը ստոյգ կը դատապարտուի։ Ամէն փըրկեալք աղօթիւք փրկուեցան, և ամէն դատապարտեալք աղօթք չընելով դատապարտուեցան. և այս է որ պիտի ըլլայ յաւիտեան մեծ յուսահատութիւն ի գըժոխս, թէ այնչափ դիւրին էր աղօթիւք երջանկապէս փրկուիլ, և հիմայ ատեն չիկայ աղօթք ընելու։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՞հ, փրկիչ իմ, ինչպէս կրցայ առաջ ապրիլ գքեզ չյիշելով. դու պատրաստ կեցեր էիր ամէն շնորհք ինձ տալու, զոր և խնդրէի, միայն կը սպասէիր որ ես ուզեմ. իսկ ես սոսկ կը նայէի զգայութիւնքս հա-

1 Յակ. Դ. 2։
2 Իմաստ. Ը. 21։

ճեցնել, և անհոգ էի կենալով զուրկ ի քո սիրոյդ և ի քո շնորհացդ։ Ո՜հ, տէր իմ, մի յիշեր իմ այնչափ ապերախտութիւն-ներս, գթա և ողորմէ ինձ, ներէ այնչափ անզգամութեանցս, և տուր յարատևութիւն ի բարին, տուր շնորհք խնդրելու միշտ քու օգնականութիւնդ մէյմ՝այ զքեզ չվշտացնելու Աստուածդ հոգւոյ իմոյ, մի թողուր որ անհոգ ըլլամ այս բանիս մէջ, ինչպէս ինչուան հիմայ եղայ. տուր ինձ լոյս և ուժ, որ միշտ դիս քեզի յանձնեմ, մանաւանդ երբ դիս թշնամին կը փորձէ զքեզ վշտացնելու։ Ինձ այս շնորհքս ըրէ, Աստուած իմ, վասն արդեանց Քրիստոսին քո, և վասն սիրոյդ զոր ունիս առ նա։ Հերիք է, տէր իմ, որ զքեզ չիդառնացընեմ, ինչպէս մինչև հիմայ դառնացուցի, ասկից ետև մնացած կեանքիս մէջ զքեզ սիրել կ'ուզեմ. տուր ինձ քու սուրբ սէրդ՝ որ ինձ յիշեցնէ զքեզ կորսընցնելու մեղքը վտանգին մէջ կը գտնուիմ։ Մարիամ մայր իմ, յոյս և ապաւէն, քեզմէ կը յուսամ այս շնորհքս, դիս միշտ քեզի յանձնելու և քու միածնիդ ի փորձութիւնս իմ. Լսէ ինձ, դշխոյդ իմ, վասն սիրոյ քո առ Յիսուս։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Կը մնայ որ գիտնանք աղօթքին պայմանները. շատ մարդ աղօթք կ'ընէ, և խնդիրքը չառնուր. պատճառը, կ'ըսէ Սուրբ Գիրքն, Խնդրէք և ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք[1]։ Աղէկ աղօթք ընելու համար նախ և առաջ խոնարհութիւն պէտք է. Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց[2]։ Սիրաքայ ըսածին պէս, Աղօթք տառապելոց անցցեն... և ոչ կացցեն ի բաց, մինչև այց արասցէ բարձրեալն[3], այն ալ թէ և առաջուց մեղաւոր եղած ալ ըլլայ. վասն զի Զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ[4]։ Երկրորդ՝ հաւատքով և յուսով վստահ ըլլալ պէտք է. Ո՝ հաւատայ ի տէր և յամօթ եղև[5]։ Այսոր համար Յիսուս մեզի սորվեցուց, որ աղօթք և խնդիրք ընելու ատեն, հայր անունով կարդանք առ Աստուած, Հայր մեր, ըսելով,

1 Յակ. Դ. 3։
2 Նայն. Դ. 6։
3 Սիր. ԼԵ. 21.
4 Սղ. Ծ. 29։
5 Սիր. Բ. 11։

որպէս զի այնու համարձակութեամբ դիմենք որով զաւակը հօրմէն բան կ'ուզէ, ասով կ'ըլլայ ամէն ուզածը առնուլ. Զամենայն ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք, և հաւատայցէք թէ առնուցուք, եղիցի ձեզ[1]։ Աւրդ կ'ըսէ Սուրբն Օգոստինոս, թէ ով կրնայ կասկածիլ. թէ պարապ կ'երնէ, երբ ճշմարտութիւնը խօսք կու տայ։ Սուրբ Գրոց ըսածին պէս. Ոչ իբրև զմարդ է Աստուած ի զարթնուլ կամ ի ստել, և ոչ իբրև զորդի մարդոյ ի սպառնալ կամ ի փոփոխել, խօսեսցի և ոչ կացուսցէ կամ արասցէ[2]։ Եւ նոյն Ս. Օգոստինոսին ըսածին պէս, չէր զմեզ յորդորեր որ խնդրենք, թէ որ տալու կամք չունենար, մանաւանդ թէ կ'ըսէ, խոստանալով՝ զինքը պարտական ըրաւ։

Բայց ըսէ մէկը, թէ ես մեղաւոր եմ, ուստի արժանի չեմ որ Աստուած ինձ լսէ։ Ասոր պատասխան կու տայ Սուրբն Թովմաս, թէ աղօթքը՝ խնդիրք ընելու ատեն՝ մեր արժանաւորութեան վրայ չի կայանար, այլ միայն Աստուծոյ ողորմութեան վրայ։ Քրիստոս տէրն մեր ալ ըսաւ, թէ Ամենայն որ խնդրէ առնու[3]. որ կը մեկնուի թէ ամէն մարդ եթէ արդար, և եթէ

1 Մարկ. ԺԱ. 24։
2 Թիւք. ԻԳ. 19։
3 Ղկ. ԺԱ. 10։

մեղաւոր։ Բայց մեր փրկիչն աւելի կ'ապահովցընէ զմեզ՝ ըսելով, թէ Ամէն ասեմ ձեզ, զոր ինչ խնդրիցէք ի հօրէ յանուն իմ, տացէ ձեզ[1]։ Որպէս թէ ըսէր, ով մեղաւորք, թէ որ դուք արժանաւորութիւն չունիք, ես ունիմ իմ արդիւնքովս հօրս առջև, ուրեմն խնդրեցէք իմ անունովս, և ես խօսք կու տամ թէ ինչ որ ուզէք կ'առնուք։ Ուր հասկընալու է որ այդ խոստմունքը ժամանակաւոր բաներու համար չէ, ինչպէս առողջութիւն, հարստութիւն, և այլն, վասն զի այսպիսի բարիքները շատ անգամ չի տար Աստուած, երբ վնաս կ'ըլլան մեր յաւիտենից փրկութեան, ինչպէս Սուրբն Օգոստինոս ալ կ'ըսէ, թէ հիւանդին օգտակար բանը բժիշկն աւելի գիտէ՝ քան թէ հիւանդն, ուստի կ'ըսէ, թէ Աստուած ողորմութիւն ընելով՝ այն բանը չի տար, ինչ որ ուրիշի մը բարկանալով կու տայ։ Ասոր համար մարմնաւոր բարիքը միշտ պիտի խնդրենք Աստուծմէ, այս թէութեամբ որ, եթէ հոգւոյն ալ օգուտ են. իսկ ընդ հակառակն հոգևոր բարիքը, ինչպէս թողութիւն մեղաց, յարատևութիւն, Աստուծոյ սէրը և սոնց նման բաները, բացարձակ պիտի խնդրենք հաստատուն հաւատքով՝ թէ կ'առնունք, ինչպէս ինքն Քրիստոս տէրն

1 Յովհ. ԺԶ. 23։

մեր ըսաւ. Զի եթէ դուք որ չարքդ էր, գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձեր, օրչափ ևս առաւել հայրն ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ որ խնդրենն ի նմանէ[1]։

Ի վեր քան զամենայն պէտք է յաղօթս յարատևութիւն։ Կուռնելիոս Ալափիտէ կ'ըսէ, թէ Աստուած կ'ուզէ որ մենք յարատևենք յաղօթս՝ մինչև թախանձել և ձանձրացուցանել զինքը։ Այս է Ս. Գրոց խօսքն ալ, թէ Պարտ է յամենայն ժամ յաղօթս կալ[2]... Արթուն կացէք, յամենայն ժամ աղօթս արարէք[3]։ Անդադար աղօթս արարէք[4]։ Այս է այն կրկին ըսելն ալ. խնդրեցէք և առնուցուք, հայցեցէք և գտջիք, բախեցէք և բացցի ձեզ[5]։ Բաւական չէր խնդրեցէք ըսելը. բայց Քրիստոս տէրն մեր ասով հասկրցնել ուզեց որ մուրացկաններու պէս պէտք է ընել, որ չեն դադրիր ուզելէն, վրայ տալէն, դուռը բախելէն, մինչև որ ողորմութիւն առնուն։ Մանաւանդ վախճանական յարատևութիւնն այնպիսի շնորհք մ'է որ չառնուիր առանց շարունակ աղօթքի։ Ուստի կ'ըսէ

1 Ղկ. ԺԱ. 13։
2 Ղկ. ԺԸ. 1։
3 Ղկ. ԻԱ. 36։
4 Ա. Թես. Ե. 17։
5 Ղկ. ԺԱ. 9։

Սուրբն Օգոստինոս, թէ Աստուծոյ այս պարգևը աղօթքով և պաղատանքով միայն կ'ըլլայ ձեռք ձգել։ Այս ուրեմն միշտ աղօթենք, և աղօթքը ձեռքէ չիձգենք, թէ որ փրկուիլ կ'ուզենք։ Խոստովանահարք ալ, քարոզիչք ալ, թէ որ հոգւոց փրկութիւնը կ'ուզեն, անդադար պէտք է յորդորեն աղօթք ընել։ Աղէկ կ'ըսէ Սուրբն Բեռնարդոս, թէ չնորհք խնդրենք և Մարիամու ձեռքով խնդրենք, վասն զի ով որ իրմէ խնդրէ կը գտնէ, և չի կրնար դատարկ ելնել։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Աստուած իմ, ես յոյս ունիմ որ ինձ թողութիւն տուեր ես, բայց իմ թշնամիքս չեն դադրիր ինձ հետ կռուելէն մինչև ի մահ. թէ որ դու ինձ չօգնես, ես նորէն զիս կը կորսընցնեմ։ Վասն արդեանց օծելոյ քո Յիսուսի Քրիստոսի կը խնդրեմ սուրբ յարատևութիւն. մի թողուր զիս մեկնիլ ի քէն. նոյն շնորհքը կը խնդրեմ անոնց ամենուն համար ալ որ հիմայ ի չընորհս քո են։ Ստոյգ եմ ես՝ ապաւինեալ ի խոստմունս քո, թէ յարատևութիւն կու տաս ինձ, թէ որ ես միշտ խնդրեմ. միայն այս բանէս կը վախեմ որ չըլլայ թէ

փորձութեանս ատեն անհոգանամ դիմել առ քեզ, և նոյնպէս նորէն ընկնամ։ Ուստի շնորհք կը խնդրեմ, որ աղօթքը ձեռքէ չիթողում. տուր որ յաւիթս մեղաց միշտ քեզի դիմեմ, զիս քեզի յանձնեմ, և յոգնութիւն կարդամ զսուրբ անունն Յիսուսի և Մարիամու։ Աստուած իմ, այսպէս կ'առաջադրեմ և այսպէս կը յուսամ ընել քու շնորհքովդ. լսէ ինձ, տէր իմ, վասն սիրոյ Յիսուսի Քրիստոսի օծելոյ քո։ Մարիամ մայր իմ, խնդրէ ինձ համար, որ ի վտանգս կորուսանելոյ զԱստուած՝ միշտ դիմեմ առ քեզ և առ քո միածինդ։



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԼԱ.

ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ

Ով որ վինչև վերջը հաւքերուն, նա պիտի փրկուի[1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ասած է սրբոյն Հերոնիմոսի, թէ սկըսանիլն բաղմաց է, և հանապազորդելն սակաւուց։ Աղէկ սկսան Սաւուղ, Յուդա, Տերտուղիանոս, բայց յետոյ վատթարացան. վասն զի չյարատևեցին ի բարին։ Ուստի, կ'ըսէ նոյն սուրբն Հերոնիմոս, թէ ի քրիստոնէից սկիզբն չի փնտռուիր, այլ կատարած, վասն զի կատարածը վարձք կ'առնու, վախճանը կը պակէ. ուստի Աստուած մեզմէ չէ թէ միայն բարի

[1] Ով հաւքերեսցէ ի սպառ նա կեցցէ։ Մատ. ԻԴ. 13։

կեանք սկսիլը, այլ և կատարելը կ'ուզէ։ Այս է սրբոյն Բոնաւենտուրայի ըսածն ալ. միայն յարատևութիւնն պատկեցի. ուստի սուրբն Լաւրենտիոս Յուստինեանն ալ զյարատևութիւնն կը կոչէ դուռն երկնից։ Ուրեմն չի կրնար արքայութիւն մըտնել, ով որ մտնելու դուռը չի գտներ։ Ո՛վ եղբայր, դու հիմայ մեղքէն ետ կեցեր ես, և իրաւամբք կը յուսաս որ թողութիւն առած ես, ուրեմն Աստուծոյ բարեկամ ես. բայց գիտցած ըլլաս որ դեռ ապահով չես։ Ո՛հ, երբ կրնաս ապահով ըլլալ. երբ յարատևես մինչև վերջը. Որ համբերեսցէ ի սպառ, նա կեցցէ։ Բարի վարք սկսար, տուր փառս Աստուծոյ, բայց նայէ, ինչ կ'ըսէ քեզի սուրբն Բեռնարդոս. վարձք կը խոստացուի սկսողներուն, բայց կը տըրուի յարատևողներուն։ Բաւական չէ վազել դէպ ի յաղթանակն, պէտք է վազես մինչև որ առնուս, կ'ըսէ առաքեալն. Այնպէս ընթացարուք զի հասանիցէք[1]։

Արդ որովհետև ձեռք զարկեր ես մաճին, սկսեր ես աղէկ ապրիլ, բայց հիմայ աւելի պիտի վախնաս և դողաս. Ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք[2]։ Եթէ ինչու համար ըսես, վասն զի Աստուած պահէ՝ թէ որ ետևդ նայիլ

1 Ա. Կոր. Թ. 24։
2 Փիլ. Բ. 12։

ուզես և վատթար կեանքդ դառնաս, Աստուած զքեզ արքայութենէ դուրս կ'ընեմ կ'ըսէ. Ոչ ոք է որ արկանիցէ ձեռն զմաճով, և հայիցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ[1]։ Հիմայ Աստուծոյ շնորհքով նայէ որ չար առիթներէ փախչիս, սուրբ խորհուրդներուն ստէպ մատչիս, ամէն օր մտածական ընես։ Երանի քեզի թէ որ անպակաս զասոնք ընես. և այսպէս ընելով Քրիստոս երբ դատաստանի կու գայ, զքեզ կը գտնէ իւր ըսածին պէս. Երանի ծառային այնմիկ զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս[2]։ Բայց միտք մի՛ դներ, թէ հիմայ որ զքեզ Աստուծոյ ծառայելու տուեր ես, իբր թէ լմնցած կամ պակսած են փորձութիւնք. նայէ ինչ կ'ըսէ Հոգին սուրբ. Եթէ մերձենաս ծառայել Աստուծոյ, պատրաստեա զանձն քո ամենայն փորձութեան[3]։ Գիտցիր որ հիմայ աւելի քան զուրիշ ատեն պիտի պատրաստուիս ի կռիւ. վասն զի թշնամիդ աչխարհ, սատանայ և մարմին՝ հիմայ չատ աւելի կը զինուորին քեզի դէմ ելնելու, և կորսընցընել տալու վաստակածդ։ Դիոնեսիոս կարդուսեանին ըսածին պէս, որչափ որ

1 Ղկ. Թ. 62։
2 Մատ. ԻԴ. 46։
3 Սիր. Բ. 1։

մէկն աւելի կը ջանայ Աստուծոյ ծառայել, այնչափ թշնամին անոր դէմ կը խստանայ. զայս տեղնիտեղ կը բացատրէ աւետարանն. Յորժամ այսն պիղծ ելանիցէ ի մարդոյ, շրջի ընդ անջրդին տեղիս խնդրէ հանգիստ, և իբրև ոչ գտանէ, ասէ. դարձայց անդրէն ի տուն իմ ուստի ելի... յայնժամ երթայ և առնու եօթն այլ այս չար ևս քան զինքն, և մտանէ բնակէ անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն [1]։

Ուրեմն աղէկ նայէ, թէ ինչ զէնք ունիս դէմ դնելու և զքեզ պաշտպանելու այն թշնամեացդ դէմ, և զքեզ Աստուծոյ շնորհաց մէջ պահելու։ Սատանային յաղթելու՝ աղօթքին պէս ուրիշ աղէկ զէնք չիկայ։ Յիշէ Պօղոս առաքելոյն ըսածը, Ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս [2]. որով կ՚ուզէ զմեզ արթընցնել թէ մենք մեզմէ ուժ չունինք դէմ դնելու այդ իշխանութեանց, ուստի կարօտ ենք Աստուծոյ օգնականութեան։ Տես ինքն ինչ կ՚ըսէ. Յամենայնի կարող եմ այնու՝ որ զօրացոյցն զիս [3]. մենք ամէնքս ալ այնպէս պիտի ըսենք. բայց այս

1 Ղ՚. ԺԱ. 24. 26։
2 Եփես. Զ. 12։
3 Փիլ. Դ. 13։

օգնութիւնս կը տրուի միայն աղօթքով խնդրողին. Խնդրեցէք և առնուցուք [1]։ Ուստի չապաւինինք մեր առաջադրութեան, թէ չէ կը կորսուինք. բովանդակ մեր վստահութիւնը, երբ սատանան զմեզ կը փորձէ, դնենք Աստուծոյ օգնականութեան վրայ, յանձնելով զմեզ Յիսուսի և ամենասուրբ Կուսին։ Եւ զայս մասնաւորապէս այն ատեն պիտի ընենք, երբ մարմնոյ փորձութիւն կը քաշենք, վասն զի այդ փորձութիւնն ամենէն աւելի վախնալու բանն է, և ասով յաղթող կ՚ելլայ սատանան։ Մենք մեզմով ուժ չունինք մաքրութիւն պահել, Աստուած պիտի տայ։ Սողոմոնին ըսածին պէս, Գիտացի թէ ոչ այլ ազգ լինիցիմ ժուժկալ, բայց եթէ Աստուած տայցէ... անկայ առաջի տեառն, և աղաչեցի զնա յամենայն սրտէ իմմէ [2]։ Ուրեմն այնպիսի փորձութեան ատեն պէտք է շուտով դիմել առ փրկիչն Յիսուս, և առ ամենասրբուհի մայր նորա, կարդալով նոյն ատեն իրենց սուրբ անունը, Յիսուս և Մարիամ. այսպէս ընողն կը յաղթէ, հընողը կը կորսուի։

1 Յովհ. ԺԶ. 24։
2 Իմաստ. Ը. 21։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց[1]։ Աստուած իմ, գիտեմ որ դու զիս երեսէ չես ձգեր թէ որ ես առաջ զքեզ չթողուի, և ասկից կը վախնամ իմ տկարութիւնս փորձով գիտնալուս համար։ Տէր, դու պիտի տաս ինձ այն ուժը՝ որ պէտք է դժոխոց դէմ, որ կ'ուզէ զիս նորէն գերի ընել իրեն։ Այս բանս կը խնդրեմ վանդ՝ սիրոյ օծելոյ քո Յիսուսի։ Դիր, ով փրկիչ իմ, մշանջենաւոր հաշտութիւն մը իմ և քու մէջդ, այնպէս որ յաւիտեան չիբակուի, և ասոր համար տուր ինձ քու սուրբ սէրդ՝ ով որ չիսիրեր մեռած է։ Այս թշուառ մահէն դու զիս պիտի ազատես, Աստուած հոգւոյ իմոյ՝ գիտես որ ես արդէն կորսուած էի՝ բովանդակ քու բարութիւնդ եղաւ որ զիս այս վիճակս բերաւ, և կը յուսամ մնալ ի շնորհս քո։ Ուրեմն, թող մի՛ տար, փրկիչ իմ, վասն դառն մահուանդ զոր կրեցիր ինձ համար, որ մէկ մ'ալ իմ կամքս դառնամ և զիս կորսընցնեմ։ Ես զքեզ կը սիրեմ ամէն բանէ վեր, յոյս ունիմ որ միշտ կապուած մը-

նամ այս սուրբ սիրով, և այնպէս կապուած մեռնիմ, և կապուած մնամ յաւիտեան։ Ո՞վ տիրամայր, որ զքեզ կը կոչես մայր յարատեւութեան, այս մեծ շնորհքս քու ձեռքովդ կը բաշխուի, զայդ քեզմէ կը խնդրեմ, և քեզմով կը յուսամ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Հիմայ տեսնենք, թէ ինչպէս պէտք է յաղթել աշխարհի։ Իրաւ որ մեծ թշնամի է սատանան, բայց աշխարհք աւելի չար է։ Թէ որ սատանան չիզօրանար աշխարհի և գէշ մարդկանց ձեռքով, որոնցմով աշխարհք կ'իմացուի, չէր յաջողեր իւր յաղթանակն։ Մեր փրկիչն ոչ այնչափ զգուշացոյց զմեզ ի դիւաց, որչափ ի մարդկանէ՝ Զգոյշ լինիք ի մարդկանէ[1], կ'ըսէ՝ կ'ուզէ իմացընել, թէ շատ անգամ աւելի գէշ են մարդիկ քան դիւս, վասն զի աղօթքով և Յիսուսի ու Մարիամու սուրբ անունը տալով սատանաները կը փախչին, բայց երբ չար ընկերները զմէկը կը փորձեն մեղանչելու, նա ալ թէ որ հոգեւոր խօսք մը զուրցէ, անոնք չէ թէ կը փախչին, հապա աւելի կը փորձեն զինքն և ծաղր կ'ընեն,

ասելով՝ թէ դու ինչ կոպիտ և փուճ մարդ
ես եղեր, բանի մը չեկող. եթէ ուրիշ բան
ալ չկարենան ըսել՝ կեղծաւոր է կ'ըսեն և
սուրբ կը ձեւանայ։ Ոմանք ալ տկար գըտ-
նուելով և չուզելով ալ լսել այդ նախա-
տինքներն ու անարգանքները, ողորմելա-
բար կը միաբանին սադայելի այս պաշտո-
նէից հետ, և կը դառնան ի փախածն։
Ո՛վ, դու եղբայր, միտքդ դիր որ եթէ կ'ու-
զես բարի կեանք ունենալ, ի հարկէ
զքեզ ծաղր պիտի ընեն, և վար պիտի
զարնեն չարերն. Աւուրն պիղծ թուի չա-
բագործաց[1], կ'ըսէ սուրբ գիրքն։ Ով որ
չարութեամբ կ'ապրի, չի կրնար աղէկ
ապրողները քաշել. ինչու. վասն զի ա-
դէկներուն վարքն ամէն օր յանդիմանու-
թիւն է չարերուն, ուստի ուրիշներուն
բարի վարքով խղճմտանքի խայթ չիքաշե-
լու համար, կ'ուզեն որ անոնք ալ իրենց
նման գէշ ըլլան։ Գիշէ առաքելոյն խօսքն
ալ որ կ'ըսէ. Այնենքին որ կամիցին աս-
տուածապաշտութեամբ կեալ ի Քրիստոս
Յիսուս, ի հալածանս կացցեն[2]։ Բոլոր
սուրբերն հալածուեցան. և ո՞վ կար աւելի
սուրբ քան զփրկիչն մեր և ահա աշխարհ
զինքն ալ հալածեց մինչև ի մահ խաչին։

Այս բանիս ճար չիկայ, վասն զի աշ-

1 Առակ. ԻԱ. 15։
2 Բ. Տիմ. Գ. 12։

խարհիս ամէն մէկ սկզբունքը հակառակ է
Քրիստոսի սկզբանց. այն որ բան մը կը
սեպուի աշխարհիս աչքին, խենթութիւն
է Քրիստոսի առջև. Զի իմաստութիւն
աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առա-
ջի Աստուծոյ[1]։ Այսոր ներհակ՝ աշխարհս
խենթութիւն կը սեպէ Քրիստոսի աղէկ
սեպած բանը. ինչպէս է խաչ, ցաւ, ար-
համարհութիւն. Զի ճառ խաչին կորուսեալ-
ոցն յիմարութիւն է։ Բայց մխիթա-
րուինք, երբ չարերը զմեզ կ'անիծանեն և
կը բամբասեն ու կ'անարգեն, Աստուած
կ'օրհնէ և կը գովէ. Նոքա անիծանեն և
դու օրհնեսցես[2]։ Հերիք չէ՞ մեզի որ Ա-
տուած, սուրբ Կոյսն, հրեշտակներն, ա-
մենայն սուրբք և ամէն աղէկ մարդիկ գո-
վեն զքեզ. թող մեղաւորներն ինչ որ կ'ու-
զեն ըսեն, և զմեզ հալածեն, որով հաճոյ
կ'ըլլանք Աստուծոյ, և այս է Աստուծոյ
ծառայից ուղածն։ Որչափ աւելի ընդդի-
մութիւն և նեղութիւն քաշելով գործենք
զբարին, այնչափ աւելի Աստուծոյ հաճո-
յական բան կ'ընենք, և մեզի վարձք կը
դիզենք։ Այնպէս դնենք, թէ աշխարհիս
մէջ ուրիշ մարդ չըլլար, բայց միայն Ա-
տուած և մենք։ Երբ այս չարերը զմեզ
ծաղր կ'ընեն, զմեզ Աստուծոյ յանձնենք

1 Ա. Կոր. Գ. 19։
2 Սղ. ՃԸ. 28։

և գոհանանք զԱստուծոյ, որ մեզի տուեր է այն լոյսը՝ զոր այն ողորմելիները չուներ, և մենք մեր բանը տեսնենք։ Ամենի չիսեպենք մեզի քրիստոնեայ երևիլն, թէ ոչ, յայտնի է Քրիստոսի ըսածն. Զի որ ամենի համարեսցի զիս և զբանս իմ, զնա և որդի մարդոյ ամենի արասցէ յորժամ գայցէ փառաւք իւրովք[1]։

Թէ որ փրկութեան հանիլ կ'ուզենք, պէտք է որ յանձն առնունք բամբասիլ, կրել, մանաւանդ թէ բռնադատենք զմեզ, վասն զի Ինձուկ է ճանապարհն որ տանի ի կեանս[2]... Արքայութիւնն երկնից բռնադատի, և բռունք յափշտակեն զնա[3]։ Ով որ զինքը չի բռնադատեր, փրկութեան չի հասնիր. ուրիշ ճար չիկայ, պէտք է որ մեր ապստամբ բնութեան դէմ քալենք, թէ որ կ'ուզենք բարի գործել. մանաւանդ ի սկզբան պիտի բռնադատենք զմեզ, չար սովորութիւններն արմատէն խլելու, և բարի ունակութիւն ստանալու, վասն զի բարի ունակութիւն ըլլալէն ետև, դիւրին կ'ըլլայ, մանաւանդ թէ կը քաղցրանայ ալ պատուիրանապահութիւնն։ Տէրն մեր ըսաւ սրբուհի Բրիճիտային, թէ համբերու-

1 Ղկ. Թ. 26։
2 Մատ. Է. 14։
3 Մատ. ԺԱ. 12։

թեամբ և քաջութեամբ առաքինութիւն գործելը՝ առջի բերան խայթող փուշ կ'երևի, բայց ետքը փչերը վարդ կը դառնան։ Ուստի խելքդ գլուխդ ժողվէ, ով քրիստոնեայ. դիր միտդ թէ Քրիստոս տէրն մեր հիմայ քեզի կ'ըսէ անդամալուծին ըսածը. Ահաւադիկ ողջացար, մի ևս մեղանչեր, զի մի չար ևս ինչ լինիցի քեզ[1]։ Հասկըցիր, կ'ըսէ սուրբն Բեռնարդոս, նորէն ընկնալը առաջին ընկնալէն աւելի գէշ է։ Մարգարէն ալ կ'ըսէ Աստուծոյ բերնէն, Վայ ձեզ, որդիք ապստամբք[2]։ Շատ վախնալու բան է ըսածն ալ. Ի դառնալ արդարոյն յարդարութենէ իւրմէ և առնել զանիրաւորութիւն, ըստ ամենայն անօրէնութեանց զոր առնիցէ անօրէն, ամենայն արդարութիւնք նորա զոր արար, մի յիշեսցեն. ի յանցանս իւր զոր անկաւ, և ի մեղս իւր զոր մեղաւ, ի նոսին մեռցի[3]։

1 Յովհ. Ե. 14։
2 Ես. Լ. 1։
3 Եզեկ. ԺԸ. 24։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ Աստուած իմ, ես շատ անգամ այն պատիժներուն արժանի եղայ, որովհետև քանի անգամ ալ որ թէպէտ ետ կեցայ մեղքէն քու տուած լուսովդ, բայց վերջէն թըշուառաբար նորէն դարձայ։ Գոհանամ զանբաւ ողորմութենէդ, որով դիս իմ կորըստեանս մէջ չիթողուցիր բոլորովին զուրկի լուսոյ, ինչպէս որ արժանի էի։ Ուստի չափէ դուրս պարտական եմ քեզի, և յետին ապերախտ կ'ըլլայի թէ որ նորէն քեզի երես դարձընէի. Քաւ լիցի, փրկիչ իմ. Զողորմութիւնս Տեառն յաւիտեան օրհնեցից [1], հոս ալ անդին ալ, յուսալով ի քո շնորհս։ Կու լամ կ'ողբամ ինչուան հիմայ ըրածս պերախտութիւններս, և կը վառուիմ զքեզ սիրելու քու ըրած շնորհքներովդ։ Այո՛, կը սիրեմ զքեզ, Տէր, որ արժանիդ ես անբաւ սիրոյ, այս օրէս ետև դու պիտի ըլլաս իմ մէկ հատիկ սէրս, և բարիս։ Հայր երկնաւոր, վասն արդեանց միածնիդ կը խնդրեմի քէն վախճանական յարատևութիւն ի շնորհս և ի սէր քո, և գիտեմ որ անպակաս կու տաս քանի որ քեզմէ կ'ուզեմ. բայց ո՞վ կրնայ զիս ապա-

1 Սղ. ՁԸ. 2։

հովցընել թէ միշտ ուշադիր պիտի ըլլամ խնդրելու քեզմէ այս յարատևութիւնը։ Ուստի Աստուած իմ, թէ յարատևութիւն կը խնդրեմ, և թէ շնորհք միշտ խնդրելու զայն։ Մարիամ կոյս բարեխօս իմ և փաստաբան, ապաւէն իմ և յոյս, քու միջնորդութեամբդ աւա ինձ համար հաստատութիւն խնդրելու միշտ Աստուծմէ յարատևութիւն վախճանական, կ'աղաչեմ առ վասն սիրոյ քո Յիսուսի միածնիդ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Գանք երրորդ թշնամին տեսնելու, որ ամենէն մեծն է. այսինքն մարմինը. և նայինք թէ ինչպէս զմեզ պիտի պաշտպանենք։ Նախ և առաջ աղօթքով, որուն վրայ առաջ խօսեցանք. երկրորդ առիթներէն փախչելով. հիմայ զայս աղէկ մը քննենք։ Սուրբ Բեռնարդոս Սենացին կ'ըսէ. թէ Քրիստոսի խրատներուն մէջ շատ հռչակաւոր է, և գրեթէ հիմն կրօնի, փախչիլ մեղաց առիթներէն։ Անգամ մը դիւին մէկը ստիպեալ երդմնեցուցիչներէն՝ ստոյգն ըսաւ, թէ ամէն քարոզէն աւելի իրեն անհաճոյ է այն քարոզն՝ որ մեղաց առիթներէն փախչելու վրայ է. և ի-

բաւ է, վասն զի սատանան կը ծիծաղի առաջադրութիւններուն և խոստմունքներուն վրայ, զոր կ'ընէ մեզաւորն ապաշխարելու ատեն, թէ որ առիթները մէկդի չիթողու։ Առիթը, մասնաւորապէս զգայական հեշտութեանց մէջ, վարագոյր մ'է ձգած աչքին առջև, որ չի թողուր մարդու տեսնել ոչ առաջադրութիւնները՝ զոր ըրեր է, ոչ առած լուսաւորութիւնները և ոչ յաւիտենական ճշմարտութիւնները. մէկ խօսքով, ամէն բան մոռնալ կու տայ, և կայր մը կը դարձընէ։ Այս եղաւ պատճառ ընկնալու մեր առաջին նախահարց, այսինքն առթէն չփախչիլ։ Աստուած իրենց արգիլեր էր շդպչիլ ծառի մը պտղուն, ինչպէս որ Եւա ալ օձին ըսաւ, թէ պիտի չուտենք և ոչ պիտի մօտենանք[1]. բայց անզգոյշ ըլլալով՝ տեսաւ, առաւ և կերաւ։ Նախ սկսաւ զարմանալով նայիլ պտղոյն, յետոյ ձեռքն առաւ, ետևէն ալ կերաւ. Որ սիրէ զվտանգ, ի նմին կորիցէ[2]։ Սրբոյն Պետրոսի ըսածին պէս՝ Սատանայ շրջի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ[3]. ուստի ի՞նչ կ'ընէ, կ'ըսէ սուրբն Կիպրիանոս, որ կարենայ մտնել ի հոգին ուստի վռնտուեր է. առիթ կը փնտռէ, կը նայի կը զննէ,

1 Ծննդ. Գ. 3
2 Սիր. Գ. 27։
3 Ա. Պետ. Ե. 8։

կայ արդեօք կողմ մը ուսկից մտնել կարելի ըլլայ. թէ որ մարդը տեղիք տայ առթի մը, մէկէն նորէն ներս կը մտնէ թշնամին և զինքը կը լափէ։ Աղէկ կ'ըսէ Գուերիկոս արբայն, թէ որովհետև Զազար դուրս ելաւ ձեռքը ոտքը կապուած, ուստի նորէն ալ մեռաւ։ Ասոր նման ով որ մեղքէն դուրս կ'ելնէ՝ առթէ մը կապուած ըլլալով, թէ և յարութիւն է առեր, նորէն կը մեռնի։ Ուրեմն ով որ փրկուիլ կ'ուզէ, չէ թէ միայն մեղքը մէկդի պիտի ձգէ, հապա մեղաց առիթն ալ, այսինքն չար ընկերները, այս տունը, այն թղթակցութիւնները, և այլն։

Մէկը կրնայ ըսել, թէ ես հիմայ վարքս փոխեր եմ, չար վախճան մը չունիմ այն անձին հետ, փորձութիւն ալ չունիմ. ասնոր ըսելու է, թէ Մուղրիներուն երկիրը տեսակ մը արջ կայ կ'ըսեն, որ կապիկ որսալու կ'ելնէ. կապիկները տեսնելով արջուն գալը՝ ծառերուն վրայ կ'ելնեն, կը խալըսին, բայց արջն ի՞նչ կ'ընէ. ծառին ներքև կը պառկի մեռած կը ձևանայ, երբ կապիկները վար կ'իջնեն, կ'ելնէ, վրանին կը վազէ կը բռնէ կ'ուտէ։ Սատանան ալ այսպէս կ'ընէ, փորձութիւնը մեռած կը ցուցնէ, երբ մէկը զինքն առթի մէջ կը դնէ ոտք կը հանէ զփորձութիւնը, որ զայն կուլ կու տայ։ Քանի՞ քանի հոգիներ եղած են, որ աղօթքի հետ

կ'ըլլային, կը հաղորդուէին, այնպէս որ սուրբ կրնային ըսուիլ. բայց առթի մէջ ձգելով զիրենք, որս եղան դժոխոց։ Եկեղեցական պատմութեանց մէջ գրած է, թէ սրբակաց տիկին մը կար որ զմարտիրոսները թաղելու բարեպաշտ ծառայութիւնը կ'ընէր. անգամ մը անոնց մէջ մէկը գտաւ որ դեռ հոգին չէր աւանդեր, իւր տունը տարաւ առողջացուց։ Տես եռքը ինչ եղաւ. մօտ առիթ ունենալով այս երկուքս, առաջ որ սուրբ կրնային ըսուիլ, ետքն Աստուծոյ շնորհքը կորուսին, վերջն ալ հաւատքէ ելան։

Աստուած հրամայեց Եսայի մարգարէին, Գոգիր, կանչէ ու ըսէ, թէ Ամենայն մարմին խոտ [1]։ Ուր կ'ըսէ Ոսկեբերան, թէ ճրագը խոտին մէջ դիր, և եթէ կրնաս ըսէ թէ խոտը չայրիր։ Սուրբ Կիպրիանոս ալ կ'ըսէ, թէ անկարելի է բոցի մէջ կենալ և չայրիլ։ Մարգարէն կը հասկըցնէ, թէ Եղիցի զօրութիւն նոցա իբրև զծեծած վշոյ, և գործք նոցա իբրև զկայծակունս հրոյ, և այրեսցին անօրէնք և մեղաւորք ի միասին [2]։ Սողոմոն ալ ըսաւ, թէ Ծրարիցէ՞ ոք հուր ի գոգ և զհանդերձսն ոչ այրիցէ. կամ գնայցէ՞ ոք ի վերայ կայծականց հրոյ, և զոտս իւր ոչ

1 Ես. Խ. 6։
2 Ես. Ա. 31։

խարշիցէ [1]։ Այսպէս խենթ է առթի մէջ ալ մտնողն և չեմ ընկնար ըսողն. ուրեմն սուրբ գիրք կ'ըսեն, թէ Փախիր ի մեզաց որպէս յերեսաց օձի [2]։ Պէտք է փախչիլ ոչ միայն օձին խածուածքէն կ'ըսէ Գուապրիդոս, այլ նաև անոր դպչելէն, անոր մօտենալէն։ Բայց գուցէ դու կ'ըսես, թէ այն տունն այն բարեկամութիւնը ինձ չահ և վաստակ կը բերէ. ինչո՞ւ չես ըսեր, թէ քեզի դժոխոց ճամբայ ալ է. Ճանապարհը դժոխոց են տուն նորա, որ իջուցանեն ի շտեմարանս մահու [3]։ Ուրեմն ճար չիկայ, եթէ փրկութեան հանիլ կ'ուզես, անկից հեռու պիտի կենաս. ինչ ըսաւ տէրն մեր. Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա ի քէն [4]։ Քեզմէ հեռու ձգէ կ'ըսէ, որ է ըսել, թէ պէտք է ամէն առիթը վերցընել։ Սուրբ Փրանկիսկոս Ասիզացի կ'ըսէր, թէ սատանան հոգևորականներն ուրիշ կերպով կը փորձէ քան թէ գէշ վարք ունեցողները. առջի բերանը չուզեր զանոնք չուանով մը կապել, հապա մազով մը, ետքը դերձանով, ետքն աւելի հաստ դերձանով, անկէ ետքը

1 Առակ. Զ. 27. 28։
2 Սիր. ԻԱ. 1։
3 Առակ. Է. 27։
4 Մատ. Ե. 29։

չուանով մը. և այսպէս վերջապէս մեղքով կը կապէ կը խղդէ։ Ուստի ով որ կ'ուզէ այս վտանգէն ազատ ըլլալ, պէտք է որ ի սկզբան բոլոր մազերը կտրէ, բովանդակ առիթները, բարևներ տալը, ընծաներ ղրկելը և առնելը, թղթիկներ գրելը, և այլն. և ընդհանրապէս խօսելով, անմաքուր ախտ ունեցողին համար բաւական չէ մերձաւոր առիթներէն փախչիլը, վասն զի թէ որ հեռաւորներէն փախուստ չիտայ, կը դառնայ նորէն կը գլորի մեղաց անդունդը։ Ով որ իսկապէս փրկուիլ կ'ուզէ, պէտք է որ հաստատէ իւր սրտին մէջ և շարունակ նորոգէ այս առաջադրութիւնը որ մէյմ'ալ Աստուծմէ չզատուի. և պէտք է որ շատ անգամ կրկնէ սրբոց այն խօսքը՝ թէ թող ամէն բանս կորսուի, բաւական է որ զԱստուած չիկորսընցնեմ. բայց պարզ առաջադրութենէն բան չելնէր. հապա ամէն ջանք ընելու է միջոցները չկորսընցնելու համար. և ասոնց մէջ առաջինն է, յառթից փախչիլը, երկրորդ ստէպ ստէպ խոստովանիլ և հաղորդուիլ. վասն զի ստէպ ալլուող տան մէջ՝ աղտեղութիւն դժուարաւ կը գտնուի. խոստովանանքով հոգին մաքուր կը մնայ, և չէ թէ միայն թողութիւն կ'ստանուի, այլ և փորձութեանց դէմ դնելու զօրութիւն կը ստանանք. իսկ հաղորդութիւնը հաց երկնային կ'ըսուի. վասն զի ինչպէս մարմինը

չի կրնար ապրիլ առանց երկրաւոր կերակրոյ. նմանապէս հոգին ալ չի կրնար ապրիլ առանց այս երկնաւոր կերակրոյն։ Քրիստոսի տեառն մերոյ խօսքն է, Եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս ձեր [1], անոր ներհակ, Որ ուտէ ի հացէս յայսմանէ, կեցցէ յաւիտեան։ Ասոր համար Տրիդենտեան ժողովը զհաղորդութիւնը կը կոչէ դեղթափ մեր հանապազօրեայ յանցանաց և մահուշափ մեղաց դէմ։ Երրորդ միջոցն է մտածականն կամ՝ մտաւոր աղօթքն. Սիրաքայ ըսածին պէս, թէ որ վախճաննիս յիշենք, ամենևին չենք մեղանչեր։ Ով որ իւր աչքին առջև մտածելու նիւթ դրած է յաւիտենական ճշմարտութիւնները, զմահ, զդատաստան և զդժոխս և զարքայութիւն, դժուարաւ մեղաց մէջ կ'ընկնայ. վասն զի Աստուծոյ լոյսը զինքը կը լուսաւորէ մըտածականով. հոն կը լսէ և կ'իմանայ մարդ, թէ ինչէն պիտի փախչի, և ինչ պիտոր ընէ. փուռ մըն ալ է մտածականը, ուր կը վառի բոց սիրոյն Աստուծոյ։ Ինչպէս որ շատ անգամ՝ ալ ըսինք, Աստուծոյ ներհաց մէջ հաստատուն մնալու համար պարզապէս հարկաւոր է՝ անդադար աղօթել, և խնդրել զնորհս մեզ պիտանիս.

1 Յովհ. Զ. 54։

և ով որ մտածական աղօթք չըներ, դը-
ժուարաւ աղօթքի կը նստի այնպիսին. ա-
ռանց աղօթից ալ չի կրնար փրկուիլ։

Ուրեմն փրկութեան հասնելու համար
պէտք է միջոցները ձեռք առնուլ, և ար-
գաւորեալ կեանք մը վարել։ Աւաւօտանց
ելածին պէս քրիստոնէարար շնորհակա-
լութիւն ընել, սիրոյ ներգործութեամբ և
առաջադրութեամբ, Յիսուսի և Մարիա-
մու շնորհքը խնդրելով, որ նոյն օրն ա-
ռանց մեղաց զմեզ պահեն. յետոյ մտա-
ծական ընել, պատարագ տեսնել, ցորեկը
հոգևոր գրքեր ընթեռնուլ, այցելութեան
ելնել սրբութեան և Աստուածածնայ, ի-
րիկունը սուրբ Կուսին վարդարանը դար-
ձընել և քննութիւն խղճի մտաց, շաբա-
թը մէկ քանի անգամ հաղորդուիլ հրա-
մանաւ հոգևոր հօրն, և մէյմը սկսելէն
ետքը միշտ նոյն ճամբան բռնել։ Շատ օգ-
տակար ալ կ'ըլլայ հոգևոր կրթութեան
մտնել վանքի մը մէջ։ Մեծարել պէտք է
մասնաւոր պաշտօնով զսուրբ Կոյսն, զոր
օրինակ, ծոմ բռնել շաբաթ օրը՝ վասն զի
ինքը մայր յարատևութեան կ'ըսուի, և
կը խոստանայ զայն իրեն ծառայից։ Ի վեր
քան զամենայն պէտք է խնդրել Աստուծ-
մէ զսուրբ յարատևութիւն, մանաւանդ
փորձութեան ատեն, կարդալով ստէպ
զսուրբ անունն Յիսուսի և Մարիամու,
քանի որ փորձութեան մէջ ես։ Թէ որ

այսպէս ընես, ստոյգ գիտցիր որ փրկու-
թեան որդի ես. իսկ եթէ զանցաւութեամբ
քու պարտքերէդ թուլնաս, վայ քեզի։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Սիրելիդ իմ փրկիչ, շնորհակալ եմ քեզ
այն լուսաւորութեանց համար զոր ինձ
կուտաս, և այն միջոցներուն զոր ինձ կը
սորվեցընես զիս փրկելու համար, ես ալ կը
խոստանամ հաստատ ի գործ դնել. օգնէ
ինձ, որ հաւատարիմ մնամ խոստմանս
մէջ. յայտնապէս կը տեսնեմ որ դու զիս
փրկել կ'ուզես, ես ալ փրկուիլ կ'ուզեմ.
մանաւանդ քու սրտիդ հաճոյքը լեցնելու
համար, որ այնչափ կը փափաքիս իմ
փրկութեանս։ Զեմ ուզեր բնաւ ասկից ե-
տև հակառակ ելնել քու սիրոյդ. այն
սէրդ էր որով այդչափ ինձ համբերեցիր.
երբ ես զքեզ կը դառնացընէի, դու զիս
հրաւիրեցիր ի սէր քո, ես ալ կը փափա-
քիմ զքեզ սիրել։ Կը սիրեմ զքեզ, անբաւ
բարութիւն և անհուն բարի. կ'աղաչեմ
վասն արդեանց Յիսուսի օծելոյ քո, մի՛
թողուր որ ես մէյմ՛ալ քեզ ապերախտ
ըլլամ. շնորհք տուր որ կամ ետ կենամ
ապերախտութենէ, կամ մեռնիմ երթամ.

կատարէ, տէր, այն գործը զոր սկսար վասն փրկութեան իմոյ. ինձ լոյս և ուժ տուր, զօրացո իմ սէրս։ Տիրամայր կոյս, որ գանձապետ ես շնորհաց, օգնէ ինձ, զիս քու ծառայութեանդ մէջ հաստատուն պահէ, ինչպէս որ կը փափաքիմ. բարեխօսէ ինձ համար առ Յիսուս, վասն զի նախ արդիւնքը փրկչիս, յետոյ քու բարեխօսութիւնդ զիս պիտոր փրկեն։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԼԲ.

ԱՊԱՒԻՆՈՒԹԻՒՆ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Զիս գտնողը՝ կեանքը գտած կը սեպուհի, ու Աստուծմէ փրկուրիւն պիտի գտնէ [1]։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ո՛րչափ Աստուծոյ շնորհակալ ըլլալու պարտական ենք, որ մեզի փաստաբան տուեր է զՄարիամ, որպէս զի իւր բարեխօսութեամբն առնու մեզի համար ինչ շնորհք որ կը խնդրենք իրմէ. այս է սրբոյն

1 Առակ. Ը. 35. ըստ լատին։

Բոնաւենտուրայի ըսածն. ինչ մեծ գթութիւն և մարդասիրութիւն է Աստուծոյ ըրածն, որ մեզի պէս խեղճերուն զքեզ փաստաբան շնորհեր է. Տիրամայր, որ քու ձեռքդ ինչ որ կ'ուզես կրնաս առնուլ։ Ուրեմն, սիրեցեալ մեղաւոր եղբարք, թէ որ զմեզ մեղապարտ գտնենք ընդդէմ աստուածային արդարութեան և պարտաւոր դժոխոց. չյուսահատինք, այլ դիմենք առ սուրբ Աստուածածինն, իւր հովանւոյն ներքև մտնենք, նա զմեզ փրկութեան կը հասցընէ, բարի դիտաւորութիւն մեզի պէտք է վարքերնիս փոխելու, և բարի դիտաւորութեան հետ մեծ վստահութիւն առ Մարիամ. այսպէս կը փրկուինք, վասն զի Մարիամ փաստաբան է զօրաւոր, բարեգութ, և մեր փրկութեան փափաքով վառուած. նախ մտածենք, թէ Մարիամ է հզօր փաստաբան, որ կրնայ ամէն բան առաջ տանիլ դատաւորին առջև իրեն դիմողներուն համար. այս եզական ձիրք մ'է՝ զոր իրեն տուեր է դատաւորն որ միանգամայն իւր միածին որդին է, և սրբոյն Բոնաւենտուրայի ըսածին պէս, մեծ ձիրք է մարդուս, սուրբ կուսին ամէն բանի կարող ըլլալն իւր միածնին առջև։ Գերսոն ալ կ'ըսէ, թէ բան չիկայ որ պարզապէս խնդրէ Աստուծմէ սուրբ կոյսն և չառնու. և ինքն որպէս դշխոյ հրեշտակները կը զրկէ, որ երթան իւր ջերմեռանդները լուսաւորեն, մաքրազարդեն և կատարելագործեն։ Ուստի եկեղեցին զմեզ վստահացնելու համար ի բարեխօսութիւն տիրամօր, հրամայեր է որ այսպէս աղաղակենք առնա, Կոյս կարող բարեխօսեա վասն մեր. և Մարիամու այսչափ կարողութեան պատճառն յայտնի է. վասն զի է մայր Աստուծոյ։ Այսոր համար ըսաւ սուրբն Անտոնինոս, թէ Աստուածամօր բարեխօսութիւնն իւր հետ իշխանութեան բան մ'ալ ունի, ուստի անկարելի է որ իւր խօսքը չը-կատարուի։ Սուրբ Գրիգոր արքեպիսկոպոս Նիկոմիդեայ առ կոյսն կ'ըսէ. թէ քու որդիդ որպէս թէ իւր որդիական պարտքը վճարելու համար ամէն խնդիրքդ կը կատարէ։ Սուրբն Թէոփիլոս Աղեքսանդրու եպիսկոպոսն ալ այսպէս գրեց. Որդին կ'ախորժի որ մայրն իրմէն բան մը խնդրէ, վասն զի կ'ուզէ ընել ամէն խնդիրքը. այս կերպով ուզելով հատուցումն ընել անկից առած մարմնոյն համար. սուրբն Մեդոտիոս վկայն ալ այսպէս կ'աղաղակէ առ ամենասուրբ կոյսն. ինչ մեծ զարմանալի բան է, կ'ըսէ, որ քու միածինդ պարտական է քեզի, ինչպէս որ մենք ամենքնիս ալ պարտական ենք Աստուծոյ։ Այսոր համար կ'ըսէր Կոզմաս Երուսաղեմացի, թէ ամէն բանի հասնող է քու օգնութիւնդ, սուրբ Աստուածամայր.

պատճառը կու տայ սուրբ Հռիքարտոս Լաւրենտեան. որովհետև նոյն կարողութիւնը կամ իշխանութիւնն է որդւոյ և մօր, ուստի ամենակարող որդւոյն մայրն ալ ամենակարող եղաւ. և ինչ բան որ Աստուած իւր իշխանութեամբ կրնայ ընել՝ նոյնը կրնայն ալ բարեխօսութեամբ։ Սրբուհին Բրիճիտա ալ տեսիլք տեսաւ, որ Յիսուս օր մը խօսելով իւր մօր հետ ըսաւ. մայր իմ՝, ինչ որ կ'ուզես ինձմէ խնդրէ. վասն զի անկարելի է որ քու խնդրուածոցդ մտիկ չընեմ. որովհետև դուն, ըսաւ, երկրիս վրայ իմ ամէն ուզածս կատարեցիր, նմանապէս ես ալ յերկինս քու ամէն խնդրուածդդ պիտի կատարեմ. մէկ խօսքով, չիկայ մարդ մը՝ որչափ մեղաւոր ալ ըլլայ, զոր չիկարենայ Մարիամ փրկութեան հասցընել, իւր բարեխօսութեամբն։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Սիրեցեալդ իմ թագուհի և մայր, սրբոյն Գերմանոսի հետ առ քեզ կ'աղաղակեմ. դու ամենազօր ես ի փրկել զմեղաւորս, և կարօտ չես ուրիշ յանձնարարութեան Աստուծոյ առջև, վասն զի մայր ես հշմարիտ կենաց։ Ուստի տիրուհի իմ, երբ քեզի կը դիմեմ, իմ մեղքերս չեն կրնար անյոյս ընել զիս ի փրկութենէ. դու քու աղանչանքովդ ամէն բան կ'առնուս. ուստի ինձ համար աղաչէ, ես անտարակոյս կը փրկուիմ. բարեխօս եղիր վասն ողորմելւոյս։ Սրբոյն Լեոնարդոսի հետ կ'աղաղակեմ, խօսեաց Տիրամայր, վասն զի կը լսէ քեզ միածին քո, և զոր ինչ խնդրես կ'ընդունիս. իրաւ որ ես մեղաւոր եմ. բայց կ'ուզեմ զիս չտկել, և պարծանք կը սեպեմ քու ծառադ ըլլալս. և թէպէտ արժանի չեմ քու պաշտպանութեանդ, բայց գիտեմ որ դու ոչ երբէք երեսէ ձկեր ես ով որ բոլորովին ի քեզ ապաւիներ է, դու կարող ես զիս փրկել, ես ալ քեզի վստահացեր եմ. երբ ես կորսուած էի և զքեզ չէի յիշեր, դու զիս կը յիշէիր, և ինձ համար շնորհք ալ առիր զգաստութեան, որչափ ևս առաւել հիմայ պիտի վստահ ըլլամ ի քո գթութիւնդ, հիմայ որ զիս նուիրեցի քու ծառայութեանդ. ուստի քեզ կը յանձնուիմ, ի քեզ յուսամ։ Ո՛վ Մարիամ. աղաչէ ինձ համար, և զիս սուրբ ըրէ, առ ինձ համար զսուրբ յարատևութիւն և զսէր առ միածինդ և առ քեզ. մայր ամենասիրելի, ես զքեզ կը սիրեմ իմ արքայուհիս, և յոյս ունիմ որ միշտ զքեզ սիրեմ. դուն ալ զիս սիրէ, կ'աղաչեմ զքեզ, և մեղքերէ սրբելով արժանի ըրէ քու մաքուր սիրոյդ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Այս ալ գիտնանք՝ որ Մարիամ որչափ որ զօրաւոր փաստաբան է, նոյնչափ ալ բարեգութ է, և չի կրնար չպաշտպանել, իրեն ապաւինողը. սուրբ գիրքը կ'ըսէ, թէ Աստուծոյ աչքն արդարոց վրայ է, իսկ աչք տիրամօր՝ Հոլքարտոսի ըսածին պէս թէ արդարոց վրայ է և թէ մեղաւորաց, որ մեզաց մէջ չընկնան, կամ ընկած ալ որ են, կանգնին իր միջնորդութեամբն։ Սուրբն Բոնաւենտուրա կ'ըսէր առ սուրբ կոյսն. քանի որ աչքս քու վրադ կը դարձընեմ, Տիրուհի, ուրիշ բան չեմ տեսներ, բայց միայն ողորմութիւն. սուրբ Բեռնարդոս ալ այսպէս սիրտ կու տայ մեզի. ինչու կը վախնայ մարդկային տկարութիւնը դիմել առ Մարիամ, որուն քով խիստ կամ վախնալու բան մը չիկայ, և բոլորովին քաղցր է։ Սիրաքայ ըսածին պէս, Մարիամ դաշտի մէջ տնկուած գեղեցիկ ձիթենւոյ մը կը նմանի[1]. ձիթենիէն իւղ ձիթոյ միայն կ'ելնէ, որ է նշան գթոյ և ողորմութեան, այսպէս ալ ի Մա-

1 Իբրև ձիթենի վայելուչ ի դաշտի։ Սիր. ԻԴ. 19։

րիամայ ուրիշ բան չելներ, եթէ ոչ շնորհք և ողորմութիւն, զոր կը սփռէ անոնց վրայ, որ իւր ողորմութեան կ'ապաւինին. ուստի աղէկ կ'ըսէ Դիոնեսիոս կարգուսեան, թէ սուրբ Կոյսն է պաշտպան իրեն օգնութեան դիմող յանցաւորաց։ Ո՛րչափ պիտի զղջայ դժոխքի մէջ քրիստոնեայ մը, մտածելով որ այնչափ դիւրաւ կրնար փրկուիլ դիմելով առ մայրն ողորմութեան՝ և չդիմեց, և թէ ատենն ալ անցաւ մէյմ'ալ դիմելու։ Սրբուհւոյն Բրիճիտայի անգամ մի ըսաւ ամենասուրբ Կոյսն. գիս ամէնքը մայր ողորմութեան կը կոչեն, և իրաւ որ ողորմութիւնն Աստուծոյ գիս ողորմած ըրաւ, որ ամենուն փրկութիւնը կ'ուզէ. ուստի ողորմելի կ'ըլլայ ով որ կրցած ատեն չիդիմեր առ ողորմածն։ Զի վախնանք, կ'ըսէ սուրբն Բոնաւենտուրա, թէ Աստուածածնայ օգնութեան ապաւինելու որ ըլլանք՝ ինքը չընդունի, վասն զի ինքը չողորմիլ չի գիտեր, և չէ եղած որ ողորմելեաց չհասնի։ Սուրբն Բեռնարդոս կ'ըսէ առ Կոյսն, դու դշխոյ ես ողորմութեան. և ով է ողորմութեան կարօտ, բայց եթէ ողորմելին. արդ ահա դու ողորմութեան թագուհի ես, և ես յետին ողորմելի մեղաւոր, և յետինը քու ձեռացդ տակ եղողներուն. ուստի դու զմեզ կառավարէ, դշխոյ ողորմութեան։ Այս-

պէս մայր ըլլալով ի հարկէ կը ջանայ իւր հիւանդ զաւակները մահուընէ խլրտել, որովհետև իւր գթած մայր ըլլալը։ Զի տարակուսինք բնաւ սուրբ Աստուածածնայ գթութեան վրայ. որ մը սրբուհին Բրիճիտա լսեց որ փրկիչը կ'ըսէր մօրը. սատանային ալ ողորմութիւն կ'ընէիր թէ որ խոնարհութեամբ ի՛քն ալ ուզեր. որով կ'ուզեր ըսել՝ թէ որչափ մեծ մեղաւոր ըլլայ մէկը, երբ կը դիմէ առ կոյսն, անոր մեղքը չի նայուիր, հապա սիրտը, և թէ ինչ հոգւոյ կու գայ. թէ որ կամք ունի զինքը շտկելու, սիրով կ'ընդունի և անոր ամէն վէրքը կը բժշկէ։ Ուստի այսպէս քաջալերութիւն կու տայ Ս. Բոնաւենտուրա. տիրամօր օգնութեան ընկէք, մեղաւորք, զձեզ ինքը կը հասցընէ խաղաղութեան նաւահանգիստը։ Ուստի կ'աղաղակէ Ս. Բեռնարդոս, թէ շնորհք խընդրենք Աստուածմէ Մարիամու ձեռքով. Հռիքարտոս ալ կ'ըսէ, թէ որ կ'ուզենք շնորհք գտնել, զայն խնդրենք որ Աստուծոյ առջև շնորհք գտաւ, որուն Գաբրիէլ աւետիս տալու ատեն ըսաւ, թէ Մի երկնչիր, Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ, որովհետև կոյսը միշտ շնորհաք լի էր։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ահա Տիրամայր, ոտքդ ընկած է ինձ պէս մեղաւորն, որ չէ թէ մէկ անգամ, հապա շատ անգամ ուզեր է կորսընցնել զայս աստուածային շնորհքը, զոր քու միածինդ ստացեր էր իւր մահուամբ։ Ո՛վ մայր ողորմութեան, քեզի ապաւիներ եմ իմ վիրաւոր հոգւովս, բայց և դու մի բարկանար ասոր համար, այլ աւելի ցաւակից եղիր, և օգնէ ինձ, տես որ ի քեզ եմ ապաւինեալ. և երեսէդ զիս մի՛ ձգեր։ Զեմ ուզեր քեզմէ աշխարհիս բարիքը, հապա զշնորհս Աստուծոյ և զսէր որդւոյ քոմայր իմ, ազաչեա վասն իմ, և ազաչելէն մի՛ դադրիր։ Արդիւնք փրկչիս և քու բարեխօսութիւնդ զիս պիտի փրկեն. քու պաշտօնդ է միջնորդ և բարեխօս ըլլալ մեղաւորաց համար, ով փաստաբան մեր. կը գոչեմ առ քեզ սրբոյն Թովմայի Վիլլանովացւոյ հետ թէ Զպաշտօն քո կատարեա. Աստուծոյ յանձնէ զիս և պաշտպանէ։ Դատ մը չի կայ որ յուսահատելի ըլլայ և կորսուի, երբ դու պաշտպան կեցեր ես, դու ես իմ յոյսս և ամենայն մեղաւորաց ապաւէնն։ Ո՛վ տիրամայր, իմ պարտքս է ծառայել քեզ, սիրել զքեզ և առ քեզ

դիմել միշտ. դու ալ օգնէ ինձ, մանաւանդ երբ գիս կը տեսնես ի վտանգի նորէն կորսընցնելու Աստուծոյ շնորհքը։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Գանք զայս ալ մտածելու, թէ սուրբ կոյսն ոչ միայն բարեգութ փաստաբան է, և ձեռք կը դնէ իրեն ապաւինողաց վրայ, հապա ինքը կ'ելնէ կը փնտռէ ողորմելի անձինքը, որպէս զի անոնց պաշտպանութիւն ընէ, և փրկութեան հասցընէ։ Նայէ թէ ինչպէս կը հրաւիրէ զմեզ ըսելով։ Ինձ ամենայն յոյս կենդանութեան և զօրութեան[1]. ուր կ'ըսէ Ջերմեռանդն և երանելին Բեռնարդոս, զամենայն կոչէ զարդարս և մեղաւորս։ Արդոյն Պետրոսի ըսածին պէս, մեր թշնամին սատանան անդադար կը պտրտի՝ թէ զով կլլէ[2]. բայց ինչպէս որ կ'ըսէ Բեռնարդոս Հուստեան, սուրբ կոյսն ալ ընդհակառակն ամէն հնարք կ'ընէ՝ թէ զով փրկէ։ Մարիամ մայր է ողորմութեան, վասն զի այն գըթո

տի չծուլանանք մեր ամէն պիտոյից ա-
տեն դիմել առ Աստուածամայրն, որ միշտ
պատրաստ կեցած է օգնել խնդրողին։ Եւ
ինչպէս սուրբ վարդապետք կը հաստա-
տեն, ինքն աւելի կ'ուզէ մեզի բարիք ընել
և շնորհք տալ, քան որչափ մենք առնուլ
կը փափաքինք. ուստի երբ իրեն կը դի-
մենք, իւր շնորհաց գանձարանը բաց կը
գտնենք։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ տիրամայր, ահա ոտքիդ առջևն ըն-
կած է ինձ պէս ողորմելի գերի մը դժո-
խոց և քու գթութիւնդ կը խնդրէ. իրաւ
որ ես բարւոյ մը արժանի չեմ, բայց դու
մայր ես ողորմութեան, և քու գութդ ան-
արժաններուն վրայ ալ կը ցուցընես. բո-
վանդակ աշխարհ զքեզ կը կոչէ յոյս և
ապաւէն մեղաւորաց. ուստի դու ես իմ
ապաստանս և ակնկալութիւնս. ես մոլո-
րեալ ոչխար մըն եմ, և այսպէս ոչխարնե-
րը խալրսելու համար եկաւ յերկնից Բանն
յաւիտենական և քու որդիդ եղաւ. և
կ'ուզէ որ ես առ քեզ դիմեմ, դու ալ օգնես
ինձ քու աղաչանօքդ։ Սրբուհի Մարիամ
մայր Աստուծոյ, բարեխօսեա վասն մեր
մեղաւորացս։ Ո՛վ գերահրաշ մայր Աս-

տուծոյ, որ ամենուն համար կ'աղաչես,
ինձ համար ալ աղաչէ միածնիդ. ըսէ ի-
րեն, թէ սա ալ իմ ջերմեռանդս է, որով-
հետև ինձ պաշտպանութիւն կ'ընես, ըսէ
թէ սա իւր յոյսն իմ վրաս է դրեր. և ըսէ
որ ներէ ինձ, և ես ալ կը զղջամ իրեն
դէմ ըրած յանցանքներուս վրայ. խնդրէ
որ պարգևէ ինձ իւր ողորմութեամբն ըզ-
սուրբ յարատևութիւն. տայ ինձ շնորհ
սիրելոյ զԱստուած յամենայն սրտէ. մի
լռեր, տիրամայր, ես չեմ տարակուսիր որ
քու խնդրուածոցդ ձայնը լսելի կ'ըլլայ
իրեն։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԼԳ.

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐՆ

ԶԱստուած սիրենք, վասն զի նախ ինքն սիրեց զմեզ [1].

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Նախ զայս մտածէ, թէ պէտք է որ զԱստուած սիրենք, վասն զի ինքն առաջ զմեզ սիրեց. դու զԱստուած չսիրեցիր, այլ Աստուած զքեզ սիրեց. Յաւիտենական սիրով սիրեցի զքեզ [2], ըստ Երեմիա մարգարէին բերնով։ Աշխարհիս վրայ զքեզ առաջին սիրողն եղան քու ծնողքդ. բայց երբ. զքեզ ծնանելէն և ճանչնալէն յետոյ,

1 Սիրեսցուք զԱստուած, վասն զի Նա նախ սիրեաց զմեզ։ Ա. Յովհ. Դ. 19։

2 Սէր յաւիտենական սիրեցի զքեզ։ Երեմ. ԼԱ. 3։

և սակայն քու ըլլալէդ առաջ Աստուած զքեզ կը սիրէր. դեռ աշխարհիս երեսը չիկար ոչ հայրդ, ոչ մայրդ, աշխարհս ալ դեռ չէր ստեղծուած. և Աստուած զքեզ կը սիրէր։ Արդեօք աշխարհիս ստեղծուելէն հազար տարի ալ առաջ, հազար դարեր առաջ. ինչ կ'ըսես, սիրելի եղբայր. ինչ հազարաւոր տարիներէ և դարերէ, այլ ի յաւիտենից. Սէր յաւիտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ի գթութիւն ձգեցի զքեզ. մէկ խօսքով, քանի որ Աստուած Աստուած է, զքեզ միշտ սիրած է. քանի որ զինքը կը սիրէր՝ զքեզ ալ սիրեր է։ Ուստի իրաւամբ կ'ըսէ սրբուհին Ագնէս, ուրիշ սիրող ունիմ ես, ամենէն առաջ ինքն զիս սիրեց, ուստի արժան է որ ամէն բանէ աւելի ես ալ զինքը սիրեմ։

Ուրեմն, ով եղբայր, ի յաւիտենից սիրեր է զքեզ Աստուած, և միայն իւր սիրովն զքեզ դուրս հաներ է անհամար մարդկանց միջէն զորս կրնար ընել, և տուեր է քեզ գոյութիւն, և աշխարհիս մէջ դրեր է. քու սիրոյդ համար ալ ըրեր է այնչափ գեղեցիկ արարածներ, որպէս զի քեզ ծառայեն, և յիշեցնեն քեզ զէրն՝ զոր քու վրադ ունի, ասոր համար դու իրեն պարտական ես. սրբոյն Օգոստինոսի ըսածին պէս, երկինքն և երկիրս և ամենայն արարածք կը յորդորեն զմեզ որ զԱստուած սիրենք։ Լուսակացից հիմնադիրն

երբ կը նայէր լերանց և բլրոց վրայ, աղ-
բիւրներուն և ծաղկներուն վրայ, կ'ըսէր
թէ այս ամենն ինձ կը յիշեցնեն զսէրն՝
զոր Աստուած վրաս ունի. սրբուհին Թե-
րեզա ալ կ'ըսէր, թէ արարածք երեսս կը
զարնեն իմ Աստուծոյ դէմ ըրած ապե-
րախտութիւնս։ Աւելի մտածէ Աստուծոյ
մասնաւոր սէրն, որով զքեզ քրիստոնեայ
և իւր ճշմարիտ հաւատոց հետևող ըրեր է։
Ո՛րչափ մարդիկ կը ծնանին ի մէջ կռա-
պաշտից, հրէից, բարբարոսաց, հերետի-
կոսաց, որոնց ամէնքն ալ կը կորսուին,
քիչ են անոնք՝ որ իրենց շնորհք եղեր է
ծնանիլ ի ճշմարիտ հաւատս, և այս քիչե-
րուն մէջ Աստուած զքեզ ալ ընտրեր է.
ի՜նչ մեծ պարգև է հաւատոց շնորհքն։
Քանի՞ միլիոնաւոր անձինք զուրկ են ի
սուրբ խորհրդոց, ի քարոզից, ի բարի օ-
րինակաց, և ուրիշ ամէն փրկութեան մի-
ջոցներէն. և այս ամէն մեծամեծ նպաստ-
ները Աստուած քեզ տուեր է առանց քու
արժանաւորութեանդ. մանաւանդ թէ
տեսնելով յառաջուց քու անարժանու-
թիւնդ վասն զի դեռ զքեզ չատեզծած և
այս շնորհքները քեզի շրջած՝ կը տեսնէ թէ
որչափ պիտի անիրաւիս իրեն դէմ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ գերագոյն տէր երկնի և երկրի,
անհուն բարի, անսահման մեծվայելչու-
թիւն, դու որ այսչափ սիրեր ես զմարդիկ,
ինչպէս իրենք զքեզ կ'անարգեն. այս
մարդկանց մէջն ալ, Աստուած իմ, զիս
մասնաւոր կերպով սիրեցիր, այնպէս ա-
ռանձին շնորհքներ ընելով որ չատին չես
ըրած. իսկ ես քան զայլս աւելի զքեզ ա-
նարգեր եմ։ Ոտքդ կ'ընկնամ, փրկիչ իմ
Յիսուս. Մի ընկենուր զիս տէր յերեսաց
քոց[1]. արժան էր որ զիս վռնտէիր իմ
ապերախտութեանցս համար, այլ դու ը-
սիր, թէ ով որ ինձ կու գայ դուրս չեմ հա-
ներ զինքն[2]։ Յիսուս փրկիչ իմ, կը զղջամ
զքեզ դառնացնելուս վրայ. յառաջուց ըզ-
քեզ չճանչցայ, հիմայ իսկապէս զքեզ ինձ
տէր կը ճանչնամ, ով փրկիչ իմ, որ զիս
փրկելու և ինձ սիրելի ըլլալու համար մե-
ռար։ Ո՜հ, տէր իմ, երբ պիտի դադրիմ
քեզ ապերախտ ըլլալէս, երբ պիտի սկը-
սիմ իսկապէս զքեզ սիրել, ահա այս օրէս

1 Սղ. Ծ. 13։
2 Որ գայ առ իս ոչ հանիցս արտաքս։ Յովհ.
Զ. 37։

կ'առաջադրեմ սիրել զքեզ ի բոլոր սրտէ, և ուրիշ բան չսիրել քեզմէ զատ. ոչ անսահման բարութիւն, քեզ երկիր պագանեմ ընդ ամենայն երկրպագուս քո և զքեզ կը սիրեմ ընդ ամենայն սիրելիս քո, ի քեզ հաւատամ, ի քեզ յուսամ, զքեզ կը սիրեմ, զիս բոլորովին քեզ կը նուիրեմ. օգնէ ինձ քու շնորհքդ։ Տէր, դու գիտես իմ տկարութիւնս, և սակայն այնչափ շնորհք ըրիր քանի որ ես զքեզ չէի սիրեր. և չէի փափաքեր զքեզ սիրելու, ուրչափ աւելի հիմայ պէտք է յոյս ունենամ քու ողորմութեանդ, որովհետև զքեզ կը սիրեմ, և ուրիշ բանի մը փափաք չունիմ, բայց միայն զքեզ սիրելու։ Տուր ինձ, տէր, զսէր քո, զայն սէր եռանդագին՝ որ ամէն արարածական մխիթարութիւն ինձ մոռցընել տայ, սէր զօրաւոր՝ որով կարենամ ոտքի տակ առնել ամէն դժուարութիւնք քու կամքդ ընելու համար, սէր մշտնջենաւոր՝ որ ասկից ետև անլուծանելի պահէ զիս իմ փրկչիս հետ։ Ամէն բանի յոյս ունիմ քու արդեամբդ, փրկութիւն իմ Յիսուս, և ամէն բանի յոյս ունիմ քու բարեխօսութեամբդ սուրբ Աստուածածին։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Չէ թէ միայն այնչափ գեղեցիկ արարածներ մեզ պարգևեց Աստուած, այլ բաւական չսեպեց ամէն բանը, ինչուան որ զինքն ալ մեզի չիտայ։ Անիծած մեղքն կորսընցնել տուեր էր մեզ Աստուծոյ շնորհքն ալ, արքայութիւնն ալ, և գերի ըրեր էր զմեզ դժոխոց, և որդին Աստուծոյ զարմացնելով զերկինս և զրնութիւն ուզեց յոյս երկիրս գալ և մարդ ըլլալ, որ զմեզ խալըսէ յաւիտենից մահուանէ, և նորէն պարգևէ մեզի զարքայութիւն, զոր կորուսեր էինք։ Այս ինչ զարմանալի բան է որ թագաւոր մը գայ որդ մ'ըլլայ որդերուն համար. անչափապէս մենք պիտի զարմանանք, որ Աստուած գայ մարդ ըլլայ մարդկանց համար. Զանէն ունայցացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ.. կերպարանաւք գտեալ իբրև զմարդ [1]. և այնպէս Բանն մարմին եղև և բնակեցաւ ի մեզ [2]։ Աւելի մեծ զարմանք այն է տեսնել, թէ ինչ ըրաւ և ինչ քաշեց մեր սիրոյն համար։ Զմեզ փրկելու համար բա-

1 Փիլ. Բ. 7։
2 Յովհ. Ա. 14։

ական էր իւր մի միայն արեան կաթիլը, կաթիլ մը արցունքը, և մէկ սոսկ աղօթքն. վասն զի իւր աղօթքն անհուն էր արժողութեամբ, ուստի բաւական էր փրկելու բոլոր զաշխարհս և այլ ուրիշ անբաւ աշխարհներ։ Բայց նայէ ինչ կ'ըսէ Ոսկեբերան. Որ ինչ բաւական էր վասն գընոց չէր բաւական վասն սիրոյ. ուստի ամէն բան քաշեց, սաստիկ դառն մահ ալ, որ հասկըցնէ իւր անբաւ սէրն որով վառուած էր մեզի համար։ Խոնարհեցոյց զանձն՝ լեալ հնազանդ մահու չափ, և մահու խաչի [1]։ Ա՜հ, որչափ մեծ էր Աստուծոյ սէրն, որուն չի համեմատիր բոլոր հրեշտակաց և մարդկանց սէրն. սրբոյն Բոնաւենտուրայի ըսածին պէս, չափազանց էր Յիսուսի ցաւն, չափազանց էր սէրն ալ։ Թէ որ փրկիչն՝ Աստուած չըլլար, հապա մէկ պարզ մեր բարեկամը կամ ազգականը, ինչ աւելի սէր և գութ կրնար մեզի ցուցընել քան մեռնելով մեզի համար. Մեծ ևս քան զայս սէր ոչոք Մուն եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց [2]։ Թէ որ Յիսուս մեռած ըլլար իւր հայրը խալըսելու համար, ինչ աւելի կրնար ընել անոր սիրոյն համար. Թէ որ դու, ով մարդ, Աստուած մ'ըլ-

1 Փիլ. Բ. 8։
2 Յովհ. ԺԵ. 13։

լայիր և Յիսուսի արարիչն, ինչ աւելի կրնար ընել քեզի համար, ինչպէս իւր կեանքը զոհել անարգանաց և ցաւոց ծովուն մէջ։ Թէ որ երկրիս ամենէն անարգ մարդն ըրած ըլլար քեզի համար ինչ որ Քրիստոս ըրաւ, կրնայիր զինքը չսիրել։ Հիմայ ի՞նչ կ'ըսես, կը հաւատաս դու ի մարդեղութիւն և ի մահ Քրիստոսի. կը հաւատաս և չես սիրեր. կրնաս ուրիշ բան մը սիրել առաւել քան զՔրիստոս, գուցէ կը տարակուսիս թէ ինքը զքեզ չի սիրեր։ Սուրբն Օգոստինոս կ'ըսէ. Քրիստոս անոր համար եկաւ, որ մարդս ճանչնայ թէ որչափ զինքը կը սիրէ Աստուած, մարդեղութենէն առաջ կրնար մարդ տարակուսիլ՝ թէ արդեօք Աստուած սրտանց զիս կը սիրէ՞, բայց յետ մարդեղութեան և մահուան Քրիստոսի, ինչպէս կրնար մէկը տարակուսիլ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Յիսուս փրկիչ իմ, կը տեսնեմ որ քու բոլոր բանդ ուրիշ բան չէ, եթէ ոչ ստիպել զիս հարկաւ զքեզ սիրելու. զայն ալ կը տեսնեմ որ իմ ապերախտութիւնս զքեզ կը ստիպէ որ զիս մոռնաս և երեսէ ձգես. օրհնեալ լիցի միշտ քու երկայնմը-

տութիւնդ, որով ինձ այդչափ համբերեցիր։ Արժան էր որ ինձ համար դատ դժոխք մ'ըլլար. միայն քու մահդ ինձ վստահութիւն կու տայ։ Տուր ինձ լաւ ճանչնալ քու արդիւնդ, ով անբաւ բարի, թէ որչափ սիրելի ես, և իմ պարտքս զքեզ սիրելու։ Ես արդէն գիտէի, Յիսուս իմ, որ դու ինձ համար մեռար, և եւքն ի՞նչպէս կըրցայ, Աստուած իմ, ապրիլ այնչափ տարի առանց զքեզ սիրելու։ Ահա, թէ կարենայի նորէն ապրիլ նոյն տարիները՝ զիս բոլոր քեզի տալով, բայց որովհետև տարիները դառնալու պէս չեն, գոնէ շնորհք տուր որ մնացած կեանքս ի սէր քո անցընեմ և ի հաճութիւն քո. սիրելիդ իմ փրկիչ. ես զքեզ յամենայն սրտէ կը սիրեմ. աւելցուր այս սէրս. յիշէ միշտ ինչ որ ինձ համար ըրիր, և մի թողուր որ մէյմ'ալ ապերախտ ըլլամ քեզի. քու լիցի, չեմ ուզեր մէկ մ'ալ դէմ կենալ ինձ տուած լուսաւորութեանդ։ Դու կ'ուզես ինձմէ սիրուիլ, ես ալ զքեզ կ'ուզեմ սիրել. և ի՞նչ բան պիտի սիրեմ բաց ի քէն, Աստուած իմ, անբաւ գեղեցկութիւն, անբաւ բարութիւն։ Աստուած մարդացեալ և մահացեալ վասն իմ, Աստուած որ այնչափ երկայնմտութեամբ ինձ համբերեցիր, և զիս պատժելու տեղն՝ ըստ արժանեացս, պատիժը փոխեցիր ի շնորհս և ի բարիս։ Ուստի զքեզ միայն կը սիրեմ, Աստուած իմ, որ ար-

ժանի ես անհուն սիրոյ, ուրիշ բանի չեմ ցանկար, ուրիշ բան չեմ ուզեր, ապրիլ ալ չեմ ուզեր ուրիշ բանի համար, բայց միայն զքեզ սիրելու, մոռնալով զայլ ամենայն բան որ դու չես։ Ո՛վ անսահման սէր տեառնդ իմոյ, դու օգնութեան հասիր այս հոգւոյս, որ սրտանց կը հառաչէ և կը փափաքի բովանդակ քուկդ ըլլալ։ Զեռն տուր ինձ, ով դշխոյ Աստուածամայր Մարիամ, քու բարեխօսութեամբդ. աղաչէ զՅիսուս՝ որ զիս իրեն արժանի ընէ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Զարմանքս կը շատնայ տեսնելով Յիսուսի մեզի համար ունեցած չարչարուելու և մեռնելու փափաքը. Մկրտութիւն մի ունիմ մկրտիլ և զիարդ փութամ մինչև կատարեսցի [1]. արիւնովս պիտոր մկըրտուիմ, կ'ըսէր, և այնչափ կը փափաքիմ շուտով չարչարուիլ և մեռնիլ, որպէս զի մարդիկ ալ շուտով ճանչնան իրենց վրայ ունեցած սէրս. նոյն էր ըսելն ալ. Ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ [2]։ Ո՛վ Յիսուս իմ, մարդիկ զքեզ

1 Ղուկ. ԺԲ. 50։
2 Ղուկ. ԻԲ. 15։

անոր համար չեն սիրեր, վասն զի չեն մը-
տածեր այն սէրը՝ զոր դու իրենց ցուցիր։
Այլ, տէր Աստուած, մէկն որ միտքը բե-
րէ, թէ Աստուած իրեն համար մեռեր է,
և մեռնիլ ուզեր է որ մարդկանց իւր սէրը
յայտնի ցուցնէ, ի՞նչպէս կարելի է որ
ապրի առանց զինքը սիրելու. Սէրն Քրիս-
տոսի ստիպէ զմեզ [1], կ'ըսէ Պօղոս առա-
քեալ. չէ թէ այնչափ իւր ըրածն և քա-
շածը, որչափ իւր սէրը՝ զոր ցուցուց չար-
չարուելով մեզի համար, այս կը ստիպէ և
կը բռնադատէ զմեզ՝ որ զինքը սիրենք։
Զայս մտածեով սուրբն Լաւրենտիոս
Ցուստինեան կ'ըսէ. Տեսանեմք զիմաս-
տութիւնն յիմար եղեալ առ սաստկու-
թեան սիրոյ։ Այսպէս յիմարեալ ձևա-
ցաւ Աստուածորդին յանչափութենէ սի-
րոյ իւրոյ առ մեզ. և ո՞վ կրնար հաւատալ,
թէ որ հաւատքը չըսէր, թէ Արարիչն
յանձն էառ մեռանիլ վասն արարածոց
իւրոց։ Ի՞նչ էր արդեօք Յիսուսի այսչափ
սիրոյն պատճառն. ահ, ուրիշ բանի հա-
մար չէր, բայց միայն որ իւր ցուցած սի-
րովն ամենուս սիրտը շահի. Վասն այսո-
րիկ Քրիստոս ի վերայ ամենայնի մեռաւ
և յարեաւ, զի մեռելոց և կենդանեաց
առ հասարակ տիրեսցէ [2]։ Ուստի սուր-

1 Բ. Կոր. Ե. 14։
2 Բ. Կոր. Ե. 15։

բերը նայելով ի մահն Քրիստոսի՝ թեթև
սեպեցին իրենց կեանքը տալ վասն սիրոյն
Աստուծոյ, որ այսպէս մարդասէր է. քա-
նի՛ քանի ազնուականք, իշխանք և թագա-
ւորք, թողուցին իրենց ազգականները,
հայրենիքը, հարստութիւնը, թագաւորու-
թիւնն ալ, և վանքերը ճգնեցան որ կեան-
քերնին անցընեն Քրիստոսի սիրոյն հա-
մար միայն. որչափ մարտիրոսներ իրենց
կեանքը զոհեցին, որչափ կոյս աղջկունք
հրաժարելով մեծերուն պսակէն, փափա-
քանօք ի մահ դիմեցին, որ կերպով մը
վճարք ընեն սիրոյն Աստուծոյ մահացելոյ
առ սէր իւրեանց, հապա դու ի՞նչ ըրած
ես ինչուան հիմայ Քրիստոսի սիրոյն հա-
մար։ Ինչպէս որ ինքը մեռաւ սուրբերուն
համար, Սրբոյն Լաւրենտիոսի ըսենք,
Սուրբ Լուչիայի, Սուրբ Ագնեսի՝ այսպէս
ալ քեզի համար մեռաւ, ուրեմն գոնէ մը-
նացած կեանքիդ մէջ՝ զոր Աստուած քեզի
կու տայ զինքը սիրելու համար, ձեռքէդ
եկածն ընես. այս օրէս սկսեալ միշտ նայէ
խաչելութեան վրայ՝ յիշելով այն սէրը՝ զոր
քեզի ցուցեր է, և ըսէ. Ահ, տէր Աս-
տուած իմ, դու ինձ համար մահ յանձն
առեր ես։ Գոնէ այսչափս ըրէ, այն ատեն
չես կրնար չշարժիլ քաղցր սիրով, այլ կը
ստիպուիս սիրել զԱստուած, որ այնչափ
զքեզ սիրեր է։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ սիրելի փրկիչ իմ, իրաւ է որ անոր համար զքեզ չեմ սիրած, վասն զի միտքս չեմ բերած այն սէրը զոր դու ինձ ցուցիր։ Յիսուս փրկիչ իմ, ես քեզի դէմ շափէ դուրս ապերախտ գտնուեցայ, դու կեանքդ տուիր ինձ համար դառն և սոսկալի մահուամբ քան զամէն մահ, իսկ ես չճանչցայ զքեզ, չուզեցի ալ միտքս բերել. ներէ ինձ, ես խօսք կու տամ այս օրէս, ով տէր իմ խաչեալ, որ դու միայն ըլլաս իմ մտածելիքս, մէկ հատիկ խորհուրդս և յժարութիւնս։ Ուստի երբ սատանան և աշխարհս զիս կը դրդեն արգիլած բանի մը, կ'աղաչեմ դու ինձ օգնութեան հասիր, փրկիչ իմ. յիշեցուր ինձ իմ սիրոյս համար քաշածներդ, որպէս զի ես կապուիմ ի սէր քո, և մէյմ'ալ ըզքեզ չվշտացնեմ. թէ որ իմ մէկ ծառայս ինձ այնչափ բան ըրած ըլլար՝ ինչպէս դու ըրիր, կը համարձակէի անոր կամաց դըպչիլ. և ահա ես յանդգնեցայ այնչափ անդամ երես դարձնել քեզ, որ ինձ համար մեռար։ Ո՛վ բոց աստուածային սիրոյ, որ զԱստուած ստիպեց իւր կեանքը տալու ինձ համար, վառէ բորբոքէ իմ բոլոր

սիրտս, և փճացուր զամէն յժարութիւն արարածոց. ով սիրելի փրկիչս, ինչպէս կարելի է որ մէկը զքեզ մտածէ կամ ի մուրն Ներզեհեմի կամ ի վերայ խաչին ի Գողգոթա կամ ի սեղան սուրբ խորհրդոյ, և քու սիրովդ չվառուի։ Շատ եղան այն դժբաղդ տարիներն, որոց մէջ թշուառարար ապրեցայ առանց յիշելու քու չարչարանքդ և քու սէրդ, հիմայ զիս բոլոր քեզ կու տամ. ու թէ որ չեմ գիտեր ըստ արժանւոյն զիս նուիրել, դու զիս պիտի բռնէ, և բոլորովին թագաւորէ սրտիս վրայ. Եկեսցէ արքայութիւն քո[1]։ Ուրիշ բանի ծառայ չըլլամ, բայց միայն քու սիրոյդ. ուրիշ բանի խելքս չիտամ չհառաչեմ, բայց միայն զքեզ սիրել և ըզքեզ հաճեցնելու։ Դու ինձ մեծ եղիր միշտ քու շնորհօքդ, որպէս զի հաւատարիմ մնամ առ քեզ։ Ի քո արդիւնս ապաւիներ եմ, Յիսուս, և դու մայր սիրոյ, շնորհք տուր ինձ սիրելու զմիածինդ, որ այնչափ սիրելի է և այնչափ զիս սիրեր է։

1 Ղուկ. Զ. 2։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԼԴ.

ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Առէք ու կերէք, այս է իմ մարմինս[1].

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գանք նայինք մեծ պարգևիս սուրբ խորհրդոյ հաղորդութեան, տեսնենք ըզմեծ սէրն՝ զոր Յիսուս ցուցուց այս պարգևովս, զմեծ փափաքն Յիսուսի, որով պիտի ընդունինք այս իրեն պարգևը։ Նախ և առաջ, մտածենք զմեծութիւն պարգևիս՝ զոր ըրաւ մեր փրկիչը բովանդակ մեզ ի կերակուր սուրբ հաղորդութեամբս. Սուրբ Օգոստինոսին ըսածին պէս, նա որ ամենակարող էր, չէր կրնար աւելի բան

1 Առէք կերայք. այս է մարմին իմ. Մատ. ԻԶ. 26։

մը տալ. սուրբ Բեռնարդոս Սենացին ալ կ'ըսէր, թէ ալ ինչ աւելի աղէկ գանձ կրնար ըլլալ մարդուս սրտին մէջ քան զՔրիստոսի մարմինն։ Ի՞նչ կ'ըսէ մարգարէն. Օրհնեցէք զտէր, հնչեցէք զանուն նորա, պատմեցէք ի հեթանոսս զփառս նորա[1]։ Թէ որ մեր փրկիչն այս շնորհքս չընէր, ո՞վ կրնար զայդ իրմէ խնդրել, ո՞վ կը համարձակէր բնաւ իրեն ըսել, տէր, եթէ կ'ուզես որ մենք քու սէրդ ճանչնանք, զիր զքեզ հացի ներքև, և թող տուր որ մենք կարենանք կերակրի պէս զքեզ ուտել. այսպէս բան խելքէ ալ անցընել յիմարութիւն էր։ Քրիստոս երբ յայտնեց աշակերտելոց Հրէից այս պարգևս զոր պիտի թողուր՝ այսինքն, սուրբ հաղորդութիւնը, անոնք չկրցան բնաւ հաւատալ, հեռու գացին իրմէ, ըսելով. Զի՞նչ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել... խիստ է բանդ այդ, ո՞վ կարէ լսել դմա[2]։ Բայց այն բանն որ մարդկանց խելքէն չէր կրնար անցնիլ, խորհեցաւ և գործադրեց մեծ սէրն Քրիստոսի։ Սուրբն Բեռնարդոս կ'ըսէ, թէ այս խորհուրդս Քրիստոսի սիրոյն յիշատակն է. զայս հակըցուց ինքը տէրն ալ ըսելով, թէ հաղորդութեան խորհուրդն իրրև իմ

1 Եսա. ԺԲ. 4։
2 Յովհ. Զ. 53. 61։

յիշատակս պահեցէք։ Բաւական չսեպեց իւր սիրոյն կեանքը զոհել մեզի համար, այլ մահէն առաջ այս սիրոյ շնորհքը մեզ ընել հաճեցաւ. և այս Քրիստոսի բրածներուն մէջ ամենէն մեծն է. Սուրբ Փրանկիսկոս Սալեզեան կ'ըսէ, թէ ի՞նչ մեծ բան երևէր պիտի մեզի, թէ որ թագաւոր մը սեղան նստած իւր պնակէն բաժին մը գրկէր խեղճ աղքատի մը. հապա օրշափ մեծ բան էր՝ թէ որ բովանդակ իւր սեղանն անոր գրկէր. իսկ օրշափ աւելի, թէ որ կտոր մը կտրէր իւր թևէն, և անոր տար որ ուտէ։ Արդ Յիսուս ի սուրբ հաղորդութեան մեզ կերակուր կու տայ, չէ թէ բաժին մը իւր սեղանէն, և ոչ կտոր մը իւր մսէն, հապա իւր բովանդակ մարմինը. Ահէք կերայք այս է մարմին իմ[1]։ Մարմնոյն և արեան հետ ալ կու տայ մեզ իւր հոգին և իւր աստուածութիւնը։ Ուստի կ'ըսէ սուրբ Ոսկերերան. բոլորն ալ քեզի տուաւ, և իրեն բան մը չպահեց. այս է սրբոյն Թովմայի ըսածն ալ, թէ Աստուած ի հաղորդութեան բոլոր իւր ունեցածը մեզ տուաւ. և սուրբն Բոնաւենտուրա զարմացմամբ մի ըսաւ. ահա զոր աշխարհս ոչ կարէ տանել, մեզի գերի մը եղաւ. արդ եթէ տէրն ի հաղորդութեան

1 Մաա. ԻԶ. 26։

զինքը բոլոր մեզի կու տայ. ալ ի՞նչպէս կրնանք տարակուսիլ՝ թէ ինչ շնորհք որ ուզենք չտայ մեզի. Զիարդ ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ[1]։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ Յիսուս իմ փրկիչ, ո՞վ տիպեց ըզքեզ որ բոլոր ինք զինքդ մեզի կերակուր տաս, ալ ի՞նչ աւելի ունէիր տալու՝ որ զմեզ պարտաւորես ի սիրել զքեզ։ Ո՛վ Աստուած իմ, լոյս տուր մեզ որ կարենանք ճանչնալ, թէ ինչ չափազանց բան է այս որ մեզի կերակուր ընես զքեզ. որպէս զի միանաս մեզի պէս խեղճ ողորմելի մեղաւորներուն հետ. արդ եթէ դու զքեզ բովանդակ մեզ կու տաս. իրաւունք է որ մենք ալ զմեզ բովանդակ քեզի տանք։ Ո՛հ փրկիչ իմ, հապա ես ի՞նչպէս կրցայ զքեզ դաւնացնել, որ այսչափ զիս սիրեցիր, և դու բան չի թողուցիր որ չընես, իմ սէրս շահելու համար։ Մարդացար վասն իմ, մեռար վասն իմ, և դու ինքդ ինձ կերակուր եղար. արդեօք ուրիշ բան մնաց ընելիք. զքեզ կը սիրեմ, ո՛վ անբաւ բարութիւն. զքեզ կը սիրեմ, ո՛վ անբաւ

1 Հռ. Ը. 32։

սէր. տէր իմ և Աստուած, ստէպ իմ սիրտս եկուր և բորբոքէ սուրբ սիրովդ. ընորհք տուր ինձ որ զիս բոլորովին մոռնամ, ոչ ուրիշ բան մտածեմ և ոչ ուրիշ բան մը սիրեմ քեզմէ զատ։ Աստենասրբուհիդ Մարիամ, բարեխօս եղիր ինձ համար, և քու միջնորդութեամբդ արժանի ըրէ զիս շատ անգամ ընդունելու զմիածինդ ի սուրբ հաղորդութեան։

ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ

Անգամ մ'ալ նայինք, թէ այս ինչ մեծ սէր է՝ զոր ցուցուց փրկիչն այս խորհրդով։ Սուրբ հաղորդութիւնն է բովանդակ սիրոյ պարգև մը. հարկ էր մեր փրկութեան համար ըստ վճռոյն Աստուծոյ՝ որ փրկիչը մեռնէր, և պատարագելով իւր կեանքը՝ մեր մեղաց վճարում մ'ընէր աստուածային արդարութեան, բայց ինչ հարկ կար որ Քրիստոս մեռնելէն զատ զինքը մեզ կերակուր թողուր, և ահա սէրն զայս ուզեց։ Սուրբն Լաւրենտիոս Յուստինեան կ'ըսէ, թէ տէրն մեր ուրիշ բանի համար չի հաստատեց զխորհուրդ հաղորդութեան, եթէ ոչ յայտնի նշան գերազանց սիրոյ իւրոյ. այս է Յովհաննէս աւետարանչի գրածն ալ. Գիտաց Յիսուս եթէ

հասեալ է ժամ նորա, զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր, սիրեաց զիւրսն, ի սպառ սիրեաց զնոսա [1], այսինքն, իրեն մեծ սէրը ցըցուց՝ սահմանելով զխորհուրդ սուրբ հաղորդութեան, ուստի այսպէս կը մեկնէ Թէոփիլակտոս Ոսկերերանի հետ։ Ի սպառ սիրեաց զնոսա, այսինքն գերազանց սիրով չափէ դուրս սիրեց՝ սուրբ հաղորդութեան խորհուրդը սահմանելով։ Այսոր համար կ'ըսէ առաքեալն, թէ իւր մահուան մօտ տէրն այս բանս ըրաւ. Ի զիշերին յորում մատնէր, առ հաց, գոհացաւ, երեկ և ասէ. առէք կերայք, այս է մարմին իմ [2]։ Երբ թշնամիք կը պատրաստէին ձաղկանք, փուշ և խաչ զինքը սպաննելու, այն ատեն սիրալից փրկիչն այս ետքի նշանը թողուց իւր սիրոյն։ Եւ ինչու մահուան մօտ, և ոչ յառաջուց դրաւ այս սուրբ խորհուրդս. անոր համար է, կ'ըսէ սուրբն Բեռնարդինոս, վասն զի նշանք սիրոյ բարեկամաց երբ մահուան ատեն կ'երևին, աւելի հաստատ և դիւրաւ կը յիշատակուին, և աւելի սիրով կը պահուին։ Արդէն կ'ըսէ յառաջուց շատ կերպով Յիսուս մեզի տրուած էր իբր կենցաղակից, վարդապետ, հայր, լոյս, օրինակ և զոհ. կը մնար վերջի ատենն սիրոյ, որ

1 Յովհ. ԺԳ. 1։
2 Ա. Կոր. ԺԱ. 23։ 24։

պիտի տրուէր մեզ ի կերակուր՝ բոլորովին մեզի հետ միանալու համար. ինչպէս կերակուրն ուտողին հետ կը միանայ. վերջին աստիճան սիրոյ եղաւ, երբ ինքը տուաւ մեզի կերակուր. վասն զի մեզ տըւաւ զինքն որ ամէն կերպով միանայ, ինչպէս կերակուրն և ուտողն կը միանան։ Աստի փրկիչն մեր բաւական չսեպեց մէկ ըլլալ մեզի հետ սոսկ մարդանալով, այլ ուզեց այս սուրբ խորհրդովս ճար մը գըտնել որ մեր իւրաքանչիւրին հետ ի մասնաւորի միանայ։ Սուրբն Փրանկիսկոս Սալեզեան կ'ըսէ, թէ բնաւ ուրիշ բանի մը մէջ չենք կրնար իմանալ թէ ինչպէս սրբոտանց զմեզ կը սիրէ Յիսուս և կը փայփայէ, ինչպէս այս խորհրդոյս մէջ՝ ուր զինքը գրեթէ ոչինչ կը դարձընէ և կերակուր կ'ըլլայ որ մեր սիրտը թափանցէ. և միանայ իւր հաւատացեալոց սրտին հետ։ Աստի կ'ըսէ Սուրբն Ոսկեբերան. Յոր ոչ կարեն համարձակ ակնարկել հրեշտակք, մեք ընդ նմա միանամք, և եղեալք իսկ մի մարմին և մի հոգի։ Ո՞ր հովիւ կայ, կ'ըսէ, որ իւր ոչխարները իրեն արիւնովը պահէ. մայրեր ալ երբեմն իրենց զաւակները գայլակի կը յանձնեն. բայց Յիսուս Հաղորդութեամբ իւր մարմնով և արեամբ զմեզ կը պարարէ և իրեն հետ կը միացընէ։ Իսկ թէ հարցնես, ինչու մեզի կերակուր ըրաւ ինք զինքն. վասն զի սաստիկ սիրով զմեզ

կը սիրէր. անոր համար ուզեց բոլորովին մեզի հետ միանալ։

Այս ուրեմն Յիսուս Քրիստոս ուզեց ընել աքանչելեաց աքանչելին. Յիշատակ արար աքանչելեաց իւրոց. ողորմած գթած է տէր, կերակուր տայ երկիւղածաց իւրոց[1]. որպէս զի իւր փափաքը լեցընէ քեզի հետ ըլլալու, և միացնելու մեր և իւր սիրտը։ Աստի կ'աղաղակէ Սուրբն Լաւրենտիոս Յուստինեան. ով աքանչելի սիրոյ քո Յիսուս Քրիստոս, որ այնպէս ուզեցիր քու մարմնոյդ հետ զմեզ մարմնացնել, որ քեզի հետ մէկ սիրտ մէկ հոգի ըլլանք՝ անբաժան կապուած։ Մեծ ծառայն Աստուծոյ հայրն Գոլոմպիէր կ'ըսէր, թէ իրաւ որ հաւատալու համար ի խորհուրդ սուրբ հաղորդութեան չեմ տարակուսիր Աստուծոյ կարողութեան, բայց աւելի կը զարմանամ սիրոյն վրայ՝ զոր Աստուած մեզ կը ցուցընէ այս խորհրդովս. ըսենք թէ ինչպէս հացը մարմին Քրիստոսի կ'ըլլայ, ինչպէս նոյն Յիսուսը շատ տեղ կը գըտնուի. գիտենք որ Աստուած ամէն բանի կարող է. իսկ թէ հարցընես ինձ՝ թէ ինչպէս Աստուած այնչափ սիրեր է զմարդ՝ որ ուզենայ անոր կերակուր ըլլալ, ուրիշ պատասխան չունիմ, բայց զայս՝ թէ չեմ հասկընար, և թէ Յիսուսի սէրն անհա-

1 Սղ. ՃԺ. 45։

սանելի է։ Եւ սակայն, ո՛վ տէր, այսպէս չափազանց բանը՝ որ դու կերակուր ըլլաս, կ՚երևի թէ անվայել է քու մեծվայելչութեանդ. ասոր պատասխանը կուտայ սուրբն Բեռնարդոս. տէրն իւր պատիւը չի նայիր, նոյն է Ոսկեբերանին պատասխանն ալ, տէրը պատճառ չունի՝ կը դիմէ ուր որ կը յօժարի, չէ թէ ուր որ պարտական է. ուստի հրեշտակային վարդապետն Ս. Թովմաս զայս խորհուրդս կը կոչէ խորհուրդ սիրոյ և սիրոյ գրաւական. և սուրբն Բեռնարդոս, Տէրն ամէն սիրոյ։

ԻՂՋ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ անհուն տէր Յիսուսի, արժանի անհուն սիրոյ։ Ա՛խ, Յիսուս փրկիչ իմ, երբ պիտի ըլլայ որ ես ալ զքեզ սիրեմ, ինչպէս դու զիս սիրեցիր. ալ ուրիշ բան չունիս դու ընելու որ զքեզ ինձ սիրելի ընես. իսկ ես յանդգնեցայ թողուլ զքեզ զանբաւ բարիդ, որ դառնամ չնչին և ողորմելի բաներ սիրեմ. կ՚աղաչեմ, ինձ լոյս տուր, և բաց ինձ միշտ քու բարութեանդ մեծութիւնները. որպէս զի բոլորովին վառուիմ ի տէր քո, Ջանամ՝ քու կամքդ ընել։ Ահա կը սիրեմ զքեզ, Յիսուս իմ, տէր իմ և իմ ամէն բանս, և կը փափաքիմ զիս քեզի հետ միացնել այս սուրբ խորհրդովս. ամէն բանէ զիս բաժնել և զքեզ միայն սիրել, կեանք իմ։ Օգնեա ինձ, փրկիչ իմ Յիսուս, վասն արդեանց չարչարանաց քոց։ Դու ալ ինձ օգնութեան հասիր, մայրդ Յիսուսի և մայր իմ, աղաչէ զինքն որ բոլորովին զիս վառէ ի տէր իւր սուրբ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Մտածենք Յիսուսի մեծ փափաքն ալ զոր մեզի կը ցուցընէ ի սուրբ հաղորդութեան. Գիտաց Յիսուս զի հասեալ է ժամ նորա [1]։ Ի՞նչպէս կրնար Յիսուս իւր ժամը սեպել զայն գիշերն՝ որ իրեն դառն չարչարանաց սկիզբը պիտի ըլլար. անոր համար իւր ժամը կը կոչէր, վասն զի նոյն գիշերը պիտի աւանդէր մեզի զայս խորհուրդ աստուածային, որ բոլորովին միանար իւր ամէն սիրելեաց հետ. այս փափաքովս ըսաւ թէ. Յանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ [2]։ Այս

1 Յովհ. ԺԳ. 1։
2 Ղկ. ԻԲ. 15։

խօսքով ուզեց փրկիչը հասկըցնել՝ թէ որչափ կը ցանկար սիրով կապուիլ մեր իրաքանչիւրին հետ յայս սուրբ խորհուրդ. ցանկանալով ցանկացայ ըսելն առաջ կուգար յայնչափ սիրոյն զոր ունէր առ մեզ։ Ուստի կ'ըսէ Սուրբն Լաւրենտիոս Յուստինեան, թէ կրակ ու բոց սիրոյ է այս խօսքս։ Ուզեց զինքը մեզի թողուլ հացի տեսքով, որպէս զի ամէն մարդ կարենայ զինքն ընդունել. թէ որ մէկ տեսքով և սուղ ուտելիք մը թողուր, աղքատները կարողութիւն չէին ունենար զինքն առնել, թէ և աժան ուտելիքի կերպով տար, գուցէ այն բանը դիւրաւ չէր գտնուեր բոլոր երկրիս վրայ, ուստի Յիսուս ուզեց հացի տեսակով թողուլ, որ աժան ալ է, և ամէն տեղ ալ կը գտնուի, և այնպէս ամէնն ալ կրնան գտնել և ճաշակել։ Այս մեծ փափաքովն՝ որ ունի փրկիչն մեզի կերակուր ըլլալու, չէ թէ կը հրաւիրէ զմեզ գալ զինքն ընդունել՝ ըսելով Եկայք կերայք ի հացէ իմմէ, և արբէք զգինին զոր խառնեցի ձեզ, կերայք և արբէք և արբեցարուք եղբօրորդեակք իմ [1], հապա պատուիրելով կը հրամայէ ալ, թէ Առէք կերայք, այս է մարմին իմ [2]։ Մինչև յաւիտենից կենաց խոստմունք ալ կ'ընէ, որ յժամարութեամբ ընդունինք. Որ ուտէ ըզմարմին իմ, ընդունի զկեանս յաւիտենական [1]. Որ ուտէ զհայս զայս, կեցցէ յաւիտեան [2]։ Թէ ոչ կը սպառնայ որ արքայութիւն չի կարենայ մանել. Եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ, ոչ ունիք կեանս յանձինս [3]։ Այս հրաւէրս, խոստմունքս և սպառնալիքս բոլոր յառաջ կուգան ի փափաքանաց փրկչին միանալոյ մեզի հետ այս սուրբ խորհրդով, և այս փափաքս է ծնունդ իւր մեծ սիրոյն առ մեզ։ Վասն զի Պալեգեանին ըսածին պէս՝ սիրոյն վախճանն ուրիշ բան չէ, բայց միայն միանալ ընդ սիրելւոյն. որովհետև այս խորհրդոյս մէջ Յիսուս բոլորովին կը միանայ հոգւոյ հետ, ինչպէս որ ինքն ըսաւ թէ. Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ և ես ի նմա [4]։ Երանի թէ հասկընային հաւատացեալք, թէ ինչ մեծ բարիք կը բերէ հոգւոյն սուրբ հաղորդութիւնն։ Յիսուս ամէն հարստութեանց տէրն է, վասն զի հայրն զինքը կացոյց ամենայնի տէր. Գիտաց Յիսուս,

1 Առակ. Թ. 5։
2 Մատ. ԻՁ. 26։

1 Յովհ. Զ. 55։
2 Յովհ. Զ. 59։
3 Յովհ. Զ. 54։
4 Յովհ. Զ. 57։

զի զամենայն ինչ ետ հայր ի ձեռս նորա[1]։ Աստի երբ Յիսուս հոգւոյ մը հետ սուրբ հաղորդութեամբ կը միանայ, իւր հետ կը բերէ զամէն շնորհք, ինչպէս կ'ըսէ Սողոմոն յաւիտենական իմաստութեան համար. Եկին ինձ ամենայն բարութիւնք միանգամայն ընդ նմա[2]։ Սուրբն Դիոնեսիոս կ'ըսէ, թէ Հաղորդութիւնն ունի զամենամեծ զօրութիւն կատարելոյ զսրբութիւն, և սուրբ Վինկենտիոս Ֆերերեան կը գրէ թէ, աւելի՝ կը շահի հոգին հաղորդութեամբ մը, քան թէ շաբաթ մը պաք պահելով հացիւ և ջրով։ Տրիդենտեան ժողովոյն վարդապետութիւնն է՝ թէ Հաղորդութիւնն է դեղթափ՝ որով ազատ կ'ելլանք ի հանապազորդեան յանցուածոց, և կը պահուինք ի մահուչափ մեղաց. և սուրբ Իգնատիոս Աստուածազգեացն զայս սուրբ խորհուրդ դեղ անմահութեան կը կոչէ։ Իննովկենտիոս երրորդն ալ ըսաւ. Քրիստոս խորհրդով խաչին ազատեց զմեզ յիշխանութենէ մեղաց, և խորհրդով սուրբ հաղորդութեան կ'ազատէ զմեզ ի կարողութենէ մեղանչելոյ։ Այս խորհուրդս կը վառէ ալ զհուր սիրոյն Աստուծոյ, ըստ այնմ, թէ Մուծէք զիս ի տուն գինւոյ,

1 Յովհ. ԺԳ. 3։
2 Իմաստ. Է. 11։

կարգեցէք ի վերայ իմ սէր, հաստատեցէք զիս իւղով. կուտեցէք յիս խնձոր, զի խանդակաթ եմ ես սիրով[1]. ուր Սուրբ Գրիգոր Նիւսացին կ'ըսէ, թէ իրաւացնէ հաղորդութիւնն է ասա տուն գինւոյ, ուր հոգին այնպէս կ'արբենայ սիրովն Աստուծոյ, որ կը մոռնայ զաշխարհս ալ, ամէն արարածն ալ, և այս է խսկապէս խանդակաթ ըլլալ սուրբ սիրով։ Պատուական հայրն Փրանկիսկոս Ոլեմտոս Թէադինն ալ կ'ըսէ, թէ ուրիշ բան չկայ այնչափ զօրաւոր ի բորբոքել զմեզ ի սէրն Աստուծոյ, ինչպէս սուրբ հաղորդութիւնն։ Աստուած սէր է[2], Տէր Աստուած մեր հուր ծախիչ է[3]։ Զայս սիրոյ կրակն երկրիս վրայ ձգելու համար եկաւ Բանն հայրական. Հուր եկի արկանել յերկիր, և զի՞նչ կամիմ թէ արդէն իսկ բորբոքեր[4]։

Ո՜հ, որպիսի՜ սիրուն բոցեր սուրբ սիրոյ կը վառէ Յիսուս ի հոգիս՝ որոնք որ այսպէս կարօտով կ'ընդունին հաղորդութեան խորհուրդը։ Սրբուհին Կատարինէ Սենացին օր մը քահանայի մը ձեռքը տեսաւ զՅիսուս ի հաղորդութեան՝ սիրոյ հնոցի

1 Երգ. Բ. 4. 5։
2 Ա. Յովհ. Դ. 8։
3 Բ. Օր. Դ. 24։
4 Ղուկ. ԺԲ. 49։

մը պէս, այնպէս որ կը զարմանար թէ ինչպէս այնպէս մեծ կրակէ չեն տոչորիր և մխիր դառնար բոլոր մաղկանց սիրտերն։ Սուրբն Ոսկեբերան կ'ըսէ, թէ կայծակ է հաղորդութիւնն, և այնպէս զմեզ կը բորբոքէ՝ որ իբրև կրակ փչող առիւծներու պէս կ'երթանք այն սեղանէն, սարսափելի ըլլալով սատանայի։ Բայց գուցէ մէկն ըսէ, ես անոր համար շատ չեմ հաղորդուիր, վասն զի զիս պաղ կը տեսնեմ ի սիրոյն Աստուծոյ. այն մարդը Գերսոնի ըսածին պէս՝ նոյն է թէ ըսէր. ես կրակի չեմ մտանար, վասն զի զիս պաղ կը տեսնեմ։ Ուրեմն որչափ որ ցուրտ կը զգանք, այնչափ աւելի պիտի մտանանք սուրբ հաղորդութեան, թէ որ կը փափաքինք զԱստուած սիրել։ Աղէկ կ'ըսէ Սալեզացի սուրբն Փրանկիսկոս. թէ որ քեզի հարցընեն թէ ինչու այդչափ շատ շատ կը հաղորդուիս, բան իրենց, թէ երկու ցեղ մարդիկ պէտք է որ անպակաս հաղորդուին, կատարեալներն և անկատարներն, կատարեալներն՝ որպէս զի պահուին ի կատարելութեան, և անկատարներն՝ որ կատարելութեան հասնին։ Նմանապէս սուրբն Բոնաւենտուրա ալ կ'ըսէ. թէպէտ և դաղջութեամբ, բայց վստահութեամբ յաղորմութիւնն Աստուծոյ մտացիր. այնչափ աւելի մարդ կարօտ կ'ըլլայ

բժշկի, որչափ որ աւելի հիւանդութեան նշաններ վրան կը զգայ։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ հոգեսէր փրկիչ իմ Յիսուս, դու բան չիթողուցիր որ չընես մեզ ի նշան սիրոյդ, ալ և աւելի ինչ բան պիտի ցուցընես թէ զմեզ կը սիրես. ուստի ո՛վ անհուն բարութիւն, շնորհք տուր ինձ ալ որ ես զքեզ սիրեմ ասկից ետև՝ յաւիտենական զօրութենէ և ամէն փափաքանօք, և զմի պիտի սիրէ իմ սիրտս ամէն կերպով, բայց զքեզ միայն, ո՛վ փրկիչ իմ, որ կեանքդ տալէն ետև՝ զքեզ բոլոր կու տաս այս սուրբ խորհրդով։ Ո՛վ տէր իմ, տուր ինձ յիշել միշտ քու սէրդ, որով զիս բոլորովին մոռնամ և զքեզ միայն սիրեմ անպակաս սիրով։ Կը սիրեմ զքեզ, Յիսուս իմ, ամէն բանէս վեր, և միայն սիրել կ'ուզեմ. կ'ազատեմ, հեռացուր ինձմէ զամէն յօժարութիւն որ քեզի համար չէ։ Շնորհակալ եմ որ ատեն [կու [տաս ինձ զքեզ սիրելու, և ողբալու այն բաներն որովք քեզ վշտացուցեր եմ։ Յիսուս իմ, իմ փափաքս այն է՝ որ՝ դու ըլլաս մէկ

հատիկ նպատակ ամէն սրտիս շարժմանց. ձեռնտու եղիր ինձ փրկութեան, և բուն իմ փրկութիւնս ըլլայ զքեզ սիրել յաւիտեան սրտէ միշտ և յաւիտեան: Մա-ռիամ, մայր իմ, օգնէ ինձ որ կարենամ սիրել զՅիսուս, և աղաչէ զինքը վասն իմ։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԼԵ.

ՍԻՐԱԼԻՐ ՀԱՃՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ

ՄՆԱԼՈՑ Ի ԽՈՐԱՆՍ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՐԴՈՅՆ

Ինձ եկէք ամենայն վաստակեալք և բեռնաւորք. և ես ձեզի հանգիստ տամ [1].

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Փրկիչն որ զմեզ սիրեր էր, այս երկրէս երբ պիտի բաժնուէր՝ իւր մահուամբ փրկութեան գործը լմնցընելէն ետև, չուզեց զմեզ միայն թողուլ յայսմ հովտի արտ-

1 Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ: Մատթ. ԺԱ. 29։

տասուաց. ուստի կ'ըսէ սուրբն Պետրոս Աղգանթարացի, բնաւ լեզու մը չէ կարող բացատրել զմեծութիւն սիրոյն՝ զոր ունի Յիսուս առ ամենայն հոգիս։ Ուստի երբ կ'ուզէր սուրբ փեսայն այս կեանքէս ելնել, որպէս զի զինքը չմոռնանք՝ յիշատակ թողուց մեզ այս սուրբ խորհուրդը, ուր անձամբ մնաց, չուզելով որ երկուքին մէջ ուրիշ գրաւական մնայ վառ պահելու յիշատակը, բայց եթէ ինքը միայն։ Ուստի այս մեծ սէրս կը պահանջէ մեզմէ մեծ սէր մը առ փրկիչն, ասոր համար վերջի ատեններս ուզեց որ գրուի տան ի պատիւ սուրբ սրտին Իւրոյ[1], որպէս զի մենք ալ նշան մը հատուցման ցուցընենք իւր սիրալիր հաճութեան մնալոյ ի սուրբ սեղանին. և միանգամայն վճարք մ'ընենք անարգանաց՝ որովք կը նախատեն իւր սէրը հերետիկոսք և վատթար քրիստոնեայք։

Յիսուս կեցած է յայս սուրբ խորհուրդ, նախ որպէս զի ամենքը զինքը գտնեն. երկրորդ որպէս զի ամենքը կարենան գալ իրեն հետ տեսնուիլ. երրորդ որպէս զի ամենուն շնորհք ընէ. Քրիստոս կը գըտ-

1 Ըստ արևմտեան եկեղեցւոյ, յինանց մէջ մասնաւոր յիշատակ սահմանուած է Քրիստոսի Տեառն մերոյ սուրբ Սրտին կամ սիրոյն, և առանձին եղբայրութիւններ և ջերմեռանդութիւններ կան բարեպաշտ հաւատացելոց մէջ։

նուի յամենայն զանազան խորանս, որպէս զի այն ամենքն որոնք կ'ուզեն՝ կարող ըլլան զինքը գտնել։ Այն գիշերն յորում փրկիչն իւր աշակերտներէն պիտի բաժնուէր, և մեռնելու պիտի երթար, անոնք ցաւէն կու լային, թէ ինչպէս պիտի զատուին իրենց սիրելի վարդապետէն. բայց Յիսուս կը մխիթարէր զանոնք ըսելով թէ. Արդեակք իմ, ես կ'երթամ ձեզի համար մեռնելու, բայց մեռնելովս ալ՝ զձեզ չեմ ուզեր միայն թողուլ. քանի որ դուք երկրիս վրայ էք, կ'ուզեմ ձեզի հետ մնալ սուրբ խորհրդով սեղանոյ, կը թողում ձեզ իմ մարմինս ալ, հոգիս ալ, աստուածութիւնս ալ, և զիս բովանդակ. և քանի որ դուք աշխարհիս վրայ էք, ես չեմ ուզեր ձեզմէ բաժնուիլ. Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ մինչև ի կատարած աշխարհի[1]։ Սրբոյն Պետրոսի Աղգանթարացւոյն ըսածին պէս, կ'ուզէր փեսայն թողուլ իւր հարսին այսչափ հեռաւորութեան ատեն ընկեր մը, որ միայն չմնայ, ասոր համար զայս սուրբ խորհուրդս թողուց, և քան զայս ալ աւելի մեծ ընկեր չէր կրնար թողուլ։ Հեթանոսք որ այնչափ սուտ աստուածներ ունէին, չկրցան Աստուած մը ձևացնել լի ամենայն սիրով՝ մեր Աստուծոյն պէս, որ միշտ իրենց մօտ ըլլայ, և

1 Մատ. ԻԸ. 20։

քովերնին կենայ այնչափ սիրով։ Տես ինչ կ'ըսէ սուրբ գիրքը. Ո՞վ իցէ ազգ մեծ, որոյ իցէ ի նմա Աստուած մօտ ի նոսա, որպէս տէր Աստուած մեր։ Այս բնաբանս կը յարմարցնէ սուրբ եկեղեցին սուրբ հաղորդութեան տօնի։ Կը տեսնե՞ս ինչպէս Քրիստոս տէրն մեր կեցած է ի վերայ սուրբ սեղանոյս, որպէս թէ ամփոփելով զինքն յայնչափ կալանս սիրոյ. քահանայք զինքը կը հանեն տաղաւարէն՝ բազմոցը դնելու, և զուրիշները հաղորդելու, ետքը նորէն տեղը կը դնեն կը գոցեն, և Յիսուս գոհ կ'ըլլայ հոն կենալու գիշեր ցորեկ։ Բայց փրկիչ իմ, ի՞նչ պէտք էր այնչափ եկեղեցեաց մէջ գտնուիլ գիշերով ալ, երբ մարդիկ դռներն ալ կը գոցեն, և զքեզ միայն կը թողուն. հերիք էր կենալդ սոսկ ցորեկ ատեն։ Չէ, կ'ըսէ, կ'ուզէ ինքը գիշերն ալ կենալ, թէպէտև միայնակ, սպասելով որ առաւօտն ուզողը շուտով զինքը գտնէ. սրբազան հարսը ժուռ կու գայ փնտռելով իւր սիրականը և հարցնելով. Մի՞թէ զոր սիրեաց անձն իմ տեսէք[1]. չի գտածին պէս՝ ձայնը բարձրացնելով կը գոչէ առ փեսայն. Ցոյց ինձ ո՞ւր հովուես, ո՞ւր հանգուցանես ի միջօրէի[2]։ Ատեն մը հարսը զփեսայն չէր գտներ, վասն զի դեռ

1 Երգ. Գ. 3։
2 Երգ. Ա. 6։

չկար խորհուրդ սուրբ հաղորդութեան. բայց հիմայ թէ որ հոգին գտնել կ'ուզէ զՅիսուս, հերիք է որ ժողովրդապետական եկեղեցի մը երթայ, կամ վանք մը, այն տեղ կը գտնէ իւր սիրականը՝ որ իրեն կը սպասէ. չկայ խեղճ գիւղ մը, և ոչ կրօնաւորաց վանք մը, ուր սրբութիւն չպահուի. ամէն տեղ թագաւորն փառաց յանձն կ'առնու փակուած կենալ տապանակի մը մէջ, փայտէ կամ քարէ, ուր հասարակօրէն միայն դրած է հագիւ եղի կանթեղ մը, և քովն ուրիշ մարդ չեղած. բայց սրբոյն Բեռնարդոսին ըսածին պէս, այդ բանը, ո՛վ Տէր, չէր վայլեր քու մեծվայելչութեանդ։ Իսկ Յիսուս ի՞նչ պատասխան կու տայ. թէ որ իմ մեծվայելչութեանս չի վայելեր, կ'ըսէ, բայց կը վայլէ իմ սիրոյս։

Գիտե՞ս ինչ անուշ սէր կ'իմանան ուխտաւորներն որ այցելութեան կ'երթան Աստուածածնայ տանն ի Լորետոն՝ որ Նազարեթէն եկած է, կամ սուրբ երկրին Երուսաղեմայ ուխտատեղիքը, ի մուրն Բեթղեհեմի, ի Գողգոթա, սուրբ գերեզմանը. կ'իմանան թէ Յիսուս հոս է ծներ, հոս բնակեր է, հոս շարչարուեր մեռեր է, հոս թաղուեր է. հապա ո՞րչափ մեծ բորբոք սիրոյ վառուի պիտոր մեր սիրտը, երբ եկեղեցւոյ մը մէջ ներկայ կը տեսնենք փրկիչը ի սուրբ խորհուրդն։ Աւիլա կ'ը-

սէր, թէ չեմ գտներ այնպէս սուրբ տեղ մը ներմեռանդութեան և մխիթարութեան, ինչպէս որ եկեղեցի մը՝ ուր կայ Յիսուս ի սեղան սրբութեան։ Աստ ներհակ հայրն Բաղտասար Ալուարէզ կուլար, երբ կը տեսնէր Թագաւորաց և իշխանաց պալատները լեցուն բազմութեամբ եկող գացողքը. իսկ եկեղեցիները ուր Քրիստոս կեցեր է, երեսէ ձգած դատարկ մնացած։ Ո՜հ, տէր Աստուած, թէ որ տէրն մեր մէկ եկեղեցւոյ մէջ միայն ըլլար երկրիս վրայ, զոր օրինակ ի սուրբ Պետրոս Հռոմայ, և տարին մէկ անգամ օր մ'ըլլար զինքը հոն տեսնել, արդեօք որչափ ուխտաւորներ, որչափ ազնուականներ, որչափ Թագաւորներ կը ջանային հոն գտնուիլ նոյն օրը, որ մեծարեն զերկնից Թագաւորն յերկիր իջած. արդեօք որպիսի տաղաւար իրեն շինած կ'ըլլար, ոսկեզարդ և ականակապ. որպիսի ճրագալոյց կ'ըլլար նոյն օրը։ Բայց ի՞նչ կ'ըսէ Յիսուս. ես չեմ ուզեր մէկ եկեղեցւոյ մէջ միայն կենալ, և ոչ օր մը միայն, չեմ ալ ուզեր այնչափ հարստութիւն և այնչափ ճրագավառութիւն, հապա կ'ուզեմ միշտ և ամէն օր և ամէն տեղ կենալ, ուր որ կը գտնուին իմ հաւատացեալքս, որպէս զի ամէնքը գիս դիւրաւ գտնեն, այն ալ միշտ ամէն ժամ երբ ուզեն։ Ի՞նչ կ'ըսես, թէ որ Յիսուս այսպէս մեծ սէր ցուցընել

չուզենար, որուն խելքէն կ'անցնէր այս բանս. իր համբարձմանէն ետև՝ մէկն այն ատեն ըսեր, թէ ով տէր, եթէ քու աղէկ սէրդ մեզի ցուցընել կ'ուզես, եկուր մեզի հետ կեցիր ի խորանս՝ հացի տեսքով, որ հոն կարենանք զքեզ գտնել երբ ուզենք, որպիսի յանգնութիւն կ'ըլլար, համարձակիլ այսպէս բան խնդրել։ Եւ ահա այս բանս՝ որ մարդուս մտքէն ալ չէր կրնար անցնիլ. փրկիչն մեր մտածեց և ի գործ դրաւ։ Այլ, վա՜յ մեզ, ո՞ւր է մեր շնորհակալութիւնն և երախտագիտութիւնն այսպիսի մեծ շնորհքի մը համար. թէ որ Թագաւոր մը հեռու տեղէ գար կամաք, որ մէկ գեղացին իրեն այցելութիւն կարենայ ընել, ի՞նչ ապերախտութիւն կ'ընէր այն գեղացին՝ թէ որ չուզենար գալ զինքը տեսնել, կամ ուզէր սոսկ վեր ի վերոյ տեսնել։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՜վ փրկիչ իմ Յիսուս, ով սէր հոգւոյս, ի՞նչ ծանր բան էր քեզի համար մեզի հետ մնալ ի խորհուրդ սուրբ հաղորդութեան. նախ և առաջ պէտք էր որ մահ քաշէիր, որ կարենաս կենալ մեր խորաններուն վրայ. ետքն այնչափ ալ անարգանք քաշէիր

այս խորհրդովս զմեզ քեզի ներկայացնելու։ Իսկ մենք այսչափ ծոյլ և անհոգ ենք գալ այցելութիւն ընել քեզի, գիտնալով ալ թէ դու շատ կ'ախորժիս մեր այցելութենէն, զմեզ ամէն բարեաք լեցընել ուզելով՝ երբ գանք քեզի ներկայանանք։ Տէր, թող ինձ, որովհետև այս ապերախտներուն մէկն ալ ես եմ. այս օրէս սկսեալ, փրկիչ իմ, կ'ուզեմ ստէպ քեզ այցելութիւն ընել, և կենալ որչափ որ կրնամ քու առջևդ, գոհանալ զքէն, սիրել զքեզ և շնորհք խնդրել քեզմէ. վասն զի դու այս վախճանիս համար կեցեր ես՝ երկրիս վրայ տաղտուարներու և տապանակներու մէջ փակուած, որպէս թէ ի կալանս սիրոյ. զքեզ կը սիրեմ անհուն բարութիւնդ։ Զքեզ կը սիրեմ, ով Աստուածդ սիրոյ. զքեզ կը սիրեմ ծայրագոյն բարիդ սիրելի ի վեր քան զամենայն բարի, շնորհք տուր ինձ որ հեռանամ ինձմէն և ամէն բանէ, որպէս զի զքեզ միայն յիշեմ և զքու սէրդ, և մնացած կեանքս անցընեմ զքեզ հաճեցնելու, և ուրիշ մեծ զուարճութիւն չունենամ, բայց միայն քեզի հետ ըլլալ քու ոտքիդ առջև, վառէ զիս բոլորովին քու սիրովդ։ Մարիամ մայր իմ, առ ինձ համար մեծ սէր մը առ սուրբ խորհուրդն, և երբ զիս թուլցած կը տեսնես, յիշեցուր ինձ հիմակուան առաջա-

դրութիւնս՝ զոր կ'ընեմ երթալու այցելութիւն ընելու ամէն օր։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Նայինք թէ Յիսուս ինչպէս յայս խորհուրդ, ամենուն համարձակութիւն կուտայ իր քովը գալու։ Որբուհին Թերեզա կ'ըսէ. թէ՝ երկրաւոր թագաւորի հետ ամէն մարդ չի կրնար խօսակցիլ. աղքատները հազիւ կարող կ'ըլլան ուրիշի մը ձեռքով յայս ունենալ խօսելու, և իրենց պիտոյքը հասկրցնելու. իսկ երկնից արքային հետ խօսելու ուրիշ միջնորդ մը հարկաւոր չէ, ամէնքը՝ թէ աղնուականք և թէ աղքատք կրնան հետը խօսիլ երես առ երես ի սուրբ հաղորդութեան. այս է Յիսուսի իրեն համար ըսածն, թէ՝ Ես ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց [1]։ Պարտիզի ծաղիկները գոց տեղ կը պահուին, դաշտինն ամէնուն առջև կեցած է. ուստի Ուկոն ծիրանաւորը կը գրէ, թէ ես ծաղիկ դաշտի, ըսաւ, վասն զի ես զիս ամենուն կ'ընծայեմ դիւրաւ գտնելու համար։

Ուրեմն Յիսուսի հետ ի խորհուրդ հա-

1 Երգ. Բ. 1։

զորդութեան ամէնքը կրնան խօսակից ըլլալ, նա ալ ամէն օր և ամէն ժամ։ Այուրին Պետրոս Ոսկիբան խոսելով փրկչին ծննդեան վրայ՝ կ'ըսէ. թէ թագաւորները շատ անգամ թող չեն տար որ մէկը գայ իրենց հետ խոսի, դռնապանները կ'ըսեն, թէ հիմայ ատենը չէ, գնա և ետքն եկուր. բայց փրկիչն ուզեց բաց այրի մէջ ծնանիլ՝ առանց դրան և դռնապանի, որպէս զի ամէնքն ամէն ժամանակ կարենան իրեն համարձակ գալ. սպասաւոր չկայ որ ըսէ, թէ հիմայ ատենը չէ։ Այսպէս է բանը Յիսուսի հետ ի սուրբ հաղորդութեան. միշտ բաց են եկեղեցիներն. ամէն մարդ կրնայ երթալ խոսակցիլ երկնից թագաւորին հետ երբոր ուզէ, և Յիսուս ալ կ'ուզէ որ գան հոն իրեն հետ համարձակ խոսին, ասոր համար կեցած է հացի տեսակաւ։ Թէ որ Յիսուս կ'երևի ի խորանս նստած ի լուսեղէն աթոռ, ի՞նչպէս պիտի երևի դատաստանի օրն, ով կրնայ այն ատեն համարձակիլ իւր քով մտենալ. բայց սրբուհւոյն Թերեզայի ըսածին պէս, որովհետև տէրն մեր կը բաղձայ որ մենք իրեն հետ խոսինք և շնորհքներ խնդրենք համարձակ առանց վախնալու, ասոր համար իւր մեծվայելչութիւնը ծածկեց հացի տեսքով. և Թովմա Գեմբացւոյն ըսածին պէս, կ'ուզէ որ իրեն հետ տեսնուինք ինչպէս բարեկամ բարեկամի հետ։ Երբ հոգի մը խորանին

առջև եկած է, դիր թէ Յիսուս Երգերգոցին այն խօսքը կ'ըսէ իրեն. Արի եկ մերձաւոր իմ, եղբօրորդի իմ, գեղեցիկ իմ[1]. եկ, դու իմ բարեկամս ես, թշնամի չես, վասն զի զղջացած ես քու մեղացդ վրայ։ Գեղեցիկդ իմ, ալ տգեղ չես իմ աչքի առջև. վասն զի իմ շնորհքս զքեզ գեղեցկացոյց, ելիր եկուր, խնդրէ ինչ որ կ'ուզես, անոր համար կեցած եմ ես խորանիս վրայ։ Սիրելի ընթերցող, թէ՝ որ թագաւորը զքեզ իւր սենեակը կանչէր և ըսէր, թէ ըսէ ինչ որ կ'ուզես, ինչ խնդիրք որ ունիս, ես զքեզ կը սիրեմ և կը ցանկամ քեզի աղէկութիւն ընել, ի՞նչ ուրախութիւն կ'ըլլար քեզի։ Այսպէս կ'ըսէ Քրիստոս տէրն մեր ամենուն որ իրեն այցելութեան կու գան։ Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ[2]. եկէք աղքատք, հիւանդք, նեղեալք, ես զձեզ կ'ուզեմ հարստացնել, առողջացնել և մխիթարել, ասոր համար կը կենամ խորանին վրայ. Կարդասցես դու, և նա ասասցէ, աւասիկ եմ[3]։

1 Երգ. Բ. 10։
2 Մատ. ԺԱ. 29։
3 Ես. Թ. 58։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Արդ որովհետև դու, սիրելիդ իմ Յիսուս, խորանը կեցած ես ողորմելիներուն խնդիրքը լսելու, որ քեզի կը դիմեն, լսէ այսօր և իմ աղաչանացս, որ եմ խեղճ մեղաւոր մը. ով զառն Աստուծոյ պատարագեալ և մեռեալ ի վերայ խաչին, ես ալ քու արեամդ գնեալ հոգիներէն մին եմ. Թող ամէն մեղքերս զոր քեզի դէմ ըրեր եմ, և հասիր ինձ քու շնորհօքդ որ ի կորուստ չերթամ. մանակից զիս ըրէ այն ցաւոց՝ զոր իմ մեղքիս համար քաշեցիր ի Գեթսեմանի։ Աստուած իմ, երանի թէ բնաւ զքեզ դառնացուցած չըլլայի։ Սիրելիդ իմ տէր, թէ որ ես ի մեղս մեռնէի, ալ չէի կրնար սիրել զքեզ, իսկ դու ասոր համար երկայնամիտ եղար առ իս, որպէս զի զքեզ կարենամ սիրել. գոհանամ զքէն այս ժամանակիս համար զոր ինձ տուիր. և որովհետև հիմայ կրնամ սիրել, ես ալ կ'ուզեմ սիրել զքեզ։ Տուր ինձ ըզշնորհս սուրբ սիրոյ քո, այնպիսի սիրոյ՝ որ ամէն բան ինձ մոռնալ տայ, որպէս զի խելքս միտքս ըլլայ հաճոյանալ ամենասիրելի սրտի քում։ Յիսուս փրկիչ իմ, որ բոլոր կեանքդ ինձ համար ծախեցիր, ես

ալ գոնէ մնացած կեանքս քեզի համար ծախեմ. ձգէ զիս բոլորովին ի սէր քո. զիս բոլորովին քուկդ ըրէ մեռնելէս առաջ. ամէն բանի յոյս ունիմ արդեամբք շարշարանաց քոց. յոյս ունիմ, ով Մարիամ, ի քո բարեխօսութիւնդ ալ։

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

Յիսուս ի սուրբ հաղորդութեան՝ ամենուն կը թողու գալ իրեն հետ խօսիլ, որպէս զի ամենուն շնորհքներ ընէ. Սրբոյն Օգոստինոսի ըսածին պէս, ինքն աւելի կ'ուզէ բարիք ընել քեզի՝ քան զքու փափաքիլդ առնուլ։ Պատճառն է, վասն զի Աստուած է անբաւ բարի. բարին ալ ի բնութենէ իւրմէ է հաղորդական և ծաւալական, որ իւր բարիքը կ'ուզէ ամենուն հաղորդել. կը գանգատի Աստուած, երբ մարդիկ չեն զար շնորհք իրմէ խնդրելու. Միթէ անապատ եղէ տանդ Իսրայելի, կամ աւեր երկիր խոպանացեալ, զի ասաց ժողովուրդ իմ, անտէրունչք չրջեսցուք, և առ քեզ ոչ եկեսցուք[1]։ Սուրբն Յովհաննէս ի տեսլեան զՔրիստոս տեսաւ. Գօտեւորեալ առ ստեամբքն գօտի

1 Երեմ. Բ. 31

ոսկեղէն[1]. վասն զի թէպէտ և Յիսուս մշտ պատրաստ է մեզ բարիք ընել, բայց աւելի ի խորհուրդ սուրբ հաղորդութեան առատապէս կը բաշխէ իւր շնորհքը։ Եւ Երանելին Հենրիկոս Սուսոն կ'ըսէր, թէ Յիսուս ի հաղորդութեան աւելի յօժարութեամբ կը լսէ մեր աղաչանաց։

Ինչպէս մայր մը որուն կուրծքը կաթով լցուած ըլլալով կաթ ծծող տղաք կը փնտռէ որ թեթևցընէ զինքը, այսպէս ալ տէրն մեր ի սուրբ խորհուրդս այս սիրոյ՝ զամէնքը կը կանչէ՝ ըսելով. Զի դիցէք և յագիցիք ի ստեանց մխիթարութեան... որպէս մայր որ զմանուկ իւր գգուիցէ, այնպէս գգուեցից զձեզ[2]։ Այլուարէզ տեսաւ որ Յիսուսին ձեռքերը շնորհքով լեցուած էր որ տայ մարդկանց, բայց ուզող մը չէր գտներ։ Երանի այն հոգւոյն որ խորանի առջև կեցեր է Յիսուսէն շնորհք խնդրելու։ Փերիայ կոմսուհին՝ որ սրբուհի Ֆլարայի կուսանաց վանքը մտաւ, որչափ կրնար սրբութեան առջև աղօթք կ'ընէր, մինչև անուն դրին իրեն Հարան սրբութեան. և այն տեղ անդադար կը դիզէր շնորհաց գանձերը։ Օր մը հարցուցին իրեն, թէ ինչ կ'ընես այնչափ ատեն սրբութեան առջև. նա ալ ըսաւ, եթէ կա-

1 Յայտ. Ա. 13։
2 Ես. ԿԶ. 11. 13։

բենայի յաւիտեան հոն կը կենայի. ինչ կ'ըլլայ ընել սրբութեան առջև. ինչ բան կ'ընէ աղքատ մը մեծատան առջև. ինչ կ'ընէ հիւանդ մը բժշկին առջև. ինչ ընել կ'ըլլայ, շնորհակալ ըլլալ, սիրել, և խընդրք ընել։ Ասով կ'իմացուի, թէ որչափ պատուղ կ'ելնէ սրբութեան առջև աղօթք ընելով։ Բայց, աւաղ, մարդիկ անոր համար չեն երթար Յիսուսի հետ տեսնուելու, վասն զի զինքը չեն սիրեր. կ'ախորժին ժամերով խօսակցիլ բարեկամի մը հետ, և կը ձանձրանան կէս ժամ Յիսուսի հետ խօսակից ըլլալէն. ըսէ թէ ինչու Յիսուս իւր սէրն ինձ չի տար. թէ որ աշխարհք սրտէդ չես հաներ, ինչպէս մտնէ այն տեղը սէրն աստուածային. երանի թէ դու ալ կարենայիր իսկապէս սրտանց ըսել զայն, զոր կ'ըսէր Սուրբն Փիլիպպոս Ներեան սրբութեան առջև. Ահա սէր իմ, ահա սէր իմ. այն ատեն չի կրնար ձանձրանալ կենալու ժամերով, օրերով ալ հաղորդութեան սուրբ խորհրդեան դիմաց։ Աստուծոյ սիրով բորբոքած հոգւոյն սրբութեան առջև անցուցած ժամերը մէյմէկ վայրկեան կ'երևին. Սուրբ Փրանկիսկոս Ֆասուերեան բոլոր օրը կ'աշխատէր հոգւոց համար, իսկ գիշերն ինչ էր ըսես իւր հանգիստը, բայց միայն սրբութեան առջև քիչ մ'ատեն աղօթք ընել։ Գաղղիացի մեծ քարոզիչ մը բովանդակ ցորեկը խոս-

տովանանք լսելու և քարոզ տալու հետ ըլլալէն ետքը գիշերը եկեղեցի կ'երթար. եթէ երբեմն դուռը գոց գտնէր, դռնէն դուրս կը կենար ցրտոյն հովին՝ որ գոնէ այսպէս հեռուանց մեծարէ իւր սիրելի տէրը։ Իսկ դու եղբայր, երբ այս սէրն առ Յիսուս չունիս, ջանա ամէն օր այցելութիւն մ'ընել, որով վառես քու սիրտդ իրեն սիրով։ Այն ատեն ալ չէիր սիրեր զաշխարհ. հապա ամէն բան ալ կ'ատէիր. Սալէգեանին ըսածին պէս՝ երբ կրակն առնէ զտունն, ամէն բան պատուհանէն դուրս կը նետեն։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Յիսուս փրկիչ իմ, չնորհք տուր որ զքեզ ճանչնամ և զքեզ սիրեմ։ Դու այսչափ սիրելի ես, դու ուրիշ բան չունիս ընելու՝ որ մարդիկ զքեզ սիրեն. ուրեմն ինչպէս կ'ըլլայ որ քիչ կան զքեզ սիրողներ. վայ ինձ, ես ալ այս ապերախտներուն մէջ գտնուեցայ։ Արարածոց չնորհակալ եղած եմ քանի որ ինձ բարիք մ'ըրեր են, քեզ միայն ապերախտ եղայ որ ինձ այնչափ պարգևներ ըրեր ես, այն ալ զքեզ վրշտացնելով շատ անգամ ծանր կերպով, և անիրաւելով իմ մեղքս։ Բայց կը տես-

նեմ որ դիս երեսէ ձգելու տեղ՝ ինձ կը մօտենաս, ու կը յորդորես սիրով ըսել. թէ՝ Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ[1]։ Արդ որովհետև ինձ պէս ապերախտէն ալ սիրուիլ կ'ուզես, ես ալ կ'ուզեմ զքեզ սիրել քու չնորհքդ, և ուրիշ բան չեմ ուզեր սիրելէն զատ. սիրեմ զքեզ սէր իմ, որ ես ինձ համար ամէն բան, օգնէ ինձ սուրբ արեամբդ, զոր հեղեր վասն իմ։ Սիրելիդ իմ փրկիչ, սուրբ արեանդ վրայ է իմ ամէն յոյսս, և ի բարեխօսութիւն անարատ մօր քո և կուսի, դու ալ կ'ուզես որ անոր աղաչանքն օգնէ մեր փրկութեան։ Սուրբ Աստուածածին, բարեխօս եղիր ինձ համար առ Յիսուս. դու ալ որ կը բորբոքես Աստուծոյ սիրով զամէնքն որ զքեզ կը սիրեն, դիս ալ վառէ բորբոքէ նոյն սիրով։

1 Բ. Օր. Զ. 5։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԼԶ.

ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ԸՆԴ ԿԱՄՍ ԱՍՏՈՒԾՈՅ

Կեանքն իրեն կամքն է[1]։

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Բովանդակ մեր փրկութիւնն, կեանքն, կատարելութիւնն ի սէրն Աստուծոյ է. Որ ոչն սիրէ, անդէն ի մահու մնայ[2], սէրն է զօդ կատարման[3]. իսկ կատարելութիւն սիրոյ, կայացած է ի համակերպութեան ընդ կամս Աստուծոյ. վասն զի այս է գլխաւոր գործ սիրոյ՝ Արիսպագացւոյն

1 Կեանք են ի կամաց նորա։ Սղ. ԻԹ. 6։
2 Ա. Յովհ. Գ. 14։
3 Կողոս. Գ. 14։

ասածին պէս. միացնել զկամս սիրելեաց. այնպէս որ մէկ սիրտ ունենան, և մէկ կամք։ Ուստի այնչափ հաճոյ կ'ըլլան Աստուծոյ մեր բարի գործերն, ճգնութիւնն, հաղորդութիւն, օգորմութիւն տալն, ցորչափ որ ըստ Աստուծոյ կամաց կ'ըլլան, թէ ոչ առաքինական չեն, այլ պակասաւորք և պատժոյ արժանի։ Այսոր համար գլխաւորաբար եկաւ փրկիչն մեր յերկնից յերկիր իւր օրինակաւ մեզ սորվեցնելու, և այս էր որ աշխարհք մտնելու ատեն ըսաւ՝ կ'ըսէ առաքեալն. Զոհս և զպատարագս ոչ կամեցար, բայց մարմին հաստատեցեր ինձ... յայնժամ ասացի թէ ահաւասիկ եկի առնել զկամս քո Աստուած[1]։ Եւ դայս շատ անգամ հասկըցուց ըսելով. Ի-ջի ես յերկնից ոչ զի զկամս իմ արարիցց, այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս[2]. մեռնելու երթալու ատեն ալ ըսաւ. Այլ զի ծանիցէ աշխարհս, եթէ սիրեմ զՀայր, և որպէս պատուիրեաց ինձ Հայր՝ այնպէս առնեմ, օն արիք գնասցուք աստի[3]. ինչպէս ուրիշներուն համար ալ կ'ըսէր. Որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է, նա է իմ եղբայր և քոյր և մայր[4]. և այս

1 Եբր. Ժ. 5. 7։
2 Յովհ. Զ. 38։
3 Յովհ. ԺԴ. 31։
4 Մատ. ԺԲ. 50։

էր մէկ հատիկ նպատակն և փափաքը բոլոր սուրբերուն իրենց ամէն գործոց մէջ՝ կատարումն կամացն Աստուծոյ։ Երանելին Հենրիկոս Սուսոն կ'ըսէ, ես աւելի կ'ուզեմ երկրի ընչին որդ մ'ըլլալ կամաքն Աստուծոյ, քան թէ սերովբէ մը իմ կամաքս. և սրբուհին Թերեզա, աղօթք ընողին բոլոր ջանքն այս պիտոր ըլլայ, համակերպել զինքն ընդ կամս Աստուծոյ. և ասոյգ գիտնայ թէ՝ այս բանիս վրայ կեցեր է աւելի բարձր կատարելութիւն. ով որ գերազանց կերպով այս բանս կը գործադրէ, մեծամեծ պարգևներ կ'առնու Աստուծմէ, և աւելի կը զարգանայ ի ներքին կեանս։ Երանելիքն յերկինս ասով կատարելապէս զԱստուած կը սիրեն, վասն զի բոլորովին համարկերպեալ են ընդ կամս Աստուծոյ, և այս է զոր Քրիստոս մեզ սորվեցուց. Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի [1]։ Աստուծոյ կամքն ընողը կ'ըլլայ այր ըստ սրտին Աստուծոյ. Գտի զԴաւիթ ծառայ իմ այր ըստ սրտի իմում. որ արասցէ զամենայն զկամս իմ [2], ինչպէս որ ինքն Դաւիթ ալ կ'ըսէր. Պատրաստ է սիրտ իմ առ քեզ Աստուած, պատրաստ է սիրտ իմ [3]. և այս միայն էր իւր խընդ-

1 Մատ. Զ. 10։
2 Ա. Թագ. ԺԳ. 14։
3 Սղ. ՃԷ. 1։

գիրքն Աստուծմէ. Ուստ ինձ առնել ըզկամս քո [1]։ Գիտենս որչափ մեծ բան է կատարեալ համակերպութիւն ցուցընել, յանձնելով զինքն Աստուծոյ կամաց. հերիք կ'ըլլայ մէկը սուրբ ընել։ Երբ Պօղոս հալածիչն եկեղեցւոյ զՅիսուս տեսաւ, և լուսաւորելով դարձաւ, այս բանս միայն ըսաւ՝ Աստուծոյ զինքը նուիրելով, Տէր զի՞նչ կամիս զի արարից [2]։ Ասով Քրիստոս զինքն իսկոյն անօթ ընտրութեան ընտրաւ, և առաքեալ հեթանոսաց։ Անօթ ընտրութեան է ինձ նա, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց [3]։ Պաք բռնողն, ողորմութիւն տուողն, զինքը մահացնողն Աստուծոյ համար, մաս մը իրմէ Աստուծոյ կ'ընծայէ, բայց իւր կամքը նուիրողն, բոլոր անձը կու տայ Աստուծոյ. և այս է բոլոր Աստուծոյ մեզմէ ուզածը՝ մեր սիրտը կամ կամքը. Որդեակ տուր ցիս զսիրտ քո [4]. մէկ խօսքով, այս պիտի ըլլայ բուն նպատակ մեր ամենայն բաղձանաց, Ջերմեռանդութեանց, մտածութեանց, հաղորդութեանց, Աստուծոյ կամքը կատարելը. այս պիտի ըլլայ վախճան բոլոր մեր աղօթից. Ընդհանրապէս կատարելոյ Աս-

1 Սղ. ՃԽԹ. 10։
2 Գործք. Թ. 6։
3 Գործք. Թ. 15։
4 Առակ. ԻԳ. 26։

տուծոյ կամքը. և զայս պիտի խնդրենք միշնորդութեամբ մեր պաշտպան սրբոյ, մանաւանդ սուրբ Աստուածածնի, որ առնու մեզի համար լոյս և զօրութիւն համակերպելոյ զմեզ ընդ կամս Աստուծոյ յաւմենայնի, մանաւորապէս սիրով ընդունելոյ մեր անձնասիրութեան դէմ եղած բանը։ Պատուական հայրն Աւիլա կ'ըսէր. աւելի կ'արժէ՝ փառք Աստուծոյ, կամ օրհնեալ է Աստուած մ'ըսել ձախորդութեան ատեն, քան թէ վեց եօթն անգամ շնորհակալութիւն ընել մեր ուզած բանին ատեն։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Տէր Աստուած իմ, իմ բոլոր կործանումս անցածներն այն եղաւ՝ որ չէի ուզեր զիս համակերպել քու սուրբ կամքիդ հետ. կը դարձիմ և կը նզովեմ բիւր անգամ այն օրերն և այն բոպէները՝ յորս իմ կամքս ընելու համար դէմ կեցայ քու կամքիդ. ով Աստուած հոգւոյ իմոյ, հիմայ զիս բոլոր քեզի կը նուիրեմ, ընդունէ Տէր իմ, և այնպէս զիս կապէ քու սիրոյդ հետ, որ չկարենամ մէյմ'ալ քեզմէ ապրստամբիլ. զքեզ կը սիրեմ անբաւ բարիդ, և զքեզ սիրելու համար զիս բոլոր

քեզ կը նուիրեմ. դու կարգաւորէ զիս և ամէն բաներս, ինչպէս որ կը հաճիս. ես բոլորովին զիս կը յանձնեմ քու կամացդ, մի թողուր որ կամքիդ դէմ բան մ'ընեմ, և ինչպէս որ կ'ուզես զիս բանեցուր։ Հայր երկնաւոր, լուր ինձ վասն սիրոյ Յիսուսի օծելոյ քո. Յիսուս, լուր ինձ վասն արդեանց չարչարանացդ։ Ամենասրբուհիդ Մարիամ, օգնեա ինձ, և առ ինձ համար այս շնորհքս ի գործ դնելոյ յիս զկամս Աստուծոյ, յորում է բովանդակ իմ կեանքս և փրկութիւնս։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Պէտք է որ միաբանենք զմեզ ընդ Աստուծոյ, չէ թէ միայն ներհակ բաներուն մէջ որ ուղղակի Աստուծմէ յառաջ կու գան, ինչպէս հիւանդութիւն, անմխիթարութիւն հոգւոր, կորուստ ընչից կամ ազգականաց, հապա անուղղակի Աստուծմէ եկածներուն մէջ այ մարդկանց ձեռքով. ինչպէս վատահամբաւութիւն, անարգանք, զրկանք, և ամէն կերպ հալածանք։ Զայս ալ գիտնալու է, որ երբ մէկը մեր ընչից կամ պատուոյն կը դպչի, Աստուած չուզեր մեր վնասողին մեղքը, բայց կ'ուզէ մեր աղքատնալը և խոնար-

հիլը։ ուստի ինչ որ մեզի կը հանդիպի, Աստուծոյ կամքը կ'ըլլայ։ Ես եմ որ հաստատեցի զլոյս և արարի զխաւար, ես եմ որ առնեմ զխաղաղութիւն և հաստատեմ զչար, ես եմ տէր Աստուած որ առնեմ զայս ամենայն [1], ինչպէս Սիրաք ալ ըսաւ, Բարիք և չարիք, կեանք և մահ յԱստուծոյ են [2]։

Չարիք կ'ըսուին երբ մենք մեզի չար կ'ընենք այն բաները, թէ չէ, եթէ սիրով ընդունինք ինչպէս որ պէտք էր միաբանելով զմեզ ընդ կամս Աստուծոյ, չար չէին ըլլար մեզի համար, այլ բարի։ Սուրբերուն գլխոյն պսակը զարդարող գոհարներն են այն նեղութիւնքը՝ զոր Աստուծոյ համար քաշեր են, գիտնալով որ անոնց ձեռամբն են երանելի։ Յոբ երբ լսեց, թէ Սաբէացիք իրեն ամէն բանն յափշտակեցին ի՞նչ ըսաւ։ Տէր ետ, և տէր էառ [3]. չըսաւ թէ Աստուած տուաւ, և թշնամիք առին, վասն զի գիտէր որ ամէն բան կամքն Աստուծոյ կ'ըլլայ։ Որպէս տեառն հաճոյ թուեցաւ, նոյնպէս և եղև, եղիցի անուն տեառն օրհնեալ [4]։ Սուրբ վկայքն Եպիկտետոս և Անտոնիոս երբ կը տան-

1 Ես։ Խե։ 7։
2 Սիր։ ԺԱ։ 14։
3 Յոբ։ Ա։ 22։
4 Անդ։

ջուէին երկաթէ ճանկերով և վառած ջահերով, զայս միայն կ'ըսէին։ Տէր եղիցին ի մեզ կամք քո, և իրենց հոգին աւանդելու ատեն այս եղաւ իրենց վերջի խօսքը։ Օրհնեալ տէր Աստուած յաւիտենից, որ ետուր մեզ զայս չնորհս, զի լցցին ի մեզ հաճոյք քո սուրբ։ Կեսարիոսին պատմածին համեմատ, միայնակեցին մէկն որ քանզուրիչներն աւելի խստակեաց մը չէր՝ շատ հրաշքներ կ'ընէր, իր աբբան այս բանիս զարմանալով, հարցուց իրեն օր մը, թէ դու ի՞նչ ջերմեռանդութիւն կ'ընես։ Նա ալ ըսաւ։ Ես ամենէն անկատար եմ, միայն այս բանին խելք տուած եմ, որ ամէն բանի մէջ համակերպեմ իմ կամքս Աստուծոյ կամաց հետ։ Աբբան վրայ բերաւ։ հապա դու բնաւ չնեղացար քանի մը օր առաջ որ թշնամի մը այնչափ վնաս տուաւ մեր կալուածներուն։ Նա ալ ըսաւ։ մանաւանդ գոհութիւն տուի Աստուծոյ, որ ամէն բանն ինքն կ'ընէ, կամ թող կուտայ մեր բարւոյն համար։ Աստիճան սրբութիւն ունի եղեր այն անձն։ Մենք ալ այսպէս պիտոր ընենք։ երբ ձախորդ բաներ մեզ կը պատահին, բոլորն իբրև Աստուծոյ ձեռքէն ընդունինք, չէ թէ միայն համբերութեամբ, հապա ուրախութեամբ՝ առաքելոց պէս։ որ Գնացին խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուան տեառն

արժանի եղեն անարգելոյ[1]։ Եւ ինչ մեծ ուրախութիւն քան զայս կրնայ ըլլալ, որ գիտանք թէ խաչ մը քաշելով սիրով Աստուծոյ հաճոյական բան կ'ընենք։ Ուրեմն թէ որ կ'ուզենք շարունակ խաղաղութիւն վայելել, ասկից ետև ապաւինինք Աստուծոյ կամաց, ամէն դիպուածին ատուն ըսելով. Այո՛ Հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո[2]։ Այս վախճանին պիտի ուզենք մեր ամէն մտածականը, հաղորդութիւնը, սրբութեան այցելութիւնը, և աղօթքը, աղաչելով զԱստուած միշտ՝ որ շնորհք տայ մեզ համակերպիլ իւր կամաց, և հանապազ զմեզ նուիրենք՝ ըսելով. Աստուած իմ, ահաւասիկ եմ, արա ընդ իս որ ինչ քեզ հաճոյ թուի։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Ո՛վ թագաւոր իմ և Աստուած իմ, սիրելիդ իմ փրկիչ, եկ և թագաւորեա դու միայն իմ վրաս այս օրէս ետև՝ հանգչելով յաթոռ հոգւոյս, բոլոր քեզի անձ իմ կեանքս, այնպէս որ բանի մը չբաղձամ, բան մը չուզեմ, բայց միայն քու ուզածդ։

1 Գործք. Ե. 41։
2 Մատ. ԺԱ. 26։

Յիսուս իմ, ինչուան հիմայ ես զքեզ այնչափ դառնացուցի՝ հակառակելով քու սուրբ կամքիդ. այս ինձ աւելի ցաւ կուտայ՝ քան թէ ամէն չարիք քաշած ըլլայի. կը զղջամ և բոլոր սրտանց կը ցաւիմ։ Պատժոյ արժանի եմ, ուստի սիրով յանձն կ'առնում ամէն վիշտ, միայն զիս խալըսէ զրկուելէն ի քո սիրոյդ։ Ո՛վ կամք Աստուծոյ, դու ես իմ սէրս. ո՛վ արիւն Յիսուսի, դու ես իմ յոյսս. ի քեզ կը յուսամ որ ասկից ետև միշտ և հանապազ միացեալ ըլլամ աստուածային կամացդ. այն ըլլայ իմ առաջնորդս, իմ փափաքս, իմ սէրս և իմ խաղաղութիւնս և հանգիստս. Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեցից և հանգեայց[1]։ Ամէն բանի մէջ որ ինձ կը հանդիպի՝ ըսեմ, այսպէս ուզեցիր ինձ համար ընել, ես ալ այսպէս կ'ուզեմ. Աստուած իմ, զայն միայն կ'ուզեմ. ինչ որ դու կ'ուզես միշտ. Եղիցին յիս կամք քո[2]։ Յիսուս իմ, վասն քու արդեանցդ զայս շնորհս ինձ պարգևէ, որ հանապազ կըրկնեմ և կրկնեմ զայս գեղեցիկ բան սիրոյ. Եղիցին կամք քո, կամք քո եղիցին. Տիրամայր Մարիամ մայր իմ, երանի քեզ կու տամ, որ կատարեցիր միշտ յամենայնի զկամս Աստուծոյ, շնորհք խնդրէ ինձ

1 Աղ. Դ. 9։
2 Մատ. Զ. 10։

համար ալ, որ այս օրէս սկսեալ միշտ զայն կատարեմ, Աստուծոյ կամքը կատարելու փոյթ ունենամ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ո՛վ որ Աստուծոյ կամաց հետ միացած է, այս երկրիս վրայ ալ շարունակ ի խաղաղութեան կը վայելէ. վասն զի չի կըրնար հոգի մը աւելի զոհ ըլլալ, քան երբ տեսնէ որ իւր ամէն ուզածները կ'ըլլան։ Արդ նա որ ուրիշ բան մը չուզեր, բայց զոր Աստուած կ'ուզէ և որչափ կ'ուզէ, իւր ամէն ուզածն ունի, որովհետև ինչ որ պատահի՝ բոլորն ալ Աստուծոյ կամքը կ'ըլլայ։ Սալոմիանոսի ըսածին պէս, Աստուծոյ հետ համակերպ եղող անձինք՝ թէ որ խոնարհութիւն քաշեն, իրենք ալ զայդ կ'ուզեն. թէ որ աղքատութիւն քաշեն, իրենք ալ աղքատ ըլլալ կ'ուզեն. մէկ խօսքով, ամէն բան կ'ուզեն ինչ որ հանդիպի, որով երջանիկ կեանք կը վարեն, պաղ ըլլայ, տաք ըլլայ, անձրև գայ, հով ըլլայ, Աստուծոյ կամաց հետ մէկ եղողը կ'ըսէ. կ'ուզեմ այս պաղը, տաքն և այլն, վասն զի Աստուած այսպէս կ'ուզէ. բան մը կորսուեր է, հալածանք քաշեր է, հիւանդութիւն վրան եկեր է, մահ եկեր

է, նա կ'ըսէ, թէ կ'ուզեմ ես խեղճ ըլլալ, հալածեալ ըլլալ, հիւանդ ըլլալ, նաև մեռնիլ ալ, վասն զի Աստուած այսպէս կ'ուզէ. ի կամս Աստուծոյ հանգչողն, և սիրողն Աստուծոյ ամէն ըրածին, ամպերէն վեր երկինքը նստած կը նմանի։ Այս այն խաղաղութիւնն է, որ առաքելոյն ըսածին պէս, Ի վեր է քան զամենայն միտս[1], և այնպէս հաստատ խաղաղութիւն մ'է որ այլայլիլ չի գիտեր. անմիտը լուսնի պէս կը փոխի, խելացին իմաստութեան մէջ կը մնայ, կ'ըսէ Սիրաք։ Անխելք մեղաւորը լուսնի պէս կ'ածի ու կը պակսի. այսօր կը ծիծաղի. վաղը կու լայ. այսօր զուարթ և հեզուկ, վաղը դառնացեալ և կատաղի. մէկ խօսքով, փոփոխական է ամէն փոփոխական բաներու հետ՝ որ յաջող կամ ձախորդ կը հանդիպին։ Իսկ արդարն՝ արեգական կը նմանի, միշտ միակերպ հանդարտ ամէն դիպուածի մէջ, վասն զի իւր խաղաղութիւնն է ի միութեան ընդ կամս Աստուծոյ. Եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Սրբուհին Մարիամ Մագդաղենացին Տէփացցի, երբ կ'ըսէր՝ Կամքը Աստուծոյ, այնպէս մխիթարանք մը կ'իմանար՝ որ կարծես թէ իրմէ դուրս կ'ելնէր յափշտակութեամբ սիրոյ. թէպէտև գրեթէ անկարելի է որ մարդ քիչ

1 Փիլիպ. Դ. 7։

մ'ալ չդժկամակի ձախորդ բանէն, բայց դլխաւոր մասամբ միշտ կը վայելէ զթաղաւորութիւն խաղաղութեան, երբ կամքը միացած ըլլայ Աստուծոյ կամաց հետ. Զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ի ձէնջ [1]. բայց որպիսի խենթութիւն է անոնց ըրածն որ Աստուծոյ կամաց կը հակառակին. Աստուծոյ ուզածը պէտք է որ ըլլայ. Կամաց նորա ոչ ոք կայ հակառակ [2]: Ուստի ողորմելիները պէտք է խաչը կրեն, բայց անպտուղ և առանց խաղաղութեան. Ո՞ խստացաւ ընդդէմ նորա և հանդարտեաց [3]: Եւ ի՞նչ է Աստուծոյ ուզածը, եթէ ոչ մեր բարին. Այս են կամք Աստուծոյ՝ սրբութիւն ձեր [4]: Կ'ուզեմ որ սուրբ ըլլանք, և գոհ կեանք հոս ունենանք և երանելի ըլլանք անդին. աղէկ հասկընանք թէ խաչը Աստուծմէ կուգայ. Յամենայնի գործակից լինի ի բարիս [5]. Պատիժներն ալ այս կեանքիս մէջ մեր վնասուն համար չեն, հապա որպէս զի անոնցմով ճամբայ գանք և յաւիտենից երանութիւնը ձեռք բերենք. Որ յիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենե-

1 Յովհ. ԺԶ. 22:
2 Հռ. Թ. 19:
3 Յոբ. Թ. 4:
4 Ա. Թես. Դ. 3:
5 Հռ. Ը. 28:

ցուն մատնեաց զնա, զիարդ ոչ նովաւ հանդերձ զամենայն չնորհիցէ մեզ [1]: Հապա բոլորովին զմեզ Աստուծոյ ձեռքը թողունք միշտ, որ ամէն փոյթ ունի մեր բարւոյն համար. Զամենայն հոգս ձեր ընկեցէք ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր [2]: Սուրբ Նեղոս աբբան կ'ըսէր. Զնայինք որ Աստուած մեր կամքն ընէ, հապա մենք Աստուծոյ կամքն ընենք: Ով որ միշտ այսպէս ընէ՝ երջանիկ կեանք կ'ունենայ և երանելի մահ: Ով որ կը մեռնի համակերպ բոլորովին Աստուծոյ կամաց, նշան է թէ արդի փրկութեան է. իսկ ով որ իւր կենաց մէջ Աստուծոյ կամքին հետ միացած չէ, մահուան ատենն ալ չըլլար և փրկութեան չի հասնիր: Ուստի ջանանք որ սուրբ գրոց քանի մը խօսքերը մեզի սովորական ընենք՝ մեզ միշտ Աստուծոյ կամաց հետ միաբանելու. Տէր զինչ կամիս զի արարից [3]. Ուստ ինձ առնել զկամս քո. Ահաւասիկ կամ ազախին տեառն [4]. Քո եմ ես և կեցո զիս [5]: Ինչ բան որ մեզի ծանր կուգայ, նոյն ատեն ըսենք. Այո՛, Հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո [6]. մանա-

1 Հռ. Ը. 32:
2 Ա. Պետ. Ե. 7:
3 Գործք. Թ. 6:
4 Ղուկ. Ա. 38:
5 Սղ. ՃԺԸ. 94:
6 Մատ. ԺԱ. 26:

ւանդ տէրունական աղօթից այն խօսքը, թէ. Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի [1]։ Երանի մեզի, թէ որ ապրինք և մեռնինք ըսելով. Եղիցին կամք քո։

ԻՂՁ ԵՒ ՊԱՂԱՏԱՆՔ

Փրկիչ իմ Յիսուս, դու կեանքդ նուիրեցիր խաչի վրայ ծանր ցաւօք, որ պատճառ ըլլաս մեր կենաց և փրկութեան. ուստի գթա իմ վրաս և փրկէ զիս, և մի թողուր այն հոգին, զոր այնչափ չարչարանքով և այնչափ սիրով գնեցիր, որ ատէ զքեզ յաւիտեան ի դժոխս. դու բան չի թողուցիր որ պարտաւորես զմեզ զքեզ սիրելու, և այս ուզեցիր հասկցնել վերջի խօսքովդ խաչին վրայ. Ամենայն ինչ կատարեալ է. իսկ ես ի՞նչ սէր ցուցի սիրոյդ. ահ, կրնամ ըսել թէ կենացս մէջ ուրիշ բան չըրի, բայց քու կամացդ դպչիլ, և ստիպել զքեզ յատելութիւն իմ։ Սակայն շնորհակալ եմ որ երկայնմտութեամբ ինձ համբերեցիր, և հիմայ ալ ինձ ատեն կու տաս ճար ընել ապերախտութեանս, և սիրել զքեզ մեռնելէս առաջ։ Այո՛ այո՛, ես ալ կ'ուզեմ զքեզ սիրել, սի-

1 Մատ. Զ. 10։

րել կ'ուզեմ Աստուած փրկիչս, սէր իմ և ամենայն ինչ. կը ցանկամ ընել զամենայն ինչ որ քեզ հաճոյ է։ Քեզ կը նուիրեմ բովանդակ ազատութիւնս և ուրիշ ամէն բանս. քեզ կը նուիրեմ ասկից ետև իմ կեանքս, յանձն առնելով ինչ մահ որ ինձ դրկես ամէն կերպ ներողութեամբ. հիմա կուրնէ կը միացնեմ այս իմ զոհս քու մեծ զոհիդ հետ զոր խաչին վրայ կատարեցիր, կ'ուզեմ մեռնիլ քու կամքդ կատարելու համար։ Ուստի կ'աղաչեմ, վասն արդեանց չարչարանաց քոց՝ շնորհք տուր ինձ համակերպակալ ըլլալու միշտ քու կամացդ հետ. և մահս եթէ հասնի, շնորհք տուր որ սիրով ընդունիմ և բոլորական համակերպութեամբ։ Կ'ուզեմ մեռնիլ, փրկիչ իմ, քեզ ախորժելի բան մ'ընելու համար, և կ'ուզեմ մեռնիլ ըսելով. Եղիցին կամք քո [1]։ Սուրբ Աստուածածին, դու այսպէս մեռար, ուստի միջնորդ եղիր, որ ես ալ այնպէս մեռնիմ։

1 Մատ. Զ. 10։

ՑՈՒՑԱԿ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆՑ

Ա. Նոր վախճանած մարդու մը նկարագիր 1
Բ. Մահուամբ ամենայն ինչ կը լմընայ 15
Գ. Կարճութիւն կենաց . . . 30
Դ. Մահուան ստուգութիւնն . . 45
Ե. Մահուան ժամուն անստուգութիւնն 60
Զ. Մեղաւորին մահն . . . 76
Է. Անհոգ հոգեվարքի մը զգածմունքն, որ չիչ է մոռնալիր մահը 95
Ը. Արդարոյ մահն 109
Թ. Արդար հոգեվարքին սրտին խաղաղութիւնն . . . 128
Ժ. Առ ի մահ պատրաստուելու միջոցներ 145

ԺԱ. Ժամանակին յարգը . . . 460
ԺԲ. Փրկութիւնն ո՛րչափ մեծ բան է . 175
ԺԳ. Աշխարհիս ունայնութիւնն . 192
ԺԴ. Այս կեանքս՝ դէպ ի յաւիտենականութիւն ճամբորդութիւն մ'է 208
ԺԵ. Մահուշափ մեղայ չարութիւնն . 222
ԺԶ. Աստուծոյ ողորմութիւնն . . 237
ԺԷ. Զարաչար վարուն ողորմութեամբն Աստուծոյ . . 249
ԺԸ. Մեղայ թիւն 265
ԺԹ. Ո՛րչափ մեծ բան է Աստուծոյ շնորհքն, և ո՛րչափ չար է զըրկուիլ ի շնորհացն Աստուծոյ . 280
Ի. Մեղաւորին խենթութիւնը . 294
ԻԱ. Մեղաւորին թշուառ կեանքն, և աստուածասիրին երջանիկ կեանքն 309
ԻԲ. Չար ունակութիւն . . . 328
ԻԳ. Խաբէութիւնք սատանայի՝ որ մեղաւորաց միտքը կը պղտորէ 345
ԻԴ. Առանձնական դատաստան . 360
ԻԵ. Ընդհանրական դատաստան . 376
ԻԶ. Դժոխոց տանջանքն . . . 393
ԻԷ. Յաւիտենականութիւն դժոխոց . 411
ԻԸ. Դատապարտելոց խղճմտանաց խայթն 428
ԻԹ. Ակնայութիւն . . . 441
Լ. Աղօթք 460
ԼԱ. Յարատևութիւն . . . 475
ԼԲ. Ապաւինութիւն ի պաշտպանութիւն Սուրբ Աստուածածնին 497
ԼԳ. Աստուծոյ սէրն . . . 510
ԼԴ. Յաղագս Սուրբ Հաղորդութեան 524
ԼԵ. Սիրալիր հաճութիւն Յիսուսի մնալոյ ի խորանս սուրբ խորհրդոյն 541
ԼԶ. Համակերպութիւն ընդ կամս Աստուծոյ 558

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL041731
ՄՄ Հայագիտական գրադարան
MAL041730
ՄՄ Հայագիտական գրադարան
MAL041729